ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

À LA MÉMOIRE DES VICTIMES DU
GÉNOCIDE DES ARMÉNIENS

UNIVERSITÉ D'ÉTAT D'EREVAN
INSTITUT DES ÉTUDES ARMÉNOLOGIQUES

VAROUJEAN POGHOSYAN

# PAGES DE L'HISTOIRE ET DE L'HISTORIOGRPHIE DU GÉNOCIDE DES ARMÉNIENS

EREVAN
ÉDITIONS DE L'UNIVERSITÉ D'ÉTAT D'EREVAN
2015

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

# ԷՋԵՐ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2015

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Պ 797

Գիրքը տպագրության է երաշխավորել
ԵՊՀ գիտական խորհուրդը

**Պողոսյան Վարուժան**

Պ 797 Էջեր Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության / Վ. Պողոսյան. - Եր.: ԵՊՀ հրատ., 2015.- 380 էջ:

Սույն ժողովածուն բաղկացած է երեք բաժնից, որոնցում ընդգրկված են 1997-2014 թթ. հայրենական և արտասահմանյան հեղինակավոր հրատարակություններում հեղինակի՝ տարբեր լեզուներով լույս ընծայած որոշ հոդվածներ, հրապարակումներ և գրախոսականներ: Առաջին բաժինն ամփոփում է Հայոց ցեղասպանության տարբեր փուլերին անդրադարձած ֆրանսիացի տարբեր հեղինակների աշխատություններին նվիրված հոդվածները: Երկրորդ բաժնում տեղ են գտել Հայոց ցեղասպանության հիմնահարցերին նվիրված հրապարակումները, իսկ երրորդ բաժնում հայրենական, ֆրանսիական և անգլիական՝ թվով տասնմեկ հրատարակություններին նվիրված գրախոսությունները:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-1974-2

© Պողոսյան Վարուժան
© ԵՊՀ հրատարակչություն, 2015

# ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայոց Մեծ եղեռնի 100-ամյակի կապակցությամբ տպագրության ներկայացված սույն ժողովածուն բաղկացած է երեք բաժնից, որոնցում ընդգրկված են 1997-2014 թթ. հայրենական և արտասահմանյան հեղինակավոր հրատարակություններում հեղինակի լույս ընծայած որոշ հոդվածներ, հրապարակումներ և գրախոսականներ:

Ժողովածուի առաջին բաժինն ընդգրկում է Հայոց ցեղասպանության տարբեր փուլերին անդրադարձած՝ ֆրանսիացի ոչ միայն հայտնի պատմաբանների, այլև մինչ այդ նույնիսկ մասնագիտական նեղ շրջանակներին անհայտ անձանց աշխատություններին նվիրված՝ հեղինակի հոդվածները: Դրանցում Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ առաջին անգամ անդրադարձներ են կատարվում իրադարձությունների ականատես ֆրանսիացի հեղինակների, այդ թվում բավականին հայտնի, ինչպիսիք են Անրի Բարբին, Ռենե Պինոնը, և ֆրանսիացի ժամանակակից պատմաբանների աշխատություններին:

Հարկ է մեկնաբանել, որ ժողովածուում զետեղված հոդվածների բովանդակությունն արտացոլված չէ մեր արդեն լույս ընծայված մենագրություններում[1]: Ըստ էության, միայն Հայկական հարցի շուրջ 1890-ական թվականներին ֆրանսիական խորհրդարանում տեղի ունեցած քննարկումներին և Անատոլ Լեռուա-Բոլիոյին նվիրված հոդվածներում արծարծվող հիմնահարցերի սոսկ մի մասն է արտացոլվել մեր հայերեն գրքերից մեկում: Հաշվի առնելով, սակայն, այն հանգամանքը, որ այդ հոդվածները ֆրանսերեն և ռուսերեն լեզուներով են, նպատակահարմար գտանք դրանք ևս զետեղել սույն ժողովածուում: Ինչ վերաբերում է «Ցեղասպանագիտական հանդեսում» տպագրված՝ 1909 թ. կիլիկյան կոտորածների ֆրանսիական պատմագրությանը նվիրված համառոտ դիտարկումներին, ապա ժամանակագրական առումով այն գերազանցում

[1] *Պողոսյան Վ.*, 1909 թ. հայկական կոտորածները Կիլիկիայում ֆրանսիական պատմագրության գնահատմամբ, Երևան, 2009, *նույնի՝* Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ), երկրորդ, բարեփոխված հրատարակություն, Երևան, 2011:

է մեր գրքերից մեկում սույն թեմայի լուսաբանումը:

Երկրորդ բաժնում տեղ են գտել Հայոց ցեղասպանության հիմնահարցերին նվիրված հրապարակումները տարբեր լեզուներով, որոնք լույս են սփռում գլխավորապես Հայոց ցեղասպանության գործընթացի տարբեր փուլերի, ինչպես նաև եվրոպացի հայտնի գործիչների հայանպաստ գործունեության վրա:

Երրորդ բաժինն ամփոփում է մեր գրախոսությունները նվիրված հայրենական, ֆրանսիական և անգլիական՝ թվով տասնմեկ հրատարակությունների, այդ թվում հեղինակավոր պատմաբանների գրչին պատկանող գրքերի, որոնց թվում են ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Մկրտիչ Ներսիսյանը, Հրաչիկ Սիմոնյանը, ինչպես նաև ֆրանսիացի նշանավոր պատմաբան Իվ Տերնոնը:

Հարկ է նկատի ունենալ, որ նման կառուցվածքի պայմաններում հեղինակի որոշ մտքեր կրկնվում են, որի համար հայցում ենք ընթերցողի ներողամտությունը:

Առավել ևս եթե նկատի ունենաք, որ սույն գրքում զետեղված նյութերը, որոնք դասակարգված են ըստ լույս ընծայման տարեթվերի, գրված են տարբեր առաջատար լեզուներով, կասկածից վեր է, որ այն կարող է հուժկու հակահարված տալ Հայոց ցեղասպանության պատմության թուրք և այլազգի կեղծարարներին:

# ՀՈԴՎԱԾՆԵՐ

## LA DISCUSSION DE LA QUESTION ARMÉNIENNE DANS LA CHAMBRE DES DÉPUTÉS AUX ANNÉES 1890

Le processus du génocide des Arméniens déclenché à la fin du XIX[e] siècle par Abdhülhamid II a suscité un vif intérêt dans différents pays d'Europe et surtout en France. En vérité, le retentissement de l'événement en question s'est fait sentir en France beaucoup plus fortement qu'ailleurs, « grâce à quelques Français généreux, qui se firent les avocats du peuple martyr »[2]. Bien des hommes politiques de différentes orientations, des écrivains, des historiens et des religieux aussi éminents que G. Clemenceau, F. de Pressencé, le père Charmetant, A. France, Séverine, A. Vandal, E. Driault et d'autres ont soutenu la cause du peuple arménien et ont démasqué les forfaits sans précédents perpétrés par la Sublime Porte.

Quant aux intellectuels français, et il faut le noter, ils ont déployé leur activité à la fois dans différents domaines. Outre les livres, les brochures ainsi que les articles publiés dans les revues (« Revue de Paris », « Revue des Revues », etc.) et parfois dans les journaux, l'organisation des conférences, les défenseurs du peuple arménien se sont distingués par leur action parlementaire. Il s'agit surtout des membres du Parlement français comme Jean Jaurès, leader des socialistes français, Denis Cochin, député conservateur, le comte Albert de Mun et d'autres.

La Question arménienne a été discutée trois fois à la fin de 1896 et au début de 1897 à la Chambre des Députés. D'après Sapah-Goulian, homme politique arménien de cette époque, la première discussion, celle du 3 novembre 1896, a été organisée grâce aux efforts du parti *Hintchak* (*Cloche*)[3]. De toute façon, elle a suscité de vifs débats, avec la participation de Denis Cochin, du comte Albert de Mun et de Delafosse, ayant interpellé le ministère des Affaires étrangères au sujet des affaires d'Arménie. La réponse prolixe du ministre d'alors Gabriel Hanotaux, a été suivie du discours de Jean Jaurès.

Mais tout d'abord, essayons de présenter, sans entrer dans les détails, l'attitude du ministre, autrement dit, celui du Gouvernement de la

---

[2] *Macler F.*, La nation arménienne. Son passé, ses malheurs, Paris, 1924, p. 45. Voir aussi : *Տասնապետեան Հ.*, «Եւրոպական պրոպագանդ» (1899-1906),– «Ազդակ», 1983, թիւ 48, էջ 972:

[3] Voir *Սապահ-Գիւլեան Ս.*, Պատասխանատուները, Փրավիտէնս, 1916, էջ 173:

Troisième République. Il est à noter, dès le début que toute la politique orientale de Hanotaux, lors de ses deux ministères (1894-1895, 1896-1898), s'est fortement distinguée par des tendances en faveur de l'Empire ottoman. Ses vues essentielles sont donc réflétées également dans son discours prononcé à la Chambre le 3 novembre 1896. En dépit de son attitude favorable à l'égard du sultan Abdhülhamid II, Hanotaux est obligé toutefois d'accepter la réalité de l'extermination du peuple arménien, l'authenticité des « faits les plus graves », qu'il quailfie « d'incontestables »[4]. Il tâche d'abord d'analyser les causes qui ont fait naître cette situation tragique. Or, ses explications sont discutables et incomplètes. D'une part, il ne néglige point la signification des « mauvaises conditions dans lesquelles s'exerce l'administration ottomane », les excès de celle-ci, ayant suscité de « trop fréquents et trop légitimes griefs » des Arméniens[5]. D'autre part, Hanotaux ne met en relation l'agitation des Arméniens qu'avec le soi-disant « mouvement arménien » dont le but est, d'après lui, d'attirer « l'intervention de l'Europe » et de « développer peu à peu l'esprit d'intervention »[6]. On va voir que ce n'est point par un curieux effet du hasard que le ministre accentue ce fait.

Dans son ensemble, Hanotaux nie avec préméditation l'existence de la Question arménienne entrée dans l'histoire des relations internationales après le Congrès du Berlin[7] et la nécessité de sa solution, ainsi que les moyens appliqués par le *sultan rouge* afin d'atteindre *à la turque* ce but tant désiré. C'est le point de départ, sur lequel se base son approche vis-à-vis du génocide des Arméniens.

Notons d'abord que celui qui avait reçu et indubitablement lu les rapports des diplomates français accrédités dans l'Empire ottoman à cette époque aurait certainement pu connaître les vrais coupables du déclenchement de ces événements sanglants. Pourtant, le ministre préfère

---

[4] Discours de M. Hanotaux, ministre des Affaires étrangères, à la séance de la Chambre des Députés du 3 novembre 1896.– Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman. 1893-1897, Paris, 1897, p. 313.

[5] Ibid., p. 313, 314.

[6] Ibid., p. 314.

[7] Hanotaux n'a jamais mentionné l'existence de la Question arménienne, même après sa retraite. Voir *Hanotaux G.*, Histoire de la France contemporaine (1871-1900), t. 4, Paris, 1908.

ne dire absolument rien à propos des responsables de l'anéantissement du peuple arménien, en se limitant à mettre la responsabilité à la fois sur deux parties, en soulignant qu'il est impossible de « discerner exactement à qui incombaient les premiers torts » (sic !), étant devenus la cause de « conflits de plus en plus graves », éclatés entre les populations et les autorités[8]. Quant aux causes des « violences » et « excès » qui ont eu lieu, il mentionne toutefois des circonstances secondaires, comme l'état habituel des populations sans défense, les incursions des Kurdes, les « souffrances provoquées par les abus d'une mauvaise administration » et le « mauvais vouloir des autorités locales »[9]. Ce dernier point est assez important, car il dévoile à fond la position adoptée par Hanotaux, celle d'enlever la moindre responsabilité de la Sublime Porte et *a fortiori* du souverain de l'Empire.

En somme, en traitant les massacres de 1895-1896 de « terribles », Hanotaux en donne toujours la responsabilité aux bandits fanatiques, ainsi qu'aux comités arméniens[10]. Selon lui, on ne peut conclure que le mal soit dû à « toute administration » ottomane et à « l'anarchie d'en haut amenant celle d'en bas » et que les massacres arméniens ne soient motivés que par le « hasard des événements »[11]. En même temps, le ministre n'hésite pas à rappeler le rôle de la « mauvaise administration », frappant à la fois toutes les populations chrétiennes et musulmanes habitant l'Empire du mal, en considérant par conséquent les massacres arméniens comme partie imprescriptible de la politique nationale de la Sublime Porte. En l'occurrence, nous partageons son avis, car les Arméniens ne sont vraiment pas le seul peuple qui, habitant pendant des siècles dans une société génocidaire, ont été exterminés par le gouvernement ottoman. Cependant, soulignant ce fait réel, Hanotaux dissimule habilement les traits particuliers qui sont propres au génocide des Arméniens dans les années 1890. Il est surtout impossible de trouver dans son discours un blâme lancé à l'adresse de la Sublime Porte, soit la réprobation de la politique du sultan, voire même une allusion à la politique étatique, au niveau de laquelle la suppression du peuple arménien a été perpétrée. Autrement dit, le ministre réalise une politique stricte, celle de dissimuler

[8] Discours de M. Hanotaux, p. 314.
[9] Ibidem.
[10] Ibid., p. 315.
[11] Ibid., p 315-316.

au public et à l'Europe en général la vérité concernant les organisateurs de la première étape du génocide des Arméniens.

En réalité, les diplomates français et surtout Paul Cambon, Ambassadeur de France à Constantinople, l'ont depuis longtemps et constamment tenu au courant de tous les événements concernant les massacres arméniens sur le territoire de l'Empire, en dévoilant de la manière la plus convaincante le rôle du sultan et prouvant que le processus génocidaire a été conçu et dirigé personellement par lui, organisé et perpétré au niveau étatique, avec l'aide de l'armée et des irréguliers, armés à leur tour par le gouvernement ottoman. Or, dans ce cas, une question se pose : comment peut-on expliquer l'attitude du ministre ?

La réponse à cette question tient dans l'interprétation de sa position à l'égard du rôle des puissances européennes dans la solution de la Question arménienne, qui est conforme à la politique orientale de la Troisième République. Elle se base sur le principe du maintien de l'intégrité de l'Empire ottoman. Hanotaux fait tourner la politique des pays occidentaux autour de trois axes, à savoir, former une solide entente entre les puissances, écarter toute tentative d'action isolée et faire tout le possible, afin d'obtenir du sultan « l'amélioration des conditions de la vie publique et particulière dans son Empire », avec une seule condition de moins, celle de ne « porter aucune atteinte à l'intégrité de l'Empire ottoman »[12]. Hanotaux motive d'ailleurs cette politique, qui est, d'après lui, celle de la France, par la nécessité de maintenir l'équilibre européen. Donc, afin d'écarter la perspective de l'intervention militaire européenne qui aurait non seulement sauvé un peuple condamné à mort, mais porté à la fois une atteinte mortelle à l'intégrité de l'Empire, le ministre s'est résolument opposé à ce moyen possible, mais désagréable pour toutes les puissances et surtout pour la France, de la solution de la Question arménienne.

C'est donc pour cette même raison que Hanotaux souligne dans tous ses discours l'idée de la nécessité de considérer les massacres arméniens comme une question intérieure, dont la solution dépend seulement du sultan. Dans ces conditions, d'après sa conception, la possibilité de l'intervention militaire de l'Europe est exclue. Quant au rôle des puissances, Hanotaux énonce l'idée de contraindre le sultan à introduire dans son Empire des réformes prévues par les traités, à améliorer les conditions de vie de tous les

[12] Ibid., p. 317.

sujets ottomans et à éviter par ce moyen des ébranlements qui susciteraient l'intervention européenne[13]. Pour terminer, il note une fois de plus que la France « désire l'amélioration du sort des peuples de l'Orient ; … elle n'oublie pas non plus les liens qui l'unissent depuis longtemps à l'Empire ottoman et les raisons qui lui font désirer le maintien de son intégrité »[14].

Telle est donc la position du ministre des Affaires étrangère de la Troisème République à l'égard de la Question arménienne.

Cependant, les approches de Cochin, de Jaurès et du comte de Mun, quant à la Question arménienne, en dépit de leurs différentes orientations politiques, se rejoignent en principe sur beaucoup de points. Les adversaires politiques du ministre discutent les affaires d'Arménie dans un contexte beaucoup plus large et à bien des égards. Citons d'abord le nom de Denys Cochin (1851-1922), de l'Académie française (1911), éminent homme politique de cette époque, dont l'intérêt à l'égard de la Question arménienne est suscité par la lecture d'un recueil sur les massacres d'Arménie, publié avec la préface de Georges Clemenceau en 1896[15]. Il aborde le sujet des massacres arméniens dans ses trois discours prononcés à la Chambre, à savoir le 3 novembre 1896, le 12 février et le 3 avril 1897.

Consterné par l'ampleur et l'envergure des massacres, Cochin déclare : « Les événements qui viennent de s'accomplir dans l'Asie Mineure dépassent l'imagination et sont arrivés à un tel degré d'horreur que nous n'avons pas le droit de dire qu'ils étaient prévus »[16]. Cochin entre dans les détails des événements ayant été enregistrés dans différents vilayets, comme ceux d'Erzeroum, d'Ourfa, de Bitlis et autres, évoquant d'après lui « le souvenir de temps reculés, de pays barbares », il traite l'année 1895 de « triste » et en même temps d'abominable et d'extraordinaire[17]. Mais l'essentiel n'est pas dans les narrations, mais dans ses explications qui sont diamétralement opposées à celles du ministre. Ses jugements

---

[13] Ibid., p. 318. Voir aussi son article ***, En Orient // « Revue de Paris », livraison du 1er décembre 1895, p. 458-459.

[14] Discours de M. Hanotaux, p. 318.

[15] Les massacres d'Arménie. Témoignages des victimes. Préface de G. Clemenceau, Paris, 1896. Voir à ce sujet *Khayadjian E*., Archag Tchobanian et le mouvement arménophile en France, 2ème éd., Alfortville, 2001 p. 75.

[16] *Cochin D*., Contre les barbares, Paris, 1899, p. 1.

[17] Ibid., p. 22.

prouvent qu'il considère l'extermination des Arméniens comme un événement ayant lieu au niveau étatique. À propos des massacres de Sassoun de 1894, Cochin indique non seulement la participation des populations turque et kurde aux crimes, comme l'a fait Hanotaux, mais il souligne également une circonstance très importante : ceux-ci ont été perpétrés « avec la permission et trop souvent l'aide des agents du gouvernement ottoman »[18]. Quant aux massacres d'Ourfa, il attire toujours l'attention sur « l'instigation des autorités » et « l'infâme complicité du gouvernement ottoman »[19]. D'ailleurs, la complicité et même le concours des autorités ottomanes ainsi que la participation aux événements de l'armée régulière sont constatés par lui en d'autres occasions[20].

Cochin s'exprime également au sujet des causes des massacres arméniens. Il considère donc ceux-ci comme la continuation logique de la politique inhumaine de la Sublime Porte à l'égard des Arméniens depuis des siècles, note les persécutions dont ils sont devenus l'objet, la fermeture de leurs écoles, l'interdiction de l'activité de leurs églises, la spoliation de leurs biens et enfin les impôts innombrables sous lesquels ces derniers sont courbés. Autrement dit, Cochin confirme l'existence de la société génocidaire dans l'Empire ottoman à la fin du XIX$^{e}$ siècle. Et c'est par ces circonstances qu'il motive à juste titre l'insurrection des Arméniens à Sassoun en 1894[21].

Il discute minutieusement dans cette même optique une autre question d'une grande importance, celle de la culpabilité des « révolutionnaires » arméniens, qui est soulevée en maintes occasions au gré des milieux dirigeants turcs dès le début des événements à ce jour. En se référant à la pétition adressée par les Arméniens au sultan en 1895, Cochin prouve de manière irréfutable qu'il ne semble pas qu'elle porte l'empreinte de « révolutionnaires forcenés »[22]. Au contraire, il traite de criminels ceux qui ont « conçu l'idée monstrueuse de supprimer une race embarassante »[23].

Ayant très bien compris le vrai sens des événements ayant bouleversé l'Empire, Cochin constate que la cause essentielle du génocide des

[18] Ibid., p. 5-6
[19] Ibid., p. 25.
[20] Ibid., pp. 26, 40-41.
[21] Ibid., pp. 7-10.
[22] Ibid., p. 12.
[23] Ibid., p. 30.

Arméniens est la nécessité de la solution de la Question arménienne : « Quelqu'un a trouvé une solution et non seulement l'a trouvée, mais a commencé à la mettre en pratique : trancher la question arménienne en supprimant les Arméniens »[24].

En admettant que le sort des Arméniens ait depuis longtemps « excité les préoccupations de l'Europe », il critique cependant les puissances dont la « bienveillante complicité » contribue à l'accomplissement des forfaits[25]. Cochin ne partage pas non plus la position de Hanotaux à propos de la politique des puissances à l'égard de l'Empire ottoman. Certes, il s'abstient de lancer un défi visant à organiser d'une nouvelle « croisade » vers l'Empire ottoman, toutefois il se montre le défenseur zélé des intérêts des opprimés et énonce une idée, d'après laquelle il faudrait que le ministre fasse appel aux alliés de la France dans le but de purger ce crime, laver les traces de sang et nettoyer « ce coin du territoire européen ». Il s'oppose à Hanotaux, déclarant : « L'Europe entière devrait s'unir pour sauvegarder l'honneur de l'Europe entière »[26].

Jean Jaurès (1859-1914) est parmi ceux qui soutiennent dès le début la cause arménienne. Certes, l'activité politique déployée par Jaurès à la Chambre des Députés en 1893-1898 couvre de nombreux champs, mais la Question arménienne se trouve toujours au centre de son attention. Celui, qui condamne constamment la politique coloniale des pays occidentaux et dévoile ses conséquences déplorables, ne peut effectivement pas omettre la discussion du génocide des Arméniens. Il est aussi à noter qu'il reçoit ses premières informations sur les Arméniens et la Question arménienne de Sapah-Goulian[27].

Bien caractéristique pour l'attitude de Jaurès est son discours à la Chambre le 3 novembre 1896 en réponse de celui de Hanotaux. En décrivant les massacres dans les six vilayets arméniens, Jaurès note : « Et ce n'était plus de petits groupes qu'on massacrait, mais dans les villes par grandes masses de 3000 et 4000 victimes en un jour, au son du clairon, avec la régularité de l'exécution d'une sentence »[28] ! Consterné comme

[24] Ibid., p. 39.
[25] Ibid., pp. 1, 5.
[26] Ibid., p. 32.
[27] *Սապահ-Գիւլեան Ս.*, նշվ. աշխ., էջ 173:
[28] Œuvres de Jean Jaurès. Pour la paix. T. 1. Les alliances européennes (1887-1903). Textes ressemblés, présentés et annotés par Max Bonnafous, Paris, 1931, p. 125. Citons, que les discours de Jaurès à la Chambre sur la Cause arménienne ont été récemment reédités par

Cochin par les « plus abominables massacres » et la barbarie lors de leur accomplissement, Jaurès déclare : « Il m'a semblé que toutes les horreurs de la guerre de Trente ans étaient déchaînées dans cet horizon oriental lointain et farouche »[29]. Néanmoins, il concentre son attention essentiellement sur l'interprétation des événements et s'oppose presque sur tous les points-clés aux vues de Hanotaux.

Tout d'abord, Jaurès accentue un fait indéniable, c'est que le génocide des Arméniens a été conçu, organisé par Abdhülhamid II et perpétré au niveau étatique. Il constate maintes fois et avec raison la culpabilité de ce dernier, en rélévant son rôle majeur dans le déclenchement du processus de l'extermination des Arméniens. Jaurès est sûr que les massacres ne se sont pas propagés spontanément, mais ont été excités, encouragés et nourris par un « gouvernement régulier ». « C'est le sultan qui a voulu, qui a organisé, qui a dirigé les massacres »[30], conclut-il.

Les interprétations données par Jaurès aux causes des massacres des Arméniens sont tout à fait impartiales, car il les met en relation avec les événements qui ont ébranlé l'Empire ottoman depuis les années 1870. Il s'agit surtout dans ce cas de l'indépendance obtenue par quelques pays balkaniques comme résultat de la guerre russo-turque de 1877-1878. Effrayé donc de la possibilité de l'approfondissement ultérieur du processus de démembrement de l'Empire et étant en même temps, comme il le note, « incapable de retenir à lui ces populations pourtant si douces, par des réformes, par un régime d'équité et de justice », le sultan a préféré compter sur une force, celle du « vieux sentiment turc », qu'il a déchaînée contre l'Arménie[31]. Enfin, à la suite de Cochin, Jaurès indique la cause primordiale du génocide des Arméniens, à savoir « se débarasser de la Question arménienne »[32]. En adoptant cette position que nous partageons entièrement, dans l'analyse de cette question d'une importance énorme, il s'engage donc dans une évidente confrontation avec le ministre des Affaires étrangères.

---

V. Duclert. Voir *Jaurès J.,* Il faut sauver lea Arméniens. Établissement de l'édition, notes et postface par Vincent Duclert, Paris, 2006.

[29] Œuvres de Jean Jaurès, p. 125.

[30] Ibidem.

[31] Ibidem.

[32] Ibid., p. 126.

D'ailleurs, la critique de Jaurès, socialiste oppositionnaire, de l'attitude de Hanotaux au sujet de la politique des puissances et surtout de celle de la France à l'égard du sultan, est beaucoup plus impitoyable et l'on peut s'en convaincre sans la moindre difficulté. Sa critique est reflétée dans presque tous ses discours, même dans ses articles publiés dans la presse française. Donc, il ne distingue absolument pas la responsabilité du sultan de celle de l'Europe. En jetant un coup d'œil sur les origines de la Question arménienne, Jaurès constate avec regret que les puissances ont toujours renoncé à la réalisation de leurs engagements assumés par les traités internationaux. C'est pourquoi il traite à juste titre les Arméniens de dupes et de victimes de « cette intrigue européenne, de ce manquement à la parole européenne »[33]. A son avis, c'est donc l'indifférence de l'Europe qui a permis au sultan de réaliser son projet d'anéantissement des Arméniens. Jaurès critique surtout l'Europe d'être « divisée contre elle-même par des convoitises, par des jalousies, par des égoïsmes inavouables ». C'est donc pour ces raisons, comme il le constate, qu'elle a laissé égorger là-bas tout un peuple[34].

La critique de Jaurès est des plus sévères, surtout à l'égard de l'impassible attitude des milieux gouvernementaux français. Dans un autre discours prononcé également à la Chambre le 22 février 1897, il jette feu et flammes contre les députés, les accusant d'être devenus les assistants « impuissants tout au moins, de toutes ces causes de trouble et de désordre », de n'avoir pas « réclamé à temps avec énergie des réformes pour les Arméniens » et d'avoir « laissé les crimes se commettre »[35].

Il coordonne la politique de la France avec celle de la Russie, son alliée, dont il dévoile la position dans la Question arménienne, celle d'attente et d'ajournement, qui ne correspond point aux intérêts des Arméniens habitant l'Empire ottoman[36]. Quant à la politique française, Jaurès concentre son attention sur deux points, celui du silence complet sur les affaires d'Arménie (il s'agit surtout du silence de la presse corrompue et de celui du gouvernement) et celui de l'abstention de la publication du

[33] Ibid., p. 123.
34 Ibid., p. 127.
[35] Ibid., p. 141.
[36] Ibid., p. 131.

*Livre Jaune*, qui aurait révélé la responsabilité de la France[37].

Jaurès s'exprime aussi nettement à propos de la question douloureuse du démembrement de l'Empire ottoman. Il argumente la menace d'une telle éventualité par l'absence de garanties nécessaires pour les peuples assujettis par le sultan. Il explique la réouverture de la Question d'Orient tout simplement par les massacres des Arméniens. En somme, en vue d'un règlement définitif de la question ottomane, Jaurès approuve la proposition de Hanotaux, celle d'une intervention imminente et efficace dans le but de contraindre le sultan à appliquer des réformes pour tous les peuples de l'Empire. Autrement dit, Jaurès est désireux d'éviter l'intervention militaire et d'écarter la possibilité du démembrement de l'Empire. Il regrette seulement qu'on ait adopté cette politique avec un grand retard[38].

Le discours du comte de Mun (1841-1914) à la Chambre le 3 novembre 1896 se distingue par l'envergure des questions soulevées, dont les interprétations ne sont non plus compatibles avec la position officielle de la Troisième République. À travers son discours, il s'oppose à l'attitude du gouvernement, en considérant la Question arménienne comme « un élément, un incident de cette vieille et redoutable question d'Orient »[39]. De Mun réfute fondamentalement l'approche, ayant beaucoup de partisans en Occident, d'après laquelle le gouvernement ottoman serait incapable de dompter les actions sanglantes des bandes indisciplinées engagées dans les massacres des Arméniens et qu'on aurait pris par erreur pour les vrais auteurs de l'extermination de ce peuple. En se référant aux faits authentiques, il dévoile le rôle d'Abdhülhamid II et sa participation dans l'organisation des régiments de massacreurs, entrés dans l'histoire sous son nom, celui de *hamidiés*. Ceux-ci, comme il le note, ont reçu par-là « une espèce d'investiture officielle »[40]. À part les *hamidiés*, de Mun indique aussi, d'après les récits des témoins oculaires, la participation des gendarmes, des « soldats réguliers, commandés par des officiers » et même de la population aux massacres, surtout aux événements sanglants

[37] Ibid., pp. 131-132.
[38] Ibid., p. 142.
[39] Discours d'interpellations relatives aux événements d'Arménie // « Annales catholiques », 14 novembre 1896, n° 1338, p. 81.
[40] Ibid., p. 72.

de Constantinople au mois d'août 1896[41].

Cependant, son mérite essentiel est d'avoir révélé de la manière la plus détaillée et en profondeur le vrai visage de la politique de la Sublime Porte. Afin de confirmer le caractère étatique du génocide des Arméniens, de Mun met en relief la responsabilité des fonctionnaires d'État qui ont dirigé les actions des massacreurs dans les vilayets ou les ont tolérées. Il se réfère particulièrement à l'exemple de « quelques fonctionnaires honnêtes qui ont résisté, qui ont empêché les massacres », et en conclut que ces rares tentatives prouvent la possibilité d'interdir l'accomplissement des massacres si les fonctionnaires ottomans avaient un tel désir[42]. « On n'a pas le droit de dire qu'il était impossible de maîtriser les brigands, que les fonctionnaires étaient sans force, sans puissance, non, partout où on a voulu le faire, on y a réussi », écrit-il[43].

Pour constater une fois de plus la préméditation du processus génocidaire, de Mun attire l'attention sur un fait, celui de l'attitude favorable du gouvernement ottoman à l'égard des fonctionnaires locaux. Il exprime son indignation à ce propos en soulignant qu'aucun coupable n'a été châtié, même au contraire, ils ont été traités avec faveur et récompenses, « quelques-uns même appelés à Constantinople et comblés d'honneurs »[44] ! Par contre, comme il le note avec douleur, ceux qui ont tâché de résister aux ordres de la Sublime Porte, ont été blâmés, disgraciés et même punis de sévère manière[45].

À la différence de beaucoup de ses contemporaines, de Mun, comme Cochin, ne néglige pas l'activité des partis arméniens, en n'exprimant d'ailleurs pas la moindre sympathie à leur égard. Néanmoins, il élucide une circonstance qui n'est certainement pas secondaire, celle que les Turcs aient commencé à commettre des violences bien avant la formation du comité *hintchakiste,* et, par conséquent, les Arméniens avaient le droit « de faire entendre que l'organisation révolutionnaire a été une riposte plutôt qu'une provocation »[46]. Et en examinant l'opposition des Arméniens sur un fond beaucoup plus étendu, il l'interprète à juste titre

---

[41] Ibid., pp. 73-74.
[42] Ibid., p. 73
[43] Ibidem.
[44] Ibid., p. 74.
[45] Ibidem.
[46] Ibid., p. 78.

par la situation insupportable dans laquelle se trouvaient ces derniers. Il note, en même temps bien des faits recueillis des témoins oculaires pour prouver les difficultés inextricables dans lesquelles se trouvaient les Arméniens dans l'Empire ottoman[47].

De Mun n'a pas l'intention de rendre la Sublime Porte seule responsable des massacres. Il proteste ardemment, comme Jaurès, contre la passivité de l'Europe, dont il place la responsabilité au-dessus de celle du gouvernement ottoman et la traite de plus lourde et de plus grave[48]. Il énonce sa ferme certitude sur la nécessité de l'intervention de l'Europe dans les affaires de l'Empire ottoman, à savoir surveiller et contrôler le processus d'exécution des réformes prévues, d'autant plus que l'Europe a assumé des obligations par le traité de Berlin, mais n'a rien fait dans ce champ depuis dix-huit ans. « Tout s'est évanoui : il ne reste que les abus perpétués et les souffrances accrues par le temps et l'impunité »[49] !

Or, de Mun n'est pas seulement le partisan déterminé de l'exécution des réformes garanties par les traités internationaux, mais aussi le défenseur du maintien de l'intégrité de l'Empire ottoman. Il constate même que « son intégrité reste… la nécessité de l'Europe, plus évidente, plus pressante que jamais, parce qu'elle est la garantie de la paix »[50]. Toutefois, il croit que cette intégrité ne peut se baser que sur la sécurité des habitants de l'Empire, particulièrement de ceux, « dont la race, dont la religion », ne sont pas celles de leurs maîtres[51]. On voit donc que de Mun partage complètement l'approche de Hanotaux sur ce point.

Néanmoins, les discours prononcés de la tribune de la Chambre des Députés, que nous avons analysés, mettent en évidence l'intérêt que la Question arménienne a suscité dans les milieux politiques français et la préoccupation pour le sort du peuple arménien de la part des hommes politiques, même très éminents, au moment tragique de son histoire. Ils ont certainement différentes orientations politiques, même des vues incompatibles, mais cette circonstance ne les empêche pas de soutenir la cause arménienne, de dévoiler les forfaits du gouvernement ottoman

[47] Ibid., pp. 78-80.
[48] Ibid., p. 77.
[49] Ibid., p. 80.
[50] Ibid., p. 82.
[51] Ibidem.

et de critiquer la politique des puissances et surtout celle des milieux gouvernementaux français vis-à-vis de l'extermination des Arméniens.

Il faut tout d'abord souligner leur immense contribution à la présentation du processus authentique du génocide des Arméniens au grand public en France et en Europe, ce que nous n'avons point le droit de livrer à l'oubli.

L'activité déployée dans la Chambre par Cochin, Jaurès, de Mun et d'autres députés du groupe parlementaire comme Gustave-Adolphe Hubbard, Alexandre Millerand, en faveur des Arméniens, a marqué une nouvelle étape de la discussion de la Question arménienne sur un niveau beaucoup plus élevé. C'est grâce à leurs efforts qu'en 1896-1897 la Chambre a organisé les premières discussions sur les massacres arméniens, suivis de l'interpellation de quelques-uns d'entre eux au ministre des Affaires étrangères au sujet des Arméniens. C'est déjà un nouveau phénomène dans la discussion de la Question arménienne qui met en avant le processus de la reconnaissance du génocide des Arméniens en Europe. Leur activité lors de la séance du 3 novembre 1896 a permis d'obtenir de Hanotaux la promesse de la publication d'un *Livre jaune* sur les affaires d'Arménie, contenant la correspondance diplomatique des diplomates français accrédités dans l'Empire ottoman, et qui a vraiment vu le jour en 1897. Or, presque tous les défenseurs français de cette époque du peuple arménien, à de rares exceptions près, comme Pierre Quillard[52], réprouvent la possibilité de l'intervention militaire comme moyen possible d'action, ne limitant les obligations des puissances qu'à la surveillance de l'introduction de sages réformes. Il s'agit donc de la mentalité collective de la nation dont ils sont les représentants.

Notons, qu'en dépit des efforts des défenseurs de la cause arménienne, la Chambre adopte le 3 novembre 1896, par une écrasante majorité des voix, 402 contre 80, la politique turcophile du ministre des Affaires étrangères[53].

*Բազմավէպ, 2007, էջ 468-483*

---

[52] Voir *Quillard P.*, La Quinzaine // « Pro Armenia », 1er novembre 1901.

[53] Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman. 1893-1897, p. 312 (voir la dépêche du 3 novembre 1896 de G. Hanotaux à P. Cambon).

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆ ԱՆՐԻ ԲԱՐԲԻՒ ԿՈՂՄԻՑ

Ֆրանսիացի լրագրող Անրի Բարբիի «Սարսափի երկրում: Նահատակ Հայաստանը» գիրքն[54] ուրոյն տեղ ունի 1915 թ. Հայոց Մեծ եղեռնի պատմութեան սկզբնաղբիւրների թւում: Իբրեւ «Ժուրնալ» թերթի զինուորական թղթակից՝ 1916 թ. նա այցելել է Անդրկովկաս եւ Արեւմտեան Հայաստան, եղել իրադարձութիւնների ականատեսը: Ի դէպ, նոյն կարգավիճակով 1912-1913 թթ. Բարբին հետեւել է բալկանեան պատերազմների ընթացքին, իսկ 1918 թ. կրկին վերադարձել Անդրկովկաս, եղել նաեւ Պարսկաստանում, ինչի արդիւնքում, մասնաւորապէս՝ Հայաստանում եւ Բաքւում 1918 թ. ծաւալուած իրադարձութիւններին նուիրել է առանձին գիրք[55]:

Ըստ Բարբիի վկայութեան՝ 1916 թ. մարտին ինքը Թիֆլիսից գնացքով մեկնել է Սարիղամիշ, իսկ այնտեղից՝ արդէն դժուարանցանելի ճանապարհներով, միայն հինգ օր անց, հասել Էրզրում[56]: Նրա այցելութիւններն Արեւմտեան Հայաստանի քաղաքներ պայ-

---

[54] *Barby H.*, Au pays de l'épouvante. L'Arménie martyre. Préface de M. Paul Deschanel, Paris, 1917 ; Beyrouth [1973]. Տես նաեւ հայերէն եւ ռուսերէն թարգմանութիւնները՝ *Բարբի Հ.*, Սարսափի երկրին մէջ: Նահատակ Հայաստան, թարգմանիչ՝ Միքայէլ Շամտանճեան, Կ. Պոլիս, 1919; *Барби А.*, В стране ужаса. Мученица Армения, Тифлис, 1919. Ռուսերէն թարգմանութիւնը վերահրատարակուել է հետեւեալ ժողովածուում. Геноцид армян и европейская публицистика. Составление, редакция и вступительный очерк М.Д. Амирханяна, Ереван, 2005, с. 139-257. Գրքի որոշ հատուածներ զետեղուել են նաեւ «Հայերի ցեղասպանութիւնն Օսմանեան կայսրութիւնում» փաստաթղթերի ժողովածոյում: Տես Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Составители М.Г. Нерсисян, Р.Г. Саакян. Под редакцией М.Г. Нерсисяна, второе, дополненное издание, Ереван, 1982, с. 455-471: Մեր նախորդներից Բարբիի գրքին հպանցիկ, առանց փոքր-իսկ վերլուծական մօտեցման, անդրադարձել է միայն Արամայիս Մնացականեանը, որը սահմանափակուել է սոսկ նրա որոշ նկարագրութիւնների վերաշարադրմամբ եւ գրքի ենթագլուխների թուարկմամբ: Տես *Մնացականեան Ա. Ն.*, Հայ ժողովրդի ողբերգութիւնը ռուս եւ համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ, Երեւան, 1965, էջ 142-144:

[55] *Barby H.*, La débacle russe. Les extravagances bolchéviques et l'épopée arménienne, Paris, s. d.

[56] *Barby H.*, Au pays de l'épouvante, p. 19-20.

մանաւորուած են եղել գլխաւորապէս ռուսական զօրքերի առաջխաղացմամբ եւ տեղաշարժերով, ինչը նրան հնարաւորութիւն է ընձեռել տարբեր բնակավայրերում ճշգրտել ցեղասպանութեան ականատեսների զանազան վկայութիւնների հաւաստիութիւնը՝ դրանց համադրման միջոցով[57]: 1916 թ. մարտ-օգոստոս ամիսներին տարբեր քաղաքներում (Էրզրում, Տրապիզոն, Երզնկա, Վան, Թիֆլիս) Բարբին մանրամասն զրոյցներ է ունեցել եղեռնի այլազգի (այդ թւում քուրդ) եւ հայ ականատեսների հետ ու նրանցից ստացել հաւաստի տեղեկութիւններ: Նա օգտագործել է յատկապէս Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին չեզոք պետութիւնների (Իտալիա, ԱՄՆ. վերջինս պատերազմի մէջ է ընդգրկուել միայն 1917 թ. ապրիլին)՝ Օսմանեան կայսրութիւնում հաւատարմագրուած դիւանագէտների, Թուրքիայի դաշնակից Գերմանիայի քաղաքացիների, մասնաւորապէս՝ Կարմիր խաչի բուժքոյրերի, տեղահանութիւններից հրաշքով փրկուած՝ Թիֆլիսում ծուարած հայ որբերի, Միջագետքի անապատներում ճանապարհորդած ականատեսների վկայութիւնները: Ըստ այդմ՝ Արեւմտեան Հայաստանում եւ մասամբ նաեւ Միջագետքի անապատներում ծաւալուած իրադարձութիւններին նուիրուած Բարբիի գրքի աղբիւրագիտական յենքը հարուստ է եւ բազմազան, իսկ տեղեկութիւններն՝ արժանահաւատ:

Մեծ եղեռնին առնչուող խնդիրները Բարբին քննարկում է հայ ժողովրդի անցած ուղու յետնախորքի վրայ, օսմանեան բռնակալութեան ներքոյ վաղուց ի վեր հեծող Արեւմտեան Հայաստանի պատմութիւնը բնորոշում՝ իբրեւ «երկարատեւ ու ողբերգական նահատակութիւն»[58], ինչը կարելի է համարել նրա դիրքորոշման անկիւնաքարը:

Հայ ժողովրդի պատմական անցեալին առնչուող համառօտ ակնարկում թէպէտ Բարբին յիշատակում է տարբեր ասպատակիչների՝ Հայաստանին տիրելու համար մղած պայքարի մասին, սակայն անտեսում է հայ ժողովրդի կեանքում ճակատագրական նշանակութիւն ունեցած՝ ԺԶ. դարում Հայաստանի մեծ մասի ռազմակալումը թուրքերի կողմից: Այդուհանդերձ, նա հպանցիկ ակնարկում է Հայաստանի բռնագրաւման մասին, մատնանշելով

[57] Այդ մասին տե՛ս օրինակ՝ նոյն տեղում, էջ 43, 55, 99, 127:
[58] Նոյն տեղում, էջ 6, 114:

դարեր ի վեր օսմանեան լծի ներքոյ հեծող արեւմտահայութեան թշուառ վիճակն «այն երկրում, որը եղել է *իրենց* (ընդգումը հեղինակինն է - *Վ. Պ.*) երկիրը»[59]:

Ըմբռնելով ԺԹ. դարի վերջին եւ Ի. դարի սկզբին հայ ժողովրդի հանդէպ օսմանեան պետութեան կիրառած ցեղասպան քաղաքականութեան ակունքները՝ Բարբին հայ ժողովրդի բնաջնջման գործընթացի վրայ նետում է յետադարձ հայացք եւ ջանում այն քննարկել իր ամբողջութեան մէջ, ինչն ինքնին ողջախոհ մօտեցում է: Հայոց ցեղասպանութեան նախակարապետ եւ մտայղացող նա իրաւամբ համարում է Աբդուլ Համիդ Բ.-ին, որը 1878 թ. յետոյ, ի շարս այլ հանգամանքների (Արեւմտեան Հայաստանի եւ Ռուսաստանի հարեւանութիւնը, որտեղ բնակուող հայերի վիճակն անհամեմատ բարւոք էր, բալկանեան ժողովուրդների օրինակով օսմանեան լծի թոթափմանը միտուած ազատագրական շարժման զարգացման հեռանկարը), ահաբեկուած, մասնաւորապէս Եւրոպայի՝ Օսմանեան կայսրութեան ներքին գործերին նոր միջամտութեան հեռանկարից, «վայրենի տրամաբանութեամբ» վճռել է ոչնչացնել, ըստ իր հոգեբանութեան եւ համոզման՝ վտանգաւոր թուացող տարրին[60]:

Ընդհանուր առմամբ, իրատեսական համարելով հարցի նման մեկնաբանութիւնը՝ հարկ է, այդուհանդերձ, ելնելով Բարբիի շարադրանքից՝ հաւաստել, որ Հայոց ցեղասպանութեան պատճառների նրա վերլուծութիւնը սպառիչ չէ, քանզի հեղինակը շրջանցում է Հայկական հարցի գոյութեան իսկ փաստը: Այլ խօսքերով՝ նա ամբողջութեամբ չի ըմբռնել ցեղասպանութեան կեանքի կոչման գերխնդրի՝ օսմանեան գահակալի առջեւ ծառացած Հայկական հարցին թուրքական եղանակով լուծում տալու էութիւնը: Այնուամենայնիվ, Բարբին անդրադառնում է 1877-1878 թթ. պատերազմին յաջորդած ժամանակաշրջանում դիւանագիտական բանակցութիւնների ընթացքում արեւմտահայութեան կացութեան բարելաւման հետ կապուած քննարկումներին եւ քննադատական խօսքեր ուղղում մեծ տէրութիւնների հասցեին, որոնք ոչինչ չեն ձեռնարկել հայ ժողովրդի հանդէպ ստանձնած «հանդիսաւոր

[59] Նոյն տեղում, էջ 112:
[60] Նոյն տեղում, էջ 7-9:

պարտականութիւններն» ի կատար ածելու ուղղութեամբ[61]:

Հայոց ցեղասպանութեան գործընթացի վերլուծութեան հարցում Բարբիի հայեցակարգը, ըստ որի՝ այն հարկ է դիտել՝ իբրեւ շարունակական բնոյթ կրող իրադարձութիւն, ընդունելի է: Միանգամայն իրաւամբ նա առանձնայատուկ ուշադրութիւն է դարձնում այն հարցին, որ իշխանութեան գալուց յետոյ երիտթուրքերը սոսկ շարունակել են կենսագործել իրենց կողմից գահընկեց արուած Աբդուլ Համիդ Բ.ի մտայղացած՝ հայերի բնաջնջման ծրագիրը[62], ինչի մասին վկայում են 1909 թ. Ադանայի կոտորածները: Սակայն ինչն աւելի կարեւոր է, մեր կարծիքով, Բարբիի կողմից Հայոց ցեղասպանութեան գործընթացի շարունակական բնոյթի ընդգծումն է համիդեան «սարսափելի վարչակարգին» յաջորդած երիտթուրքական իշխանութեան օրօք՝ մինչ 1915 թ. լայնածաւալ կոտորածների եւ տեղահանութիւնների սանձազերծումը: Արձանագրելով հայերի հանդէպ գործադրուած զանազան բռնութիւններ (յանցանքներ, սպանութիւններ)՝ Բարբին փաստում է երիտթուրքերի կողմից ցեղասպանութեան իրականացման տարբեր եղանակների որդեգրման ու կիրառման հանգամանքը, ինչն, ի դէպ, բնորոշ էր նաեւ նրանց նախորդին, եւ ըստ այդմ՝ գործընթացի յարատեւութիւնը[63]: Թէեւ նա ձեռնպահ է մնում դիտել օսմանեան տարբեր վարչակարգերի կողմից հայ ժողովրդի ոչնչացումն՝ իբրեւ միասնական գործընթաց, ինչն անյարիր է ցեղասպանագէտների մի մասի առաջադրած՝ մեր համոզմամբ աւելի ընդունելի հայեցակարգին[64], այդուհանդերձ,

---

[61] Նոյն տեղում, էջ 7:

[62] Նոյն տեղում, էջ 13:

[63] Նոյն տեղում, էջ 14:

[64] Տե՛ս օրինակ *Prince M.*, Un génocide impuni. L'arménocide, Beyrouth, 1975, p. 97-114, 147-242, 345-376 ; *Барсегов Ю.Г.*, Геноцид армян – преступление по международному праву, М., 2000, с. 17-22; *Horowitz I.L.*, Taking Lives. Genocide and State Power. Fifth Edition, Revised, New Brunswick & London, 2002, p. 157-158. Այս տեսակէտի կողմնակիցների թւում է նաեւ ժամանակակից խոշոր ցեղասպանագէտ Եհուդա Բաուերը (Իսրայէլ), որն իր կարծիքն այս հարցի շուրջ յայտնեց 2005 թ. ապրիլի 20-21-ին Երեւանում գումարուած «Ծանրագոյն յանցանք, ծայրագոյն մարտահրաւէր. ցեղասպանութիւնն ու մարդու իրաւունքները» միջազգային համաժողովին ներկայացրած՝ «Անցեալ ցեղասպանութիւնների դասերը որպէս ապագայ ցեղասպանութիւնները կանխելու ուղեցոյց» զեկուցումում:

հայերից ձերբազատումը համարում է օսմանեան ղեկավարների վաղուց ի վեր փափագած երազանքը:

Ուստի երիտթուրքերի իրականացրած լայնածաւալ հայկական կոտորածները Բարբին չի պայմանաւորում Առաջին համաշխարհային պատերազմի բռնկմամբ, իսկ փոխարէնն իրաւամբ հաւաստում է, որ Կոստանդնուպօլսի իշխանութիւնների կողմից հայերի ոչնչացման «թոյլատրումը, իսկ աւելի յաճախ կազմակերպումը», երբեւէ առնչութիւն չի ունեցել որեւիցէ պատերազմական գործողութիւնների մէջ Թուրքիայի ընդգրկուելու հետ[65]: Նման դիրքորոշումը Բարբիի մեծ արժանիքներից է:

Այդուհանդերձ, անհրաժեշտ է յիշատակել նաեւ հայերի բնաջնջման պատճառներին՝ Բարբիի տուած մէկ այլ գնահատականի մասին, որն անյարիր է նշուած իրատեսական մեկնաբանութիւններին: Որքան տարօրինակ է, բայց անդրադառնալով այս խնդրին եւս մէկ անգամ՝ նա Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Կովկասում թուրքերի կրած իւրաքանչիւր պարտութեանը յաջորդած՝ հայերի հանդէպ գործադրուած կոտորածների «բուն պատճառը» մեկնաբանում է սոսկ երկրորդական բնոյթի մի հանգամանքով, այն է՝ «Հայաստանն Արեւելքում ներկայացնում է արեւմտեան քաղաքակրթութիւնը»[66]:

Հայոց ցեղասպանութեան պատճառների վերլուծութեան հարցում Բարբիի իսկ դիրքորոշմանը հակասող նման հետեւութիւնը կարելի է, հաւանաբար, բացատրել օսմանեան հասարակութիւնում հայերի զբաղեցրած դիրքին եւ տեղին տուած նրա բարձր գնահատականներով: Զանազան ոլորտներում (առեւտրի, արհեստների, արդիւնաբերութեան, արուեստի, գիտութեան) ծաւալած գործունեութեան առնչութեամբ, նա պարբերաբար կարեւորում է հայերի բարձր ունակութիւններն ու արժանիքները: Ընդհանուր առմամբ, հայ ժողովրդի մասին Բարբին յայտնում է ամենաբարձր կարծիքը: Նկատի ունենալով նրա ինտելեկտուալ ներուժը՝ նա նոյնիսկ շեշտում է, որ թէ՛ կրթական եւ թէ՛ մշակութային մակարդակով հայերը ոչնչով չեն զիջում եւրոպական ժողովուրդներին եւ այդ առումով «գերազանցում են թուրքերին, նոյնիսկ նրանց ունեւոր դասակարգին»[67]:

---

[65] *Barby H.*, նշվ. աշխ., էջ 5:

[66] Նոյն տեղում, էջ 214:

[67] Նոյն տեղում, էջ 60:

Իրականութեանն ամբողջութեամբ համապատասխանող այն բազմապիսի փաստերը, որոնք նա յղում է այս կապակցութեամբ[68], ոչնչով չեն հիմնաւորում, սակայն, ոչ այնքան համոզիչ այն հետեւութիւնը, որին նա յանգում է, առաւել եւս, ցեղասպանութեան պատճառների՝ իր իսկ ուրուագծած յետնախորքի վրայ:

Բարբիի շարադրանքը յագեցուած է Մեծ եղեռնի ընթացքում երիտթուրքական կառավարութեան ղեկավար դերը մերկացնող հաւաստի փաստերով[69], որոնք բացայայտում են ցեղասպանութեան իրականացումը պետական քաղաքականութեան մակարդակով: «Մի ամբողջ քրիստոնեայ ժողովրդի պարբերական ոչնչացումը թուրքական կառավարութեան… ոճիրն է»,– այսպիսին է նրա հիմնական եզրահանգումներից մէկը[70], ինչը Բարբին հիմնաւորում է բազմիցս՝ վկայակոչելով տարբեր տարածաշրջաններում արձանագրուած այլեւայլ փաստեր:

Ծանրութեան կենտրոնը տեղափոխելով իր այցելած վիլայէթների օրինակի վրայ՝ Բարբին ոչ միայն մանրամասնում է Էրզրումի հայ բնակչութեան կոտորածներին առնչուող հանգամանքները, այլեւ, համադրելով տարբեր տարածաշրջաններից ստացուած վկայութիւնները եւ անձնական դիտարկումները, հաւաստում, որ հայկական բոլոր վիլայէթների հայ բնակչութիւնն արժանացել է միեւնոյն ճակատագրին, ինչ Էրզրումի հայութիւնը: Հիմնուելով Էրզրումում ամերիկեան հիւպատոս, իրադարձութիւնների ականատես Սթափլըթոնի (Stapleton) տեղեկութիւնների վրայ՝ Բարբին բացայայտում է Էրզրումի հայերի կոտորածի եւ տեղահանութեան (որոնց հետեւանքով, ինչպէս նա նշում է, 18.000 հայից կենդանի են մնացել միայն 120-ը[71]) գլխաւոր պատասխանատուներին, մասնաւորապէս՝ տեղական բարձրաստիճան պետական պաշտօնեաներ՝ թուրքական զօրքերի հրամանատար Քեմալ փաշային, քաղաքի ոստիկանապետին, օսմանեան խորհրդարանի պատգամաւոր, ՄԱԿ-ի անդամ Սէյֆուլահին[72] եւ շատ աւելի ակնառու դարձնում օսմանեան վարչակարգի չարագուշակ դերը:

---

[68] Նոյն տեղում, էջ 217-218:
[69] Նոյն տեղում, էջ 55-56, 81, 100, 115 եւ այլն:
[70] Նոյն տեղում, էջ 55:
[71] Նոյն տեղում, էջ 28:
[72] Նոյն տեղում, էջ 34:

Միեւնոյն վերլուծական վերաբերմունքն է նա ցուցաբերում Տրապիզոնում տեղի ունեցած հայկական կոտորածների առնչութեամբ: Այս պարագայում եւս չբաւարարուելով սոսկ իրադարձութիւնների նկարագրութեամբ եւ քաղաքի 14.000 հայի ոչնչացման փաստմամբ, որոնցից, ըստ նրա՝ փրկուել են միայն երկու ընտանիք եւ տասնչորս կին, նա պատասխանատվութիւնը վերագրում է գլխաւորապէս քաղաքում ՄԱԿ-ի նախագահ Նայիլ Բէյին[73]:

Պետական քաղաքականութեան անսքող բացայայտմանն են միտուած նաեւ Բարբիի այլ հաւաստումներ: Նա թռուցիկ նշում է 1915 թ. ապրիլի 24-ին հայ մտաւորականների՝ «պատգամաւորների, պրոֆեսորների, բժիշկների, դերասանների, գրական գործիչների» կալանքի մասին եւ այն հիմնաւորում «նրանց ձայնը լռեցնելու» անհրաժեշտութեամբ[74]: Ի դէպ, այս իրադարձութիւնը հեղինակը պատճառաբանում է միայն ձերբակալուածների *հայկական ծագմամբ* եւ դրանով իսկ ակնառու դարձնում, որ տուեալ իրադարձութիւնը չի կարող դիտուել՝ իբրեւ փոլիթիսայդ (politicide), որով ժամանակակից ցեղասպանագէտները (Ի. Չառնի, Ռ. Ռումել, Թ. Գուրր, Բ. Հարֆ)[75] բնորոշում են լոկ քաղաքական պատկանելութեան հողի վրայ տեղի ունեցած զանգուածային բռնութիւնները (օրինակ՝ քաղաքական ախոյեանների ոչնչացումը Ֆրանսիայում՝ յակոբինեան դիկտատուրայի օրօք կամ ԽՍՀՄ-ում՝ ստալինեան ժամանակաշրջանում):

Նոյն՝ պետական քաղաքականութեան մերկացմամբ է կարելի մեկնաբանել Բարբիի արձանագրած մի քանի փաստեր եւս: Դրանք են՝ 1915 թ. ապրիլից ի վեր իշխանութիւնների կողմից ամբողջ հայ բնակչութեան զինաթափումը եւ մահմեդականների զինումը, քրդական հրոսակախմբերի կազմակերպումը, չարագործների ազատ արձակումը բանտերից (նրանցից «չեթեներ» ձեւաւորելու համար)[76]:

---

[73] Նոյն տեղում, էջ 53:

[74] Նոյն տեղում, էջ 56:

[75] Այդ մասին տես Le livre noir de l'humanité. Encyclopédie mondiale des génocides. Sous la direction de Israel Charny, Toulouse, 2001, p. 37, 42, 48 ; *Harff B.*, Recognizing Genocides and Politicides,– Genocide Watch. Edited by Helen Fein, New Haven, London, 1992, p. 28-29.

[76] *Barby H.*, նշվ. աշխ., էջ 56-57:

Հեղինակը յատուկ նշանակութիւն է տալիս նաեւ պատերազմական գործողութիւնների սանձազերծումից ի վեր հայ զինուորներին զինծառայութիւնից ազատելու եւ թիկունքում շինարարական աշխատանքներում օգտագործելու հանգամանքին, ինչպէս նաեւ «մոլեռանդ հրահրիչների»՝ թուրք բնակչութեան շրջանում ծաւալած գործունէութեանը՝ բանակում հայերի հանդէպ «վատթարագոյն վերաբերմունք» սերմանելու նպատակով, ինչը կը յանգեցներ, անտարակոյս, վերջիններիս բողոքին եւ առիթ կը ծառայէր նրանց բոլորին բնաջնջելու համար[77]:

Պետական քաղաքականութեան մակարդակով հայերի ոչնչացման յենքի վրայ է հեղինակը քննարկում նաեւ լայնածաւալ տեղահանութիւնների խնդիրը: Այս հարցում, սակայն, նա թոյլ է տալիս երկու անճշտութիւն՝ հայերի տեղահանութիւնների իրականացումն առնչելով «1915 թ. մայիսի 20-ի (հունիսի 2-ի) հրեշաւոր դեկրետին», որով Էնվերը «երիտթուրքական կոմիտէի անունից կարգադրել է Հայաստանի, Անատոլիայի եւ Կիլիկիայի վիլայէթներից բոլոր հայերի տեղահանութիւնն արաբական անապատներ»[78]: Բարբին վրիպել է ոչ միայն 1915 թ. մայիսի 14/27-ի տեղահանութեանը վերաբերող օրէնքի ամսաթուի հարցում, այլեւ այն վերագրել է միայն Էնվերին, այն դէպքում, երբ օրէնքը հաստատուել է նախարարների խորհրդում[79]:

Շրջանցելով տեղահանութեան ընթացքում հայ ժողովրդի կրած

---

[77] Նոյն տեղում, էջ 21:

[78] Նոյն տեղում, էջ 57:

[79] Այդ մասին տես *Dadrian V.*, Histoire du génocide arménien. Conflits nationaux des Balkans au Caucase, Paris, 1996, p. 362 ; *Պէյլերյան Ա.*, Ներածութիւն.– Մեծ տէրութիւնները, Օսմանեան կայսրութիւնը եւ հայերը ֆրանսիական արխիւներում (1914-1918), հտ. I: Փաստաթղթերի ժողովածոյ, աշխատասիրութեամբ Արթուր Պէյլերյանի, ֆրանսերէնից թարգմանեց Վարուժան Պօղոսեանը, Երեւան, 2005, էջ 43: Տեղահանութեան օրէնքի ընդունման հանգամանքների մասին մանրամասն տես *Kévorkian R.H.*, Le génocide des Arméniens, Paris, 2006, p. 306-313. Ի դէպ, տեղահանութիւններին առնչուող օրէնքի ամսաթուի հարցում նոյն անճշտութիւնն են թոյլ տուել նաեւ Բարբիի ժամանակակից ֆրանսիացի այլ պատմաբաններ, որոնք սակայն, ի տարբերութիւն նրա՝ դրա ընդունումը վերագրել են երիտթուրքերի «Միութիւն եւ առաջադիմութիւն» կոմիտէին. տես *Doumergue E.*, L'Arménie. Les massacres et la question d'Orient. Conférence, études et documents, Paris, 1916, p. 25 ; *Morgan J. de*, Sur les nationalités, Paris-Nancy, 1917, p. 92.

տառապանքների՝ Բարբիի նկարագրութիւնների թուարկումը՝ նշենք, որ այս հարցի շուրջ նրա մեկնաբանութիւնները, որոնց յանգել է տարբեր տարածաշրջաններում (Երզնկա, Մուշ, Էրզրում, Խարբերդ) արձանագրուած տեղահանութիւնների փորձի ուսումնասիրութեան հիման վրայ, խիստ արժէքաւոր են: Յաւուր պատշաճի ըմբռնելով Էրզրումի եւ շրջակայքի ամբողջ հայ բնակչութեան տեղահանութեան իմաստը, նա արժեւորում է դրա իրականացումը թուրքերի կողմից նախօրօք մշակուած ծրագրի հիման վրայ, որը յետապնդում էր միայն մէկ՝ բնակչութեանը բնակավայրից հեռացնելու միջոցով նրա կոտորածը դիւրին դարձնելու նպատակ[80]: Նա, այսպիսով, հերքում է երիտթուրքերի պարագլուխների՝ հայկական տեղահանութիւններն իբրեւ հայերի կարծեցեալ զանգուածային ապստամբութեանն ու մահմեդականների դէմ նրանց գործած վայրագութիւններին ի պատասխան կիրառուած հարկադրական միջոց մեկնաբանող մտացածին վարկածի հաւանականութիւնը[81]:

Սեբաստիայից (Սւազից) Խարբերդ ձգուող ճանապարհին տեղահանուածների քարաւաններից մէկում ընդգրկուած հայերի նկատմամբ կիրառուած բռնութիւնների կապակցութեամբ Բարբին մատնանշում է, մասնաւորապէս թուրք սպաների կարգադրութեամբ իրականացուած տղամարդկանց համատարած սպանութեան իրողութիւնը, այն դէպքում, երբ կանայք խնայուել են[82]: Նոյն փաստը նա արձանագրում է նաեւ Եփրատի հովտում ծուարած՝ տեղահանուած հայերի օրինակի հիման վրայ, մասնաւորապէս նշելով, որ մազապուրծ եղածները «բացառապէս կանայք են, ծերունիներ եւ երեխաներ»[83]: Դրանով նա աւելի ցցուն է դարձնում հայ ժողովրդի դէմ գործադրուած քաղաքականութեան ցեղասպան բնոյթը:

Ընդգծելով, որ տեղահանութեան գործընթացը «սկիզբ է առել մայրաքաղաքից ստացուած հրամանի հիման վրայ, որը պաստառուել է բոլոր քաղաքներում եւ գիւղերում», Բարբին տեղահանութիւնը բնորոշում է իբրեւ տարբեր փուլերից բաղկացած («կոտորած, քարաւան, անապատ»)՝ հայ ժողովրդի բնաջնջման

[80] *Barby H.*, նշվ. աշխ., էջ 23:
[81] Այդ մասին տես *Պէյլերյան Ա.*, նշվ. աշխ., էջ 31-37:
[82] *Barby H.*, նշվ. աշխ., էջ 92-93:
[83] Նոյն տեղում, էջ 172:

անքակտելի մաս, քանզի, ինչպէս իրաւամբ նշում է, տեղահանուածներից սոսկ ոմանց է յաջողուել հրաշքով խոյս տալ մարդասպաններից[84]: Այս հետեւութեանը նա յանգել է, անտարակոյս, ոչ միայն ականատեսների հաղորդած տեղեկութիւնների, այլեւ Արեւմտեան Հայաստանի տարածքում ճանապարհորդութիւնների արդիւնքում ստացած անձնական տպաւորութիւնների հիման վրայ: Սեբաստիայից Խարբերդ ձգուող ճանապարհին 1915 թ. ամռանը տեղի ունեցած կոտորածների արդիւնքում, Բարբին 1916 թ. յուլիսին փաստում է զոհերի գանգերի առատութիւնը, ընդ որում, այնպիսի ահռելի քանակութեամբ, որ ճանապարհորդին հեռուից կարող էր թուալ, թէ «նկատում է հասած սեխերի անծայրածիր դաշտեր»[85]: Իսկ օգոստոսին արդէն Երզնկայի շրջակայքում, նա դարձել է հազարաւոր մարդկային կմախքների ականատեսը. «Սրանք 1915 թ. յունիսին Էրզրումից, Խարբերդից, Բաբերդից եւ այլ վայրերից Միջագետք, այսպէս ասած, տեղահանուելու համար արտաքսուածների մնացորդներն են,– գրում է նա,– որոնք շատ մեծ թուով կոտորուել են Երզնկայի մօտակայքում»[86]: Համանման տեղեկութիւններ է նա հաղորդում նաեւ Բիթլիսի տարածաշրջանում տեղի ունեցած իրադարձութիւնների առնչութեամբ այնտեղ կատարած այցելութիւնից յետոյ, որտեղ 1915 թ. տեղի ունեցած կոտորածների հետեւանքով 18.000 հայ բնակչից կենդանի են մնացել միան 300-ից 400-ը, որոնք բոլորը հաւատափոխ են եղել[87]:

Անդրադառնալով տեղահանուած հայերի դժնի ճակատագրին, Բարբին Միջագետքի եւ Սիրիայի աւազոտ անապատներում («անիծեալ տեղանքում, որը դժոխք է»[88])՝ կիզիչ արեւի ճառագայթների տակ սովից ու ծարավից տառապող, հրոսակախմբերի եւ գիշատիչ գազանների զոհը դարձող մարդկանց խմբաւորումներն անուանում է «մահուան քարաւաններ». «Այսպիսին է այն ճշգրիտ բնորոշումը, որը համապատասխանում է առաջին կոտորածներից փրկուած տեղահանուածների խղճուկ ամբոխներին»[89]:

---

[84] Նոյն տեղում, էջ 57, 63:
[85] Նոյն տեղում, էջ 93:
[86] Նոյն տեղում, էջ 100:
[87] Նոյն տեղում, էջ 94-95:
[88] Նոյն տեղում, էջ 163:
[89] Նոյն տեղում, էջ 63:

Միջագետք տեղահանուածների ճամբարներից մէկում հայերի համար առկայ սարսափելի պայմանների առիթով Բարբին, հիմնուելով թուրքական բանակի հայազգի բժշկից ստացուած տեղեկութիւնների վրայ, ստեղծուած անմխիթար կացութեան մեղաւորներ է համարում Թուրքիայի ղեկավարներին եւ նրանց մեղսակիցներին[90]:

Այսպէս, բազում փաստերով հիմնաւորելով երիտթուրքերի ղեկավար դերը, նա Հայոց Մեծ եղեռնը, որի արդիւնքում ոչնչացուել է «աւելի քան մէկ միլիոն մարդկային էակ, մի ամբողջ ժողովրդի կէսը», համարում է երիտթուրքական կառավարութեան «գործը, որն իշխանութիւնը գրաւելուց յետոյ քաղաքակիրթ Եւրոպայի կողմից ընդունուել է՝ իբրեւ մարդասիրութեան եւ առաջադիմութեան կառավարութիւն»[91]: Ինչպէս տեսնում ենք, ի վերջոյ, եղեռնի պատասխանատուութիւնը նա վերագրում է երիտթուրքերի վարչակարգին եւ յանգում միակ հնարաւոր հետեւութեան. «Նրանք են… որ յղացել են կոտորածը եւ հրահանգել դրա իրականացումը: Նրանք են, վայրենի քրդերին եւ, հնարաւորութեան սահմաններում, ամէնուր մահմեդականների կրօնական մոլեռանդութիւնը գրգռելով, նրանց դրդել սպանութիւնների»[92]:

Փոխարէնը, Բարբին դրսեւորում է անկողմնակալ վերաբերմունք սակավաթիւ թուրք պաշտօնեաների՝ հայերի հանդէպ ցուցաբերած գթասիրտ վերաբերմունքի վերհանման հարցում, որոնք, ինչպէս նրանց նախորդներից ոմանք 1890-ական թթ. եւ 1909 թ. կիլիկեան կոտորածների ժամանակ, օգնութեան ձեռք են մեկնել հայերին: Նա յիշատակում է Էրզրումի վալիի մասին, որը տեղահանութեան դատապարտուած հայերին օգնելու համար արել է ամէն ինչ՝ նրանց, մասնաւորապէս հնարաւորութիւն ընձեռելով ձեռք բերել տրանսպորտի միջոցներ (սայլեր, կառքեր): Բացի դրանից, Բարբին հպանցիկ յիշատակում է նաեւ քաղաքի «օսմանեան բնակչութեան մի մասի»՝ հայերի նկատմամբ

[90] Նոյն տեղում, էջ 164:

[91] Նոյն տեղում, էջ 205: Ինչ վերաբերում է զոհերի թուաքանակին, հարկ է նկատի ունենալ, որ Բարբին ստոյգ տուեալներ ունենալ դեռեւս չէր կարող, քանզի գիրքը գրելու ժամանակ (1916 թ.), ցեղասպանութեան գործընթացն ընթացքի մէջ էր:

[92] Նոյն տեղում, էջ 207:

դրսեւորած մարդասիրական վերաբերմունքի մասին[93]: Ըստ նրա մէկ այլ վկայութեան՝ Տրապիզոնում տեղի ունեցած ահարկու անցքերը վրդովեցրել են մահմեդական բնակչութեան մի մասին եւ անգամ սարսափ ազդել նրա վրայ, որն «առաջին օրերին ջանացել է փրկել մի քանի զոհերի»: Նա յիշատակում է նաեւ քաղաքի թուրք բնակիչներից մէկի՝ Էշադիր օղլու մասին, որը զէնքը ձեռքին փորձել է դիմակայել հրոսակներին, սակայն զոհուել է մի քանի հայերի հետ մէկտեղ[94]:

Բարբին արժեւորում է նաեւ տարբեր այլազգիների, յատկապէս՝ որոշ քրդերի եւ յոյների հայերին ցուցաբերած օգնութիւնը[95]: Յատկանշական է Բիթլիսի տարածաշրջանում արձանագրուած՝ տեղի քուրդ աշիրեթների կողմից՝ կոտորածներից մազապուրծ հայերին (շուրջ 300 ընտանիքի) տասնմէկ ամիս լեռներում ապաստանելու եւ նոյնիսկ նրանց գրոհող թուրք եւ քուրդ ելուզակներից պաշտպանելուն վերաբերող փաստը, ինչի համար հիմք է ծառայել հայերի՝ ռուսական զօրքերի հրամանատարութեանը յղած՝ 1916 թ. ապրիլի 11/24-ի նամակը[96]:

Սակայն անկախ թէ՛ սակավաթիւ թուրք պաշտօնեաների ու շարքային քաղաքացիների եւ թէ՛ այլազգիների ցուցաբերած օգնութեան հանգամանքներից, արեւմտահայութիւնն, այդուհանդերձ, ապաւինել է գլխաւորապէս իր ուժերին՝ դիմելով ինքնապաշտպանութեան, ինչը 1915 թ. խարսխուել է աւելի ամուր հիմքերի վրայ եւ ծաւաւել շատ աւելի ընդարձակ տարածաշրջաններում[97], քան 1890-ական թուականներին: Համառօտակի յիշատակելով տարբեր քաղաքներում (Շապին-Գարահիսար, Ուրֆա, Չուրք Մարզպան) կազմակերպուած ինքնապաշտպանութեան մասին, Բարբին հանգամանօրէն նկարագրում է յաջողութեամբ պսակուած՝ Մուսա լեռան եւ Վանի հերոսամարտերը:

---

[93] Նոյն տեղում, էջ 31, 34:

[94] Նոյն տեղում, էջ 51, 52:

[95] Նոյն տեղում, էջ 52, 95-96:

[96] Նոյն տեղում, էջ 104-108:

[97] Այդ մասին տես *Սահակեան Ռ.*, Արեւմտահայութեան ցեղասպանութիւնը եւ ինքնապաշտպանական կռիվները 1915 թուականին, Երեւան, 2005, էջ 162-370; *Դեւրիկեան Տ.*, Արեւմտահայութեան ինքնապաշտպանութիւնը, 1915-1923, Երեւան, 2005, էջ 10-269:

Թափանցելով զանազան մանրամասների մէջ, նա, ուրուագծում է 1915 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Մուսա լեռան «հերոսական դիմադրութեան», ընդհանուր առմամբ, հաւաստի պատկերը, որի պատճառը եղել է հայերի՝ Միջագետք արտաքսուելուն առնչուող կարգադրութիւնը[98]:

Շատ աւելի ծաւալուն են Բարբիի՝ 1915 թ. ապրիլ-մայիսին Վանի ինքնապաշտպանութեան նկարագրութիւնները, որի մասին տեղեկութիւններ ստացել է Վանում՝ ռուսական բանակի հայ կամաւորներից: Դիմադրութեան ձեռնամուխ լինելու հայերի ցանկութիւնը Բարբին պատճառաբանում է թուրքական բանակում հայ զինուորների զինաթափմամբ եւ ըստ Վանի վալի Ջեւդեթ բէյի կարգադրութեան, տասներկու հայ զինուորների սպանութեամբ: Միաժամանակ նա բացայայտում է Ջեւդեթի գործելամիջոցները, որոնք միտուած են եղել իրավիճակի շիկացմանը՝ արհեստականօրէն հայկական ապստամբութիւն հրահրելու, եւ իբրեւ դրա հետեւանք հայերին կոտորելու հիմնաւոր պատճառ ունենալու մտադրութեամբ: Պատահական չէ, որ Բարբին փաստում է իրավիճակը խաղաղ եղանակով կարգաւորելու ուղղութեամբ հայ հոգեւոր եւ քաղաքական առաջնորդների ձեռնարկած քայլերը, որոնք, սակայն, արդիւնքի չեն յանգեցրել[99] եւ քողազերծում է Վանում հայերի «խռովութեան» տեսակէտի կողմնակիցների կռուանները:

Առճակատման պատրուակ նա իրաւամբ համարում է հայ կանանց նկատմամբ թուրք զինուորների գործադրած բռնութիւնները[100]: Անուանելով հայերի դիմադրութիւնը հերոսական եւ հիասքանչ[101]՝ Բարբին ընդգծում է յատկապէս հայերի՝ «ազգային գործին հաւատարիմ մնալու», այլ ոչ թէ նախահարձակ լինելու հանգամանքը[102]: Թէպէտ նա չի մանրամասնում Վանի ինքնապաշտպանութեան առանձնայատկութիւնը, որը յանգում էր քաղաքի երկու՝ միմեանցից մեծ հեռաւորութեան վրայ գտնուող հայկական թաղամասերում՝ Այգեստանում եւ Քաղաքամէջում՝ տարբեր ղեկավարների առաջնորդութեամբ եւ, փաստօրէն, միմեանցից անկախ ու ինքնուրոյն

---

[98] *Barby H.*, նշվ. աշխ., էջ 119-126:
[99] Նոյն տեղում, էջ 133:
[100] Նոյն տեղում, էջ 134: Այդ մասին տե՛ս նաեւ *Սահակեան Ռ.*, նշվ. աշխ., էջ 195:
[101] *Barby H.*, նշվ.աշխ., էջ 127, 135:
[102] Նոյն տեղում, էջ 135-136:

բնոյթ կրող դիմադրական պայքարի[103], այդուհանդերձ, իր տեղեկատուութեան շրջանակներում հանգամանօրէն նկարագրում է Վանի հայութեան ինքնապաշտպանական մարտերը մինչ ռուսական զօրքերի ժամանումը[104]:

Էականը, սակայն, ոչ այնքան հեղինակի՝ հայերի ինքնապաշտպանութեան դրուագների նկարագրութիւններն են, որքան նրա մեկնաբանութիւնները: Բարբին հակադրւում է այն թիւր մտայնութեանը, ըստ որի՝ հայերը, ի տարբերութիւն բալկանեան ժողովուրդների, երբեւէ չեն դիմել ինքնապաշտպանութեան: Չբաւարարուելով հպանցիկ դիտարկումներով՝ նա ջանում է վերլուծել հայերի՝ արտաքուստ ոչ այնքան ակտիւ դիրքորոշման պատճառները:

Հայերի ինքնապաշտպանութեան մեկնաբանութեան հարցում Բարբին ճանրութեան կենտրոնը տեղափոխում է դարեր շարունակ օսմանեան բիրտ վարչակարգի ճիրաններում հեծող արեւմտահայերի կեանքի անելանելի պայմանների վերհանման հարթութիւն, ինչպիսիք են եղել «վատթար վերաբերմունքը, կողոպուտները, առեւանգումները, հրդեհները, արդարադատութեան բացակայութիւնը, սպանութիւնները, որոնցից ոչ մէկը նրանց չի շրջանցել»[105], եւ որոնք հայերին դրդել են դիմելու զէնքի: Այս հարցում, սակայն, նա արձանագրում է օսմանահպատակ հայերին բնորոշ երկու միտում, որոնք արժանի են ուշադրութեան: Նա գտնում է, որ առաւել շօշափելի յաջողութիւնների հասել են լեռնային զանգուածներում ապրող հայերը, որոնց շրջանում պայքարը հարստահարիչների դէմ դարեր շարունակ երբեւէ չի մարել, քանզի այդ վայրերը բնակեցուած են եղել գրեթէ բացառապէս հայերով: Փոխարէնը՝ դաշտավայրերում, «անծայրածիր, հաղորդակցութեան միջոցներից զուրկ տարածքներում», թուրք եւ մահմեդական ժողովուրդների անմիջական հարեւանութեամբ բնակուող հայերի առջեւ ծառացել են մեծ բարդութիւններ[106]: Ընդհանուր առմամբ, ընդունելի այս մեկնա-

---

[103] Տե՛ս *Ա-ԴՕ,* Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թուականներին, Երեւան, 1917, էջ 224; *Սահակեան Ռ.*, նշվ. աշխ., էջ 185-252; *Դեւրիկեան Տ.*, *նշվ. աշխ.*, էջ 54-93; *Kévorkian R.H.*, նշվ. աշխ., էջ 399-405:

[104] *Barby H.*, նշվ. աշխ., էջ 134-139:

105 Նոյն տեղում, էջ 114:

[106] Նոյն տեղում, էջ 111-112:

բանութիւնների հիմնաւորման համար նա յղում է 1862 եւ 1894-1896 թուականների հայկական ազատագրական շարժումների փորձը, որոնց կազմակերպիչները, միաւորուել էին՝ հետապնդելով, ըստ նրա դիպուկ եւ հաւաստի բնորոշման, «կառավարութեան պարբերական ապօրինութիւններից»՝ կեղեքուած ժողովրդի իրաւունքները, ինչպէս նաեւ որոշ վայրերում նրան կոտորածներից պաշտպանելու նպատակ[107]:

Ակնյայտ է, որ տուեալ հարցի էութեանը քաջատեղեակ Բարբին հայկական ապստամբական շարժումները պայմանաւորում է բացառապէս հայ ժողովրդի հանդէպ օսմանեան վարչակարգի ի սկզբանէ դրսեւորած անմարդկային վերաբերմունքով եւ դրանք դիտում՝ իբրեւ ժողովրդի գոյատեւման համար մղուող ինքնապաշտպանական մարտեր:

Հարկ է նշել, որ 1915 թ. Վանում հայերի հերոսական ինքնապաշտպանութիւնը երիտթուրք պարագլուխների (Թալէաթ, Ջեւդեթ եւ այլք) կողմից ի սկզբանէ շահարկուել է եւ մեկնաբանուել՝ իբրեւ հայկական «խռովութիւն», որն ինքնաբերաբար թելադրել է այն ճնշելու անհրաժեշտութիւնը, ինչին օսմանեան իշխանութիւնները դիմել են հարկադրաբար: Այս վարկածին հետագայ տասնամեակներում տուրք են տուել բազում թուրք պատմաբաններ: Ուստի, Վանում հայերի կողմից հարկադրաբար ինքնապաշտպանութեան դիմելու փաստի հիմնաւորմամբ՝ Բարբին հակահարուած է տալիս վաղուց ի վեր շրջանառութեան մէջ դրուած եւ պատմական իրականութեան հետ որեւէ առնչութիւն չունեցող՝ այս վարկածին[108]:

Ինքնապաշտպանութեան, այն է՝ «մարդասպաններին հակադրուած դիմադրութեան» կապակցութեամբ առաջադրած իր հայեցակարգի ուղեծրում է Բարբին քննարկում նաեւ հայ կամաւորների գործունեութիւնն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ շեշտը դնելով Արեւելեան Հայաստանում կամաւորական լայնածաւալ շարժման սկզբնաւորման վրայ, որն արդարացիօրէն գնահատում է՝ իբրեւ «ազգային ազատագրական շարժում»[109], արժեւորում կամաւորական խմբերի եւ նրանց «առասպելական» առաջնորդների՝

[107] Նոյն տեղում, էջ 115:

[108] Այդ մասին մանրամասն տե՛ս *Սահակեան Ռ.*, նշվ. աշխ., էջ 254-266:

[109] *Barby H.*, նշվ. աշխ., էջ 147:

Անդրանիկի, Քեռու եւ այլոց՝ կովկասեան ռազմաճակատում ռուսական զօրքերին ցուցաբերած մեծ օժանդակութիւնը[110]:

Բարբին մանրամասնօրէն քննարկում է ոչ միայն Միջագետք եւ Սիրիա տեղահանուածների, այլեւ Կովկաս գաղթած հայերի դառը ճակատագիրը եւ ապացուցում, որ նրանցից շուրջ 400.000-ը մահկանացուն կնքել են դեռեւս ճանապարհին, իսկ այն կացութիւնը, որում գտնուել են ցեղասպանութիւնից փրկուածները, բնորոշում է իբրեւ «սարսափելի»[111]:

Բարբին արժեւորում է նաեւ Մեծ եղեռնին առնչուող մի շարք այլ հանգամանքներ: 1915-1916 թթ. հայ բնակչութեան ունեցուածքի կողոպուտի, բռնի կրօնափոխութեան, մարդկանց վաճառքի մասին նրա շարադրանքում հանդիպում ենք սոսկ ցաքուցրիւ տեղեկութիւնների: Յղելով Էրզրումում հայկական եկեղեցու թալանի փաստը՝ նա պարզաբանում է, որ հայերի ունեցուածքի վաճառքից յետոյ թուրքական պետական գանձարանը (Trésor) բռնագրաւել է դրանից ստացուած եկամուտը[112]: Բռնի կրօնափոխութեան հետ կապուած հեղինակի տեղեկութիւնները եւս սուղ են: Այս հարցի կապակցութեամբ նա խօսքը կենտրոնացնում է Էրզրումի եւ Բիթլիսի օրինակների վրայ՝ պարզաբանելով, որ մահուան ճիրաններից փրկուել են միայն այն հայերը (գլխաւորապէս կանայք եւ երեխաներ), որոնք փոխել են կրօնը[113], թէեւ, ըստ նրա շարադրանքի, անհրաժեշտ ենք գտնում մանրամասնել, որ նա բացայայտօրէն հակադրւում է իրականութեանը չհամապատասխանող՝ Հայոց ցեղասպանութիւնն իբրեւ լոկ կրօնական ակունքներ ունեցող իրադարձութիւն մեկնաբանող տեսակէտի կողմնակիցներին:

Հիմնուելով իր վարած հետաքննութեան տուեալների վրայ՝ Բարբին 1916 թ. յունիսին արձանագրում է Փոքր Ասիայի բոլոր քաղաքներում ստրկավաճառական շուկաների գոյութեան փաստը, որտեղ «վաճառում են տեղափոխութիւնների ժամանակ թուրքական կամ քրդական հրոսակախմբերի առեւանգած կանանց, երիտասարդ աղջիկների եւ երեխաների»[114]: Ինչպէս տեսնում ենք,

[110] Նոյն տեղում, էջ 147-150:
[111] Նոյն տեղում, էջ 187, 191:
[112] Նոյն տեղում, էջ 27:
[113] Նոյն տեղում, էջ 25, 95:
[114] Նոյն տեղում, էջ 82-83:

ըստ Բարբիի հաղորդած տեղեկութիւնների՝ կարելի է համոզուել, որ Մեծ եղեռնի գործընթացին, ընդհանուր առմամբ, յատուկ են եղել Հայոց ցեղասպանութեան առաջին փուլին բնորոշ հիմնական առանձնայատկութիւնները:

Փոխարէնը, Բարբին վկայում է նաեւ Մեծ եղեռնի որոշ յուրահատկութիւնների մասին: Այս առումով, լայնածաւալ տեղահանութիւններից բացի նա մատնանշում է նաեւ երիտթուրքերի կողմից՝ ժամանակի տեխնիկայի նուաճումների օգտագործման հանգամանքը, ինչպիսիք են՝ հեռախօսը եւ հեռագիրը՝ նշելով, որ դրանք օժանդակել են կոտորածներին վերաբերող հրամանների արագ հաղորդմանը եւ տարածմանը[115]: Այսպիսով, նա, փաստօրէն, իր նպաստն է բերում Շոայի եզակիութեան տեսութեան կողմնակիցների կռուաններից մէկի հերքմանը, ըստ որի՝ հրէաների բնաջնջման ընթացքում, ի տարբերութիւն այլ ցեղասպանութիւնների, օգտագործուել են տեխնիկայի ժամանակակից նուաճումները: Ըստ այդմ՝ Բարբին, անտարակոյս, հիմնաւորում է մի շարք ցեղասպանագէտների ոչ այնքան համոզիչ այդ փաստարկի կապակցութեամբ՝ ֆրանսիացի ցեղասպանագէտ Բ. Բրիւնետոյի առաջադրած առարկումների իրաւացիութիւնը[116]:

Ինչ վերաբերում է Մեծ եղեռնի կազմակերպիչների հովանաւորների նշաւակմանը՝ Բարբին առանձնայատուկ ուշադրութիւն է դարձնում կայզերական Գերմանիայի հայատյաց դիրքորոշման մանրամասն վերլուծութեան վրայ եւ այն քննարկում երկու՝ պետական քաղաքականութեան, ինչպէս նաեւ Օսմանեան կայսրութեան տարածքում գտնուող գերմանացի սպաների ու զինուորների՝ ցեղասպանութեան գործընթացին ունեցած մասնակցութեան կտրուածքներով:

Բարբին հիմնաւորապէս բացայայտում է արեւմտահայութեան համար վճռական նշանակութիւն ունեցած գերմանական պաշտօնական շրջանների՝ իրենց դաշնակից Թուրքիայի նկատմամբ որդեգրած հովանաւորական քաղաքականութեան էութիւնը[117]: 1915 թ. իրականացուած «սարսափելի յանցանքի» պատասխանատուու-

[115] Նոյն տեղում, էջ 57:

[116] Այդ մասին տե՛ս *Bruneteau B.*, Le siècle des génocides. Violences, massacres et processus génocidaires de l'Arménie au Rwanda, Paris, 2004, p. 145.

[117] *Barby H.*, նշվ. աշխ., էջ 3, 81, 207-208:

թիւնը նա վերագրում է ոչ միայն թուրքական կառավարութեանը, այլեւ հաւասարապէս Գերմանիայի կառավարող շրջաններին[118], ցաւով ընդգծում, որ ոճրի իրականացումը կանխարգելելու, առաւել եւս այն կասեցնելու համար բաւական կը լինէր Գերմանիայի մէկ քայլը՝ էնվեր փաշային ուղղուած, նրա ներկայացուցիչների գէթ մէկ խօսքը[119]: Դրա փոխարէն, սակայն, ինչպէս կսկիծով հաւաստում է Բարբին, Գերմանիան ոչ միայն ձեռնպահ է մնացել գործնական քայլերի դիմելուց, այլեւ «իր խորհուրդներով օգնել է դահիճներին»[120]:

Բազում փաստերի վկայակոչմամբ նա անարգանքի սիւնին է գամում Օսմանեան կայսրութեան տարբեր բնակավայրերում գտնուող Գերմանիայի պաշտօնական ներկայացուցիչներին, մասնաւորապէս՝ զինուորականներին, հայերի ոչնչացման մեղսակիցները դառնալու համար: Տրապիզոնի կոտորածների պատասխանատու՝ երիտթուրք պարագլուխներից Նայիլ բէյի հետ մէկտեղ նա համարում է գերմանական սպաներից մէկին եւ Թիֆլիսում Գերմանիայի նախկին հիւպատոս Շուլենբերգին[121]:

Ինչ վերաբերում է գերմանացի սպաների՝ եղեռնին ունեցած մասնակցութեանը, ապա այն, անկասկած, միանշանակ չի եղել, ինչը փաստում է նաեւ հեղինակը: Հիմնուելով նրանցից մէկի օրինակի վրայ, որը 1915 թ. մայիսին Վանում բացայայտորեն ղեկավարել է թուրքերի գրոհը[122], նա մանրամասնում է նաեւ այլոց գրաւած՝ փոքր-ինչ զանազանուող վարքագիծը, որոնք անմիջականօրէն չմասնակցելով հայկական կոտորածներին՝ թոյլատրել են դրանց իրականացումը, արգելել Կարմիր Խաչի անձնակազմին օգնութիւն ցուցաբերել տեղահանուած հայերին կամ բաւարարուել հայ աղջիկների առեւանգմամբ[123]:

Ըստ այս փաստերի՝ Բարբին ունեցել է, անտարակոյս, բոլոր իրաւունքները գերմանացիներին անուանելու երիտթուրքերի յանցակիցներ[124]: Եթէ նկատի ունենանք Առաջին համաշխարհային

---

[118] Նոյն տեղում, էջ 55, 223:
[119] Նոյն տեղում, էջ 56:
[120] Նոյն տեղում:
[121] Նոյն տեղում, էջ 53:
[122] Նոյն տեղում, էջ 138:
[123] Նոյն տեղում, էջ 28, 34, 73:
[124] Նոյն տեղում, էջ 30:

պատերազմի տարիներին Գերմանիայի որդեգրած քաղաքականութեան ընդգծուած հակահայկական բնոյթը, ապա պարզ կը դառնայ, որ հեղինակի խիստ քննադատական մօտեցումը միանգամայն արդարացուած է: Դաշնակցին սատարելու մղումից դրդուած՝ Գերմանիայի ընդգծուած հակահայկական քաղաքականութիւնն, իրօք որ, բացայայտորեն դրսեւորուել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

Հարկ է, սակայն, հաշուի առնել մէկ այլ էական հանգամանք եւս: Բարբիի գիրքը շարադրուել է, երբ Անտանտի տէրութիւնները շարունակում էին պատերազմել Քառեակ դաշինքում ընդգրկուած կենտրոնական տէրութիւնների դէմ: Ուստի հեղինակի անթաքոյց ատելութիւնը Ֆրանսիայի հակառակորդ Գերմանիայի նկատմամբ մասամբ պայմանաւորուած է եղել նաեւ այդ հանգամանքով: Այլապէս, ինչո՞վ է կարելի մեկնաբանել Գերմանիայի պարսաւելի դիրքորոշման անողոք դատափետման ասպարէզում հեղինակի կողմից անհարկի չափազանցութիւնների տուրք տալու իրողութիւնը: Քննարկելով, օրինակ, Գերմանիայի արեւելեան քաղաքականութեանն առնչուող խնդիրները, Բարբին յանիրաւի եզրակացնում է, որ 1915 թ. հայերի ոչնչացման ծրագիրը ծնունդ է առել իբր գերմանական քաղաքական գործիչներից մէկի՝ Ռայխստագում ունեցած ելոյթից: Իրականութեան հետ, ըստ էութեան, որեւէ առնչութիւն չունեցող նման պնդման համար հիմք են ծառայել զանազան պատճառներ: Նախ՝ ըստ նրա հայեցակարգի՝ 1914 թ. ի վեր համաշխարհային տիրապետութեան հաստատմանը հետամուտ՝ Գերմանիան ձգտել է Թուրքիայի տարածքը վերածել «գերմանական ազգի» համար էքսպանսիոն գօտու եւ, ըստ այդմ, հայերի բնաջնջման խնդրում ունեցել է «հզօր քաղաքական շահախնդրութիւն», ինչը նրան դրդել է որդեգրելու Հայաստանն ու Միջագետքն այլ ժողովուրդներով բնակեցնելու քաղաքականութիւն[125]:

Հայոց ցեղասպանութեան իրական պատճառներին առնչուող՝ Բարբիի անկողմնակալ մեկնաբանութիւններին միանգամայն անյարիր նման հետեւութեան պատճառը պայմանաւորուած է, հաւանաբար, նրա բացայայտ հակագերմանական դիրքորոշմամբ: Հակառակ պա-

[125] Նոյն տեղում, էջ 15, 208:

րագայում, բացայայտելով երիտթուրքերի՝ իբրեւ Աբդուլ Համիդի հայատյաց քաղաքականութեան՝ ընդհամենը շարունակողների դիմագիծը, զանազան փաստերի թուարկմամբ հիմնաւորապէս ապացուցելով 1915 թ. Մեծ եղեռնի իրականացումը պետական քաղաքականութեան մակարդակով՝ նա ձեռնպահ կը մնար նման չափազանցուած եզրայանգումից: Իրականում, երիտթուրքերի որդեգրած՝ հայ ժողովրդի լայնածաւալ բնաջնջման քաղաքականութիւնն առնչւում էր նրանց պանթուրքական ծրագրերի իրականացմանը, ինչը կարող էր միայն անուղղակիօրէն համահունչ լինել Գերմանիայի որդեգրած արտաքին քաղաքականութեան միտուածութեանն Արեւելքում:

Առաջին համաշխարհային պատերազմում ընդգրկուած եւրոպական տէրութիւնների՝ հայ ժողովրդի հանդէպ վարած քաղաքականութեան մեկնաբանման հարցում Բարբիի մօտեցումն ընդգրկուն չէ, քանզի այն, ըստ էութեան, սահմանափակւում է միայն Գերմանիայի քաղաքականութեան վերլուծութեամբ: Ինչ վերաբերում է Մեծ եղեռնի իրականացման ընթացքում այլ պետութիւնների, այդ թւում Ֆրանսիայի՝ արեւմտահայութեան հանդէպ անտարբեր դիրքորոշման քննարկմանը, ապա՝ Բարբին ձեռնպահ է մնում այդ ուղղութեամբ փոքր-իսկ ջանքեր գործադրելուց եւ պահպանում է գրեթէ կատարեալ լռութիւն: Կուրացած Ֆրանսիայի ախոյեանի հանդէպ ատելութեամբ՝ նա, հաւանաբար, նման նպատակ նոյնիսկ չի հետապնդել, ինչի հետեւանքով անկարող է եղել եւրոպական տէրութիւնների քաղաքականութեան պատկերը ներկայացրել իր ամբողջութեան մէջ, ինչն անվարանօրէն հարկ է համարել նրա մօտեցման ամենաականաւոր թերութիւնը:

Առանց տէրութիւնների անկարեկից վերաբերմունքի պատճառների, ինչպէս նաեւ ոչ ի նպաստ արեւմտահայութեան իրականացրած նրանց քաղաքականութեան վերլուծութեան՝ Բարբին սահմանափակւում է սոսկ հպանցիկ յիշատակմամբ այն մասին, որ հայ ժողովրդի ճիչը երբեւէ չի յարուցել Բեռլինի պայմանագիրը ստորագրած երկրների «յիրաւի արդիւնավէտ միջամտութիւնը»[126]: Այս առումով նկատենք, որ թէեւ նրա ընդգծուած հակագերմանական դիրքորոշումը նոր երեւոյթ է Հայոց ցեղասպանութեան

[126] Նոյն տեղում, էջ 224:

ֆրանսիական պատմագրութեան ոլորտում, ինչը բնորոշ չէ ԺԹ. դարի վերջի եւ Ի. դարի սկզբի ֆրանսիացի պատմաբաններին, այդուհանդերձ, այս կարեւոր հարցի շուրջ նրա միակողմանի մօտեցումը մեծապէս զիջում է նախորդ շրջանի ֆրանսիական պատմագիտական մտքի նուաճումներին, քանզի նրա նախորդներից շատերը խիստ քննադատութեան են ենթարկել հաւասարապէս եւրոպական բոլոր մեծ տէրութիւնների, այդ թւում Ֆրանսիայի քաղաքականութիւնը Հայկական հարցում[127]:

Ամէն դէպքում, Բարբին կասկած իսկ չի տածում, որ իր գիրքը կը նպաստի Հայոց ցեղասպանութեան կազմակերպիչների դատապարտմանը քաղաքակիրթ միջազգային հանրութեան կողմից. «Ես վերարտադրեցի այս պատմութիւնները, չնայած դրանց սարսափելիութեանը: Նման փաստերը չպետք է մնան փակի տակ: Հարկ է դրանք հրապարակել, որպեսզի քաղաքակիրթ աշխարհը, պատմութիւնը դատապարտեն մեղաւորներին»,– գրում է նա[128]:

Փակուղուց ելնելու միակ ելքը Բարբին տեսնում է ի դէմս հայ ժողովրդին՝ Անտանտի տէրութիւնների հովանու եւ երաշխիքների ներքոյ ինքնավարութիւն յատկացնելու, ինչը համարում է «միակ ընդունելի վճիռը» եւ հայ ժողովրդի ազատագրումը դասում դաշնակիցների առջեւ ծառացած հիմնական խնդիրների շարքում, որին հարկ կը լինի լուծում տալ հաղթանակից յետոյ[129]:

Նշենք, որ Բարբին չի մեկնաբանում որոշ էական հանգամանքներ, ինչպիսիք են Մեծ եղեռնի իրականացումը թուրքիզմի գաղափարախոսութեան հիման վրայ, ի տարբերութիւն Հայոց ցեղասպանութեան առաջին փուլի պարագայի, երբ մանրամասնում է պանիսլամիզմի «ընդարձակ ծրագրի» որդեգրումը Աբդուլ Համիդի կողմից[130] եւ կամ համիդեան վարչակարգի սկզբնաւորած հայաջինջ քաղաքականութիւնը գագաթնակէտին հասցնելու համար այն լայն հնարաւորութիւնների առկայութիւնը, որոնք երիտթուրքերին ընձեռել էր Առաջին համաշխարհային պատերազմը:

---

[127] Այդ մասին մանրամասն տե՛ս *Պօղոսյան Վ.*, Հայոց ցեղասպանութեան առաջին փուլը ֆրանսիական պատմագրութեան եւ հասարակական մտքի գնահատմամբ (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ), Երեւան, 2005:

[128] *Barby H.*, նշվ. աշխ., էջ 202:

[129] Նոյն տեղում, էջ 224, 226:

[130] Նոյն տեղում, էջ 7:

Այդուհանդերձ, չնայած որոշ բացթողումներին, հակասական մեկնաբանութիւններին եւ անգամ ծայրահեղութիւններին, որոնց վրայ կանգ առանք, հաղորդած տեղեկութիւնների անկողմնակալութեան եւ հաւաստիութեան առումով Բարբիի գիրքն, անկասկած, դասւում է Մեծ եղեռնի կարեւորագոյն սկզբնաղբիւրների թւում: Այն երիտթուրքական վարչակարգի քաղաքականութեան իրական դիմագիծը հիմնաւորապէս բացայայտող, հաւաստի փաստերի վրայ հիմնուած մեղադրական է: «Այն ամէնը,– գրում է նա,– ինչ ես հաղորդում եմ այս ողբերգական հետաքննութեան ընթացքում, սարսափի եւ մահուան տեսարանները, որոնց մասին պատմում եմ, այս ամէնն անհերքելի են: Ես ձեռքի տակ ունեմ բոլոր փաստերն այն մասին, ինչ գրում եմ: Թուրքական կառավարութիւնը չի կարող ժխտել իր յանցանքը, որը ո՛չ ռազմական եւ ո՛չ ռազմավարական որեւէ պատճառով չի կարող հիմնաւորուել»[131]:

Ինչպէս նշեցինք, Բարբիի աշխատութիւնն օգնում է կողմնորոշուելու Մեծ եղեռնին առնչուող զանազան սկզբունքային հարցերում, հուժկու հակահարուած տալիս թուրք պատմաբանների որոշ հակագիտական տեսակէտներին եւ նպաստում նրանց կեղծիքների մերկացմանը: Այս առումով յատկանշական է Բարբիի՝ իր աշխատանքին տուած գնահատականը. «Ժուրնալի» կողմից ուղարկուելով իրադարձութեան վայր, ես հաւաստել եմ ճշմարտութիւնը, տեսել եմ եւ անվարանօրէն հաղորդել փաստեր, որոնք բացայայտուել են իմ հետաքննութեան շնորհիւ: Ես նոյնիսկ պնդում եմ, որ իրականութեան մասին ամէն ինչ չէ, որ հաղորդել եմ, քանզի, իրօք որ, կան որոշ սարսափներ, որոնք հնարաւոր չէ մանրամասնօրէն նկարագրել»[132]: Ըստ այդմ, բուն եղեռնի իրականացմանն առնչուող զանազան խնդիրներում հեղինակին գոյների խտացման կամ կողմնակալութեան մէջ հանդիմանելու հաւանականութիւնն իսպառ բացառւում է:

*Հանդէս ամսօրեայ, 2007, թիվ 1-12, էջ 335-362*

---

[131] Նոյն տեղում, էջ 60-61:

[132] Նոյն տեղում, էջ 213:

# ՀԱՄԻԴԵԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՆԵՆԳԱՓՈԽՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ (Ի. ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԷՍ - ԻԱ. ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)

Հայոց ցեղասպանութեան պատմութիւնն իրադարձութեան սանձազերծումից մինչ այսօր գտնուել է ֆրանսիացի պատմաբանների տարբեր սերունդների ուշադրութեան կենտրոնում: Դեռեւս ԺԹ. դարի վերջին եւ Ի. դարի սկզբին ֆրանսիացի տարբեր հեղինակներ, այդ թւում նշանաւոր պատմաբաններ, մեծ աւանդ են ներդրել Հայոց ցեղասպանութեան պատմութեան գիտական ուսումնասիրութեան ասպարէզում: 1920-ական թուականներից ի վեր, սակայն, իրավիճակը Ֆրանսիայում, ինչպէս նաեւ միջազգային թատերաբեմում, կրել է զգալի փոփոխութիւններ՝ կապուած միջազգային յարաբերութիւններում տեղի ունեցած քաղաքական տեղաշարժերի հետ: Հարցի էութիւնն այն է, որ 1923 թ. Թուրքական հանրապետութեան հռչակումից ի վեր, Թուրքիայում պետական քաղաքականութեան մակարդակով Հայոց ցեղասպանութեան փաստը շրջանցուել է լռութեամբ: Այդ իսկ պատճառով արեւմտեան կապիտալիստական մեծ տերութիւնները, այդ թւում Ֆրանսիան, ելնելով իրենց ռազմավարական շահերից, շահագրգռուածութիւն են հանդէս բերել Թուրքիային՝ Խորհրդային Միութեանը հակադրելու հարցում, եւ հետեւաբար, թուրքական կառավարող շրջաններին հաճոյանալու նպատակով մոռացութեան են մատնել Հայոց ցեղասպանութիւնը[133]: Այս թեմայի նկատմամբ հետաքրքրութիւնը Ֆրանսիայում վերստին աճել է միայն 1960-ական թուականների կէսերից՝ կապուած Մեծ եղեռնի 50-ամեայ տարելիցի հետ:

Այդ ժամանակաշրջանից առ այսօր ֆրանսիացի պատմաբանների ջանքերով ստեղծուել է Հայոց ցեղասպանութեան պատմութեանը նուիրուած հարուստ պատմագիտական գրականութիւն, որը վկայում է Ֆրանսիայում այս թեմայի նկատմամբ դրսեւորուող անթաքոյց հետաքրքրութեան մասին: Դա պայմանաւորուած է ոչ միայն ֆրանսահայ պատմաբանների գործունէութեամբ, այլեւ

[133] *Margossian N.*, L'avant et l'après du génocide des Arméniens.– «Գիտութեան գլոբուս», 2005, հտ. 5, էջ 44-45:

ֆրանսիական կառավարութեան՝ հայ ժողովրդի պատմական անցեալի հանդէպ գրաւած անառաչ վերաբերմունքով, ինչի արդիւնքում 2001 թ. Ֆրանսիան պաշտօնապէս ճանաչեց Հայոց ցեղասպանութեան փաստը:

Միաժամանակ հարկ է մոռացութեան չմատնել նաեւ այն իրողութիւնը, որ Հայոց ցեղասպանութեան պատմութիւնը նենգափոխող եւ դրա փաստն իսկ անթաքոյց ժխտող պատմագիտական ուղղութիւնը սկզբնաւորուել է Ֆրանսիայում դեռեւս 1890-ական թուականների կէսերին: Խօսքը վերաբերում է Աբդուլ Համիդ Բ.ի պատուէրով հանդէս եկած փոքրաթիւ հեղինակների (Պ. Բ. Ալլոշ, Ռ. դէ Կուրսոն, Պ. Աբդոն Բուասոն, Լ. Ռուսո եւ այլք), որոնք Գ. Հանրապետութեան թրքամէտ քաղաքականութեան պայմաններում դարձել են Հայոց ցեղասպանութեան պատմագրութեան ժխտողական ուղղութեան կնքահայրերը[134]: Ինչպէս ցոյց տուեց պատմական փորձը, նրանց առաջադրած հակապատմական կեղծ փաստարկներին եւ սնանկ կռուաններին, կապուած մասնաւորապէս պատմական Հայաստանի բռնագրաւման եւ ռազմակալման, նոյնիսկ նախորդ դարաշրջաններում Հայաստանի՝ իբրեւ պետութեան գոյութեան ժխտման, Արեւմտեան Հայաստանի տարբեր վիլայէթներում հայերի թուաքանակի նուազեցման, Օսմանեան կայսրութիւնում հայերի կարծեցեալ բարեկեցութեան, արտասահմանում գործող հայկական կուսակցութիւնների, մասնաւորապէս հնչակեան եւ եւրոպական տերութիւնների գործունէութեան հետեւանքով 1890-ական թուականներին բռնկուած հայկական կարծեցեալ լայնածաւալ ապստամբութեան հետ, վիճակուած էր երկար կեանք:

Մեր կողմից քննարկուող ժամանակաշրջանում Հայոց ցեղասպանութեան պատմագրութեան ժխտողական ուղղութեան արձագանքները լսելի են նաեւ Ֆրանսիայում: Այստեղ, ինչպէս նաեւ Թուրքիայում եւ այլուր, դրանք հնչել են տարբեր ձեւերով, սկսած ցեղասպանութեան պատմութեան բացայայտ նենգափոխումից մինչեւ իրադարձութեան նրբանկատօրէն քողարկուած,

[134] Մանրամասն տե՛ս *Պօղոսեան Վ.*, Հայոց ցեղասպանութեան առաջին փուլը ֆրանսիական պատմագրութեան եւ հասարակական մտքի գնահատմամբ (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ), Երեւան, 2005, էջ 230-248:

սակայն, միտումնաւոր շրջանցումը: Բացի դրանից, ինչպէս եւ ժխտողական ուղղութեան նախակարապետները, 1950-1970-ական թուականների ֆրանսիացի մի շարք պատմաբաններ Հայոց ցեղասպանութեան պատմութեան հիմնահարցերը կեղծարարութեան են ենթարկում տարաբնոյթ ուսումնասիրութիւններում, մասնաւորապէս՝ Օսմանեան կայսրութեան կամ հայ ժողովրդի պատմութեանը նուիրուած ընդհանուր բնոյթի աշխատութիւններում եւ թուրք պետական գործիչների կենսագրականներում:

Այս ուղղութեան ներկայացուցիչների գրչին պատկանող՝ ընդհանուր բնոյթի առաջին ուսումնասիրութիւնները լոյս են տեսել դեռեւս 1950-ական թուականներին: Դրանց թւում է Թուրքիայի պատմութեանը նուիրուած Ռ. Մանտրանի գիրքը, որը շարադրուած է բացայայտ թրքամէտ դիրքերից: Հեղինակը հմտօրէն շրջանցում է «Հայաստան» անուանումը նոյնիսկ այն պարագայում, երբ հպանցիկ յիշատակում է ԺԶ.-ԺԷ. դարերում թուրք-պարսկական պատերազմների, 1555 թ. սուլթան Սուլէյմանի կողմից Նախիջեւան եւ Երեւան քաղաքների գրաւման, 1639 թ. Կասրէ-Շիրինի պայմանագրով Թուրքիայի տիրապետութեան տակ անցած տարածքների մասին[135]: Նրա շարադրանքում ակնարկ իսկ չկայ ոչ միայն հայկական տարածքների՝ իբրեւ այդպիսիք, բռնագրաւման, այլեւ Հայկական հարցի ծագման եւ գոյութեան մասին:

Այդուհանդերձ, Մանտրանն ընդունում է Աբդուլ Համիդի իրականացրած «արիւնալի գործողութիւնների» փաստը Բեռլինի վեհաժողովին յաջորդած ժամանակաշրջանում, որոնք, սակայն, ածանցում է սոսկ սուլթանի «հիւանդ կասկածամտութեանը»[136]: Հայկական կոտորածները հեղինակն, ի վերջոյ, մեկնաբանում է ոչ թէ պետական քաղաքականութեան յենքի վրայ, այլ ջանում մահմեդականների ատելութիւնն «անհաւատների», մասնաւորապէս հայերի եւ յոյների հանդէպ պայմանաւորել պանիսլամիզմի

---

[135] *Mantran R.*, Histoire de la Turquie, Paris, 1952, p. 69.

136 Նոյն տեղում, էջ 106: Հարցի նման մակերեսային մեկնաբանութիւնը, որը կարելի է դասել սոսկ ցեղասպանութեան իրականացման երկրորդական բնոյթի դրդապատճառների շարքը, ֆրանսիական պատմագրութեան մէջ խոր արմատներ ունի: Տես *Denais J.*, Le sultan, Paris, 1897.

ազդեցութեամբ: Ինչ վերաբերում է բուն հայկական կոտորածներին, Մանտրանը շրջանցելով դրանց պատճառները, ընթացքը, օսմանեան կենտրոնական եւ տեղական իշխանութիւնների դերակատարութիւնը, սահմանափակւում է 1894 թ. «արեւելեան նահանգներում տեղի ունեցած կոտորածների առաջին ալիքի» եւ 1896 թ. Բանկ Օտտոմանի գրաւման հետեւանքով կիրառուած «սարսափելի» բռնութիւնների մասին թռուցիկ յիշատակմամբ[137]:

Ակնյայտ է, որ թէեւ Մանտրանն ամբողջութեամբ չի շրջանցում հայկական կոտորածների իրողութիւնն Աբդուլ Համիդի գահակալութեան օրօք, այդուհանդերձ, նրա մօտեցումը հիմք է տալիս եզրակացնելու, որ հեղինակը գիտակցաբար խուսափում է հիմնախնդրի գիտական մեկնաբանութիւնից, ժխտում է իրադարձութեան իրականացումը պետական քաղաքականութեան մակարդակով, ինչը միանգամայն համահունչ է նրա՝ ընդգծուած թրքամէտ դիրքորոշմանը:

Հարկ է Հայոց ցեղասպանութեան ժխտողական ուղղութեան ուղեծրում տեղադրել նաեւ նոյն ժամանակաշրջանում լոյս տեսած՝ Բենուա-Մեշինի գրչին պատկանող Մուստաֆա Քեմալի կենսագրականը: Հեղինակը յետադարձ հայացք նետելով Օսմանեան կայսրութեան պատմութեան վրայ, ի տարբերութիւն Մանտրանի, շրջանցում է 1890-ական թուականներին հայկական զանգուածային կոտորածների փաստը, փոխարէնը՝ հիմնաւորում մեծ տերութիւնների դիրքորոշումը՝ կայսրութեան տարածքային ամբողջականութեան պահպանութեան խնդրում[138], ինչը պայմանաւորուած է Մուստաֆա Քեմալի գործունէութեան ջատագովմամբ, որի ջանքերի շնորհիւ է 1920-ական թուականներին Թուրքիան խուսափել մասնատումից:

Չնայած Հայոց ցեղասպանութեան պատմութեան նենգափոխման կամ շրջանցման միտումը 1950-ական թուականներին պատմագիտական թատերաբեմից Ֆրանսիայում չի անհետացել, այդուհանդերձ, ինչպէս տեսանք, դրսեւորուել է սոսկ մակերեսօրեն: Իրավիճակը, սակայն, զգալի փոփոխութիւններ է

[137] *Mantran R.*, նշվ. աշխ., էջ 108:

[138] *Benoit-Méchin*, Le loup et le léopard. Mustapha Kémal ou la mort d'un empire, Paris, 1954, p. 85-87.

կրել 1970-ական թուականներից ի վեր, կապուած Հայոց ցեղասպանութեան պատմագրութեան ժխտողական ուղղութեան նոր բուռն ալիքի հետ, որը 1960-ական թուականներից ի վեր միջազգային ասպարէզում Հայոց ցեղասպանութեան ճանաչման գործընթացի ծաւալման հետեւանքն էր: Դա հարկադրեց Թուրքական հանրապետութեան ղեկավար շրջաններին Հայկական հարցում փոխել մարտավարութիւնը եւ դեռեւս 1920-ական թուականներին իրենց նախորդների որդեգրած՝ Հայոց ցեղասպանութեան փաստը լռութեան մատնելու քաղաքականութիւնից անցում կատարելու ժխտման քաղաքականութեան: Այս պայմաններում, ժխտողական ուղղութիւնը նոր, աննախադէպ թափ ստացաւ, որի ներկայացուցիչները պատեհ առիթն ունեցան վերյիշելու իրենց ԺԹ. դ. ֆրանսիացի նախորդների հիմնական թեզերը եւ դրանք վերստին կեանքի կոչեցին: Թէպէտ այս ժամանակաշրջանում առաջնութեան դափնին, անտարակոյս, պատկանում էր արդէն թուրք պատմաբաններին[139], այդուհանդերձ, նրանց թեզերին արձագանքեցին նաեւ որոշ այլազգի պատմաբաններ, այդ թւում՝ ԱՄՆ-ում, ինչը Հայոց ցեղասպանութեան պատմագրութեան ժխտողական ուղղութեան պատմութեան մէջ նոր երեւոյթ էր[140]:

Ինչ վերաբերում է Ֆրանսիային, ապա որոշ թրքամէտ պատմաբաններ օգտուելով ստեղծուած իրավիճակից, լայն հնարաւորութիւններ ստացան առաջադրելու իրենց թուրք գործընկերների հայեցակարգային դիրքորոշմանը համահունչ տեսակէտներ: Հայոց ցեղասպանութեան պատմութեան ժխտողական ուղղութեան դրօշակակիրը մեր կողմից քննարկուող ժամանակաշրջանում, անտարակոյս, Պ. Ա. Մոզերն է, որը «Հայեր, որտեղ է իրականութիւնը»՝ աղմկայարոյց խորագիրը կրող գրքում անթաքոյց կեղծարարութեան է ենթարկում հայ ժողովրդի պատմական անցեալը[141]: Չնայած գրքի յաւակնոտ վերնագրին, հեղինակն, ըստ էութեան, Հայոց ցեղասպա-

---

[139] Տես օրինակ *Özkaya İ.C.*, Le peuple arménien et les tentatives de réduire le peuple turc en servitude, Istanbul, 1971 ; *Karal E.Z.*, Armenian Question, Ankara, 1975; *Sonyel S.R.*, Displacement of the Armenians. Documents, Ankara, 1978; Facts from the Turkish Armenians, Istanbul, 1980.

[140] *S.J. Shaw*, *E.K. Shaw*, History of the Ottoman Empire and Modern Turkey. V. II: Reform, Revolution and Republic: The Rise of Modern Turkey, 1808-1971, Cambridge, 1977.

[141] *Moser P.A.*, Arméniens, où est la réalité ? Saint-Aquilin-de-Pacy, 1980.

նութեան պատմութեան շուրջ որեւէ նոր մեկնաբանութիւններ չի անում, այլ ընդամէնը սահմանափակւում է իր նախորդների եւ ժամանակակից թուրք գործընկերների հիմնական թեզերի վկայակոչմամբ:

Նախ Մոզերը նրանցից շատերի հետքերով կտրականապէս եւ լկտիաբար ժխտում է Հայաստանի՝ իբրեւ պետութեան, երբեւէ գոյութեան փաստը եւ, ըստ այդ տրամաբանութեան, բացառում հայ ժողովրդի պատմական հայրենիքի ռազմակալման հնարաւորութեան հաւանականութիւնն օսմանեան պետութեան կողմից: Նա հաւաստում է, որ 1877-1878 թթ. պատերազմից յետոյ հայերը պահանջել են վարչական ինքնավարութիւն «այն թուրքական տարածաշրջանի համար, *որն իրենք զբաղեցրել են* (ընդգծումը մերն է – Վ. Պ.)»[142]: Նման դիրքորոշումը միանգամայն համահունչ է ժխտողական ուղղութեան հայեցակարգային հիմնական մօտեցումներից մէկին, ըստ որի՝ հայերն ի սկզբանէ բնակուել են Օսմանեան կայսրութիւնում, ուստի եւ Թուրքական հանրապետութեան նկատմամբ նրանց տարածքային յաւակնութիւնները կատարելապէս հիմնազուրկ են:

Մոզերի յաջորդ էական հայեցակարգային մօտեցումը բխում է առաջինից. նա որդեգրում է դարերից ի վեր թուրքերի եւ ոչ թուրք ժողովուրդների, այդ թւում հայերի, կարծեցեալ «խաղաղ գոյակցութեան» տեսութիւնն Օսմանեան կայսրութիւնում, ինչն ամենեւին չի կարելի դասել նրա նորամուծութիւնների շարքը: Թէեւ այս տեսութեան առաջին մունետիկները եւրոպական պատմագիտական երկնակամարում ի յայտ են եկել դեռեւս 1910-1920-ական թուականներին[143], այդուհանդերձ, նոր պատմական հանգամանքներում այն վերստին, աւելի լայն ընդգրկումով, շրջանառութեան մէջ է դրուել Մոզերի ժամանակակից թուրք պատմաբանների ջանադրութեան շնորհիւ: Այս տեսութիւնը միտուած է Օսմանեան կայսրութեան տարածքում այլազգի հպատակեցուած ժողովուրդների պատմութեան խեղաթիւրմանը: Հայ ժողովրդի պատմութեան նենգափոխման կտրուածքով տեսութեան հիմնական հեռահար նպատակներից է, մասնաւորապէս ԺԹ. դարի վերջին արեւմտահայութեան ազգային-

[142] Նոյն տեղում, էջ 27:

[143] Տե՛ս օրինակ *Loti P.*, Les massacres d'Arménie, Paris, 1918 ; *Gaillard G.*, The Turks and Europe, London, 1921:

ազատագրական պայքարի պատմութեան կեղծումը, քանզի դրա նետերն ուղղուած են հայ ժողովրդի՝ յանուն իր իրավիճակի բարելաւման մղած պայքարի պատասխանատուութիւնը հայկական կուսակցութիւնների «խառնակիչ» գործունէութեան եւ եւրոպական որոշ տերութիւնների՝ Օսմանեան կայսրութեան ներքին գործերին ցուցաբերած միջամտութեան վրայ բարդելուն: Ըստ ստացուող տպաւորութեան՝ միայն այս հանգամանքներն են արհեստականօրէն նպաստել թուրքերի եւ մինչ այդ «բարեկեցիկ կեանքով» ապրող հայերի փոխհարաբերութիւնների վատթարացմանը:

Ըստ Մոզերի՝ իրավիճակն Օսմանեան կայսրութիւնում, որտեղ գործող օրէնքների շրջանակում իբր միշտ յարգալից վերաբերմունք է դրսեւորուել բոլոր այլազգիների լեզուների, սովորոյթների եւ կրօնների հանդէպ[144], շեշտակիօրէն փոփոխութիւններ է կրել ԺԹ. դարի երկրորդ կէսին՝ կապուած արտասահմանում ծնունդ առած հայկական «ազգայնամոլութեան» հետ, ինչի վերելքին մեծապէս նպաստել են ոչ միայն եւրոպական մեծ տերութիւնները, այլեւ մասամբ Թուրքիայում գտնուող տարբեր անգլիացի եւ ամերիկացի միսիոներների գործունէութիւնը:

Ուստի, Մոզերի հայեցակարգը խարսխւում է հնչակեանների՝ իբրեւ «հայկական ապստամբութեան» հրահրիչների, կռուանի վրայ, ինչը եւս նրա «յայտնագործութիւններից» չէ: Այս պարագաիւմ նա ընդամէնը կրկնում է իր տարբեր նախորդներին: Սասունի 1894 թ. կոտորածները Մոզերն անթաքոյց մեկնաբանում է իբրեւ հնչակեանների հրահրած ապստամբութիւն, որի արդիւնքում հայ «ապստամբները» «կողոպտել եւ ծաղր ու ծանակի են ենթարկել իրենց ձեռքն ընկած մահմեդականներին, այնուհետեւ նրանց տանջահարել եւ սպանել»[145]: Կրկին հնչակեանների «խառնակիչ գործողութիւններով» է նա պայմանաւորում 1895 թ. սեպտեմբերի 30-ի Բաբը Ալիի ցոյցը: Գիտակցաբար անտեսելով 1895 թ. Օսմանեան կայսրութեան տարածքում իրականացուած հայկական զանգուածային կոտորածները, որոնց ծաւալմանը նպաստել է յիշեալ ցոյցը, Մոզերը չի վարանում, սակայն, արձանագրել օսմանեան կառավարութեան կարծեցեալ ներողամտութեան փաստը, որն ինչպէս պարզւում է, իբր «խնայել է մեղաւորներին՝ բաւարարուելով

[144] *Moser P.A.*, նշվ. աշխ., էջ 23:
[145] Նոյն տեղում, էջ 50:

ցուցարարներին ցրելով»[146]: Նա յիշատակում է նաեւ Զէյթունում, Վանում հայկական յեղափոխական կոմիտէների կազմակերպած «ապստամբութիւների», Բանկ Օտտոմանի գրաւման մասին[147], կատարեալ լռութիւն պահպանելով վերջինիս յաջորդած զանգուածային կոտորածների նոր ալիքի ծաւալման շուրջ:

Կեղծելով փաստերը՝ Մոզերը պնդում է, որ Աբդուլ Համիդ Բ.ն Օսմանեան կայսրութիւնում հաստատել է «սահմանադրական միապետութիւն»[148], հաւանաբար, ակնարկելով 1876 թ. սուլթանի հռչակած սահմանադրութիւնը, որն իրականում մնացել է սոսկ իբրեւ մեռեալ տառ, հակառակ պարագայում 1908 թ. երիտթուրքերն այն վերահաստատելու հարկն ամենեւին չէին ունենայ:

Հայկական «ազգայնամոլութեան» ծաւալման յենքը Մոզերը գերադասում է համարել գլխաւորապէս մահմեդականների եւ քրիստոնեաների միջեւ վաղուց ի վեր ծայր առած հակամարտութիւնը, այն է՝ կրօնական հաւատամքների զանազանութիւնը, ինչը եւ օգտագործել են, ըստ նրա տերմինաբանութեան՝ «պաշտպանութեան կոմիտէները»[149]: Այս պայմաններում, Մոզերը հայերի վրայ բարդում է մէկ այլ մեղադրանք, որը յանգում է եւրոպական միջամտութիւնից օգտուելու ակնկալութեամբ՝ «քրիստոնէայ ազգութիւններին» աջակցելուն, ինչին մեծապէս նպաստել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը[150]: Այլ խօսքերով, հայ-թուրքական հակամարտութիւնը նա յանիրավի մեկնաբանում է սոսկ կրօնական յենքի վրայ: Արդիւնքում, ինչպէս նա նշում է՝ «հայերն իրենց դուրս էին նետում թուրքական հասարակութիւնից»[151]:

Հայերի պայքարի հիմնական նպատակը Մոզերն արդիւնքում հանգեցնում է ռուսական ինքնակալի հովանաւորութեամբ «ինքնավարութեան» հաստատման գաղափարին, թէեւ եւրոպացի ժամանակակիցները, այդ թւում՝ Մոզերի հայրենակիցներից ոմանք, բազմիցս փաստել են ԺԹ. դարի վերջին քառորդում արեւմտահայութեան միակ իրական նպատակը, որն էր բարենո-

[146] Նոյն տեղում, էջ 51:
[147] Նոյն տեղում, էջ 51-54:
[148] Նոյն տեղում, էջ 24:
[149] Նոյն տեղում, էջ 23:
[150] Նոյն տեղում, էջ 24-26:
[151] Նոյն տեղում, էջ 27:

րոգումների միջոցով իր իսկ կեանքի անելանելի պայմանների բարելավումը:

Մոզերը սոսկ հարեւանցիօրէն է յիշատակում Օսմանեան կայսրութիւնում հայ ժողովրդի նկատմամբ գործադրուող բռնութիւնները եւ կողոպուտները, որոնք, սակայն, չի մեկնաբանում իբրեւ պետական քաղաքականութեան հետեւանքով առկայ մթնոլորտին միանգամայն համահունչ, օրինաչափ գործողութիւններ, այլ, փոխարէնը, դրանց պատասխանատուութիւնը բարդում է քրդերի, «անկառավարելի հրոսակախմբերի» վրայ: Այս առնչութեամբ նա կեղծում է նաեւ հայերի՝ Կոստանդնուպոլիս յղած բողոքների իրական իմաստը, դրանք, իր հայեցակարգի շրջանակներում, մեկնաբանում իբրեւ հասարակական կարծիքը ռուսական միջամտութեանը նախապատրաստելուն ուղղուած քայլ[152]:

Մոզերը ոչ միայն գիտակցաբար ժխտում է Հայոց ցեղասպանութեան փաստը, դրա իրականացումը համիդեան վարչակարգի կողմից պետական քաղաքականութեան մակարդակով եւ կանխամտածուածութեան հիման վրայ, այլեւ 1890-ական թուականներին Օսմանեան կայսրութիւնում տեղի ունեցած իրադարձութիւնները ներկայացնում իբրեւ կարծեցեալ ինքնավարութեան նպատակով՝ հայ ապստամբների՝ հնչակեանների կողմից հրահրուած գործողութիւններ, որոնց նպատակը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ եւրոպական տերութիւնների միջամտութիւնը հայցելը: Ինչպէս տեսնում ենք, նրա մօտեցումն աչքի չի զարնում որեւէ ինքնատիպ հարցադրմամբ, քանզի նա ընդամէնը վերաշարադրում է իր նախորդների՝ պատմական իրականութեան հետ հեռաւոր առնչութիւն իսկ չունեցող մեկնաբանութիւնները[153]:

Միեւնոյն հայեցակարգային դիրքերից է հայկական կոտորածների պատմութիւնը սոսկ հպանցիկ քննարկում դիւանագէտ եւ պատմաբան Ժան-Պոլ Գարնիէն՝ տուրք տալով հնչակեանների հրահրմամբ՝ «հայկական ապստամբութեան» վարկածին[154], որն

[152] Նոյն տեղում, էջ 28:

[153] Տե՛ս *Պօղոսեան Վ.*, նշվ. աշխ., էջ 230-248:

[154] *Garnier J.-P.*, La fin de l'Empire ottoman du Sultan Rouge à Mustafa Kemal, [Paris], 1973, p. 70-71.

Աբդուլ Համիդ Բ.ը հարկադրաբար ճնշել է: Ելնելով հարցի մեկնաբանութեան՝ Հայոց ցեղասպանութեան ժխտողական ուղղութեանը բնորոշ դիրքորոշումից, նոյնիսկ համիդիէ զօրամիավորումների կազմաւորումը նա պայմանաւորում է հայ «ապստամբների» գործողութիւնները սանձահարելու անհրաժեշտութեամբ[155]: Ժխտելով 1894-1896 թթ. զանգուածային կոտորածների իրողութիւնը՝ Գարնիէն յիշատակում է սոսկ «Սասունից Վան, Բիթլիսից Դիարբեքիր, Տրապիզոնից Էրզրում ծաւալուած ապստամբութեան» ճնշմանը միտուած՝ սուլթանի կողմից ձեռնարկուած միջոցառումների մասին եւ հաւաստում, որ 1895 թ. Կոստանդնուպօլսում տեղի ունեցած արիւնալի խռովութիւնը շարունակուել է մինչեւ 1896 թ. օգոստոսի վերջին օրերը[156]: Ինչպէս տեսնում ենք, նրա մեկնաբանութիւններն ամբողջութեամբ համահունչ են Հայոց ցեղասպանութեան պատմագիտական ժխտողական ուղղութեան ներկայացուցիչների հիմնական կռուաններին:

Ի տարբերութիւն նշուած հեղինակների՝ Հայոց ցեղասպանութեան պատմութեանն առնչուող հիմնախնդիրների մեկնաբանութեան հարցում միանշանակ չէ յայտնի թուրքագէտ Ֆրանսուա Ժորժէոնի դիրքորոշումը, որն իր տարբեր, ըստ էութեան, թրքամէտ ուսումնասիրութիւններում այս առնչութեամբ առաջադրում է մասամբ իրարամերժ տեսակէտներ: Վկայակոչելով, ընդհանուր առմամբ, ժխտողական ուղղութեան ներկայացուցիչների հիմնական հայեցակարգային դրոյթները, նա եւս ջանում է Հայոց ցեղասպանութեան պատմութիւնը, թէպէտ ոչ բացայայտօրէն, այդուհանդերձ, նենգափոխել Ռ. Մանտրանի խմբագրութեամբ լոյս ընծայուած՝ Օսմանեան կայսրութեան պատմութեանը նուիրուած կոլեկտիւ մենագրութեան մէջ[157]:

Արեւմտահայութեանն առնչուող հիմնահարցերը Ժորժէոնը ներկայացնում է ԺԹ. դարի վերջին Օսմանեան կայսրութեան տարածքում բնակուող տարբեր ժողովուրդներին՝ մակեդոնացիներին, յոյներին, հայերին, համակած քաղաքական խմորումների յենքի վրայ եւ փորձում այլազգիներին, ինչպէս նաեւ Աբդուլ Համիդի՝ նրանց հանդէպ

---

[155] Նոյն տեղում, էջ 70:

[156] Նոյն տեղում, էջ 71:

[157] *Georgeon F.*, Le dernier sursaut (1878-1908).– Histoire de l'Empire ottoman. Sous la direction de R. Mantran, Paris, 1989.

վարած քաղաքականութեանն առնչուող խնդիրները քննարկել փոխկապակցուած ձեւով: Այդուհանդերձ, չնայած այս հանգամանքին, նա առաւել մեծ տեղ է յատկացնում հայկական խնդիրների վերլուծութեանը, քանզի ինչպէս իրաւամբ նշում է, օսմանեան պետութեան համար դրանք եղել են շատ աւելի մտահոգիչ[158]:

ԺԹ. դարի երկրորդ կէսին արեւմտահայութեան պատմութեան մեկնաբանութեան խնդրում Ժորժէոնը որդեգրել է, ինչպէս եւ Մոզերը, հայկական կարծեցեալ ազգայնամոլութեան վերելքին առնչուող վարկածը: Ցուցաբերելով փաստերի հանդէպ խիստ կողմնակալ վերաբերմունք, նախքան 1890-ական թուականների երկրորդ կէսին Արեւմտեան Հայաստանն ալեկոծած իրադարձութիւնների պատմութեանն անդրադառնալը, հեղինակն անտեսում է արեւմտահայութեան կեանքի անելանելի պայմանները եւ դրանով իսկ հող նախապատրաստում հայ ժողովրդի զանգուածային բնաջնջման պատմութիւնն իր հայեցակարգային դիրքերից մեկնաբանելու համար:

Նախ Ժորժէոնը, ինչպէս եւ Հայոց ցեղասպանութեան պատմութեան ժխտողական ուղղութեան ներկայացուցիչները, միտումնաւոր շրջանցելով Հայաստան անուանումը՝ գերադասում է պարբերաբար օգտագործել «Արեւելեան Անատոլիա» յեղյեղուկ արտայայտութիւնը: Այս մօտեցումը, ոչ այլ ինչ է, եթէ ոչ հայ ժողովրդին իր հայրենիքից զրկելու փորձ, որի հիմնաւորմանն է միտուած նաեւ հեղինակի մէկ այլ բացայայտ շեղում պատմական իրականութիւնից. նա պնդում է, որ ԺԹ. դարի վերջին «հայերով բնակեցուած արեւելեան վեց նահանգներում» վերջիններս եւ ոչ մի տեղ մեծամասնութիւն չէին կազմում[159]: Այս մեկնաբանութիւնը բնորոշ է ցեղասպանութեան պատմութեանն անդրադարձած՝ Ժորժէոնի տարբեր նախորդների[160]:

---

[158] Նոյն տեղում, էջ 560:

[159] Նոյն տեղում: Այդ թիւր տեսակէտը սուր քննադատութեան են ենթարկել տարբեր պատմաբաններ. տե՛ս *Համբարեան Ա.*, Ագրարային յարաբերութիւնները Արեւմտեան Հայաստանում (1856-1914), Երեւան, 1965, էջ 45; *նույնի*՝ Արեւմտահայերի թուաքանակի հարցի շուրջը.– «Բանբեր Երեւանի համալսարանի», 1969, թիւ 2, էջ 110: Տե՛ս նաեւ *Սիմոնեան Պ. Ս.*, Հայկական հարցը եւ ռուս հասարակական միտքը 19-րդ դարի 90-ական թուականներին, Երեւան, 2003, էջ 76; *Գալոյեան Գ.*, Հայաստանը մեծ տերութիւնների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), Երեւան, 2004, էջ 363-368:

[160] Տե՛ս օրինակ՝ *Pisani P.*, Les affaires d'Arménie, Paris, 1895, p. 19 ; *Lamy E.*, La France

Հայկական խնդիրների միջազգայնացումը 1878 թ., ըստ նրա, նպաստել է ազգային շարժման վերելքին[161]. հանգամանք, որը հարկ է համարել նրա մեկնաբանութեան անկիւնաքարը: Հիմնաւորելու համար իր հայեցակարգային մօտեցումը, որն, ընդհանուր առմամբ, յանգում է «հայկական ապստամբութեան» վարկածի առաջադրմանը, Ժորժէոնն ի սկզբանէ հայկական ազգային շարժման արմատականացումը պայմանաւորում է յաջողութեամբ պսակուած բուլղարական շարժմամբ, անվարան ընդգծելով բուլղարական «կոմիտէներին» բնորոշ կատաղի գործելամիջոցները[162]: Այս հանգամանքի փաստումն ամենեւին պատահական չէ, քանզի, ըստ նրա շարադրանքի տրամաբանութեան՝ 1880-1890-ական թուականներին ստեղծուած հայկական «առաջին յեղափոխական կուսակցութիւնները» որդեգրել էին պայքարի միեւնոյն միջոցները, հետապնդելով ահաբեկչութեան եւ զինուած պայքարի, ինչպէս նաեւ գիւղացիութեանը զինելու նպատակներ, ի դէպ, ինչպէս ընդգծում է հեղինակը՝ հակասելով հարցի մեկնաբանութեան շուրջ առաջադրած իր իսկ դիրքորոշմանը, «իր պաշտպանութիւնը» կազմակերպելու համար[163]: Հեղինակի հաւաստմամբ՝ յաջորդ խնդիրը, որին հետամուտ էին հայկական կուսակցութիւնները՝ Արեւմուտքի օգնութիւնն էր: Յեղափոխական գործունէութեան առաջին դրսեւորումը հեղինակը համարում է 1890 թ. Գում Գափուի ցոյցը:

Օսմանեան կայսրութեան տարածքում 1894-1896 թթ. ծաւալուած իրադարձութիւնները Ժորժէոնը բնորոշում է սոսկ իբրեւ հայ յեղափոխականների գործունէութեան հետեւանքով սկիզբ առած խմորումներ, որոնք ճանապարհ են հարթել կառավարութեան կողմից բռնութիւնների իրականացման համար[164]: Ըստ այդմ՝ նա թուարկում է հնչակեանների հրահրմամբ կազմակերպուած հայկական «ապստամբութիւնների» առաւել ցայտուն դրսեւորումները (մասնաւորապէս 1894 թ. Սասունում եւ 1895-1896 թթ. Կոստանդնուպոլսում): Օսմանեան կառավարութեան դիրքորոշումը, որը 1894 թ.

---

du Levant, Paris, 1900, p. 84 ; *Pinon R.*, L'Europe et l'Empire ottoman. Les aspects actuels de la question d'Orient, Paris, 1908, p. 43:

[161] *Georgeon F.*, նշվ. աշխ., էջ 561:

[162] Նոյն տեղում, էջ 562:

[163] Նոյն տեղում:

[164] Նոյն տեղում, էջ 563:

Սասունում հայերի ըմբոստութիւնը դիտել է իբրեւ ապստամբութիւն եւ զօրքեր ուղարկել այն ճնշելու համար, Ժորժէոնը համարում է, փաստօրէն, օրինաչափ, թէպէտ ընդունում է, որ այդ ճնշումը եղել է ընդամէնը «կոպիտ», իսկ կոտորածները Եւրոպայում յուզումների տեղիք են տուել: Նա, իհարկէ, անորոշ ձեւով ընդունում է «արիւնալի յուզումների եւ խռովութիւնների» տարիների գոյութեան փաստը եւ, իբրեւ դրա միակ հետեւանք առանձնացնում հայկական ազգային շարժման խորին ճգնաժամ ապրելու փաստը, բայց ոչ աւելին[165]: Ինչ վերաբերում է Աբդուլ Համիդին, ապա նրան, ըստ հեղինակի, յաջողուել է ընդամէնը թուլացնել հայկական ազգային շարժումը, իսկ 1894-1896 թթ. իրադարձութիւնների հանրագումարը, նրա գրչի տակ, յանգում է ընդամէնը 100.000 հայերի արտագաղթին[166]:

Ի տարբերութիւն Հայոց ցեղասպանութեան պատմագրութեան ժխտողական ուղղութեան բազմաթիվ ներկայացուցիչների՝ Ժորժէոնը թէպէտ հպանցիկ յիշատակում է հայկական կոտորածները, այդուհանդերձ, ըստ էութեան, շարունակում է տուրք տալ նրանց հայեցակարգային դրոյթներին: Ակնառու է, որ հարցին անտեղեակ ընթերցողի համար գրեթէ անհնար է կողմնորոշուելն իսկ նրա մեկնաբանութիւնների խրթին յորձանուտում: Նախ հասկանալի չէ, թէ ինչ նկատի ունի հեղինակը փաստելով հայերի զինումը պաշտպանութիւն կազմակերպելու նպատակով, քանզի չի յիշատակում օսմանեան վայրագ բռնատիրութեան ճիրաններում հեծող արեւմտահայութեան համար ստեղծված անելանելի պայմանների՝ կեանքի եւ գոյքի անապահովութեան, այլեւայլ սոցիալական ճնշումների, տնտեսական անողոք կեղեքումների մասին: Հայաստանի բռնագրաւման փաստի, արեւմտահայութեան՝ սոսկ իր իրավիճակի բարելաւման նպատակ հետապնդող պայքարի շրջանցման հետեւանքով, անըմբռնելի են մնում նաեւ նրա կողմից շեշտուող հայկական ազգային զարթօնքի իրական պատճառները, որը Ժորժէոնը ներկայացնում է սոսկ իբրեւ «ազգայնամոլական» շարժում: Հիմնուելով այս հիմնադրոյթի վրայ՝ հեղինակը, փաստօրէն, հայկական ազգային կուսակցութիւնների եւ արեւմտահայութեան՝ յանուն իր կացութեան բարելաւման մղած պայքարը, կոպտօրէն

[165] Նոյն տեղում, էջ 563-564:
[166] Նոյն տեղում, էջ 564:

խեղաթիւրելով փաստերը, մեկնաբանում է իբրեւ օսմանեան պետութեան դէմ ուղղուած ապստամբական շարժում, որի ճնշումն օսմանեան վարչակարգի կողմից ներկայացնում է իբրեւ միանգամայն օրինաչափ:

Ամբողջութեամբ շրջանցելով հայ ժողովրդի ցեղասպանութեան իրական պատճառները, դրա կազմակերպումը եւ իրականացումը պետական քաղաքականութեան մակարդակով (Սասունի ապստամբութեան ճնշման պատասխանատու նա համարում է միայն քուրդ շէյխերից մէկին[167], իսկ Զեքի փաշայի գլխաւորութեամբ գործող օսմանեան չորրորդ բանակի վայրագութիւնների մասին նոյնիսկ չի յիշատակում)՝ Ժորժէոնը բաւարարւում է ընդհարումների արդիւնքում կոտորածների մասին թռուցիկ յիշատակմամբ, սակայն, ձեռնպահ է մնում դրանց ծաւալի, աշխարհագրական սահմանների յստակեցումից, հայերի մարդկային ահռելի կորուստների մասին որեւէ հաւաստի տեղեկութիւններ հաղորդելուց:

Ժորժէոնի շարադրանքը բացայայտօրէն վկայում է Օսմանեան կայսրութեան պատմութեանը հեղինակի խիստ իրազեկ լինելու մասին: Այս հանգամանքն առաւել եւս մեզ համոզում է, որ նա պատմական փաստերը կեղծել է դիտաւորութեամբ, ըստ այդմ՝ մեր հետեւութիւնը միանշանակօրէն յանգում է նրա կողմից գիտակցաբար Հայոց ցեղասպանութեան պատմութեան նենգափոխմանը:

Այդուհանդերձ, հարկ է մեկնաբանել, որ Ժորժէոնն անկողմնակալ դիրքերից լուսաբանում է միայն Աբդուլ Համիդի կողմից սանձազերծուած Հայոց ցեղասպանութեան հիմնական պատճառներից մէկը: Արեւմտահայութեան խնդիրը, որը տերութիւններին հնարաւորութիւն կ'ընձեռեր նոր միջամտութիւնների համար, նա իրաւամբ համարում է «նոր սպառնալիք» կայսրութեան տարածքային ամբողջականութեան՝ արդէն սկիզբ առած մասնատման գործընթացի հետագայ ծաւալման համար: Այս պայմաններում, ինչպէս նա մեկնաբանում է, նախկին, իր համար դառը փորձով իմաստնացած սուլթանի առջեւ ծառացել էր հայկական կարծեցեալ ազգայնամոլութեան դրսեւորումները

[167] Նոյն տեղում:

ճնշելու անհրաժեշտութիւնը՝ կապուած Օսմանեան կայսրութեան տարածքային ամբողջականութեան հնարաւոր եւ իր համար խիստ անցանկալի տրոհման հեռանկարից խուսափելու անհրաժեշտութեան հետ: Իբրեւ դրան միտուած քայլեր՝ նա յիշատակում է սուլթանի կողմից ռուսական սահմանին յարող տարածքի բնակեցումը մահմեդականներով, համիդիէ զօրամիաւորումների կազմաւորումը, որոնց հիմնական նպատակը համարում է «հայկական յեղափոխականների գործողութիւններին դիմակայելը», չանտեսելով, սակայն, մահմեդականների համախմբման եւ հայերի ու քրդերի միջեւ սեպ խրելու հանգամանքները[168], միաժամանակ շրջանցելով դրանց ստեղծման իրական պատճառները[169]:

Ըստ էութեան, միեւնոյն հայեցակարգային դիրքերից է Ժորժէոնը մեկնաբանել Հայոց ցեղասպանութեան պատմութիւնն Աբդուլ Համիդ Բ.ի ընդարձակ կենսագրականում[170], որի ընթերցումը մէկ անգամ եւս համոզում է նրա՝ իբրեւ Օսմանեան կայսրութեան պատմութեան հմուտ գիտակ լինելու հարցում: Այդուհանդերձ, հարկ է ի սկզբանէ փաստել, որ հեղինակի շարադրանքում նկատելի են որոշ փոփոխութիւններ. նախ նա մեծ տեղ է յատկացրել 1894-1896 թթ. հայկական կոտորածների նկարագրութեանը, այդ թւում 1894 թ. Սասունի ապստամբութեանը եւ դրա հետաքննութեանը, բարենորոգումների ծրագրերի առաջադրմանը, մեծ տերութիւնների քաղաքականութեան հանդէպ սուլթանի մարտավարութեան կրած փոփոխութիւններին: Նա բազմիցս յիշատակում է հայկական «կոտորածների ողբերգական շարքի», «արիւնահեղ սպանդի», 1894-1895 թթ. Արեւելեան Անատոլիայի, այն է՝ Արեւմտեան Հայաստանի, տարբեր բնակավայրերում հայերի բնաջնջման եւ նրանց ունեցուածքի թալանի, կանանց առեւանգման, բռնի կրօնափոխութեան մասին[171]: Ընդհանուր առմամբ, 1894-1895 թթ. հայերի տուած զոհերի թուաքանակի ճշգրտումը

---

[168] Նոյն տեղում, էջ 563:

[169] Այդ մասին տե՛ս *Պէյլերեան Ա.*, Համիտիէ զօրախումբերու կազմակերպութեան ծագումը (1890-1894).– «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, 1994, հ. ԺԴ., էջ 81-98:

[170] *Georgeon F.*, Abdülhamid II. Le sultan calife (1876-1909), Paris, 2003.

[171] Նոյն տեղում, էջ 286, 292, 299:

նա համարում է շատ խրթին, այդուհանդերձ, նշում է, որ ըստ որոշ տուեալների այն հասնում է 300.000-ի[172]: Ամէն դէպքում, հեղինակն իրաւացիօրէն եզրակացնում է, որ հարկ է Օսմանեան կայսրութեան պատմութեան ծալքերում շատ խորանալ համանման ծաւալի կոտորածների որեւէ փաստ արձանագրելու համար[173]: Ժորժէոնն այս գրքում արդէն յիշատակում է նաեւ «Հայաստան» անուանումը եւ նոյնիսկ նշում Հայաստանի անջատման հնարաւորութեան մասին՝ եւրոպական տերութիւնների միջամտութեան արդիւնքում[174]:

Արտաքուստ, Հայոց ցեղասպանութեան պատմութեան մեկնաբանութեան հարցում Ժորժէոնի դիրքորոշումը կրել է էական փոփոխութիւններ: Մենք, անտարակոյս, հակուած ենք ցեղասպանութեան գործընթացի ծաւալման նկարագրողական կողմին անհրաժեշտ ուշադրութիւն յատկացնելը դասել նրա մենագրութեան արժանիքների շարքը, այդուհանդերձ, առաւել էականը հեղինակի մեկնաբանութիւններն են, որոնք, սակայն, ըստ էութեան, որեւէ սկզբունքային փոփոխութիւններ չեն կրել: Հայոց ցեղասպանութեան պատմութեան շատ աւելի լայն ետնախորքի վրայ, այդ թւում՝ միջազգային յարաբերութիւնների վերլուծութեան ընդգրկմամբ, հեղինակն այս անգամ եւս գիտակցաբար ժխտում է իրադարձութեան իրականացումը պետական քաղաքականութեան մակարդակով եւ շեշտը դնում հնչակեանների՝ իբրեւ կայսրութեան տարածքն ընդգրկած, համընդհանուր «հայկական ապստամբութեան» հրահրիչների, հայ-թուրքական հակամարտութեան հիմքում կրօնական զանազանութեան խարսխման, օսմանեան կառավարութեան կողմից հարկադրաբար՝ կարգի վերականգնման նպատակ հետապնդող բռնութիւնների կիրառման վրայ:

Ժորժէոնը հմտօրէն դիմում է նաեւ որոշ խուսանավումների, սակայն, արդիւնքում յանգում միեւնոյն հետեւութիւններին: Սասունի ապստամբութեան առիթով, օրինակ, նա փաստում է Աբդուլ Համիդի դերակատարութիւնը, որի անմիջական կարգադրութեամբ՝ Զեքի փաշան օգտագործելով իր տրամադրութեան տակ եղած բոլոր միջոցները, այն ճնշել է «մեծ դաժանութեամբ»[175]: Առաջին հայացքից,

[172] Նոյն տեղում, էջ 292:
[173] Նոյն տեղում, էջ 293:
[174] Նոյն տեղում, էջ 289:
[175] Նոյն տեղում, էջ 287:

նա պատասխանատուութիւնը վերագրում է օսմանեան գահակալին: Նրա մեկնաբանութիւնները, սակայն, յանգեցնում են հակադարձ հետեւութեան: Իրադարձութիւնների պատասխանատուների դիմազերծման հարցում արդէն հեղինակն ամբողջութեամբ բացայայտում է իր ընդգծուած թրքամէտ դիրքորոշումը:

Մանրակրկիտ քննարկման արդիւնքում, Ժորժէոնը հակուած է իրադարձութեան պատասխանատվութիւնը բարդել «ժողովրդական խաւերի» վրայ, որոնց մոլեգնութեան աճին մեծապէս խթանել են 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդիւնքում Բալկաններում կրած տարածքային կորուստները, ինչպէս նաեւ հայկական ինքնավարութեան կամ անկախութեան գաղափարի հասունացումը: Ըստ այդմ՝ 1895 թ. տեղի ունեցած կոտորածների պատասխանատվութիւնը նա բարդում է միայն դրանք հրահրած՝ Արեւելեան Անատոլիայի մահմեդականների վրայ: Հեղինակը մանրամասնօրէն նկարագրում է 1895 թ. հոկեմբերից ի վեր արեւմտահայութեան զանգուածային կոտորածները, որոնք, սակայն, մեկնաբանում է իբրեւ սոսկ «հակահայկական խռովութիւններ» եւ դրանք պայմանաւորում մահմեդականների կրօնական մոլեռանդութեան հերթական ժայթքմամբ, ինչին նպաստել են թէ՛ հնչակեանները եւ թէ՛ մասնաւորապէս տերութիւնների կողմից սուլթանին պարտադրուած բարենորոգումների ծրագրերի իրականացմանն առնչուող լուրերը (նա մատնանշում է, մասնաւորապէս սուլթանի՝ հոկտեմբերի 17-ի բարենորոգումների ծրագրի իրականացման հրովարտակը)[176]:

Այդուհանդերձ, նա թէեւ կատարածուներին ներկայացնում է սոսկ իբրեւ պատասխանատուների, չի ժխտում օսմանեան տեղական իշխանութիւնների պատասխանատվութիւնը, որոնք յաճախ օգնութեան ձեռք են մեկնել կոտորածներն իրականացնողներին:

Ինչ վերաբերում է Աբդուլ Համիդին, ապա Ժորժէոնի դիրքորոշումը նրա ղեկավար դերակատարութեան բացայայտման հարցում խիստ չափաւոր է եւ անընդունելի: Ըստ էութեան, նա սուլթանին գրեթէ ամբողջութեամբ զերծ է պահում հայկական կոտորածների փոքր-իսկ պատասխանատուութիւնից: Ժորժէոնը թէեւ

[176] Նոյն տեղում, էջ 292-293:

չի բացառում այն հանգամանքը, որ սուլթանը կարող էր ծածուկ քաջալերել սանձազերծուած բռնութիւնները, այդուհանդերձ, օսմանեան գահակալի նման դիրքորոշումը մեկնաբանում է տերութիւնների կողմից իրեն պարտադրուած բարենորոգումների իրականացմանը միտուած միջոցառումների տապալման ցանկութեամբ: Բացի դրանից, հեղինակը մեծ նշանակութիւն է տալիս սուլթանի՝ բանակը մահմեդականների դէմ դուրս բերելու ցանկութեան բացակայութեանը, թէպէտ ընդունում է զինուորականների մասնակցութիւնը կոտորածներին[177]:

Արդիւնքում, Ժորժէոնը թէեւ փաստում է Աբդուլ Համիդի կարծեցեալ անկարողութիւնը կամ ցանկութեան բացակայութիւնն իրավիճակը կարգավորելու հարցում, օսմանեան տեղական պաշտօնեաների դերն ու մասնակցութիւնը կոտորածներին, այդուհանդերձ, այս անգամ եւս, թէպէտ փոքր-ինչ քողարկուած ձեւով, ժխտում է հայ ժողովրդի բնաջնջման իրականացումը սուլթանի եւ օսմանեան պետութեան կողմից պետական քաղաքականութեան մակարդակով: Նա կտրականապէս մերժում է այն իրատեսական մեկնաբանութիւնը, ըստ որի՝ կոտորածները «կարգադրուել են եւ նոյնիսկ ծրագրուել» օսմանեան կառավարութեան կողմից, իսկ հիմնաւորելու համար իր տեսակէտը՝ բերում է, մեղմ ասած, ոչ այնքան համոզիչ փաստարկներ, ինչպիսիք են կայսրութեան ոչ բոլոր տարածքներում հայկական կոտորածների սանձազերծումը կամ օսմանեան որոշ տեղական պաշտօնեաների՝ բռնութիւններին հակադրուելու՝ իրականութեանը յիրաւի համապատասխանող փաստերը: Ըստ նրա հիմնական մեկնաբանութիւնների՝ Ժորժէոնին կարելի է անվարան դասել, Հայոց ցեղասպանութեան պատմութեան ժխտողական ուղղութեան աւելի չափավոր կողմնակիցների շարքը, եթէ առաւել եւս նկատի ունենանք, թէ Օսմանեան կայսրութեան պատմութեան ինչպիսի բանիմաց հեղինակի է վերաբերում խօսքը:

Ինչպէս տեսանք, նրանց մեկնաբանութիւններն ամբողջութեամբ համահունչ են ժխտողական պատմագրութեան ընդհանուր խճանկարին եւ համիդեան կոտորածների մեկնաբանութեան ասպարէզում որեւէ ինքնատիպ հարցադրումներով չեն առանձ-

[177] Նոյն տեղում, էջ 293-295:

նանում: Նրանք սոսկ որդեգրել են թէ՛ ԺԹ. դարի վերջի եւ Ի. դարի սկզբի ֆրանսիացի հայրենակիցների եւ թէ՝ իրենց ժամանակակից այլազգի պատմաբանների՝ միեւնոյն ուղղութեան ներկայացուցիչների հիմնական թեզերը եւ բաւարարուել դրանց վերաշարադրմամբ: Ամէն դէպքում, Հայոց ցեղասպանութեան պատմագրութեան ժխտողական ուղղութեան՝ ֆրանսիական պատմագրութեան ներկայացուցիչների գրչին պատկանող աշխատութիւնների տեսակարար կշիռը ֆրանսիական պատմագիտական մտքի նուաճումների յենքի վրայ, անտարակոյս, նուազ է:

*Հանդէս ամսօրեայ, 2009, թիվ 1-12, էջ 293-316*

## ՀԱՄԻԴԵԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ (Ի. ԴԱՐԻ 70-ԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ – ԻԱ. ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)

Օսմանեան կայսրութիւնում Հայոց ցեղասպանութեան նկատմամբ ֆրանսիական պատմագրութիւնն ի սկզբանէ դրսեւորել է անթաքոյց հետաքրքրութիւն: ԺԹ. – Ի. դդ. սահմանեզրին տեղի ունեցած համիդեան կոտորածները որեւէ երկրում այնպիսի հուժկու արձագանքների չեն արժանացել, ինչպէս ժողովրդավարական հինաւուրց աւանդոյթներ ունեցող Ֆրանսիայում՝ «շնորհիւ մի շարք մեծահոգի ֆրանսիացիների, որոնք դարձել են նահատակուած ժողովրդի դատապաշտպանները»[178]: Այդուհանդերձ, 1920-ական թուականների կէսերից, Ֆրանսիայում այս թեմայի հանդէպ հետաքրքրութիւնը մարել է: Հարցի էութիւնն այն է, որ 1923 թ. հանրապետութեան հռչակումից յետոյ, Թուրքիայում պետական քաղաքականութեան մակարդակով Հայոց ցեղասպանութեան փաստը շրջանցուել է լռութեամբ: Այդ իսկ պատճառով արեւմտեան կապիտալիստական մեծ տէրութիւնները, այդ թւում Ֆրանսիան, ելնելով իրենց ռազմավարական շահերից, շահագրգռուածութիւն են ցուցաբերել Թուրքիային՝ Խորհրդային Միութեանը հակադրելու հարցում եւ, հետեւաբար, թուրքական կառավարող շրջաններին հաճոյանալու նպատակով մոռացութեան են մատնել Հայոց ցեղասպանութիւնը[179], որի նկատմամբ հետաքրքութիւնը Ֆրանսիայում վերստին աճել է միայն 1960-ական թուականների կէսերից՝ կապուած Մեծ եղեռնի 50-ամեայ տարելիցի հետ:

Հայոց ցեղասպանութեան առաջին փուլը (1894-1908) ցեղասպանութեան պատմագրութեան մէջ առաւել յայտնի է իբրեւ համիդեան կոտորածներ: Ի. դարում տարբեր երկրներում պատմաբանները, անկախ ազգային պատկանելութիւնից, ուսումնասիրել են գլխաւորապէս 1915 թ. Մեծ Եղեռնի պատմութիւնը: Հայոց ցե-

[178] *Macler F.*, La nation arménienne. Son passé, ses malheurs, Paris, 1924, p. 45. Տես նաեւ *Տատնապետեան Հ.*, «Եւրոպական պրոպագանդ» (1899-1906),– «Ազդակ», 1983, թիւ 48, էջ 972:

[179] *Margossian N.*, L'avant et l'après du génocide des Arméniens,– «Գիտութեան գլոբուս», 2005, հ. 5, էջ 44-45:

ղասպանութեան տարբեր փուլերի՝ համիդեան, 1909 թ. կիլիկեան, 1919-1922 թթ. քեմալական կոտորածների պատմութիւնն արժանացել է հետազօտողների անհամեմատ նուազ ուշադրութեանը: Այս առումով ֆրանսիական պատմագրութիւնը եւս բացառութիւն չի կազմել: Ամբողջութեամբ համամիտ ենք Ռ. Յ. Գեւորգեանի հետ, որը 1894-1896 թթ. կոտորածների առնչութեամբ նշել է. «Առ այսօր այս ոճիրների մասին ոչ մի ամբողջական ուսումնասիրութիւն չի իրականացուել»[180]:

Այդուհանդերձ, 1970-ական թթ. առ այսօր Ֆրանսիայում լոյս են տեսել թէ՛ հայ ժողովրդի եւ թէ՛ Հայոց ցեղասպանութեան պատմութեանը, ինչպէս նաեւ ցեղասպանութեանը՝ իբրեւ երեւոյթի, նուիրուած մեծաքանակ տարաբնոյթ ուսումնասիրութիւններ, որոնց հեղինակներից ոմանք մանրամասնօրէն ուրուագծել են համիդեան կոտորածների ընդհանուր պատկերը, իսկ այլք այս կամ այն չափով անդրադարձել են իրադարձութեան պատմութեանը: Չնայած մօտեցումների անհամաչափութեանը, նրանք, ընդհանուր առմամբ, համիդեան կոտորածներին առնչուող հիմնախնդիրներին տուել են համահունչ մեկնաբանութիւններ:

Ստորեւ կ'անդրադառնանք Հայոց ցեղասպանութեան պատմութիւնն անառաչ դիրքերից մեկնաբանող ֆրանսիացի պատմաբանների ուսումնասիրութիւնների քննական վերլուծութեանը[181] պրոբլեմային սկզբունքով, ուշադրութիւնը սեւեռելով կոտորածների պատմութեանն առնչուող առաւել կարեւոր հիմնահարցերին տուած նրանց մեկնաբանութիւնների վրայ[182]:

---

[180] *Kévorkian R.H.*, Le génocide des Arméniens, Paris, 2006, p. 19.

[181] Քննարկուող ժամանակաշրջանում Հայոց ցեղասպանութեան պատմագրութեան ժխտողական ուղղութեան ֆրանսիացի ներկայացուցիչների տեսակէտներին անդրադարձել ենք մեր նախորդ յօդուածներից մէկում. տե՛ս *Պօղոսեան Վ.*, Համիդեան կոտորածների պատմութեան նենգափոխումը ֆրանսիական պատմագրութեան կողմից (Ի. դ. երկրորդ կէս – ԻԱ. դ. սկիզբ),– «Հանդէս ամսօրեայ», 2009, թիւ 1-12, էջ 293-316:

[182] Սոյն յօդուածում չենք անդրադառնայ քննարկուող ժամանակահատուածում ֆրանսիացի պատմաբանների լոյս ընծայած աղբիւրագիտական բնոյթի հրատարակութիւններին (*Meyrier G.*, Les massacres de Diarbékir. Correspondance diplomatique du Vice-Consul de France. 1894-1896. Présentée et annotée par Claire Mouradian et Michel Durand-Meyrier, Paris, 2000 ; *Bérard V.*, La politique du sultan, Paris, 2005 ; *Jaurès J.*, Il faut sauver les Arméniens. Établissement de l'édition, notes et postface par Vincent

*Հայոց ցեղասպանութեան ժամանակագրական եզրերը*. Հայոց ցեղասպանութեան պատմագրութեան մէջ բուռն տարակարծութիւնների տեղիք է տուել ցեղասպանութեան ժամանակագրական եզրերի յստակեցման վիճահարոյց խնդիրը: Ֆրանսիական պատմագրութեան տարբեր ներկայացուցիչներ եւս առաջադրել են իրարամերժ կարծիքներ: Ըստ գերիշխող տեսակէտի՝ Հայոց ցեղասպանութիւնը թուրքիզմի գաղափարախոսութեան հիման վրայ՝ 1915-1916 թթ. իրականացրել են երիտթուրքերը, որին նախորդել եւ յաջորդել են համապատասխանաբար համիդեան եւ քեմալական կոտորածները:

1970-ական թուականների կէսերին առաջինն այս հարցին անդրադարձել են Ժ.-Մ. Կարզուն եւ Ի. Տերնոնը, որոնց հայեցակարգային մօտեցումներն այս ժամանակաշրջանում էականօրէն զանազանւում էին: Ժ.-Մ. Կարզուն 1895 թ. կոտորածները բնորոշել է իբրեւ Հայոց ցեղասպանութեան ընդհանուր նախերգանք, որոնք ընդգրկուել են Յունաստանում, այնուհետեւ Բուլղարիայում արձանագրուած իրադարձութիւններին բնորոշ յորձանուտում[183]: Հարկ է մանրամասնել, որ թէեւ 1890-ականներին արեւմտահայութեան հանդէպ օսմանեան կառավարութեան իրականացրած լայնածաւալ կոտորածների քաղաքականութիւնը սկզբունքօրէն չէր զանազանւում 1870-ական թուականներին Բուլղարիայում՝ Բարձր Դռան կիրառած քաղաքականութիւնից, այդուհանդերձ, դրանց միջեւ առկայ որոշ տարբերութիւնների քննարկումը հեղինակը շրջանցել է:

Արեւմտահայութեան եւ բուլղարացիների կոտորածներն, անշուշտ, ունեցել են մեծաթիւ հատման կէտեր, ինչպիսիք են դրանց իրականացումը պետական քաղաքականութեան մակարդակով

---

Duclert, Paris, 2006 ; 1895, Massacres d'Arméniens. Alphonse Cillière, consul de France à Trébizonde. Texte présenté par Gérard Dédéyan, Claire Mouradian et Yves Ternon, Toulouse, 2010), առաւել եւս, որ Գ. Մէյրիէյի գրագրութիւնները եւ Ա. Սիլիէրի յուշերը, տողերիս հեղինակը գրախօսել է հայրենական գիտական պարբերականներում (տե՛ս համապատասխանաբար՝ Հայոց ցեղասպանութեան պատմութեան եւ պատմագրութեան հարցեր, 2004, թիւ 9, էջ 152-159; Էջմիածին, 2010, թիւ Ժ, էջ 141-146):

[183] *Carzou J.-M.*, Un génocide exemplaire. Arménie 1915, Paris, 1975, p. 61. Տե՛ս նաեւ երկրորդ հրատարակութիւնը. *Carzou J.-M.*, Un génocide exemplaire. Arménie 1915, Paris, 2006, p. 61.

եւ կանխամտածուածութեան հիման վրայ, պատճառները եւ հետեւաբար վերջնական նպատակը: Ռ. Սաֆրաստեանն իրաւամբ հաւաստում է, որ բուլղարացիների դէմ ուղղուած քաղաքականութիւնը «կարելի է դիտարկել որպէս հայրենազրկման նպատակով իրականացուելիք ցեղասպանութիւն», քանի որ այն հետապնդել է էթնիկական խմբի բնաջնջման նպատակ՝ նրան իսկ պատկանող հայրենիքի տարածքում[184]: Այս կտրուածքով մենք բաժանում ենք Ժ.-Մ. Կարզուի տեսակէտը, թէեւ նա ձեռնպահ է մնացել իր եզրակացութեանը նման հիմնաւորումներ տալուց:

Ինչպէս ապացուցել է Ռ. Սաֆրաստեանը, բուլղարացիների բնաջնջումն օսմանեան վարչակարգն իրականացնում էր ոչ միայն կանխամտածուածութեան հիման վրայ, այլեւ ի պատասխան բուլղարացիների 1876 թ. ապրիլեան ապստամբութեան՝ ըստ 1876 թ. մշակուած ցեղասպանութեան ծրագրի: Վերջինս թէեւ ամբողջութեամբ ի կատար չի ածուել, այդուհանդերձ, նպատակաուղղուած է եղել բուլղար ժողովրդի ոչնչացմանը: Ռուսական արխիւներում յայտնաբերած փաստաթղթերի, մասնաւորապէս՝ Բուլղարիայում հաւատարմագրուած ռուս դիւանագէտների զեկուցագրերի մանրակրկիտ ուսումնասիրութեան հիման վրայ, նրան յաջողուել է յայտնաբերել 1876 թ. մայիսին օսմանեան կառավարութեան ընդունած՝ բուլղարացիներին ցեղասպանութեան ենթարկելու ծրագրին վերաբերող հաւաստի վկայութիւններ եւ բացայայտել դրա առանձնայատկութիւնները: Դրանք նրան հիմք են տուել եզրակացնելու, որ ծրագրում նախանշուած «գործողութիւնների ընդհանրութիւնը բացայայտում է պետութեան դիտաւորութիւնը բնաջնջել որոշակի էթնիկական խումբ եւ կարող է բնութագրուել որպէս ցեղասպանութիւն»[185]: Մանրամասնենք, որ պատմաբաններին դեռեւս յայտնի չեն 1890-ական թուականներին արեւմտահայութեան ոչնչացմանն առնչուող՝ օսմանեան կառավարութեան մշակած համանման ծրագրային փաստաթղթեր:

Ի տարբերութիւն Ժ.-Մ. Կարզուի, Ի. Տերնոնն այս հարցի մեկնաբանութեան առնչութեամբ պարբերաբար առաջադրել է իրարամերժ տեսակէտներ, որոնք հայեցակարգային առումով կրել են սկզբունքային փոփոխութիւններ: Դեռեւս 1974 թ.՝

[184] *Սաֆրաստեան Ռ.*, Օսմանեան կայսրութիւն. ցեղասպանութեան ծրագրի ծագումնաբանութիւնը (1876-1920 թթ.), Երեւան, 2009, էջ 162:
[185] Նոյն տեղում, էջ 161-162:

Հայոց ցեղասպանութեան պատմութեան ուսումնասիրութեան արշալոյսին, թէպէտ նա ընդունում էր, որ Աբդուլ Համիդի մտադրութիւնը յանգում էր «մինչեւ վերջին հայի ոչնչացմանը», այդուհանդերձ, հակուած չէր սուլթանի սանձազերծած՝ հայ ժողովրդի լայնածաւալ բնաջնջումն իբրեւ ցեղասպանութիւն բնորոշելու, որն, ըստ նրա՝ իրականացրել էր երիտթուրքական վարչակարգը 1915 թ.: Հայերի ոչնչացումը նա համարում էր ցեղասպանութեան ոճիր, քանի որ «այն իրականացուել է ազգային, էթնիկական եւ կրօնական խմբի համատարած բնաջնջման դիտաւորութեամբ»[186]:

Սակայն, արդէն 1977 թ. լոյս ընծայած՝ Հայոց ցեղասպանութեան պատմութեանը նուիրուած իր առաջին գրքում, Ի. Տերնոնը, որը ցեղասպանութեան՝ իբրեւ երեւոյթի առնչուող հիմնախնդիրներով դեռեւս չէր զբաղւում, մանրամասնօրէն նկարագրելով 1890-ական թուականների կոտորածները, տալիս է, մեր կարծիքով, աւելի իրատեսական մէկ այլ մեկնաբանութիւն՝ դրանք բնութագրելով իբրեւ «ցեղասպանութիւն»[187]: Այս հետեւութեանը նա յանգում է՝ ելնելով մի շարք հիմնաւոր փաստարկներից, ինչպիսիք են 1895 թ. կոտորածների կազմակերպումը եւ նախապատրաստումն օսմանեան պետութեան ղեկավարների կողմից, կոտորածների ալիքն ընդգրկած տարածքը, որտեղ բնակուող հայերի համար տէրութիւնները պահանջել էին բարենորոգումների իրականացում, զոհերի ընտրութիւնն ըստ էթնիկական ծագման, կոտորածների իրականացումը կանխամտածուածութեան հիման վրայ, իշխանութիւնների անտարբերութիւնը կամ յանցակցութիւնը[188]:

Թէեւ այս փաստարկների գերակշռող մասն ինքնին բաւական է, ինչպէս մեզ թւում է, արեւմտահայութեան լայնածաւալ կոտորածները ցեղասպանութիւն բնորոշելու համար, այդուհանդերձ, Ի. Տերնոնի հայեացքները յետագայ տարիներին ակնյայտօրէն փոփոխուել են, ինչն արտացոլուել է նրա բազմաթիւ մենագրութիւններում: Նշուած գրքի երկրորդ հրատարակութիւնում համեմատելով 1895 թ. կոտորածները 1915 թ. Մեծ եղեռնի հետ, նա գերադասում է ձեռնպահ մնալ

---

[186] *Ternon Y.*, Éclats de voix. Recueil de textes 1794-2005. Préface de Maïr Waintrater, Paris, 2006, p. 22.

[187] *Ternon Y.*, Les Arméniens. Histoire d'un génocide, Paris, 1977, p. 112.

[188] Նոյն տեղում, էջ 112-115:

նախկինում առաջադրած իր տեսակէտից[189]: Յետագայ աշխատութիւններում եւս Ի. Տերնոնն այլեւս հակում չի դրսեւորում համիդեան կոտորածները համարելու Հայոց ցեղասպանութեան բաղկացուցիչ մաս եւ մատնանշում է ցեղասպանութեան իրականացման միայն երկու փուլ՝ 1915 թ. մայիս-յուլիս եւ 1915 թ. օգոստոս-1916 թ. դեկտեմբեր[190]: Նշենք, որ այս հարցում եւս նրա դիրքորոշումն աչքի չի զարնում հետեւողականութեամբ, քանզի Ժ. Շալեանի հեղինակակցութեամբ հրատարակած գրքում նա Հայոց ցեղասպանութիւնը եզերում է 1915-1921 թթ. շրջանակներում[191]:

Համիդեան կոտորածների գնահատման առնչութեամբ Ի. Տերնոնի այս եւ յետագայ մեկնաբանութիւնները, տողերիս հեղինակի կարծիքով, առարկութիւնների տեղիք են տալիս: Փաստենք էական մի հանգամանք. 1990-ական թուականներից նա մեծ հետաքրքրութիւն է դրսեւորել ցեղասպանութիւնն՝ իբրեւ երեւոյթ ուսումնասիրող՝ պատմական գիտութեան տեսական նոր ճիւղի նկատմամբ եւ գրել համեմատական ցեղասպանագիտութեանը նուիրուած մի շարք արժէքաւոր ուսումնասիրութիւններ, որոնք այս խրթին ասպարէզում նրա համար ապահովել են հեղինակաւոր մասնագէտի անառարկելի համբաւ[192]:

Ի. Տերնոնը նշուած գրքերում մեկնաբանում է ոչ միայն տարբեր ցեղասպանութիւնների զանազանութիւնները, այլեւ մանրամասնօրէն առաջադրում «կոտորած», «ցեղասպանութիւն» եզրոյթների եւ շատ այլ տեսական հարցադրումների մեկնաբանութիւններ, որոնց լոյսի ներքոյ քննարկում է տարբեր զանգուածային բնաջնջումների, այդ թւում Հայոց ցեղասպանութեան, ընթացքն ու առանձնայատկութիւնները: Յիրաւի, կոտորածը եւ ցեղասպանութիւնը՝ իբրեւ երեւոյթներ, միմեանցից էականօրէն զանազանւում

---

[189] *Ternon Y.*, Les Arméniens. Histoire d'un génocide. Édition revue et mise à jour par l'auteur, Paris, 1996, p. 127 (այսուհետեւ կը յղենք գրքի երկրորդ հրատարակութիւնը):

[190] *Ternon Y.*, L'État criminel. Les génocides au XX^e^ siècle, Paris, 1995, p. 184-188 ; *նոյնի*՝ Guerres et génocides. Architecture de la violence en masse, Paris, 2007, p. 151-170 ; *նոյնի*՝ Le génocide de 1915-1916 et la fin de l'Empire ottoman (1914-1923),– Histoire du peuple arménien. Sous la direction de G. Dédéyan, Paris, 2008, p. 534.

[191] *Chaliand G.* et *Ternon Y.*, 1915, le génocide des Arméniens, Bruxelles, 2002, p. 43.

[192] *Ternon Y.*, L'État criminel ; *նոյնի*՝ L'innocence des victimes. Au siècle des génocides, Paris, 2001 ; *նոյնի*՝ Guerres et génocides au XX^e^ siècle. Architecture de la violence en masse.

են: Ցեղասպանագիտութեան ինքնին կնճռոտ եւ վիճահարոյց քառուղիներում Ի. Տերնոնը սատարում է այն մասնագէտներին[193], որոնք «կոտորածի» եւ «ցեղասպանութեան» զանազանման հիմնական չափորոշիչների թւում առանձնացնում են այս կամ այն իրադարձութեան իրականացումը պետական քաղաքականութեան մակարդակով[194]: Այս առնչութեամբ նա իրաւամբ նշում է. «Ցեղասպանութեան պատասխանատուն միշտ պետութիւնն է... Ցեղասպանութիւնը պետական յանցանք է, ինքնուրոյն պետութեան կամքի կենսագործումը, որը եւ այն զանազանում է՝ իրենց պետութեան կողմից չլիազօրուած հրոսակախմբերի կամ զօրքերի իրականացրած կոտորածից»[195]:

---

[193] *Fein H.*, Accounting for Genocide. National Responses and Jewish Victimization during the Holocaust, New York, London, 1979, p. 7; *Harff B.*, The Etiology of Genocide.– Genocide and the Modern Age. Etiology and Case Studies of Mass Death. Edited by I. Wallimann and M. N. Dobkowski, New York, 1987, p. 48; *նոյնի՝* Recognizing Genocides and Politicides,– Genocide Watch. Edited by Helen Fein, New Haven, London, 1992, p. 27-29; *Chalk F.* & *Jonassohn K.*, The History and Sociology of Genocide. Analyses and Case Studies, New Haven & London, 1990, p. 23, 26; *Melson R.*, Revolution and Genocide. On the Origins of the Armenian Genocide and the Holocaust, Chicago and London, 1992, p. 26; *I.L. Horowitz*, Government Responsibilities to Jews and Armenians: Nazi Holocaust and Turkish Genocide Reconsidered,– "Armenian Review", 1986, v. 39, n° 1, p. 3; *նոյնի՝* Taking Lives. Genocide and State Power. Fifth Edition, Revised, New Brunswick & London, 2002, p. 14, 23. Նշենք նաեւ, որ պետական քաղաքականութեան առկայութեան հանգամանքը, որը ցեղասպանութեան պարագայում մենք համարում ենք conditio sine qua non, ցեղասպանութեան՝ իբրեւ երեւոյթի, ժամանակակից մասնագէտների շրջանում տարակարծութիւնների տեղիք է տուել: Տե՛ս օրինակ մեր օրերի խոշորագոյն մասնագէտներից՝ այս տեսակէտի կողմնակից, ամերիկացի յայտնի քաղաքագէտ Ռուդոլֆ Ջ. Ռումելի եւ այն վիճարկող՝ Երուսաղէմում Հոլոքոստի եւ ցեղասպանութեան ինստիտուտի տնօրէն Իսրայէլ Չառնիի բանավէճն այս առիթով. *Rummel R.J.*, Le nouveau concept de démocide,– Le livre noir de l'humanité. Encyclopédie mondiale des génocides. Sous la direction de Israel Charny, Toulouse, 2001, p. 48-55 ; *Charny I.W.*, Démocide: vers un nouveau concept global. Présentation des travaux de R.J. Rummel // Ibid, p. 45-48: Ի. Չառնիին, ի դէպ, համակարծիք են տարբեր մասնագէտներ, այդ թւում գիտութեան՝ համեմատաբար այս նոր ճյուղի նախակարապետներից Լէօ Կուպերը (1908-1994). *Kuper L.*, Genocide. Its Political Use in the Twentieth Century, New Haven and London, 1982, p. 86. Տե՛ս նաեւ *Shaw M.*, War and Genocide. Organized Killing in Modern Society, Cambridge, 2005, p. 44-45, 47; *նոյնի՝* What is Genocide? Cambridge, 2007, p. 154-155.

[194] *Ternon Y.*, L'État criminel, p. 65-78.

[195] Նոյն տեղում, էջ 65:

Բացի դրանից, ցեղասպանութեան՝ իբրեւ երեւոյթի, ժամանակակից մասնագէտներից ոմանք ցեղասպանութեան հիմնական բաղադրիչներից են համարում դիտաւորութեան հանգամանքը[196]: Ի. Տերնոնը եւս այս հարցում յայտնում է համահունչ կարծիք եւ բանավիճելով այլոց, այդ թւում՝ Ի. Չառնիի հետ, նշում է. «Ցեղասպանութիւնն այլ հաւաքական ոճիրներից տարբերւում է մարդկանց խմբի ոչնչացմամբ կանխամտածուածութեան հիման վրայ եւ նրանց բնաջնջմամբ իբրեւ այդպիսիք»[197]:

Այս առնչութեամբ հետաքրքիր է նրա մէկ այլ, խիստ կարեւոր դիտարկում եւս. «Առանց նախանշուած խմբի բնաջնջման ծրագրման հնարաւոր չի խօսել ցեղասպանութեան մասին: Սակայն, զանգուածային սպանութիւնը՝ իբրեւ ցեղասպանութիւն բնորոշելու համար անհրաժեշտ չէ, որ այդ ծրագրումը մշակուած լինի ամբողջութեամբ»[198]:

Ինչպէս տեսնում ենք, Հայոց ցեղասպանութեան ժամանակագրական եզրերի սահմանման խնդրում վերանայելով իր նախկին տեսակէտը, Ի. Տերնոնն առաջադրում է իր հայեցակարգային հարցադրումներին, ըստ էութեան, անյարիր մեկնաբանութիւններ: Իր յետագայ գրքերում 1894-1896 թթ. տեղի ունեցած արեւմտահայութեան ոչնչացումը բնութագրելով իբրեւ «համիդեան կոտորածներ» կամ «հաւաքական կոտորած»[199], նա, այդուհանդերձ, հաշուի առնելով դրանց կանոնաւորութիւնը եւ զոհերի ընտրութիւնն ըստ ազգային պատկանելութեան՝ միաժամանակ փաստում է դրանց «ցեղասպանային բնոյթը»[200]: Նրա առաջադրած այս բնորո-

---

[196] Տես օրինակ *Chalk F.* & *Jonassohn K.*, նշվ. աշխ., էջ 26; *Dadrian V.*, The Determinants of the Armenian Genocide, [Yale], 1998, p. 7; *Balint J.*, *Charny I.W.*, Définitions du génocide.– Le livre noir de l'humanité. Encyclopédie mondiale des génocides, p. 43-44: Այս հարցի մասին մանրամասն տես *Սաֆրաստեան Ռ.*, Ցեղասպանութեան ծագումնաբանութեան հարցի շուրջ. դիտաւորութեան հանգամանքի կիրառումը.– Հայոց Մեծ եղեռն-90: Յօդուածների ժողովածու, պատասխանատու խմբագիր՝ Արամ Սիմոնեան, Երեւան, 2005, էջ 367-371:

[197] *Ternon Y.*, նշվ. աշխ., էջ 91-92:

[198] *Ternon Y.*, Guerres et génocides au XX^e siècle. Architecture de la violence en masse, p. 285.

[199] *Chaliand G.* et *Ternon Y.*, նշվ. աշխ., էջ 29; *Ternon Y.*, L'innocence des victimes. Au siècle des génocides, p. 42 ; *նոյնի՝* Mardin 1915. Anatomie pathologique d'une destruction, Paris, 2002, p. 61-68.

[200] *Ternon Y.*, L'État criminel, p. 182.

շումը, մեր կարծիքով, համոզիչ չէ, առաւել եւս եթէ հաշուի առնենք վերը նշուած նրա իսկ՝ ցեղասպանութեանը՝ իբրեւ երեւոյթին առնչուող մեկնաբանութիւններից մէկը, որն առնչւում է զանգուածային բնաջնջումն իբրեւ ցեղասպանութիւն բնորոշելու անհրաժեշտութեանը, եթէ նոյնիսկ դրա ծրագիրը դեռեւս ամբողջութեամբ չի մշակուել: Ուստի օրինաչափ է, որ որոնումների մէջ գտնուող տեսաբան պատմաբանը վերջին տարիներին, ըստ էութեան, հրաժարուել է «ցեղասպանային կոտորածներ» եզրոյթից, այն անուանելով «խուսափողական» (dérobade) եւ իր տարակուսանքը յայտնելով այն օգտագործելու նպատակայարմարութեան շուրջ[201]:

Այդուհանդերձ, գիտական տարակարծութիւնների նկատմամբ յարգանքով լի՝ Ի. Տերնոնն անվարան շեշտում է, որ Հայոց ցեղասպանութեան ժամանակագրական եզրերի սահմանման խնդրում «բանավէճը շարունակւում է»[202]: Դրանով իսկ նա ակնարկում է, որ չի յաւակնում վերջնական խօսքի, իսկ 1890-ական թուականների կոտորածների մասին յայտնում է փոքր-ինչ այլ կարծիք, ըստ որի՝ դրանք «զարկ են տալիս բազում տասնամեակներ յարատեւող մի գործընթացի, որը դիւրին կդարձնի ցեղասպանութեան իրականացումը»[203]:

Ցեղասպանութեան՝ իբրեւ երեւոյթի շուրջ առաջադրած իր իսկ հայեցակարգային որոշ դրոյթներին (որոնց հպանցիկ անդրադարձանք վերը) անյարիր՝ Հայոց ցեղասպանութեան ժամանակագրական եզրերի յստակեցման խնդրում Ի. Տերնոնի դիրքորոշման փոփոխութիւնը, կարելի է, ամենայն հաւանականութեամբ, բացատրել ժամանակակից ֆրանսիացի պատմաբանների՝ այս հարցում որդեգրած հայեցակարգային մօտեցմամբ[204], ըստ որի՝ Հայոց ցեղասպանութիւնը

---

[201] *Ternon Y.*, Guerres et génocides au XX^e siècle. Architecture de la violence en masse, p. 12.

[202] *Ternon Y.*, Les Arméniens. Histoire d'un génocide, p. 127.

[203] *Ternon Y.*, Guerres et génocides au XX^e siècle. Architecture de la violence en masse, p. 111.

[204] Տե՛ս օրինակ *Kéorkian R.H.*, Le génocide des Arméniens, Paris, 2006. Վերջին տարիներին բուռն բանավէճեր յարուցած այս տեսակէտին հակադրուել են ցեղասպանութեան՝ իբրեւ երեւոյթի, բազմաթիւ անուանի մասնագէտներ, ինչպիսիք են Ի. Լ. Հորոուիցը, Ե. Բաուերը, Ե. Բարսեղովը եւ այլք, որոնց կարծիքով՝ Հայոց ցեղասպանութիւնը հարկ է դիտել իբրեւ ԺԹ. դարի վերջին եւ Ի. դարի սկզբին տեղի ունեցած միասնական գործընթաց: Տե՛ս օրինակ *Prince M.*, Un génocide impuni. L'arménocide, Beyrouth, 1975, p. 97-114, 147-242, 345-376 ; *Барсегов Ю.Г.*, Геноцид армян – преступление по международному праву, М., 2000, с. 17-22; *Horowitz I.L.*,

տեղի է ունեցել 1915 թ.: Նրանց հիմնական կռուանը յանգում է, ընդհանուր առմամբ, ինչպէս վերը նշեցինք, 1908 թ. երիտթուրքական յեղափոխութեան արդիւնքում՝ երիտթուրքերի որդեգրած թուրքիզմի գաղափարախոսութեան հիման վրայ հայ ժողովրդի համատարած ոչնչացման փաստմանը[205]: Արդիւնքում՝ Ռ. Յ. Գեւորգեանը, օրինակ, յակուած չէ նոյնիսկ ընդունելու 1894-1896 թթ. հայկական կոտորածների «ցեղասպանային բնոյթը»[206]:

Ակնյայտ է, որ Հայոց ցեղասպանութեան գործընթացն Ի. Տերնոնը մեկնաբանում է նրանց մօտեցմանը համահունչ դիրքերից: Սակայն այս հարցի մեկնաբանութեան ասպարէզում նա անտեսում է 1977 թ. իր իսկ վկայակոչած կռուանները, որոնք ամբողջութեամբ հիմնաւորում են (առաւել եւս՝ վերը նշուած իր իսկ տեսական դրոյթների լոյսի ներքոյ), համիդեան կոտորածներն իբրեւ ցեղասպանութիւն բնորոշելու անհրաժեշտութիւնը, իսկ փոխարէնը՝ ջանում ցեղասպանութեան՝ իբրեւ երեւոյթի, մասնագէտների հայեցակարգային դրոյթների հիման վրայ հիմնաւորել հարցի իր նոր մեկնաբանութիւնը, որոնք յաճախ նրա դիրքորոշման փոփոխութեան օգտին չեն վկայում: Բացի դրանից, նշենք էական մէկ հանգամանք եւս. Ի. Տերնոնը շրջանցում է ԺԹ. դ. վերջի ֆրանսիական սկզբնաղբյուրների, մասնաւորապէս Օսմանեան կայսրութիւնում հաւատարմագրուած դիւանագէտների զեկուցագրերի մանրազնին վերլուծութիւնը, որոնք անառարկելիօրէն փաստում են արեւմտահայութեան զանգուածային բնաջնջումը պետական քաղաքականութեան մակարդակով եւ կանխամտածուածութեան հիման վրայ[207]:

---

նշվ. աշխ., էջ 157-158: Ե. Բաուերն իր կարծիքն այս հարցի շուրջ յայտնեց 2005 թ. ապրիլի 20-21-ին Երեւանում գումարուած «Ծանրագոյն յանցանք, ծայրագոյն մարտահրաւէր. ցեղասպանութիւնն ու մարդու իրաւունքները» միջազգային համաժողովին ներկայացրած՝ «Անցեալ ցեղասպանութիւնների դասերը որպէս ապագայ ցեղասպանութիւնները կանխելու ուղեցոյց» զեկուցումում:

[205] Տե՛ս օրինակ *Kéorkian R.H.*, նշվ. աշխ., էջ 9: Նշենք, որ այս տեսակէտն իր մեծաթիւ կողմնակիցներն ունի ԱՄՆ-ում: Տե՛ս օրինակ *Melson R.*, Revolution and Genocide, p. XVI; *Akçam T.*, Un acte honteux. Le génocide arménien et la question de la responsabilité turque, [Paris], 2008, p. 59.

[206] *Kévorkian R.H.*, նշվ. աշխ., էջ 19:

[207] Տե՛ս *Պօղոսեան Վ.*, Հայոց ցեղասպանութեան առաջին փուլը ֆրանսիական պատմագրութեան եւ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (XIX

Ժամանակակից ֆրանսիացի այլ պատմաբաններ եւս Հայոց ցեղասպանութեան ժամանակագրական եզրերի յստակեցման մեկնաբանութեան խնդրում չունեն յստակ դիրքորոշում. այդ մասին են վկայում նրանց հայեացքների պարբերաբար կրած փոփոխութիւնները, ինչն արտացոլուել է նրանց՝ յաճախ իրարամերժ տեսակէտներում: Նրանց մի մասը 1890-ական թուականներին տեղի ունեցած հայ ժողովրդի բնաջնջումը համարում է 1915 թ. Հայոց ցեղասպանութեան նախերգանք, «կոտորածներ» կամ «մեծ կոտորածներ»[208]: Հայկական հարցի պատմութեան անուանի մասնագէտ Ա. Պէյլերեանը, թէեւ 1970-ական թթ. յայտնած իրատեսական կարծիքին առ այն, որ հայերի ոչնչացմանն ուղղուած՝ Աբդուլ Համիդի յղացած «ցեղասպանութեան ծրագիրը», որի նպատակն էր հայ ժողովրդի բնաջնջումն իր հայրենիքում, կիրառուել է 1894 թ. ի վեր[209], այնուամենայնիւ յետագայում վերանայել է այս տեսակէտը եւ 1890-ական թուականներին տեղի ունեցած իրադարձութիւնները բնորոշել սոսկ իբրեւ «կոտորածներ»[210]: Այս հարցում անհամատեղելի մեկնաբանութիւններ է անում նաեւ Ժ. Վ. Կիւրեղեանը: Վերջինս արեւմտահայութեան բնաջնջման գործընթացը եզերում է 1894-1922 թթ. շրջանակում

---

դարի վերջ – Ի. դարի սկիզբ), երկրորդ, բարեփոխուած հրատարակութիւն, Երեւան, 2011, գլուխ I:

[208] *Carzou J.-M.*, նշվ. աշխ., էջ 82-109 ; *Alem J.-P.*, L'Arménie, 4e éd., Paris, 1983, p. 38 ; *Ter Minassian A.*, La Question arménienne, Marseille, 1983, p. 30 ; *նոյնի*՝ 1918-1920, La République d'Arménie, Bruxelles, 2006, p. 12 ; *նոյնի*՝ L'Arménie et l'éveil des nationalités (1800-1914),– Histoire du peuple arménien, p. 503 ; *Krikorian A.*, Dictionnaire de la Cause arménienne, Créteil, 2002, p. 27 ; *Asso A.*, Le cantique des larmes. Arménie, 1915. Paroles des rescapés du génocide, Paris, 2005, p. 27 ; *Videlier P.*, Nuit turque, [Paris], 2005, p. 15 ; *Duclert V.*, Affronter la barbarie. La perception française des grands massacres d'Arméniens dans l'Empire ottoman en 1894-1896,– Revue d'histoire de la Shoah, n° 189, juillet-décembre 2008. Violences de guerre, violences coloniales, violences extrèmes avant la Shoah, p. 31 ; *Dédéyan G.*, Introduction,– 1895. Massacres d'Arméniens. Alphonse Cillière. Consul de France à Trébizonde, p. 20 ; *Mutafian C.*, Le Génocide des Arméniens, Erevan, 2008, p. 4 ; *նոյնի*՝ Quelques spécificités de l'historiographie arménienne,– «Հանդէս ամսօրեայ», 2010, էջ 274; *Chalian G.*, Postface,– *Essayan Z.*, Dans les ruines, Paris, 2011, p. 299.

[209] *Beylerian A.*, L'impérialisme et le mouvement national arménien (1885-1890),– Relations internationales, 1975, n° 3, p. 51.

[210] *Beylerian A.*, La communauté arménienne de Trébizonde et le mouvement national (1878-1896),– Revue d'histoire contemporaine, t, 1, Paris, 1995, p. 25.

եւ իրաւամբ փաստում, որ 1894 թ. Սասունում սկիզբ առած հայերի բնաջնջման «երկարատեւ գործընթացն» աւարտին է հասել 1922 թ. Զմիւռնիայում[211], ինչն անառարկելի է: Սակայն, չնայած իրականութեանն ամբողջութեամբ համապատասխանող իրատեսական այս ետնախորքի ուրուագծմանը, նա Հայոց ցեղասպանութեան ժամանակագրական եզրերն, այդուհանդերձ, գերադասում է պարփակել 1915-1917 թթ. սահմաններում՝ մատնացոյց անելով, որ բնաջնջման գործընթացը գագաթնակէտին է հասել այս ժամանակահատուածում[212]: Նման, հետեւութիւնը, մեր կարծիքով, հակասում է այն միանգամայն ընդունելի մօտեցմանը, որով ներծծուած է նրա գրքի շարադրանքը:

Փոփոխուել են ժամանակակից պատմաբաններից Ա. Տէր-Մինասեանի հայեացքները: Վերջին յօդուածներից մէկում նա համիդեան կոտորածները բնութագրում է արդէն իբրեւ «Հայոց ցեղասպանութեան առաջին գործողութիւն»[213]: Ընդհանուր առմամբ, ընդունելի է նաեւ Կ. Մուրադեանի մօտեցումը, որն իր տարբեր ուսումնասիրութիւններում 1894-1896 թթ. հայկական կոտորածները համարում է ոչ միայն 1915 թ. «ցեղասպանութեան համընդհանուր նախերգանք», այլեւ, ինչն աւելի կարեւոր է, «ցեղասպանային գործընթացի սկիզբ, որը շարունակուելու էր յաջորդ երեք քաղաքական վարչակարգերի օրոք»[214]: Նման հաւաստումից, սակայն, որքան տարօրինակ է, նա չի յանգում համիդեան կոտորածներն իբրեւ Հայոց ցեղասպանութեան առաջին փուլ բնութագրելու անհրաժեշտութեանը[215]:

Ակնյայտ է, որ ֆրանսիացի պատմաբանները, գտնւում են որոնումների մէջ: Այդ մասին են վկայում սոյն խնդրում նրանց

---

[211] *Guréghian J.V.*, Histoire d'Arménie, Clamecy, 2011, p. 178, 190.

[212] Նոյն տեղում, էջ 185, 207-208:

[213] *Ter Minassian A.*, Les Arméniens dans l'Empire ottoman : de l'internationalisation de la question arménienne au traité de Lausanne,– Arménie une passion française « le mouvement arménophile en France 1878-1923 ». Sous la direction de Claire Mouradian, Paris, 2007, p. 36.

[214] *Mouradian C.*, L'Arménie, Paris, 3ème éd., 1996, p. 49 ; *նոյնի՝* La Qusetion d'Orient ou la sanglante agonie de « l'homme malade »,– Revue d'histoire de la Shoah. Le monde juif, n° 177-178, janvier-août 2003. Ailleurs, hier, autrement : connaissance et reconnaissance du génocide des Arméniens, p. 75, 81 ; տե՛ս նաեւ *Dastakian A.*, Mouradian C., 100 réponses sur … Le génocide des Arméniens, Clamecy, 2005, p. 13.

[215] Տե՛ս օրինակ *Dastakian A.*, *Mouradian C.*, նշվ. աշխ., էջ 9, 11:

հայեացքների կրած բարեշրջումները եւ փոփոխութիւնները, ինչը պայմանաւորուած է թէ՛ գիտութեան զարգացման վերջին նուաճումներով եւ թէ՛ դրանց լոյսի ներքոյ՝ նրանց մտորումներով: Մեր կարծիքով, դա միանգամայն օրինաչափ է, քանզի դրանում է պատմական գիտութեանը բնորոշ հիմնական օրինաչափութիւններից մէկը:

*Հայկական հարցի ծագումը.* Հայոց ցեղասպանութեան ակունքներում խարսխուած Հայկական հարցի ծագման խնդիրը ցեղասպանութեան, մասնաւորապէս հայրենական, պատմագրութեան մէջ տարակարծութիւնների տեղիք է տուել: Ըստ հարցի պատմութեան մասնագէտների գերակշռող մասի (Մ. Ներսիսեան, Ջ. Կիրակոսեան եւ այլք)՝ մեր կողմից ընդունելի տեսակէտի, Հայկական հարցը ծագել է 1870-ական թուականների երկրորդ կէսին, կապուած 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին յաջորդած դիւանագիտական մեքենայութիւնների հետ[216]: Այլք դրա ծագումը շաղկապում են հայկական պետականութեան կործանման հետ. «Ահա հէնց այդ ժամանակ է առաջանում Հայկական հարցը՝ Հայրենիքի ազատագրման, անկախ պետականութեան վերականգնման հարցը»,– գրում է Լ. Խուրշուդեանը[217]: Վերջինս գերադասում է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին յաջորդած իրադարձութիւններով պայմանաւորել սոսկ Հայկական հարցի միջազգայնացումը[218]:

Ժամանակակից ֆրանսիացի պատմաբանների կարծիքն այս հարցում գրեթէ միանշանակ է, քանզի նրանք Հայկական հարցի ծագումն իրաւամբ առնչում են բացառապէս 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին յաջորդած դիւանագիտական քննարկումներին: Ըստ Ի. Տերնոնի՝ Հայկական հարցի պատմութիւնը, որի առաջին դրուագն աւարտին է հասել Բեռլինի վեհաժողովում,

---

[216] Տե՛ս օրինակ *Нерсисян М.Г.,* Предисловие,– Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Составители М.Г. Нерсисян, Р.Г. Саакян. Под редакцией М.Г. Нерсисяна, второе, дополненное издание, Ереван, 1982, с. V; *Կիրակոսեան Ջ.*, Բուրժուական դիւանագիտութիւնը եւ Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.), Երեւան, 1978, էջ 4:

[217] *Խուրշուդեան Լ.*, Հայկական հարցը. բովանդակութիւնը, ծագումը, պատմութեան հիմնական փուլերը, Երեւան, 1995, էջ 8: Տե՛ս նաեւ *Գալոյեան Գ. Ա.*, Պատմութեան քառուղիներում, Երեւան, 1982, էջ 76:

[218] *Խուրշուդեան Լ.*, նշվ. աշխ., 16:

սկիզբ է առնում Աբդուլ Համիդի գահակալութեան ժամանակաշրջանից[219]: Նրա հետ համամիտ են Ա. Պէյլերեանը եւ այլք[220]:

Նշենք, որ այս իրատեսական մօտեցման կողմնակիցներից ոմանք Հայկական հարցը դիտում են իբրեւ Արեւելեան հարցի բաղկացուցիչ մաս[221]: Ա. Տէր-Մինասեանը, ի դէպ, միաժամանակ իր համոզմունքն է յայտնում, որ Հայկական հարցն ընդգրկում է Արեւելեան հարցի բոլոր տարրերը[222]:

Բացի այդ, յատկանշական է, որ ֆրանսիացի պատմաբաններից ոմանք փաստում են մէկ յիշարժան հանգամանք եւս կապուած Հայկական հարցի միջազգայնացման սկզբնաւորման հետ Բեռլինի վեհաժողովում, քանի որ միջազգային ասպարէզում այն հէնց այդտեղ է առաջին անգամ դարձել քննարկման առարկայ[223]: Այս հարցում համահունչ կարծիք է յայտնում նաեւ Ժ.-Պ. Ալեմը, որը հաւաստում է, որ դիւանագիտական տեսանկիւնից Հայկական հարցն իր ինքնահաստատումը գտել է Սան-Ստեֆանոյի եւ Բեռլինի վեհաժողովի պայմանագրերում եւ Օսմանեան կայսրութեան ներքին խնդրից վերածուել միջազգային իրաւունքի հարցի[224]: Այդուհանդերձ, հայեցակարգային առումով Հայկական հարցի ծագման մեկնաբանութեան խնդրում նրա մօտեցումը ֆրանսիացի պատմաբանների դիրքորոշման ընդհանուր հենքի վրայ առանձնանում է, քանզի նրա համոզմամբ, այն առաջացել է դեռեւս այն պահից ի վեր, երբ հայերն ընկել են թուրքական բռնատիրութեան ճնշման տակ[225]:

---

[219] *Ternon Y.*, Les Arméniens. Histoire d'un génocide, p. 61.

[220] Տես *Beylerian A.*, Les origines de la Question arménienne du traité de San Stɴphano au Congrès de Berlin (1878),– Revue d'histoire diplomatique, janvier-juin 1973, p. 139-171 ; *idem* : L'impérialisme et le mouvement national arménien (1885-1890), p. 19 ; *Ter Minassian A.*, La Question arménienne, p. 28 ; *Carzou J.-M.*, նշվ. աշխ., էջ 65:

[221] *Chaliand G.* et *Ternon Y.*, նշվ. աշխ., էջ 27; *Dastakian A.*, *Mouradian C.*, նշվ. աշխ., էջ 27; *Mouradian C.*, L'Arménie, p. 47 ; *Ter Minassian A.*, L'Arménie et l'éveil des nationalités (1800-1914), p. 499.

[222] *Ter-Minassian A.*, Histoires croisées. Diaspora. Arménie. Transcaucasie. 1880-1890. Préface de Vidal-Naquet, Marseille, 1997, p. 117.

[223] *Beylerian A.*, La communauté arménienne de Trébizonde et le mouvement national (1878-1896), p. 10 ; *Mouradian C.,* նշվ. աշխ., էջ 47; *Ter-Minassian A.*, նշվ. աշխ., էջ 119:

[224] *Alem J.-P.*, նշվ. աշխ., էջ 33:

[225] Նոյն տեղում, էջ 37:

Ակնյայտ է, որ մեր կողմից քննարկուած հեղինակները Հայկական հարցի ծագումը եւ էութիւնը մեկնաբանում են անկողմնակալ, ընդունելի եւ, ընդհանուր առմամբ, համանման դիրքերից: Հայկական հարցի ակունքների առնչութեամբ մեր կողմից առարկութիւնների տեղիք է տալիս միայն Ժ.-Պ. Ալեմի մեկնաբանութիւնը[226]:

*Հայոց ցեղասպանութեան իրականացումը պետական քաղաքականութեան մակարդակով.* Համիդեան կոտորածները, ինչպէս նշեցինք, իրականացուել են պետական քաղաքականութեան մակարդակով եւ կանխամտածուածութեան հիման վրայ, որոնք ցեղասպանութեան՝ իբրեւ երեւոյթի հիմնական բաղադրիչներն են: Ֆրանսիացի պատմաբանները յաւուր պատշաճի ուշադրութիւն են դարձնում այս էական հանգամանքների մեկնաբանութեան վրայ, հիմնաւորապէս ապացուցում, որ 1890-ական թուականներին արեւմտահայութեան բնաջնջումն իրականացուել է անձամբ Աբդուլ Համիդի նախաձեռնութեամբ եւ նրա իսկ՝ նախօրոք մշակած ծրագրի հիման վրայ:

Հարկ է ընդգծել, որ այս խնդրին առաւել հանգամանալից եւ բազմակողմանիօրէն անդրադարձել է Ի. Տերնոնը, որը բազմիցս ընդգծել է արեւմտահայութեան ոչնչացումը պետական քաղաքականութեան մակարդակով, մասնաւորապէս բացայայտել սուլթանի դերը համիդեան կոտորածների կազմակերպման գործում եւ օսմանեան իշխանութիւնների յանցակցութիւնը հայերի ոչնչացման գործընթացին: 1895 թ. Օսմանեան կայսրութեան տարածքում իրականացուած արեւմտահայութեան զանգուածային կոտորածների առնչութեամբ նա նշում է, որ դրանք «կազմակերպուել են, նախապատրաստուել եւ համադասուել սուլթան Աբդուլ Համիդի, ամէն դէպքում՝ Պալէի կողմից»[227]: Բանկ Օտտոմանի գրաւման կապակցութեամբ պատմաբանը փաստում է օսմանեան գահակալի իրազեկութիւնը հայերի կողմից նախապատրաստուող գործողութեանը եւ դրանով իսկ մերկացնում նրա նենգ վար-

[226] Նշենք, որ Հայկական հարցի ծագման հանգամանքների քննարկումը շրջանցում է Ա. Կրիկորեանը. *Krikorian A.*, նշվ. աշխ., էջ 14:

[227] *Ternon Y.*, Les Arméniens. Histoire d'un génocide, p. 123; տե՛ս նաեւ *նոյնի*՝ L'État criminel, p. 182 ; *նոյնի*՝ L'innocence des victimes. Au siècle des génocides, p. 42.

քագիծը, որը յանգում էր ընձեռուած առիթի օգտագործմանը՝ «ոստիկանութեան կողմից խնամքով նախապատրաստուած կոտորածի ծրագրի իրականացման համար»[228]:

Ի. Տերնոնը չի շրջանցում նաեւ ոչ նուազ կարեւոր մէկ այլ հանգամանք, այն է՝ օսմանեան տեղական իշխանութիւնների ղեկավար դերի բացայայտումը եւ ըստ այդմ՝ մէկ անգամ եւս հիմնաւորում է հայերի բնաջնջումը կանխամտածուածութեան հիման վրայ: Ներկայացնելով Արեւմտեան Հայաստանի տարբեր վիլայէթներում տեղի ունեցած կոտորածների ընդգրկուն համայնապատկերը՝ նա պարբերաբար յղում է դրանց իրականացմանն առնչուող փաստեր, որոնք մերկացնում են տեղական օսմանեան բարձրաստիճան պաշտօնեաների դերակատարութիւնն արեւմտահայութեան ոչնչացման գործում (կոտորածների նախօրէին հայերի տների խուզարկութիւն, նրանց զինաթափում, զէնքի ու ռազմամթերքի տրամադրում թուրքերին, կոտորածների սանձազերծում ըստ ազդանշանի, հայերին կեղծ խոստումների շղայլում եւ այլն, որոնց անմիջապէս յաջորդել են նրանց կոտորածները)[229]:

Ըստ էութեան, միեւնոյն անկողմնակալ դիրքերից են այս խնդիրը քննարկում Ի. Տերնոնի տարբեր գործընկերները: Ա. Կրիկորեանը, հայերի կոտորածները շաղկապելով Հայկական հարցին լուծում տալու՝ Աբդուլ Համիդի մտադրութեանը, ընդգծում է նրա վճռորոշ դերը դրանց կազմակերպման եւ իրականացման գործում[230]: Ժ. Վ. Կիւրեղեանը փաստում է, որ հայերի բնաջնջման մեթոդը մշտապէս եւ ամէնուր եղել է միեւնոյնը, որին մասնակցել են դրան «վաղօրօք նախապատրաստուած զիւորները, քրդերը, չերքեզները, չեչեններն ու մարդասպանների հրոսակախմբերը»[231], եւ դրանով իսկ անուղղակիօրէն ի դերեւ է բերում օսմանեան իշխանութիւնների կանխամտածուածութիւնն արեւմտահայութեան կոտորածների գործում: Հայ ժողովրդի բնաջնջման հարցում օսմանեան կենտրոնական իշխանութիւնների եւ անձամբ Աբդուլ Համիդի կրած պատասխանատուութիւնը Կ. Մուրադեանը

---

[228] *Ternon Y.*, Les Arméniens. Histoire d'un génocide, p. 137. Այս հանգամանքը, ի դէպ, բազմիցս փաստել են նրա ֆրանսիացի նախորդները (Ա. Վանդալ, Է. Լաւիս, Է. Լամի եւ այլք): Տե՛ս *Պօղոսեան Վ.*, նշվ. աշխ., էջ 68, 105, 108:

[229] *Ternon Y.*, նշվ. աշխ., էջ 112-119:

[230] *Krikorian A.*, նշվ. աշխ., էջ 153:

[231] *Guréghian J.V.*, նշվ. աշխ., էջ 179-180:

համարում է «անառարկելի»: Յղելով եւրոպացի դիւանագէտների հաղորդագրութիւնները, նա մանրամասնում է սուլթանի ղեկավար դերը կոտորածների իրականացման ընթացքում, փաստում թուրք խաժամուժի, քրդերի, օսմանեան բանակի եւ ոստիկանութեան մասնակցութիւնը կոտորածներին եւ ըստ դրանց ծաւալման առանձնայատկութիւնների՝ բացայայտում կանխամտածուածութեան առկայութիւնը[232]:

Միեւնոյն դիրքերից է հարցը քննարկում Ժ.-Մ. Կարզուն: 1896 թ. Բանկ Օտտոմանի գրաւմանը յաջորդած՝ Կոստանդնուպոլսի հայ բանկչութեան կոտորածների առնչութեամբ նա նշում է. «Ակնյայտ է, թէ այդ ժամանակ ինչպիսի մակարդակով է սուլթանն ամէն ինչ իրականացրել կանխամտածուած, կազմակերպուած, դիտաւորեալ ձեւով»[233]:

Ժ.-Պ. Ալեմն Աբդուլ Համիդի մտայղացած՝ հայերի ոչնչացման ծրագիրը բնորոշում է իբրեւ «նողկալի»[234]: Նա փաստերով հիմնաւորում է հայկական կոտորածների իրականացումը պետական մակարդակով, մատնանշում, մասնաւորապէս 1895 թ. լայնածաւալ կոտորածների սանձազերծմանը նախորդած՝ սուլթանի նախապատրաստական աշխատանքները (հայկական նահանգների մեկուսացումն արտաքին աշխարհից, ճանապարհորդութիւնների արգելումն Արեւմտեան Հայաստանում, փոստային ծառայութիւնների նկատմամբ գրաքննութեան սահմանումը, մահմեդականների զինումը, վերջիններիս շրջանում մոլեռանդութեան բորբոքումը մօլլաների կողմից եւ այլն)[235]: Սակայն իրադարձութիւններին, ինչպէս տեսնում ենք, անկողմնակալ մեկնաբանութիւններ տուող Ժ.-Պ. Ալեմը, որքան տարօրինակ է, 1896 թ. Կոստանդնուպոլսում ծաւալուած հայկական կոտորածների գնահատման առնչութեամբ յանգում է անընդունելի հետեւութեան, ըստ որի՝ դրանք մեծ տէրութիւններին ի ցոյց են դրել «կենտրոնական իշխանութեան անզօրութիւնը»[236]: Հեղինակի այս հե-

[232] *Mouradian C.*, La Qusetion d'Orient ou la sanglante agonie de « l'homme malade »,, p. 76-77.

[233] *Carzou J.-M.*, նշվ. աշխ., էջ 87:

[234] *Alem J.-P.*, նշվ. աշխ., էջ 38:

[235] Նոյն տեղում, էջ 38-39:

[236] Նոյն տեղում, էջ 40:

տեւութիւնն ակնյայտօրէն հակասում է նրա իսկ վկայակոչած փաստերին, որոնք բացայայտում են կոտորածների կազմակերպումն անձամբ Աբդուլ Համիդի կողմից:

Հարկ է նշել, որ ըստ 1890-ական թթ. ծաւալուած իրադարձութիւնների զարգացման՝ ֆրանսիացի տարբեր պատմաբաններ, արձանագրել են օսմանեան իշխանութիւնների կողմից հայերի ոչնչացման ծրագրի կատարելագործումը: Ա. Պէյլերեանը կասկած իսկ չի տածում, որ հայերին կոտորելու միջոցով Հայկական հարցին լուծում տալու գաղափարը մտայղացել է Աբդուլ Համիդը, որը 1894 թ. ի վեր կիրառել է «ցեղասպանութեան այդ ծրագիրը»՝ բնաջնջելու համար հայ ժողովրդին, նրան իսկ պատկանող հայրենիքում[237]: Հիմնուելով արեւմտեան դիւանագէտների գրագրութիւնների վրայ, նա հերքում է այն թիւր տեսակէտը, թէ իբր հայերի դէմ 1985 թ. կազմակերպուած լայնածաւալ կոտորածները հետեւանք էին բարենորոգումների նախագծին առնչուող սուլթանի՝ 1895 թ. հոկտեմբերին հռչակած հրովարտակի, եւ միաժամանակ շեշտում նախքան այդ «օսմանեան իշխանութիւնների կազմակերպած ոճիրների» իրականացումը կանխամտածուածութեան հիման վրայ[238]: Նրա անժխտելի արժանիքներից նշենք 1895 թ. Տրապիզոնում տեղի ունեցած հայկական կոտորածների մանրազնին ուսումնասիրութիւնը, ինչը նրան հնարաւորութիւն է ընձեռել յանգելու միանգամայն իրատեսական հետեւութեան, ըստ որի՝ հոկտեմբերի 8-ից ի վեր այս քաղաքում տեղի ունեցած իրադարձութիւնները նշանաւորում են վճռորոշ փուլ «օսմանեան կառավարութեան որդեգրած՝ կոտորածների նոր ծրագրում»[239]:

Ժ. Շալեանը եւ Ի. Տերնոնը եւս չեն շրջանցել Աբդուլ Համիդի քաղաքականութեան կրած փոփոխութեան կարեւոր հանգամանքը, մանրամասնելով, որ 1895-1896 թթ. նա անցում է կատարել արեւմտահայութեան բնաջնջման յաջորդ փուլին՝ Օսմանեան կայսրութեան տարածքում «հաւաքական կոտորածների» իրականացմանը[240]:

---

[237] *Beylerian A.*, L'impérialisme et le mouvement national arménien (1885-1890), p. 51.

[238] *Beylerian A.*, La communautéarménienne de Trébizonde et le mouvement national (1878-1896), p. 22.

[239] Նոյն տեղում, էջ 25:

[240] *Chaliand G.* et *Ternon Y.*, նշվ. աշխ., էջ 30:

Ա. Տէր-Մինասեանը համիդեան կոտորածների սանձազերծմանն առնչուող խնդրին անդրադառնում է աւելի սահմանափակ կտրուածքով: Մեկնաբանելով դրանք իբրեւ 1890-1896 թթ. օսմանեան կառավարութեան ճնշումներին հայերի ցուցաբերած դիմադրական շարժման պատասխան՝ նա, այդուհանդերձ, չի շրջանցում 1895 թ. կոտորածների «մանրակրկիտ կազմակերպումը, որը բացայայտում է արդէն համատարած բնաջնջման ծրագիրը»[241]:

*Համիդեան կոտորածների պատճառները.* Ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանութեան առաջին փուլի պատճառներին, ֆրանսիացի պատմաբաններից ոմանք շրջանցում են դրանց քննութիւնը, իսկ այլք սահմանափակւում սոսկ թռուցիկ դիտարկումներով, որոնք, ընդհանուր առմամբ, առնչւում են կոտորածների գլխաւոր պատճառի՝ Հայկական հարցին լուծում տալու անհրաժեշտութեան փաստմանը[242]: Վերջիններիս թւում են, ինչպէս վերը նշուեց, Ա. Կրիկորեանը եւ Ա. Պէյլերեանը: Ի. Տերնոնը եւս ուշադրութիւնը կենտրոնացնելով միեւնոյն պատճառի վերլուծութեան վրայ, մանրամասնում է նաեւ Աբդուլ Համիդի մտայղացած՝ հայերի բնաջնջման ծրագրի հասունացման իւրայատկութիւններից մէկը, այն է՝ սուլթանն ըմբռնել է Հայկական հարցին ըստ իր հայեցողութեան լուծում տալու հնարաւորութեան հաւանականութիւնն այն բանից յետոյ, երբ գիտակցել է մեծ տէրութիւնների ղեկավար շրջանների մօտ՝ զինուած միջամտութեան միջոցով Օսմանեան կայսրութեան ներքին գործերին լուծումներ տալու ցանկութեան բացակայութիւնը[243], ինչն ամբողջութեամբ համապատասխանում է իրականութեանը:

Բոլորովին այլ կտրուածքով է հիմնախնդրին մօտենում Ռ. Յ. Գեւորգեանը, որի կարծիքով համիդեան կոտորածները կոչուած էին ոչ միայն կրճատելու հայ բնակչութեան թուաքանակը, այլեւ, ինչն աւելի կարեւոր է, թուլացնելու նրա սոցիալ-տնտեսական դիրքերը[244]: Նրա մեկնաբանութիւններն այս առիթով թէեւ անառարկելի են, այդուհանդերձ, սպառիչ չեն:

---

[241] *Ter Minassian A.*, La Question arménienne, p. 30 ; *նոյնի*՝ L'Arménie et l'éveil des nationalités (1800-1914), p. 503.

[242] *Guréghian J.V.*, նշվ. աշխ., էջ 179:

[243] *Ternon Y.*, նշվ. աշխ., էջ 72:

[244] *Kévorkian R.H.*, նշվ. աշխ., էջ 19:

Ժ.-Ա. Ալեմի մօտեցումն աւելի ընդգրկուն է, քանզի նա իրաւամբ Հայկական հարցի լուծումը քննարկում է 1878 թ. յետոյ ստեղծուած միջազգային իրադրութեան հենքի վրայ եւ այն պայմանաւորում Աբդուլ Համիդի համար՝ «երկրորդ Բուլղարիայի» վերածուած Հայաստանի խնդիրը կարգաւորելու սութանի ցանկութեամբ[245]:

Այդուհանդերձ, մեր կողմից քննարկուող հեղինակների թւում հարկ է առանձնացնել Ժ.-Մ. Կարզուին, որը խնդրոյ առարկայ հարցը վերլուծում է, ըստ էութեան, միեւնոյն կտրուածքով, սակայն աւելի լայն ետնախորքի վրայ: Համեմատելով Արեւմտեան Հայաստանի եւ թուրքերի կողմից բռնազաւթուած ու կայսրութեան տարածքում ընդգրկուած այլ երկրների (Յունաստան, Բուլղարիա, Լիբանան) աշխարհագրական դիրքերի առանձնայատկութիւնները, նա աչքաթող չի անում որոշ խիստ կարեւոր հանգամանքներ, նշում է, մասնաւորապէս, որ այն գտնւում էր թուրանական էքսպանսիայի կենտրոնում, ինչպէս նաեւ՝ ընդգծում օսմանեան կառավարութեան մոլեգին ցանկութիւնը «կայսրութեան վերջին նահանգը» հանդիսացող այս տարածքը պահպանելու հարցում, առաւել եւս, որ հպատակեցուած երկրների մի մասը նրա ճիրաններից արդէն ազատուել էր: Ըստ այդմ՝ Ժ.-Մ. Կարզուն, փաստօրէն, Հայկական հարցին լուծում տալու անհրաժեշտութիւնը դասում է համիդեան կոտորածների հիմնական պատճառների շարքը եւ միաժամանակ առանձնացնում դրա ծագման իւրայատկութիւնը՝ այն դիտելով ոչ թէ իբրեւ «որեւէ տիրոյթ նուաճելուն կամ պաշտպանելուն միտուած իմպերիալիստական բնոյթի առճակատում», այլ Օսմանեան կայսրութեան համար կենսական նշանակութիւն ունեցող հակամարտութիւն[246]:

*Հայերի ինքնապաշտպանութիւնը*. Համիդեան կոտորածների պատճառների մեկնաբանութիւնը դեռեւս 1890-ական թթ. երկրորդ կէսից՝ Հայոց ցեղասպանութեան պատմագրութեան ժխտողական ուղղութեան նախակարապետների եւ յետագայում նրանց հիմնական թեզերը որդեգրած թուրքական պատմագրութեան ներկայացուցիչների ու նրանց այլազգի համախոհների կողմից բազմիցս ներկայացուել է հակապատմական դիրքերից: Ժխտո-

[245] *Alem J.-P.*, նշվ. աշխ., էջ 37:
[246] *Carzou J.-M.*, նշվ. աշխ., էջ 80-81:

ղական ուղղութիւնը սկզբնաւորուել է Ֆրանսիայում համիդեան կոտորածների սանձազերծմանը զուգընթաց: Այս ուղղութեան ներկայացուցիչները՝ Աբդուլ Համիդի պատուէրով, ձեռնամուխ են եղել միանգամայն տարբեր կտրուածքներով թէ՛ Հայոց ցեղասպանութեան եւ թէ՛ Օսմանեան կայսրութեան պատմութեան կեղծմանն ու նենգափոխմանը[247]:

Ժխտողական ուղղութեան ներկայացուցիչների հիմական կռուաններից մէկը յանգում է օսմանեան պետութեան դէմ՝ ԺԹ. դ. վերջին եւ Ի. դ. սկզբին պարբերաբար ծայր առած տարբեր «հայկական ապստամբութիւնների» վարկածի առաջադրմանը: Խեղաթիւրելով պատմական փաստերը՝ համիդեան կոտորածների հետեւանքով կեանքի կոչուած հայերի ինքնապաշտպանական մարտերը պարբերաբար եւ հետեւողականօրէն ներկայացրել են իբրեւ «հայկական ապստամբութիւններ», ինչի հետեւանքով երկրում կարգ ու կանոնը վերահաստատելու նպատակով Աբդուլ Համիդը հարկադրաբար ձեռնարկել է «ապստամբ» հայերի դէմ ուղղուած պատժիչ գործողութիւններ: Ուստի սուլթանի քաղաքականութիւնը, ըստ նրանց մեկնակերպի, եղել է օրինական եւ միանգամայն արդարացուած:

Այս տեսակէտն իր հետեւորդներն է ունեցել նաեւ ի դէմս Ի. դ. երկրորդ կէսի եւ ԻԱ. դ. սկզբի ֆրանսիացի որոշ պատմաբանների[248]: Փոխարէնը՝ քննարկուող ժամանակաշրջանում ֆրանսիական պատմագրութեան ներկայացուցիչների գերակշռող մասը ցուցաբերելով անկողմնակալ մօտեցում՝ արեւմտահայութեան ինքնապաշտպանութեան խնդիրը շաղկապել է գլխաւորապէս օսմանեան վարչակարգի կեղեքումներին եւ Աբդուլ Համիդի սանձազերծած հայկական կոտորածներին դիմակայելու՝ արեւմտահայութեան իրաւունքների հետ:

Հայացք նետելով համիդեան կոտորածներին նախորդած ժամանակաշրջանին՝ Ա. Պէյլերեանը փաստում է օսմանեան կառավարութեան «չարագուշակ» քաղաքականութեան հետեւանքով արեւմտահայութեան առջեւ ծառացած երկընտրանքը՝ կամ լքել

---

[247] Տես *Պօղոսեան Վ.*, նշվ. աշխ., էջ 171-209:

[248] Այդ մասին տես *Պօղոսեան Վ.*, Համիդեան կոտորածների պատմութեան նենգափոխումը ֆրանսիական պատմագրութեան կողմից:

հայրենիքը, կամ պայքարել աւազակների եւ կեղեքիչ պաշտօնեաների դէմ: Ստեղծուած անելանելի իրավիճակն արեւմտահայութեանը դրդել է նախընտրել երկրորդ տարբերակը, ինչի արդիւնքում դեռեւս 1885 թ. հիմնադրուել է առաջին ազգային՝ «Արմենական» կուսակցութիւնը[249]: Ինչ վերաբերում է 1890-ական թուականների իրադարձութիւններին, նա իրաւամբ մատնանշում է, որ ժամանակակից պատմութեան մէջ սակաւաթիւ են դէպքերը, երբ ոչ նշանակալից յեղափոխական գործողութիւնները կառավարութեան կողմից շահարկուել են նման դաժանութեամբ: Ունենալով բոլոր իրաւունքները՝ Ա. Պէյլերեանը 1894 թ. Սասունում հայերի կազմակերպած ինքնապաշտպանութիւնն անուանում է սոսկ «կարծեցեալ ապստամբութիւն», որին իրականում նախորդել է հայերի ոչնչացմանն առնչուող՝ սուլթանի կայացրած վճիռը[250]: Ա. Կրիկորեանը եւս Սասունում եւ Զէյթունում հայերի կազմակերպած ըմբոստութիւնները համարում է ընդամէնը «ինքնապաշտպանութեան» դրսեւորումներ, որոնք ամբողջ երկրում յանգեցրել են սարսափելի ճնշումների[251]:

Այս հարցում նրանց կարծիքներին համահունչ են Ի. Տերնոնի մեկնաբանութիւնները, որը 1895-1896 թթ. ծաւալուած հայկական ինքնապաշտպանական մարտերը դիտում է իբրեւ սոսկ Աբդուլ Համիդի՝ հայերի նկատմամբ կիրառած հալածանքներին եւ հայկական կոտորածների ծրագրմանը յաջորդած գործողութիւններ[252]: Նա բազմիցս փաստում է հայերի կարծեցեալ սադրանքների, առաւել եւս՝ նրանց ապստամբութեան բացակայութեան հանգամանքները, փոխարէնը՝ մատնանշում, որ սուլթանի հայ հպատակները պահանջում էին միայն իրենց արդէն իսկ խոստացուած բարենորոգումների կիրառում, եւ ըստ այդմ՝ յանգում է միակ հնարաւոր տրամաբանական հետեւութեան. «Ոչ մի ճնշում, այսպիսով, չէր արդարացւում»[253]:

---

[249] *Beylerian A.*, L'impérialisme et le mouvement national arménien (1885-1890), p. 24.

[250] Նոյն տեղում, էջ 41:

[251] *Krikorian A.*, նշվ. աշխ., էջ 14:

[252] *Ternon Y.*, Les Arméniens. Histoire d'un génocide, p. 98-99 ; *նոյնի*՝ L'innocence des victimes. Au siècle des génocides, p. 42.

[253] *Ternon Y.*, Les Arméniens. Histoire d'un génocide, p. 123 ; *նոյնի*՝ Mardin 1915. Anatomie pathologique d'une destruction, p. 64.

Այս խնդրի առնչութեամբ Կ. Մուրադեանն ուշադրութիւնը հրաւիրում է մէկ այլ էական հանգամանքի վրայ. չժխտելով բարենորոգումների շուրջ շռայլուած սին խոստումների հետեւանքով հայերի շրջանում առաջ եկած յուսալքութիւնը, որը երբեմն յանգեցրել է ապստամբութիւնների եւ բախումների՝ նա, այդուհանդերձ, ըստ եւրոպացի դիւանագէտների թղթակցութիւնների՝ մատնացոյց է անում այս ժամանակաշրջանում հայերին, ըստ էութեան, համակած անտարբերութիւնը եւ նրանց անտրտունջ պահուածքը. «Միապետի օրինականութիւնը չի թուում, թէ երբեւէ բացայայտօրէն առարկութիւնների տեղիք է տվել»,– եզրակացնում է նա[254]:

Ֆրանսիացի պատմաբանների մի մասը չի շրջանցում նաեւ հայ վրիժառուների՝ ֆիդայիների գործունէութիւնը: Վանում եւ Զէյթունում արձանագրուած՝ «հայկական դիմադրական» շարժման որոշ դրուագներ, Ժ.-Պ. Ալեմը բնորոշում է իբրեւ հերոսական, այդուհանդերձ, մանրամասնում, որ այն ամենեւին համընդհանուր բնոյթ չի կրել: Հարցին մօտենալով անաչառ դիրքերից, նա միաժամանակ հայ ֆիդայիների գործողութիւնները պայմանաւորում է կոտորածների ծաւալմամբ, ինչը նպաստել է հայերի դիմադրութեան ամրապնդմանը[255]: Ժ-Մ. Կարզուն եւս արժեւորելով հայերի ինքնապաշտպանութիւնը եւ այն համարելով բռնութիւնները կասեցնելու միջոց, խօսքը կենտրոնացնում է, մասնաւորապէս 1895 թ. Զէյթունում տեղի ունեցած իրադարձութիւնների վրայ, փաստում, որ զինուած դիմադրութիւնն այստեղ, կեանքի է կոչուել իբրեւ հարստահարութիւնների ենթարկուող հայերի՝ ողբերգական կացութիւնից ելք որոնելու, հնարաւորութիւններից մէկը[256]:

Այս հարցն առաւել ընդգրկուն դիրքերից է քննարկում Ա. Տէր-Մինասեանը, որն ընդգծում է էական մի հանգամանք, այն է՝ հայ ֆիդայիների զինուած խմբերն ունեցել են յստակ նպատակ՝ հնարաւորութեան սահմաններում խուսափել յարձակողական գործողութիւններից, իսկ փոխարէնը օգնութեան շտապել հայկական գիւղերի՝ դժուարին վիճակում գտնուող բնակիչներին,

[254] *Mouradian C.*, նշվ. աշխ., էջ 76:
[255] *Alem J.-P.*, նշվ. աշխ., էջ 39, 41:
[256] *Carzou J.-M.*, նշվ. աշխ., էջ 88-89:

արթնացնել նրանց քաղաքական ինքնագիտակցութիւնը եւ մղել դիմադրութեան[257]:

Համանման իրատեսական հետեւութիւններով ֆրանսիացի պատմաբանները հիմնաւորապէս հերքում են ԺԹ. դարի 90-ական թուականների կէսերին «հայկական ապստամբութեան» կարծեցեալ, ոչնչով չհիմնաւորուած, շինծու վարկածը եւ հուժկու հակահարուած տալիս Հայոց ցեղասպանութեան պատմութեան կեղծարարների սնանկ թեզերին:

*Եւրոպական մեծ տէրութիւնների քաղաքականութիւնը.* Կասկածից վեր է, որ 1890-ական թթ. հայկական կոտորածների իրականացմանը մեծապէս նպաստել է եւրոպական պետութիւնների, ըստ էութեան, կրաւորական քաղաքականութիւնն Օսմանեան կայսրութիւնում տեղի ունեցող իրադարձութիւնների հանդէպ, որից մեծապէս եւ հմտօրէն օգտուել է խելացի եւ խորամանկ Աբդուլ Համիդը: Ելնելով իրենց ռազմավարական շահերից, մեծ տէրութիւնների ղեկավարները հետեւողականօրէն հետամուտ են եղել Օսմանեան կայսրութեան տարածքային ամբողջականութեան պահպանութեան քաղաքականութեանը, ձեռնպահ մնացել օսմանեան գահակալի ներքին գործերին զինուած ճանապարհով միջամտելուց եւ բաւարարաուել նրան պարբերաբար սոսկ Արեւմտեան Հայաստանում բարենորոգումների իրականացման պահանջներ ներկայացնելով, ինչը չէր կարող վրիպել վերջինիս խորաթափանց հայեացքից: Ուստի միանգամայն օրինաչափ է, որ ֆրանսիացի պատմաբանների գերակշռող մասը յաւուր պատշաճի անդրադարձել է մեծ տէրութիւնների քաղաքականութեանն առնչուող հիմնախնդիրներին եւ խստագոյնս դատապարտել այն կերտողներին:

Թէպէտ Հայկական հարցում եւրոպական պետութիւնների քաղաքականութիւնը պախարակած ֆրանսիացի բոլոր պատմաբանների դիրքորոշումը համահունչ է, այդուհանդերձ, սոյն հիմնահարցը նրանք արծարծել են անհամաչափօրէն, ինչը պայմանաւորուած է նրանց աշխատութիւնների բնոյթով: Եթէ նրանցից ոմանք հարցը քննարկել են Հայոց ցեղասպանութեան պատմութեանը նուիրուած մասնագիտական ուսումնասիրութիւններում՝ լայն ետնախորքի վրայ, ապա այլք՝ ընդհանուր բնոյթի

[257] *Ter Minassian A.*, La Question arménienne, p. 125.

աշխատութիւններում, բաւարարուելով այս առնչութեամբ սոսկ հպանցիկ դիտարկումներով: Առաւել մանրամասնօրէն մեծ տէրութիւնների քաղաքականութիւնը վերլուծել են Ի. Տերնոնը, Կ. Մուրադեանը եւ Ժ.-Մ. Կարզուն:

Մեր կողմից քննարկուող հեղինակների թւում իմաստ ունի առանձնացնել եւրոպական պետութիւնների երկդիմի քաղաքականութեան դիմագիծը հիմնաւորապէս մերկացնող Ի. Տերնոնին: Հայացք նետելով Հայկական հարցի ծագման ակունքների վրայ՝ նա հաւաստում է, որ 1870-ական թուականներից ի վեր «եւրոպական դիւանագիտութիւնը» ըստ իր շահերի այն դարձնում էր քննարկումների առարկայ կամ մոռացութեան մատնում[258]: Դիցուք, Անգլիայի ընդգծուած հակահայկական քաղաքականութիւնը դեռեւս Բեռլինի վեհաժողովի նախօրեակին նա բնութագրում է իբրեւ «միաժանակ անբարոյական եւ բախտախնդիր»[259]: Մանրամասնելով, որ մեծ տէրութիւնները Հայկական հարցը դարձրել էին «միջազգային հարց», նա հաստատակամօրէն փաստում է նրանց կրաւորական դիրքորոշումն արեւմտահայութեան իրական հովանաւորութիւնն ապահովելու հարցում, եւրոպական դիւանագիտութեան կիրառած քաղաքականութիւնը բնութագրում ոչ միայն իբրեւ «օպորտունիստական», այլեւ, օգտագործելով Ֆ. դը Պրեսանսէի արտահայտութիւնը՝ «անբարոյական»[260]:

Նկարագրելով եւ վերլուծելով 1890-ական թուականների համիդեան կոտորածների ընթացքը լայն հենքի վրայ՝ Ի. Տերնոնը պարբերաբար անդրադառնում է եւրոպական պետութիւնների խորամանկ քաղաքականութեան առէջքների բացայայտմանը, շեշտում, որ այն սահմանափակւում էր ընդամէնը օսմանեան կառավարութեանը բողոքների ներկայացման շրջանակում[261]: Նման դիրքորոշման հիմքում նա իրաւամբ խարսխում է գլխաւորապէս տէրութիւնների տնտեսական եւ ֆինանսական շահերը, որոնք պայմանաւորուած էին, մասնաւորապէս «օսմանեան պարտքի» վճարման անհրաժեշտութեամբ[262]: Այս առիթով հարկ

---

[258] *Ternon Y.*, Les Arméniens. Histoire d'un génocide, p. 61.

[259] Նոյն տեղում, էջ 66:

[260] Նոյն տեղում, էջ 69:

[261] *Ternon Y.*, L'État criminel, p. 182.

[262] *Ternon Y.*, Les Arméniens. Histoire d'un génocide, p. 82-83.

է նշել, որ ԺԹ. դարի երկրորդ կէսին՝ մեծ տէրութիւններին, շուրջ 143.2 միլիոն թուրքական ոսկու սահմանում «օսմանեան պարտքի» առիւծի բաժինը՝ 62.9 տոկոսը, օսմանեան վարչակարգը պարտք էր Ֆրանսիային[263]:

Ի. Տերնոնը քննարկում է տէրութիւնների հակահայկական քաղաքականութեան պատճառները, որոնք մասնաւոր հարցերում երբեմն զանազանւում էին, բացայայտում նաեւ սուլթանին քաջալերող՝ Ռուսաստանի՝ Արեւմտեան Հայաստանում բարենորոգումների իրականացման խնդրում բացասական վերաբերմունքի առանձնայատկութիւնները (մտավախութիւնն արեւմտահայութեան կացութեան բարելաւման հեռանկարից, քանզի այն կարող էր դառնալ «վտանգաւոր նախադէպ»)[264]: Արդիւնքում, հաշուի առնելով մեծ տէրութիւնների եսասիրական տարբեր շահախնդրութիւնները, Ի. Տերնոնը փաստում է նրանց, իսկ աւելի մասնաւորապէս, «Հայկական հարցի նկատմամբ առաւել բարեհաճօրէն» տրամադրուած անգլիական եւ ֆրանսիական կառավարութիւնների որդեգրած՝ Օսմանեան կայսրութեան տարածքային ամբողջականութեան պահպանութեան վարդապետութեանը հետամուտ լինելու շահագրգռուածութիւնը[265]: Այդ իսկ պատճառով, վերջիններս նախընտրում էին հայկական կոտորածների կասեցման միակ գերադասելի՝ օսմանեան կառավարութեանը բողոքների եւ յայտագրերի ներկայացման ուղին, որը նրանց «հնարաւորութիւն կ'ընձեռեր խուսափել եւրոպական պատերազմից»[266]:

Կ. Մուրադեանը եւս, ինչպէս Ի. Տերնոնը, հիմնահարցը քննարկում է լայն ընդգրկմամբ եւ յանգում միեւնոյն հիմնական հետեւութիւններին՝ մատնանշելով, թէ ինչպէս էր Աբդուլ Համիդն օգտւում տէրութիւնների միջեւ առկայ «թշնամանքից»[267]: Նա մանրամասնօրէն վերլուծում է Հայկական հարցում Գերմանիայի, Աւստրիայի, Ռուսաստանի, Անգլիայի եւ Ֆրանսիայի անտարբեր քաղաքականութեան պատճառները, փաստում, որ զինուած

---

[263] *Саркисян Е.К.*, Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв., Ереван, 1972, с. 186.

[264] *Ternon Y.*, նշվ. աշխ., էջ 105:

[265] Նոյն տեղում, էջ 129:

[266] Նոյն տեղում:

[267] *Mouradian C.*, նշվ. աշխ., էջ 78:

միջամտութիւնն Օսմանեան կայսրութեան ներքին գործերին անյարիր էր նրանց թէ՛ տնտեսական եւ թէ՛ քաղաքական շահերին: Հեղինակը խիստ քննադատում է Ֆրանսիայի արտաքին քաղաքականութիւնը, որի անտարբեր դիրքորոշումն իրաւամբ մեկնաբանում է նրա դաշնակցի՝ Ռուսաստանի քաղաքականութեանը, Գ. հանրապետութեան ղեկավարների անսասան հավատարմութեամբ: Ինքնակալական Ռուսաստանի ոչ այնքան հայանպաստ քաղաքականութիւնն այս ժամանակաշրջանում Կ. Մուրադեանը շաղկապում է նոր անկախ պետութիւնների առաջացման հանդէպ ինքնակալութեան խիստ բացասական դիրքորոշման հետ, քանի որ դրանք կարող էին վերածուել տհաճ նախադէպերի կամ դառնալ թշնամի հարեւաններ: Ըստ այդմ, նկատի ունենալով այն անցանկալի հեռանկարները, որոնց կարող էր յանգեցնել Օսմանեան կայսրութեան ներքին գործերին Ֆրանսիայի զինուած միջամտութիւնը, հեղինակը յանգում է միանգամայն ընդունելի հետեւութեան, մանրամասնելով, որ «յեղափոխութեան եւ մարդու իրաւունքների երկիրը», որը յանուն առաջադիմութեան եւ կայսրութիւնում տիրող իրավիճակի բարելաւման շատ աւելի բարյացակամօրէն էր տրամադրուած բարենորոգումների իրականացման խնդրում, այդուհանդերձ, մտադրութիւն չունէր «այնտեղ զոհաբերել իր շահերը եւ ազդեցութիւնը՝ ի նպաստ թշնամի տէրութիւնների՝ Մեծ Բրիտանիայի եւ Գերմանիայի»[268]: Արդիւնքում՝ Կ. Մուրադեանը փաստում է անառարկելի մի ճշմարտութիւն, այն է՝ արեւմտեան տէրութիւնների միջամտութիւնը չէր հատում բանաւոր բողոքների սահմանը[269], ուստի եւ չէր կարող շօշափելի արդիւնքների յանգեցնել:

Համանման դիրքերից է հարցը քննարկում նաեւ Ժ.-Մ. Կարզուն: Նա փաստերով հիմնաւորում է, որ 1895-1896 թթ. մեծ տէրութիւններն իրենց առաքելութիւնը սահմանափակում էին՝ օսմանեան կառավարութեանը դիւանագիտական յայտագրեր ներկայացնելով, սակայն խուսափում գործնական միջոցների դիմելուց[270]: Խօսքը կենտրոնացնելով 1896 թ. Բանկ Օտտոմանի գրաւման եւ դրան յաջորդած

[268] Նոյն տեղում, էջ 79:
[269] Նոյն տեղում:
[270] *Carzou J.-M.*, նշվ. աշխ., էջ 83-88:

կոտորածների հետեւանքով մեծ տէրութիւնների դիւանագիտական միջամտութիւնների վրայ, որոնք ինչպէս միշտ պարփակւում էին Բարձր Դռանը ներկայացուած բողոքների շրջանակում, նա նման քաղաքականութիւնը մեկնաբանում է Եւրոպայի՝ «ռազմական առճակատումը» շրջանցելու ցանկութեամբ[271]: Ժ.-Մ. Կարզուն աւելի հիմնաւոր ձեւով բացայայտում է ստեղծուած իրավիճակում Աբդուլ Համիդի կեղծաւոր քաղաքականութեան դիմագիծը: Սուլթանի երկարատեւ բանակցութիւնները եւրոպական տէրութիւնների ներկայացուցիչների հետ նա մեկնաբանում է վերջինիս սոսկ ժամանակ շահելու մտադրութեամբ, որը միաժամանակ օգտուելով ինքնակալական Ռուսաստանի թողտուութիւնից, սաստկացնում էր հայերի ոչնչացման գործընթացը[272]:

Կասկածից վեր է, որ կործանման դատապարտուած արեւմտահայութեան փրկութեան հարցում միայն եւրոպական պետութիւնների զինուած միջամտութիւնը կարող էր յանգեցնել շօշափելի արդիւնքների, ինչը չի վրիպել մեր կողմից քննարկուող հեղինակներից ոմանց ուշադրութիւնից: Արեւմտահայութեան փրկութեան միջոցն Ի. Տերնոնը համարում է «տէրութիւնների համատեղ միջամտութիւնը»[273] կայսրութեան ներքին գործերին, որը սակայն նրանց ղեկավարները կտրականապէս մերժել են: Նման գործելամիջոցի՝ հայ ժողովրդի փրկութեան համար արդիւնաւէտ հետեւանքներն ի ցոյց դնելու մղումից դրդուած՝ Ժ.-Մ. Կարզուն վկայակոչում է 1895 թ. Զէյթունի ապստամբութեան օրինակը, երբ եւրոպական պետութիւնների միջամտութեան հետեւանքով, ապստամբների հետ կայացուել է հաշտութիւն, ինչպէս նաեւ Իզմիդում արձանագրուած մէկ այլ մասնաւոր փաստ, երբ ֆրանսիական զինուած միջամտութեան շնորհիւ մահուան ճիրաններից փրկուել են թուրքերի կողմից պաշարուած վանքի վանականները[274]: Միաժամանակ նա փաստում է, որ տէրութիւնները, ըստ էութեան, մոռացութեան էին մատնում բարենորոգումների ծրագրերը եւ թոյլատրում հայկական կոտորածների իրականացումը[275]: Ֆրանսիացի

---

[271] Նոյն տեղում, էջ 88:
[272] Նոյն տեղում, էջ 84:
[273] *Ternon Y.*, նշվ. աշխ., էջ 129:
[274] *Carzou J.-M.*, նշվ. աշխ., էջ 88-89:
[275] Նոյն տեղում, էջ 86:

պատմաբանների նման մեկնաբանութիւնները, անտարակոյս, առարկութիւններ չեն կարող յարուցել:

Բազմիցս անդրադառնալով 1894-1896 թթ. եւրոպական պետութիւնների քաղաքականութեանը, Ժ.-Պ. Ալեմն ուշադրութիւնը կենտրոնացնում է գլխաւորապէս նրանց գործողութիւնների միջեւ առկայ անհամաձայնութիւնների վրայ: Սակայն, ի տարբերութիւն նախորդ հեղինակների, զլանում է մեկնաբանել նրանց անարդիւնաւէտ միջամտութիւնների հիմնական պատճառը, որը յանգում էր Օսմանեան կայսրութեան տարածքային ամբողջականութեան պահպանութեանը: Աբդուլ Համիդի՝ դեռեւս 1895 թ. տէրութիւնների բողոքների առնչութեամբ գրաւած խուսափողական մարտավարութիւնը նա փորձում է մեկնաբանել սոսկ ինքնակալական Ռուսաստանի, ըստ էութեան, թրքամէտ դիրքորոշմամբ, որը սուլթանին միայն քաջալերում էր[276]: Միաժամանակ, Բանկ Օտտոմանի գրաւմանը յաջորդած կոտորածների առնչութեամբ նա յանգում է անիրատեսական եւ մեր կողմից անընդունելի հետեւութեան, ըստ որի՝ «Կոստանդնուպոլսի կոտորածը» տէրութիւններին ի ցոյց դրեց Օսմանեան կայսրութեանը սատարելու ժամանակավրէպութիւնը, որից յետոյ նրանք կռահեցին, որ հարկ է նախատեսել դրա տարածքային մասնատումը[277]: Իրադարձութիւնների ընթացքը, սակայն, ցոյց տուեց, որ նման խնդիրը քննարկումների տեղիք տուեց միայն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին[278]:

Ի տարբերութիւն նշուած պատմաբանների, եւրոպական տէրութիւնների քաղաքականութիւնը թռուցիկ, սակայն անկողմնակալ դիրքերից մեկնաբանել են նաեւ այլ հեղինակներ: Ա. Պէյլերեանը հպանցիկ անդրադառնալով այս հիմնախնդրին, վերհանում է դրա կարեւորագոյն կողմերից երկուսը՝ տնտեսական եւ քաղաքական շահերի անհամատեղելիութեամբ պայմանաւորուած, նրանց մասնատող թշնամանքը, ինչը Հայկական հարցին «լուծում» տալու խնդրում ոգեւորում էր՝ նրանց չէզոքութեան հարցում հաւաստիացած Աբդուլ Համիդին[279]:

---

[276] *Alem J.-P.*, նշվ. աշխ., էջ 38:

[277] Նոյն տեղում, էջ 40:

[278] Տես մանրամասն *Фомин А.М.*, Война с продолжением. Великобритания и Франция в борьбе за «Османское наследство». 1918-1923, М., 2010, с. 42-53:

[279] *Beylerian A.*, L'impérialisme et le mouvement national arménien (1885-1890), p. 51.

Ընդամէնը «բանաւոր սպառնալիքների» շրջանակներում սահմանափակուող մեծ տէրութիւնների միջամտութիւնների մասին թռուցիկ յիշատակում են նաեւ Ա. Կրիկորեանը, Ա. Տէր-Մինասեանը եւ Ժ.-Վ. Կիւրեղեանը[280]:

Հարկ է նշել, որ քննարկուող ժամանակաշրջանում ֆրանսիացի հեղինակները, ցաւօք, անհրաժեշտ ուշադրութիւն չեն դարձնում ժողովրդավարական Ֆրանսիայի ներկայացուցիչների լայնածաւալ հայանպաստ գործունէութեանը: Իրականում, համիդեան կոտորածների ժամանակակիցներից՝ հայ ժողովրդի նուիրեալներ Ա. Չօպանեանն ու Ա. Ահարոնեանը, իրաւամբ արձանագրել են Հայկական հարցում ֆրանսիական կառավարութեան պաշտօնական քաղաքականութեան եւ ֆրանսիացի մտաւորականների գրաւած դիրքորոշման ներհակութեան փաստը[281]: Ուստի այս էական հանգամանքը մոռացութեան մատնելն անհարկի է:

Անշուշտ, ֆրանսահայ պատմաբան Է. Քայաջեանը մասնակիօրէն անդրադարձել է սոյն թեմային առնչուող որոշ հարցերի, սակայն, խիստ սահմանափակ՝ ֆրանսիացի գործիչների հետ Արշակ Չօպանեանի ունեցած առնչութիւնների բացայայտման կտրուածքով[282]: 1894-1908 թթ. արեւմտահայութեանը սատարած զանազան ֆրանսիացի գործիչների հայանպաստ գործունէութեան հիմնական դրուագներն ամփոփող՝ տեղեկատվական բնոյթի գիրք է հրատարակել Մ. Խարազեանը[283], որը շեշտը դրել է գլխաւորապէս ֆրանսիական մամուլում տպագրուած յօդուածների եւ որոշ քաղաքական գործիչների ելոյթների բովանդակութեան վերաշարադրման վրայ: Նրա շարադրանքում, սակայն, բացակայում են վերլուծական մօտեցումը եւ հեղինակային խօսքը, քանի որ նա, փաստօրէն, բաւարարւում է իր իսկ յիշատակած սակավաթիւ գործիչների յօդուածներից կամ ֆրանսիական

---

[280] *Krikorian A.*, նշվ. աշխ., էջ 14; *Ter Minassian A.*, L'Arménie et l'éveil des nationalitns (1800-1914) ,– Histoire du peuple arménien, p. 503 ; *Guréghian J.V.*, նշվ. աշխ., էջ 179:

[281] *Չօպանեան Ա.*, Դարավերջի Ֆրանսան.– Անահիտ, Ա տարի, 1899, թիւ 5-6, էջ 155; À la mémoire de Pierre Quillard, Paris, 1912, p. 21-22.

[282] *Khayadjian E.*, Archag Tchobanian et le mouvement arménophile en France, Marseille, 1986 ; 2ème éd., Alfortville, 2001.

[283] *Kharazian M.*, De l'illusion à la tragédie. La France et la Question arménienne de 1894 à 1908 (des massacres hamidiens jusqu'à la révolution jeune-turque), Paris, 2007.

խորհրդարանում նրանցից ոմանց ունեցած ելոյթներից բերուած ընդարձակ քաղուածքների հրապարակմամբ: Իմաստ ունի յիշատակել նաեւ Վ. Դյիւկլերին, որն անդրադարձել է սոսկ Ժ. Ժորեսի եւ Դ. Կոշենի խորհրդարանային ելոյթներին՝ դրանք, այդուհանդերձ, չքննարկելով նրանց ժամանակակիցների քաղաքական գործունէութեան ընդհանուր հենքի վրայ[284]: Եւրոպացի, այդ թւում՝ ֆրանսիացի գործիչների հայանպաստ գործունէութեան մասին հպանցիկ յիշատակում են նաեւ Ժ.-Պ. Ալեմը եւ Ի. Տերնոնը ընդհանուր բնոյթի գրքերում [285]:

Թէեւ մենք սահմանափակուեցինք ֆրանսիացի պատմաբանների քննարկած կարեւորագոյն հիմնահարցերի վերլուծութեամբ, այդուհանդերձ, ուրուագծուած ետնախորքի վրայ ակնյայտ է այն մեծ աւանդը, որը նրանք ներդրել են անկողմնակալ դիրքերից համիդեան կոտորածների գիտական ուսումնասիրութեան ասպարէզում: Նրանց մեկնաբանութիւնների գերակշռող մասը մեր կողմից սկզբունքային առարկութիւնների տեղիք չի տալիս, քանզի նրանք հիմնաւորապէս բացայայտում են հայ ժողովրդի բնաջնջումը պետական քաղաքականութեան մակարդակով եւ կանխամտածուածութեան հիման վրայ: Դա մեզ մէկ անգամ եւս հիմք է տալիս հաւաստելու, որ 1890-ական թուականների համիդեան կոտորածներն իրաւասու ենք համարել Հայոց ցեղասպանութեան գործընթացի սկիզբը: Հարկ ենք համարում փաստել էական մի հանգամանք եւս. ֆրանսիացի պատմաբանների ուսումնասիրութիւններն արժանի հակահարուած են տալիս Հայոց ցեղասպանութեան պատմութիւնը նենգափոխող կեղծարարներին, ինչն աւելի է կարեւորում նրանց անշահախնդիր աշխատանքի արժէքը: Ուստի մենք իրաւասու չենք անուշադրութեան մատնելու նրանց իրականացրած նշանակալից աշխատանքի կարեւորութիւնը:

*Հանդէս ամսօրեայ, 2012, թիւ 1-12, էջ 231-270*

---

[284] *Duclert V.*, նշվ. աշխ., էջ 31-55: Տես նաեւ *Duclert V.* et *Pécout G.*, La mobilisation intellectuelle face aux massacres d'Arménie (1894-1900),– Les exclus en Europe, 1830-1930. Sous la direction d'A. Guslin et D. Kalifa, Paris, 1999, p. 323-344:

[285] *Alem J.-P.*, նշվ. աշխ., էջ 40-41; *Ternon Y.*, նշվ. աշխ., էջ 142-145:

## АНАТОЛЬ ЛЕРУА-БОЛЬЕ ОБ АРМЯНСКИХ ПОГРОМАХ 1890-Х ГОДОВ

Первый этап геноцида армян (1894-1908), известный в историографии этой темы больше под определением «гамидовских погромов», был учинён над армянами, проживавшими главным образом на территории захваченной турками еще в XVI в. Западной Армении. На рубеже XIX – XX столетий геноцид армян проводился на уровне государственной политики при правлении полновластного султана Османской империи Абдул-Гамида II (1842-1918), которого выдающийся французский историк Альбер Вандаль впервые в истории охарактеризовал как «кровавого султана» (sultan rouge)[286]. Эти события вызвали многочисленные отклики в различных странах Западной Европы, а также в России. Среди них без всякого преувеличения выделяется Франция, где демократические традиции имели давние и глубокие корни. Эхо организованного и осуществленного османским правительством массового истребления западных армян в 1894-1896 гг., благодаря усилиям представителей передовой французской общественности, ставших, как метко заметил Ф. Маклер, «адвокатами» целого народа, обреченного на гибель, прозвучало во Франции намного сильнее, чем где-бы то ни было[287].

Процесс уничтожения армянского народа в 1890-х годах, жертвой которого, по общим подсчетам, стали 300 тыс. человек, несмотря на проводившуюся руководителями Третьей Республики очевидную протурецкую политику, был во Франции предан гласности. Его гневно осудили многочисленные политические, общественные, религиозные деятели, дипломаты, писатели, а также историки разных направлений. Среди авторов, обратившихся к освещению, а подчас и к научной интерпретации армянских погромов и их предыстории, были и некоторые очевидцы трагических событий (В. Берар, Л. де Контансон). В целом, работы многих из них имеют, несомненно, помимо историографического, еще и источниковедческое значение.

---

[286] Les Arméniens et la réforme de la Turquie. Conférence faite par M. Albert Vandal de l'Académie française dans la salle de la Société de Géographie. Le 2 février 1897, Paris, 1897, p. 13.

[287] *Macler F.*, La nation arménienne. Son passé, ses malheurs, Paris, 1924, p. 45.

Подавляющее большинство французских авторов, не располагая полноценной информацией, не были в состоянии полностью ориентироваться в сути разыгравшихся в Османской империи событий и выдвигали не совместимые с реальностью, а зачастую и неприемлемые трактовки. Однако, несмотря на разницу в политических и научных ориентациях, повлиявших на выдвинутые этими авторами интерпретации, что вполне закономерно, их объединяла констатация уничтожения армянского народа[288]. При этом, наиболее прозорливые из них неопровержимо доказывали наличие государственной политики и преднамеренности при уничтожении западных армян, являвшихся, к слову, основными объектами геноцида как феномена. Все они единодушно обличили Абдул-Гамида и его креатур и заклеймили позором организаторов геноцида армян, развернув свою последовательную армянофильскую деятельность в различных направлениях, в зависимости главным образом от специфики своей профессии, используя при этом также и парламентскую трибуну (Ж. Жорес, Д. Кошен, Ф. де Прессансе и др.).

Что касается французских историков, среди которых достойны упоминания имена выдающихся представителей позитивистской историографии (Э. Лависс, Ш. Сеньобос) и апологетического направления в наполеоноведении (А. Вандаль, Э. Дрио), они не только обсуждали перипетии армянских погромов в своих книгах и статьях по истории восточного вопроса[289], но и выступали во второй половине 1890-х гг. с публичными лекциями. Некоторые из них опубли-

---

[288] В данном случае речь идет не о тех немногочисленных, не являюшихся профессиональными историками, французских авторах, которые, по всей вероятности, по заказу Абдул-Гамида II в своих работах начали фальсификацию процесса истребления армян и заложили основы направления (существующего поныне) в историографии, отрицающего достоверность геноцида армянского народа. См. об этом: *Погосян В.А*., Фальсификация гамидовских погромов французской историографией (вторая половина XX в. – начало XXI в.) // «Андес амсориа», 2009 n° 1-12 с. 293-316 (на арм. яз.); *он же*: Первый этап геноцида армян через призму французской историографии и общественно-политической мысли (конец XIX – начало XX столетия), Ереван, 2011, с. 171-209 (на арм. яз.).

[289] См. например: Driault E., La question d'Orient depuis ses origines jusqu'à nos jours, Paris, 1898 ; *Lamy E.,* La France du Levant, Paris, 1900 ; *Cahuet A.,* La question d'Orient dans l'histoire contemporaine (1821-1905), Paris, 1905 ; *Gaulis G.,* Les questions d'Orient, Paris, 1905.

ковали тексты своих выступлений в виде брошюр или же в научных журналах того времени[290].

Среди них был видный французский историк и либеральный общественный деятель, член Академии нравственных и политических наук Института Франции (1887) Анатоль Леруа-Болье (1842-1912). Как общественный деятель, он сконцентрировал свое внимание на проблемах антисемитизма[291], а как историк – развернул многоплановую деятельность, изучая различные проблемы истории Западной Европы[292]. Однако, свои основные творческие силы А. Леруа-Болье направил на изучение истории России и внес заметный вклад в эту область[293], став во Франции одним из первых русистов в последней трети XIX столетия[294]. Мало того, как отметила К.А. Цыкова, в западной историографии его труды «рассматриваются как классика французской русистики»[295].

Интерес французского историка к России, где он был с 1872 по 1881 гг. четыре раза и изучил русский язык, по всей вероятности, был

---

[290] См. например: Les massacres d'Arménie. Conférence faite au salon Bibliographique le 9 mars 1896. Par M. le baron Carra de Vaux, Paris, 1896 ; *Pisani P.,* Les massacres d'Arménie. Conférence faite à l'Institut Catholique de Paris le 3 mai 1896, Paris, 1896 ; Les Arméniens et la réforme de la Turquie. Conférence faite par M. Albert Vandal de l'Académie française dans la salle de la Société de Géographie ; *Coulbaut P.,* Les massacres d'Arménie et le rôle des puissances européennes, Angers, 1889.

[291] *Leroy-Beaulieu A*., Les Juifs et l'antisémitisme. Israël chez les nations, Paris, 1893 ; *idem* : Les doctrines de haine. L'antisémitisme, l'antiprotestanisme, l'anticléricalisme, Paris, 1902.

[292] См. например: *Leroy-Beaulieu A*., Un empereur, un pape, une Restauration, Paris, 1879 ; *idem* : La Papauté, le socialisme et la démocratie, Paris, 1893.

[293] *Leroy-Beaulieu A*., L'Empire des Tsars et les Russes, t. 1-3. Paris, 1881-1889 ; 2e éd. : Paris, t. 1-2, 1883 ; 3e éd. : t. 1-3, Paris, 1890 ; 4e éd. : Paris, t. 1-3, Paris, 1897-1898 (réédition : Paris, 1991); *idem* : Un homme d'État russe (Nicolas Milutine) d'après sa correspondance inédite. Étude sur la Russie et la Pologne pendant le règne d'Alexandre II (1872-1885), Paris, 1884 ; *idem*: La France, la Russie et l'Europe, Paris, 1888 ; *idem*: Études russes et européennes, Paris, 1897.

[294] *Любина Г.И*., Россия и Франция. История научного сотрудничества (вторая половина XIX – XX вв.). М., 1996, с. 71.

[295] *Цыкова К.А*., Россия второй половины XIX – начала XX вв. в трудах Анатоля Леруа-Болье. Автореф. … к.и.н. М., 2005, с. 3. Неслучайно, М.М. Ковалевский характеризовал его основной труд по истории России «Империя царей и русские» как своего рода открытие для Европы. См.: *Ковалевский М*., Две смерти (Фредерик Пассии и Анатоль Леруа-Болье) // «Вестник Европы», 1912, июль, с. 366.

обусловлен франко-русским сближением в последней трети XIX столетия. Будучи горячим поборником русско-французского союза, он стремился создать у правителей Третьей Республики настроения, благоприятствовавшие его заключению, и добивался укоренения у французов доброжелательного отношения к России[296], что было характерно и для других его коллег-историков[297].

Работы А. Леруа-Болье имеют большую научную ценность и политическое значение, поэтому в России были переведены и изданы его основные труды[298], он приобрел много друзей и почитателей[299].

В конце XIX столетия из поля зрения Леруа-Болье не ускользнул нашумевший и причинивший правительственным кругам великих европейских держав немало хлопот армянский вопрос. Внимание к нему со стороны некоторых французских историков, как нам представляется, был частично обусловлен желанием угодить России, союзнице Франции, в разрешении возникшего на Ближнем Востоке острого кризиса. Последний был чреват болезненной для европейских стран перспективой разделения территории Османской империи, а сам кризис затронул в равной степени интересы обеих стран-союзниц.

Выходу брошюры Леруа-Болье, посвященной армянскому вопросу[300], тиражом в десять тысяч экземпляров[301] предшествовало его

---

[296] См.: *Любина Г.И.*, указ. соч. С. 80; *Цыкова К.А.*, указ. соч., с. 4.

[297] См. например: *Vandal A.*, Napoléon et Alexandre I[er], t. 1-3, Paris, 1891-1896.

[298] *Леруа-Болье А.* Евреи и антисемитизм. СПб.,1894; *Он же*: Антисемитизм. СПб., 1898; *Он же*: Власть и деньги. СПб.,1900; *Он же*: Христианство и демократия. Христианство и социализм. СПб., 1906.

[299] На кончину Леруа-Болье в России откликнулся не только его друг М.М. Ковалевский (см.: *Ковалевский М.М.*, указ. соч.), но и «Журнал министерства юстиции», опубликовавший в переводе на русский некролог, посвященный Леруа-Болье, написанный П. Шальем (1913, n° 1 с. 184-199). Учитывая заслуги Анатоля Леруа-Болье в изучении истории России, посольство Французской Республики в России учредило недавно премию его имени, которая ежегодно присуждается за лучшее научное исследование о Франции на русском языке. Первыми ее лауреатами стали известные российские историки А.В. Чудинов и П.П. Черкасов.

[300] Les Arméniens et la Question arménienne. Conférence faite par M. Anatole Leroy-Beaulieu, membre de l'Institut à l'Hôtel des Sociétés savantes le 9 juin 1896, Paris, 1896.

[301] См. свидетельство одного из армянских общественных деятелей С. Сапаха-Гуляна: *Сапах-Гулян С.* Ответственные. Провиденс, 1916, с. 154 (на арм. яз.).

выступление с публичной лекцией на эту тему 9 июня 1896 г. в салоне Научных обществ Парижа. Обладая колоссальными знаниями и обширным кругозором, он подверг тщательному научному анализу различные обстоятельства, имевшие непосредственное отношение к армянским погромам, изобразив их на обширном фоне эпохи.

Посетивший Кавказ французский историк считает армян «несчастным» и «угнетенным» народом, а армянский вопрос именует «болезненным» и «плачевным»[302]. С глубокой душевной болью он говорит о превращении Армении лишь в географическое понятие и о желании турок убрать с карты само слово «Армения», намерениях уничтожить армянский народ[303]. Невыносимые условия жизни армян в Османской империи он частично объясняет огромным расстоянием, отделяющим армянские провинции от столицы, подчеркивая, что там «пороки турецкой администрации проявлялись в самой жестокой форме. Там дух ислама господствует полновластно, там нет никакого контроля, нет справедливости для христиан, там всесильны не только воля паши или каймакама[304], но зачастую и произвольные причуды последнего турка»[305]. Справедливо считая Османскую империю неограниченной монархией, он характеризует султана Абдул-Гамида как личность, лишенную каких бы то ни было черт современнооого человека и превратившуюся в конечном итоге в «своеобразного пленника принципов и предрассудков старых турок», не имевшего ни малейшей склонности к установлению равенства между «райей» и верующими мусульманами[306].

Леруа-Болье фиксирует устремления некоторых западных армян к организации и самообороне в силу создавшихся для них невыносимых условий существования. Исследователь подвергает эти важные обстоятельства основательному анализу, так как именно они побудили османские власти (а вслед за ними и фальсификаторов исто-

---

[302] Les Arméniens et la Question arménienne. Conférence faite par M. Anatole Leroy-Beaulieu, p. 3, 4.

[303] Ibid., p. 6.

[304] Функционер османского правительства на местах, возглавлявший административную единицу, именуемую «казой».

[305] Ibid., p. 15-16.

[306] Ibid., p. 21, 23.

рии, преданных им по сей день) прибегнуть к искажению истории геноцида армян. Леруа-Болье, имея на это все основания, объясняет поведение армян тем отчаянным положением, в котором они оказались после Берлинского конгресса 1878 г. Их мольбы об улучшении своей участи, несмотря на полученные обещания, оставались, как он отмечает, гласом вопиющего в пустыне, ибо на них не реагировали не только вершители судеб многомиллионной Османской империи, но и европейские дипломатические круги. Леруа-Болье не ставит армянам в вину проведение самооборонительных мероприятий[307], он переходит к подробному описанию тех обстоятельств (создание национальных партий, газет, пробуждение национального духа среди соотечественников), которые послужили причиной для несправедливой характеристики армян как анархистов, нигилистов и революционеров. Леруа-Болье основательно опровергает эти выдуманные и не соответсвующие действительности ярлыки: «И когда они, не желая терпеть притеснения, отважились показать, что готовятся защищаться, их нарекают революционерами, против которых допустимы все средства», – с горечью констатирует он[308].

Потрясенный ужасами армянских погромов, Леруа-Болье заявляет: «В истории такого еще не было, я бы сказал более – даже солнце, вероятно, еще никогда не видело на нашей печальной, залитой кровью от бесчисленных преступлений планете столь ужасающего спектакля, который в течение долгих недель и месяцев разыгрывался в долинах Восточной Анатолии»[309]. Не вникая в описание подробностей армянских погромов, он пытается выявить тех, на кого нужно возложить ответственность за их осуществление. Как это ни парадоксально, но историк, давший весьма меткие и беспристрастные оценки Абдул-Гамиду II и османским властям, в то же время воздерживается от возложения на них малейшую ответственность за содеянные преступления.

Вместо разоблачения лиц, на совести которых лежит уничтожение нескольких сотен тысяч армян, автор туманно и пространно даёт

[307] Ibid., p. 28.
[308] Ibid., p. 29.
[309] Ibid., p. 30.

понять, что он не склонен в чем-то упрекать османское правительство и самого султана: «Я не желаю и не хочу поверить, что султан мог бы дать такой приказ. Я не могу принять, что [Высокая] Порта или же Пале[310] могли бы дать подчиненным указание, повлекшее уничтожение армянской нации подобным образом. Но то, что мне известно, господа, то, что вытекает из всех рассказов очевидцев, сводится к тому, что все это было осуществлено преднамеренно, на основе сигнала властей. То есть, если в глубинах Анатолии не имели приказа исходившего из Стамбула и Елдиз-Киошка[311], то сознавали, что истребляя, могут угодить». Другое же его объяснение того же вопроса настолько же туманно и не совсем ясно: «Можно утверждать, что давшие сигнал к погромам, думали, что смогут угодить Пале»[312].

Очевидно, что в разоблачении ответственных за армянские погромы Леруа-Болье занял, мягко говоря, неоднозначную позицию. Весьма трудно (если не сказать невозможно) предположить, кого конкретно имеет в виду историк, полностью обеливший султана и османское правительство, под понятием «властей». Не менее сложно разобраться в том, кем же были таинственные лица, ставшие инициаторами погромов армян, и имена которых он осторожно обходит молчанием.

Продолжая свои размышления, Леруа-Болье упоминает, не вдаваясь в подробности, о погромах различных народов, имевших место на протяжении XIX столетия в Хиосе, Ливане, Болгарии, Египте, и приходит к нелогичному и не подлежащему интерпретации заключению: «Таковы методы действий восточной политики. А после этого, удивляет ли Вас, господа, резня армян»? В конечном итоге, он предпочитает возложить ответственность за массовое истребление армян на «восточную политику и мусульманский фанатизм», воздерживаясь при этом от трактовки расплывчатого понятия «восточной политики», а также уточнения и перечисления имен ее творцов[313].

---

[310] Имеется ввиду преступная камарилья Абдул-Гамида II, сосредоточившая к концу XIX в. в своих руках бразды правления огромной империей.

[311] Дворец Абдул-Гамида в Константинополе, превратившийся в своего рода недоступную крепость.

[312] Ibid., p. 31, 33.

[313] Ibid., p. 33.

Изложение Леруа-Болье полностью проникнуто идеей главенствующей роли в армянских погромах «мусульманского фанатизма», ставшей основой его концепции геноцида армян. В этой связи Леруа-Болье не преминул дать необходимые разъяснения, поскольку подводит читателя к отрицанию массового уничтожения западных армян на уровне государственной политики и по указанию султана и к утверждению доктрины сохранения территориальной целостности Османской империи.

Судя по его изложению, армянские погромы были обусловлены имевшейся между мусульманами и христианами религиозной враждой, предопределившей нетерпимость турок к армянам[314]. «Если настоящим виновником не является фанатизм, то таковыми являются ненависть и зависть, ибо религиозная ненависть здесь переплетается с имеющейся между нациями ненавистью», – заключает он. В этой же связи он подробно останавливается на сложившейся в империи сложной обстановке, справедливо указывает на то, что в армянских погромах участвовало большинство солдат и офицеров. К их помощи прибегли якобы для восстановления порядка, но из-за своей ненависти к христианам[315] именно они превратились в исполнителей резни тех, кого призваны были защищать. Так автор «подгоняет» события под свою схему.

Понимая, что необходимо многопланово обосновать свою концепцию геноцида армян якобы исключительно на основе религиозной вражды, Леруа-Болье приводит в своем повествовании разные и даже соответствующие исторической действительности факты. «Армяне,– пишет он,– были не единственными жертвами. Среди покойников были сотни, если не тысячи других *христиан*, (курсив мой – *В.П.*) имевших различные обряды»[316].

Намного более веским аргументом для доказательства своих (неверных и далеких от действительности) объяснений Леруа-Болье послужило насильственное и зачастую вынужденное вероотступ-

---

[314] Отметим, что этой неверной точки зрения, в силу своего мировосприятия, придерживалась часть его современников, среди них главным образом выделялись религиозные деятели (отец Шарметан, аббат Пизани и др.).

[315] Ibid., p. 33, 34.

[316] Ibid., p. 34.

ничество армян при погромах, прибегших к этой мере ради спасения своей жизни. Считая отречение армян от своей веры одним из «самых грустных» аспектов армянского вопроса, он отмечает: «Во многих местах жертвам была предоставлена возможность выбора между смертью и вероотступлением»[317]. Это утверждение, разумеется, бесспорно, но в своих размышлениях Леруа-Болье обходит стороной намного более важное обстоятельство, а именно: истребление армянского народа на основе государственной политики и умысла, зафиксированных в рапортах французских дипломатов, аккредитированных в Османской империи в 1890-х гг. и направленных руководителям дипломатического ведомства Третьей Республики, правда, в 1896 г. еще не опубликованных[318].

Тем не менее, трудно предположить, что такой историк, как Леруа-Болье, обладавший колоссальной эрудцией, мог бы не знать о жестоких гонениях, а иногда и частичной резне, которым на протяжении XIX столетия регулярно подвергались проживавшие на территории Османской империи порабощенные мусульманские народы (курды, арабы) при проявлении малейшего неповиновения османским властям. Да и мог ли профессиональный историк, вникший столь глубоко в суть армянского вопроса, не понимать, что армянские погромы являются частью государственной политики в Османской империи? Такого было своеобразное решение армянской проблемы – путем истребления проживавших на территории своей родины армян. Это делалось для того, чтобы избежать углубления начатого еще в 1820-е гг. процесса расчленения империи. Как нам кажется, по отношению к Леруа-Болье это предположение маловероятно.

Итак, согласно Леруа-Болье, геноцид армян целиком и полностью обусловлен враждой, существовавшей с незапамятных времен между христианскими и мусульманскими народами. Эта вражда в любой момент могла разгореться с новой силой. «При отсутствии других способов, господство ислама утверждается только саблей», – заявляет он. Историк убежден, что именно в силу этих обстоятельств

---

[317] Ibid., p. 35.

[318] Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman. 1893-1897, Paris, 1897 ; Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896, Paris, 1897.

«процветавший в недалеком прошлом этот край превратился сегодня в усыпанную разрушенными деревнями и сожженными хижинами безлюдную пустыню», а уцелевшие армяне обречены на гибель, поскольку «холод, голод, бедственное положение безнаказанно доводят начатое убийцами дело до конца» [319].

Леруа-Болье справедливо осуждает равнодушие великих держав по отношению к обреченному на гибель армянскому народу, а также почти гробовое молчание французской прессы, подкупленной, к слову сказать, Абдул-Гамидом. А кровь жертв погромов, число которых, по его (неполным) данным составляло от 40 до 50 тыс. человек[320], считает «результатом проявляемой дипломатией опрометчивости и небрежности»[321]. Это, несомненно, одно из неоспоримых достоинств нашего автора. Он выражает свою твердую уверенность в том, что необходимо установить контроль европейских стран над событиями в Османской империи. Это позволило бы приостановить армянские погромы и тем самым свести на нет перспективу вооруженного вмешательства во внутренние дела этой страны какой бы то ни было европейской державы, которое могло бы послужить поводом для разжигания европейской войны. Другими словами, Леруа-Болье выступает, как и почти все его соотечественники вне зависимости от политических ориентаций, как страстный поборник сохранения территориальной целостности Османской империи. Страшась ее распада, он проявляет огромную заинтересованность, в частности, в обеспечении безопасности проживаюших там народов, которое он рассматривает как одно из самых необходимых и непременных условий для сохранения и существования этой зловещей империи.

В этом вопросе следует отдать ему должное, ибо он честно и не скрываясь за туманными доводами, берет на себя роль защитника политики европейских держав и в особенности, Франции. Считая уста-

---

[319] Les Arméniens et la Question arménienne. Conférence faite par M. Anatole Leroy-Beaulieu, p. 36.

[320] Отметим для сравнения, что в 1896 г. Жорес число погибших армян доводил до 200 тыс. человек. См.: *Жорес Ж.*, Против войны и колониальной политики / Ред. и вступ. ст. А.З. Манфреда, М., 1961, с. 115.

[321] Les Arméniens et la Question arménienne. Conférence faite par M. Anatole Leroy-Beaulieu, p. 20, 32.

новление контроля европейских держав над Османской империей единственным возможным способом разрешения армянского вопроса, он полагает, что в противном случае империя «потеряет друг за другом все свои европейские и азиатские провинции… Именно этого мы хотим избежать, – отмечает он, – как ради интересов [Высокой] Порты, так и Европы. И для предотвращения этой катастрофы, то, что мы требуем… – это существование такой Турции, которая была бы пригодной для жительства всех – как христиан, так и мусульман»[322].

Очевидно, что Леруа-Болье, умело используя армянскую карту, волей-неволей выступает не столько в роли защитника армян, сколько убежденного и страстного поборника сохранения сложившегося между европейскими державами равновесия. Основой последнего являлась неприкосновенность территориальной целостности Османской империи[323]. Вооруженное вмешательство европейских держав в ее внутренние дела могло бы привести в конечном итоге к расчленению территории этого государства между ними, но никто не мог бы заранее предугадать, кто остался бы в выигрыше, а кто в проигрыше. Тем самым было бы нарушено существовавшее между ними равновесие. К слову сказать, Абдул-Гамид, один из мудрейших политиков своего времени, отлично ориентировался в происках европейской дипломатии и уловил суть политики великих держав. Он позволил себе полнейшую свободу действий в своей империи, нагло и цинично игнорировал протесты европейских держав, которые в связи с армянскими погромами в 1895-1896 гг. сыпались, как из рога изобилия, но оставались без малейших положительных последствий для армян.

Как нам представляется, именно этим обстоятельством объясняется умеренная позиция Леруа-Болье в трактовке геноцида армян, проявлением которой было то, что автор избегал упоминания имен организаторов истребления армян на государственном уровне и раскрытия подлинных намерений османского правительства в подготов-

---

[322] Ibid., p. 40.

[323] Европейские державы приступили к обсуждению вопроса о разделе Османской империи лишь во время Первой мировой войны. См.: *Фомин А.М.*, Война с продолжением. Великобритания и Франция в борьбе за «Османское наследство». 1918-1923, М., 2010, с. 42-53.

ке и осуществлении этих погромов. В конечном итоге автор, лишь исходя из чисто «человеческой совести», требует предоставления «этим несчастным свободы вероисповедания»[324]. По вопросу же оказания помощи и содействия западным армянам Леруа-Болье считает необходимым для европейских держав потребовать от Высокой Порты «прекращения свирепств, позорящих Европу перед миром», и гарантий неповторения «аналогичных варварств», предоставление армянам права на жизнь, работу и вероисповедание[325]. Но не более того.

В определенной степени свидетельство армянского общественного деятеля С. Сапах-Гуляна, по просьбе которого французский историк выступил с этой лекцией, проливает свет на этот вопрос. Как он отмечает, министр иностранных дел Третьей Республики известный османофил Габриэль Ганото, проводивший явную протурецкую политику и не скрывавший своих настроений, что не раз вызывало острую критику в его адрес со стороны проармянски настроенных французских деятелей[326], просил оратора проявить умеренность по отношению к османским властям[327].

В любом случае, выступление Леруа-Болье, вне зависимости от некоторых неприемлемых оценок автора, безусловно, способствовало расшатыванию той мощной крепостной стены[328], которая отгораживала истину о пережитой армянским народом трагедии от широких слоев французского общества. В этой связи, сам Леруа-Болье несколько лет спустя заявил: «Я был первым, кто выступил в Париже во времена молчания о погромах с лекцией для армян»[329]. То же

---

[324] Les Arméniens et la Question arménienne. Conférence faite par M. Anatole Leroy-Beaulieu, p. 35.

[325] *Ibid., p. 38, 39.*

[326] См. например: *Quillard P. & Margery L.,* La question d'Orient et la politique personnelle de M. Hanotaux, Paris, 1897.

[327] *Сапах-Гулян С.,* указ. соч., с. 153.

[328] Некоторые более объективные французские современники назвали создавшееся во Франции положение «заговором молчания». См.: *Bérard V.,* La politique du sultan. Paris, 1897, p. 290 ; *Lavisse E.,* Note sur le Livre Jaune // « Revue de Paris », livraison du 15 mars 1897, p. 455.

[329] La Manifestation au Théâtre du Chateau-d'Eau de Paris (15 février 1903) // Pour l'Arménie et la Macédoine. Préface de V. Bérard. Introduction de P. Quillard. Rapport de Francis de Pressensé, Paris, 1904, p. 59.

подтверждает и С. Сапах-Гулян. По его словам, после публикации брошюры Леруа-Болье, «не осталось ни одного занимавшегося общественными делами человека, кто бы не разделял мысли именитого лектора»[330].

Брошюра Леруа-Болье, правда, без анализа, была представлена во французской печати[331]. Однако это краткое представление все же способствовало распространению среди французской общественности включенной в нее информации. В этом и заключается историческое значение его выступления.

*Россия и Франция, XVIII-XX века,*
*выпуск 11, М., 2013, с. 94-103*

---

[330] *Сапах-Гулян С.,* указ. соч., с. 154.

[331] Les Arméniens et la Question arménienne, conférence faite par M. Anatole Leroy-Beaulieu // La vérité sur les massacres d'Arménie. Documents nouveaux ou peu connus. Par un Philarmine, Paris, 1896, p. 121-125. Отметим также, что посвященная его брошюре статья была опубликована, опять же без анализа, и в одной из армянских газет. См.: «Мшак», 1896, n° 100.

# 1909 Թ. ԿԻԼԻԿՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԿԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ (ՀԱՄԱՌՈՏ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ)

1909 թ. գարնանը Կիլիկիայում տեղի ունեցած հայկական կոտորածները[332] Հայոց ցեղասպանության գործընթացի (1894-1922) բաղկացուցիչ մասն են: Հայոց ցեղասպանության պատմության հետազոտողներն անհամեմատ նվազ ուշադրություն են դարձրել այս կարևոր իրադարձության պատմությանը, հավանաբար, այն պատճառով, որ այն չեն դիտել իբրև ցեղասպանության անքակտելի օղակներից մեկը: Կիլիկյան կոտորածները մտահղացել, կազմակերպել և իրականացրել է 1908 թ. հեղափոխության արդյունքում Օսմանյան կայսրությունում իշխանության եկած քաղաքական նոր ուժերի՝ երիտթուրքերի վարչակարգը, սակայն, դրանց իրականացմանն անմաս չեն մնացել նաև իր մայրամուտն ապրող համիդյան վարչակարգի ներկայացուցիչները, մասնավորապես տեղական օսմանյան բարձրաստիճան պաշտոնյաները:

Կիլիկյան կոտորածների պատմությունն ի սկզբանե առ այսօր շատ ավելի մանրակրկիտ է ուսումնասիրվել Ֆրանսիայում, քան որևէ այլ երկրում: Դրանց պատմությանը նվիրված առաջին ուսումնասիրությունները պատկանում են դեռևս իրադարձության ժամանակակից ֆրանսիացի պատմաբանների և մտավորականների գրչին: 1910-ական թվականներին Ֆրանսիայում լույս ընծայված պատմագիտական գրականությունը հարկ է բաժանել երեք հիմնական խմբերի՝ փաստագրական բնույթի հրատարակությունների, բուն իրադարձության պատմությունը լուսաբանող աշխատությունների և Օսմանյան կայսրության պատմությանը

[332] Զոհերի թվաքանակի շուրջ պատմաբանները հայտնել են իրարամերժ կարծիքներ: Ընդհանուր առմամբ նրանք կարծում են, որ զոհված հայերի թիվը տատանվում է 25.000-ից 30.000-ի միջև (տե՛ս, օրինակ, *Dadrian V.*, Histoire du génocide arménien. Conflits nationaux des Balkans au Caucase, Paris, 1996, p. 305 ; *Kévorkian R.H.*, Le génocide des Arméniens, Paris, 2006, p. 100): Փոքր-ինչ այլ է ակադեմիկոս Հ. Սիմոնյանի մոտեցումը. ըստ նրա հաշվարկների՝ զոհերի թիվը հասնում է 40.000-ի: Տե՛ս *Սիմոնյան Հ.*, Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երևան, 2009, էջ 206:

նվիրված հետազոտությունների, որոնցում այս կամ այն չափով մեկնաբանվել է կիլիկյան կոտորածների պատմությունը:

Առ այսօր իրադարձության պատմությանը նվիրված միակ փաստաթղթերի ժողովածուն լույս է ընծայվել 1911 թ. Ժորժ Բրեզոլ կեղծանվամբ հանդես եկած հայազգի Պետրոս Ազնավուրի աշխատասիրությամբ՝ «Այստեղից թուրքերն են անցել» խորագրով[333]: Այն ընդգրկում է մեծ մասամբ հայ ականատեսների և գլխավորապես հայ հոգևոր առաջնորդների վկայությունները՝ զեկուցագրեր, նամակներ և այլն, որոնք հնարավորություն են ընձեռում պատկերացում կազմելու Կիլիկիայում և հարակից տարածաշրջաններում հայ ժողովրդի բնաջնջման գործընթացի վերաբերյալ: Բրեզոլը զետեղել է նաև իրադարձության պատկերը խեղաթյուրող թուրքական փաստաթղթեր:

Հայկական վավերագրերը, որոնց գերակշռող մասում չկան վերլուծություններ, անստորագիր են և նկարագրողական բնույթ ունեն: Դրանց հեղինակները սահմանափակվում են հիմնականում ընդհանուր բնույթի դիտարկումներով, ինչը վկայում է, որ նրանք ոչ միայն դեռևս չեն ըմբռնել իրադարձության իրական պատճառները, այլև ի վիճակի չեն եղել հստակորեն կողմնորոշվել կոտորածների կազմակերպիչների ինքնության բացահայտման՝ ժամանակակիցների համար դեռևս խրթին հարցում, քանզի դրանք հաջորդել են 1909 թ. մայիսի 31-ի սուլթանական հեղաշրջմանը և դրա ճնշմանը երիտթուրքերի կողմից: Նրանք, ըստ էության, բավարարվում են գլխավորապես Ադանայի վիլայեթի կուսակալ Ջևադ բեյի և զինվորական հրամանատար Մուստաֆա Ռեմզի փաշայի հանցագործ դիրքորոշման դատապարտմամբ:

Ընդհանուր առմամբ, հայ ականատեսների մոտեցմանը բնորոշ է Կիլիկիայում սանձազերծված հայկական կոտորածների շաղկապումը սուլթանական հեղաշրջմանը: Նրանց մեկնաբանությունների համար խորհրդանշական է վավերագրերից մեկի հեղինակի խորհրդածությունները, որոնցից կարելի է կռահել, որ

[333] *Brézol G.,* Les Turcs ont passé là… Les Turcs ont passé là… Recueil de documents, dossiers, rapports, requêtes, protestations, suppliques et enquêtes établissant la vérité sur les massacres d'Adana en 1909, Paris, 1911.

միայն Աբդուլ Համիդն էր իրավասու լուծում տալու պետության առջև ծառացած խնդիրներին, ուստի կոտորածների պատասխանատվությունը հարկ է վերագրել միայն սուլթանին:

Հայ ժամանակակիցների, այդ թվում՝ հոգևոր առաջնորդների, շրջանում միանգամայն ակնհայտ է 1908 թ. հեղափոխության արդյունքում Օսմանյան կայսրությունում իշխանության ղեկը ստանձնած երիտթուրք պարագլուխներին հայկական կոտորածների պատասխանատվությունից զերծ պահելու միտումը, ինչը հետևանք է նրանց մոտ արմատացած այն թյուր մտայնության, թե իբր 1908 թ. հեղափոխությունից հետո վերջիններս հետամուտ են եղել 1908 թ. վերահաստատված՝ 1876 թ. սահմանադրությամբ հռչակված դրույթների կենսագործմանը: Ուստի հայ հոգևոր գործիչները կոտորածների իրականացումը պայմանավորում են միայն մարտի 31-ին Կոստանդնուպոլսում տեղի ունեցած սուլթանական հեղաշրջմամբ և միաժամանակ շրջանցում երիտթուրքերի ղեկավար դերը: Չի բացառվում, որ երիտթուրք պարագլուխներին հղած փաստաթղթերում նրանք կիլիկիահայության բնաջնջման պատասխանատվությունը բարդել են միայն համիդյան վարչակարգի վրա՝ գուցեև գիտակցաբար, քանզի գերադասել են ձեռնպահ մնալ իշխանության եկած քաղաքական նոր ուժերի հասցեին բացահայտ քննադատական խոսքեր ուղղելուց՝ նրանց հակահայկական տրամադրվածությունն ավելի չբորբոքելու մտադրությամբ:

Մանրամասնենք, որ հայ հոգևորականները, ելնելով իրենց աշխարհայացքից, կիլիկյան կոտորածների պատճառները վերլուծել են սահմանափակ կտրվածքով, ուշադրությունը կենտրոնացնելով մահմեդականներին և քրիստոնյաներին զանազանող կրոնական առճակատման վրա, ինչը բացահայտ շեղում է պատմական իրականությունից: Այնուամենայնիվ, նրանց հաջողվել է մեկնաբանել կոտորածներին առնչվող մի շարք էական հիմնախնդիրներ: Հատկանշական է, որ նրանց գրագրություններում բազմիցս ընդգծվում է և հիմնավորվում ցեղասպանության՝ իբրև երևույթի, հիմնական բնորոշիչներից մեկի՝ կիլիկիահայության բնաջնջման պարագայում կանխամտածվածության առկայությունը (մահմեդականներին զենք տրամադրելը և այլն):

Հարկ է ընդգծել, որ Ադանայի կաթոլիկ հայերի հոգևոր

առաջնորդ Հակոբ եպիսկոպոս Թերզյանը բացառում է հայերի՝ կոտորածների սանձազերծմանը պատճառ դառնալու հավանականությունը, ինչը խիստ կարևոր է, քանզի դրանով նա հուժկու հակահարված է հասցնում ոչ միայն իր ժամանակակից թուրք պաշտոնյաների, այլև հետագա տասնամյակներում կիլիկյան կոտորածների պատմության աղավաղմանը միտված՝ Հայոց ցեղասպանության պատմությունը նենգափոխող տարբեր հեղինակների առաջադրած ստահոդ մեկնաբանություններին:

Կիլիկյան կոտորածների առնչությամբ նշենք, որ հետաքրքրություն են ներկայացնում նաև ժողովածուում զետեղված օսմանյան պաշտոնյաների գրագրությունները: Դեռևս Ջևադ բեյը կոտորածները լկտիաբար մեկնաբանելով սոսկ իբրև «հուզումներ», դրանց պատասխանատու է համարում մի քանի հայ ֆիդայիների: Ըստ նրա՝ Ադանայում պաշտպանության տակ են գտնվել ոչ միայն օսմանահպատակների թաղամասերը, այլև եվրոպացիներին պատկանող հաստատությունները, ինչը բացարձակապես չի համապատասխանում իրականությանը: Արդարացնելու համար օսմանյան բանակի միջամտությունը կոտորածների երկրորդ փուլին՝ նա դեռևս դրանց սանձազերծման առաջին օրերին իրավիճակը կարգավորելու միակ հնարավոր միջոցը համարում է բացառապես զինված ուժերի միջամտությունը:

Հետաքրքրական է նշել, որ երիտթուրքերի իշխանության վերահաստատումից հետո միայն, ի տարբերություն նախորդ հաղորդագրությունների, Ջևադ բեյն առաջին անգամ օգտագործում է «կոտորածներ» բառը, ինչը պատահականության արդյունք չէ: Կոտորածների պատճառները, սակայն, նա մեկնաբանում է այն «անիրազեկությամբ», որում գտնվում էին մահմեդականներն ու քրիստոնյաները (ինչը, ըստ նրա, պայմանավորված է եղել բռնակալական դարաշրջանով), ինչպես նաև տարբեր ժողովուրդների՝ միևնույն տարածաշրջանում համախմբման ցանկության բացակայությամբ, համակեցության անբավարար ձգտումով: Ակնհայտ է, որ սուլթանական վարչակարգի տապալումից հետո Ջևադ բեյն ընդունում է կոտորածների փաստը, սակայն դրանց պատասխանատվությունը բարդում է միայն նախկին վարչակարգի վրա:

Ժողովածուում հրապարակված են նաև տարբեր փաստաթղթեր, որոնք առնչվում են հայերի ինքնապաշտպանությանը, մահմեդականների կողմից հայերին ցույց տրված օգնությանը, արտասահմանյան քաղաքացիների միջամտությանը, ինչպես նաև պաշտոնական զեկուցագրեր, օրինակ՝ իրադարձության հետաքննությունը վարած հանձնաժողովի անդամ, երիտթուրքական կուսակցությանն անդամագրված հայազգի պատգամավոր Հակոբ Պապիկյանի զեկուցագրից որոշ հատվածներ: Բրեզոլը, ի դեպ, շրջանցել է զեկուցագրի վերջին մասը, որտեղ Պապիկյանը կոտորածների պատասխանատվությունը բացահայտորեն վերագրել է երիտթուրքական վարչակարգին: Նման դիրքորոշումը կարելի է մասամբ մեկնաբանել այն հանգամանքով, որ նա, թերևս, հույսեր է կապել կիլիկիահայերի իրավիճակի բարելավման հարցում իշխանության եկած սահմանադրական ուժերի հետ և, հավանաբար, չի ցանկացել նրանց ավելի բորբոքել: Չի բացառվում նաև, որ երիտթուրքերի հանդեպ ակնկալիքներով լի հրատարակիչը գերադասել է սքողել կոտորածներին ունեցած նրանց վճռական դերը՝ գերլարված իրավիճակը լիցքաթափելու մտադրությամբ:

Թեև Բրեզոլը ջանքեր է գործադրել իրադարձության համապարփակ պատկերը ներկայացնելու ուղղությամբ, այդուհանդերձ, նրա ուշադրությունից վրիպել են մի շարք կարևոր հարցեր, ինչպիսիք են, մասնավորապես, կոտորածների իրական պատճառների, եվրոպական տերությունների քաղաքականության բացահայտումը:

Չնայած այս բացթողումներին, ինչպես նաև որոշ հիմնահարցերի շուրջ, այդ թվում՝ խիստ էական (կոտորածների պատճառների լուսաբանման, պատասխանատուների դիմազերծման), հայկական փաստաթղթերի հեղինակների՝ ընդգծված միակողմանի մեկնաբանություններին, Բրեզոլի հրատարակած ժողովածուի նշանակությունը մեծ է: Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ այն առ այսօր 1909 թ. կիլիկյան կոտորածների պատմությանը նվիրված միակ փաստագրական հրատարակությունն է, որը ժամանակակիցներին, ինչպես նաև հետագա սերունդներին, հնարավորություն է ընձեռել տարատեսակ սկզբնաղբյուրների համադրման

միջոցով պատկերացում կազմել ոչ միայն Կիլիկիայում և հարակից տարածաշրջաններում ծավալված հայկական կոտորածների, այլև հայազգի գործիչների և օսմանյան ղեկավարների՝ իրադարձությանը տված իրարամերժ մեկնաբանությունների մասին: Ըստ այդմ՝ Բրեզոլի ժողովածուն մինչ օրս պահպանում է իր գիտական և ճանաչողական նշանակությունը:

Կիլիկյան կոտորածների պատմությանը Ֆրանսիայում անդրադարձել են իրադարձության սակավաթիվ ժամանակակիցներ՝ Ա. Ադոսիդեսը, Ժ. դ'Անզեն և Ժ. Վեսիեն, որոնց աշխատանքները պատմագիտականից զատ ունեն նաև աղբյուրագիտական նշանակություն[334]:

Նրանց թվում բազմազան հիմնախնդիրների ընդգրկման առումով առավել հետաքրքիր է Ադոսիդեսի աշխատությունը: Նա հերքում է օսմանյան պաշտոնյաների առաջադրած՝ հայկական խռովության կեղծ վարկածը, կոտորածների պատասխանատվությունը հայերի վրա բարդելու հերյուրանքը, շեշտում կոտորածների հակահայկական միտվածությունը, հայ տղամարդկանց հանդեպ դրսևորված առանձնահատուկ դժնի վերաբերմունքը: Ադոսիդեսի արժանիքներից նշենք նաև հայ ժողովրդի կրած նյութական վնասների քննարկումը, կիլիկիահայության բնաջնջման պարագայում կանխամտածվածության առկայության փաստումը, ինչպես նաև օսմանյան իշխանությունների թողտվության և նրանց ղեկավար դերի բացահայտումը տարածաշրջանի տարբեր վայրերում ծավալված կոտորածները նախապատրաստելու գործում:

Ավելորդ չենք համարում պարզաբանել, որ Ադոսիդեսը կիլիկյան կոտորածների կանխամտածվածության և նախապատրաստվածության շուրջ առաջադրում է անհարիր մեկնաբանություններ: Փաստելով, որ «իշխանությունների մի մասը նախապես տեղյակ է եղել ծրագրված կոտորածներին», նա, այնուամենայնիվ, գերադասում է այս հարցը թողնել «օդում կախված», քանզի կոտորածների սանձազերծման համար վերստին էական է համարում սոսկ «կայծի» բռնկումը: Ուստի

[334] *Adossidès A.*, Arméniens et Jeunes-Turcs. Les massacres de Cilicie, Paris, 1910 ; *d'Annezay J.*, Au pays des massacres, saignée arménienne de 1909, Paris, 1910 ; *Vayssié G.*, Les vêpres ciliciennes // « La Revue » (Ancienne « Revue des revues »), 1er novembre 1909, n° 21.

կիլիկյան կոտորածների իրականացումը կանխամտածվածության հիման վրա, Ադոսիդեսը, ըստ էության, ըմբռնում է խիստ սահմանափակ կտրվածքով և այն քննարկում հայերի և թուրքերի դավանանքների զանազանությամբ պայմանավորված՝ մահմեդականների և քրիստոնյաների միջև առկա հակամարտության հարթության վրա:

Ինչ վերաբերում է կիլիկյան կոտորածների իրական պատճառների լուսաբանմանը, ապա նրա մեկնաբանությունները սպառիչ չեն: Նախ՝ նա երբեմն իրադարձության պատճառները շփոթում է շարժառիթների, օրինակ՝ հայերի անզգույշ պահվածքի հետ, բացի այդ, ըստ իր հայեցակարգի, դրանց թվում մեծ նշանակություն է հատկացնում կրոնական զանազանությանը, որը, անտարակույս, չի կարելի դասել պատճառների շարքը:

Օսմանյան տարբեր՝ համիդյան և երիտթուրքական վարչակարգերի՝ 1909 թ. Կիլիկիայում տեղի ունեցած կոտորածների խնդրում կրած պատասխանատվության հարցի շուրջ ևս հեղինակը, ինչպես և նրա ժամանակակիցների գերակշռող մասը, չի ունեցել հստակ դիրքորոշում: Նախ փաստերով նա բացահայտում է երիտթուրքերի չարագուշակ դերը կոտորածների իրականացման հարցում. «Այս վարչակարգը, որից նրանք (հայերը – Վ. Պ.) ակնկալում էին իրենց փրկությունը, դարձավ… նրանց սարսափելի ողբերգության թե՛ պատճառը և թե՛ առիթը»: Հեղինակի այս եզրահանգումը միանգամայն ընդունելի է: Միաժամանակ, սակայն, մեկ այլ առիթով նա նշում է. «Կիլիկիայի հոլոքոստը, անտարակույս, երիտթուրքերի գործը չէ: Այս հրեշավոր հանցափորձի պատասխանատվությունն ամբողջությամբ վերագրվում է հետադիմությանը և համիդյան վարչակարգին»:

Այսպիսով, միանգամայն ակնհայտ է, որ Ադոսիդեսը խարխափում է զանազան հակասությունների մեջ: Անկախ երիտթուրքերի դերի բացահայտման առնչությամբ առաջադրած անհարիր մեկնաբանություններին՝ նա, բազմիցս շեշտելով 1909 թ. ողբերգության սանձազերծման և իրականացման գործում օսմանյան իշխանությունների, այդ թվում՝ տեղական պաշտոնյաների դերը, անուղղակիորեն հավաստում է իրադարձության՝ պետական քաղաքականության մակարդակով ծրագրված լինելու հանգամանքը,

սակայն նրա հիմնական հետևությունների մի մասը, ի վերջո, անհարիր է այս իրատեսական հավաստմանը:

Դ'Անզեն բազմաթիվ համոզիչ փաստերով ապացուցել է 1909 թ. հայկական կոտորածների իրականացումը պետական քաղաքականության մակարդակով՝ Կոստանդնուպոլսից ստացված կարգադրության և կանխամտածվածության հիման վրա, ինչպես նաև տեղական բարձրաստիճան պաշտոնյաների գործուն աջակցությամբ: Այդուհանդերձ, հեղինակին չի հաջողվել անհրաժեշտ պարզություն մտցնել կիլիկիահայության բնաջնջման պատճառների բացահայտման կապակցությամբ: Այս հարցում դ'Անզեյի մեկնաբանությունները ևս խիստ թերի են, քանզի ուշադրությունը գրեթե ամբողջությամբ բևեռում է երկրորդական բնույթի այնպիսի մի հանգամանքի վրա, ինչպիսին է քրիստոնյաների և հատկապես հայերի նկատմամբ մահմեդականների տածած ատելությունը:

Ըստ էության, հեղինակը հիմնավորապես բացահայտում է 1909 թ. կոտորածների սոսկ շարժառիթը՝ կապված 1908 թ. հեղափոխությունից հետո երիտթուրքերի շռայլած խոստումների արդյունքում հայերին համակած ոգևորության հետ, սակայն, ինչը խիստ կարևոր է, միաժամանակ իրավամբ մատնանշում է, որ 1908 թ.՝ 1876 թ. սահմանադրության վերահաստատմանը հաջորդած ժամանակաշրջանում, Մուշեղ եպիսկոպոս Սերոբյանի գործունեության մեջ «հնարավոր չէ գտնել ո՛չ սահմանադրությանը դավաճանելու և ո՛չ իրական դավադրության հետք», ինչը բազմիցս դարձել է շահարկումների առարկա թե՛ թուրք ժամանակակիցների և թե՛ հետագայում պատմության կեղծարարների կողմից, որոնք ջանք ու եռանդ չեն խնայել՝ անիրավացիորեն նրա վրա բարդելու կոտորածների սանձազերծման պատասխանատվությունը:

Ի վերջո, դ'Անզեն իբրև կոտորածների «իրական պատճառ» առանձնացնում է այս «խեղճ ժողովրդի» հանդեպ Աբդուլ Համիդ II-ի տածած ատելությունը: Ակնհայտ է, որ նա բացարձակապես չի կողմնորոշվել 1908 թ. երիտթուրքական հեղափոխության հետևանքով Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած քաղաքական բարդ տեղաշարժերում, ինչը պատճառ է դարձել կիլիկիահայության ողբերգության մեկնաբանության հարցում իրականությանը չհամապատասխանող այս անընդունելի հետևությանը հանգելու համար:

Ելնելով հեղինակի շարադրանքից՝ իրավասու ենք հավաստել, որ ըստ նրա հայեցակարգի՝ հեղափոխությունից հետո երիտթուրքերը պետության ղեկավարմանը որևէ մասնակցություն չեն ունեցել, իսկ իշխանությունը երկրում միահեծանորեն շարունակել է տնօրինել Աբդուլ Համիդը: Այս պայմաններում օրինաչափ է, որ 1909 թ. կոտորածների կազմակերպման պատասխանատվությունը նա բարդում է բացառապես սուլթանի վրա՝ դրանից ամբողջությամբ զերծ պահելով իրական իշխանության զսպանակներն իրենց ձեռքում կենտրոնացրած երիտթուրք պարագլուխներին: Ուստի կիլիկիահայության կոտորածները դ'Անզեն անքակտելիորեն շաղկապում է միմիայն դիրքերը զիջող իշխանությունը պահպանելու անսաստելի ցանկությամբ համակված սուլթանի մտահղացած «սատանայական» ծրագրին: Այսպիսով, դ'Անզեն 1909 թ. հայկական կոտորածները հանիրավի մեկնաբանում է իբրև միայն Աբդուլ Համիդի նախաձեռնությամբ իրականացված իրադարձություն, որը, նրա կարծիքով, ընդամենն առաջադիմական քաղաքական ուժերի՝ երիտթուրքերի դեմ սուլթանի վարած հետադիմական քաղաքականության բաղկացուցիչ մասն էր: Նույնքան անընդունելի են նաև նրա՝ հայերի բնաջնջումը կասեցնելու գործընթացին երիտթուրքերի ունեցած կարծեցյալ մասնակցությանն առնչվող մտորումները, ըստ որոնց՝ նոր գաղափարներին տուրք տված զինվորական իշխանությունները և երիտթուրքական «հզոր կուսակցությունը» կարողացել են ժամանակին թափանցել սուլթանի հանցագործ ծրագրերի էության մեջ և դիմակայել դրանց:

Ժ. Վեսիեի հոդվածը հիմնված է սոսկ կոտորածների՝ Եգիպտոսում, Սիրիայում և Կիպրոսում հանգրվանած հայ, ինչպես նաև թուրք և եվրոպացի ականատեսների վկայությունների վրա: Ի տարբերություն նախորդ հեղինակների՝ նա, ըստ էության, վերաշարադրում է իր զրուցակիցների վկայությունները: Հայ գաղթականները և թուրք ժամանակակիցները 1909 թ. կիլիկիահայության ոչնչացման գործընթացը մեկնաբանում են վերը նշված անհարիր մոտեցումների շրջանակներում: Նրանց թվում ավելի հետաքրքիր են եվրոպացիների վկայությունները, որոնք բացահայտում են օսմանյան տեղական պաշտոնյաների, մասնավորապես, Ջևադ բեյի և Մուստաֆա Ռեմզի փաշայի գիտակցաբար

որդեգրած՝ կիլիկիահայերի շրջանում նկատելի խմորումների ծավալմանը նպաստող և վերջիններիս համար կործանարար հետևանքների հանգեցրած խորամանկ մարտավարությունը, նրանց փութեռանդ մասնակցությունը կոտորածներին, ինչպես նաև սուլթանական կենտրոնական վարչակարգի ղեկավար դերը դրանց կազմակերպման գործում: Սակայն կազմակերպիչների մերկացման խնդրում նրանք ևս, ինչպես դ'Անզեն, հանիրավի պատասխանատու են համարում միայն Աբդուլ Համիդին:

Հիմնավորապես փաստելով կոտորածների երկրորդ փուլի իրականացման ուղղությամբ իշխանությունների նախապատրաստական աշխատանքները, որոնք հաջորդել են սուլթանական հեղաշրջման ճնշմանը, նրանք, այդուհանդերձ, շրջանցում են իշխանության ղեկն իրենց ձեռքում արդեն միահեծանորեն կենտրոնացրած երիտթուրքերի պարագլուխների՝ իբրև իրադարձության կազմակերպիչների կրած պատասխանատվությունը: Այսպիսով, ընդունելով, որ կիլիկիահայության բնաջնջման սանձազերծումը տեղի է ունեցել «պաշտոնապես»՝ նրանք, այդուհանդերձ, դրա պատասխանատվությունը վերագրում են, ի վերջո, ոչ թե իշխանությունը սուլթանական հեղաշրջման ճնշումից հետո գրաված քաղաքական նոր ուժերին, այլ բարդում միայն սուլթանի համախոհների՝ օսմանյան տեղական պաշտոնյաների և «հետադիմության» վրա՝ նկատի ունենալով, հավանաբար, դիրքերը վերջնականապես զիջած սուլթանական վարչակարգի կողմնակիցներին: Ի դեպ, Վեսիեի սակավաթիվ մեկնաբանությունները վկայում են, որ այս հարցում նրա դիրքորոշումն ամբողջությամբ համահունչ է նրա եվրոպացի զրուցակիցների տեսակետներին:

Քննարկվող ժամանակաշրջանում 1909 թ. Լիոնում անստորագիր լույս է ընծայվել «Ադանայի կոտորածները և մեր միսիոներները: Ականատեսների պատմություն» գրքույկը[335], որի հեղինակը միսիոներ է, և ըստ այդմ՝ կոտորածները Կիլիկիայում գերադասում է մեկնաբանել հոգևորականներին խիստ բնորոշ հայեցակարգային դիրքերից, այն է՝ իբրև մահմեդականների և քրիստոնյաների միջև առկա կրոնական հակամարտությամբ պայմանավորված քրիստոնեության դեմ ուղղված իրադարձություն:

[335] Les massacres d'Adana et nos missionnaires. Récit de témoins, Lyon, 1909.

1910-1918 թթ., կիլիկիահայության կոտորածներին հաջորդած տարիներից մինչև երիտթուրքերի իշխանության տապալումը, կիլիկյան կոտորածների պատմությունը ֆրանսիացի պատմաբանները այլևս հավուր պատշաճի չեն ուսումնասիրել: Փոխարենը՝ չխորանալով իրադարձության պատմությանն առնչվող մանրամասների մեջ, նրանք բավարարվել են 1909 թ. կոտորածների՝ ընդհանուր բնույթի գնահատականներով: Ըստ էության, նրանց գերակշիռ մասը, ինչպես և նախորդ հեղինակները, անկարող է եղել բացահայտել թե՛ կոտորածների պատճառները և թե՛ դրանց իրական կազմակերպիչներին՝ երիտթուրքերին:

Պ. Լուին, Ռ. Մուլենը, Ժ. Սամնեն և Ի. Գոբլեն կիլիկյան կոտորածները մեկնաբանում են բացառապես հայերի և մահմեդականների դավանանքների զանազանության հենքի վրա[336]:

Այլք ջանում են բացահայտել 1909 թ. կոտորածների կազմակերպիչներին. եթե Ա. Սարրուն, տուրք տալով անհարկի ծայրահեղությունների, դրանց պատասխանատու է համարում բացառապես համիդյան վարչակարգը[337], ապա կոմս դը Լանդեմոնը և Լյուդովիկոս դը Կոնտանսոնը հայկական կոտորածների պատասխանատվությունը վերագրում են միմիայն երիտթուրքերին, ինչը ևս միակողմանի մոտեցման հետևանք է[338]: Նշված հեղինակների թվում առավել ընդգրկուն մոտեցում է ցուցաբերել Ի. Պոլը՝ 1909 թ. հայկական ջարդերի պատասխանատուների շարքում անուղղակիորեն դասելով թե՛ սուլթանին և թե՛ երիտթուրքերին[339]:

Առաջին աշխարհամարտի բռնկմանը հաջորդած ժամանակաշրջանում ֆրանսիացի պատմաբանների գնահատականները կրել են ակնհայտ փոփոխություններ: 1914 թ. հետո հանդես եկած մի շարք հեղինակներ՝ Է. Դումերգը, Ժ. Բրիկոն, Ռ. Պինոնը,

---

[336] *Louis P.*, Essai sur la Révolution turque // « Mercure de France », 16 mai 1909, n° 286, p. 240 ; *Moulin R.*, Force et faiblesse de la Jeune Turquie, Paris, 1910, p. 26-28 ; *Samné G.* & *Goblet Y.M.*, La vie politique orientale en 1909, Paris, 1910, p. 79.

[337] *Sarrou A.*, La Jeune-Turquie et la Révolution, Paris-Nancy, 1912, p. 90.

[338] *Landemont c[om]te de*, L'Europe et la politique orientale, 1878-1912, Paris, 1912, p. 279 ; *Contenson L. de*, Les réformes en Turquie d'Asie. La question arménienne. La question syrienne. Deuxième édition, Paris, 1913, p. 35.

[339] *Paul I.*, La rénovation de l'Empire ottoman. Affaires de Turquie, Paris, 1909 p. 268.

Ա. Բարբին, Ֆ. Մակլերը հարցը քննարկում են կիլիկիահայության ոչնչացման պատասխանատվությունը միայն երիտթուրքերին վերագրելու դիրքերից՝ շրջանցելով նախկին վարչակարգի դերին և մասնակցությանն առնչվող հանգամանքները[340]: Այս խնդրում հայեցակարգային նման հստակ դիրքորոշման որդեգրումը պայմանավորված է Գերմանիայի և նրա դաշնակից Օսմանյան կայսրություն դեմ Ֆրանսիայի՝ պատերազմի մեջ ընդգրկմամբ: Այս իսկ պատճառով ֆրանսիացի հեղինակները շահագրգռություն են դրսևորել նաև այս միջոցով վարկաբեկելու Ֆրանսիայի գլխավոր ախոյանի դաշնակցին:

Նշենք նաև, որ պատերազմյան ժամանակաշրջանում 1909 թ. կոտորածների պատմությունը քննարկած հեղինակներից Է. Դումերգը, Ռ. Պինոնը և Ա. Բարբին կիլիկիահայության ոչնչացումը համարում են Հայոց ցեղասպանության գործընթացի բաղկացուցիչ մաս[341], ինչը մենք համարում ենք նրանց անժխտելի արժանիքը[342]:

Միաժամանակ, վերոնշյալ ֆրանսիացի հեղինակներից ոմանց աշխատություններում հիմնավորվում են ցեղասպանության՝ իբրև երևույթի ժամանակակից մասնագետների առաջադրած մի շարք էական հայեցակարգային դրույթների՝ պետական քաղաքականության, կանխամտածվածության առկայությունը, 1909 թ. կիլիկիահայության բնաջնջման պարագային միանգամայն բնորոշ լինելու անառարկելի փաստը:

1920-ական թվականների սկզբից ի վեր Ֆրանսիայում մարում է հետաքրքրությունը Հայոց ցեղասպանության պատմության նկատմամբ, քանզի 1923 թվականից Թուրքիայում պետական

---

[340] *Doumergue E.*, L'Arménie. Les massacres et la question d'Orient. Conférence, études et documents, Paris, 1916, p. 24 ; *Bricaud J.*, L'Arménie qui agonise, Paris, 1916, p. 9 ; *Pinon R.*, La suppression des Arméniens. Méthode allemande-travail turc, Paris, 1916, p. 16 ; *Barby H.*, Au pays de l'épouvante. L'Arménie martyre. Préface de M. Paul Deschanel, Paris, 1917, p. 13 ; *Macler F.*, Autour de l'Arménie, Paris, 1917, p. 286-287.

[341] *Doumergue E.*, նշվ. աշխ., 24; *Pinon R.*, նշվ. աշխ., էջ 16; *Barby H.*, նշվ. աշխ., էջ 13:

[342] 1909-1918 թթ. ֆրանսիացի հեղինակների մասին մանրամասն տես *Պողոսյան Վ.*, 1909 թ. հայկական կոտորածները Կիլիկիայում ֆրանսիական պատմագրության գնահատմամբ, Երևան, 2009:

քաղաքականության մակարդակով Հայոց ցեղասպանության փաստը շրջանցվել է լռությամբ: Այդ իսկ պատճառով արևմտյան կապիտալիստական մեծ տերությունները, ելնելով իրենց ռազմավարական շահերից, շահագրգռություն են հանդես բերել Թուրքիային Խորհրդային Միությանը հակադրելու հարցում և, հետևաբար, թուրքական կառավարող շրջաններին հաճոյանալու նպատակով մոռացության են մատնել Հայոց ցեղասպանությունը[343]: Տասնամյակներ շարունակ ստվերում է մնում նաև 1909 թ. կիլիկյան կոտորածների պատմությունը:

Հայոց ցեղասպանության պատմության նկատմամբ հետաքրքրությունը Ֆրանսիայում կրկին աճում է միայն 1960-ական թվականների կեսից՝ կապված Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի հետ: Ուսումնասիրողներն ուշադրությունը բևեռում են գլխավորապես 1915 թ. Մեծ եղեռնի պատմության հիմնահարցերի վրա: Կիլիկիահայության՝ 1909 թ. կոտորածների պատմության գիտական ուսումնասիրությունը Ֆրանսիայում մինչև XX դարի ավարտը հատուկ ուսումնասիրության նյութ չի դառնում[344]: Այդուհանդերձ, 1970-ական թվականներից տարբեր պատմաբաններ Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված ուսումնասիրություններում, թեկուզև թռուցիկ, արժևորում են նաև 1909 թ. կոտորածների պատմությունը: Ըստ այդմ իմաստ ունի ստորև անդրադառնալ միայն նրանց հայեցակարգային մոտեցումներին:

Ֆրանսիացի անվանի պատմաբան Ի. Տերնոնը, 1977 թ. տարակուսում է էական մի հիմնահարցի շուրջ. արդյո՞ք 1909 թ. կոտորածները հարկ է գնահատել իբրև համիդյան վարչակարգի ավանդական քաղաքականության վերջին դրսևորում, թե՞ 1915 թ. ցեղասպանության նախերգանք[345]: Ավելի ուշ նրա հայացքներն այս հարցում բարեշրջվել են. ոչ հեռավոր անցյալում կիլիկիահայության բնաջնջումը նա բնորոշել է իբրև «ցեղասպանային

---

[343] *Margossian N.*, L'avant et l'après du génocide des Arméniens.– «Գիտության գլոբուս», 2005, h. 5, էջ 44-45:

[344] Միայն 1999 թ. լույս ընծայվեց այս հարցի պատմությանը նվիրված առաջին մենագրությունը. *Kévorkian R.H.*, Les massacres de Cilicie d'avril 1909.– La Cilicie (1909-1921). Des massacres d'Adana au mandat français. Volume préparé par Raymond H. Kévorkian, Paris, 1999.

[345] *Ternon Y.*, Les Arméniens. Histoire d'un génocide, Paris, 1977, p. 174.

կոտորած»[346], որով նկատի ուներ մի «միտում, հայտանիշների ամբողջություն, որոնք հիմք են տալիս երկյուղելու ցեղասպանության իրականացումից»[347]:

Տողերիս հեղինակն ի սկզբանե «ցեղասպանային կոտորած» տերմինին գիտական կարևորություն չի տվել, քանզի այն առաջադրած և որդեգրած հեղինակները, անկախ այս կապակցությամբ ամբողջությամբ չհամընկնող մեկնաբանությունների հանգամանքից, ըստ էության, այս կամ այն իրադարձությունը՝ իբրև ցեղասպանություն բնութագրում են՝ ելնելով զոհերի սահմանափակ թվաքանակից, ինչը չի դասվում ցեղասպանության՝ իբրև երևույթի բնորոշիչների շարքը: Վերանայելով իր մոտեցումը՝ Ի. Տերնոնը վերջերս, փաստորեն, իր տարակուսանքն է հայտնել «ցեղասպանային կոտորած» արտահայտությունն օգտագործելու նպատակահարմարության շուրջ՝ այն անվանելով «խուսափողական» (dérobade)[348], և ըստ այդմ 1909 թ. կիլիկյան կոտորածներին տվել է փոքր-ինչ այլ գնահատական. «*Ցեղասպանային բնույթ ունեցող բռնությունների* շարքում Ադանայի կոտորածները հատում են նոր հարթություն»[349] (ընդգծումը մերն է – *Վ. Պ.*), այն է՝ դուրս են գալիս սովորական սահմանից:

Կ. Մուրադյանի հայացքները փոփոխություն են կրել. թեև իր տարբեր աշխատություններում նա 1909 թ. իրադարձությունները բնորոշում է սոսկ որպես կոտորած[350], այդուհանդերձ, Ա. Դաստակյանի հետ մեկտեղ հրատարակած գիտահանրամատչելի գրքույկում դրանք դիտում է իբրև «ցեղասպանային գործընթացի» բաղկացուցիչ մաս, որը սկիզբ է առել 1894-1896 թթ. կոտորածների սանձազերծմամբ[351]:

---

[346] *Ternon Y.*, L'État criminel. Les génocides au XX^e siècle, Paris, 1995, p. 183.

[347] Նույն տեղում, էջ 235:

[348] Տես *Ternon Y.*, Guerres et génocides au XX^e siècle. Architecture de la violence en masse, Paris, 2007, p. 12, 87:

[349] Նույն տեղում, էջ 114:

[350] *Mouradian C.*, L'Arménie, Paris, 1996. p. 53 (2^e éd.: Paris, 2002, p. 56) ; *idem* : La Qusetion d'Orient ou la sanglante agonie de « l'homme malade »,– Revue d'histoire de la Shoah. Le monde , n° 177-178, janvier-août 2003. Ailleurs, hier, autrement : connaissance et reconnaissance du génocide des Arméniens, p. 81.

[351] *Dastakian A.*, *Mouradian C.*, 100 réponses sur Le génocide des Arméniens, Clamecy, 2005, p. 13.

Ա. Կրիկորյանը և Ա. Ասսոն 1909 թ. կոտորածները բնորոշում են իբրև Հայոց ցեղասպանության նախերգանք[352]: Ըստ էության, միևնույն դիրքերից են հարցը մեկնաբանում Ա. Տեր-Մինասյանը և Հ. Պետրոսյանը, որոնք կիլիկյան կոտորածները բնութագրում են իբրև 1915 թ. ցեղասպանության նախատիպ[353]:

Ի տարբերություն նրանց՝ Ժ.-Պ. Ալեմը և Ռ. Գևորգյանը սահմանափակվում են իրադարձությունը սոսկ իբրև կոտորածներ բնորոշելով[354]: Ռ. Գևորգյանի կարծիքով՝ «հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը… մտահղացվել է իբրև թուրքական ազգային պետության կառուցման անհրաժեշտ նախապայման»[355], ուստի Հայոց ցեղասպանությունը նա պարփակում է 1915-1916 թթ. սահմաններում: 1909 թ. կիլիկիահայության կոտորածների պատասխանատվությունը նա վերագրում է երիտթուրքերին՝ միաժամանակ ի դերև բերելով սուլթանական վարչակարգի ներկայացուցիչների դերը, ինչը վկայում է այս խիստ էական խնդրում նրա ցուցաբերած ընդգրկուն և միանգամայն ընդունելի մոտեցման մասին: Ժ.-Մ. Կարզուն ևս իրադարձությունը բնորոշում է իբրև կոտորած, սակայն, ի տարբերություն Ռ. Գևորգյանի, կիլիկյան կոտորածների պատասխանատու է համարում թուրքերին ընդհանրապես, առանց մանրամասնելու, թե քաղաքական ինչ ուժերի մասին է խոսքը[356]:

1890-ական թվականներին սկզբնավորված Հայոց ցեղասպանության փաստը ժխտող ուղղության դրոշակակիրը Ֆրանսիայում XX դարի վերջին քառորդում Պ. Ա. Մոզերն է, որը 1909 թ. կոտորածների հիմնախնդիրները լուսաբանում է իր թուրք և այլազգի նախորդների դիրքորոշմանը համահունչ՝ սոսկ

---

352 *Krikorian A.*, Dictionnaire de la Cause arménienne, Créteil, 2002, p. 15, 22 ; *Asso A.*, Le cantique des larmes. Arménie, 1915. Paroles des rescapés du génocide, Paris, 2005, p. 27.

353 *Ter-Minassian A.*, 1918-1920, La République d'Arménie, 2006, p. 12 ; *Bedrossian H.G.*, Préface // *Duckett Ferriman F.Z.*, Les Jeunes-Turcs et la vérité sur l'Holocauste d'Adana en Asie Mineure en avril 1909, Chamigny, 2008, p. 8.

354 *Alem J.-P.*, L'Arménie, Paris, 1959, p. 54 ; Kévorkian R.H., Le génocide des Arméniens, p. 10.

355 *Kévorkian R.H.*, Le génocide des Arméniens, p. 9.

356 *Carzou J.-M.*, Un génocide exemplaire. Arménie 1915, Paris, 1975, p. 93, 95.

կարծեցյալ հայկական ապստամբության ճնշման անհրաժեշտության հակագիտական հարթության վրա[357]՝ չառաջադրելով, ի դեպ, որևէ նոր կամ ինքնատիպ մեկնաբանություն:

Կիլիկյան կոտորածների պատմության մասին հպանցիկ հիշատակում է ժխտողական ուղղությանը քողարկված ձևով տուրք տվող հայտնի թուրքագետ Ֆ. Ժորժեոնը: Ի տարբերություն Մոզերի՝ նա փաստում է 1909 թ. մարտի 31-ի հեղաշրջման հետևանքով գավառներում տեղի ունեցած «արյունալի խռովությունները», ինչպես նաև հայկական կոտորածները (ի դեպ, միայն Ադանայում): Էականը, սակայն, կոտորածների աշխարհագրական շրջանակների սահմանափակումը չէ: Հեղինակի խորամանկ մարտավարության իմաստը հանգում է, ի վերջո, կիլիկիահայության կոտորածների պատասխանատուների բացահայտման շրջանցմանը: Ժորժեոնը ոչ միայն չի հիշատակում երիտթուրքերի՝ իբրև կոտորածների կազմակերպիչների և ղեկավարների դերի մասին, այլև, ըստ էության, նույնիսկ Աբդուլ Համիդին անվարան զերծ է պահում Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած իրադարձությունների, այդ թվում՝ Կոստանդնուպոլսում իրականացված պետական հեղաշրջման անհաջող փորձի պատասխանատվությունից, ինչը միանգամայն բնորոշ է օսմանյան գահակալին առհասարակ բարեհաճ լույսի ներքո ներկայացնելու՝ գիտակցաբար որդեգրած նրա հայեցակարգին: Արդյունքում՝ Ժորժեոնն անուղղակիորեն ժխտում է «բազում հազարավոր հայերի կոտորածների» իրականացումը Կիլիկիայում պետական քաղաքականության մակարդակով[358]:

Փոխարենը՝ ժխտողական ուղղությանը հարող այլ պատմաբաններ գերադասում են իրադարձության մասին պահպանել լռություն[359]: Թեպետ գործադրած ջանքերին՝ նրանց աշխա-

---

[357] *Moser P.A.*, Arméniens, où est la réalité ? Saint-Aquilin-de-Pacy, 1980, p. 58-61.

[358] *Georgeon F.*, Abdülhamid II. Le sultan calife (1876-1909), Paris, 2003, p. 420. Նույն մոտեցումն է նա ցուցաբերել նաև դեռևս 1989 թ. Ռ. Մանտրանի խմբագրությամբ լույս ընծայված Օսմանյան կայսրության պատմությանը նվիրված ժողովածուում. *Dumont P.* et *Georgeon F.*, La mort d'un empire (1908-1923).– Histoire de l'Empire ottoman. Sous la direction de R. Mantran, Paris, 1989, p. 583.

[359] Տես օրինակ՝ *Mantran R.*, Histoire de la Turquie, Paris, 1952 ; *Garnier J.-P.*, La fin de l'Empire ottoman du Sultan Rouge à Mustafa Kemal, [Paris], 1973.

տանքները չունեն լուրջ տեսակարար կշիռ:

Մեր ուրվագծած, անկասկած, խիստ համառոտ ետնախորքի վրա, այդուհանդերձ, ակնհայտ է, որ ֆրանսիացի ժամանակակից պատմաբանները 1909 թ. կիլիկյան կոտորածները չեն համարում իբրև Հայոց ցեղասպանության գործընթացի բաղկացուցիչ մաս, ինչը պայմանավորված է իրադարձության պատմության հանդեպ նրանց որդեգրած հայեցակարգային մոտեցմամբ, ըստ որի ցեղասպանությունն իրականացվել է 1915-1916 թթ.՝ երիտթուրքերի որդեգրած թուրքիզմի գաղափարախոսության հիման վրա, ինչը մեր կողմից անընդունելի է:

Ամփոփենք. 1909 թ. կիլիկիահայության կոտորածների պատմությունը Ֆրանսիայում, ինչպես և Հայոց ցեղասպանության ժամանակակից պատմագրության մեջ ընդհանրապես, շարունակում է մնալ իրադարձության պատմության խորթ զավակը:

*Ցեղասպանագիտական հանդես, 2013, թիվ 1, էջ 118-127*

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԵՆԵ ՊԻՆՈՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, օգտվելով ընձեռված ավելի քան պահեի առիթից՝ երիտթուրքերը վճռեցին ավարտին հասցնել Աբդուլ Համիդ II-ի հայաջինջ քաղաքականությունը և պետական մակարդակով սանձազերծեցին Մեծ եղեռնը՝ Ի. դարի առաջին ցեղասպանությունը: Ժան-Պիեռ Կարզուն այն իրավամբ բնորոշել է իբրև «օրինակելի» ցեղասպանություն[360], որն ըստ ցեղասպանության՝ իբրև երևույթի, ամերիկացի ճանաչված գիտակ Ռոբերտ Մելսոնի հայեցակարգի, հարկ է դասել համատարած (էթնիկական ընդհանրության համատարած բնաջնջման նպատակ հետապնդող) և ներքին (բնաջնջումն իրականացնող պետության տարածքում տեղի ունեցած) ցեղասպանությունների շարքը[361]:

Ֆրանսիայում, ինչպես նաև այլ երկրներում, Հայոց մեծ եղեռնն աննկատ չի մնացել: Տարբեր ֆրանսիացի գործիչներ, լրագրողներ, այդ թվում պատմաբաններ, այս իրադարձությանը ոչ միայն անդրադարձել են իրենց ելույթներում, այլև գրքեր են նվիրել դրա ծավալման ընթացքին և առանձնահատկությունների բացահայտմանը[362]: Նրանց թվում նպատակահարմար ենք գտնում առանձնացնել Անրի Բարբիին և Ռենե Պինոնին, որոնց գրքերն ունեն ոչ միայն ճանաչողական նշանակություն, այլև աչքի են զարնում հեղինակների վերլուծական մոտեցմամբ[363]:

Ռենե Պինոնն առավել հայտնի է միջազգային հարաբերությունների, մասնավորապես Արևելյան հարցի պատմությանը

---

[360] *Carzou J.-M.*, Un génocide exemplaire. Arménie 1915, Paris, 2006.

[361] *Melson R.*, Problèmes soulevés par la comparaison entre le génocide arménien et l'Holocauste.– L'actualité du génocide des Arméniens. Actes du colloque organisé par le Comité de Défense de la Cause arménienne à Paris les 16, 17 et 18 avril 1998, p. 379.

[362] Տես այդ մասին *Hovhannisian R.*, The Armenian Holocaust. A Bibliography Relating to the Deportations, Massacres, and Dispersion of the Armenian People, 1915-1923, Cambridge (Massachusetts), 1980.

[363] Ա. Բարբիի գրքի մասին տես *Պողոսեան Վ.*, Հայոց ցեղասպանութեան ընկալումը Անրի Բարբիի կողմից // «Հանդէս ամսօրեայ», 2007, թիվ 1-12, էջ 335-362:

նվիրված իր գիտական ուսումնասիրություններով[364], որոնցում Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած խմորումներին (լինելով դրանց ժամանակակիցը) տվել է դիպուկ գնահատականներ: Այդ մասին վկայում են թուրքերին առնչվող նրա թեպետ հակիրճ, սակայն փոխարենը իրատեսական որոշ դիտարկումներ, որոնք աստիճանաբար, օսմանյան իշխանությունների ազգային քաղաքականության ծավալմանը զուգընթաց կրել են զգալի փոփոխություններ և վկայում են նրա հայացքների բարեշրջման մասին: Նախքան 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունը՝ Օսմանյան կայսրության անցյալին քաջատեղյակ Պինոնը թուրքերի «քաղաքակրթական առաքելության» շուրջ հույսեր չի տածել: Դեռևս 1908 թ. նրա աչալուրջ հայացքը կանխատեսել է իրադարձությունների զարգացման ոչ այնքան բարեհաճ հեռանկարը. «Ինչ են անելու թուրքերը, եթե նրանք ի վիճակի չեն կերպարանափոխության և առաջադիմության, ինչպես կարծում են ոմանք. այդժամ հարկ է սպասել սաստիկ ճգնաժամերի»[365]: 1908 թ. Օսմանյան կայսրությունը ցնցած եղելությունները, որոնք հարկ է բնութագրել միայն իբրև միևնույն ընկերային-տնտեսական ֆորմացիայի ընդերքում տեղի ունեցած բուրժուական հեղափոխություն[366], բազմահազար ժամանակակիցներին, անկախ ազգային և կուսակցական պատկանելությունից, մոլորության մեջ են ձգել: Ի տարբերություն այլոց՝ շատ ավելի խոհեմ ֆրանսիացի պատմաբանը երիտթուքական հեղափոխության հետ վարդագույն հույսեր չի կապել: 1911 թ. նա գերադասել է խիստ չափավոր կարծիք հայտնել այլազգի հպատակների հանդեպ երիտթուրքերի որդեգրած քաղաքականության շուրջ. «Դեռևս շատ վաղ է վերջնական կարծիք հայտնել երիտթուրքերի գործունեության մասին, հեղափոխությունն ավարտին չի հասել, և մենք կարող ենք կանխատեսել, որ այն մեզ բազմիցս հնարավորություն կընձեռի իր մասին խոսելու. ցանկանք,

[364] *Pinon R.*, L'Europe et l'Empire ottoman. Les aspects actuels de la question d'Orient, Paris, 1908 ; *նույնի*՝ L'Europe et la Jeune Turquie. Les aspects nouveaux de la question d'Orient, Paris, 1911.

[365] *Pinon R.*, L'Europe et l'Empire ottoman. Les aspects actuels de la question d'Orient, p. 574.

[366] Բուրժուական հեղափոխությունների տիպաբանության մասին տես *Барг М.А.*, *Черняк Е.Б.*, Великие социальные революции XVII-XVIII веков, М., 1990, с. 224:

որ այն լինի այնպիսին, որ իր մասին մեզ դրականորեն արտահայտվելու տեղիք տա»[367]:

Սակայն երիտթուրքերի ազգային քաղաքականությունը չի հապաղել ամբողջությամբ ի հայտ բերելու ազգային փոքրամասնությունների նկատմամբ նրանց կիրառած այլատյաց քաղաքականության բուն դիմագիծը, ինչը Պինոնին դրդել է կռահելու «ազատական» գաղափարներ թեականորեն առաջադրած՝ Օսմանյան կայսրությունում իշխանության եկած նոր ուժերի քաղաքականության ազգայնամոլ բնույթը: Այդ մասին է վկայում Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված՝ «Հայերի բնաջնջումը. գերմանական մեթոդ, թուրքական գործ», նրա փոքրածավալ, բայց արժեքավոր գիրքը[368]: Այն գրի է առել 1916 թ., Օսմանյան կայսրությունում 1915-1916 թթ. ծայր առած՝ արևմտահայերի զանգվածային կոտորածների և տեղահանությունների անմիջական տպավորության տակ. նա հիմնվելով տարբեր օտար ականատեսների անաչառ վկայությունների վրա՝ ոչ միայն հիմնավորապես բացահայտել է երիտթուրքերի ցեղասպան քաղաքականության դիմագիծը, անկողմնակալ դիրքերից արժևորել Հայոց ցեղասպանությանն առնչվող բազում կարևոր հիմնախնդիրներ, այլև պախարակել Գերմանիայի խիստ ընդգծված թրքամետ դիրքորոշումն այս հարցում:

Իմաստ ունի նախ անդրադառնալ Ռ. Պինոնի՝ Հայոց ցեղա-

---

[367] *Pinon R.*, L'Europe et la Jeune Turquie. Les aspects nouveaux de la question d'Orient, p. XIII.

[368] Տե՛ս *Pinon R.*, La suppression des Arméniens. Méthode allemande – travail turc. Deuxième édition, Paris, 1916 (այսուհետ սույն գրքի մեջբերումները՝ շարադրանքի մեջ փակագծերում): Նշենք, ի դեպ, որ սույն գրքի առաջին հրատարակությունը, առանց ստորագրության, լույս է տեսել «Ռևյու դե դո մոնդ» ամսագրում. ***, La suppression des Arméniens. Méthode allemande – travail turc // « Revue des deux mondes », t. 38, 3[e] livraison, 1[er] février 1916, p. 531-560: Պինոնի այս գրքին Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ, ըստ դրա հայերեն թարգմանության (տե՛ս *Բինօն Ռ.*, Հայերու բնաջնջումը: Գերմանական մէթոտ - թուրքական գործելակերպ, թարգմանեց Եդուարդ Չոբուրեան, Կ. Պոլիս, 1919), հպանցիկ հայացք են նետել պատմագիտության մի քանի ներկայացուցիչներ՝ իրենց ուշադրությունը կենտրոնացնելով գլխավորապես Գերմանիայի հակահայկական քաղաքականության վերլուծության վրա. տե՛ս *Կարապետյան Մ.*, *Գևորգյան Է.*, *Մելքոնյան Է.*, *Աբգարյան Ա.*, Հայոց Մեծ եղեռնի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Երևան, 2010, էջ 48-49:

սպանությանը վերաբերող գնահատականներին: Ֆրանսիացի պատմաբանը համառոտակի անդրադարձներ է կատարում հայերի և թուրքերի միջև դարերից ի վեր ձևավորված փոխհարաբերությունների «ցավալի և արյունոտ» պատմությանը, թուրքերի ատելությունը հայերի նկատմամբ պայմանավորում վերջիններիս կրոնով, ինտելեկտուալ գերազանցությամբ, առևտրի և արհեստների բնագավառներում ունեցած ավելի բարձր ունակություններով (էջ 13-14): Միաժամանակ նա անավարան ընդգծում է նաև հայերի իրավազուրկ կացությունն Օսմանյան կայսրությունում, նշում, որ նրանց հանդեպ կիրառվող կողոպուտը և կոտորածը տեղի էր ունենում օսմանյան տարատեսակ պաշտոնյաների հրահանգով կամ առնվազն թողտվությամբ (էջ 14):

Ի սկզբանե նշենք, որ ԺԹ. դարավերջին և Ի. դարասկզբին օսմանյան իշխանությունների պարբերաբար կազմակերպած՝ արևմտահայության զանգվածային կոտորածները, թեպետ Պինոնն *ուղղակիորեն* չի դիտում իբրև միասնական գործընթաց, այնուամենայնիվ, հիշատակելով 1894-1896 թթ. և 1909 թ. հայկական կոտորածների մասին (էջ 14, 16)՝ փաստում է, որ Միություն և առաջադիմություն կոմիտեն որդեգրել էր Հայկական հարցին՝ հայերին ոչնչացնելու միջոցով լուծում տալու, Աբդուլ Համիդ II-ի կյանքի կոչած տարբերակը (էջ 16): Դրանով իսկ օսմանյան տարբեր վարչակարգերի կողմից հայ ժողովրդի բնաջնջումը նա, փաստորեն, *անուղղակիորեն* ներկայացնում է իբրև թե՛ պետական քաղաքականության մակարդակով և թե՛ դիտավորության հիման վրա տեղի ունեցած շարունակական իրադարձություն, որոնք ցեղասպանության՝ իբրև երևույթի, հիմնական բաղադրիչներից են:

Սույն գրքում արդեն երիտթուրքական վարչակարգը Պինոնը համարում է շատ ավելի «ճնշող և բռնակալական», քան Աբդուլ Համիդի կառավարությունը: Համառոտակի անդրադառնալով 1908 թ. հեղափոխությանը հաջորդած՝ վերջիններիս սին, մասնավորապես «իրավունքի և ազատության» վրա հիմնված վարչակարգ հաստատելուն առնչվող հայտարարություններին՝ Պինոնը եզրակացնում է. «Նրանց ստեղծած պատրանքն արագ հողմացրիվ եղավ: Երիտթուրքական վարչակարգը… նետվեց բացառապես մահմեդական, կենտրոնացնող և թուրքական քաղա-

քականության գիրկը» (էջ 15)։ Ըստ նրա շարադրանքի տրամաբանության՝ կարելի է հավաստել, որ այս միանգամայն իրատեսական հետևությանը նա հանգել է՝ ելնելով գլխավորապես «1909 թ. Ադանայի կոտորածի» փորձից, որի պատասխանատվությունը, ի դեպ, իրավացիորեն վերագրում է՝ դրանով իսկ իրենց հայատյաց քաղաքականության էությունն անմնացորդ բացահայտած երիտթուրքերին (էջ 16)։

Արևմտահայության բնաջնջման գործում երիտթուրքական վարչակարգի ունեցած վճռորոշ դերի բացահայտման խնդրում Պինոնի գնահատականները հատու են և անողոք։ Նշելով 1912-1914 թթ., մասնավորապես բալկանյան պատերազմների ժամանակաշրջանում, Օսմանյան կայսրությունում արևմտահայության հանդեպ իրագործված բռնությունների՝ կողոպուտների, սպանությունների, բռնի կրոնափոխության, կանանց առևանգման մասին, նա ոչ միայն բացահայտում է հայ ժողովրդի ոչնչացման տարատեսակ եղանակները, ինչպես նաև շարունակական բնույթը, այլև մոռացության չի մատնում եվրոպական տերությունների միջամտության դրական հետևանքները, ինչը խոչընդոտել է հայերի բնաջնջման գործընթացի ծավալումը այդ տարիներին։ Արդյունքում, նա հանգում է միանգամայն ընդունելի հետևության՝ փաստելով, որ Հայկական հարցին թուրքական եղանակով «լուծում տալու», այն է՝ արևմտահայության ցեղասպանության, ամենանպաստավոր առիթն օսմանյան կառավարությանն ընձեռվել է Առաջին աշխարհամարտի բռնկման իսկ պահից (էջ 9)։ Այդուհանդերձ, արձանագրելով սույն անհերքելի փաստը (էջ 9, 16), նա ձեռնպահ է մնում Հայոց ցեղասպանության պատճառների, մասնավորապես Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանումն ապահովագրելու՝ օսմանյան տարբեր վարչակարգերի ցանկության մեկնաբանությունից, որոնք նրա համար, հավանաբար, դեռևս եղել են անըմբռնելի։

Փոխարենը, ըստ բազում փաստերի՝ Պինոնը հիմնավորապես բացահայտում է հայ ժողովրդի ոչնչացումը երիտթուրքական վարչակարգի կողմից պետական քաղաքականության մակարդակով և կանխամտածվածության հիման վրա, ինչը նրա մոտեցման անժխտելի առավելություններից է. «Երբ խոսքը վերաբերում է

կոտորածներին…,– գրում է նա,– Կոստանդնուպոլսի կարգադրություններին անշեղորեն հնազանդվել են: Իշխողների պատասխանատվությունը, այսպիսով, կատարյալ է և աններելի» (էջ 18-19): Միաժամանակ նա չի անտեսում կատարածուների դերակատարությունը, որոնց ջանադրությունը, ինչպես նշում է, երբեմն գերազանցել է վերադասների ցանկությունը (էջ 19):

Երիտթուրքական կառավարության հայատյաց քաղաքականությունը Պինոնը մերկացնում է նաև 1914 թ. ձեռնարկված զորահավաքի մանրազնին քննարկման հիման վրա, որն արևմտահայության հանդեպ կիրառել է «անօրինական և ճնշող», «կամայական» միջոցառումներ, զորակոչելով տասնութից քառասունութ տարեկան տղամարդկանց՝ գիտակցաբար խախտելով երկրում գործող՝ միայն քսանից մինչև երեսունհինգ տարեկան քրիստոնյա հպատակների զորակոչը նախատեսող օրենքը: Միաժամանակ նա փաստում է «զորակոչված» հայազգի տղամարդկանց զենք չհատկացնելու, սոսկ ամենածանր աշխատանքներ կատարելու համար նախատեսված աշխատանքային ջոկատներում նրանց ընդգրկելու իրողությունները (էջ 20-21): Դրանով հեղինակը բացահայտում է հայ բնակչությանը մարտունակ տղամարդկանցից զրկելու հարցում կառավարության դրսևորած վճռականությունը և հանգում տրամաբանական հետևության. «Դժվար է ասել, թե արդեո՞ք այս դժբախտները զինվորներ էին, որոնց զորակոչել էին՝ երբևէ նրանց վստահությունը շահելու համար ոչինչ չարած հայրենիքը պաշտպանելու նպատակով, թե պատանդներ, գրեթե դատապարտյալներ» (էջ 21):

Այդուհանդերձ, Պինոնի հիմնական նպատակը թե՛ 1915-1916 թթ. տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների համայնապատկերի ուրվագծումն է և թե՛ դրանց պատասխանատուների առավել հիմնավոր դիմազերծումը: Այս խնդրում նրա նախընտրած մարտավարությունն ինքնատիպ է, քանի որ Մեծ եղեռնին առնչվող մանրամասները նա գերադասում է ներկայացնել անաչառ ականատեսների վկայություններից կատարված ընդարձակ քաղվածքների միջոցով: Համոզված, որ «այս սարսափների և զարհուրանքների տեսարաններին դեմհանդիման՝ հարկ է խոսքը տրամադրել ականատես վկաներին» (էջ 30), հեղինակը հղում է

կայսրության տարբեր վայրերում տեղի ունեցած կոտորածների՝ գլխավորապես այլազգի ականատեսների հուշերը, որոնց թվում են Խարբերդում և Տրապիզոնում ԱՄՆ-ի հյուպատոսները, գերմանական Կարմիր Խաչի նորվեգուհի բուժքույր Ֆլորա Յարլսբերգը, գերմանական տարբեր ամսագրերում տպագրված վկայությունների անհայտ հեղինակները և այլք (էջ 28-58), խուսափելով նրանց հաղորդած անկողմնակալ տեղեկությունների վերաշարադրումից:

Պինոնն իր առջև խնդիր է դնում ըստ նշված սկզբնաղբյուրների վերլուծել Մեծ եղեռնի առանձնահատկությունները և տալ այն իրականացնողների անկողմնակալ գնահատականները, ինչը շատ ավելի արժեքավոր է: Ելնելով ականատեսների վկայություններում արձանագրված հավաստի տեղեկություններից՝ նա շեշտում է գլխավորապես օսմանյան պետության կողմից կազմակերպված հայկական կոտորածների կանոնավոր և հետևողական բնույթը, առաջնությունն այս հարցում հատկացնելով ոչ թե թուրք բնակչության՝ հայերի նկատմամբ դրսևորած վայրագության մոլուցքին, այլ երիտթուրքական կառավարության ղեկավար դերին. «Գործողությունը սկսվում է գյուղերում փակցված կառավարության ծանուցագրի հիման վրա. Կոստանդնուպոլսի հրահանգները հասնում են բարձրաստիճան պաշտոնյաներին, իսկ նրանց միջոցով կատարածուներին… Ամեն ինչ տեղի է ունենում սարսափելի հաջորդականությամբ»,– եզրակացնում է նա (էջ 59)՝ բացառելով հայկական կոտորածների հարցում պատահականության հնարավորությունը:

Ֆրանսիացի պատմաբանը թեև ամբողջությամբ, ինչպես վերը նշվեց, շրջանցում է Մեծ եղեռնի պատճառների բացահայտումը և քննարկումը, այդուհանդերձ, չի անտեսում երիտթուրքերի որդեգրած՝ թուրքիզմի գաղափարախոսության հիման վրա հայ ժողովրդի բնաջնջման փաստը (էջ 12): Հիմք ընդունելով հեղինակի շարադրանքը՝ կարելի է հավաստել, որ նա ոչ միայն խորամուխ չի լինում թուրքիզմի գաղափարախոսության մեկնաբանության առէջքներում, այն չի դիտարկում իբրև արևմտահայության եղեռնի հիմնական պատճառներից, այլև չի բացահայտում դրա և հայ ժողովրդի ողբերգության առանձնահատկությունների միջև առկա պատճառակցական, փոխադարձ և սերտ

կապը: Այդուհանդերձ, նրա իսկ թվարկած փաստերն անուղղակիորեն եվրոպական հանրության սեփականությունն են դարձրել թուրքիզմի գաղափարախոսության հիմնական բաղադրիչները, որոնցով պայմանավորված էին արևմտահայության բնաջնջման յուրահատկությունները: Պինոնը, օրինակ, թուրքիզմի գաղափարախոսությունը համարում է «հայերի սարսափելի տեղահանությունների պատճառը» (էջ 16), որոնց իր պատումում հատկացնում է նշանակալից տեղ:

Հայերի զանգվածային տեղահանությանն առնչվող՝ կառավարության կայացրած որոշումը[369] նա իրավամբ դիտում է իբրև երիտթուրքերի ձեռնարկած կանխամտածված քայլ, որի ընդունումը մեկնաբանում է, դրա համար ունենալով բոլոր իրավունքները, ռազմաճակատում դաշնակիցների կրած անհաջողություններով: «Իրենց չարագուշակ ծրագրերի իրականացման համար երիտթուրքերը սպասում էին միայն նպաստավոր առիթի»,– նշում է նա (էջ 27): Ըստ այդմ՝ Պինոնը Հայոց ցեղասպանության իրականացման տարբեր եղանակների թվում մեծ տեղ է հատկացնում արևմտահայության զանգվածային տեղահանությանը, մանրամասնելով հայերից բաղկացած քարավանների գումարումը նշված ժամին և վայրում, ավարի իրենց բաժինը յուրացնելու ծարավի քուրդ ելուզակներին և ավազակներին նախապես տրված հրահանգները՝ հերթական անգամ հավաստելով պետական պաշտոնյաների ղեկավար դերը Հայոց ցեղասպանության իրականացման գործում:

Հարկ է չանտեսել՝ Պինոնի ուշադրությունից չեն վրիպել նաև թուրքիզմի գաղափարախոսությամբ պայմանավորված այլ էական հանգամանքներ ևս, ինչիսիք են նրա թվարկած՝ Բոսնիայի և Մակեդոնիայի վտարանդի մահմեդականներին իբրև գաղութաբնակներ սպանված հայերի տներում բնակեցնելու, հայ կանանց և որբերին բժշկական քննության ենթարկելուց հետո կանոնավոր ձևով թուրքերին բաշխելու, որբերի մի մասին՝ մահ-

[369] Նշենք, որ թեև արևմտահայության տեղահանության մասին օրենքն օսմանյան նախարարների խորհրդում ընդունվել է 1915 թ. մայիսի 14/27-ին, Պինոնը, սակայն, այս հարցում, ինչպես և իր ֆրանսիացի ժամանակակիցներից ոմանք (Ա. Բարբի, Է. Դումերգ), թույլ է տվել անճշտություն՝ այն թվագրելով 1915 թ. մայիսի 20-ով (հունիսի 2-ով): Այդ մասին տես *Պօղոսեան Վ.*, նշվ. աշխ., էջ 344-345:

մեդականների համար նախատեսված մանկատներին հանձնելու և քրիստոնյաներին՝ որբացած մանուկների ճակատագրով հետաքրքրվելու արգելման իրողությունները (էջ 59-60): Այս հանգամանքները, որոնք Հայոց ցեղասպանությունն էականորեն զանազանում են տարբեր ժողովուրդների (մասնավորապես՝ միայն մահվան դատապարտված հրեաների) ցեղասպանություններից, ակնբախորեն վկայում են հայ ժողովրդի՝ թուրքիզմի գաղափարախոսության հիման վրա տեղի ունեցած բնանջնման մասին, գաղափարախոսություն, որը նախատեսում էր Օսմանյան կայսրության տարածքի մաքրազարդումն այլազգի հպատակներից, այդ թվում բոլոր ժողովուրդների ձուլման, այն է՝ թրքացման, եղանակով: Ըստ այս ամենի՝ Պինոնը հանգում է միակ հնարավոր հետևության. «Այսպիսին է հայ ժողովրդի համատարած բնաջնջումը, որին հետամուտ էին՝ մահվան կամ բռնությամբ իսլամի կրոնափոխելու միջոցով» (էջ 61, 71): Փաստելով նաև Հայոց ցեղասպանության գործընթացի հարատևումը 1916 թ.՝ նա մատնանշում է հայ ժողովրդի ոչնչացման շարունակումը տեղահանության քողի տակ (էջ 71), ինչը համահունչ է ցեղասպանությունը դատապարտող՝ ՄԱԿ-ի Գլխավոր նստաշրջանի՝ 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունած «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի երկրորդ հոդվածի երրորդ կետին[370], ըստ որի՝ տեղահանությունները հարկ է դիտել իբրև ցեղասպանություն:

Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի համատարած ոչնչացման հետևանքների առնչությամբ, Պինոնը՝ համոզված, որ «թուրքի համար, կառավարման արվեստը հանգում է ավերման», և հաշվի առնելով հայերի ունակություններն ու մտավոր կարողությունները՝ արձանագրում է. «Հարյուր հազարավոր հայերի կոտորածը կործանեց Ասիական Թուրքիայի ամբողջ արդյունաբերությունը և առևտուրը» (էջ 74): Այս եզրակացությամբ նա ի ցույց է դնում Օսմանյան կայսրության համար հայ ժողովրդի բնաջնջման խիստ բացասական հետևանքները:

[370] Տես Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментария. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментарий Барсегов Ю.Г., т. 1, М., 2002, с. 29:

Պինոնն ուշադրությունը բևեռում է նաև արևմտահայության տեղահանությանը հաջորդած շատ այլ իրողությունների, այդ թվում պետության կողմից և հօգուտ պետության՝ ոչնչացված և տեղահանված հայերի սեփականության և անշարժ գույքի բռնագրավման վրա, սոսկ ակնարկելով, սակայն չմատնանշելով, 1915 թ. սեպտեմբերի 26-ին Բարձր Դռան կողմից ընդունված՝ 11 կետից բաղկացած, «Այլ վայրեր տեղափոխված անձանց ունեցվածքներին, պարտքերին և հավատարմագրերին վերաբերող նախնական օրենքը»[371], ինչն ինքնին հավաստում է պետական մարմինների անմիջական մասնակցությունն արևմտահայության ունեցվածքի անթաքույց կողոպուտին:

Պակաս կարևոր չեն Պինոնի անդրադարձները՝ Հայոց ցեղասպանության պատմագրության ժխտողական ուղղության ներկայացուցիչների կողմից՝ ԺԹ. դարի 90-ական թվականներից առ այսօր, բազմիցս շահարկված հայկական ապստամբության վարկածին, որոնք պայմանավորում են նրա մոտեցման այժմեականությունը: Այս խնդիրն ուղղակիորեն առնչվում է արևմտահայության բաղձանքներին, ուստի օրինաչափ է, որ դրանք ևս չեն վրիպել հեղինակի ուշադրությունից: Օսմանյան կայսրությունում բնակվող հայերին դիտելով իբրև «բավականին ուժեղ ազգային և քաղաքական խմբավորում»՝ Պինոնն արձանագրում է նրանց՝ բուն կայսրության տարածում վարչական ինքնավարություն ձեռք բերելուն հանգող միակ ցանկությունը, որի իրականացման պարագայում հայերը կարող էին դառնալ «առաջադիմության խմորիչ և քաղաքակրթության օջախ» (էջ 6): Իր հիմնական հետևությունը նա հիմնավորում է եվրոպական պետությունների՝ Օսմանյան կայսրությունում հայերի վիճակի բարելավմանն ուղղված բարենորոգումների իրականացման նպատակ հետապնդող միջամտությամբ, ուշադրություն դարձնելով, մասնավորապես 1912-1914 թթ. այս ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներին: Ուստի 1912 թ. Հայկական հարցի հանդեպ մեծ տերությունների ցուցաբերած հետաքրքրության նոր ալիքի

[371] Նույն տեղում, էջ 60: Օրենքի բնագիրը տես *Պեյլերյան Ա.*, Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հ I: Փաստաթղթերի ժողովածու, ֆրանսերենից թարգմանեց՝ Վարուժան Պողոսյանը, Երևան, 2005, էջ 107-109:

վերհանման կապակցությամբ նա անվարան մատնանշում է «հեղափոխական ցանկացած մարտավարությունից» հայերի հրաժարման փաստը (էջ 8): Նա, թեև չի ժխտում նույնիսկ Առաջին աշխարհամարտի բռնկումից հետո հայ ժողովրդի համակրանքը Անտանտի տերությունների նկատմամբ, այդուհանդերձ մանրամասնում է, որ Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայերը, չնայած պատերազմի սանձազերծումից ի վեր կառավարության՝ նրանց հանդեպ կիրառած ապօրինի և կեղեքիչ միջոցառումներին, պահպանել են, այդուհանդերձ, իրենց նվիրվածությունն օսմանյան պետությանը (էջ 20-21): Նրա եզրահանգումներից մեկը միանգամայն ընդունելի է և օրինաչափ. «Չնայած այդչափ տագնապալի նախանշաններին և կամայական գործողություններին, Հայաստանում ապստամբություններ տեղի չեն ունեցել» (էջ 22):

Արևմտահայերի կազմակերպած դիմադրական շարժումները Պինոնը մեկնաբանում է նրանց նկատմամբ 1914 թ. դեկտեմբերից ի վեր կիրառված հանցափորձերով և կոտորածներով, որոնք նրանց դրդել են կայսրության տարբեր բնակավայրերում (Վանում, Զեյթունում, Մուշում և այլուր) դիմելու ինքնապաշտպանության. «Ամենուր, այս տեղական դիմադրությունները մարդկանց (որոնց հայտնի էր իրենց մահվան դատապարտված լինելը) օրինական պաշտպանությունները, ճնշվեցին արյան մեջ»,– նշում է նա (էջ 23):

Չնայած իրականությանն ամբողջությամբ համապատասխանող տարատեսակ արժանահավատ փաստերի վկայակոչմանը և դրանցից բխող իրատեսական նշված հետևություններին, Պինոնը հայտնում է սակայն նաև մեկ այլ, դրանց հակասող կարծիք, ըստ որի՝ «խիստ դժվար է ճշգրտորեն» սահմանել պատասխանատվությունների բաժինն առ այն, թե արդեո՞ք առաջին կոտորածը հաջորդել, թե նախորդել է դիմադրություններին: Ըստ նրա՝ այդ մասին վերջնական կարծիք հատնելը դժվար է, քանի որ, ինչպես նա է մեկնաբանում, տարաբնույթ իրադարձությունները եղել են այնքան կապակցված և ինքնաբուխ, որ «պատմությունը չի կարողանա դրանք սահմանազատել» (էջ 23-25): Պինոնն ամենևին չի հանդիմանում հայերին՝ ջանալու համար «որոշ վայրերում կանխարգելել դահիճներին», միաժամանակ սակայն չի կարծում, որ որևէ մեկն իրավասու է տրտնջալու պատե-

րազմական գործողությունների ժամանակ ապստամբությունները ճնշելու հարցում թուրքերի պահվածքից, քանի որ դիմադրական շարժումները կարող էին ռազմաճակատներում նպաստել նրանց թշնամիների առաջընթացին:

Նման հակասական մեկնաբանությունները, հավանաբար, պայմանավորված են եղել դեռևս առավել ստույգ տեղեկությունների բացակայությամբ: Այնուամենայնիվ, քննարկվող խնդրի շուրջ իր ունեցած տեղեկատվության շրջանակում անկողմնակալ և անշահախնդիր մոտեցում ցուցաբերող ֆրանսիացի պատմաբանն անվերապահորեն փաստում է, որ «ապստամբություններն անգթորեն ճնշելը և մի ամբողջ անմեղ ժողովրդի կանոնավոր և բարբարոսական ոչնչացումը միմյանց հետ որևէ առնչություն չունեն» (էջ 27): Արդյունքում, նրա վերջնական եզրակացությունը հնչում է իբրև դատավճիռ. «Երիտթուրքերի վարչակարգն ամբողջությամբ պատասխանատու է «Հայաստանի սարսափների» համար…, ոչինչ չի կարող ներել զորակոչված հայերի սպանությունն իրենց զինակիցների կողմից, երեխաների, ծերունիների կոտորածը, վերապրածների բռնի կրոնափոխությունը, կազմակերպված կողոպուտը, ինչպես նաև այն գարշանքները, որոնց նկարագրությունից գրիչը խույս է տալիս և որոնք հարկ կլինի՝ հանուն մարդկության պատվի, ջնջել պատմության էջերից» (էջ 61):

Սույն հարցին շաղկապվում են երիտթուրքերի պարագլուխների՝ արևմտահայության բնաջնջման շուրջ տված մեկնաբանությունները, որոնք ևս Պինոնը դարձրել է քննարկման նյութ: Նա հղում է Թալեաթի՝ գերմանական «Բեռլիներ Թագեբլաթ» լրագրի թղթակցի հետ ունեցած հարցազրույցը, որի ընթացքում վերջինս հայտարարել է, թե իբր հայերի վտարումն իրենց երկրից (իմա՝ Հայաստանից) և Կոստանդնուպոլսից ու նրա արվարձաններից, բխել է ռազմական անհրաժեշտությունից, իսկ տեղահանությունների ընթացքում որոշ թուրքական պաշտոնյաների թույլ տված չարաշահումները նրան պատճառել են ավելի քան մեկ անքուն գիշեր: Պինոնը հողմացրիվ է անում Թալեաթի «կեղծավոր» ափսոսանքներն ու մեկնաբանությունները, մատնանշելով հայերի ոչնչացմանը խոչընդոտելուն միտված նրա կրավորական

դիրքորոշումը (էջ 62-63): Եթե հաշվի առնենք, որ ցեղասպանության պատմության կեղծարարները՝ արևմտահայության տեղահանությունները հիմնավորելու համար հետագայում բազմիցս վկայակոչել են Թալեաթի առաջադրած միևնույն սին թեզերը[372], ապա ավելի քան ակնհայտ կդառնա այս խնդրի շուրջ Պինոնի՝ իրադարձության այլազգի և անաչառ ժամանակակցի, վերլուծական, քննադատական մոտեցման նշանակությունը և արդիական հնչեղությունը:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Ֆրանսիայում լույս ընծայված՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված պատմագիտական աշխատություններին խիստ բնորոշ է ընդգծված հակագերմանական միտումը[373]: Պինոնը բացառություն չի եղել, ուստի օրինաչափ է, որ նրա շանթերը չեն շրջանցել Անտանտի տերությունների գլխավոր ախոյանին՝ Գերմանիային, որի արտաքին ագրեսիվ քաղաքականությունը ենթարկել է անողոք քննադատության թե՛ լայն առումով և թե՛ խոսքը մասնավորեցնելով Հայկական հարցում գերմանական ղեկավար շրջանակների արգահատելի դիրքորոշման վերաբերյալ:

Լինելով դիվանագիտության պատմության մասնագետ, Ի. դարասկզբին Գերմանիայի լայնածավալ արևելյան քաղաքականության հարցում ունենալով հիանալի կողմնորոշում՝ Պինոնը՝ Հայկական հարցում վերջինիս դիրքորոշումն ընդգրկել է ոչ միայն Մերձավոր Արևելքում նրա զավթողական նկրտումների, այլև վարած արտաքին քաղաքականության ընդհանուր համատեքստում: Կասկած չտածելով երիտթուրքերի կողմից Մեծ եղեռնի սանձազերծման խնդրում Գերմանիայի կրած «բարոյական պատասխանատվության» շուրջ (էջ 4-13), նա գերադասում է Օսմանյան կայսրության դաշնակցի՝ արևմտահայության համար ճակատագրական հետևանքներ ունեցած քաղաքականությունը պատճառաբանել գերմանացիների «քաղաքական շահախնդրու-

---

[372] Տե՛ս օրինակ՝ *Loti P.*, Les massacres d'Arménie, Paris, 1918 ; *Karal E.Z.*, Armenian Question, Ankara, 1975; *Sonyel S.R.*, Displacement of the Armenians. Documents, Ankara, 1978; Facts from the Turkish Armenians; *Moser P.A.*, Arméniens, où est la réalité ? Saint-Aquilin-de-Pacy, 1980 ; The Armenian Issue in Nine Questions and Answers; *Uras E.*, The Armenians in History and the Armenian Question, Istanbul, 1988.

[373] Տե՛ս օրինակ՝ *Պօղոսեան Վ.*, նշվ. աշխ.:

թյամբ», քանի որ վարչական ինքնավարության ձգտող հայերը կարող էին խոչընդոտել նրանց հիմնական նպատակների իրականացմանը՝ կապված Օսմանյան կայսրության տարածքում տնտեսական և քաղաքական գերիշխանություն հաստատելու հետ (էջ 4-6): «Գերմանացիների շահերը հիանալիորեն ներդաշնակում էին թուրքերի դարավոր ատելությունների հետ»,– նկատում է նա (էջ 13): Այս հանգամանքներն են պայմանավորում նրա գրքի՝ «գերմանական մեթոդ, թուրքական գործ» խորագրի ընտրությունը:

Անդրադառնալով հայ ժողովրդի բնաջնջման ընթացքում Օսմանյան կայսրությունում գտնվող գերմանացի պաշտոնայների և զինվորականների հանցավոր վարքագծին՝ Պինոնը հիմնավորապես բացահայտում է նրանց թե՛ կրավորական պահվածքը և թե՛ ուղղակի մասնակցությունը տեղի ունեցող կոտորածներին և ըստ փաստերի՝ հանգում տրամաբանական հետևության, որ ցանկացած վայրագություն կատարվել է գերմանացի սպաների աչքի առջև, նրանց համաձայնությամբ կամ ուղղակի մասնակցությամբ (էջ 23, 64):

Առավել մերկացուցիչ են Օսմանյան կայսրությունում հավատարմագրված գերմանացի դիվանագետներին տված նրա գնահատականները: Պինոնը պախարակում է, մասնավորապես տարբեր վայրերում՝ Հալեպում, Ուրֆայում և այլուր գտնվող գերմանացի հյուպատոսներին՝ կոտորածներին ունեցած գործուն մասնակցության համար, որոնք չեն զլացել քաջալերելու մարդասպաններին և նույնիսկ ուղղորդել են նրանց (էջ 64): Խոսքը մասնավորեցնելով Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Հանս Վանգենհայմի թրքամետ դիրքորոշման վերաբերյալ՝ նա ըստ փաստերի բացահայտում է նրա վարքագծի առանձնահատկությունները: Նախ կռահելով, որ Վանգենհայմը եղել է ընդամենն իր պետության քաղաքականության իրականացնողն Օսմանյան կայսրությունում, Պինոնն առաջին հերթին անարգանքի սյունին է գամում գերմանական կառավարությանը՝ նշելով, որ թեպետ դեսպանն իր մարդկային պարտքն է համարել տեղեկացրել իր պետության ղեկավար շրջաններին օսմանյան կառավարության չարագուշակ ծրագրերի մասին, վերջինս

այդուհանդերձ «պահպանել է լռություն կամ հավանություն տվել» այն ամենին, ինչ տեղի էր ունենում (էջ 63): Ուշագրավ է նաև նրա հաղորդած տեղեկություններից մեկը, ըստ որի՝ Վանգենհայմը հայցել է իր կառավարության միջամտությունը՝ կոտորածներին վերջ տալու, սակայն նրա խնդրանքին ոչ մի պատասխան չի հետևել (էջ 65): Ուստի նա փաստում է դեսպանի ոչ այնքան բարեհաճ վերաբերմունքը մահվան դատապարտված հայ ժողովրդի նկատմամբ, որը գերմանացի տարբեր հյուպատոսներից օր առ օր ստանալով հավաստի տեղեկություններ կայսրության տարբեր վիլայեթներում իր ստորադասների «աչքի առջև տեղի ունեցած մի ամբողջ ժողովրդի ոչնչացման մասին», ոչինչ չի արել այդ նողկալի արարքները կանխարգելելու կամ նույնիսկ դրանք մեղմացնելու համար:

Պինոնը ծաղրում է Գերմանիայի կանցլեր Բեթման-Հոլվեգին ռայխսթագում հայտարարելու համար, որ գերմանացիները վերակենդանացրել են Թուրքիան: Ըստ նրա մեկնաբանության՝ իրականությունը բոլորովին այլ պատկեր է ի հայտ բերում. Գերմանիան շահագործել է Օսմանյան կայսրությանը՝ դրանից օգուտներ քաղելով սոսկ իր համար, այդ երկիրը հասցրել կործանման եզրին, իսկ Թուրքիայի «վերակենդանացումը գերմանական եղանակով հանգեցրել է կոտորածի, կողոպուտի և գողության» (էջ 73):

Ըստ այս ամենի, օրինաչափ ենք համարում դեռևս 1919 թ. Կոստանդնուպոլսում Պինոնի գրքի լույս ընծայումը հայերեն թարգմանությամբ, հավանաբար, Օսմանյան կայսրությունում իշխանության եկած քաղաքական նոր ուժերի կողմից 1919 թ. ապրիլ-հուլիս ամիսներին կազմակերպված երիտթուրքերի պարագլուխների դատավարության[374] արդյունքում[375]:

[374] Այդ մասին տես «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի»: Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափազյանի, Երևան, 1988:

[375] *Բինօն Ռ.*, նշվ. աշխ.: Համեմատության կարգով նշենք, որ նույն ժամանակահատվածում Կոստանդնուպոլսում ամբողջությամբ կամ մասամբ, լույս են տեսել նաև օտար այլ հեղինակների՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված մի շարք արժեքավոր գրքերի հայերեն թարգմանությունները, ինչը, անշուշտ, չէր կարող պատահականություն լինել: Տես օրինակ՝ «Ամերիկեան դեսպան Մր. Մօրկընթաուի յիշատակները եւ հայկական եղեռնի գաղտնիքները», թարգմանիչ՝

Միանգամայն ակնհայտ է նաև, որ թե՛ երիտթուրքերի ցեղասպան և թե՛ Գերմանիայի թրքամետ քաղաքականությունը հիմնավորապես անարգանքի սյունին գամող Ռենե Պինոնի գիրքը, առավել ևս Հայոց ցեղասպանության արժանահավատությունը ժխտեղ պատմագիտական ուղղության ներկայացուցիչների գործադրած զուր ճիգերի լույսի ներքո, պահպանում է իր այժմեականությունը: Ուստի տողերիս հեղինակի համոզմամբ, Մեծ եղեռնի հարյուրամյա տարելիցին ընդառաջ, նպատակահարմար է սույն գրքի վերահրատարակումը ֆրանսերենով:

*Էջմիածին, 2013, թիվ Դ, էջ 87-95*

---

Ենովք Արմեն, Կ. Պոլիս, 1919; *Մանտէլսթամ Ա.*, Օսմանեան կայսրութեան ճակատագիրը, առաջին մաս, Երիտասարդ թուրքերը պատերազմէն առաջ, թարգմանեց Միքայէլ Շամտանճեան, Կ. Պոլիս, 1919; Հայաստանի ջարդերը: Գաղտնի տեղեկագիր տօքթ. Եօհաննէս Լեփսիուսի, թարգմանեց Միքայէլ Շամտանճեան, Կ. Պոլիս, 1919:

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԿԱՊԻՏԱՆ ՍԵՆՅՈԲՈՍԻ ԿՈՂՄԻՑ

Համաշխարհային պատմության մեջ Օսմանյան կայսրության դերը տարբեր երկրների ուսումնասիրողներ հաճախ մեկնաբանել են տրամագծորեն հակադիր տեսանկյուններից: Նրանցից ոմանք այն ներկայացրել են իբրև յուրօրինակ «դրախտ»՝ հարյուրամյակներ շարունակ օսմանյան բիրտ լծի տակ հեծած բոլոր ժողովուրդների համար՝ անկախ ազգային պատկանելությունից և կրոնական հավատամքներից: Օսմանյան կայսրության պատմագրության մեջ այս տեսակետը ձևավորվել է դեռևս XIX դարի վերջին և XX դարի սկզբին Ֆրանսիայում, որտեղ լույս ընծայված որոշ տպածոներ հիմք են դարձել համաշխարհային քաղաքակրթության մեջ Օսմանյան կայսրությանը կարծեցյալ խիստ դրական դեր վերագրելու, օսմանյան գահակալների գործունեությունը ջատագելու, ինչպես նաև Հայոց ցեղասպանության պատմությունը նենգափոխելու համար:

1890-ական թվականների կեսերին սկիզբ առած, առավելապես «համիդյան կոտորածներ» անվամբ հայտնի Հայոց ցեղասպանության գործընթացի ֆրանսիացի որոշ ժամանակակիցներ հավանաբար Աբդուլ Համիդ II-ի պատվերով եվրոպական տարբեր երկրներում, գլխավորապես Ֆրանսիայում, հրատարակել են մի շարք գրքեր, գրքույկներ և հոդվածներ, որոնցում շեշտվում է թե՛ քրիստոնյա և թե՛ մահմեդական օսմանյան այլազգի հպատակների, մասնավորապես արևմտահայության հանդեպ նրա բարյացակամ վերաբերմունքը[376]: Միաժամանակ, նրանք օսմանահպատակ հայերին ինքնապաշտպանական գործողությունների դիմելու պատճառով բնութագրել են իբրև երախտամոռ «ապստամբների»: Այլ կերպ ասած՝ այդ հեղինակները գիտակցաբար և միտումնավոր խեղաթյուրել են ազգային փոքրամասնությունների

---

[376] Տես *Allauch P.B.*, La vérité sur l'Arménie. Récit d'un témoin oculaire, Paris, 1895 ; *Des Coursons R.*, La rébellion arménienne. Son origine-son but, Paris, 1895 ; *Le Jeune E* Comment on sauve un empire. S. M. I. le Sultan Ghazi Abdul Hamid Khan II et son œuvre, 2ème éd., Paris, 1895 ; *Abdon Boisson P.*, L'agitation anglo-arménienne, Paris, 1896 ; *Le Vieux de la Montagne*, Arméniens et Arménophiles, Genève, 1896 ; *Кази-Бек А. Ю.*, Черты из жизни е. в. султана Хамида II, СПб., 1897:

և հատկապես արևմտահայության հանդեպ Աբդուլ Համիդի ցեղասպան քաղաքականության բնույթը:

Հարկ է նշել, որ նրանցից ոմանք լկտիաբար նենգափոխել են բուն Օսմանյան կայսրության կազմավորման ու հատած ուղու պատմությունը[377]: Ի տարբերություն նրանց՝ ֆրանսիացի այլ հեղինակներ չեն վարանել միևնույն ժամանակաշրջանում անկողմնակալ մեկնաբանել այդ տխրահռչակ կայսրության պատմությունը, ինչպես նաև բացահայտել Աբդուլ Համիդի այլատյաց քաղաքականության դիմագիծը[378]:

Ի դեպ, Օսմանյան կայսրության և Հայոց ցեղասպանության պատմության նկատմամբ դրսևորվող թե՛ գիտական[379] և թե՛ հակագիտական[380] այս մոտեցումները շարունակում են գոյատևել առ այսօր: Այդուհանդերձ հարկ է նշել, որ XX դարի երկրորդ կեսին ֆրանսիացի որոշ պատմաբաններ, չնայած ակնհայտ թրքամետ միտումներին, ի տարբերություն իրենց որոշ նախորդների, Օսմանյան կայսրության և Հայոց ցեղասպանության պատմության հիմնահարցերը քննական վերլուծության են ենթարկել ավելի չափավոր դիրքերից[381]:

---

[377] Տես *Allauch P.B.*, La Turquie et les Ottomans, Paris, [1894] ; *Rousseau L.*, L'effort ottoman, Paris, 1907: Այդ մասին տես *Պողոսյան Վ.*, Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ), երկրորդ, բարեփոխված հրատարակություն, Երևան, 2011, էջ 171-209:

[378] Տես օրինակ՝ *Dorys G.*, Abdul-Hamid intime, Paris, 1903 ; *Bareilles B.*, Les Turcs, ce que fut leur empire ; leurs comédies politiques, Paris, 1917:

[379] Տես օրինակ՝ *Ternon Y.*, Empire ottoman. Le déclin, la chute, l'effacement, Paris, 2005 ; *Սաֆրաստյան Ռ.*, Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Եր., 2009; *Բայբուրդյան Վ.*, Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011; *Bozarslan H.*, Histoire de la Turquie. De l'Empire à nos jours, Paris, 2013:

[380] Տես օրինակ՝ *Shaw S.J.*, *Shaw E.K.*, History of the Ottoman Empire and Modern Turkey, vol. II: Reform, Rerévolution and Republic: The Rise of Modern Turkey, 1808-1971, Cambridge, 1977; *Moser P. A.*, Arméniens, où est la réalité ? Saint-Aquilin-de-Pacy, 1980 ; *Lewy G.*, The Armenian Massacres in Ottoman Turkey. A Disputed Genocide, [Utah], 2005; *McCarthy J.*, *Arslan E.*, *Taskiran C.*, *Turan O.*, The Armenian Rebellion at Van,, [Utah], 2006:

[381] Տես *Mantran R.*, Histoire de la Turquie, Paris, 1952 ; *Georgeon F.*, Le dernier sursaut (1878-1908) // Histoire de l'Empire ottoman. Sous la direction de R. Mantran, Paris, 1989 ; *idem* : Abdülhamid II. Le sultan calife (1876-1909), Paris, 2003. Այս մասին տես *Պողոսեան Վ.*, Համիդեան կոտորածների պատմութեան նենգափոխումը ֆրանսիական

Այս պայմաններում կասկածից վեր է XIX դարի վերջին և XX դարի սկզբին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած իրադարձություններին օտար ականատեսների տված անառաչ վկայությունների նշանակությունը: Այս հանգամանքը հաշվի առելով՝ Ֆրանսիայում, ինչպես նաև Հայաստանում վերջին տարիներին վերահրատարակվել են սկզբնաղբյուրային մեծ կարևորություն ունեցող, Հայոց ցեղասպանության տարբեր փուլերի պատմությանը նվիրված՝ ֆրանսիացի և անգլիացի հեղինակների մի շարք արժեքավոր աշխատություններ[382]:

Օսմանյան կայսրության, ինչպես նաև Հայոց ցեղասպանության պատմության զանազան հիմնախնդիրներին անդրադարձած այլազգի ժամանակակիցների թվում իր ուրույն տեղն ունի, անտարակույս, ֆրանսիացի ռազմական գործիչ, կապիտան Անրի Սենյոբոսը, որը նախքան Առաջին աշխարհամարտի սանձազերծումն իբրև ֆրանսիական արևելյան զինվորական առաքելության անդամ աշխատել է Կոստանդնուպոլսում: Ցավոք, տողերիս հեղինակին չհաջողվեց տեղեկություններ հայթայթել նրա կյանքի և գործունեության մասին: Սենյոբոսի «Թուրքեր և Թուրքիա» խորագիրը կրող գրքից, որն ամփոփում է նրա հուշերը, ընդամենը տեղեկանում ենք, որ նա բազմիցս հնարավորություն է ունեցել անձամբ շփվելու երիտթուրքերի պարագլուխներ Թալեաթի, Էնվերի, Ջեմալի և այլոց հետ, ինչպես նաև ներկա գտնվելու նրանց հանդիսություններին[383]:

---

պատմագրութեան կողմից (Ի դ. երկրորդ կես-ԻԱ դ. սկիզբ), «Հանդէս ամսօրեայ», 2009, թիվ 1-12, էջ 293-316:

[382] Տես օրինակ՝ *Doumergue E.*, L'Arménie, les massacres et la Question d'Orient, Chamigny, 2007 ; *Duckett Ferriman*, Les Jeunes Turcs et la vérité sur l'Holocauste d'Adana en Asie Mineure en avril 1909, Chamigny, 2008 ; *Brézol G.*, Les Turcs ont passé là… Recueil de documents, dossiers, rapports, requêtes, protestations, suppliques et enquêtes établissant la vérité sur les massacres d'Adana en 1909, Chamigny, 2009 ; Erevan, 2009 ; Turkish Atrocities. The Young Turks and the Truth about the Holocaust at Adana, in Asia Minor, during April, 1909. Written and compiled in April, 1911, by Ferriman Duckett, Yerevan, 2009; *Adossidès A.*, Arméniens et Jeunes-Turcs. Les massacres de Cilicie, Chamigny, 2009 ; Erevan, 2011 ; *Puaux R.*, La mort de Smyrne. Les derniers jours de Smyrne, Erevan, 2012:

[383] Տես *Capitaine Seignobosc H.*, Turcs et Turquie, Paris, 1920, pp. 40-41, 51-53, 57, 89-93, 75-77:

Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումից անմիջապես հետո Սենյոբոսը ֆրանսիական առաքելության անդամների հետ վերադարձել է Ֆրանսիա, իսկ դրանից մի քանի տարի անց տպագրել այսօր մոռացության մատնված իր հուշերը: Աղբյուրագիտական անուրանալի կարևորություն ունեցող, միաժամանակ քննական և վերլուծական բնույթ կրող այս գրքում հեղինակն անաչառորեն և հիմնավորապես բացահայտել է ոչ միայն թուրքերի հավաքական մտածողության առանձնահատկությունները, այլև անկողմնակալ գնահատականներ տվել Օսմանյան կայսրության անցած ուղուն, օսմանյան տարբեր գահակալների, ինչպես նաև երիտթուրքերի ազգայնամոլ գործունեությանը:

Չլինելով պատմաբան՝ Սեյնոբոսը, այդուհանդերձ, ի տարբերություն իր ժամանակակից բազմաթիվ եվրոպացի հեղինակների, այդ թվում պատմաբանների, մանրազնին քննական վերլուծության է ենթարկել բազմապիսի առանցքային հիմնահարցեր, որոնք առնչվում են գլխավորապես Օսմանյան կայսրության կազմավորմանը, Աբդուլ Համիդ II-ի և նրա արժանի հետևորդների՝ երիտթուրքերի որդեգրած և իրականացրած՝ հպատակ ժողովուրդների, մասնավորապես հայերի ոչնչացման պետական քաղաքականությանը, ինչպես նաև Դարդանելի ռազմաճակատում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ծավալված ռազմական գործողություններին:

Սույն հոդվածը, սակայն, նվիրված է գլխավորապես Հայոց ցեղասպանության հիմնահարցերին Սենյոբոսի տված մեկնաբանությունների քննությանը, ինչպես նաև թուրք ժողովրդի հոգեբանության նրա իրատեսական վերլուծություններին:

Անդրադարձներն Օսմանյան կայսրության անցյալին և օսմանյան գահակալների գործունեության հիմնական դրվագներին Սենյոբոսին հնարավորություն են ընձեռել հանգելու միանգամայն անաչառ հետևության՝ ըստ որի, այդ կայսրությունն ի սկզբանե «իր գերիշխանությունն Արևելքում հաստատել է կոպիտ ուժի հիման վրա, ինչն իր արտացոլումն է գտել ի դեմս խիստ պարզունակ ռազմամոլության»[384]: Այս հանգամանքը Սենյոբոսը պայմանավորում է գլխավորապես թուրքերի հավաքական մտա-

[384] Նույն տեղում, էջ 16: Այսուհետև այս գրքից հղումները կատարելիս էջահամարը կնշվի տեքստում, փակագծերի մեջ:

ծողությանը և վարքագծին խիստ բնորոշ բարբարոսությամբ, ինչն անվարան և պարբերաբար ընդգծում է (էջ 20-21, 24, 27, 118, 151, 219): Թուրքերի հոգեբանության և այլազգիների հանդեպ կիրառած քաղաքականության յուրահատկությունների, ինչպես և մտավոր նվազ կարողությունների վերլուծությամբ նա արձանագրում է նաև նրանց «խիստ անխելամտությունն ու խիստ ծուլությունը» (էջ 64), նյութական արժեքներ ստեղծելու անկարողությունը, որը, ինչպես նշում է, դարձել է այլ ժողովուրդների մշակութային ժառանգությունը յուրացնելու ատաղձը (էջ 18): Ուստի նա հանգում է տրամաբանական միակ հնարավոր հետևության. Օսմանյան կայսրությունը կառավարելու անընդունակ թուրքական վարչությունը «բոլոր ժամանակներում եղել է գողությունների և ստորությունների վարչակարգ» (էջ 19-20): Ստեղծելու և կառավարելու ասպարեզներում թուրքերի ապաշնորհությունը հիմնավորելու մղումից դրդված՝ Սենյոբոսը վկայակոչում է թուրք սուլթանների՝ օսմանահպատակ «անհավատների» հանդեպ դրսևորած բարեհաճ վերաբերմունքը՝ մանրամասնելով, որ նրանք միմիայն այլազգիներին էին վստահում Օսմանյան կայսրության ֆինանսների, հասարակական աշխատանքների, փոստային ծառայության ղեկավարումը (էջ 20): Ըստ այդմ՝ բավականին համոզիչ է հնչում նրա մեկ այլ հետևությունը. Թուրքիայի կործանմանը խոչընդոտել են հայերն ու հույները (էջ 219):

Արձանագրելով թուրքերի կողմից ընդունելի միայն մեկ՝ «ուժի օրենքի» կիրառումը՝ Սենյոբոսը, փաստորեն, դրանով է պայմանավորում Օսմանյան կայսրությունում բարենորոգումների ցանկացած ծրագրի տապալումը և իր համոզմունքը հայտնում նրանց անքաղաքակրթելիության (էջ 28), ինչպես նաև Թուքիայում քրիստոնյաների և մահմեդականների միջև հավասարության հաստատման անհնարինության վերաբերյալ: Նման հավաստումները հիմք են ծառայել այլազգիների բնաջնջման քաղաքականությանը տված նրա հիմնավորումներից մեկի համար. «Պարբերական կոտորածները,– նկատում է նա,– այդ ամբարտավան և բարբարոսական հավաքական մտածողության արդյունքն են» (էջ 27): Եթե հաշվի առնենք, որ տվյալ պարագայում հեղինակը այս խիստ կարևոր հանգամանքին մոտենում է լայն առումով՝ ակնարկելով քրիստոնյաների բնաջնջման խնդրում մահմեդականների շահագրգռվա-

ծությունը, ապա նրա եզրահանգումը հնչում է տրամաբանական:

Թուրքերի հոգեբանությանը և վարքագծին վերաբերող Սենյոբոսի մեկնաբանություններից բացի՝ անհրաժեշտ է անդրադառնալ այլազգի օսմանահպատակներին տված նրա նույնքան անաչառ գնահատականներին: Այս առնչությամբ նրա դիտարկումները ևս համապատասխանում են իրականությանը և առարկությունների տեղիք չեն տալիս: Ինչ վերաբերում է հայերին, նա ընդգծում է նրանց ձեռներեցությունն ու ակտիվությունը մասնավորապես առևտրի և արդյունաբերության ասպարեզներում, շեշտում նրանց դերը ռազմական արդյունաբերության զարգացման գործում, մանրամասնում, որ նրանք են ձուլել առաջին թնդանոթները և հույների հետ մեկտեղ կառավարել կայսրության ֆինանսները, կառուցել ճանապարհներ, ինչպես նաև լինելով հինավուրց քաղաքակրթության ժառանգորդներ՝ ղեկավարել թուրքական կառավարչությունը (էջ 19, 219):

Ուշադրությունից դուրս չթողնելով հայ և թուրք ժողովուրդների միջև առկա հակամարտությունը, դարեր շարունակ հայերի հանդեպ կիրառված «սարսափելի հետապնդումներն» ու կոտորածները՝ հեղինակը, այնուամենայնիվ, հայերին համարում է կենսունակ ժողովուրդ (էջ 220): Նրա համոզմամբ, թե՛ զանգվածային կոտորածներն ու տեղահանությունները և թե՛ «ճնշումների ու ահաբեկչության անընդմեջ հարատևող վարչակարգը» ոչ միայն հայերին, այլև օսմանահպատակ ժողովուրդներին առհասարակ չեն ընկճել, քանզի, չնայած պետության կողմից իրականացվող օսմանացման քաղաքականությանը, նրանք պահպանել են իրենց բարքերը, լեզուն և նույնիսկ հետամուտ եղել իրենց ձգտումների իրականացմանը (էջ 19-21):

Հայոց ցեղասպանության սկզբնավորումն անքակտելիորեն առնչվում է գլխավորապես Աբդուլ Համիդ II-ի ազգայնամոլ քաղաքականությանը: Թեպետ Սենյոբոսը հանգամանորեն չի նկարագրում 1890-ական թվականների հայկական կոտորածները, սակայն փոխարենը, ինչը շատ ավելի կարևոր է, ուրվագծում է սուլթանի իրական կերպարը: Ալբեր Վանդալի հետքերով նա Աբդուլ Համիդին անվանում է «կարմիր սուլթան»[385], որի ձեռքերը

---

[385] Տես Les Arméniens et la réforme de la Turquie. Conférence faite par M[onsieur] Albert Vandal de l'Académie française dans la salle de la Société de Géographie. Le 2 février 1897, Paris, 1897, p. 13:

«շաղախված են հայկական արյամբ», նրան բնութագրում իբրև «բռնակալի», «կայսերական ավազակի» և «չափազանց դաժան» միապետի, որին բնորոշ էր այլատյացությունը (էջ 21, 24, 25, 140): Սակայն առավել էականը, մեր կարծիքով, Աբդուլ Համիդի՝ պետական քաղաքականության մակարդակով կազմակերպած՝ արևմտահայության կոտորածների փաստումն է: Նա միանգամայն իրավացիորեն գտնում է, որ 1890-ական թվականներին արևմտահայության ոչնչացման ամբողջ պատասխանատվությունը կրում է անձամբ Աբդուլ Համիդը: Սենյոբոսը նրան համարում է «1894 թ. հայկական կոտորածների գլխավոր նախաձեռնող», պարբերաբար ընդգծում, որ 1894 թ. և 1896 թ. ջարդերն իրականացվել են նրա հրամանով (էջ 24, 222, 225): Հարկ է սույն հարցին անհրաժեշտ ուշադրություն դարձնել, քանի որ ցեղասպանության՝ իբրև երևույթի հիմնական բաղադրիչներից մեկը զանգվածային բնաջնջումների իրականացումն է պետական քաղաքականության մակարդակով:

Անշուշտ, չունենալով դեռևս ստույգ տեղեկություններ 1894-1896 թթ. տեղի ունեցած արևմտահայության կոտորածների զոհերի թվաքանակի մասին, որը հասնում էր երեք հարյուր հազարի, Սենյոբոսը նշում է միայն 1896 թ. ավելի քան հարյուր հազար հայերի կոտորելու փաստը:

Հայոց ցեղասպանության գործընթացը գագաթնակետին է հասել 1915-1916 թթ., ուստի և Սենյոբոսն առավել մեծ ուշադրություն է դարձնում երիտթուրքերի գործունեության ու ազգային քաղաքականության նրբերանգների վերլուծությանը: Չնայած այն հանգամանքին, որ հեղինակը, հավանաբար հաշվի առնելով հայ ժողովրդի բնաջնջման աննախադեպ ծավալը, Մեծ եղեռնին նվիրել է առանձին գլուխ՝ «Նահատակ Հայաստան» վերնագրով (էջ 218-233), ցեղասպանության ենթարկված ազգային փոքրամասնությունների թվում նման բացառություն անելով միայն հայ ժողովրդի համար, այդուհանդերձ նրա ամբողջ շարադրանքը հագեցած է սույն իրադարձությանն առնչվող դիտարկումներով:

Տարիների հեռվից հայացք նետելով 1908 թ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած իշխանափոխությանը՝ նա փաս-

տում է երիտթուրքական հեղափոխության ազգայնամոլ բնույթը (էջ 34), երիտթուրքերին համարում ավելի «այլատյաց», քան Աբդուլ Համիդին (էջ 21), մատնանշում, որ «արյան և տիղմի վրա կազմավորված» Թուրքիան XX դարում միայն արտաքուստ էր դարձել ավելի քաղաքակիրթ, իսկ իրականում փոփոխություններ ամենևին չէր կրել (84): Նա համոզմունք է հայտնում, որ մարդկությունը չի ներելու երիտթուրքական հրոսակախմբին (էջ 62, 79) այն շարունակական դաժանության համար, որով ներծծված էր նրա ամբողջ քաղաքականությունը (էջ 45):

Մենք արդեն անդրադարձանք 1890-ական թվականներին տեղի ունեցած հայկական կոտորածներում Աբդուլ Համիդի վճռորոշ դերակատարությանը Սենյոբոսի մերկացնող գնահատականներին: Նույնքան հետևողականորեն նա բացահայտում է նաև երիտթուրքերի ղեկավար դերը Մեծ եղեռնի իրականացման հարցում՝ շեշտելով, որ հայկական զանգվածային կոտորածները 1915 թ. վերսկսվել են Միություն և առաջադիմություն կոմիտեի հրամանների հիման վրա (էջ 222), որի ղեկավարները, ըստ նրա, սոսկ հնազանդվել են «նույնքան կանխամտածված, որքան և անգութ պետական քաղաքականությանը» (էջ 232): Ակնհայտ է, որ պարբերաբար շեշտելով այն փաստը, որ հայ ժողովրդի բնաջնջումն օսմանյան տարբեր վարչակարգերի կողմից կատարվել է պետական քաղաքականության մակարդակով և կանխամտածված, Սենյոբոսը դրանով իսկ փաստում է Հայոց ցեղասպանության գործընթացի շարունակական բնույթը, ինչը շատ կարևոր է:

Ինչ վերաբերում է երիտթուրքերի պարագլուխներին, ապա նրանց անվանելով հայ ժողովրդի ողբերգության «մեծ մեղավորներ»՝ Սենյոբոսը նվազագույն իսկ կասկած չի տածում, որ Թալեաթը՝ այդ «դահիճը» և «մարդասպանների ղեկավարը», եղել է «հայկական կոտորածների գլխավոր պատասխանատուն» (էջ 50, 51, 242): Թեև հայերի և քաղդեացի ասորիների «նահատակության բուն կազմակերպիչներ» հեղինակը համարում է Թալեաթին և Էնվերին (էջ 225-226), սակայն անվարան մանրամասնում է նաև օսմանյան տեղական պաշտոնյաների դահճային դերն արևմտահայության բնաջնջման գործում՝ շեշտելով մասնավորապես «անփառունակ համբավի» արժանացած Վանի

կառավարիչ Ջևդեթ բեյի, Բիթլիսում՝ Մուսաֆա Խալիլի, Ուրմիայում՝ Խալիլ փաշայի հանցավոր գործունեությունը (էջ 228):

Հայոց մեծ եղեռնի գլխավոր պատճառների համակողմանի վերլուծությունը համարում ենք Սենյոբոսի ամենամեծ արժանիքներից: Տվյալ էական հիմնախնդրին առնչվող նրա բազմակողմանի և հիմնավոր քննությունն ակնառու է: Նա, իհարկե, աչքաթող չի անում թուրքերի հավաքական մտածողությանը բնորոշ ատելությունն ու նախանձը հայերի հանդեպ, բարենորոգումների հասնելու վերջիններիս ցանկության նկատմամբ նրանց տածած վախը (էջ 224) և այլն, սակայն նախապատվելի է համարում շատ ավելի կարևոր հանգամանքներ:

Սենյոբոսը չի անտեսում այն գաղափարախոսությունների նշանակությունը, որոնց հիման վրա իրականացվել է Հայոց ցեղասպանությունը: Անշուշտ, այս հարցի շուրջ նրա վերլուծություններն ամենևին սպառիչ և ընդգրկուն չեն, քանզի նա ոչ միայն չի մեկնաբանում երիտթուրքերի կողմից թուրքիզմի գաղափարախոսության հղացման պատմական նախադրյալները, ինչպես նաև դրա առանձնահատկությունները, այլև հստակորեն չի արձանագրում այն էական զանազանությունները, որոնք առկա էին պանիսլամիզմի և թուրքիզմի գաղափարախոսությունների միջև[386]:

Պանիսլամիզի գաղափարախոսությունը նա բնութագրում է իբրև թե՛ երիտթուրքերի և թե՛ առհասարակ Թուրքիայի ղեկավարների «քաղաքական կրոն», որին նրանք միշտ հետամուտ են եղել (էջ 26): Տվյալ պարագայում կարելի է ընդամենը ենթադրել, որ հեղինակը, հավանաբար, նկատի ունի Օսմանյան կայսրության այն ղեկավարներին, որոնք իրենց ձեռքում էին կենտրոնացրել պետության ղեկը XIX դարի վերջին և XX դարի սկզբին: Յուրաքանչյուր «իսկական թուրքի» համարելով պանիսլամիզմի անհողդողդ կողմնակից՝ նա նրանց խիստ բնորոշ սույն մտածելակերպով է պատճառաբանում հունական և հայկական կոտորածները (էջ 47), մանավանդ որ 1915 թ. ծավալված ռազմական գործողությունների ժամանակ պանթուրքիզմի երազանքը, ինչ-

[386] Այդ մասին մանրամասն տե՛ս *Սիմոնյան Հ.*, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 91-114, 216-235:

պես նա նշում է, ըստ Միություն և առաջադիմություն կոմիտեի երիտթուրք ծայրահեղականների, արդեն մոտ է եղել իրականության վերածվելու:

Սենյոբոսը, սակայն, միաժամանակ անուղղակիորեն փաստում է, որ Մեծ եղեռնն իրականացվել է թուրքիզմի գաղափարախոսության հիման վրա: Թեպետ երիտթուրքերի կողմից անշեղորեն կիրառված թուրքիզմի գաղափարախոսության ակունքներին նա չի անդրադառնում, այդուհանդերձ Մեծ եղեռնի պատճառների թվում մեծ տեղ է հատկացնում նրանց որդեգրած «Թուրքիան թուրքերին» սկզբունքին (էջ 62, 79, 113): «Սարսափելի կոտորածները Հայաստանում,– գրում է նա,– շատ ավելի պայմանավորված են կայսրությունն օսմանցիներով վերաբնակեցնելու հիվանդագին ցանկությամբ, որով համակված էր երիտթուրքերի հրոսակախումբը, քան մոլեռանդության ճգնաժամով կամ ռասայական բնույթի նախանձով» (էջ 62): Այլ կերպ ասած՝ Հայոց մեծ եղեռնի իրականացումը նա իրավամբ շաղկապում է թուրքիզմի գաղափարախոսությանը, թեև ձեռնապահ է մնում այդ փաստի արձանագրումից: Միաժամանակ, հաշվի առնելով հայ ժողովրդի բնաջնջման ծրագրերը սառնասրտորեն կյանքի կոչելու փաստը՝ նա բացառում է Հայոց ցեղասպանության նշված պատճառի մասին կասկածներ իսկ տածելու նպատակահարմարությունը:

Սենյոբոսը բացահայտում է նաև արևմտահայության ցեղասպանության հիմնական պատճառը՝ փաստելով, որ երիտթուրքերի պարագլուխները հետամուտ էին «Հայկական հարցից ազատագրվելու միակ ուղին հայերի ոչնչացումն է» սկզբունքին, որը չեն վարանել իրականության վերածելու (էջ 232): Այս հանգամանքի կարևորումը, որը բազմիցս շրջանցել են նրա եվրոպացի ժամանակակիցներից շատերը, վկայում է նրա կողմից քննարկվող հիմնահարցի էությունը խորն ըմբռնելու մասին: Սենյոբոսը թեև այն չի կապում Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման անհրաժեշտությանը, ինչը նրա բացթողումներից է, սակայն իր շարադրանքում չի շրջանցում այս էական հիմնախնդրի քննարկումը լայն առումով: Ինչպես և իր ֆրանսիացի ժամանակակիցները[387], նա նույնպես հանդես է գալիս իբրև թե

[387] Այդ մասին տես *Պողոսյան Վ.*, Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական-քաղաքական մտքի գնա-

Օսմանյան կայսրության տարածքում բնակվող ժողովուրդների համար խաղաղ ապրելու և գոյատևելու պայմաններ ապահովելու և թե՛ այդ պետության տարածքային ամբողջականությունը պահպանելու կողմնակից, քանզի կայսրության մասնատումը, ինչպես նա է մենաբանում, կարող էր ծանր հարված հասցնել Ֆրանսիայի շահերին (էջ 240)։ Տվյալ ժամանակաշրջանում նման հետևությունը ֆրանսիացի գործիչների հավաքական մտածողության պերճախոս վկայությունն է, որը չնչին բացառություններով (Պիեռ Քիառ, Անրի Ռոշֆոր, Ժորժ Կլեմանսո)[388] հատուկ էր հայ ժողովրդի գրեթե բոլոր պաշտպաններին։

Սենյոբոսի ուշադրությունից չի վրիպել նաև Հայոց ցեղասպանության պատճառների մեկնաբանությանն անուղղակիորեն առնչվող մեկ այլ էական հանգամանք, որն ի սկզբանե պարբերաբար շահարկել են թե՛ թուրք պետական գործիչները և թե՛ նրանց հետքերով Հայոց ցեղասպանության պատմությունն աղավաղող գրչակները։ Խոսքը վերաբերում է այսպես կոչված «հայկական ապստամբության» վարկածին, որն ի սկզբանե շրջանառության մեջ է դրվել իբրև հայերի դեմ ուղղված պատժիչ միջոցառումների արդարացման փաստարկ։ Ինչպես նա նշում է, 1915 թ. ապրիլից ի վեր թուրք պաշտոնյաները ստանում էին «հայկական ապստամբությունը» անողոքաբար ճնշելու «դրակոնյան հրամաններ» (էջ 229)։ Ուստի նա հիմնավորապես դիմազերծում է հատկապես Թալեաթի ստոր վարքագիծն այս հարցում, որը շարունակ շնորհավորում էր և պարգևատրում այս առնչությամբ իր հրահանգներն իրականացնող տեղական օսմանյան պաշտոնյաներին (էջ 229)։

«Հայկական ապստամբության» վարկածի կապակցությամբ հեղինակը տալիս է անկողմնակալ պարզաբանումներ, իրավացիորեն մատնանշում, որ հայերը «ապստամբելու որևէ մտադրություն չեն ունեցել» (էջ 227)։ Նա նրանց բնութագրում է իբրև հեզ, խոնարհ, աշխատասեր ժողովրդի, ընդգծում նույնիսկ օսմանյան բանակի շարքերը համալրած հայ զորակոչիկների նվիրումը և եզրակաց-

---

հատմամբ (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ), էջ 312-316։

[388] Տե՛ս նույն տեղում, էջ 314։

նում. «Ոչ մի լուրջ գանգատ հայ ազգության հանդեպ չէր կարող վկայակոչվել» (էջ 227): Նա համոզմունք է հայտնում, որ հայերը դարձել են սոսկ Թալեաթի և Էնվերի նյութած դավադրության զոհերը, որոնց ձեռնարկած քայլերն այս ուղղությամբ ոչ այլ ինչ էին, եթե ոչ լայնածավալ արյունահեղություններին ընդառաջ՝ «ստախոսությամբ և լկտի կեղծավորությամբ» ներծծված նախապատրաստական գործողություններ (էջ 230):

Այս հիմնահարցի կապակցությամբ Սենյոբոսի մեկնաբանությունները կարիք ունեն փոքր-ինչ սրբագրման, քանի որ սույն ստահոդ վարկածի առաջադրումը 1915 թ. նա վերագրում է Միություն և առաջադիմություն կոմիտեի պարագլուխներին (էջ 229): Իրականում «հայկական ապստամբության» թեզն Աբդուլ Համիդի պատվերով առաջին անգամ շրջանառության մեջ են դրել ֆրանսիացի որոշ գրչակներ (Պ. Աբդոն Բուասոն, Ռ. դե Կուրսոն) դեռևս 1890-ական թվականների կեսերին[389], իսկ 1909 թ. այն որդեգրել են նաև կիլիկյան կոտորածներն իրականացրած օսմանյան տեղական պաշտոնյաները[390]: 1915 թ. երիտթուրքերն իրենց նախորդներից ընդամենը փոխառել են այս թեզը, հանգամանք, որը հավանաբար չիմացության պատճառով հեղինակը շրջանցում է լռությամբ: Այդուհանդերձ, այս կապակցությամբ իր անկողմնակալ և հիմնավոր դիտարկումներով Սենյոբոսը, անտարակույս, հուժկու հակահարված է տալիս սույն շինծու վարկածի զանազան հետևորդների:

Հայկական զանգվածային կոտորածները Սենյոբոսը համարում է շատ ավելի սարսափելի, քան պատմության մեջ արձանագրված համանման իրադարձությունները (էջ 232): Երիտթուրքերի հայասպան գործունեության արդյունքում, ինչպես նա նշում է, «Հայաստանն այսօր իրենից ներկայացնում է մի ընդարձակ գերազմանատուն» (էջ 232): Չնայած այս հատու հետևություններին՝ հեղինակը, այնուամենայնիվ, ստույգ վիճակագրական տվյալների բացակայության պատճառով, Մեծ եղեռնի հետևանքով արևմտահայության տված զոհերի թվաքանակի շուրջ

---

[389] Տես նույն տեղում, էջ 189, 199:

[390] Տես *Պողոսյան Վ.*, 1909 թ. հայկական կոտորածները Կիլիկիայում ֆրանսիական պատմագրության գնահատմամբ, Երևան, 2009, էջ 38:

հայտնում է ոչ միայն փոքր-ինչ իրարամերժ, այլև ոչ ընդգրկուն տեղեկություններ: Ըստ նրա հավաստումներից մեկի՝ երիտթուրքերը կոտորել են ավելի քան մեկ միլիոն հայերի, հույների և այլ ծագում ունեցող քրիստոնյաների (էջ 62): Իրականությանն ամբողջությամբ չի համապատասխանում նաև նրա մեկ այլ դիտարկում, ըստ որի՝ եթե 1915 թ. Թուրքիայում կար երկու միլիոն հայ, ապա գիրքը թղթին հանձնելու պահին, այն է՝ 1920 թ., այնտեղ դեռևս բնակվում էր գրեթե մեկ միլիոնը: Ըստ այդմ՝ նա եզրակացնում է. «Ժողովրդի ավելի քան կեսը սպանվել է» (էջ 230): Անշուշտ, տարբեր ժողովուրդների և մասնավորապես արևմտահայության զոհերի շուրջ նրա տվյալներն ամբողջական և լիակատար չեն եղել, քանզի միայն Հայոց մեծ եղեռնի զոհերի թիվը հասնում էր մեկուկես միլիոնի:

Անհրաժեշտ է շեշտել, որ Սենյոբոսի ուշադրությունից չեն վրիպել նաև երիտթուրքերի ազգայնամոլ քաղաքականության լայնածավալ դրսևորումները: Բարեբախտաբար, չսահմանափակվելով միայն Հայաստանի ամայացումը մատնացույց անելով (էջ 85), նա փաստում է նաև թուրքերի կողմից «դարեր ի վեր հալածված» քրիստոնյա այլ ժողովուրդների և արաբական աշխարհում բնակվող մահմեդականների ոչնչացումը (էջ 25, 62), վկայակոչում մասնավորապես 1914 թ. մայիսին Այվալիում երիտթուրքերի կազմակերպած հազարավոր հույների կոտորածը (էջ 68):

Երիտթուրքական վարչակարգի ազգայնամոլ քաղաքականության դիմազերծումը նման ընդարձակ ետնախորքի վրա Սենյոբոսի մոտեցման անառարկելի առավելություններից է, քանզի թեպետ հակիրճ դիտարկումներով, այդուհանդերձ նա հիմնավորապես բացահայտում է Օսմանյան կայսրության՝ իբրև ցեղասպան պետության դիմագիծը և առավել ցցուն դարձնում արևմտահայության ցեղասպանության օրինաչափությունը:

Ինչպես տվյալ ժամանակաշրջանում Հայոց մեծ եղեռնին անդրադարձած ֆրանսիացի բոլոր հեղինակները, Սենյոբոսը ևս անհրաժեշտ ուշադրություն է դարձնում XIX դարի վերջին և XX դարի սկզբին Հայկական հարցում Օսմանյան կայսրության դաշնակից կայսերական Գերմանիայի ընդգծված հակահայկական քաղաքականության մերկացմանը: Դա մասամբ պայմանավորված

է Առաջին աշխարհամարտի տարիներին Ֆրանսիայի ախոյանի հանդեպ ֆրանսիացի ժամանակակիցների տածած անթաքույց ատելությամբ: Այնուամենայնիվ, չնայած այս անհերքելի իրողությանը, Սենյոբոսին հաջողվել է Գերմանիայի արևելյան քաղաքականությունը վերլուծել միանգամայն անկողմնակալ դիրքերից:

Հեղինակն իրավամբ պատմական այս ժամանակաշրջանում այլազգիների նկատմամբ թուրքերի կիրառած հալածանքների ու հանցանքների պատասխանատու է համարում նաև Վիլհելմ II-ին, որին, Աբդուլ Համիդի հետ մեկտեղ, բնութագրում է իբրև «կայսերական ավազակի» (էջ 24-25): Ինչ վերաբերում է Գերմանիայի հետ թուրքերի դաշինքին, հեղինակը հատման կետեր է արձանագրում պանիսլամիզմի և պանգերմանիզմի միջև, քանի որ եթե առաջինը ենթադրում էր Թուրքիայի տիրապետության հաստատումն Աֆրիկայում և Ասիայում, ապա երկրորդը նախատեսում էր Գերմանիայի միահեծան գերիշխանությունը Եվրոպայում (էջ 25, 47): Եվրոպայում և գաղութներում Գերմանիայի ծավալապաշտական քաղաքականության առնչությամբ նա տալիս է անհրաժեշտ իրատեսական մեկնաբանություններ, ըստ որոնց՝ կայսրի գլխավոր նպատակը ոչ միայն Եվրոպայում նոր տարածքներ ձեռք բերելն էր, այլև համաշխարհային առևտրին տիրանալը, ինչը և պայմանավորել է Համբուրգից մինչև Պարսից ծոց ձգվող երկաթգծի կառուցման գաղափարի հղացումը և ըստ այդմ՝ Թուրքիայի բարյացակամ վերաբերմունքի ապահովումը (էջ 132-133):

Այս պայմաններում միանգամայն օրինաչափ է, որ Սենյոբոսն անհրաժեշտ ուշադրություն է բևեռում նաև թե՛ նախապատերազմական ժամանակաշրջանում և թե՛ Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրությունում գերմանական ռազմական առաքելությունների ծավալած գործունեության վերլուծությանը: Թուրքական բանակի մարտունակության բարձրացումը նա դիտում է իբրև ֆելդմարշալ Կոլմար ֆոն դեր Գոլթցի ղեկավարությամբ գործած ռազմական առաքելության արդյունք (էջ 123), իսկ նրան հաջորդած Լիման ֆոն Սանդերսին անվանում է դահիճ և մեծ մարդասպան, որը «այնպես, ինչպես Էնվերն ու Ջեմալը, մարդկության առջև կմնա ամոթիար» (էջ 124):

Մենք մեզ իրավունք ենք վերապահում Սենյոբոսի հուշերը

դասել Օսմանյան կայսրության և Հայոց ցեղասպանության պատմության արժեքավոր սկզբնաղբյուրների շարքը, որոնք բացահայտում են և հիմնավորապես խարազանում սուլթանական և երիտթուրքական վարչակարգերի գործունեության մեծապետական, ազգայնամոլ բնույթը, ինչպես նաև, անտարակույս, անուղղակիորեն հուժկու հակահարված տալիս հայ ժողովրդի մեծ ողբերգության պատմությունն աղավաղող նախկին և մերօրյա գրչակների սին ջանքերին: Միաժամանակ հարկ է նկատի ունենալ, որ նրա հուշերը մեծապես կօժանդակեն նաև Հայոց ցեղասպանության պատմությունն ուսումնասիրող պատմաբանների աշխատանքների անկողմնակալ իրականացմանը[391]:

*Բանբեր Երևանի համալսարանի, Հայագիտություն,*
*2014, թիվ 1, էջ 3-13*

[391] Այս առումով միանգամայն օրինաչափ է, որ ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի ղեկավարությունը, հաշվի առնելով Սենյոբոսի հուշերի աղբյուրագիտական նշանակությունը և այժմեականությունը, նպատակահարմար գտավ դրանց վերահրատարակությունը (տես *Capitaine Seignobosc H.*, Turcs et Turquie. La réédition est préparée par Varoujean Poghosyan, Erevan, 2013):

# ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

## ՄԻ ԱՆՏԻՊ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Հայ դատին սատար կանգնելու գործում անժխտելի է ֆրանսիացի մտավորականների մեծ ներդրումը: Սկսած համիդյան ժամանակներից, նրանք բազմիցս բողոքի խոսք են ուղղել ընդդեմ հայկական կոտորածների, անարգանքի սյունին գամել Հայոց ցեղասպանության կազմակերպիչներին: 1897 թ. Փարիզում կարդացած հրապարակային դասախոսության ժամանակ նշանավոր պատմաբան, Ֆրանսիական ակադեմիայի անդամ Ալբեր Վանդալը պատմության մեջ առաջին անգամ Աբդուլ Համիդին անվանեց «կարմիր սուլթան»: Հետագա տարիներին Ժ. Ժորեսը, Ա. Ֆրանսը, Վ. Բերարը և ուրիշներ հանդես են եկել ի նպաստ հայ ժողովրդի:

Ստորև հրապարակվող փաստաթուղթը կազմվել է 1922 թ. դեկտեմբերին՝ ֆրանսիացի մտավորականների մի մեծ խմբի կողմից և ուղղվել Լոզանի կոնֆերանսին, որը գումարվել էր Մերձավոր Արևելքի հետ կապված վիճելի հարցերի քննարկման համար: Սույն կոչով ֆրանսիացի 74 մտավորական, որոնց թվում Նոբելյան մրցանակի երկու դափնեկիր (Ա. Ֆրանս, Շ. Ռիշե) և Ֆրանսիական ակադեմիայի վեց անդամ կոնֆերանսի մասնակից տերություններից պահանջում են արդարացի լուծում տալ հայկական խնդրին:

Փաստաթուղթը, որի պատճենը (մեքենագիր) պահվում է ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվում (ֆ. 430, ց. 1, գ. 1195), ներկայացնում ենք հայերեն թարգմանությամբ:

## Կոլեժ դը Ֆրանսի պրոֆեսոր պ[արոն] Ա. Մեյեի նախաձեռնությամբ հետևյալ կոչը, ի նպաստ Հայաստանի, հենց նոր հղվեց Լոզանի կոնֆերանսին

Այն ահավոր վիճակը, որում ներկայումս գտնվում է Թուրքիայի հայ բնակչությունը, ամոթաբեր է քաղաքակիրթ աշխարհի համար:

Բեռլինի վեհաժողովից ի վեր, ուր թուրքական կառավարությունը խոստացել էր բարենորոգումներ անցկացնել կայսրության հայկական նահանգների վարչակարգում, և ուր եվրոպական վեց տերություններ ներգրավվել էին այդ բարենորոգումների վերահսկման գործում, այս դժբախտ ժողովուրդն արժանացել է միմիայն կոտորածների:

Պատերազմի ընթացքում դաշնակիցները հանդիսավորությամբ հայտարարեցին, որ Թուրքահայաստանի ազատագրումն իրենց մղած պայքարի նպատակներից է: Ազգերի Լիգայի համաձայնագրի 22-րդ հոդվածը և այն որոշումները, որոնք հաղթանակից հետո ընդունվեցին դաշնակից կառավարությունների կողմից, ամրապնդեցին այդ խոստումը: Ազգերի լիգան միաձայն ընդունած բազմաթիվ որոշումներով հաստատել է հայկական ցեղի ապագան ապահովելու անհրաժեշտությունը՝ Ազգային օջախի ստեղծման միջոցով, մի բան, որը նրան խոստացել էին: Այդ խոստումները դեռևս չեն իրագործվել, և հայ ժողովուրդը կրել է շատ ավելի մեծ տառապանքներ, քան այն, որ նա կրել էր պատերազմից առաջ: Այս ժողովրդի՝ դաշնակիցների գործին ցուցաբերած նվիրվածության հետևանքով, ավելի քան մեկ միլիոն երկու հարյուր հազար հայեր վերջին ութ տարում զոհվել են՝ դառնալով կոտորածների, տեղահանությունների, համաճարակների և սովի զոհ: Կենդանի մնացածները հարկադրված են եղել լքել իրենց հայրենի հողը և գաղթել տարբեր երկրներ, ավելի քան 600.000 դժբախտներ այսօր մնացել են առանց տանիքի, վրանների տակ են, ժամանակավոր փայտաշեն տնակներում, զուրկ՝ իրենց հենարանների օգնությունը ստանալուց, քանի որ աշխատունակ տղամարդիկ ձերբակալվել են և արտաքսվել ներքին նահանգներ:

Մարդասիրությունը և արդարությունը, դաշնակիցների պատիվը և հենց իրենց՝ թուրքերի շահերը պահանջում են, որ վերջ տրվի Հայաստանի այս տանջանքներին և անհապաղ ստեղծվի

Ազգային օջախ, որպեսզի գաղթականների այս խմբերը կարողանան այնտեղ համախմբվել և ապրել ապահով պայմաններում:

Ֆրանսիայի առաջատար մտավորականները միշտ պաշտպանել են այս աշխատասեր և խաղաղասեր հին ժողովրդի դատը, ժողովուրդ, որը գրականության և արվեստների բարեկամն է և որր դարեր շարունակ այնքան մեծ ծառայություններ է մատուցել քաղաքակրթությանը: Լոզանի կոնֆերանսի հիմնական խնդիրներից մեկը պետք է լինի նրա գոյությունը և ազգային մշակույթի պահպանումն ապահովող անհրաժեշտ միջոցառումների մշակումը: Մենք լիահույս ենք, որ Ֆրանսիայի և կոնֆերանսին մասնակցող բոլոր երկրների պատվիրակները բարոյական այդքան մեծ նշանակություն ունեցող այս հարցին կտան արդարացի լուծում, որը համանշանակ պահանջվում է ամենքի կողմից:

Փարիզ, 8-ը դեկտեմբերի 1922 թ.

Ստորագրել են.

Անատոլ Ֆրանս, Ֆրանսիական ակադեմիայի անդամ: Դքսուհի դը Նոայ: Մորիս Բարրե[392], Ֆրանսիական ակադեմիայի անդամ, Սենի դեպուտատ: Գաբրիել Ֆոր: Ա. Մեյե, Կոլեժ դը Ֆրանսի պրոֆեսոր: Շառլ Դիեհլ[393], Ինստիտուտի[394] անդամ: Գեներալ դր Լակրուա: Գուստավ Շլումբերժե[395], Ինստիտուտի անդամ: Ֆերնան Գրեշ: Անրի դը Ռենիե[396], Ֆրանսիական ակադեմիայի անդամ: Ռենե Պինոն: Պոլ Դուկա: Ա. Բարտոլոմե: Ֆ. Ժեմիե[397], Օդեոնի տնօրեն: Սեգոն-Վեբեր: Վիսան դ'Ինդի: Էդուարդ

---

[392] Բարրե Մորիս (1862-1923) – գրող, Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1906):

[393] Դիեհլ Շառլ (1859-1944) – բյուզանբագետ, Հնագիտության և դասական բանասիրության ակադեմիայի անդամ (1910):

[394] 1795 թ. ստեղծված Ֆրանսիական Ինստիտուտն ընդգրկում է մինչ այդ երկրում գործող հինգ ակադեմիաները՝ Ֆրանսիական ակադեմիան, որի 40 անդամները կրում են «անմահ» տիտղոսը, Հնագիտության և դասական բանասիրության ակադեմիան, Գիտությունների ակադեմիան, Գեղարվեստի ակադեմիան, Բարոյական և քաղաքական գիտությունների ակադեմիան:

[395] Շլումբերժե Գուստավ (1844-1929) – բյուզանդագետ, Հնագիտության և դասական բանասիրության ակադեմիայի անդամ (1884):

[396] Ռենիե Անրի դը (1864-1936) – գրող, Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1911):

[397] ժեմիե Ֆիրմին (1869-1933) – դերասան, Փարիզի Օդեոն թատրոնի տնօրեն (1922-1930:

Բրանլի[398], Ինստիտուտի անդամ: Գաբրիել Մուրեյ: Մ[ոնսին-յո]ր Շ. Լաժիե, «Արևելքի գործի» տնօրեն: Մ[ոնսինյո]ր Ալֆրեդ Բոդրիլար[399], Ֆրանսիական ակադեմիայի անդամ: Օգյուստ Գովեն, Ինստիտուտի անդամ: Էմիլ Բուրե, «Էկլերի» տնօրեն: Լյուդովիկոս դը Կոնտանսոն: Աբբա ժ. Դելարյու: Էռնեստ Լեմոնոն, Գրականագետների ընկերության կոմիտեի անդամ: Ֆերդինանդ Բրյունո, բանասիրական ֆակուլտետի դեկան: Անրի Բերտելեմի, իրավունքի ֆակուլտետի դեկան: Մ. Մոլիար, գիտությունների ֆակուլտետի դեկան: Դ[ոկտո]ր Շառլ Ռիշե[400], Ինստիտուտի անդամ: Ռոբեր դը Ֆլեր[401], Ֆրանսիական ակադեմիայի անդամ: Պիեռ Միլ: Ալֆրեդ Կրուասե[402], Ինստիտուտի անդամ: Պոլ Բոյե, Ժամանակակից արևելյան լեզուների դպրոցի վարչական տնօրեն: Գուստավ Էրվե, «Վիկտուարի» գլխավոր խմբագիր: Էդմոնդ Հարոկուր, Կլյունիի թանգարանի տնօրեն: Էժեն Լոտիե, «Ազատ մարդու» գլխավոր խմբագիր: Մորիս Կրուասե, Կոլեժ դը Ֆրանսի վարչական տնօրեն: Հ. Կասիտան, իրավունքի ֆակուլտետի պրոֆեսոր: Ալբեր Բենար, Գեղարվեստի դպրոցի տնօրեն: Անրի Ռաբո[403], Կոնսերվատորիայի տնօրեն: Անրի Բիդու: Ռենե Պյուո[404]: Անդրե Շերադամ: Գաբրիել Մուրեյ[405]: Ֆրեդերիկ Մակլեր: Ա. Ֆերդինանդ Հերոլդ: Է. Սենար[406], Ինստիտուտի անդամ, Ասիական ընկերության նախագահ: Բուիսոն, Բուշ դյու Ռոնի դեպուտատ: Ա.

---

[398] Բրանլի Էդուարդ (1844-1940) – ֆիզիկոս, Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1911):

[399] Բոդրիլար Ալֆրեդ (1859-1942) – կարդինալ, Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1918), աշխատությունները նվիրված են կրոնի պատմության հարցերին:

[400] Ռիշե Շառլ (1850-1935) – ֆիզիոլոգ, Նոբելյան մրցանակի դափնեկիր (1913), Բժշկական ակադեմիայի անդամ (1898), Գիտությունների ակադեմիայի անդամ (1914):

[401] Ֆլեր Ռոբեր դը (1872-1927) – դրամատուրգ, Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1920):

[402] Կրուասե Ալֆրեդ (1845-1923) – գրականագետ, Հնագիտության և դասական բանասիրության ակադեմիայի անդամ (1886):

[403] Ռաբո Անրի (1873-1949) – կոմպոզիտոր, Կոնսերվատորիայի տնօրեն (1920-1941):

[404] Պյուո Ռենե – 1922 թ. Իզմիրի կոտորածների վերաբերյալ հրատարակել է «Իզմիրի վախճանը» խորագիրը կրող գրքույկը (Փարիզ, 1922), որը գրված է ականատեսների վկայությունների հիման վրա: 1923 թ. այն վերահրատարակվել է «Իզմիրի վերջին օրերը» վերնագրով:

[405] Գ. Մուրեյի ազգանունը հիշատակվում է երկրորդ անգամ:

[406] Սենար Էմիլ (1847-1928) – գրականագետ, արևելագետ, Հնագիտության և դասական բանասիրության ակադեմիայի անդամ (1882):

Մարժե, Մառնի դեպուտատ: Քսավիե Վալլա, Արդեշի դեպուտատ: Շառլ Գիդ, իրավունքի ֆակուլտետի պրոֆեսոր: Պոլ Ֆուրնիե[407], Ինստիտուտի անդամ, իրավունքի ֆակուլտետի պրոֆեսոր: Էդուարդ Սուլիե, Փարիզի դեպուտատ: Մորիս Բելե, Վերին Գարոնի դեպուտատ: Մարիուս Մուտե, Ռոնի դեպուտատ: Գաստոն Դեշան, Դյո Սևրի դեպուտատ: Շ. Գեռնիե, Իլ դը Վիլենի դեպուտատ: Լեոն Դոդե[408], Գոնկուրի ակադեմիայի անդամ, Սենի դեպուտատ: Լյուսիեն Գիտրի: Ալֆրեդ Վալլետ, «Մերկուր դը Ֆրանսի» տնօրեն: Պոլ Լաբբե, Ֆրանսիական դաշնակցության գլխավոր քարտուղար: Անտուան Բուրդել: Ժ. Լակուր-Գայե[409], Ինստիտուտի անդամ: Ռենե Դյումեսնիլ, «Ռապելի» գլխավոր խմբագիր: Գ. Միլե, Բարձրագույն ուսումնասիրությունների դպրոցի պրոֆեսոր: Դ[ոկտո]ր Ռու[410], Պաստյորի ինստիտուտի տնօրեն: Լ. Հավե[411], Ինստիտուտի անդամ: Կամիլ Ֆլամարիոն[412], Ինստիտուտի անդամ: Ռաշիլդ: Ժ. Հ. Ռոսնի ավագ[413], Գոնկուրի ակադեմիայի անդամ: Վիկտոր Բերար, Ժյուրայի սենատոր: Լուի Մարտեն, Վարի սենատոր: Ժան Գիլոտո, Մորբիանի սենատոր: Դ[ոկտո]ր Նոել Կազալս, Կանտալի սենատոր: Հ. դը Լավրինյե, Վանդեայի սենատոր:

*Լրաբեր հասարակական գիտությունների,*
*1997, թիվ 3, էջ 174-176*

---

[407] Ֆուրնիե Պոլ (1853-1935) – պատմաբան, իրավունքի պատմության մասնագետ:
[408] Դոդե Լեոն (1867-1942) – գրող, Գոնկուրի ակադեմիայի անդամ (1897):
[409] Լակուր-Գայե Ժորժ (1856-1935) – պատմարան, Բարոյական և քաղաքական գիտությունների ակադեմիայի անդամ (1911), աշխատությունները նվիրված են Ֆրանսիայի նոր դարի պատմության հարցերին:
[410] Ռու Էմիլ (1853-1933) – բժիշկ, Բժշկական ակադեմիայի անդամ (1895), Գիտությունների ակադեմիայի անդամ (1899), Պաստյորի ինստիտուտի տնօրեն (1922-1930):
[411] Հավե Լյուդովիկոս (1849-1925) – գրականագետ:
[412] Ֆլամարիոն Կամիլ (1842-1925) – աստղագետ:
[413] Ռոսնի ժոզեֆ Հենրի ավագ (1856-1940) – գրող, Գոնկուրի ակադեմիայի անդամ (1896):

## «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅՄԱՆ ՆԱԽԱՏԱՊՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

### (Ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի ծննդյան 100-ամյակի առիթով)

1920-ական թվականներից ի վեր մինչև 1960-ական թվականների կեսերը, կապված 1923 թ. Թուրքական հանրապետության հռչակման հետ, Հայոց ցեղասպանության պատմությունը միջազգային ասպարեզում շրջանցվել է, ինչը պայմանավորված էր թուրքական ղեկավար շրջանակների կողմից պետական մակարդակով իրականացվող՝ հայ ժողովրդի մեծ ողբերգությունը մոռացության մատնելու քաղաքականությամբ: Այդ իսկ պատճառով, Թուրքիային՝ Խորհրդային Միությանը հակադրելու հարցում շահագրգիռ արևմտյան կապիտալիստական մեծ տերությունները, ելնելով իրենց ռազմավարական շահերից, նրան հաճոյանալու նպատակով գերադասել են տասնամյակներ շարունակ Հայոց ցեղասպանության շուրջ պահպանել կատարյալ լռություն[414]: Համանման դիրքորոշում է որդեգրել նաև ԽՍՀՄ-ը, որը Թուրքիայի հետ իր միջպետական փոխհարաբերությունները չվտանգելու մտավախությունից դրդված պետական մակարդակով համառորեն չէր ընդունում Հայոց ցեղասպանությունը, թե՛ հայ ժողովրդի և թե՛ թեմայի գիտական ուսումնասիրության համար դրանից բխող անբարեհաճ հետևանքներով:

Այս պայմաններում, ինքնին հասկանալի է, որ Խորհրդային Միությունում, ինչպես նաև դրա կազմում ընդգրկված ՀԽՍՀ-ում, 1920-ական թվականներից մինչև 1960-ական թվականները Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության ասպարեզում գիտական աշխատանքներ չէին կարող իրականացվել: 1960-ական թվականների կեսերին, սակայն, միջազգային ասպարեզում, այդ թվում ԽՍՀՄ-ում, Հայոց ցեղասպանության պատմության նկատմամբ ի հայտ եկան հետաքրքրության որոշակի դրսևորումներ՝

[414] *Margossian N.*, L'avant et l'après du génocide des Arméniens.– «Գիտության գլոբուս», 2005, հ. 5. էջ 44-45:

կապված Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի հետ: Երկարատև ընդմիջումից հետո Հայոց ցեղասպանության պատմությունը վերստին գրավեց տարբեր երկրների հայ և այլազգի պատմաբանների ուշադրությունը:

Ակադեմիական ուսումնասիրությունների հարթությունից զատ, այս ժամանակաշրջանից ի վեր, բարեբախտաբար, Հայոց ցեղասպանության՝ իբրև պատմական հավաստի եղելության նկատմամբ դիրքորոշման փոփոխություններ նկատվեցին նաև տարբեր երկրների ղեկավար շրջանակների կողմից. աշխարհում սկիզբ դրվեց Հայոց ցեղասպանության ճանաչման միջազգային գործընթացին (1965 թ. այն առաջինը պաշտոնապես ճանաչեց Ուրուգվայը):

Դրական տեղաշարժերի ընդհանուր հորձանուտում ընդգրկվեց նաև մեր հանրապետությունը, որտեղ 1960-ական թվականների կեսերից ի վեր խորհրդահայ պատմաբանները սկսեցին հրատարակվել Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված առաջին գիտական ուսումնասիրությունները[415]: 1966 թ. ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի հովանու ներքո, ռուսերեն լեզվով, լույս ընծայվեց «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի ժողովածուն[416], որով, ըստ էության, հիմք դրվեց մեր հանրապետությունում այս իրադարձության գիտական ուսումնասիրության սկզբնավորմանը: Տիտղոսաթերթի վրա նշված է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի՝ իբրև խմբագրի ազգանունը, իսկ հաջորդ երեսին նշված են նրա և պատմական գիտությունների թեկնածու Ռուբեն Սահակյանի՝ իբրև այն կազմողների ազգանունները:

Այս արժեքավոր ժողովածուի լույս ընծայման հանգամանքներին անիրազեկ ընթերցողներին կարող է, հարկավ, թվալ, թե ինչպես և ակադեմիական յուրաքանչյուր հրատարակություն, այն սոսկ մի քանի տարիների բեղմնավոր աշխատանքի արգասիք է: Սակայն, իրականում, այս գրքի հրատարակությանը

---

[415] *Կիրակոսյան Ջ. Ս.*, Առաջին համշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ. Երևան, 1965:

[416] Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Составители М.Г. Нерсисян, Р.Г. Саакян. Под редакцией М.Г. Нерсисяна, Ереван, 1966. См. также второе, дополненное издание: Ереван, 1982.

ոչ միայն նախորդել են շուրջ քսան երկար ու ձիգ տարիների՝ մասնավորապես արխիվային պրպտումներով հագեցված երկարատև որոնումներ, այլև աշխատանքի առյուծի բաժինն իրականացնող պատմաբանին վիճակված է եղել հատել տատասկոտ ճանապարհ և հաղթահարել միջպետական փոխհարաբերությունների քառուղիներում արձանագրված ելևէջներով պայմանավորված բազում խոչընդոտներ:

1947-1953 թթ. ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աբգար Հովհաննիսյանի արխիվում երկու տարի առաջ մենք հայտնաբերեցինք այս ժողովածուի մասին նրա գրավոր կարծիքը[417]: Այն վկայում է, որ ժողովածուի նախնական տարբերակը պատրաստ է եղել դեռևս 1947 թ.: Ըստ այս փաստաթղթի՝ դժվար չէ կռահել, որ ժողովածուի կազմման ուղղությամբ Մ. Ներսիսյանն աշխատանքներն սկսել է իրականացնել Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո, ինչն, անտարակույս, պայմանավորված է եղել ետպատերազմյան ժամանակաշրջանում միջազգային ասպարեզում տեղի ունեցած քաղաքական արմատական փոփոխություններով:

Հարցի էությունը հետևյալն է. խիստ դժգոհ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի գրաված դիրքորոշումից, Ի. Ստալինը 1945 թ. մարտի 19-ին չեղյալ է հայտարարել 1925 թ. խորհրդա-թուրքական բարեկամության և չեզոքության մասին պայմանագիրը և հարց է բարձրացրել Ռուսաստանի և Թուրքիայի միջև մինչև Առաջին համաշխարհային պատերազմը գոյություն ունեցած սահմանները վերականգնելու մասին: Այս պայմաններում, երբ ծագել է քեմալականների կողմից ռազմակալված հայկական տարածքների նկատմամբ ԽՍՀՄ-ի տարածքային հավակնությունների հիմնավորման անհրաժեշտությունը, խորհրդահայ պատմաբաններին, անկասկած, հանձնարարություն է տրվել ձեռնամուխ լինելու Հայոց ցեղասպանության պատմությանը վերաբերող փաստաթղթերի ժողովածու կազմելու աշխատանքներին:

---

[417] ՀՀ ԱԱ. ֆ. 1169 (Ա. Ռ. Հովհաննիսյանի). ց. 1. գ. 64. թ. 1-7. Տես նաև՝ *Иоаннисян A.P.* Неизданные произведения. Составитель, автор предисловия и комментария В.А. Погосян, Ереван, 2009, с. 148-155:

Մ. Ներսիսյանն անձնական զրույցների ընթացքում թեև այս հարցի շուրջ չէր ծավալվում, այդուհանդերձ, ակնարկելով Ռուսական կայսրության արտաքին գործերի նախարարության արխիվում՝ հարցի պատմությանը վերաբերվող դիվանագիտական գրագրություններն իրեն անկաշկանդ տրամադրելու հանգամանքը, բազմիցս նշում էր՝ «Հրահանգը տրված էր վերից»: Կարելի է միայն կռահել, թե ինչպիսի հրահանգի կարող էր առնչվել խոսքը և թե, առավել ևս, 1940-ական թվականների երկրորդ կեսին ով կարող էր լինել նման ցուցումի հեղինակը:

Ամեն դեպքում, խորհրդահայ պատմաբաններին, թեպետ և քաղաքական հեռահար նպատակներ հետապնդող հենքի վրա, այդուհանդերձ, վերջապես ընձեռվել է Հայոց ցեղասպանության պատմության գիտական ուսումնասիրության բնագավառում առաջին քայլերը կատարելու հնարավորություն: Առաջնեկը, ինչպես տեսնում ենք եղել է Մ. Ներսիսյանը:

Ըստ Մ. Ներսիսյանի անձնական արխիվում պահվող որոշ փաստաթղթերի՝ 1947 թ. նա շարունակել է փաստաթղթերի որոնումները Ռուսական կայսրության արտաքին գործերի նախարարության արխիվում, իսկ 1947-1951 թթ., ժողովածուն վերջնական տեսքի բերելու և տպագրության ներկայացնելու հարցում նրան սատարել է միջազգային հարաբերությունների պատմության ականավոր մասնագետ, այդ տարիներին ԽՍՀՄ Արտաքին գործերի նախարարությունում վարչության պետ և կոլեգայի անդամ, հետագայում ակադեմիկոս (1964 թ.) Վլադիմիր Խվոստովը[418]: Նշենք, որ այդ տարիներին, ինչպես պարզվում է, աշխատանքների իրականացմանը մասամբ օժանդակել է նաև մեր հայրենակից, հետագայում XX դարի դիվանագիտական հարաբերությունների պատմության հայտնի մասնագետ Վիկտոր Իսրաելյանը:

Այդուհանդերձ, չնայած Վ. Խվոստովի ջանադրությանը, միջպետական փոխհարաբերություններում տեղի ունեցած հերթական շրջադարձային փոփոխությունների հետևանքով, Մ. Ներսիսյանին վիճակված չի եղել ժողովածուն լույս ընծայել

---

[418] Տես նրա մասին՝ *Гинцберг Л.И.*, Владимир Михайлович Хвостов // Портреты историков. Время и судьбы. Т. 2. Всеобщая история, М., 2000, с. 382-392:

1940-1950-ական թվականների սահմանեզրին[419]: Ի. Ստալինի վախճանից հետո, ԽՍՀՄ-ը 1953 թ. պաշտոնապես հրաժարվել է Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներից[420], ինչը չէր կարող, բնականաբար, չխոչընդոտել ժողովածուի հրատարակությանը:

Հարկ ենք համարում մանրամասնել մեկ հանգամանք ևս. ըստ Ա. Հովհաննիսյանի գրավոր կարծիքի՝ ժողովածուի նախնական տարբերակն ունեցել է «Հայերի ոչնչացումը թուրքերի կողմից» խորագիրը: Ինչպես նշվեց, Մ. Ներսիսյանն աշխատանքների առաջին փուլն ավարտին է հասցրել մինչև ցեղասպանությունն իբրև երևույթ դատապարտող՝ ՄԱԿ-ի Գլխավոր նստաշրջանի կողմից 1948 թ. դեկտեմբերի 9-ին «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի ընդունումը: Ուստի, «ցեղասպանություն» /«genocide» բառեզրը նա դեռևս չէր կարող օգտագործել Նշենք, ի դեպ, որ Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի համատարած բնաջնջման կապակցությամբ՝ 1944 թ. Ռ. Լեմկինի հայտնագործած «ցեղասպանություն» արտահայտության օգտագործման նպատակահարմարությունն առաջինը փորձել է 1945 թ. դեկտեմբերին հիմնավորել Փարիզում լույս տեսնող «Հառաջ» լրագրի հիմնադիր Շավարշ Միսաքյանը (1884-1957)[421]:

Ստորև հրապարակող՝ Մ. Ներսիսյանի արխիվում պահվող, 1940-1960-ական թթ. առնչվող մի շարք թղթակցություններ լույս են սփռում ժողովածուի լույս ընծայման նախապատմության վրա:

Ռ. Սահակյանի նամակները, լուսաբանում են ժողովածուի պատրաստման վերջնական փուլին առնչվող որոշ մանրամասներ: Կցանկանայինք կարևորել նրա՝ 1966 թ. դեկտեմբերի 30-ի

---

[419] Դիվանագիտական հարաբերությունների մասին, որոնց ընթացքում Ստալինը հմտորեն խաղարկում էր Հայկական հարցը, տես *Messerlian Z.*, The Question of Kars and Ardahan // Armenian Studies. Annals of the Lebanese Association of Armenian University Graduates, Beyrouth, 1973, p. 85-94; *Ternon Y.*, La Cause arménienne, Paris, 1983, p. 140-145 ; Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментария. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария Барсегов Ю.Г., т. 2, часть 2, М., 2002, с. 514-518.

[420] *Ternon Y.*, նշվ. աշխ., էջ 145:

[421] *Ternon Y.*, Éclats de voix. Recueil de textes 1974-2005, Paris, 2006, p. 14.

թվակիր նամակը Մ. Ներսիսյանին, որտեղ նա մանրամասնում է ժողովածուի կազմման աշխատանքներում իր ունեցած մասնակցությունը:

## Մկրտիչ Ներսիսյանը՝ Աբգար Հովհաննիսյանին

Հարգելի Աբգար Ռուբենովիչ

Երեկ Արտ. գործ. մինիստրության պատասխանատու աշխատակիներից մեկը…[422] իր մոտ կանչեց ինձ և հայտնեց, թե վերևից ցուցմունք կա, որ հարկավոր է գործը արագացնել: Ես այստեղ արդեն ահագին նյութեր հավաքել եմ և կարծում եմ նյութերի հավաքումը կվերջացնեմ ապրիլի կեսերին: Նյութերի մի զգալի մասը արդեն մեքենագրված է: Մնում է, որ դուք արագացնեք այդտեղի գործը: Պետք է արագ կերպով պատրաստվեն նյութերը և ուղարկվեն այստեղ: Պատրաստ նյութերը պետք է ուղարկել հետևյալ հասցեյով. Москва, Большая Серпуховка 15, Архив внешней политики России, [зав. арх.] Е.П. Моровской для Нерсисяна.

Ուղարկում եմ թարգմանչի հաշիվը: Նրանից արդեն 3 մամուլ թարգմանություն ընդունել ենք. խնդրում եմ չձգձգեք և ուղարկեք նրան հասանելիք գումարը: Կից ուղարկում եմ նաև թարգմանչի հետ կնքված պայմանագիրը[423]: Առայժմ այսքան:

Բարևներով՝ Մկրտիչ Ներսիսյան
25/III-47, Մոսկվա

*ՀՀ ԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 434, թ. 19*

---

[422] Անընթեռնելի ազգանուն:

[423] Չի պահպանվել:

## Մկրտիչ Ներսիսյանը՝ Աբգար Հովհաննիսյանին

Հարգելի Աբգար Ռուբենովիչ!

Շտապում եմ հայտնել երկու կարևոր նորություն:

1. Այստեղ որոշել են հայկական հարցին նվիրված ժողովածուն հրատարակել երկու հատորով: Առաջին հատորը ընդգրկելու է մինչ Հոկտեմբերյան ռևոլուցիան (մինչ 1917 թ.): Մեծ ցանկություն կա առաջին հատորը հրատարակել որքան հնարավոր է շուտ: Այդ պատճառով հարկավոր է առայժմ աշխատել առաջին հատորի համար: Խնդրում եմ արագացնեք այդտեղ նյութերի պատրաստումը: Լեոյի արխիվում բավական նյութեր կան 1890-ական թվականների վերաբերյալ (դրանցից մի մասը, մոտավորապես 10 փաստաթուղթ արդեն թարգմանել ենք. թարգմանության պատճենները ձեզ մոտ կան և կարելի է համեմատել): Պետք է այդ նյութերը շտապ կերպով թարգմանել և ուղարկել: Համենայն դեպս, այժմ հարկավոր են նյութեր առաջին հատորի համար:

2. Այստեղ որոշել են ժողովածուում զետեղել միայն արխիվային, չհրապարակված նյութեր. այնպես որ, այս ևս նկատի ունեցեք:

Ես արդեն հիմնականում ավարտել եմ նյութերի հավաքումը: Այժմ լրացուցիչ պրպտումներ եմ կատարում և հսկում եմ նյութերի մեքենագրման և ընդհանրապես պատրաստման վրա:

Մինչև այժմ չստացանք նյութեր Երևանից: Պետք է շտապեցնել:

Առայժմ այսքան:

Բարևներով՝ [ստորագրություն]

20/IV.47 թ.

Մոսկվա

P. S. Ուղարկում եմ մեքենագրուհու և նյութերը համեմատող ստուգողների հաշիվները: Խնդրում եմ կարգադրեք նրանց հասանելիք գումարները շուտ ուղարկվեն:

[Ստորագրություն]

*ՀՀ ԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 434, թ. 17-17 շրջ.*

## Մկրտիչ Ներսիսյանը՝ Աբգար Հովհաննիսյանին

Հարգելի Աբգար Ռուբենովիչ!

Երեկ ժողովածուի կապակցությամբ տեղի ունեցավ մի խորհրդակցություն, ուր որոշվեց ժողովածուի հավելվածում դնել հրատարակված մի շարք կարևոր դոկումենտներ և ֆոտո նկարներ: Այս նպատակի համար հարկավոր են հետևյալ հրատարակությունները.

1. *Արամ Անտոնյան*, Մեծ ոճիրը. այս գիրքը գտնվում է ՀԿ(բ) Կենտ. Կոմիտեի գրադարանում. Էլչիբեկյանը գիտի դրա մասին:

2. *Առաքել Մ. Կեչյան*, Էպիզոդներ 1915-1918 թթ. հերոսների կյանքից, Բուխարեստ, 1938 թ., այս գրքի վերնագիրը լավ չեմ հիշում. Պարսամյանը գիտի այդ գիրքը:

3. *Հայ գաղթականներ*, Ալբոմ. հրատ. հայկ. գաղթականների նկարների ալբոմ է. սրա մասին գիտի Արամ Բաբայանը.

4. Հայ Գողգոթան, հատ. Ա.:

Պրոֆ. Խվոստովի և պրոֆ. Ադամովի (սա մասնակցում է ժողովածուի կազմման գործում) հանձնարարությամբ գրում եմ ձեզ, որ այդ հրատարակությունները, որքան հնարավոր է շուտ ուղարկեք մինիստրություն Խվոստովի կամ Ադամովի հասցեյով: Դոկումենտների թարգմանությունը և նկարահանումները կկատարվի այստեղ: Ուրեմն, սպասում ենք այդ գրքերին:

Խորհրդակցությունում պարզվեց, որ գործը պահանջում է, որ ես այստեղ մնամ ոչ միայն մայիսին, այլև միգուցե ամբողջ հունիսին: Դեռ հարկավոր է արխիվում որոշ լրացուցիչ պրպտումներ կատարել, նյութերը վերջնականապես պատրաստել տպագրության համար, կազմել ժողովածուն, ծանոթագրություններ գրել և վերջապես հետևել տպագրության-կորեկտուրային և այլն: Ճիշտ է, Խվոստովի հանձնարարությամբ ինձ օգնում են երկու ընկեր և ապա պրոֆ. Ադամովը: Բայց այսպես թե այնպես ես պետք է մնամ այստեղ մինչև գրքի տպագրությունը: Ես ուզում էի մայիսի սկզբներին վերադառնալ, բայց Խվոստովը կատեգորիկ կերպով դեմ արտահայտվեց:

[30/IV.47 թ., Մոսկվա]

*ՀՀ ԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 434, թ. 15-16*

24 ноября 1947 г.
N 365/ау

**В.Л. Исраэлян М.Г. Нерсисяну**

Многоуважаемый Мкртич Гегамович!

15 августа я срочно выехал в Москву по своим личным (квартирным) делам, не сумев, к сожалению, повидаться с Вами перед отъездом. За время, прошедшее после нашей последней встречи, я проверил и идентифицировал все географические названия, встречающиеся в сборнике, отредактировал некоторые неудовлетворительные переводы документов, подготовил предметный указатель. В настоящее время я занимаюсь сверкой включенных нами в сборник документов с их оригиналами, находящимися в архиве МИДа. Эту работу приходится проделывать особенно тщательно, т.к. в первых же документах я обнаружил много опечаток. Мне разрешили производить сверку документов условно, с тем, чтобы я в ближайшие дни представил письмо от Вашего имени с просьбой о допуске меня к этой работе. Я Вас очень прошу выслать авиопочтой письмо на имя Хвостова, с тем, чтобы я мог продолжать работу. (Проект письма при сем прилагаю)[424].

Я советовался с В.М. Хвостовым о необходимости утверждения сборника в министерстве. Он полагает, что это необходимо, но обещал переговорить дополнительно с руководством и на днях сообщить мне. Я немедленно доложу Вам о его ответе и с Вашего разрешения представлю сборник на утверждение после сверки. Боюсь только, что в его нынешнем виде сборник представлять в министерство неудобно; он весь перечеркнут и переправлен. Придется отдать перепечатать; признатся из-за этого в Ереван и снова возвращаться для утверждения в Москву (мое присутствие значительно ускорит процесс утверждения) не имеет смысла, поэтому прошу Вас разрешить мне отдать сборник перепечатать здесь, в Москве. Обойдется эта работа 400-500 рублей. Разрешите ли Вы мне этот расход?

---

[424] Չի պահպանվել:

Думаю, что в течение месяца я закончу всю работу и привезу в Ереван утвержденный для печати сборник.

Жду Ваших указаний по адресу: Москва, Трехпрудный переулок 18, кв. 11, Исраэлян В.Л. Кроме того, если есть ко мне какие либо поручения, то я с удовольствием выполню их.

Письмо на имя Хвостова также прошу прислать на мой адрес.

Остаюсь уваж. Вас

В. Исраэлян

24.VIII.51 г.

Москва

*<< ԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 433, թ. 86-87 շրջ.*

**В.Л. Исраэлян М.Г. Нерсисяну**

Многоуважаемый Мкртич Гегамович!

Продолжаю работу над сборником. Все уже сделано – т.е. я сверил документы с оригиналами, нашел все шифры документов. Осталось найти еще 14 документов, на которых не указан шифр (источник). Приходится терять по несколько дней на каждый документ, а без указания источника министерство не примет на утверждение.

По Вашему указанию я говорил в министерстве о возможности издания нашего сборника. Мне ответили, что принципиальных возражений против темы сборника нет, но окончательно могут дать ответ после представления сборника. Дал уже машинистке печатать сборник (часть). Как только найду источник оставшихся документов, сверю их и тоже дам печатать. После считки вновь напечатанных экземпляров сборника сдам их в министерство и буду следить чтобы быстрее дали бы ответ.

Мкртыч Гегамович! Архивное Управление МИДа получило письмо от т. Парсамяна, в котором последний просит уточнить текст послания католикоса. Меня просили передать, что Управление сможет выполнить просьбу т. Парсамяна, если он пришлет в Управление (на имя т. Маяковского) журнал «Арарат» за 1915 г., в котором было опубликовано послание католикоса русскому царю (1655 года, кажется). Им нужно что-то проверить и тогда они исполнят просьбу т. Парсамяна.

Прошу Вас прислать на мой домашний адрес отношение в МИД (см. приложение). Как только я закончу все со сборником, я с Вашим отношением сдам его в МИД.

На днях здесь появился А.Р. Иоаннисян. Он тоже работает в архиве. Мои квартирные дела пока неопределены и, думаю, что в ближайшее время все должно выясниться и тогда я Вам обо всем напишу. Ваше поручение относительно литературы я выполню.

С приветом

Остаюсь уваж. Вас В. Исраэлян

Мой адрес: Москва, Трехпрудный переулок 18, кв. 11, Исраэлян В.Л.

[1951 г., Москва]

*<< ИИ, ф. 818, д. 1, д. 433, рр. 88-89*

**В.Л. Исраэлян М.Г. Нерсисяну**

Многоуважаемый Мкртич Гегамович!

Сообщаю Вам о выполнении данных мне поручений:

1. Сборник. Неделю тому назад мне сообщили основные замечания министерства по нашему сборнику. Сборник будет рекомендован министерством к печати. Предлагают исключить ряд документов (главным образом английские и др. иностранные документы), а также некоторые выдержки из документов, в той или иной степени, затрагивающие курдов. Рекомемдуют исключить несколько (2-3) документов и во второй части (1918-1922). Выразили, между прочим, удивление, что мы так мало и бледно осветили резню в Константинополе 1896 г. Но у нас, по-моему, других документов не было (кроме №№ 27 и 28 моего макета). Не поискать ли мне здесь в архиве? Я отстаиваю нашу точку зрения и соглашаюсь исключить лишь в крайнем случае. Ответ – официальный будет послан Вам в ближайшее время, как только согласуем все вопросы. Ответ, как я Вам уже писал, будет положительный. Кто подпишет это письмо, я пока не знаю. Может быть Францев.

2. Литература по интересующим Вас темам. Присылаю составленный мной список литературы по теме «Империализм США и Англии на Ближнем Востоке». Указанные в списке книги изданы в период 1920-51 гг. Главным образом в США и Англии. Последние сведения у меня за

октябрь 1951 г. Если Вам необходимо я продолжу этот список с привлечением литературы на других языках. Если необходимо я выясню какие есть в Москве и могу составить краткие аннотации на интересующие Вас книги. При наличии иновалюты у Академии можно было выписать ряд книг через «Международную книгу». В списке указаны цены.

3. В архиве министерства имеются материалы по интересующим Вас темам. Я, в частности, узнавал о турец. политике в отн. России в период первой русской революции. Мне могли бы показать эти материалы, также как и по другим темам, если у меня была бы официальная бумага о том, что я разрабатывая данную или какую либо другую тему. Я с большим удовольствием продолжил бы сотрудничество у Вас, работая здесь в архиве по какой либо указанной Вами теме с тем, чтобы в определенный срок представить институту статью определенного объема.

4. О материалах к работе «Положение трудящихся в маршаллизованной Турции». Я нашел здесь товарища, который мог бы информировать Вас свежими материалами на эту тему, но пока, к сожалению, мы не нашли той формы в которой он будет это делать. Вас устраивало бы, если этот товарищ присылал бы ежемесячно статью, которая содержала бы *исключительно фактический* материал и в самой незначительной степени комментарии автора статьи? Вы могли бы брать из этой статьи лишь интересующие Вас факты и использовать их по усмотрению. Статья будет писаться по материалам турецкой печати. Если это Вас устраивает, то можно будет найти и способ оплаты его работы.

Уважаемый Мкртич Гегамович, я буду в Ереване в середине января. Если Вы склонны принять мое предложение о разработке мной какой либо темы по архивам царского МИДа и написании статьи, а также о дальнейшем моем сотрудничестве у Вас, то я прошу не освобождать меня от работы до приезда. При свидании мы договоримся и о теме, и о сроках, и об объеме работы. Я был бы весьма благодарен за такое решение вопроса.

Жду ответа.

Уваж. Вас В. Исраюлян

19.XII. 51 г. Москва.

*<< ИИ, ф. 818, д. 1, д. 433, рр. 90-92*

## Ռուբեն Սահակյանը՝ Մկրտիչ Ներսիսյանին

Բարև ձեզ, հարգելի Մկրտիչ Գեղամովիչ

Ուղարկում եմ Կիրովի երկու հոդվածները: Ես թերթեցի «Терек»-ի հունվար-մարտ ամիսների համարները, որտեղ զետեղված Կիրովի հոդվածներից միայն այդ երկուսն են վերաբերում հայերին, ըստ որում, «У беженцев» հոդվածում «армяне» բառը ոչ մի անգամ չի հիշատակվում (թեև Ար. Մնացականյանը իր գրքում չակերտների մեջ բերում է իբր Կիրովի խոսքերը «армяне»)[425]: Բայց հոդվածում խոսքը, իսկապես, հայ գաղթականների մասին է: Ես արտագրեցի սկզբից մինչև այն մասը, որտեղ արդեն խոսվում էր բարեգործական աշխատանք ծավալած առանձին անհատների մասին և քիչ էր կապվում սկզբի մասի հետ:

Երկրորդ հոդվածը՝ «Народ страдающий», արտագրել եմ լրիվ, առանց որևէ փոփոխության[426]:

Ինչ վերաբերում է «Оборона Вана» գրքին, այն Հայկական Ազգային բյուրոյի հրատարակությունն է, 48 էջանոց գրքույկ է, որից 32-ը նվիրված է դեպքերին նախորդող ժամանակաշրջանին, իսկ բուն ինքնապաշտպանությանը վերաբերող էջերից դժվար է ամփոփ շարադրանք առանձնացնել, որը լրացներ Անրի Բարբիի գրքից բերված հատվածը, ուստի, ես գիրքը լրիվ ընթերցելուց հետո ոչ մի դուրսգրում չարեցի: Եթե դուք, Մկրտիչ Գեղամովիչ, ցանկանում եք ծանոթանալ գրքին, կարելի է պատվիրել Լենինի անվան գրադարանից, հետևյալ շիֆրով. V 272/28. Оборона Вана, Москва, 1917, 48 стр.

Շվեյցարական թերթեր, ինչպես և «Times»-ը, Լենինի գրադարանում չկան (1915-16 թթ.-ի): Վաղը կգնամ Օտար գրականության գրադարան: Առայժմ այսքանը, հարգելի Մկրտիչ Գեղամովիչ: Հաջողություն ձեզ և Նունիկին՝ մեր ընդհանուր գործում: Բարևներով՝ Ռուբիկ:

14/IV. 66 թ.:

*ՀՀ ԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 435, թ. 22-22 շրջ.*

---

[425] Տես *Մնացականյան Ա. Ն.*, Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ, Երևան, 1965, էջ 83:

[426] Այն զետեղվել է ժողովածուում. տես Геноцид армян в Османской империи, Ереван, 1966, с. 392-393:

## Ռուբեն Սահակյանը՝ Մկրտիչ Ներսիսյանին

Հարգելի Մկրտիչ Գեղամովիչ

Լենինի անվան գրադարանում դուրս եմ գրել և ծանոթացել 100-ից ավելի գրքերի՝ հայկական հարցի վերաբերյալ: «Կապույտ գրքերի» 1888 թ. հրատարակությունում կա մի հետաքրքիր փաստաթուղթ, որը, իմ կարծիքով, արժեր թարգմանել. դա «Հայ հայրենասերների միության» նախագահ Հակոբյանի նամակն է լորդ Սոլսբերիին, որին կցված է մեծ հավելված՝ վանեցիների նամակը իրենց վիճակի մասին, անստորագիր է: Հակոբյանը նշում է, որ նրանք վախից իրենց անունները չեն տալիս:

Մյուսը (ժողովածուի առաջին մասին վերաբերող)՝ դա 1890 թ. նոյեմբերի 25-ին Մանչեստերում կայացած քաղաքային միտինգի մասին հաղորդումն է՝ նվիրված արևմտահայերի ծանր վիճակին: Այստեղից կարելի էր տալ գրքույկի վերջում բերված երկու հոդվածները՝ «Manchester Guardian» և «Manchester Courier» թերթերից: Դուք կարող եք ընկ. Շուշիկին ասել, նա անմիջապես կպատվիրի, իսկ Դիլոյանը կարող է արագ թարգմանել այդ երեք նյութերը: Գրում եմ վերնագրերը և շիֆրը.

1. H 130/21, N 1 1888-89. Correspondence Respecting the Condition of the Populations in Asiatic Turkey: 1888-1889, London, 1889.

2. H 653/239. Turkish Misrule in Armenia. Town's Meeting in Manchester, Held November 25th, 1890, Manchester, 1890.

Բացի դրանից, Մկրտիչ Գեղամովիչ, ռուսերեն մի բրոշյուր կա, որը համարյա լրիվ կարելի էր զետեղել ժողովածուում: Դա մի հայ կնոջ՝ տիկին Ֆ-յանցի (ականատեսի) պատմածն է: Նույնպես Լենինի գրադարանում է, կարելի է պատվիրել և լրիվ մեքենագրել, 13 էջ է ընդամենը. վերնագիրն է. На пути Харберта до Урфы. Москва, 1917, 15 стр. [Շիֆրը՝] V 23-413 N 3:

Առայժմ այսքանը: Բարևներով՝ Ռուբիկ:

19/IV. 66 թ.:

P. S. Ես մատիտով տեղերը նշում եմ. 1-ը 7-9-րդ էջերի վրա է, 2-րդը՝ «Manchester Guardian»)՝ 21-22:

*ՀՀ ԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 435, թ. 23-23 շրջ.*

## Ռուբեն Սահակյանը՝ Մկրտիչ Ներսիսյանին

Ընկ. Մ. Գ. Ներսիսյանին

Վերջերս ինչ-որ մարդիկ կեղծ լուրեր են տարածել այն մասին, որ իբր «Геноцид армян в Османской империи» ժողովածուն ավելի շատ կապված է իմ անվան հետ: Նման խոսակցություններին վերջ դնելու և հարկ եղած դեպքում այդ անբան անձանց հակահարված տալու համար, ես որոշեցի գրել սույն նամակը և հայտնել ձեզ, որ ես անձամբ առիթ չեմ տվել, այլ, ընդհակառակը, որոշ հարցասերների միշտ էլ պարզ ասել եմ, որ արխիվային *բոլոր* փաստաթղթերը և մնացած նյութերի հիմնական մասը *ձեր կողմից* հավաքված են եղել ժողովածուի աշխատանքներին ինձ ներգրավելուց շատ առաջ: Ես ասել եմ նաև և ներկայումս այն կարծիքին եմ, որ ժողովածուի վերնագիրը, տիտղոսաթերթի հաջորդ էջին գրվածը՝ Составители: М.Г. Нерсисян, Р.Г. Саакян և ձեր առաջաբանում տրված բացատրությունը՝ Архивные документы и основная часть литературного материала собраны и подготовлены к печати М.Г. Нерсисяном, определенная часть литературного материала собрана и подготовлена к печати Р.Г. Саакяном, ճիշտ է արտահայտում մեզնից յուրաքանչյուրի կատարած աշխատանքը:

Ռ. Սահակյան
30/XII. 66 թ.:
ՀՀ ԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 435, թ. 24-24 շրջ.

*Պատմաբանասիրական հանդես, 2010, թիվ 1, էջ 234-244*

## ՖՐԱՆՍԻԱՑԻ ՀԱՅԱՍԷՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ՝ ՄԱԹՏԷՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

1890-ական թուականներին սանձազերծուած Հայոց ցեղասպանութեան արձագանքները Ֆրանսիայում հնչել են աւելի ուժգին, քան այլուր[427]: Հայ ժողովրդի բնաջնջման կապակցութեամբ բողոքի խրոխտ ձայն են բարձրացրել մեծ թուով ֆրանսիացի մարդասեր գործիչներ, այդ թւում հոգեւորականներ եւ դիւանագէտներ: Հայոց ցեղասպանութեան պատմութեան ուսումնասիրողները եւ, մասնաւորապէս, հայրենական պատմաբանները, սակայն, ուշադրութիւնը կենտրոնացնելով գլխաւորապէս եւրոպական մեծ տէրութիւնների պաշտօնական անկարեկից քաղաքականութեան քննադատութեան վրայ, երկար տարիներ չէին ուսումնասիրել հայանպաստ շարժման ընթացքը Ֆրանսիայում ԺԹ. դարի 90-ական թուականներին եւ յաւուր պատշաճի չեն արժեւորել հայ ժողովրդի՝ ֆրանսիացի բարեկամների լուման՝ կոտորածների կազմակերպիչներին դիմազերծելու եւ անարգանքի սիւնին գամելու գործում: Այս խնդիրներն առ այսօր կարօտ են համակողմանի ուսումնասիրութեան, թէեւ արդէն արուել են առաջին քայլերն այդ ուղղութեամբ[428]:

1890-ական թուականներին արեւմտահայութեան լայնածաւալ կոտորածներին՝ Ֆրանսիայում հրապարակայնացում տալու գործում նշանակալից աւանդ ունի հայր Շարմէտանը (1844-1921), որը ոչ միայն հրատարակել է իրադարձութիւնների հաւաստի պատկերն արտոցոլող փաստաթղթերի փոքրածաւալ, սակայն, արժէքաւոր ժողովածուներ, տպագրել յօդուածներ, ֆրանսիացի մտաւորա-

---

[427] *Macler F.*, La nation arménienne. Son passé, ses malheurs, Paris, 1924, p. 45. Տես նաեւ *Տասնապետեան Հ.*, «Եւրոպական պրոպագանդ» (1899-1906).– «Ազդակ», 1983, թիւ 48, էջ 972:

[428] *Khayadjian E.*, Archag Tchobanian et le mouvement arménophile en France, Marseille, 1986; 2ème éd., Alfortville, 2001 ; *Duclert V.* et *Pécout G.*, La mobilisation intellectuelle face aux massacres d'Arménie (1894-1900).– Les exclus en Europe, 1830-1930. Sous la direction d'A. Guslin et D. Kalifa, Paris, 1999 ; *Պօղոսյան Վ.*, Հայոց ցեղասպանութեան առաջին փուլը ֆրանսիական պատմագրութեան և հասարակական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ), Երեւան, 2005; *Kharazian M.*, De l'illusion à la tragédie. La France et la Question arménienne de 1894 à 1908 (des massacres hamidiens jusqu'à la Révolution jeune-turque), Paris, 2007.

կաններին տեղեկութիւններ հաղորդելու միջոցով նրանց դրդել զօրավիգ լինելու նահատակուող հայ ժողովրդին, այլեւ ի նպաստ արեւմտահայութեան կազմակերպել է հանգանակութիւններ[429]:

Հայր Շարմէտանը, ինչպես եւ հայ ժողովրդի պաշտպանութեան գործին զինուորագրուած ֆրանսիացի միւս գործիչներն Օսմանեան կայսրութիւնում ծաւալուած ողբերգական իրադարձութիւնների մասին տեղեկացել են նախ եւ առաջ հայ եւ այլազգի ականատեսների վկայութիւնների, մասնաւորապէս կայսրութիւնում հաւատարմագրուած ֆրանսիացի դիւանագէտների (Պոլ Կամբոն, Ժիւլ դը լա Բուլինիէր, Ալֆոնս Սիլիէր, Մորիս Կարլիէ, Ֆերնան Ռոքեֆերի եւ այլք)՝ Գ. հանրապետութեան կառավարութեանը յղած պաշտօնական հաղորդագրութիւնների միջոցով: Նրանց անկողմնակալ, մերկացուցիչ զեկուցագրերն ամփոփող «Դեղին գրքի» լոյս ընծայումը մեծապէս նպաստել է Հայոց ցեղասպանութեան գործընթացի ծաւալի եւ մանրամասների մասին յստակ պատկերացումների ձեւաւորմանը Ֆրանսիայում եւ Եվրոպայում, ինչպէս նաեւ տարբեր կողմնորոշում ունեցող ֆրանսիացի պատմաբանների եւ գործիչների, այդ թւում հայր Շարմէտանի՝ իրադարձութեան շուրջ հայեացքների ակնյայտ բարեշրջմանը: Օսմանեան կայսրութիւնում անձնուրաց գործունէութիւն ծաւալած ֆրանսիացի դիւանագէտների թւում էր Դիարբեքիրում փոխհիւպատոս նշանակուած Գուստաւ Մէյրիէն (1852-1930)[430]:

Արեւմտահայութեանը կործանումից փրկելու գործում հայ ժողովրդի ֆրանսիացի պաշտպանների յիշարժան ներդրումը գնահատել են դեռեւս իրադարձութեան ժամանակակից հայ գործիչներից ոմանք, այդ թւում, Ա. Չոպանեանը եւ Ա. Ահարոնեանը, որոնք յստակ զանազանել են պաշտօնական Ֆրանսիայի թրքամէտ քաղաքականութիւնը՝ ժողովրդավարական Ֆրանսիայի ներկայացուցիչների՝ պետական քաղաքականութեանը հակոտնեայ, հայանպաստ դիրքորոշումից եւ բարձր գնահատել վերջիններիս գործունէութիւնը[431]: Նրանց թւում է եղել նաև Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք

---

[429] Նրա հայանպաստ գործունէութեան մասին տե՛ս *Պօղոսյան Վ.*, նշվ. աշխ., էջ 173-185:

[430] Նրա հայանպաստ գործունէութեան մասին տե՛ս *Պօղոսյան Վ.*, Գուստաւ Մէյրիեն համիդեան կոտորածների մասին.– Հայոց ցեղասպանութեան պատմութեան և պատմագրութեան հարցեր, 2004, թիւ 9, էջ 152-159:

[431] Այդ մասին տե՛ս *Պօղոսյան Վ.*, նշվ. աշխ., էջ 254-255:

Մատթէոս Իզմիրլեանը (1845-1910), որը հայր Շարմէտանի եւ Գուստաւ Մէյրիէի հայանուէր գործունեութեան առնչութեամբ դեռեւս 1896 թ. յայտնել է իր երախտագիտութիւնը՝ յարգանքի խորին տուրք մատուցելով նրանց:

Այդ մասին են վկայում ստորեւ ներկայացուող՝ Իզմիրլեանի գրչին պատկանող երկու նամակները, որոնք յայտնաբերել ենք հայրենական արխիւներում: Հրապարակուող փաստաթղթերից առաջինը, որը պահւում է Էջոյի անձնական արխիւում (ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտ, Էջոյի արխիւ, ցուցակ 1, գործ 161, թ. 1-2), հայր Շարմէտանին յղուած Իզմիրլեանի նամակի պատճէնն է հայերէն թարգմանութեամբ՝ 1896 թ. Փարիզում ֆրանսիացի հոգեւորականի հրատարակած «Հայկական նահատակութիւն» խորագրով փաստաթղթերի ժողովածուի կապակցութեամբ[432]: Այս առիթով Մ. Իզմիրլեանը 1896 թ. յունիսի 21-ի թուակիր նամակում գրել է Մկրտիչ Ա կաթողիկոսին. «Այս գրութեանց կը կցորդեմ նաև ֆրանսացի նշանաւոր Երէցին, Հայր Շարմէթանի՝ մէկ գրոյն թարգմանութիւնն, որով հինգ հազար ֆրանքի գումար մը յուղարկած էր մեզ իր կատարած հանգանակութեան արդիւնքըն, եւ մեր պատասխանագրին պատճէնն, ինչպէս նաեւ թարգմանութիւնն ուրիշ նամակի մը, զոր ուղղած ենք առ Հայր Շարմէթան, «Պատմութիւն Մարտիրոսութեան Հայոց» անունով իր հրատարակած մէկ երկասիրութեան առթիւ, շնորհակալութիւն յայտնելով եւ անուղղակի պատասխանելով իր երկին մէջ տեսնուած ինչ ինչ դիտողութիւններու»: Սոյն նամակը պահւում է ՀՀ Ազգային արխիւում՝ «Էջմիածնի Սուրբ Լուսավորչական Սինոդ» ֆոնդում (թիւ 56), եւ հրատարակուել է Սանդրօ Բէհբուդեանի կողմից Մ. Իզմիրլեանի գրագրութիւններն ամփոփող փաստաթղթերի ժողովածուում[433]: Այդուհանդերձ, հայր Շարմէտանին յղած նամակների պատճէնները նշուած ֆոնդում չեն պահպանուել, ուստի եւ նշուած ժողովածուում չէին կարող զետեղուել: Հրապարակելով մեզ հասու

---

[432] *Charmetant P[ère] F.*, Martyrologe arménien. Tableau officiel des massacres d'Arménie dressé après enquêtes par les six ambassades de Constantinople et statistique dressée par des témoins oculaires, Paris, s. d. [1896].

[433] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան (1873-1910 թթ.), գիրք Ը. Մատթէոս Բ Իզմիրլեան կաթողիկոս ամենայն հայոց: Կազմեց և առաջաբանը գրեց Սանդրօ Բէհբուդեանը, Երեւան, 2001, էջ 109:

այդ նամակը՝ լրացնում ենք Մ. Իզմիրլեանի գործունէութեանն առնչուող փոքր բացերից մէկը:

Երկրորդ փաստաթուղթը Մ. Իզմիրլեանի՝ Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպան Պ. Կամբոնին ուղղուած նամակի պատճէնն է, որով պատրիարքն իր հիացմունքն է յայտնում Դիարբեքիրում Գ. Մէյրիէի անձնուրաց վարքագծի առիթով: Պահպանուել է փաստաթղթի ֆրանսերէն պատճէնը (Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարան, Ֆրանսիական հիւպատոս Պիատի արխիւ, թղթապանակ 257, վաւերագիր 9գ, թերթ 9), որին կից ներկայացնում ենք նաեւ հայերէն թարգմանութիւնը:

## 1

Թարգմանութիւն

Առ Հայր Շառմէթան

Հաճիր էիք նոր երկ մ’ ’ի լոյս ընծայել, ձօնուած հայ ժողովրդեան նահատակութեան եւ ’ի վեր հանել այնքան պարճախօս լեզուով ու անհերքելի փաստերով Հայաստանի մէջ գործուած անլուր խժդժութիւններն ու քստմնելի սրբապղծութիւններն, զորս ծածկել կը փորձուի քաղաքակիրթ աշխարհին, որպես զի կարելի լինի անարգել ’ի գլուխ հանել այս բազմաչարչար ժողովուրդն անէացնելու խորհուրդն:

Հետզհետէ քանի կը հասնին հեռաւոր գաւառներէ եղերական անցքերու մանրամասնութիւններն, այնքան աւելի անկարող կ’զգամք զմեզ չափելու վերքիս խորութիւնը եւ շուարեալ կը մնանք՝ մեր ընդհանուր լքմանը մէջ՝ չը կարենալով գտնել դարման մը այս աղէտից, որոյ ներքեւ ազգ մը ազգոյն կը հեծէ:

Տասն եւ ութ տարէ ’ի վեր Հայաստանեայց Առաքելական ուղղափառ Ս. Եկեղեցին ամէն տեսակ հալածանաց դիմագրաւելով եւ ողողելով իր նահատակ որդւոց արյամբն, փառաւորած է Ասիոյ մէջ Քրիստոսի Աւետարանն ու խաչն, այլ սակայն այնքան դարերէ յետոյ՝ առաջին անգամ այս Զատկի մեծ տօնին՝ մինչդեռ ազգ ու ազենք կը փառաբանէին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հրաշափառ Յարութիւնը, Հայաստանի մէջ դադրած էին քրիստոնէական եկեղեցւոյ ալելուք եւ օրհնութիւնք եւ համա-

տարած պատանք մը կրկին մահերու հոգւոյ եւ մարմնոյ՝ կը պարփակէր Յիսուսի հաւատացեալներն:

Եկեղեցիներն ու մենաստաններն առհասարակ քար ու քանդ, խաչ ու աւետարան անհետ, անթիւ ժողովուրդ իր կրօնականներով նահատակուած կտտամահ, անոնց ընտանիքներն ու զաւակներն գերի վարուած իրենց դահիճներու ձեռօք, հազարաւորներ արգելանաց ներքև պահուած բռնի իսլամացումով, ողջ մնացող երեւելի անձերն ու կրօնաւորներն բանտերն լեցուած ու խոշտանգումներու ենթակայ, ամբողջ երկիրն նոր կոտորածներու սպառնալեաց առջեւ սարսափահար եւ ամէնքն ի միասին անասելի կարօտութեան մէջ, վարակուած համաճարակ հիւանդութիւններով եւ մատնուած յառաջիկային համար սովու աղէտից, առհասարակ վիճակ հայ ժողովրդեան, զոր եւրոպական մեծ պետութիւնք՝ միջազգային մուրհակաւ՝ յանձն առած էին պահպանել կեղեքումներու ու հալածանաց դէմ:

Նորագոյն տեղեկութեանց առջեւ այլ ևս շատ հեռի կը մնան աղեխարշ իրականութենէն՝ թէ դեսպանաց խնամօք պատրաստուած վիճակագիր եւ թէ կրօնական սրբապղծութեանց ու այս կարգի ոճիրներուն վերաբերող ցուցակն, զորս Ձեր Արժանապատուութիւնը հրատարակած էր իր նոր երկին մէջ: Նոյն ցուցակին մէջ չէր կրցած յիշատակուել արդէն մէր «Կաթոլիկ ազգայնոց» վերաբերեալ մասն, այն միակ պատճառաւ, որ չ'էին հաղորդուած մեզ պէտք եղած տեղեկութիւններն, մինչդեռ մեր բողոքական ազգայինք ընտրել են գիտակ առնելը զմեզ իրենց վիճակին: Այսուհանդերձ ակներեւ է, որ այս տառապեալ ազգին բոլոր զաւակներն, թէ անոնք, որ ստուար մեծամասնութեամբ կը մնան իրենց մայրենի եկեղեցւոյ ծոցն եւ թէ անոնք, որ յարուած են ուրիշ եկեղեցեաց, միեւնոյն աղէտներու ենթարկուած են, որոց ամենուն համար միևնոյն կսկիծն կզգամք մեք, զի ամենքն ալ միեւնոյն հայրենիքի զաւակներն են, ունենալով նոյն ծագումն, նոյն պատմութիւնն, նոյն լեզուն, նոյն Քրիստոնէական կրօնն, եւ կենաց, ընչից ու պատւոյ ապահովութեան եւ կրօնական ազատութեան համար մեր ըրած խնդիրն բնականաբար ամէնուն կը պատկանի անխտիր:

Շնորհակալ ենք Ձեզ 'ի սրտէ, հայր պատուական, որ

Ձեր պաշտպանութիւնը կը նուիրեք այս մարտիրոս ազգին, որ անվեհեր հոչակելով ճշմարտութիւններն՝ դատախազ կը կանգնիք[434] նահատակներու արեան, իբրև ճշմարիտ պաշտօնեայ Աւետարանի՝ վառուած քրիստոնէական սիրով եւ ֆրանսական ազգին բնածիր առատասիրութեան ու եղբայրակցութեան մեծ ոգւոյն, որ հակառակ ամէն ճնշումներու դուրս կը ցայտէ միշտ լուսաշող, երբ մանաւանդ մարդկութեան իրաւունքին վրայ է խնդիրն, եւ կը վերաբերի ընկճեալ ու հալածեալ ազգի մը դատին:

Ակն ունելով միշտ վայելել Ձեր օժանդակութիւնն, կը խնդրեմք ’ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ պահպանել զՁեզ զմշակդ այգւոյն իւրոյ ընդ հովանեաւ իւր աջոյն եւ մնամք աղօթարար:

(ստորագրեալ)
Պատրիարք Կ. Պոլսոյ
Մատթէոս

19 ապրիլ/1 մայիս 1896
ի պատրիարքարանի Հայոց
Կ. Պոլիս

**2**

Sa Béatitude M[onseigneur] Matheos Izmirlian, Patriarche des Arméniens grégoriens à M[onsieur] P[aul] Cambon, ambassadeur de la République Française à Constantinople, le 23avril/5 mai 1896

Monsieur, l’ambassadeur,

Notre métropolitain *ad interim* de Diarbékir m’a décrit en termes élogieux l’admirable conduite du consul de France en cette ville, l’honorable M[onsieur] Meyrier, lors des tragiques événements du 20 octobre passé.

M[onsieur] Meyrier, non content de laisser pendant plus de dix jours les portes du Consulat ouvertes aux chrétiens de toute classe qui s’y réfugiaient, a parvenu à leurs besoins et leur a prodigué ses consolations tout le temps que ces malheureux y ont passé.

Le rapport ajoute que l’honorable Consul a payé de sa personne

[434] Բնագրում՝ կանգնինք:

dans les moments les plus critiques de ces jours néfastes, et qu'il a été pour beaucoup dans le rétablissement de l'ordre, faisant renaître un peu de confiance dans les cœurs par ses paroles rassurantes et par sa visite à l'évêché arménien, alors que l'affolement était général dans la ville.

Cette belle conduite de M[onsieur] Meyrier lui a crée d'incontestables titres de reconnaissances de tous les chrétiens de Diarbékir et cette reconnaissance rejaillit sur la France dont M[onsieur] Meyrier est un des plus nobles enfants et le gouvernement de la République, dont il a su être le digne représentant. Nous avons acquittons d'un agréable devoir, Monsieur l'Ambassadeur, en réitérant à Votre Excellence nos chaleureux remerciements pour le dévouement au malheur dont l'honorable M[onsieur] Meyrier fait preuve, et nous profitons de cette occasion pour prier Votre Excellence d'agréer les assurances de notre haute considération.

Le Patriarche des Arméniens de Turquie
Matheos.

* * *

Նորին Շնորհութիւն, Ն[որին Սրբութիւ]ն լուսաւորչական հայերի պատրիարք Մատթէոս Իզմիրլեանը՝ Կօստանդնուպոլսում Ֆրանսիական հանրապետութեան դեսպան պ[արոն] Պ[ոլ] Կամբոնին, 23-ը ապրիլի/5-ը մայիսի 1896 [թ.]

Պարոն դեսպան,

Դիարբեքիրում մեր արքեպիսկոպոսի պաշտօնակատարը գովաբանական արտայայտութիւններով ինձ է ներկայացրել այդ քաղաքում Ֆրանսիայի հիւպատոս, պատուելի պ[արոն] Մէյրիէի հիասքանչ վարքագիծը՝ անցեալ [տարուայ] հոկեմբերի 20-ի ողբերգական իրադարձութիւնների ընթացքում:

Պ[արոն] Մէյրիէն, չբաւարարուելով աւելի քան տասն օր շարունակ հիւպատոսարանի դռները բաց անելով իւուրաքանչիւր քրիստոնեայի առջեւ՝ ապաստան յատկացնելու համար, հոգացել է նաև նրանց կարիքները եւ միշտ մխիթարել այնտեղ գտնվող դժբախտներին:

Ձեկուցագիրն աւելացնում է, որ պատուարժան հիւպատոսը վտանգել է իր անձն այդ չարագուշակ օրերի ամենաճգնաժամային

պահերին եւ շատ բան է արել կարգի վերականգնման համար, մխիթարական խօսքերով եւ հայկական եպիսկոպոսութիւն իր այցելութեամբ՝ սրտերում վերածնել փոքր-ինչ հաւատ, այն դէպքում, երբ սարսափը քաղաքում համընդհանուր էր:

Պ[արոն] Մէյրիէի այս բարեացակամ վարքագիծը նրա համար ապահովել է Դիարբեքիրի բոլոր քրիստոնեաների անառարկելի երախտագիտութիւնը, որը վերաբերում է նաեւ Ֆրանսիային, որի ամենաազնուաբարոյ զավակներից է պ[արոն] Մէյրիէն եւ [Ֆրանսիական] հանրապետութեան կառավարութեանը, որի արժանի ներկայացուցիչն է նա դարձել: Մենք կատարում ենք հաճելի պարտականութիւն, պարոն դեսպան, եւս մէկ անգամ Ձերդ գերազանցութեանը յղելով մեր ջերմագին շնորհակալանքները՝ այն նուվիրուածութեան կապակցութեամբ, որն ի յիայտ է բերել պ[արոն] Մէյրիէն դժբախտութեանն ի տես եւ օգտւում ենք այս առիթից՝ խնդրելու Ձերդ գերազանցութեանն ընդունել հարգանքների մեր հաւաստիքը:

Թուրքիայի հայերի պատրիարք
Մատթէոս

*Հանդէս ամսօրեայ, 2010, թիվ 1-12, էջ 495-504*

## ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՎՐՈՊԱՑԻ ՆՎԻՐՅԱԼՆԵՐԸ՝ ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Հայոց Եկեղեցու ղեկավարները տարբեր առիթներով երախտիքի խոսք են ուղղել այլազգի գործիչներից ոմանց՝ Հայոց ցեղասպանության ընթացքում հայ ժողովրդին սատարելու, վերջնական բնաջնջումից նրան փրկելու համար գործադրած անշահախնդիր ջանադրության համար: Այս առնչությամբ վերջերս լուսաբանեցինք Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք Մատթեոս Իզմիրլյանի (1845-1910) գործունեությանը վերաբերող երկու դրվագ: Դեռևս 1896 թ. պատրիարքը արևմտահայության բոցաշունչ պաշտպաններ՝ ֆրանսիացի հայտնի հոգևոր գործիչ հայր Շարմետանին (1844-1921) և Դիարբեքիրում Ֆրանսիայի փոխհյուպատոս Գուստավ Մեյրիեին (1852-1930), հայտնել էր երախտագիտության իր խորին զգացումը[435]:

Հայաստանի Ազգային արխիվում մեր հայտնաբերած երեք անտիպ վավերագրեր համալրում են մեր տեղեկություններն այդ նույն ասպարեզում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի (1847-1930) դիրքորոշման վերաբերյալ՝ Մեծ եղեռնին հաջորդած ժամանակաշրջանում:

Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան (1851-1930) տեղեկանալով Գևորգ Ե-ի՝ անգլիացի պետական գործիչ լորդ Ջորջ Բրայսին (1838-1922) հղած շնորհակալական կոնդակի մասին, ի նշան երախտագիտության նրա հայանպաստ գործունեության, 1916 թ. դեկտեմբերի 15-ի թվակիր նամակում Կաթողիկոսի ուշադրությունը հրավիրել է «ուրիշ երեք մեծանձն հայասէրներու վրայ», ինչպիսիք էին շվեյցարացի հասարակական գործիչ Լեոպոլդ Ֆավրը (1846-1922), Ֆրանսիայում հայանպաստ շարժման ականավոր ներկայացուցիչներ՝ աշխարհահռչակ գրող Անատոլ Ֆրանսը (1844-1924) և հայտնի հասարակական գործիչ Վիկտոր Բերարը (1864-1931), որոնց իրավամբ դասել է «Հայկական դատին ջատագովներուն առաջին կարգին մէջ»[436]: «Եթէ Ձեր Վեհափառութիւնը,– գրում է նա,–

---

[435] *Պօղոսեան Վ.*, Ֆրանսիացի հայասէր գործիչները՝ Մատթէոս Իզմիրլեանի գնահատմամբ.– «Հանդէս ամսօրեայ», 2010, թիվ 1-12, էջ 495-504:

[436] «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան», գիրք ԺԳ, Գէորգ Ե Վշտալի

այս երեք մեծանձն անձնաւորութեանց մէկյմէկ օրինաձիր կոնդակ ղրկել բարեհաճի, լրացուցած պիտի ըլլայ այն բարձր գնահատման գործը որ սկսած է Լորտ Պրայսով, եւ իբր Ծայրագոյն Պատրիարք Ամենայն Հայոց, յայտնած պիտի ըլլայ, յանուն Ազգին, մեր խորին երախտագիտութիւնը ամէն անոնց որ վեհանձնօրէն ստանձնած են մեր բոլոր դժբախտութեանց արդար հատուցումը պահանջելու գործը»[437]:

Գևորգ Ե-ն անմիջապես արձագանքել է Պողոս Նուբարի առաջարկությանը: Արդեն 1917 թ. հունվարի 12-ին Հայրապետական դիվանը նրան հղած նամակով տեղեկացրել է նշված գործիչներին կոնդակներ շնորհելու՝ Կաթողիկոսի ցանկության մասին. «Ն. Սրբութիւնը հաճութեամբ ստացաւ Վսեմափայլութեանդ անցեալ 1916 թ. դեկտեմբեր 15-ի գրութիւնը, որով խնդրում էիք հաճել օրինութեան կոնդակներ ուղարկել հայութեան բարեկամներից պ. Լէոպոլտ Ֆաւրին, Անատօլ Ֆրանսին եւ Վիկտոր Բերարին, ինչպիսի գնահատութեան արժանացած է Վսեմ. Լորդ Ջ. Բրայս:

Ն. Ս. Օծութիւնը սիրով լսելով Ձեր ցանկութիւնը, պատուրեց դիւանս պատրաստել տալ այդ ծաղկանկար կոնդակները, յատուկ խնամքով եւ ուղարկել յանուն Ձեր, ըստ պատկանելեաց հասցնելու Ձեր միջոցով»[438]: Այս առիթով մանրամասնենք, որ Գևորգ Ե-ն նման քայլի դիմել է՝ ընդառաջելով Պողոս Նուբարի ցանկությանը, որը հիշյալ նամակում գրել է. «Եթէ Ձերդ Վեհափառութիւնը բարեհաճի ընդունիլ առաջարկս, կը խնդրեմ որ կոնդակները իմ հասցէիս ուղղուին, որպէս զի ես անձամբ պաշտօնապէս յանձնեմ»[439]:

Ստորև հրապարակում ենք Հայաստանի Ազգային արխիվի «Ամենայն Հայոց Հաթողիկոսի դիվան» ֆոնդում (57) պահվող Գևորգ Ե կաթողիկոսի երեք կոնդակները, որոնք չեն հրատարակվել նրա գրագրություններն ամփոփող՝ վերը հղված փաստաթղթերի

---

Սուրէնեանց կաթողիկոս ամենայն հայոց (1847-1930): Կազմող՝ Սանդրօ Բէհբուդեան, Երեւան, 2005, էջ 422: Ա. Ֆրանսի և Վ. Բերարի հայանպաստ գործունեության մասին տես *Պողոսյան Վ.*, Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ), Երևան, 2005, էջ 49-56, 98-100:

[437] «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», էջ 423:

[438] Նույն տեղում, էջ 432:

[439] Տես նույն տեղում, էջ 423:

ժողովածուում: Արխիվում պահպանվել են վավերագրերի՝ Էջմիածնի Հայրապետական դիվանում պատրաստված հայերեն ձեռագիր պատճենները: Դրանց հետ մեկտեղ հրապարակում ենք նաև Անատոլ Ֆրանսի պատասխան նամակները վեհափառին և Պողոս Նուբար փաշային: Թեպետ արխիվում պահպանվել են նաև մեծ գրողի առաջին նամակի ինքնագիրը և երկրորդ նամակի մեքենագիր պատճենը[440], այդուհանդերձ, նպատակահարմար ենք գտնում տպագրել նրա նամակների՝ Հայրապետական դիվանում կատարված հայերեն թարգմանությունները: Ցավոք, մեզ չհաջողվեց հայտնաբերել Գևորգ Ե-ի՝ լորդ Բրայսին հղած կոնդակը:

## 1

## Լէոպոլտ Ֆաւրին

### Գէորգ ծառայ Յիսուսի Քրիստոսի...

Մեծարեալ առն բարեսիրի, պ. Լէոպոլտի Ֆաւրի. նախագահի Հայանպաստ Յանձնաժողովոյ, որ ի Ժընեւ, խնդալ ի Տէր ըստ հանապազօրեայ աղօթից Մերոց, ողջունիւ տեառնաւանդ ի Հայրապետական Աթոռոյս Հայաստանեայց, ի Ս. Էջմիածնէ:

«Երանի Ողորմածաց, զի նոքայ զողորմութիւն գտցեն»:

Մին յայդպեսեաց զՁեզ գիտեմք, ով պատուական քաղաքագէտ ազատն Հելուետիոյ, զի ըստ օրինակի ողորմած Սամարացւոյն սիրով առ սրտիս Մեր առլցեալ, անկեալս ի հարուածոց անօրինին, ամ ըստ ամէ ոչինչ ամենեւին անխայեցեք ջանս եւ խնամս, դնել սպեղանիս ի վերայ վիրաց՝ յամոքումն ցաւոց, որք եկին հասին վերայ աշխարհիս Հայոց բազում ամօք յառաջ քան զայս եւ եւս առաւել ի մեծի աշխարհասասան պատերազմիս, որ իբրեւ յորձանս ի լերանց բարձանց գահավիժեալ, կործանեաց զժողովուրդ իմ եւ զարդիւնս հոգեւոր կենաց նոցա:

Գոհանամք զՁէնջ, զի ի տառապանս հոտին մերոյ ո՛չ յամեցաք տարածանել զբազուկ մարդասիրականիդ եւ հայրենակցացդ ի բարձուստ, ի լերանց Ալպեայց, իբրեւ յերկնուստ ի խոնար ի վերայ խոշտանգեալ որդւոցս, առ ի սնուցանել զորբս նոցա հոգեւոր

---

[440] ՀՀ Ազգային արխիվ, ֆոնդ 57 (Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիվան), ցուցակ 5, գործ 170, թթ. 5-6, 9:

սննդեամբ յՈրբանոցս եւ յԱպաստարանս, հաստատեալս նպաստիւք, գանձելով ի ձեռն Յանձնաժողովոյդ, ընդ նախագահութեամբ Ձերով, յառատաբուղխ տրոց բնակչաց ազատն Հելուետիոյ: Մանկունք Մեր, որդիք հարազատք Ս. Էջմիածնի, ապրեալք ի ձեռաց անողորմ գերչաց հանապազ օրհնութիւնս վերառաքեսցեն առ Տուիչն ամենայն բարեաց ի վերայ Ձեր եւ ի վերայ ամենայն բարերարագործեօք:

Շնորհս ունիմք առ Ձեզ վասն գործոց առաքինութեան Ձերոյ, զի բանիւ բերանոյ եւ գրոյ ոչ դադարեցաք քարոզել յունկն հայրենակցացդ եւ ամենայն ազգաց իրաւանց եւ արդարութեան Հայոց, կացելոց ընդ լծով ծառայութեան տաճկաց, զարկածից ազինս եւ զանօրէն արարից թշնամեաց մերոց եւ զկարծիս հասարակաց պատրաստ արարէք Հայրենեաց Ձերոց յօգտակար լուծումն խնդրոյ Հայոց:

Արդ ունել ունիմք պարտիս՝ խնդութեամբ շատ առնել Ձեզ, որպէս եւ Յանձնաժողովոյդ եւ համայն ժողովրդեանն Հելուետիոյ զգոհութիւնս Մեր եւ հոգեւոր որդւոցս վասն անբաւ երախտեաց, իբրեւ տրիտուր դուզնաքեայ ընդ մեծի վաստակոցդ եւ ջանից, զորս ցուցէք առ որդիս Մեր յաւուրս աղէտից նոցա:

Եւ Մեք աղաչեմք զԱստուած, զի եւ առ յապայն զօրացուսցէ զՁեզ եւ զգործակիցսդ, լինել Ձեզ անօթ ընտրութեան, գործ ի գթառատ մարդասիրութեանց եւ հանգուցիչ որբոց եւ այրեաց:

Եւ եղիցի Ձեզ օրհնութիւն ի Տեառնէ եւ խաղաղութիւն ի Փրկչէն՝ ըստ հաւատոց Ձերոց:

Ո՛ղջ լերուք ի Տէր, զօրացեալ ի շնորհս եւ յօգնականութիւն Հոգւոյն եւ օրհնեալք ի Մէնջ: Ամէն[441]:

*ՀՀ ԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 5, գործ 170, թթ. 1-1 շրջ.*

## 2
## Անատոլ Ֆրանսին

### Գէորգ ծառայ Յիսուսի Քրիստոսի...

Պատուական Կաճառորդի ճեմարանին Գաղղիական, որ ի Փարէզ, մեծարոյ Անատօլայ Ֆրանս, ողջոյն ի Հայրապետական Աթոռոյս Ս. Էջմիածնի եւ ի մէնջ առատացեալ՝ խնդալ ի Տէր.

---

[441] Լուսանցքում նշված է ամսաթիվը և կոնդակի համարը՝ 1917 [թ.], V/23, N 915:

Ծանեաք զՁեզ, Սրտիդ Մուզայից եւ Քերթողդ մեծի ազինն Գաղղիական, զի զանսկզբնական զԲանն ի Ձեզ մարմնաւորեալ, հնչմամբ քնարին ձօնելոյ յերկնուստ՝ հուր ի սիրտս մարդկան արկիք մաքուր, առ ի լինել նոցա սրտիւ տունջեան, երագաթռիչս մտօք, իբրեւ զարծուիս ճեմել ազատս ի վերայ երկրի, վայելեալ զբարիս Ամենակալին:

Население всех этих деревень совершенно раздето, а в настоящее время, в невероятный холод и голод все сидят зарывшись в сено, варят саман и питаются этим, так как ничего съедобного кемалисты не оставили.

Страшное впечатление оставляют изнасилованные женщины и девочки, некоторые из которых находятся на краю смерти, настолько гнусно и зверски издевались над ними.

Мужчины находятся не в лучшем положении, так как все без исключения избиты и в настоящее время не способны к труду, а наоборот требуют сами помощи.

Уполномочен Арустамов
4 апреля 1921 г., г. Тифлис
[Подлинник, рукопись]
РЦХИДНИ, ф. 85, оп. 15, ед. хр. 192, л. 2-2 об.

**7**

Вх. № 5517
30/3-[19]21 года
Москва из Полештарм 11 № 890/545 В/сл. 24/3 15 только Чичерину

Командующему восточным турецким фронтом Кязиму Карабекир паша. Копия Наркоминдел Р.С.Ф.С.Р. тов. Чичерину и копия члену Р.В.С. Кавфронта тов. Орджоникидзе. Тифлис, 24 марта 1921 года, 3 ч. 15 мин.

На основании полученных мною официальных донесений считаю долгом довести до Вашего сведения что командование турецкими войсками находящееся в районе Ахалцих-Ахалкалаки допускает целый ряд деяний возбуждающих местное население: забирают у населения имущество, хлеб, скот, лошадей и избивают до полусмерти [в] случае отказа что

имело место [в] селении Гумахдо и мобилизуют местное население. Организованные на местах органы Советской власти благодаря таковым действиям оказываются совершенно изолированными от местного населения. По последнему полученному донесению турецкое командование находящееся в районе Ахалкалаки наложило на местное население контрибуцию [в] размере сорок одна тысяча пудов зерна, несколько тысяч пудов картофеля и до десяти тысяч голов скота и лошадей и начало выводить из города Ахалкалаки казенное народное имущество, автомобили, телеграфное и телефонное имущество. На протесты заявленные представителями командования Красной армии и местной власти, турецкое командование дает обещание прекратить указанные деяния, каковые обещания однако к нашему глубокому прискорбию не осуществляются. Выражаю уверенность, что все вышеуказанные мною факты происходят единственно благодаря самочинным действиям отдельных представителей младшего турецкого командования, основанным [на их] неосведомленности состоявшемся соглашении между нашими представительствами.

... Я уверен, что Вы отнесетесь с должным вниманием [к] моему настоящему заявлению и примите самые решительные меры немедленному пресечению всех указанных фактов [в] районе Ахалцихского и Ахалкалакокого уездов, а также сделаете распоряжения о возвращении всего случайно захваченного имущества, хлеба, скота и лошадей по принадлежности местному населению.

Командующий Красной Армией Геккер, П РФ, ф. 148, оп. 4, п. 4, д. 5, л. 3.

*Հայագիտության հարցեր, 2015, թիվ 1, էջ 179-184*

# ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Yves Ternon, Mardin 1915. Anatomie pathologique d'une destruction, Paris, Annales du Centre d'histoire arménienne contemporaine, 2002, 374 p.**

**Իվ Տերնոն, Մարդինը 1915 թ.: Բնաջնջման պաթոլոգիական անատոմիան, Փարիզ, Ժամանակակից հայոց պատմության կենտրոնի հուշագրություններ, 2002, 374 էջ**

Հայոց ցեղասպանության պատմության խոշոր գիտակ Իվ Տերնոնի գրախոսվող աշխատությունը լույս է ընծայվել «Ժամանակակից հայոց պատմության հանդես» մատենաշարում (հատոր 4)[467]: Այն էականորեն առանձնանում է ֆրանսիացի պատմաբանի՝ հայերի եղեռնի պատմությանը նվիրված պատկառելի գիտական ժառանգության մեջ[468], քանզի հեղինակն առաջին անգամ է ուսումնասիրում ցեղասպանության պատմությունը վարչական մեկ տարածքում տեղի ունեցած իրադարձությունների կտրվածքով: Ցեղասպանությունը լուսաբանող հարուստ և բազմազան գրականության մեջ այս կամ այն տարածաշրջանի պատմությանը նվիրված ուսումնասիրությունները սակավաթիվ են: Ըստ այդմ, Տերնոնի մենագրությունը զգալիորեն լրացնում է առկա բացթողումներից մեկը:

Իբրև ուսումնասիրության առարկա նա ընտրել է Դիարբեքիրի վիլայեթի տարածքում գտնվող Մարդինի սանջակում տեղի ունեցած անցքերի պատմությունը 1894-1915 թթ.: Նման ընտրությունը պայմանավորված է հեղինակի մոտեցման առանձնահատկություններով: Նա փաստորեն առաջին անգամ է անդրադառնում հայերի ցեղասպանության երևույթին՝ տարբեր քրիստոնյա ժողովուրդ-

---

[467] Այս մատենաշարում լույս են ընծայվել հետևյալ ուսումնասիրությունները՝ Revue d'histoire arménienne contemporaine, t. 1, Paris, 1995 ; *Kévorkian R.H.*, L'extermination des déportés arméniens ottomans dans les camps de concentration de Syrie-Mésopotamie (1915-1916). La deuxième phase du génocide, Paris, 1998 ; *նույնի՝* La Cilicie (1909-1921). Des massacres d'Adana au mandat français, Paris, 1999.

[468] Տես օրինակ *Ternon Y.*, Les Arméniens. Histoire d'un génocide, Paris, 1977 ; *նույնի՝* La Cause arménienne, Paris, 1983 ; *նույնի՝* Enquête sur la négation d'un génocide, Paris, 1989.

ների նկատմամբ օսմանյան տեղական իշխանությունների կողմից կիրառվող բնաջինջ քաղաքականության ետնախորքի վրա: Մարդինի սանջակը, ուր հայերից բացի բնակվում էին նաև ցեղասպանության զոհը դարձած քրիստոնյա այլ ժողովուրդներ, աչքի է զարնում բնակչության էթնիկական կազմի բազմազանությամբ: Բնութագրելով Մարդինն իբրև «ժողովուրդների և կրոնների խճանկար» (էջ 19), Տերնոնը խորհրդածում է սանջակում տեղի ունեցած կոտորածների՝ լոկ հայկական ուղղվածություն ունենալու հարցի շուրջ. «Արդյո՞ք հայերի ցեղասպանությունը Մարդինի սանջակում Արևելքի քրիստոնյաների ցեղասպանություն էր» (էջ 9): Այս հարցին սպառիչ պատասխան տալու դիտավորությամբ, նա մանրազնին ուսումնասիրում է 1894-1915 թթ. սանջակում ծավալված կոտորածների յուրահատկությունները, որոնք իրադարձությունների ընդհանուր պատկերը մեծապես զանազանում են այլ վիլայեթներում տեղի ունեցած անցքերից:

Տերնոնի մենագրությանը բնորոշ է ևս մեկ առանձնահատկություն. առաջին անգամ նա փորձ է ձեռնարկել իրադարձությունների լայն հենքի վրա հետևելու ցեղասպանության դատապարտված զոհերի ճակատագրերին, բազմահազար տեղահանվածների անցած ուղուն՝ բնօրրանները թողելուց ի վեր մինչ մահկանացուն կնքելը:

Մենագրության աղբյուրագիտական հենքը հարուստ է և բազմազան: Հեղինակի հիմնական սկզբնաղբյուրներն են արաբ և կաթոլիկ կրոնական գործիչների (այդ թվում դոմինիկյան հայրերի) հուշագրությունները: Բացի դրանից, նա օգտագործել է Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարության արխիվի չհրապարակված փաստաթղթերը, ինչպես նաև համիդյան կոտորածներին առնչվող՝ միևնույն արխիվի վավերագրերն ամփոփող «Դեղին գիրքը»:

Նախ՝ Տերնոնը քննարկում է Մարդինի սանջակի բնակչության կազմը, տարբեր ժողովուրդների պատմական զարգացման առանձնահատկությունները սկսած հնագույն ժամանակներից, քրիստոնյաների կյանքի պայմաններն Օսմանյան կայսրությունում մինչ համիդյան կոտորածների սանձազերծումը, նրանց անջրպետող կրոնական տարաձայնությունները: Նա մատնանշում է անապահովության մթնոլորտի կտրուկ վատթարացումը 1894 թ. ի վեր, մանրամասնորեն ուրվագծում համիդյան կոտորածների

ընթացքը Դիարբեքիրում: Վկայակոչելով «Դեղին գրքում» հրապարակված դիվանագիտական զեկուցագրերը, հեղինակը շեշտում է օսմանյան իշխանությունների ուղղակի և անուղղակի պատասխանատվությունը, հայերի կողմից որևէ սադրանքի բացակայությունը, քաղաքի մահմեդականների մասնակցությունը կոտորածներին, ինչպես նաև, հայերից բացի, քրիստոնեական այլ համայնքների բնաջնջման իրողությունը: Հարկ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել այս վերջին հիմնահարցին, քանի որ այն Տերնոնի մենագրության լեյտմոտիվն է: Նրա խորին համոզմամբ Դիարբեքիրի վիլայեթում տեղի ունեցած կոտորածներին բնորոշ առանձնահատկությունը՝ մահմեդականների կողմից բռնությունների գործադրումն է ոչ միայն հայերի, այլև քրիստոնյա մյուս բոլոր ժողովուրդների նկատմամբ. «Քրիստոնյա բնակչության՝ տարատեսակ դավանանքներ ունենալու հանգամանքը դրդում է քրդերին,– նշում է նա,– մայրաքաղաքում գտնվող կառավարության կողմից հրահրված հայկական հալածանքները կիրառել այլ դավանանք ունեցող քրիստոնյաների նկատմամբ» (էջ 63):

Մանրամասնորեն քննարկելով կրոնափոխության հանգամանքը, Տերնոնը համոզմունք է հայտնում, որ այդ ծայրահեղ միջոցը եղել է «քրիստոնյայի և նրա ընտանիքի անդամների կյանքի փրկության միակ եղանակը» (էջ 67): Այդուհանդերձ, նա կտրականապես ժխտում է պատմագրության մեջ վաղուց ի վեր լայն տարածում գտած՝ հայերի ցեղասպանությունն իբրև կրոնական հողի վրա խարսխված եղելություն մեկնաբանող տեսակետը: Ըստ նրա՝ «հանցագործության հիմնական պատճառը կրում է քաղաքական և գաղափարական բնույթ» (էջ 11): Վերլուծելով քրդերի գործողությունները, Տերնոնը հղում է արխիվային վավերագրեր և եզրակացնում, որ համիդիե ջոկատները՝ սանձարձակ գործողությունների էին դիմում տեղական իշխանությունների թողտվությամբ, այն դեպքում, երբ վերջիններս չէին համարձակվում կարգի հրավիրել նրանց՝ կառավարության հանդիմանանքներից խուսափելու համար: Բարձրաստիճան պաշտոնյաները քուրդ առաջնորդներին դրդում էին կեղեքելու քրիստոնյաներին: Այդ հանգամանքը, ըստ Տերնոնի, հարկադրել է «քրիստոնյաների ընտանիքներին գաղթել գյուղերից: Դա,– շարունակում է նա,– հենց այն արդյունքն է, որն ակնկալում է սուլթանը»

(էջ 70): Այսպիսով, Տերնոնը բացահայտում է Աբդուլ Համիդի որդեգրած հայահալած քաղաքականության կենսագործման երկու հիմնական՝ մարդկանց ոչնչացման և հայաբնակ վայրերից բնակչության արտաքսման եղանակները:

Շատ ավելի մանրամասն վերլուծության են ենթարկվում 1915 թ. իրադարձությունները: Ինչպես և նախորդ աշխատություններում, Տերնոնը հայերի ցեղասպանությունը համարում է պետական մակարդակով իրականացվող իրադարձություն, որը երիտթուրքերը ծրագրել էին Հայկական հարցին վերջնական լուծում տալու դիտավորությամբ (էջ 19): Մարդինի վալի Ռեշիդին Տերնոնը բնութագրում է իբրև «մեծ հանցագործի», որը «կենտրոնական կոմիտեի արձակած՝ հայերին բնաջնջելու հրամանի կենսագործման համար անհրաժեշտ անձնավորություն էր» (էջ 85): Վիլայեթում քրիստոնյա այլ ժողովուրդների կոտորածների շուրջ՝ Տերնոնի դիրքորոշումը միանշանակ է. «Հալածանքների ժամանակագրությունը … վկայում է, որ Կոստանդնուպոլսից տրված հրամանը սկզբնական շրջանում վերաբերում էր միայն հայերին, որը սակայն ավելի լայն շառավղով կենսագործել են Ռեշիդը և նրա դահիճները» (էջ 97): Ուստի նա քննարկում է քրիստոնյա այլ ժողովուրդների նկատմամբ գործադրված բռնությունները և ուշադրությունը կրկին բևեռում այն հարցի վրա, որին արդեն անդրադարձել է համիդյան կոտորածների հետ կապված հանգամանքների վերլուծության ընթացքում. «Հիմնական հարցը, որն առաջադրում են Մարդինի կոտորածները, հանգում է այն բանին, որ իրազեկ դառնանք, թե ինչո՞ւ հայերի ծրագրված ոչնչացումն ընդգրկեց քրիստոնեական այլ համայնքներ ևս: «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից մշակված բնաջնջման ծրագիրը վերաբերում էր հայերին: Նրանք պետք է ոչնչացվեին, քանի որ պատկանում էին ազգային և էթնիկական որոշակի համայնքի և ոչ թե քրիստոնեություն դավանելու համար: Սակայն ծրագիրը, մասնավորապես Դիարբեքիրի վիլայեթում տարածվել է այնպիսի խմբերի վրա, որոնք զանազանվում էին միայն իրենց կրոնով… Հավանական է, որ եղեռնական գործընթացների ծավալումը քրիստոնեական այլ համայնքների վրա, իրականացվել է ավելի շուտ տեղական նախաձեռնության հետևանքով, քան կառավարական որոշման

հիման վրա» (էջ 115): Ակնհայտ է, որ Տերնոնը հակված է քրիստոնյա այլ ժողովուրդների կոտորածների պատասխանատվությունն ամբողջությամբ վերագրելու օսմանյան տեղական իշխանություններին:

Մարդինի սանջակում քրիստոնյաների բնաջնջմանն առնչվող փաստերը քննարկելով կազա առ կազա, Տերնոնը մեկ անգամ ևս հավաստում է իր դիրքորոշումը և պնդում, որ նրանց ոչնչացմանը վերաբերող հրամանները բխում էին սոսկ Դիրաբեքիրի վալի Ռեշիդի անձնական նախաձեռնությունից (էջ 161, 182): Հղելով Տուր-Աբդինի օրինակը, նա մասնավորապես նշում է. «Հավանականությունը փոքր է, որ Կոստանդնուպոլսի կառավարությունը Տուր-Աբդինի քրիստոնյաներին ոչնչացնելու հրաման արձակած լիներ: Ուսումնասիրությունների արդի պայմաններում, դա այն միակ հիպոթեզն է, որը կարելի է առաջադրել» (էջ 178):

Տեղահանությանն առնչվող խնդիրների մեկնաբանության ասպարեզում Տերնոնը դրսևորում է բազմակողմանի մոտեցում: Պատմագրության մեջ սուր վիճաբանություններ է հարուցել հայերի տեղահանությունների դրդապատճառների մեկնաբանության հարցը: Արդյո՞ք օսմանյան կառավարությունն այս քայլին դիմել է հարկադրաբար՝ ելնելով պատերազմական գործողությունների հետևանքով ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակի կողմից թելադրվող անհրաժեշտությունից: Տերնոնը հանգամանորեն անդրադառնում է մասնավորապես թուրքական պատմագրության կողմից շահարկվող այս խնդրին և հիմնավորում նման հարցադրման տրամաբանության անհավանականությունը: «Դիարբեքիրի վիլայեթը՝ բացառությամբ նրա հյուսիսարևելյան ծայրամասի, պատերազմի ողջ ընթացքում մնում է ռուսական ռազմաճակատից հեռու: Այսպիսով, ամենևին էլ ռազմական պահանջները չեն կանխորոշել հայ բնակչության տեղահանությանն առնչվող միջոցառումները» (էջ 86): Խորամուխ լինելով իրադարձությունների վերլուծության մեջ, նա հավաստում է, որ ռազմական գործողությունները Դիարբեքիրի վիլայեթին առնչվել են 1915 թ. հոկտեմբերից հետո միայն, իսկ հայկական և քրիստոնեական համայնքների բնաջնջումը տեղի է ունեցել ապրիլ-հոկտեմբեր ամիսներին: Ելնելով այս փաստից, Տերնոնը եզրահանգում է. «Այնուամենայնիվ, հենց Դիարբեքիրի վիլայեթում է հայերի ոչնչացումն իրականացվել ամենակատարյալ ձևով. դա

վկայում է, որ 1915 թ. ծրագիրը մշակվել է անկախ ռազմական իրավիճակի հանգամանքից» (էջ 196):

Տերնոնը հավաստում է, որ տեղահանությանը վերաբերող՝ Կոստանդնուպոլսում ընդունված ծրագիրն անշեղորեն կենսագործվել է տեղական իշխանությունների կողմից, որի հետևանքով մեկ ամսում սպանել են գրեթե բոլոր տղամարդկանց, իսկ կանանց արտաքսել: Բնակչության թվաքանակին աղերսվող հարցը ևս արժանացել է նրա մանրազնին քննությանը: Կոտորածների և տեղահանության հետևանքով, համաձայն Տերնոնի հաշվարկների, Դիարբեքիրի վիլայեթում 60.000 լուսավորչական հայերից կործանվել են 58.000-ը, իսկ 12.500 կաթոլիկ հայերից՝ 11.500-ը: Ինչ վերաբերում է քրիստոնյա ժողովուրդների կոտորածին, ապա վիլայեթի 174.670 բնակիչներից (ներառյալ հայերը) փրկվել են միայն 30.485-ը: Մարդինի սանջակին առնչվող նրա տվյալները ևս անողոք են, քանի որ 10.500 կաթոլիկ հայերից կենդանի են մնացել 300-ը, իսկ 74.470 քրիստոնյաներից՝ 26.795-ը (էջ 185-188): «Դիարբեքիրի վիլայեթի գրեթե բոլոր հայերը սպանվել են,– հավաստում է նա,– այն է՝ վիլայեթի բնակչության 95%-ը, իսկ Մարդինի բնակիչների 97%-ը» (էջ 188):

Տերնոնը չի շրջանցում քրիստոնյա բնակչության ցեղասպանությանը և տեղահանությանը հաջորդած խիստ էական մի հանգամանք ևս. խոսքը վերաբերում է Մարդինի սանջակում մահմեդական բնակչության թվաքանակի արհեստական աճին: Ոչ միայն հայերի ունեցվածքն է բռնագրավվում, ոչ միայն նրանց տներն ու խանութները, եկեղեցիներն ու վանքերն են կողոպտվում, այլև «ռուսական բանակի կողմից գրավված՝ Անատոլիայի հյուսիս-արևելքից եկած մահմեդական ընտանիքներն են տեղավորվում հայերի տներում: Այսպես, Մարդինի մահմեդական բնակչության քանակն աճում է մեկ երրորդով» (էջ 150):

Ինչպիսի՞ն էր տեղահանվածների շարասյուների ճակատագիրը Դիարբեքիրում: Սա այն առանցքային հարցերից է, որը դարձել է Տերնոնի մանրակրկիտ ուսումնասիրության առարկան: Հենվելով ականատեսների վկայությունների վրա, հեղինակն անվարանորոն պնդում է. «Դիարբեքիրի վիլայեթում օսմանյան իշխանությունները մտադիր էին ոչնչացնել բոլոր շարասյուները» (էջ 198): Թեև, ըստ վկաների, որոշ վերակացուներ տեղա-

հանվածների նկատմամբ ճանապարհին ցուցաբերել էին բարյացակամ վերաբերմունք, այդուհանդերձ, ականատեսները միահամուռ են այն հարցում, որ «Ռեշիդի տարածքը շարասյուների համար ոչ այլ ինչ էր, եթե ոչ դժոխք» (էջ 198), որտեղ դրանց քանակը կրճատվում էր կիսով չափ: Տերնոնը հետևում է զանազան՝ 2000-ից 80.000 տեղահանվածներից բաղկացած շարասյուների ճակատագրերին և եզրակացնում. «Կոտորվածների և առևանգվածների այս չարագուշակ հաշվարկն արևելյան նահանգների հայ կանանց մեծամասնության ճակատագրերի հանրագումարն է: Առաջինը սպանում են հորը. մայրը մնում է երեխաների հետ: Նրանց ևս սպանում են կամ առևանգում» (էջ 203): Քանի որ առևանգմանը հաջորդում է կանանց վաճառքը ստրկավաճառական շուկաներում (Դիարբեքիրի, Ջիզրեի, Ուրֆայի, Մարդինի), Տերնոնը հանգամանորեն քննարկում է նաև այս հարցը, բացահայտում այն անելանելի պայմանները, որոնցում գտնվում էին քրիստոնյա կանայք մահմեդականների ընտանիքներում:

Դիարբեքիրի վիլայեթն աշխարհագրական առումով «հյուրընկալել» է հայկական այլ նահանգներից արտաքսված հայերի բազմաթիվ շարասյուների: Ուստի, Տերնոնը Մարդինը համարում է «Դիարբեքիրով անցած այն մարդկանց միավորող հանգույց, որոնց հաջողվել էր կենդանի մնալ» (էջ 195): Մահվան դատապարտվածների երթն ավարտին էր հասնում երկու վայրերում՝ Ռաս-էլ-Այնում և Տեր Զորում, ուր փրկության փոքրիկ հնարավորությունը գրեթե բացառվում էր: Փոխարենը, տեղահանվածների համար մահվան ճիրաններից խուսափելու միակ ելքը, ըստ Տերնոնի, այս տեղանքներից Հալեպ, Մոսուլ և Սինջար քաղաքներ հասնելն էր, որոնցում տիրող իրավիճակը նա դարձնում է առանձին քննության առարկա:

Ելնելով իր առջև ծառացած գլխավոր խնդիրներից, Տերնոնը ջանում է իրադարձությունների ընդհանուր հենքի վրա ներկայացնել տարբեր վայրերում հանգրվանած մարդկանց ճակատագրերը: Մանրակրկիտ ուսումնասիրության համար նա ընտրել է այն չորս բնակավայրերը (Հալեպ, Ռաս-էլ-Այն, Մոսուլ, Սինջար), ուր կուտակվում էին Մարդինից մեկնող տեղահանվածների բազմությունները և քննարկել յուրաքանչյուր վայրում ապաստա-

նածների ճակատագրերը: Ամենադժնի վերաբերմունքին արժանացել են Ռաս-էլ-Այնում համախմբվածները, որոնց զանգվածաբար ոչնչացրել են: «Թվում է, թե 1916 թ. փետրվարին, այն ժամանակ, երբ տեղերում հայ բնակչության կոտորածները և տեղահանությունն ավարտին էին հասել, կառավարությունը ցանկանում է տեղահանվածների զանգվածների հետ հարցերը լուծել Հյուսիսային Սիրիայում և Կիլիկիայում»: Նույնիսկ 1916 թ. դեկտեմբերին, ինչպես նա նշում է, ոչնչացրել են 300.000 հայերի:

Տերնոնը հակառակ պատկերն է արձանագրում Մոսուլում, որտեղ վիլայեթի կառավարիչ Հեյդար բեյը, չանսալով Կոստանդնուպոլսից ստացված հրամաններին, փրկել է հազարավոր գաղթականների կյանքը: Նրա ջանքերի շնորհիվ Մոսուլի բնակչությունը 70.000-ից հասնում է 125.000-ի: Ի վերջո, 1916-1917 թթ. Մոսուլը վերածվում է «այդտեղ հասած հայերի ապաստարանի» (էջ 229): Ըստ Տերնոնի բերած փաստերի, իրերի գրեթե միևնույն վիճակն է տիրել Սինջարում: Ինչպես տեսնում ենք, նա ամբողջ խորությամբ բացահայտել է տարբեր վայրերում կենտրոնացված տեղահանվածների ճակատագրերի միջև առկա էական զանազանությունները:

Գրքի երկրորդ մասը (էջ 277-355) ամփոփում է Տերնոնի օգտագործած սկզբնաղբյուրներից քաղվածքներ, որոնք թե՛ կոտորածների, թե՛ տարբեր ժամանակահատվածներում տեղի ունեցած տեղահանությունների, թե՛ առևանգումների անհերքելի ապացույցներն են:

Տերնոնի մենագրությունն ինքնատիպ հարցադրումներով և դրանց գիտական խորը վերլուծություններով միանգամայն նոր խոսք է ցեղասպանության ու տեղահանությունների պատմությանը նվիրված գրականության մեջ և, անկասկած, ըստ արժանվույն կգնահատվի պատմաբանների կողմից:

*Պատմաբանասիրական հանդես, 2003, թիվ 2, էջ 306-310*

**Գուստավ Մեյրիեն համիդյան կոտորածների մասին (*գրախոս.* G. Meyrier, Les massacres de Diarbékir. Correspondance diplomatique du Vice-Consul de France 1894-1896. Présentée et annotée par C. Mouradian et M. Durand-Meyrier, Paris, L'Inventaire, 2000, 259 p.)**

Հայոց ցեղասպանության առաջին փուլի՝ համիդյան կոտորածների պատմությունը լուսաբանող ֆրանսիական տպագիր սկզբնաղբյուրների թիվը վերջերս համալրվեց ևս մեկով: Կլեր Մուրադյանի և Միշել Դյուրան-Մեյրիեի ջանքերի շնորհիվ, «Էնվանտեր» հրատարակչությունը լույս է ընծայել 1894-1896 թթ. Դիարբեքիրում Ֆրանսիայի փոխհյուպատոս Գուստավ Մեյրիեի (1852-1930)՝ հայկական կոտորածներին առնչվող գրագրություններն ամփոփող ժողովածուն, որն ընդգրկում է 172 փաստաթուղթ: Դրանք գլխավորապես Մեյրիեի զեկուցագրերն ու հեռագրերն են Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնին և գործերի հավատարմատար Ժյուլ դը լա Բուլինիերին, մասամբ նաև՝ նրանց պատասխանները: Դիվանագիտական գրագրություններն ընդգրկում են 1894 թ. հոկտեմբերից մինչև 1896 թ. հուլիսն ընկած ժամանակահատվածը:

Մեյրիեի՝ 132 զեկուցագրերից 108-ը հրատարակվում են առաջին անգամ. մինչ այժմ հրապարակի վրա էր նրա զեկուցագրերի սոսկ նվազագույն մասը (ընդհամենը 24 փաստաթուղթ), որը դեռևս 1897 թ. զետեղվել էր նշանավոր «Դեղին գրքում»[469], սակայն, ցավոք, բազմաթիվ աղճատումներով: Այդ զեկուցագրերը ևս, արդեն ամբողջական տեսքով, ինչպես նաև Դիարբեքիրում ծավալված իրադարձություններին վերաբերող՝ «Դեղին գրքից» քաղված այլ սակավաթիվ փաստաթղթեր, վերահրատարակվել են սույն ժողովածուում:

Ժողովածուի՝ «Հիվանդ մարդու» արյունալի հոգևարքը» խորագիրը կրող առաջաբանում Հայկական հարցի գիտակ Կ. Մուրադյանը[470] Հայկական հարցն իրավամբ դիտում է իբրև Արևելյան

---

[469] Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, Paris, 1897 ; Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément), Paris, 1897.

[470] *Mouradian C.*, Le crime de silence. Le génocide des Arméniens, Paris, 1984 ; *նույնի՝* De Staline à Gorbatchov. Histoire d'une République soviétique, Paris, 1990 ; *նույնի՝* L'Arménie, Paris, 2002.

հարցի բաղկացուցիչ մաս (էջ 13): Անդրադառնալով Աբդուլ Համիդ II-ի քաղաքականությանը, հեղինակն ընդգծում է նրա՝ մասնավորապես ազգությամբ ոչ թուրք մահմեդականներին սիրաշահելու հակումը, քանզի սուլթանը «հաստատակամորեն վճռել էր խոչընդոտել «երկրորդ Բուլղարիայի» հայտնությանն Արևելյան Անատոլիայում» (էջ 15): Մուրադյանը հերքում է հայկական գաղտնի կազմակերպությունների «վտանգավոր» գործունեության հետևանքով Հայոց ցեղասպանության սկզբնավորման վարկածը և հղելով 1894 թ. Սասունի ջարդերի օրինակը, եզրակացնում. «Դա այն սցենարի առաջին գործողությունն էր, որը կրկնվելու է հայերով բնակեցված բոլոր վիլայեթներում» (էջ 17): Կասկածի նշույլ իսկ չդրսևորելով Մեյրիեի հաղորդած տեղեկությունների արժանահավատության շուրջ, առաջաբանի հեղինակը նրա պատումը բնութագրում է իբրև «անկողմնակալ ու զերծ կրքերից և գաղափարական կապանքներից» (էջ 27):

Ժողովածուի մեջ զետեղվել է Գ. Մեյրիեի կյանքին և գործունեությանը նվիրված՝ Մ. Դյուրան-Մեյրիեի գրչին պատկանող համառոտ ակնարկը, ինչպես նաև՝ հրատարակիչների հեղինակած համառոտ ծանուցումը, որտեղ նրանք հաղորդում են տպագրված փաստաթղթերին առնչվող անհրաժեշտ տեղեկություններ:

1894 թ. հունվարին ստանձնելով Դիարբեքիրում Ֆրանսիայի փոխհյուպատոսի պարտականությունները, Մեյրիեն վիլայեթում Հայոց ցեղասպանության սանձազերծման պահից ի վեր Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպանության ղեկավարներին պարբերաբար հաղորդել է ծավալված իրադարձությունների ընթացքին աղերսվող հանգամանալից տեղեկատվություն: Հպանցիկ իսկ ծանոթությունը նրա գրագրություններին հնարավորություն է ընձեռում ամբողջական պատկերացում կազմել ոչ միայն Դիարբեքիրի վիլայեթում ցեղասպանության գործընթացի ելևէջների, այլև հայ ժողովրդին կործանումից փրկելու հարցում փոխհյուպատոսի սկզբունքային դիրքորոշման և հետևողականության մասին:

Մեյրիեի զեկուցագրերում շոշափված են երկու հիմնահարցեր, որոնք առնչվում են, գլխավորապես, վիլայեթում քրիստոնյա ժողովուրդների հանդեպ օսմանյան իշխանությունների դրսևո-

րած վատթար վերաբերմունքի սաստկացմանը, ինչպես նաև զանգվածային կոտորածներին: Փոխհյուպատոսը հիմնավորապես մերկացնում է հայ և քրիստոնյա այլ ժողովուրդների բնաջնջման հարցում օսմանյան կենտրոնական և տեղական իշխանությունների որդեգրած դիրքորոշումը, հավաստում Հայոց ցեղասպանության՝ պետական քաղաքականության մակարդակով իրականացվող եղելության փաստը, բացահայտում Դիարբեքիրում տեղի ունեցած կոտորածների առանձնահատկությունները:

Դեռևս արյունալի իրադարձությունների արշալույսին, Մեյրիեն ուրվագծում է հայկական զանազան տարածքներում ընթացքի մեջ գտնվող կոտորածների համառոտ պատկերը, որոնց շուրջ ստույգ տեղեկություններ ստացել էր համապատասխան վայրերից Դիարբեքիր ժամանած ականատեսներից (էջ 45, 47): Հետաքրքրական է, մասնավորապես Սասունի անցքերին տված նրա գնահատականը, ըստ որի, հայերն ընդվզել են «հուսալքությունից դրդված, իրենց նկատմամբ՝ քրդերի և նույնիսկ օսմանյան պաշտոնյաների կիրառած անհամար հարստահարությունների հետևանքով» (էջ 42): Սասունցիների ըմբոստության պատասխանատվությունն իրավամբ վերագրելով օսմանյան իշխանություններին, Մեյրիեն, այդուհանդերձ, 1895 թ. սկզբներին, անդրադառնալով Խարբերդում տիրող կացությանը, ցավով նշում է. «Սասունի իրադարձություններից ի վեր, մահմեդականների թշնամանքը քրիստոնյաների նկատմամբ, թվում է, թե կրկնապատկվել է, որը նրանք, թվում է, թե ամենևին չեն քողարկում» (էջ 48):

Քրիստոնյաների հանդեպ մահմեդականների՝ ակնհայտորեն թշնամանքի վերածվող բացահայտ անհանդուրժողականությունը Մեյրիեն մեկնաբանում է օսմանյան կառավարության՝ վերջիններիս նկատմամբ դրսևորած բարեհաճ վերաբերմունքի հենքի վրա: Դիրաբեքիրում տիրող իրավիճակի շուրջ, 1895 թ. մարտի 23-ին, օրինակ, նա գրում է. «Մահմեդականները գրգռված են ավելի, քան երբևէ: Նրանց թշնամանքը բացահայտորեն ի դերև է գալիս անընդմեջ կրկնվող հարձակումների միջոցով, որոնց նպաստում է իշխանությունների և, մասնավորապես ոստիկանության կոմիսարի դիրքորոշումը: Ինչ վերաբերում է վալիին, ապա նա իրենից ոչինչ չի ներկայացնում և ի վիճակի չի նվազագույն իսկ միջոցներ ձեռնարկել՝ հասարակական անդորրն ապահովելու

համար» (էջ 63): Մայիսին, արդեն, փոխհյուպատոսն արձանագրում է իշխանությունների թողտվությամբ՝ իրավիճակի շեշտակի վատթարացումը վիլայեթի ողջ տարածքում: «Բոլոր կողմերից,– գրում է նա,– Մարդինից, Սլիվանից, Արղանայից, Դիարբեքիրի շրջակայքից, հաղորդում են քրդերի՝ հաճախ մահ սփռող հարձակումների մասին, որոնք բացահայտորեն հավաստիացնում են, որ ստացել են *բոլոր քրիստոնյաների* (ընդգծումը մերն է – Վ. Պ.) ոչնչացմանն առնչվող կառավարության հրամանը: Իշխանությունների անգործունեությունն ու դիրքորոշումը, կարծեք, նրանց մոտ ամրապնդում է այդ գաղափարը: Անապահովությունը կատարյալ է, քրիստոնյաները չեն համարձակվում դուրս գալ իրենց գյուղերից» (էջ 72):

Բուն ցեղասպանության մեկնաբանության հարցում Մեյրիեն բացառում է Դիարբեքիրում հայկական կոտորածների սանձազերծման ասպարեզում տարերայնության փոքր-իսկ նշույլ, միանշանակորեն հավաստում դրանց կանխմտածված և նախապես ծրագրված բնույթը, 1895 թ. նոյեմբերի առաջին օրերին քաղաքում ծավալված զանգվածային ջարդերը բնութագրում իբրև «սարսափազդու սպանդ» (էջ 131): Ըստ նրա վկայության, կոտորածը սկսվել է «ճշգրիտ ժամի, տրված ազդանշանի հիման վրա, նախապես սահմանված կարգով և առանց որևէ մեկի հյուսած սադրանքի» (էջ 129): Փոխհյուպատոսը կասկած իսկ չի տածում, որ Դիարբեքիրում ծավալված իրադարձությունները, որոնց ընթացքում «մահմեդականները խայտառակել են իրենց կրոնը և երկիրը», «կանխորոշվել էին վաղուց ի վեր» (էջ 138, 139):

Մեյրիեն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում Դիարբեքիրում ցեղասպանության քաղաքականության իրականացման գործում տեղական իշխանությունների կրած պատասխանատվության էական հանգամանքի վրա ևս: Կամբոնին հղած՝ 1895 թ. դեկտեմբերի 18-ի թվակիր զեկուցագրում նա նշում է. «Ըստ իմ տեղեկությունների, ես հարկ եմ համարում հաստատակամորեն հայտարարել, որ սարսափելի տեսարանների առջև գլխավոր կառավարիչը, զինվորական հրամանատարը, ժանդարմների պետը մնացել են անհողդողդ, և որ նրանք բացարձակապես ոչինչ չեն արել դրանք կանխելու համար, որ եթե նրանք

դրանց անմիջականորեն չեն մասնակցել, ապա նրանց վարքագիծը դրանց քաջալերելու բնույթ է կրել» (էջ 134):

Նոյեմբերին տեղի ունեցած կոտորածների առաջին հուժկու ալիքին հաջորդած ժամանակաշրջանում Մեյրիեն բազմիցս մատնանշում է քրիստոնյաների համար անապահով մթնոլորտի պահպանումը, պարբերաբար ընդգծում տեղական բարձրաստիճան պաշտոնյաների չարագուշակ դերն այդ հարցում (էջ 149, 163): Ըստ նրա զեկուցագրերի, կացությունը որևէ փոփոխություն չի կրել 1896 թ. սկզբներին: Հունվարի 8-ին, օրինակ, նա գրում է. «Դիարբեքիրում իրավիճակը շարունակում է մնալ սպառնալից: Մահմեդականները չեն զինաթափվում, նրանց ատելությունը քրիստոնյաների հանդեպ նույնքան խորն է, որքան անցյալում և նրանց չնչին բան է անհրաժեշտ, որպեսզի վերսկսեն այն վայրագությունները, որոնք այդչափ դաժանորեն իրենց դրոշմն են թողել նոյեմբերի առաջին օրերին տեղի ունեցած իրադարձությունների վրա: Կառավարության, բոլոր պաշտոնյաների, մասնավորապես կառավարչի դիրքորոշումը քաջալերում է նրանց մեքենայությունները» (էջ 150):

Մեյրիեի կարծիքով Դիարբեքիրում «տիրող հուզումների և խուճապի բուն պատճառը կառավարության դիրքորոշումն է, որն անհողդողդորեն դրանք հրահրել է» (էջ 168): Մեկ այլ առիթով նա համոզմունք է հայտնում առ այն, որ եթե կառավարության անգործունեության հետևանքով քաջալերված անձինք չվտարվեն քաղաքից, ապա «վաղ թե ուշ, անվերապահորեն, քրիստոնյաների նկատմամբ կգործադրվեն նորանոր բռնություններ» (էջ 170): Բայց եթե 1896 թ. մարտի սկզբներին Մեյրիեն դեռևս տարակուսանք է հայտնում օսմանյան իշխանությունների՝ իրավիճակը կարգավորելու հարցում ի հայտ բերած անվճռականության շուրջ (էջ 171), ապա իրադարձությունների զարգացմանը զուգընթաց, նա, աստիճանաբար, կռահում է կառավարության քաղաքականության բուն էությունը և արդեն ապրիլի կեսերին, վերջնականապես հուսալքված, հայտարարում. «Կառավարությունը ոչինչ չի անում և չի ցանկանում որևէ բան անել. այսպիսին է իրականությունը» (էջ 191): Փոքր անց այս հարցում Մեյրիեի համոզմունքն ավելի է խորանում, և մայիսի

26-ին նա կսկիծով արձանագրում է. «Այս երկրամասում օսմանյան կառավարության ջանադրության հետևանքով իրավիճակն այնպիսին է, որ կոտորածների սպառնալիքները երբեք ավարտին չեն հասնի և օրերից մի օր անխուսափելիորեն կիրականանան: Ինձ նույնիսկ զարմանք է պատճառում այն, որ դրանք մինչ այժմ իրականության չեն վերածվել: Այդչափ սարսափազդու իրադարձություններից հետո, յոթ ամսից ի վեր, մենք գտնվում ենք դեռևս այն նույն սահմանագծի վրա, ինչ իրադարձությունների նախօրեին» (էջ 197): Շատ ավելի որոշակի է նրա՝ հունիսի 23-ի հայտարությունը. «Օսմանյան կառավարության անփութությունը և կոտորածները վերսկսելու կամ առնվազն դրանք չարգելակելու մտադրությունն ակնհայտ է: Վալիի, բրիգադային գեներալի, ոստիկանության կոմիսարի, քաղաքային ինքնավարության նախագահի, մի խոսքով՝ բոլոր իշխանավորների դիրքորոշումն ու վարքագիծը … դրա անժխտելի ապացույցն են» (էջ 202):

Դիարբեքիրի վիլայեթում տեղի ունեցած կոտորածների առիթով, Մեյրիեն ներկայացնում է բավականին մռայլ և անմխիթար հետևյալ պատկերը. ըստ նրա հաշվարկների, վիլայեթում կողոպտվել կամ հրկիզվել է 6000 քրիստոնեական ընտանիքներից բաղկացած 119 գյուղ, որոնց 30.000 բնակիչները սպանվել են կամ անհետացել: Առևանգված կանանց թիվը Դիարբեքիրում հասնում է 50-ի, իսկ գյուղերում՝ անհամար է: Բուն քաղաքի կրած նյութական կորուստները գերազանցում են 2.000.000 թուրքական լիրայի արժողության հասնող գումարը (էջ 136-138):

Սպանված հայերի թվաքանակի շուրջ, ի դեպ, Մեյրիեն հաղորդում է հակասական տեղեկություններ, որոնք, հավանաբար, ստացել է իրարամերժ սկզբնաղբյուրներից կամ, ինչն ավելի հավանական է, ըստ նորանոր տեղեկությունների սրբագրել է նախնական տվյալները: Ընդհանուր առմամբ, ըստ նրա զանազան վկայությունների, Դիարբեքիր քաղաքում և հարակից գյուղերում զոհերի թիվը տատանվում է 15.000-ից 40.000-ի սահմանում (էջ 99, 105):

Դիարբեքիրի վիլայեթում, որն աչք է զարնել բնակչության էթնիկական կազմի բազմազանությամբ, բնաջնջման քաղաքա-

կանության ալիքներն ընդգրկել են լայնահուն շառավիղներ՝ հայերից զատ կլանելով քրիստոնյա այլ ժողովուրդների: Այս իրողությունը չի վրիպել Մեյրիեի ուշադրությունից, որն անկողմնակալորեն մատնանշում է զանազան ժողովուրդների կրած մարդկային կորուստները և նյութական վնասները (էջ 134-135): Այս հարցում, սակայն, փոխհյուպատոսի երբեմն առարկելի, անգամ անընդունելի, մեկնաբանություններում նշմարելի է իրադարձությունների վրա կրոնական գործոնի թողած գերակշռող ազդեցության դրոշմը: Մտորելով վիլայեթում քրիստոնյա ժողովուրդների համար ստեղծված անապահով քաղաքական մթնոլորտի շուրջ, 1895 թ. փետրվարի 9-ին նա նշում է, որ բոլոր քրիստոնյաները՝ «անկախ ազգային պատկանելությունից և այն բանից, թե խոսքն ում է վերաբերում՝ հայերի, քաղդեացիների, սիրիացիների, թե հույների», գտնվում են կյանքի միևնույն անելանելի պայմաններում: Այս հարցում մենք նրա հետ ամբողջությամբ համամիտ ենք: Սակայն նա շարունակում է. *«Դրա պատճառը կրոնական ատելությունն է*, որը խարսխվում է ոմանց հզորության, այլոց տկարության վրա և, ըստ այդմ, դրսևորվում շատ ավելի անողոք ձևով: Կարելի է նույնիսկ ասել, որ *Հայկական հարցն այստեղ խորթ է, քանզի հայերն այստեղ շատ ավելի են հարստահարվում, որովհետև ավելի բազմաքանակ են*» (ընդգծումները մերն են – *Վ. Պ.*) (էջ 53):

Հիրավի, Դիարբեքիրի իշխանությունները Կոստանդնուպոլսից ստացված՝ հայերի ոչնչացմանն առնչվող հրահանգները սեփական նախաձեռնությամբ ի կատար են ածել շատ ավելի ընդարձակ շառավղով և բնաջնջել վիլայեթում բնակվող բոլոր քրիստոնյաներին[471]: Այդ հանգամանքը, սակայն, չի կարող, մեր համոզմամբ, հիմք ծառայել այն եզրահանգման համար, որ Դիարբեքիրում Հայկական հարցին «լուծում» տալու անհրաժեշտությունը տեղական իշխանությունների ուշադրությունից վրիպել է կամ հայերին և այլ քրիստոնյաներին բնաջնջել են կրոնական հողի վրա խարսխված ատելության հիման վրա[472]:

---

[471] Այդ մասին տե՛ս *Ternon Y.*, Mardin 1915. Anatomie pathologique d'une destruction, Paris, 2002, p. 63.

[472] Տե՛ս մանրամասն նույն տեղում, էջ 67-70:

Այդուհանդերձ, Մեյրիեն ըմբռնել է Հայոց ցեղասպանության իրականացման և սանձազերծման հարցում հայերի ունեցած կարծեցյալ դերին առնչվող մի խիստ կարևոր հանգամանք, որը վաղուց ի վեր շահարկում է թուրքական պատմագրությունը: Անդրադառնալով այն հարցին, որ արտասահմանում գործող հայկական հեղափոխական կազմակերպությունները Դիարբեքիրում կողմնակիցներ չեն ունեցել, նա գրում է. «Այս վիլայեթում բնակվող հայերը չեն կարող և չեն ցանկանում սուլթանի տիրապետության դեմ ուղղված դավեր նյութել… Այն, ինչ նրանք պահանջում են՝ վարչակարգի փոփոխությունն է ու լուրջ բարենորոգումների իրականացումը, որոնք նրանց համար կապահովեն լավագույն վերաբերմունք» (էջ 54):

Նույնիսկ կոտորածների ամենաթեժ պահին, փոխհյուպատոսը բազմիցս վկայագրում է հայերի նյութած սադրանքների բացակայության փաստը, որը, գուցեև, կարող էր տեղիք տալ նրանց դեմ գործադրվող բռնությունների կամ ցեղասպանության լայնածավալ գործընթացի սանձազերծմանը (էջ 86, 88): Փոխարենը, Մեյրիեն հանգամանորեն տեղեկացնում է, թե ինչպես են մահմեդականները զինվել (էջ 80-81, 106, 127), նախապատրաստվել կոտորածներին (էջ 88), ինչպես նաև՝ զինաթափել քրիստոնյաներին (էջ 92, 102):

Նրա համոզմամբ իրավիճակի շիկացմանը մեծապես նպաստել են ոչ թե հայերի կարծեցյալ սադրանքները կամ մեքենայությունները, այլ 1895 թ. աշնանը սուլթանի կողմից հայկական նահանգներում բարենորոգումների անցկացման վերաբերյալ տարածվող ասեկոսեները: Այս առիթով, 1895 թ. հոկտեմբերի 31-ին, նա գրում է Կամբոնին. «Իրավիճակն աստիճանաբար լարվում է: Մահմեդականները չեն թաքցնում քրիստոնյաներից վրեժխնդիր լինելու իրենց մտադրությունները՝ ի պատասխան այն բարենորոգումների, որոնց իրականացմանը սուլթանը տվել է իր համաձայնությունը: Նրանք բողոքի մի հեռագիր են հղել վերջինիս, որի պատճենը հանձնել են վալիին: Ասում են, որ նրանք վճռել են անմիջապես, այն է՝ վաղը ևեթ, հինգշաբթի օրն իրականացնել իրենց ծրագրերը, եթե պատասխանն իրենց չգոհացնի: Այդ փաստաթղթում ասված է, որ Հայաստանը նվաճվել է արյամբ և որ

այն կզիջվի միայն արյամբ» (էջ 84)։ Միևնույն կապակցությամբ բազմաթիվ մահմեդականներ Մեյրիեին հավաստիացրել են, որ իրենց հայրենակիցները խիստ գրգռված են, քանզի կարծում են, թե հայկական վեց վիլայեթներին տրամադրվող ինքնավարությունն արդեն հռչակված է, իսկ բարենորոգումները վերաբերում են միայն քրիստոնյաներին և, ըստ այդմ, «երկյուղում են կայսրության մասնատումից» (էջ 117)։

Մեյրիեի զեկուցագրերը տեղեկացնում են նաև հայ հոգևորական գործիչների նկատմամբ գործադրված բռնությունների, կանանց առևանգման, կրոնափոխության անհամար փաստերի մասին։ Ցանկանում ենք, այդուհանդերձ, առանձնահատուկ ուշադրություն դարձնել նրա հաղորդումներից մեկի վրա, որը բացահայտում է հայ ժողովրդի հանդեպ երիտթուրքերի՝ ի սկզբանե գրաված բուն դիրքորոշումը։ 1896 թ. մայիսի 26-ին՝ Ժյուլ դը լա Բուլինիերին հղած հեռագրում նա նշում է. «Հավաստիացնում են, որ երիտթուրքերը «հին» թուրքերին, հավանաբար, համոզել են միանալ իրենց՝ քրիստոնյաների, ինչպես նաև, սուլթանի հետ վերջնականապես հարցերը լուծելու համար, *որոնց համարում են այս երկրի բոլոր չարիքների պատճառը* (էջ 196) (ընդգծումը մերն է – *Վ. Պ.*)։

Այսպիսին է, ընդհանուր գծերով, Դիարբեքիրում տեղի ունեցած իրադարձությունների այն պատկերը, որն անաչառորեն մեզ է ներկայացնում Մեյրիեն։ Ինչպես տեսնում ենք, քաղաքացիական բարձր դիմագծի տեր դիվանագետը, արհամարհելով իր ընտանիքի անդամների և իր կյանքին սպառնացող վտանգը, դրսևորել է մեծ հետևողականություն ու հաստատակամություն և ամենայն մանրամասնությամբ ուրվագծել Հայոց ցեղասպանության դրվագներից մեկի համայնապատկերը, ֆրանսիական դեսպանության ղեկավարներին օր առ օր իրազեկել իրադարձությունների զարգացման ընթացքին՝ դրանք կանխելու ակնհայտ դիտավորությամբ։ Ցավոք, թե՛ նրա, թե՛ ֆրանսիացի շատ այլ դիվանագետների, հատկապես, Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպան Կամբոնի գործադրած ջանքերն այս ուղղությամբ շոշափելի արդյունքների չեն հանգեցրել, քանզի Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանության

սկզբունքը որդեգրած Երրորդ հանրապետության ղեկավարները մնացել են անհողդողդ և անսալով դիվանագետների ահազանգերին, գերադասել են չմիջամտել արևմտահայության ողջակիզման գործընթացին:

Այդուհանդերձ, մենք պարտավոր ենք հարգանքի խորին տուրք մատուցել XIX դարի 90-ական թվականներին Օսմանյան կայսրությունում գործող ֆրանսիացի դիվանագետների և գործակալների հիշատակին, որոնց վարքագիծը ֆրանսիացի խոշոր պատմաբան, Ֆրանսիական ակադմիայի անդամ Էռնեստ Լավիսը (1842-1922) բնութագրել է իբրև «քաջարի» և «հերոսական»[473]: Դրա վկայություններից է սույն ժողովածուի լույս ընծայումը, որն արժանի է ամենայն դրվատանքի:

Նշենք նաև, որ ժողովածուին կից հավելվածում հրատարակիչները զետեղել են փաստաթղթեր (քաղվածքներ խորհրդարանային նիստերի արձանագրություններից, հատվածներ Վիկտոր Բերարի «Սուլթանի քաղաքականությունը» գրքից, Ժ. Կլեմանսոյի հոդվածներից մեկից և այլն), որոնցում, այս կամ այն ձևով, շոշափված են Դիարբեքիրում փոխհյուպատոսի անունը:

Առարկությունների տեղիք են տալիս, սակայն, գրքին կից առաջաբանում և ծանուցման մեջ արտացոլում գտած՝ հրատարակիչների որոշ դրույթներ: Օրինակ, ինչպես նշում է առաջաբանի հեղինակը, XV դ. թուրքերը նվաճել են պատմական Հայաստանը (էջ 9): Իրականում, 1555 թ. Թուրքիայի և Պարսկաստանի միջև կնքված Ամասիայի հաշտության պայմանագրով, առաջին անգամ օսմանյան լծի ներքո ընկել է Հայաստանի սոսկ մի մասը:

Գրքին կից ծանուցման մեջ հրատարակիչները, փաստորեն, ձայնակցելով Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ

---

[473] Տե՛ս *E. Lavisse*, Note sur le Livre Jaune // « Revue de Paris », 15 mars 1897, p. 452. Հարկ է նաև նշել, որ 1890-ական թթ. ֆրանսիացի մի շարք դիվանագետների, այդ թվում Մեյրիեի, գրված դիրքորոշումը բարձր է գնահատվել նույնիսկ թրքամետ ֆրանսիական կառավարության կողմից, որը 1896 թ. հուլիսին նրան, ինչպես նաև Սվազում և Էրզրումում Ֆրանսիայի փոխհյուպատոսներ՝ համապատասխանաբար Մ. Կարլիեին և Ֆ. Ռոքեֆերրիեին արժանացրել է Ֆրանսիայի բարձրագույն պարգևին՝ Պատվո լեգեոնի շքանշանի: Տե՛ս *Carlier E.,* Au milieu des massacres. Journal de la femme d'un Consul de France en Arménie, Paris, 1903, p. 123.

գերիշխող տեսակետին, 1894-1896 թթ. հայերի «սիստեմատիկ կոտորածները» համարում են «1915 թ. ցեղասպանության նախերգանք» (էջ 35): Մեր համոզմամբ, սակայն, Հայոց ցեղասպանությունը հարկ է դիտել իբրև փուլային զարգացում ունեցած միասնական գործընթաց, որը հարատևել է շուրջ երեք տասնամյակ (XIX դ. 90-ական թվականների կեսերից մինչև XX դ. 20-ական թվականների սկզբները) և թուրքական երեք տարբեր վարչակարգերի կողմից իրականացվել միևնույն գաղափարախոսության հիման վրա: Անշուշտ, այն գագաթնակետին է հասել 1915 թ., մի իրողություն, որը սակայն, մեր կարծիքով, պատմաբաններին իրավունք չի վերապահում այդ իրադարձությունը մասնատելու «համիդյան» կամ «քեմալական» կոտորածների, «1909 թ. ջարդերի», «1915 թ. եղեռնի» և առավել ևս՝ դրանք դիտել իբրև տարանջատ եղելություններ:

Մեյրիեի գրագրությունների լույս ընծայումն, անշուշտ, իր նպաստը կբերի Հայոց ցեղասպանության պատմության՝ մեր օրերի կեղծարարների դեմ մղվող պայքարին:

*Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, 2004, թիվ 9, էջ 152-159*

**Մկրտիչ Ներսիսյան, Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2005, 336 էջ**

Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության ասպարեզում մեծ ավանդ է ներդրել հայրենական ականավոր պատմաբան, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը (1909-1999): 1966 թ. նրա աշխատասիրությամբ լույս տեսավ հայրենական պատմագրության անդրանիկ հրատարակությունն այս բնագավառում՝ «Հայերի ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի ժողովածուն[474]: Դրանով իսկ նա սկզբնավորեց խորհրդային իշխանությունների կողմից մինչ այդ լռությամբ շրջանցված այս թեմայի ուսումնասիրությունը մեր հան-

[474] Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Составители М.Г. Нерсисян, Р.Г. Саакян. Под редакцией М.Г. Нерсисяна, Ереван, 1966.

րապետությունում: Մ. Ներսիսյանն այնուհետև ոչ միայն պարբերաբար հանդես էր գալիս Հայոց ցեղասպանության հիմնախնդիրներին նվիրված ուսումնասիրություններով և զեկուցումներով, այլև իբրև «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր, հնարավորություններ էր ընձեռում ամսագրում լույս ընծայել այս իրադարձության պատմությանը նվիրված հոդվածներ, հաղորդումներ և գրախոսություններ:

Ակադեմիկոս Ներսիսյանը կյանքի մայրամուտին ծրագրել էր վերջին տարիներին տպագրած՝ Հայոց ցեղասպանության պատմությանն առնչվող իր առանձին հոդվածները վերանայել և ռուսերեն թարգմանությամբ ամփոփել մեկ գրքում: Սակայն վերահաս մահը նրան զրկեց այդ մտահղացումն իրականացնելու հնարավորությունից: Գիտնականի այդ ցանկությունը, սակայն, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի 90-րդ տարելիցի հետ կապված միջոցառումների շրջանակում, ի կատար են ածել Մ. Ներսիսյանի աշխատանոցին լավատեղյակ Նունե Դերոյանը և գրախոսվող ժողովածուի խմբագիր, պրոֆեսոր Պարույր Մուրադյանը:

Մ. Ներսիսյանի ժողովածուն ամփոփում է հինգ հոդված և արխիվային 25 փաստաթղթերի հրապարակում: Հրատարակիչները միանգամայն իրավամբ նպատակահարմար են գտել ժողովածուում զետեղված նյութերը տպագրել ոչ միայն հայերեն (էջ 7-166), այլև ռուսերեն թարգմանությամբ (էջ 181-325)՝ հեղինակի տեսակետներն ու փաստարկումները մատչելի դարձնելով պատմագիտական ավելի լայն շրջանակների համար: Նշենք նաև, որ բացառությամբ հայերենի թարգմանված՝ ռուսերեն լեզվով մինչ այդ լույս տեսած հոդվածներից մեկի[475], մյուս բոլոր նյութերը հայերենից թարգմանվել են ռուսերենի:

Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ, մասնավորապես վերջին տարիներին, տարակարծությունների տեղիք է տվել եղելության ժամանակագրական եզրերի սահմանման խնդիրը: Ըստ պատմագրության մեջ գերիշխող տեսակետի՝ Հայոց ցեղասպանությունը տեղի է ունեցել 1915 թ. (քանզի բնաջնջման գործընթացն անհամեմատ մեծ թվով՝ շուրջ մեկուկես

[475] *Нерсисян М.Г.*, Немецкие и турецкие источники о геноциде армян.– «Պատմաբանասիրական հանդես», 1985, թիվ 2, էջ 31-40:

միլիոնի հասնող զոհեր է կլանել), որին նախորդել ու հաջորդել են համապատասխանաբար՝ համիդյան և քեմալական կոտորածները:

Ակադեմիկոս Ներսիսյանն այս հարցում ցուցաբերել է շատ ավելի ընդգրկուն մոտեցում: Դեռևս 1982 թ. «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի ժողովածուի երկրորդ հրատարակությանը կից առաջաբանում՝ այս առիթով նա նշել է. «Երբ խոսքը վերաբերում է Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանությանը, հարկ է նկատի ունենալ ոչ միայն 1914-1918 թթ. համընդհանուր կոտորածը, այլև XIX դարի վերջի և XX դարի սկզբի զանգվածային ջարդերն ու կոտորածները»[476]:

Կասկածից վեր է, որ տարիների ընթացքում պատմաբանի հայացքներն ապրել են ակնհայտ էվոլյուցիա: Ի վերջո՝ Հայոց ցեղասպանության պատմության խոշոր գիտակը հանգել է միանգամայն իրատեսական հետևության. «Պատմական փաստերի բարեխիղճ ու մանրազնին ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ գազանաբարո «կարմիր սուլթանը» նույնպես կիրառել է ցեղասպանության քաղաքականություն, այնպիսի քաղաքականություն, ինչպիսին իրագործեցին երիտթուրքերը 1915-16 թթ.: Այստեղ կարևորը զոհերի քանակը չէ. մի դեպքում՝ 300 հազար, մյուս դեպքում՝ միլիոնուկես: Մենք գիտենք, որ լինում են ինչպես մեծ, այնպես էլ փոքր ծավալի ցեղասպանություններ» (էջ 14):

Հաշվի առնելով երիտթուրքերի օրոք հայ ժողովրդի կրած ահռելի մարդկային կորուստները, Մ. Ներսիսյանը գերադասել է 1915-1916 թթ. Հայոց ցեղասպանության գործընթացը բնութագրել իբրև «Մեծ եղեռն» (տե՛ս օրինակ՝ էջ 83, 123): Անդրադառնալով Մուստաֆա Քեմալի ազգային քաղաքականությանը, նա հավաստել է, որ 1920-1922 թթ. վերջինս ևս հայերի ու հույների նկատմամբ կիրառել է «դաժան ցեղասպանության քաղաքականություն» (էջ 122, 124)[477]:

---

[476] *Нерсисян М.Г.*, Предисловие,– Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Составители М.Г. Нерсисян, Р.Г. Саакян. Под редакцией М.Г. Нерсисяна, второе, дополненное издание, Ереван, 1982, с. III.

[477] Այս տեսակետի կողմնակիցներից հիշատակենք Հայոց ցեղասպանության

Մեծ եղեռնի գլխավոր պատճառն ըստ հեղինակի՝ երիտթուրքերի պանթուրքիստական, զավթողական ծրագրերն էին, որոնք մշակվել էին դեռևս 1910-1911 թթ., իսկ սկսած 1913 թ., ինչպես նա նշել է, վերածվել էին պետական քաղաքականության (էջ 83): Մ. Ներսիսյանի համոզմամբ՝ Մեծ եղեռնը կանխորոշել են Սալոնիկում երիտթուրքերի 1910-1911 թթ. կայացած գաղտնի խորհրդակցությունների և համագումարի ընդունած ազգայնամոլական որոշումները, որոնցում «արտահայտված են իթթիհադականների պանիսլամիստական, պանթուրքական ծրագրերը ինչպես հայերի, այնպես էլ բոլոր ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ» (էջ 9):

Հարկ ենք համարում առանձնահատուկ ուշադրություն դարձնել, որ ակադեմիկոս Ներսիսյանը Հայոց ցեղասպանությունը չի դիտել իբրև մասնակի երևույթ, այլ այն քննարկել է Օսմանյան կայսրության ցեղասպան քաղաքականության լայն ետնախորքի վրա, որը, ինչպես նա հիմնավորել է, կիրառվել է ոչ միայն քրիստոնյա, այլև մահմեդական ժողովուրդների նկատմամբ: Այս առումով հատկանշական է գրքում զետեղված «Օսմանյան պետության «քաղաքակրթական միսիայի» մասին» ծավալուն հոդվածը, որն ունի մեծ այժմեականություն, քանզի պատմական անցյալն աղավաղող թուրք պատմաբաններից շատերը բազմիցս ջանացել են Օսմանյան կայսրությունը ներկայացնել ոչ միայն իբրև «դրախտ»՝ այնտեղ բնակվող բոլոր ժողովուրդների համար, այլև նրան վերագրել են եվրոպական երկրներում քաղաքակրթություն սերմանողի և տարածողի կարգավիճակ: Իրականում, ինչպես նշել է Մ. Ներսիսյանը, «հիշյալ պետությունն իր ամբողջ գոյության ընթացքում աչքի է ընկել անօրինակ բարբարոսություններով, դարեր շարունակ արգելակել է իրեն հպատակ երկրների տնտեսության, մշակույթի զարգացումը և դաժան հալածանքի, կեղեքումների ու կոտորածների է ենթարկել բազմաթիվ ժողովուրդների և ազգությունների» (էջ 26):

---

հայտնի գիտակ, լիբանանցի պատմաբան Մուսա Պրանսի և Յուրի Բարսեղովի անունները: Տես *Prince M.*, Un génocide impuni. L'arménocide, Beyrouth, 1975, p. 97-114, 147-242, 345-376 ; *Барсегов Ю.Г.*, Геноцид армян – преступление по международному праву, М., 2000, с. 17-22.

Օսմանյան բարբարոսական վարչակարգի ջատագովների հերյուրանքները հիմնավորապես դիմազերծելու նպատակով նա բազմիցս վկայակոչել է ոչ միայն նշանավոր հասարակական, քաղաքական գործիչների և ականավոր գրողների ու հեղինակավոր պատմաբանների գնահատականները, ինչպիսիք են Կ. Մարքսը, Ն. Չեռնիշևսկին, Վ. Գլադստոնը, Վ. Հյուգոն, Ս. Ցվայգը և շատ ուրիշներ, այլև հիմնվել է տարատեսակ սկզբնաղբյուրների, այդ թվում՝ թե՛ հայ և թե՛ օտար (բյուզանդացի, բուլղար, սերբ, թուրք) տարեգիրների վկայությունների, ինչպես նաև արխիվային վավերագրերի (Ռուսական կայսրության արտաքին գործերի նախարարության, Մաշտոցի անվան Մատենադարանի) ու հայկական ձեռագրերի վրա: Անհերքելի փաստերով հեղինակն անկողմնակալորեն բացահայտել է զանազան երկրներում «քաղաքակրթություն» տարածող օսմանյան պետության նվաճողական քաղաքականության բուն էությունը, որը Բյուզանդական կայսրության անկումից ի վեր մինչ Հայոց ցեղասպանությունը, հանգում էր հպատակեցված ժողովուրդների զանգվածային բնաջնջմանը, տնտեսական կեղեքմանն ու բացահայտ կողոպուտին, մշակութային արժեքների ոչնչացմանը: Մ. Ներսիսյանն ուրվագծել է ծայրահեղ դաժանությամբ աչքի ընկնող օսմանյան տարբեր գահակալների, մասնավորապես, Մեհմեդ II-ի (1451-1481) և Սելիմ I-ի (1512-1520) դիմագիծը, որոնք անվարանորեն բնաջնջում էին ոչ միայն օսմանյան լծի տակ հեծող ժողովուրդներին, այլև, անհրաժեշտության դեպքում, իրենց իսկ ընտանիքների անդամներին:

Օսմանյան կայսրության պատմության կեղծարարները բազմիցս խեղաթյուրել են նաև օսմանյան վարչակարգի դեմ տարբեր ժողովուրդների մղած ազգային-ազատագրական շարժումների պատմության խնդիրները, ստրկացված ժողովուրդների ապստամբական պայքարը ներկայացրել իբրև օտար միջամտության հետևանք: Այս առիթով Մ. Ներսիսյանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ «Օսմանյան պետության դեմ ուղղված ազատագրական շարժումների գլխավոր պատճառը թուրքական սուլթանների կողմից նվաճված երկրներում ստեղծված բարբարոսական, անտանելի ռեժիմն էր» (էջ 77): Մասնավորապես, հայ ժողովրդի

պարագայում, սկսած դեռևս 1890-ական թվականներից, արևմտահայության ծանր կացության հենքի վրա Մ. Ներսիսյանը հայ ժողովրդի պայքարը համարել է միանգամայն օրինաչափ, որը մղվում էր հանուն կյանքի, պատվի և գոյության պահպանության. «Այդ նրա բարոյական իրավունքն էր ու սրբազան պարտքը»,– նշել է հեղինակը (էջ 17): Պատմության կեղծարարների այն պնդումները, թե իբր Մեծ եղեռնի պատճառ են դարձել 1914 թ. կազմակերպված հայկական կամավորական ջոկատների գործունեությունը և 1915 թ. Վանի հայության ապստամբությունը՝ Մ. Ներսիսյանը բնութագրել է իբրև «անհիմն և շինծու», քանի որ Վանում հայերը ոչ թե ապստամբել են, այլ ստիպված են եղել դիմելու ինքնապաշտպանական կռիվների (էջ 80-81):

Ակադեմիկոս Ներսիսյանը հանգամանորեն մեկնաբանել է Հայոց ցեղասպանության տարիներին տարբեր երկրների և հատկապես ինքնակալական Ռուսաստանի դիրքորոշումը հայ ժողովրդի նկատմամբ: Այս կնճռոտ հարցում նա հիմնավորապես հերքել է տարբեր «ռուսաֆոբների հնարած այն առասպելը», թե իբր ռուսական պետությունը ցանկացել է նվաճել Հայաստանն առանց հայերի: Հեղինակն ընդգծել է այն անառարկելի իրողությունը, որ ամենևին արդարացի չէ առանձին սևահարյուրակային «չինովնիկների» կամ զինվորական գործիչների հայացքներն ու տրամադրությունները «նույնացնել Ռուսաստանի պետական քաղաքականության հետ» (էջ 20): Վկայակոչելով բազմապիսի փաստեր, որոնք առնչվում են ռուսական զորքերի դերին՝ 1915 թ. մայիսին Վանում պաշարված հայությանը կործանումից փրկելու, 1916 թ. արևմտահայությանը նյութապես օժանդակելու, Ռուսական կայսրության տարածքում ցեղասպանությունից մազապուրծ հայերին ապաստանելու հարցերին, հայ-ռուսական հարաբերությունների պատմության մեծ մասնագետը հանգել է այն հետևության, որ 1915-1917 թթ. Ռուսաստանն «աշխատել է ապահովել, պահպանել հայության ֆիզիկական գոյությունը, հանդես է եկել թուրք ազգայնականների հայաջինջ քաղաքականության դեմ, փորձել է խաթարել պանթուրքիստների ծրագրերը»: Ի վերջո՝ ինչպես նա ընդգծել է, Հայկական հարցում, «համընկել են Ռուսաստանի և հայ ժողովրդի շահերը» (էջ 19):

Հայոց ցեղասպանության պատմականությունը հավաստող բազմալեզու սկզբնաղբյուրների թվում ակադեմիկոս Ներսիսյանը նախապատվությունը տվել է թուրքական և գերմանական ծագում ունեցող փաստաթղթերին (գլխավորապես՝ արխիվային), քանզի Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիան և Գերմանիան դաշնակիցներ էին: Օրինաչափ է, որ նա ըստ արժանվույն կարևորել է Լեփսիուսի ջանքերով հրատարակված՝ գերմանական արխիվային վավերագրերն ամփոփող ժողովածուն[478]: Վերլուծելով այս հրատարակության մեջ ամփոփված կարևորագույն վավերագրերը, Մ. Ներսիսյանն ուշադրությունը կենտրոնացրել է, մասնավորապես գերմանացի դիվանագետների այն զեկուցագրերի վրա, որոնք աներկբայելիորեն հավաստում են Հայոց ցեղասպանության իրականացումը պետական քաղաքականության մակարդակով (էջ 89-96): Հիմնվելով ժողովածուում ընդգրկված փաստաթղթերի վրա, հեղինակը մեկնաբանել է հայերի զանգվածային տեղահանությունների հարցը, որոնք ըստ Էրզրումում գերմանական հյուպատոս Շոյբներ Ռիխտերի վկայության՝ «հավասարազոր» են եղել «զանգվածային ոչնչացման» (էջ 93):

Ինչ վերաբերում է թուրքական սկզբնաղբյուրներին, ապա Մ. Ներսիսյանը մանրամասնորեն քննարկել է հայերի բնաջնջմանը վերաբերող Թալեաթ բեյի գաղտնի հեռագրերը, որոնք առաջին անգամ հրատարակել է թուրք պաշտոնյա Նայիմ բեյը, արժևորել է օսմանյան քաղաքական գործիչներից՝ ծագումով քուրդ Մևլեն-զադե Ռիֆաթի հուշերը: Այս փաստաթղթերը ևս հիմնավորապես բացահայտում են օսմանյան վարչակարգի պարագլուխների դերը՝ Հայոց ցեղասպանության կազմակերպման հարցում (էջ 99-100):

Պատմության կեղծարարներին հիմնավորապես մերկացնելու համար, ակադեմիկոս Ներսիսյանը վկայակոչել է նաև 1919 թ. Կ. Պոլսի ռազմական դատարանի մեղադրական փաստաթուղթը: Թուրքական պաշտոնական տեսակետն այս հարցում հստակեցնելու մտադրությամբ, հեղինակը չի շրջանցել նաև թուրքական

[478] Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke. Herausgegeben und eingeleitet von Dr Johannes Lepsius, Potsdam, 1919.

տարբեր վարչակարգերի ղեկավարների՝ Թալեաթի և Մուստաֆա Քեմալի խոստովանությունները: Շեշտելով Հայոց ցեղասպանության եղելության ընդունումը Մուստաֆա Քեմալի կողմից, Մ. Ներսիսյանն, այդուհանդերձ, դժվարացել է պատասխանել իր իսկ առաջադրած այն հարցին՝ թե ինչո՞վ է կարելի բացատրել Աթաթուրքի նման դիրքորոշումը (էջ 122):

Ներսիսյան – պատմաբանին բնորոշ էր սկզբնաղբյուրների, մասնավորապես, արխիվային վավերագրերի, մանրազնին քննությունը: Նա ցավով արձանագրել է այն փաստը, որ Հայոց ցեղասպանության պատմության մասնագետները բավարար չափով չեն օգտագործել նույնիսկ Հայաստանի արխիվներում պահվող փաստաթղթերը: Ի դեպ, սույն ժողովածուում հրապարակված են Հայաստանի Ազգային արխիվից քաղված 27 փաստաթուղթ (որոնցից 16-ը շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ), որոնք ավելի ամբողջական են դարձնում քեմալական զորքերի գործած բարբարոսական արարքների պատկերն Արևելյան Հայաստանում 1920 թ. վերջին և 1921 թ. սկզբին (էջ 126-166):

Քեմալականների օրոք Հայոց ցեղասպանության տարբեր մանրամասներ են վերհանված նաև «Մի բանավեճ Զմյուռնիայի 1922 թվականի ողբերգության մասին» հոդվածում, որտեղ հեղինակը հիմնվելով ականատեսների վկայությունների վրա, մանրամասնորեն բացահայտել է 1922 թ. սեպտեմբերին Զմյուռնիայում տեղի ունեցած՝ հայերի և հույների բնաջնջման բազում մանրամասներ: Նշենք նաև, որ այս հոդվածում վերահրատարակվել է դեռևս 1965 թ., Մ. Ներսիսյանի՝ «За рубежом» ամսագրի խմբագրական խորհրդին հղած քննադատական նամակը, որի առիթ էր ծառայել այդ ամսագրում՝ 1922 թ. Զմյուռնիայում քրիստոնյաների զանգվածային կոտորածների հավաստի պատկերն աղավաղող մի հոդվածի լույս ընծայումը: Այս փաստն ինքնին վկայում է Մ. Ներսիսյանի քաղաքացիական բարձր դիմագծի մասին, որը դեռևս 1960-ական թվականներին, երբ Խորհրդային Միությունում Հայոց ցեղասպանության թեման դեռևս «փակի ներքո» էր, չի վարանել բողոքի ձայն բարձրացնել հանուն պատմական ճշմարտության բացահայտման:

Գրքում ամփոփված դրվագները հեղինակը գրել է տարբեր

տարիների: Այնուհետև՝ նա հնարավորություն չի ունեցել դրանք խմբագրել և վերջնական տեսքի բերել իբրև միասնական գրքի բաղկացուցիչ մասեր: Այս իրողությունը, բնականաբար՝ դրոշմ է թողել շարադրանքի ընդհանուր ոգու վրա:

Միևնույն հանգամանքներով են պայմանավորված նաև գրախոսվող աշխատության մեջ երբեմն տեղ գտած կրկնությունները, ինչպես նաև որոշ անհաջող ձևակերպումները: Հեղինակն այսօր նպատակահարմար չէր գտնի, անշուշտ, Մ. Պոկրովսկու հայացքները բնութագրել իբրև «վուլգար-սոցիոլոգիական» (էջ 17):

Եզրափակելուց առաջ, ցանկանում ենք ողջունել սույն ժողովածուի լույս ընծայումը, քանզի այն ամփոփում է ակադեմիկոս Ներսիսյանի՝ Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված կարևորագույն հոդվածները, որոնք ընթերցողին հնարավորություն են ընձեռում հստակ պատկերացում կազմել՝ հայ ժողովրդի կյանքում այս ողբերգական իրադարձության շուրջ հեղինակի հայացքների համակարգի մասին:

*Պատմաբանասիրական հանդես, 2005, թիվ 2, էջ 307-311*

**Նիկոլայ Հովհաննիսյան, Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո, Երևան, Զանգակ-97, 2004, 205 էջ**

Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված պատմագիտական հարուստ գրականության մեջ, որքան տարօրինակ է, բացակայում են պատմագիտական բնույթի համակողմանի ուսումնասիրությունները: Առ այսօր մենք փաստորեն չունենք ցեղասպանության պատմության հետազոտության ասպարեզում մեծ ավանդ ներդրած ֆրանսիական, անգլիական, գերմանական, ամերիկյան պատմագիտական մտքի զարգացմանը նվիրված ուսումնասիրություններ[479]: Բացառության կարգով հիշատակենք, պատմական գիտությունների դոկտոր Մ. Կարապետյանի

[479] Հայոց ցեղասպանության պատմության խնդիրներին առնչվող որոշ հարցեր քննարկվել են ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի իրականացրած կոլեկտիվ մենագրություններից մեկում: Տես Новая история Армении в трудах современных зарубежных авторов, Ереван, 1993.

մենագրությունը, որը նվիրված է Հայոց ցեղասպանության՝ հայրենական պատմագրության զարգացման փուլերին[480]:

Ինչ վերաբերում է արաբական պատմագիտությանը, ապա վերջինիս՝ Հայոց ցեղասպանության հարցում ունեցած ըմբռնմանը մենք ծանոթացել ենք գլխավորապես շնորհիվ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Նիկոլայ Հովհաննիսյանի աշխատությունների: Արաբական երկրների նոր շրջանի պատմության անվանի հետազոտող Ն. Հովհաննիսյանը շուրջ չորս տասնամյակ չի զլացել պարբերաբար քննական վերլուծության ենթարկելու արաբ պատմաբանների՝ Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված ուսումնասիրությունները: Այսօր արդեն տասնամյակների իր մտորումները նա ի մի է բերել մի ամփոփ, սեղմ, սակայն արժեքավոր մենագրության մեջ, որը լույս է ընծայվել Հայոց ցեղասպանության 90-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման Պետական հանձնաժողովի որոշմամբ և մեծապես լրացնում է ցեղասպանության պատմագրության մեջ առկա «սպիտակ բծերից» մեկը:

Հայոց ցեղասպանության պատմության գիտական ուսումնասիրությանն, անտարակույս, մեծապես նպաստել են նաև արաբ պատմաբանները, որոնց աշխատությունները, ի տարբերություն եվրոպացի ուսումնասիրողների գրչին պատկանող պատկառելի գիտական ժառանգության, հայրենական պատմաբանների գերակշռող մասի համար՝ արաբերեն լեզվի չիմացության պատճառով, մնացել են անհասանելի: Ըստ այդմ, Ն. Հովհաննիսյանի՝ գիտական անժխտելի արժանիքներ ունեցող մենագրությունը, որին կանդրադառնանք ստորև, ձեռք է բերում նաև ճանաչողական մեծ նշանակություն, առավել ևս, եթե նկատի ունենանք, որ հեղինակը վերլուծում է արաբական աշխարհում ընդգրկված տարբեր երկրների (Սիրիա, Լիբանան, Եգիպտոս, Իրաք) պատմաբանների ուսումնասիրությունները:

Ն. Հովհաննիսյանը Հայոց ցեղասպանության հանդեպ արա-

---

[480] *Կարապետյան Մ.*, Հայոց 1915-1916 թվականների ցեղասպանության հարցերը հայ պատմագրության մեջ, Երևան, 1999; *նույնի*՝ Հայոց 1915-1916 թվականների ցեղասպանության հիմնահարցերը հետխորհրդային հայ պատմագրության մեջ, Երևան, 2005:

բական պատմագիտության դրսևորած մեծ հետաքրքրությունը համարում է օրինաչափ և բացատրում է դրա պատմական ու քաղաքական շարժառիթները, այն, մասնավորապես հիմնավորում հայ և արաբ ժողովուրդների միջև ձևավորված տարաբնույթ շփումներով, ինչպես նաև քաղաքական ճակատագրերի նմանությամբ, քանզի երկու ժողովուրդները դարեր շարունակ հեծել են օսմանյան լծի ներքո: Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության հարցում ժամանակակից արաբ պատմաբանների հետաքրքրությունը նա պատճառաբանում է իրենց ազգային պատմությանն առնչվող հարցերի ուսումնասիրությունը «համաօսմանյան համատեքստում» դիտարկելու ցանկությամբ: Ըստ նրա՝ «ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ, առաջին հերթին Հայկական հարցում օսմանյան կառավարության քաղաքականության ուսումնասիրությունը կօգնի նրանց՝ արաբական, սեփական պատմության ավելի խոր և բազմակողմանի հետազոտությանը» (էջ 24):

Ըստ էության, Ն. Հովհաննիսյանը տարակույս չունի, որ Հայոց ցեղասպանությունն արժևորելու ասպարեզում արաբ պատմաբանները որդեգրել են միասնական դիրքորոշում, իսկ նշմարելի զանազանությունները վերաբերում են սոսկ իրադարձության պատմությանը հատկացված տեղին, ծավալին և հարակից այլ հարցերի: Ըստ այդմ, նա նախընտրում է, մեր համոզմամբ, հարցերի քննության պատմագիտական բնույթի ուսումնասիրությունների իրականացման լավագույն՝ թեմատիկ սկզբունքը: Նախ՝ նա արաբ պատմաբանների ուսումնասիրությունները դասակարգում է երեք խմբում և տալիս դրանց համառոտ, սակայն սպառիչ գնահատականները. աշխատություններ, որոնք նվիրված են՝ 1/ Հայոց ցեղասպանությանը, 2/ հայ ժողովրդի պատմությանը, 3/ արաբական երկրների պատմությանը՝ Հայոց ցեղասպանությանն առնչվող հարցերի ընդգրկմամբ:

Ծանրության կենտրոնը տեղափոխելով առաջին խմբին պատկանող աշխատանքների քննական վերլուծության հարթություն, Ն. Հովհաննիսյանն առանձնահատուկ ուշադրության է արժանացրել հայտնի ցեղասպանագետ Մուսա Պրանսի ուսումնասիրությունները, որին պարտական ենք Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ «արմենոցիդ»՝ «հայասպանություն» տերմինը 1967

թ. շրջանառության մեջ դնելու համար: Այս նորամուծությունն, ի դեպ, նա համարում է արաբ պատմաբանի «ամենակարևոր ներդրումը Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում» (էջ 33) և հիմնավորապես բացահայտում այդ բնորոշման էությունը, համաձայն որի Մուսա Պրանսը, չբավարարվելով լոկ «արմենոցիդ» տերմինի առաջադրմամբ, խորամուխ է եղել դրա բովանդակության վերհանման մեջ և հայտարարում այն դիտել է իբրև «XX դարի մարդկության պատմության մեջ կատարված բոլոր գենոցիդների հետ համեմատած, ամենամեծ, ամենածանր, ամենանողկալի, այսինքն՝ ամենագենոցիդային գենոցիդ» (էջ 161): Բացի դրանից, Ն. Հովհաննիսյանն այս առիթով մանրամասնում է Մուսա Պրանսի մոտեցման առանձնահատկություններից մեկը ևս. թե՛ Հայոց ցեղասպանության և թե՛ հրեաների Հոլոքոստի ընթացքում՝ համապատասխանաբար՝ թուրքերի և նացիստների գործադրած սոսկալի վայրագությունը արաբ պատմաբանը մեկնաբանում է հոգեբանական և պաթալոգիական գործոններով (էջ 161)[481]:

Ն. Հովհաննիսյանը հանգամանորեն վերլուծում է նաև հայ ժողովրդի պատմությանը նվիրված արաբ պատմաբանների և իրավաբանների աշխատությունները, որոնցում այս կամ այն չափով արծարծվել են եղեռնի պատմությանն աղերսվող խնդիրները և հավաստում է, որ դրանցում արտահայտված տեսակետները «զգալի ներդրում են հանդիսանում Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում» (էջ 44): Հեղինակն ընդգծում է մի էական հանգամանք, այն է՝ որոշ արաբ հեղինակներ, օրինակ, Մրվան ալ-Մուդավարը, Ֆուադ Հասան Հաֆիզը, Մուսա Պրանսը, Նայիմ ալ-Յաֆին ժամանակագրական առումով Հայոց ցեղասպանությունը չեն պարփակում 1915 թ. տեղի ունեցած դեպքերով, այլ կատարվածի եզրերը տարածում են նաև Աբդուլ Համիդի օրոք տեղի ունեցած զանգվածային կոտորածների վրա, թեև նման մեկնաբանությունը նա չի դիտում իբրև առավելություն այս հեղինակների գիտական դիրքորոշման համար, քանզի այն

[481] Նշենք, ի դեպ, որ Հայոց ցեղասպանության պարագայում պաթոլոգիական գործոնին մեծ տեղ է հատկացնում նաև ֆրանսիացի խոշոր պատմաբան Իվ Տերնոնը: Տես *Ternon Y.*, Mardin 1915. Anatomie pathologique d'une destruction, Paris, 2002.

անհարիր է այս հարցում իր որդեգրած սկզբունքին: Ուստի՝ նպատակահարմար ենք գտնում կանգ առնել այս խնդրի վրա:

Մենք միանգամայն օրինաչափ ենք համարում Ն. Հովհաննիսյանի՝ 1915 թ. իրադարձություններին տված «Մեծ եղեռն» բնորոշումը (էջ 18), սակայն կարծում ենք, որ վիճահարույց է, այդուհանդերձ, Հայոց ցեղասպանության գործընթացը 1915 թ. շրջանակներում տեղադրելու տեսակետը (էջ 16, 17 և այլն), որի վրա խարսխված է մենագրության շարադրանքը: Ըստ Ն. Հովհաննիսյանի, օրինակ, «Աբդուլ Համիդ II-ը սանձազերծեց հայկական կոտորածները Կոստանդնուպոլսում, Սասունում և Արևմտյան Հայաստանի այլ վայրերում» (էջ 28), իսկ «1915 թ. սկսվեց Հայոց ցեղասպանությունը» (էջ 121): Մեր համոզմամբ սակայն Հայոց ցեղասպանությունը հարկ է դիտել իբրև փուլային՝ անհամաչափ զարգացում ունեցած միասնական գործընթաց, որը կյանքի է կոչվել Աբդուլ Համիդի մտահղացմամբ (միայն 1894-1896 թթ. պետական քաղաքականության մակարդակով և էթնիկական ծագման պատճառով ոչնչացվել է շուրջ 300.000 հայ), հարատևել է շուրջ երեք տասնամյակ (1894-1922) և իրականացվել օսմանյան երեք վարչակարգերի կողմից: Անշուշտ, հայ ժողովրդի բնաջնջման գործընթացը գագաթնակետին է հասել 1915 թ.:

Երրորդ խմբում ընդգրկված՝ արաբ հեղինակների աշխատությունների առանձնահատկությունը Ն. Հովհաննիսյանը համարում է վերլուծված հարցերի սերտ առնչությունն արաբական պատմության հիմնախնդիրների հետ: Ի վերջո, նրա կարծիքով, հարկ է արաբական պատմական գրականությունն «ընկալել որպես մեկ ամբողջություն» (էջ 47), որը միակ հնարավոր միջոցն է ամբողջական պատկերացում կազմելու համար՝ խնդրո առարկա ասպարեզում արաբական պատմագիտության ներդրած ավանդի մասին: Ըստ այդմ, ընդհանրացնելով իր խորհրդածությունները, հեղինակն առանձնացնում է արաբական պատմագիտությանը բնորոշ յուրահատկությունները, որոնք այն էականորեն զանազանում են ցեղասպանության եվրոպական պատմագրությունից, դրանցից արժևորելով երկուսը: Նախ՝ արաբ պատմաբաններն Օսմանյան կայսրության պատմությանն առնչվող իրադարձությունները չեն քննարկում սոսկ որպես «դիտորդ», քանզի արաբական երկրները չորս հարյուրամյակ շարունակ (1516-1918)

ընդգրկված են եղել կայսրության կազմում և, բնականաբար, օսմանյան վարչակարգի լծի ներքո հեծող ժողովուրդներին բաժին հասած փորձությունների իմաստն ըմբռնում են շատ ավելի լավ, քան արևմտյան ժողովուրդների ներկայացուցիչները: Մյուս կողմից՝ արաբ ուսումնասիրողների պարագայում ի չիք է դառնում թուրք պատմաբանների կողմից արևմտյան պատմաբանների հասցեին բարդվող ստահոդ հերյուրանքների հավանականությունը, համաձայն որոնց՝ «քրիստոնյա պատմաբանները պաշտպանում են քրիստոնյա հայերին» (էջ 50): Ընդհանուր հայտարարում, հետևում է Ն. Հովհաննիսյանի հետևյալ եզրահանգումը. «Արաբական պատմագիտությունը նպաստում է, որ Հայոց ցեղասպանության հարցը չտեղափոխվի կրոնական ոլորտ, այլ մնա քաղաքական դաշտում» (էջ 52):

Ն. Հովհաննիսյանն իրավամբ սահմանազատում է և մանրազնին վերլուծության ենթարկում արաբ հեղինակների քննարկած՝ Հայոց ցեղասպանության նախադրյալներն ու պատճառները: Նա բարձր է գնահատում Օսմանյան կայսրության «իրական և հավաստի պատկերը» վերհանելու ասպարեզում արաբ պատմաբանների դրսևորած համակողմանի մոտեցումը՝ քրիստոնյա և մահմեդական զանազան ժողովուրդների, այդ թվում՝ հայերի կացությանը վերաբերող սկզբնաղբյուրների ուսումնասիրության հիման վրա: Ի շարս արաբ պատմաբանների բացահայտած ցեղասպանության նախադրյալների, հեղինակն առանձնացնում է Օսմանյան կայսրության ռասայական էությունը, թուրքերի «բարձր», իսկ մյուս ժողովուրդների «ցածր» ազգ լինելու տեսությունը, կայսրության ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ գործադրվող զանգվածային բռնություններն ու կոտորածները, մասնավորապես՝ XIX դարի վերջին և XX դարի սկզբին: Նման ընդգրկուն մոտեցման շնորհիվ է, որ ըստ Ն. Հովհաննիսյանի, «օսմանյան սուլթանների քաղաքականությունն ազգային հարցում դառնում է ավելի հասկանալի ու ցցուն» (էջ 62):

Վերլուծելով արաբ պատմաբանների հիմնադրույթները, Ն. Հովհաննիսյանը հանգում է միակ հնարավոր հետևությանը. «Դա մի կայսրություն էր, որը… մեզ է ներկայանում թուրքերի՝ որպես տիրապետող և «բարձր» կարգի ժողովրդի և մնացյալ ոչ թուրք ժողովուրդների՝ ենթակա ռայաների պետության դասական

օրինակ…, որտեղ բոլոր ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում և հայերի, կոտորածների ու ջարդերի քաղաքականությունը հանդիսանում էր պետական քաղաքականություն» (էջ 69. այս մասին տե՛ս նաև էջ 174): Ի դեպ, այս առիթով, անհրաժեշտ է նշել, որ պատմության մեջ արձանագրված զանգվածային բռնություններն իբրև ժողովրդասպանություն (democide) կամ էթնիկական հողի վրա տեղի ունեցած բնաջնջումներն իբրև ցեղասպանություն (genocide) բնութագրելու հարցում, պետական քաղաքականության առկայության հանգամանքը, որը ցեղասպանության պարագայում մենք համարում ենք conditio sine qua non, ժամանակակից ցեղասպանագետների շրջանում տեղիք է տվել տարակարծություններիի[482]:

Ն. Հովհաննիսյանը չցանկանալով անջրպետել Հայոց ցեղասպանության պատճառները և նախադրյալները, հիմնավորված է համարում, այդուհանդերձ, դրանք միմյանցից զանազանելու անհրաժեշտությունը: Ելնելով արաբ հեղինակների քննարկած հիմնախնդիրներից, նա առանձնացնում է այն գլխավոր պատճառները, որոնք անմիջականորեն կյանքի են կոչել ցեղասպանության գործընթացը: Դրանց թվում նա ոչ միայն մանրամասնորեն ներկայացնում է, այլև քննական վերլուծության ենթարկում բռնի թուրքացման, պանթուրքիզմի քաղաքականության և այսպես կոչված՝ «հայկական պատնեշի» վերացման (որը հնարավոր էր իրականացնել միայն հայերի՝ որպես էթնիկական ընդհանրության բնաջնջման ուղիով) հանգամանքները, որոնք բազմիցս մատնանշում են արաբ պատմաբանները:

Ցեղասպանության պատճառների թվում Ն. Հովհաննիսյանն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում Օսմանյան կայսրությունը վերջնական տրոհումից կանխելու՝ օսմանյան ղեկավարների մտավախությանը, որը, ըստ նրա, «արաբ հեղինակների կարծի-

---

[482] Տե՛ս օրինակ՝ մեր օրերի խոշորագույն ցեղասպանագետներից՝ այս տեսակետի կողմնակից, ամերիկյան հայտնի քաղաքագետ Ռ. Ջ. Ռումելի և այն վիճարկող՝ Երուսաղեմում Հոլոքոստի և ցեղասպանության ինստիտուտի տնօրեն Իսրայել Չառնիի բանավեճն այս առիթով. *Charny I.W.*, Démocide : vers un nouveau concept global. Présentation des travaux de R.J. Rummel // Le livre noir de l'humanité. Encyclopédie mondiale des génocides. Sous la direction de Israel Charny, Toulouse, 2001, p. 45-48; *Rummel R.J.*, Le nouveau concept de démocide // Ibid., p. 48-55.

քով, պատճառ հանդիսացավ, որ երիտթուրքական ղեկավարությունը Հայկական հարցում գրավի ավելի կոշտ, ագրեսիվ և դաժան դիրքորոշում» (էջ 86)։ Մեր համոզմամբ ևս, Հայոց ցեղասպանության գործընթացի սանձազերծումն Աբդուլ Համիդի կողմից պայմանավորված էր գլխավորապես կայսրության տարածքային ամբողջականության պահպանության շահերով։

Հեղինակն անդրադառնում է բազմաթիվ արաբ պատմաբանների լուսաբանած՝ Հայոց ցեղասպանության պատմությանն առնչվող մի շարք սկզբունքային նշանակություն ունեցող խնդիրների վերլուծությանը՝ կապված քրդական գործոնի, արևմտահայերի պահանջների, հայերի «դավաճանության» և «ապստամբության»՝ երիտթուրքերի վարկածի հետ։ Ինչպես նա նշում է, քրդերի՝ արևմտահայերի հանդեպ դրսևորած վերաբերմունքը հիմնավորապես բացահայտել է, մասնավորապես, Սալիհ Զահր ադ-Դինը, որն ընդգծել է թե՛ քրդերի մասնակցությունը 1890-ական թթ. հայերի դեմ գործադրված բռնություններին և թե՛ նրանց որոշ շրջաններում դրսևորված՝ ընդդեմ ընդհանուր թշնամու՝ հայերի հետ համատեղ պայքարելու միտումը։ Ն. Հովհաննիսյանը գտնում է, որ հայ-քրդական համագործակցությունը, սակայն, «քուրդ ցեղապետների և օսմանյան սուլթանի մեղքով, չդարձավ մշտական գործոն և չվերածվեց մշակված ու գիտակցված քաղաքականության» (էջ 103)։

Առավել հետաքրքիր են Ն. Հովհաննիսյանի դիտարկումները կապված արևմտահայության պահանջների և բարեփոխումների խնդիրների հետ, որոնք համակողմանիորեն արծարծել են արաբ պատմաբանները։ Ըստ հեղինակի, վերջիններս խիստ քննադատության են ենթարկել Բեռլինի վեհաժողովի որոշումները և եվրոպական պետությունների քաղաքականությունը Հայկական հարցում։ Նա հանգամանալից վերլուծում է թե՛ Օսմանյան կայսրության ապակենտրոնացման (լամարքազիայի) և թե՛ Հայկական հարցի լուծման լիբանանյան մոդելները։ Եթե առաջին տարբերակը նախատեսում էր Օսմանյան կայսրության շրջանակներում կոնֆեդերացիայի ստեղծում, ապա երկրորդը՝ արևմտահայության պարագայում, իր արտացոլումը գտավ, փաստորեն, 1914 թ. հունվարի 26-ին ստորագրված ռուս-թուրքական համաձայնագրում,

ըստ որի Արևմտյան Հայաստանը բաժանվում էր երկու գոտու՝ եվրոպացի տեսուչների ղեկավարությամբ, որն Առաջին համաշխարհային պատերազմի սանձազերծման հետևանքով մնաց անիրագործելի: Արաբ հեղինակների կողմից այս մոդելների շուրջ հայտնած կարծիքները, հիրավի, ձեռք են բերում մեծ կարևորություն, քանզի հայերի՝ կայսրությունից անջատվելու ցանկությունը բազմիցս շահարկել են թուրք պատմաբանները: Արաբ պատմաբանների աշխատությունների մանրազնին վերլուծությունը հնարավորություն է ընձեռել Ն. Հովհաննիսյանին հանգելու խիստ իրատեսական հետևության. «Արաբական պատմագիտությունը գալիս է հավաստելու այն ճշմարտությունը, որ արևմտահայությունը ձգտել է իր հարցը լուծել Օսմանյան կայսրության շրջանակներում և երբեք չի դրել Օսմանյան կայսրությունից անջատվելու հարց» (էջ 131):

Ն. Հովհաննիսյանն ուշադրությունը բևեռել է Հայոց ցեղասպանությանն առնչվող՝ արաբ պատմաբանների աշխատություններում քննարկված ևս մեկ կարևոր հարցի՝ հայերի կարծեցյալ դավաճանության վրա: Մանրամասնորեն վերլուծելով նրանց կողմից բերված հավաստի տվյալները՝ համաձայն որոնց հայերին դավաճանության մեջ մեղադրելն անհեթեթություն է, առավել ևս նախքան Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը, հեղինակը եզրակացնում է. «Արաբական պատմագիտության մեջ միանգամայն ճիշտ են լուսաբանված իրադարձությունները և տրված են միանգամայն համոզիչ ու արդարացի գնահատականներ՝ առ այն, որ հայերի կողմից ոչ մի դավաճանություն տեղի չի ունեցել» (էջ 138): Ըստ նրա վերլուծության՝ արաբ պատմաբանները նույնքան հիմնավորապես հերքում են նաև 1915 թ. Վանի ինքնապաշտպանության կապակցությամբ հայերի հասցեին տեղացող՝ երիտթուրքերի մեղադրանքներն ապստամբության և դավաճանության վերաբերյալ: Ուստի Հայոց ցեղասպանության արաբական պատմագիտության մեջ գերիշխող տեսակետի համաձայն, ինչպես ապացուցում է Ն. Հովհաննիսյանը, արմենոցիդը մեկնաբանվում է իբրև «խնամքով ծրագրված քաղաքականություն» (էջ 150):

Ընդհանուր առմամբ, հեղինակը համոզմունք է հայտնում, որ

«արաբական պատմագիտության մեջ Հայոց ցեղասպանությունը՝ արմենոցիդը, ընկալվում է որպես XX դարի առաջին ցեղասպանություն, որը եթե հայերի համար ողբերգություն էր, ապա համայն մարդկության համար ոճրագործություն, որը պետք է համարվի հանցանք՝ ուղղված ընդհանրապես մարդկության դեմ» (էջ 178):

Անդրադառնանք նաև Ն. Հովհաննիսյանի առաջադրած, մեր կարծիքով, ոչ այնքան համոզիչ մի դրույթի: Թերևս հեղինակի՝ Հայոց ցեղասպանության ժամանակագրական եզրերը սահմանող՝ ընդհանուր հայեցակարգով է բացատրվում նրա՝ ցեղասպանության առանցքային խնդիրներից մեկին առնչվող մեկնաբանությունը, ըստ որի Աբդուլ Համիդ II-ի «անավարտ գործի շարունակողները»՝ երիտթուրքերը, «հայերին ֆիզիկապես վերացնելու քաղաքականությունը բարձրացրեցին պետական քաղաքականության մակարդակի» (էջ 19): Այս առիթով անհրաժեշտ ենք համարում նշել, որ Աբդուլ Համիդի նախաձեռնությամբ հրահրված Հայոց ցեղասպանությունն ի սկզբանե իրականացվել է պետական քաղաքականության մակարդակով, հանգամանք, որն աներկբայելիորեն հավաստում են զանազան եվրոպական սկզբնաղբյուրներ, մասնավորապես, Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարության արխիվի վավերագրերն ամփոփող ժողովածուն՝ «Դեղին գիրքը»[483]:

Եզրափակելուց առաջ հարկ ենք համարում ընդգծել, որ Ն. Հովհաննիսյանի մենագրությունը միանգամայն նոր և արժեքավոր խոսք է Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ, որը հագեցված է թե՛ արաբական պատմագիտությանը և թե՛ եղեռնի պատմության մի շարք առանցքային հարցերին (պատճառներին, առանձնահատկություններին և այլն)՝ հեղինակի տված ծանրակշիռ գնահատականներով ու մեկնաբանություններով, որն, անտարակույս, մեծ հետաքրքրությամբ կընդունեն ցեղասպանության պատմության ուսումնասիրողները:

*Էջմիածին, 2005, թիվ Դ, էջ 148-154*

---

[483] Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman. 1893-1897, Paris, 1897. Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896, Paris, 1897. Այդ մասին տես *Պողոսյան Վ.*, Ֆրանսիական տպագիր սկզբնաղբյուրները 1894-1896 թթ. հայկական կոտորածների մասին // Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, 2004, թիվ 9, էջ 101-111:

**H. Morgenthau, United States Diplomacy on the Bosphorus: The Diaries of Ambassador Morgenthau, 1913-1916. Compiled with an introduction by Ara Sarafian, Princeton and London, Gomidas Institute, 2004, 496 p.**

**Հ. Մորգենթաու, Միացյալ Նահանգների դիվանագիտությունը Բոսֆորում. դեսպան Մորգենթաուի օրագրերը, 1913-1916: Արա Սարաֆյանի աշխատասիրությամբ, Փրինսթոն և Լոնդոն, Կոմիտասի ինստիտուտ, 2004, 496 էջ**

1990-ական թվականների երկրորդ կեսից ի վեր Հայոց ցեղասպանության պատմության սկզբնաղբյուրների հրատարակության ասպարեզում նշանակալից ավանդ է ներդրել անգլիացի պատմաբան Արա Սարաֆյանը, որի ջանքերով լույս են ընծայվել ամերիկյան դիվանագիտական արժեքավոր փաստաթղթեր, ամերիկացի և եվրոպացի միսիոներների բազմաթիվ հուշագրություններ: Նրա իրականացրած հրատարակություններից հիշարժան է ԱՄՆ-ի արխիվներում պահվող, ամերիկացի դիվանագետների գրագրություններն ամփոփող վավերագրերի ժողովածուն[484]: Հարկ է մատնանշել նաև նրա ավանդը Ջ. Բրայսի և Ա. Թոյնբիի աշխատասիրությամբ 1916 թ. լույս ընծայված «Հայերի նկատմամբ վերաբերմունքն Օսմանյան կայսրությունում (1915-16)» փաստաթղթերի ժողովածուի վերահրատարակության գործում[485]:

Սույն ժողովածուում ընդգրկված անգլիական արխիվային 150 վավերագրի պատմականությունը թուրքական պաշտոնական շրջանների կողմից վերջին տարիներին տեղիք է տվել բուռն քննարկումների, քանզի, ելնելով Օսմանյան կայսրության տարածքում գտնվող փաստաթղթերի հեղինակների անվտանգության

[484] United States Official Records on the Armenian Genocide 1915-1917, compiled with an introduction by Ara Sarafian, Princeton and London, 2004. Ժողովածուում հրատարակված փաստաթղթերի մի մասը զետեղվել է հետևյալ հրատարակության մեջ. United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian, v. l-III, Watertown, 1993-1995.

[485] *Bryce J.* and *Toynbee A*., The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916. Documents Presented to viscount Grey of Falloden by viscount Bryce, edited and with an introduction by Ara Sarafian, Princeton, 2000.

շահերից, հրատարակիչները գերադասել են չբացահայտել նրանց ինքնությունը: Ձեռնամուխ լինելով ժողովածուի վերահրատարակությանը, Սարաֆյանն՝ ըստ փաստաթղթերի բնագրերի, ճշգրտել է և մատնանշել թե՛ հեղինակների ազգանունները և թե՛ այն բնակավայրերը, որտեղից դրանք ստացվել են: Դրանով նա ջախջախիչ հարված է հասցրել ժողովածուի հրատարակության հետ կապված հանգամանքները շահարկող ժամանակակից թուրք քաղաքագետներին և պատմաբաններին:

Հայոց Մեծ Եղեռնի պատմության բազմազան սկզբնաղբյուրների թվում իրենց ուրույն տեղն ունեն պատմաբաններին քաջածանոթ՝ 1913-1916 թթ. Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի (1856-1946)՝ 1918 թ. լույս ընծայած և բազմիցս վերահրատարակված հուշերը[486]: Պատմաբանների լայն շրջանակներին, սակայն, մինչ վերջերս անհայտ էին Մորգենթաուի օրագրային ծավալուն գրառումները, որոնք մեծապես համալրում են նրա հուշերում ամփոփված՝ Հայոց ցեղասպանությանն առնչվող տեղեկությունները: ԱՄՆ-ի դեսպանի օրագրերի՝ գիտական բարձր մակարդակով իրականացված հրատարակության համար ևս Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրողները պարտական են Սարաֆյանին: Վաշինգտոնի Կոնգրեսի գրադարանի ձեռագրերի բաժնում նա հայտնաբերել է 1913 թ. նոյեմբերի 1-ից մինչև 1916 թ. փետրվարի 1-ն ընդգրկող՝ Մորգենթաուի օրագրային նոթերը, որոնք նրա հետնորդները 1952 թ. հանձնել են գրադարանին (էջ XIII)[487]: Գրքի առաջաբանում (էջ VII-XIII) Սարաֆյանն արժեվորել է հեղինակի շոշափած բազմազան հարցերը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում վավերագրերի բնագրերին տվել մեկնաբանություններ:

---

[486] *Morgenthau H.*, Ambassador Morgenthau's Story, New York, 1918. Տես նաև հայերեն թարգմանությունը. Ամերիկեան դեսպան Մորկընթաուի յիշատակները և հայկական եղեռնին գաղտնիքները, թարգմանիչ՝ Ենովք Արմեն, Կ. Պոլիս, 1919: Մորգենթաուի հուշերի մասին տես *Կարապետյան Մ.*, Մորգենթաուի հուշագրության պատմագիտական արժեքը. – Հենրի Մորգենթաուն և հայ ժողովուրդը, Երևան, 1999, էջ 26-37:

[487] Մորգենթաուի ձեռագիր օրագրային գրառումները սոսկ երկու անգամ հղել է նրա թոռ Մորգենթաու III-ը՝ Մորգենթաուների ընտանիքին նվիրված իր գրքում: Տես *Morgenthau H. III*, Mostly Morgenthaus. A Family History, New York, 1991, p. 165-166.

Մորգենթաուի ամենօրյա գրառումներն աչքի են ընկնում տեղեկատվության բազմազանությամբ և պարունակում ոչ միայն Կոստանդնուպոլսում նրա առօրյային (ֆրանսերենի ուսուցում, տեսարժան վայրերի այցելություններ, ձիավարություններ և այլն), այլև դիվանագիտական գործունեությանը վերաբերող հետաքրքիր մանրամասներ, որոնք վկայում են Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպանի բազմաբնույթ գործունեության մասին: Սակայն Մորգենթաուի օրագրերին առավել նշանակալից կարևորություն են հաղորդում թե՛ օսմանյան պետական գործիչների և թե՛ կայսրությունում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետների հետ զանազան քաղաքական հարցերի քննարկումներին վերաբերող ծավալուն գրառումները:

Շրջանցելով Մորգենթաուի դիվանագիտական հարաբերություններին, Առաջին համաշխարհային պատերազմի սանձազերծմանը, ԱՄՆ-ի քաղաքականությանը վերաբերող տեղեկությունները, անդրադառնանք Հայոց Մեծ Եղեռնին առնչվող՝ դեսպանի քննարկած խնդիրներին, որոնց նրա օրագրերում հատկացված է զգալի տեղ: Մորգենթաուի հաղորդած արժեքավոր տեղեկությունների գերակշռող մասը լույս է սփռում, մասնավորապես, հայ ժողովրդի հանդեպ օսմանյան բարձրաստիճան պաշտոնյաների որդեգրած դիրքորոշման և դեսպանի հայանպաստ գործունեության վրա, ինչը վկայում է հայ ժողովրդի հանդեպ նրա սրտացավ վերաբերմունքի, այլ ոչ թե իրադարձությունների անտարբեր դիտորդին բնորոշ պահվածքի մասին:

Մորգենթաուի օրագրային գրառումները բացահայտում են Մեծ Եղեռնի իրականացումն օսմանյան իշխանությունների կողմից դիտավորության հիման վրա, որն, ըստ ժամանակակից ցեղասպանագետների, ցեղասպանության՝ իբրև երևույթի հիմնական բնորոշիչներից է[488]: Մորգենթաուն հավաստում է, որ 1915 թ. հուլիսի 10-ին իր հետ զրույցի ընթացքում Թուրքիայի ներքին

[488] Տես օրինակ՝ *Chalk F. & Jonassohn K.*, The History and Sociology of Genocide. Analyses and Case Studies, New Haven & London, 1990, p. 26; *Ternon Y.*, L'État criminel. Les génocides au XX^e siècle, Paris, 1995, p. 91-92 ; *նույնի՝* L'innocence des victimes. Au siècle des génocides, Paris, 2001, p. 10 ; *Balint J.*, *Charny I.W.*, Définitions du génocide.– Le livre noir de l'humanité. Encyclopédie mondiale des génocides. Sous la direction de Israel Charny, Toulouse, 2001, p. 43-44.

գործերի նախարար Թալեաթը խուսափել է Հայկական հարցի քննարկումից՝ ասելով, թե դրան կանդրադառնա մեկ այլ առիթով, սակայն չի վարանել նրա թարգմանիչ Շմավոնյանին անմիջապես հայտնել, որ «այդ օրը երբեք չի գա»: Դրանից դեսպանը հանգել է այն հետևության, որ օսմանյան իշխանություններն «ակնհայտորեն որոշում են կայացրել երկրի իսլամացման և բոլոր նրանց, ովքեր մահմեդականներ չեն, ոչնչացման ու բնաջնջման մասին» (էջ 273): Այդ իսկ պատճառով նա ամերիկյան կանանց կոմիտեի ներկայացուցիչներին խորհուրդ է տվել ձեռնպահ մնալ Թալեաթի հետ Հայոց ցեղասպանության մասին խոսելուց, քանզի նախարարը որևէ նշանակություն չի տալիս նույնիսկ «բոլոր կառավարությունների և դեսպանների բողոքներին ու պահանջներին» (էջ 278):

Դիտավորության հիման վրա հայերի դեմ ցեղասպան քաղաքականության կենսագործումը հավաստել են նաև եվրոպացի դիվանագետներն ու հասարակական գործիչները: Ըստ Մորգենթաուի՝ Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալլավիչինին ցանկություն չի ունեցել հայկական կոտորածները կասեցնելու շուրջ զրուցել Թալեաթի և Էնվերի հետ, քանզի համոզվել է, որ դա անիմաստ է (էջ 256): Պալլավիչինին հույն դիվանագետ Ցամադոսին հայտնել է իր համոզմունքն առ այն, որ թուրքերը «լի են վճռականությամբ ոչնչացնելու կամ վտարելու հայերին և հույներին» (էջ 275): Իսկ 1915 թ. օգոստոսին Կոստանդնուպոլսում գտնվող Լեփսիուսը Մորգենթաուին իրազեկել է, որ օսմանյան իշխանությունները հետամուտ են հայերին ոչնչացնելու ծրագիրն ավարտին հասցնելու քաղաքականությանը (էջ 301):

Ինչ վերաբերում է հայերի զանգվածային բնաջնջմանն ու տեղահանություններին, ապա Մորգենթաուն հաղորդում է կցկտուր տեղեկություններ, ինչն, անկասկած, պայմանավորված է գլխավորապես նրանով, որ զրույցներում նա, հավանաբար, գերադասել է խույս տալ ցեղասպանության մանրամասների մեջ թափանցելուց[489]: Այդուհանդերձ, Մորգենթաուի նոթերում հանդի-

[489] Հարկ է նկատի ունենալ սակայն, որ չնայած օսմանյան իշխանությունների՝ մայրաքաղաքի և ներքին նահանգների միջև հաղորդագրությունները խոչընդոտելու ուղղությամբ գործադրած ջանքերին (ըստ դեսպանի գրառումներից մեկի՝ այդ մասին հավաստել է նաև Կոստանդնուպոլսի ոստիկանապետ Բեդրի բեյը

պում ենք տարբեր բնակավայրերից (Զեյթուն, Կոնիա, Զմյուռնիա) արտաքսվող հայերի համար ստեղծված դժնդակ և անելանելի պայմանների մասին վկայող՝ Կոստանդնուպոլիս ժամանած սակավաթիվ ականատեսներից (մասնավորապես օտարերկրյա միսիոներներից) ստացված ցաքուցրիվ տեղեկությունների (էջ 240, 269, 276, 321 և այլն): Հիշարժան է, հատկապես, Սեբաստիայում ամերիկացի միսիոներ Փարթրիդջի վկայությունը 25.000 հայի քաղաքից վտարելու և Մոսուլ քշելու մասին: Ավելի կարևոր են, սակայն, միսիոների՝ Կոստանդնուպոլսից տրված հրամանի հիման վրա տեղահանությունների իրականացմանը վերաբերող հավաստումները. «Կասկածները չնչին են, որ կառավարությունը արտաքուստ ոչ տեսանելի, սակայն պատասխանատու է այս հալածանքների համար»,– եզրակացրել է նա (էջ 286): Դրանով նա ևս, փաստորեն, ընդգծել է պետական քաղաքականության մակարդակով Հայոց ցեղասպանության իրականացման հանգամանքը: 1915 թ. ապրիլ-հունիս ամիսներին կատարած տարբեր գրառումներում դեսպանը հաղորդում է նաև հայ մտավորականների ձերբակալությանն ու արտաքսմանն առնչվող տեղեկություններ: Դեռևս ապրիլին, Թալեաթի հետ զրույցներից հետո, Մորգենթաուի մոտ ձևավորվել է այն տպավորությունը, որ օսմանյան իշխանություններին մեծ երկյուղ է ներշնչում «հնարավոր հեղափոխության» գաղափարը (էջ 217) և ըստ այդմ՝ նրանք ցանկանում են հայ մտավորականներին տեղափոխել թուրքերով բնակեցված ներքին նահանգները, «որտեղ նրանք չեն կարող վնաս պատճառել» (էջ 216): Այդուհանդերձ, ելնելով գրառումներից, կարելի է հավաստել, որ Մորգենթաուն քիչ անց կողմնորոշվել է մտավորականների արտաքսման իրական պատճառներում, քանզի արդեն մայիսի 17-ին նշել է, որ ձերբակալվածների «մեծամասնությունը կատարելապես անմեղ է և դարձել է զավեշտալի սխալների զոհը» (էջ 231):

Ըստ Մորգենթաուի օրագրերի՝ ժամանակակիցները վկայել

1915 թ. օգոստոսի 3-ին Շմավոնյանի հետ ունեցած զրույցում (էջ 294), Մորգենթաուն, այդուհանդերձ, տարբեր տարածաշրջաններում գտնվող ամերիկյան հյուպատոսներից ստացել է ընդարձակ և հավաստի տեղեկություններ, որոնք պարբերաբար հղել է պետական դեպարտամենտին: Դրանք ամփոփված են "United States Official Records on the Armenian Genocide 1915-1917" ժողովածուում:

են նաև ցեղասպանության իրականացման զանազան դրսևորումների մասին: Գերմանացի միսիոներներից մեկն Էվերեկում հայերին վերաբերվելու եղանակն անվանել է սարսափելի և նշել, որ տեղում զինաթափում են հայերին, այն դեպքում, երբ մահմեդականներից զենքերը չեն առգրավվում (էջ 268): Մեկ այլ միսիոներ դեսպանին տեղեկացրել է 30.000 հայի՝ Հալեպից անապատ քշելու և այն սարսափելի խոշտանգումների մասին, որոնց նրանք ենթարկվում են (էջ 269): Բեդրի բեյն ընդունել է հայ երեխաներին հարկադրաբար կրոնափոխելու իրողությունը (էջ 294): Զմյուռնիայում հայերի ոչնչացումը, հայկական թաղամասերի հրկիզումը, թուրք սպաների և զինվորների կողմից հայերի ունեցվածքի կողոպուտը հավաստել է քահանա Հարլոուն (էջ 321):

Մորգենթաուի նոթերում առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում Թալեաթի, Էնվերի, ինչպես նաև օսմանյան այլ ղեկավարների հետ զրույցներին վերաբերող գրառումները, որոնք բացահայտում են եղեռնի կազմակերպիչների համանման՝ առերևույթ, սակայն փոքր-ինչ զանազանվող հայատյաց միտումները: ԱՄՆ-ի դեսպանը հիմնավորապես մերկացնում է Թալեաթի անմարդկային դիմագիծը: Դեռևս մինչ 1915 թ. հայկական լայնածավալ կոտորածների սանձազերծումը, նա Օսմանյան կայսրության կրթության նախարարի հետ զրույցում վկայակոչել է Թալեաթի խոստովանությունն առ այն, որ «ինքը սիրտ չունի» (էջ 128): Հայոց ցեղասպանության գործընթացի ծավալումը Մորգենթաուին վերջնականապես համոզել է դրանում: Հայերի ոչնչացման և արտաքսման քաղաքականությունն ավարտին հասցնելու հարցում Թալեաթի վճռականության մասին 1916 թ. հունվարի 4-ին վկայել է, մասնավորապես, Թուրքիայի դաշնակից Գերմանիայի նորանշանակ դեսպան կոմս Վոլֆ-Մետերնիխը, որը, թեպետ հայերի տեղահանությունները վերջնականապես դադարեցնելուն առնչվող՝ Թալեաթի կեղծ խոստմանը, արձանագրել է որոշ բողոքականների և կաթոլիկների տեղահանությունը և փաստել հարցի առնչությամբ ճշմարտության բացակայությունը ներքին գործերի նախարարի հավաստումներում (էջ 427):

Այդուհանդերձ, Մորգենթաուի հետ զրույցներում Թալեաթը երբևէ չի քողարկել հայերի ոչնչացման փաստը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ այն ընդունել է: Մի առիթով նա դեսպանին

բացահայտորեն ասել է. «Ոչ մի հայ չի կարող այլևս մեր ընկերը լինել այն ամենից հետո, ինչ մենք արել ենք» (էջ 301): 1915 թ. օգոստոսի 2-ին արդեն Մորգենթաուն հավաստիացել է, որ Թալեաթը «ցանկանում է բնաջնջել խեղճ հայերին» (էջ 293): Դեռ ավելին, նա վկայակոչում է Թալեաթի լկտի խոստովանությունն այն մասին, որ հայերին ոչնչացնելու հարցում երեք ամսում արել է ավելին, քան Աբդուլ Համիդը՝ 37 տարում (էջ 279):

Փոխարենը, օտարերկրյա դիվանագետների հետ զրույցներում Ռազմական նախարար Էնվերը հետևել է շատ ավելի զգույշ և խորամանկ մարտավարության: 1915 թ. օգոստոսի 1-ին Մորգենթաուին նա հայտնել է, որ հայերի՝ ԱՄՆ մեկնելու հեռանկարն իրեն չի ոգևորում, քանզի թուրքերը կզրկվեն բարձր արժանիքներով օժտված քաղաքացիներից: Բացի դրանից, նա հայտարարել է, որ օսմանյան իշխանությունները ոչ միայն մտադիր չեն հայերին բնաջնջելու, այլև զգում են նրանց կարիքը, իսկ ինքը միայն վախենում է, որ տարագնացության թույլտվության պարագայում հասարակության լավագույն մասը կլքի կայսրությունը (էջ 291): Ռազմական նախարարը Մորգենթաուին հայտնել է նույնիսկ իր հիացմունքը՝ կապված հայերի աշխատասիրության հետ, ինչպես նաև փորձել է նրան համոզել, որ հայ ժողովրդի նկատմամբ բացասական տրամադրվածություն չունի (էջ 258): Էնվերը դեսպանին պարբերաբար տեղեկացրել է հայկական կոտորածները կասեցնելու (էջ 258), հայերին անհանգստություններ չպատճառելու իր ցանկությունը և նրա ներկայությամբ մի առիթով անգամ կարգադրել է հեռագրեր ուղարկել այդ կապակցությամբ (էջ 315): 1915 թ. մայիսին նա Մորգենթաուին նույնիսկ թույլատրել է Կոնիայի հայերին հատկացնել դրամական և այլ օգնություններ (էջ 233):

Ակնհայտ է, որ երիտթուրքերի պարագլուխների՝ հայերի հանդեպ իրականացվող քաղաքականության մեկնաբանությունների միջև կան էական զանազանություններ, որոնք չեն վրիպել նաև եվրոպացի դիվանագետների ուշադրությունից: Բուլղարացի դիվանագետ Կոլուշեֆֆն, օրինակ, Թալեաթին և Էնվերին անվանելով «կատուներ», նախապատվությունն, այդուհանդերձ, տվել է առաջինին, քանզի նա «ցույց է տալիս իր մագիլները, այն դեպքում, երբ Էնվերը դրանք քողարկում է» (էջ 356):

Մորգենթաուն մանրամասն տեղեկություններ է հաղորդում Մեծ Եղեռնի պատճառներին՝ երիտթուրք ղեկավարների տված մեկնաբանությունների շուրջ, որոնք հանգում են հիմնականում երեքի՝ օտար պետությունների միջամտության, որի հետևանքով հայերն ապստամբել են, հայկական ինքնուրույն թագավորության հիմնադրման, ռուսների հետ, մասնավորապես Վանում, համագործակցության:

Ըստ Թալեաթի՝ հայերը հարստացել են թուրքերի հաշվին, ցանկանում են իշխել նրանց վրա, ստեղծել իրենց պետությունը, ինչպես նաև բացահայտորեն քաջալերել են նրանց թշնամիներին: Ուստի թուրքերը հանգել են մինչ պատերազմի ավարտը հայերին «ուժասպառ անելու» անբեկանելի որոշման: «Նա ասաց,- շարունակում է դեսպանը,- որ իրենք ցանկանում են հայերին վերաբերվել այնպես, ինչպես մենք ենք վերաբերվում նեգրերին» (էջ 298): Այս պարագայում Թալեաթին գույների խտացման մեջ հանդիմանելու հարկը չկա, քանզի նույնիսկ մինչ ստրկության վերացումը՝ 1863 թ., աֆրիկյան ծագում ունեցող ստրուկների հանդեպ ցեղասպան քաղաքականություն ԱՄՆ-ում երբևէ չի իրականացվել:

Հայերի կարծեցյալ ապստամբության առնչությամբ Թալեաթը Կոլուշեֆֆին հայտնել է, որ ռուսները պատրաստվում են նրանց ռումբեր ուղարկել՝ Կոստանդնուպոլսում օգտագործելու համար (էջ 217): Նույն համոզմունքն է հայտնել Էնվերը, որը վկայակոչել է հայերի՝ Վանում ռումբեր օգտագործելու փաստը և մտավախություն հայտնել, որ նրանք նույն կերպ կարող են վարվել մայրաքաղաքում: Էնվերն, ի դեպ, հենց դրանով է հիմնավորել 1915 թ. ապրիլին նշանավոր հայերի ձերբակալություններն ու Անգորայի մերձակայք նրանց արտաքսումը (էջ 218):

Էրզրումում 25.000 հայերի սպառնացող տեղահանության վտանգն Էնվերը չի ժխտել և այն պատճառաբանել է նրանց ապստամբելու մտադրությամբ (էջ 232): Հայերին մեղադրելով «անջատողական» միտումներ ունենալու և իրենց թագավորությունը ստեղծելու ցանկության մեջ, Էնվերն, ըստ էության, թուրքերի և հայերի փոխհարաբերություններում ծառացող միակ բարդությունը պայմանավորել է պատերազմական գործողությունների ընթացքում ռուսների հետ նրանց համագործակցու-

թյամբ (էջ 280): Հունիսի 19-ին նա հավաստել է, որ եթե նրանք դաշնակցեն թուրքերի թշնամիների հետ, ապա կբնաջնջվեն: Կեղծելով փաստերը՝ Էնվերը պնդել է, թե իբր հայերը և քրդերը Վանի տարածաշրջանում ոչնչացրել են 30.000 թուրքի (էջ 258): Ուստի ելնելով երիտթուրք ղեկավարներին փոքր-իսկ պատասխանատվությունից զերծ պահելու անհրաժեշտությունից՝ Էնվերը հիմնվել է Հայոց Պատրիարքի հետ 1915 թ. մարտին ունեցած զրույցի վրա, որի ընթացքում նրան զգուշացրել է հայերին զերծ պահել ռուսներին աջակցելուց և ապստամբելու գաղափարից, հակառակ դեպքում՝ փարիսեցիորեն հայտարարել է, թե անկարող կլինի կանխել նրանց դեմ հնարավոր բռնությունների կիրառումը (էջ 257):

Ի տարբերություն նրա, այս հարցում ևս Թալեաթը որդեգրել է շատ ավելի կոշտ դիրքորոշում՝ Մորգենթաուին հայտնելով, թե իբր Սարիղամիշում, Վանում և այլուր թուրքերի կրած ռազմական անհաջողությունների համար մեղավորը ոչ թե ռուսական զորքերն են, այլ հայ կամավորները (էջ 273, 359): Հայերի կոտորածները Վանում նա պատճառաբանել է պատերազմական գործողություններով, այլ ոչ թե կանխամտածված պետական քաղաքականությամբ (էջ 220):

Համանման դիրքերից են այս հարցը մեկնաբանել նաև մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան և արտաքին գործերի նախարար Հալիլ բեյը: Իշխանությունների՝ հայերին պատժելու վճռականությունը մեծ վեզիրը «հիմնավորել» է հայերի և ռուսների կողմից նվազագույնը՝ 120.000 թուրքի ոչնչացմամբ Վանում (էջ 304): Հալիլ բեյը ևս հայերի արտաքսումը Վանից մեկնաբանել է բացառապես ռուսների հետ նրանց համագործակցությամբ, որը թուրքերին դրդել է դիմել ինքնապաշտպանության (էջ 381): Ժխտելով հայերի ոչնչացմանն առնչվող ծրագրի գոյության փաստը, նա ընդունել է, այդուհանդերձ, կոտորածների հավաստիությունը և այն բնորոշել իբրև «պաշտպանության անհրաժեշտ միջոց»: Այնուամենայնիվ, իր դիրքորոշումը նա ներկայացրել է իբրև հայերի հանդեպ կառավարության կիրառած դաժան միջոցառումների, այն է՝ «մասնակի արդարացուցիչ հանգամանքների» մեկնաբանություն, այլ ոչ իբրև արդարացում (էջ 382):

Նույն գերատեսչության մեկ այլ ղեկավար պաշտոնյա՝ Ռե-

շադ Հիքմեթը ևս ընդունել է հայերի նկատմամբ գործադրվող բռնությունների փաստը և այն հիմնավորել միևնույն մտացածին փաստարկով՝ պատերազմի ընթացքում հայերի ոչ չեզոք դիրքորոշմամբ, ինչի հետևանքով թուրքերը մեղավորին չեն զանազանել անմեղից (էջ 398): Ինչպես տեսնում ենք, օսմանյան բարձրաստիճան պաշտոնյաների գերակշռող մասը, ի տարբերություն Հայոց ցեղասպանության պատմության կեղծարարներից շատերի (այդ թվում՝ ժամանակակից թուրք), անթաքույց հավաստել է հայ ժողովրդի բնաջնջման իրողությունը:

Նշենք, որ, ըստ Մորգենթաուի հավաստումների, հայերի ոչնչացման մեկնաբանման հարցում երիտթուրք ղեկավարների հետ համակարծիք են եղել գերմանացի դիվանագետները: Այս առումով հատկանշական է նրա զրույցը Գերմանիայի դեսպանության ռազմա¬ծովային կցորդ Հումանի հետ, որը 1915 թ. օգոստոսին սատարել է երիտթուրքերին՝ հայկական կոտորածներն արդարացնելով օսմանյան իշխանությունների հանդեպ հայերի կարծեցյալ անհավատարմությամբ: Հարցը դիտարկելով թուրքերի անվտանգության տեսակետից՝ նա հայերի ոչնչացումը համարել է միանգամայն արդարացված (էջ 305): Իսկ դեսպան Վանգենհայմը խոստովանել է, որ հայերին ոչնչով չի օգնելու, քանզի Վանում նրանք զորավիգ են եղել Գերմանիայի հակառակորդներին՝ ռուսներին (էջ 217-218):

Մորգենթաուի գրառումների զգալի մասը վկայում է հայ ժողովրդի հանդեպ դրսևորած նրա անշահախնդիր, մարդասիրական վերաբերմունքի և սկզբունքայնության մասին: Ինչպես պարզվում է, դեսպանն օսմանյան ղեկավարների հետ ոչ միայն պարբերաբար քննարկել է հայերի կոտորածներին և տեղահանություններին առնչվող հարցերը, այլև իր սահմանափակ հնարավորությունների շրջանակում գործադրել նահատակվող ժողովրդին վերջնական կործանումից փրկելու բոլոր ջանքերը: Նա անկողմնակալորեն նրանց է ներկայացրել հայերի հանդեպ գործադրվող դժնի վերաբերմունքի հավաստի պատկերը (էջ 291), միջամտել տեղահանվածներին օգնելու համար (էջ 233), Սայիդ Հալիմի հետ՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի՝ 1915 թ. մայիսի 24-ի ծանուցագրի քննարկման առնչությամբ անվարանորեն սատարել հայերին (էջ 249):

Տեղահանությունների ծավալմանը զուգընթաց, 1915 թ. օգոստոսի 5-ին, Մորգենթաուն Էնվերին է ներկայացրել արտաքսման դատապարտված հայերի կացության բարելավմանն ուղղված միջոցառումների փաթեթ: Նա առաջարկել է կասեցնել տեղահանությունները, հակառակ պարագայում՝ բացառություններ նախատեսել այն ընտանիքների համար, որոնց անդամներն իբրև զինվոր ծառայում են բանակում կամ որոնք տղամարդ չունեն: Ըստ Մորգենթաուի առաջարկությունների՝ տեղահանման դատապարտվածների համար հարկ էր ապահովել անհրաժեշտ պայմաններ՝ նախօրոք զգուշացնել մարդկանց և 10-ից 15 օր ժամանակ տրամադրել նրանց՝ նախապատրաստվելու համար, ճանապարհորդության ընթացքում երաշխավորել տեղահանվածների կյանքի անվտանգությունը և ունեցվածքի անձեռնմխելիությունը, կառավարության հոգածությամբ ապահովել նրանց սննդով, նախապես մարդկանց հայտնել այն վայրերի մասին, ուր պատրաստվում են նրանց տեղահանել՝ ընձեռելով ընտրություն կատարելու հնարավորություն և այլն (էջ 295-296):

Քաջ գիտակցելով Գերմանիայի մեղսակցությունը հայ ժողովրդի ողբերգության հարցում, Մորգենթաուն Վանգենհայմի հետ զրույցում, 1915 թ. հոկտեմբերի 15-ին, խստագույնս դատապարտել է Օսմանյան կայսրության դաշնակցի հակահայկական քաղաքականությունը և նշել, որ, անկախ իր երկրի պատասխանատվությունը ժխտելու ուղղությամբ նրա գործադրած ջանքերից, աշխարհին, այդուհանդերձ, Հայոց ցեղասպանության համար պատասխանատու է ճանաչելու Գերմանիային (էջ 357):

Արևմտահայությանը սատարելու մասին են վկայում գլխավորապես Մորգենթաուի ձեռնարկած գործնական քայլերն ամերիկյան հյուպատոսների և միսիոներների միջոցով հայերին դրամական օգնություն բաշխելու հարցում (էջ 280): Վոլֆ-Մետերնիխի հետ զրույցներում նա ոչ միայն հավաստել է, որ հայերին շատ ավելի մեծ գումարներ կառաքեր՝ անկաշկանդ գործելու հնարավորության պայմաններում (էջ 427), այլև խորհուրդ է տվել նրան, հաշվի առնելով իր հնարավորությունների սահմանափակությունը, նույն նպատակով Գերմանիայում հայթայթել դրամական միջոցներ (էջ 449):

Հարկ է նշել, որ դեսպանի հայանպաստ գործունեությունն աննա-

կատ չի մնացել: Հաշվի առնելով նրա բարյացակամ վերաբերմունքը՝ Բրուսայի հայերը 1915 թ. մայիսին դիմել են նրան՝ իրենց օգնելու խնդրանքով (էջ 240): Երախտահատույց հայ հոգևոր առաջնորդները բարձր են գնահատել Մորգենթաուի նվիրվածությունը հայ ժողովրդին: 1916 թ. հունվարի 1-ին Հայոց Պատրիարքի անունից՝ նրա ներկայացուցիչը շնորհակալություն է հայտնել դեսպանին այն ամենի համար, ինչ նա «արել է հանուն հայերի» (էջ 421):

Անդրադառնանք նաև հայ գործիչների հետ Մորգենթաուի հանդիպումներին վերաբերող՝ նրա օրագրերում արձանագրված սակավաթիվ վկայություններին: Հետաքրքիր է, որ քաղաքացիական բարձր դիմագծի տեր դեսպանը միջնորդել է հանուն ձերբակալված Կոմիտասի ազատ արձակման, իսկ վերջինս այցելել է նրան և իր երախտագիտությունը հայտնել (էջ 231): Մորգենթաուն հիշատակում է նաև Կոստանդնուպոլսում բնակվող հայ արվեստագետների, այդ թվում՝ ոչ միայն Կոմիտասի, այլև Արմենակ Շահմուրադյանի հետ իր առնչությունների մասին, որի 24 հոգանոց երգչախմբի համերգին մասնակցել է և ինքը (էջ 29, 31, 32):

Կոստանդնուպոլսում Մորգենթաուն բազմիցս շփումներ է ունեցել նաև տարբեր երկրների հասարակական գործիչների, այդ թվում՝ Եվրոպայում հայանպաստ շարժման կարկառուն ներկայացուցիչ Լեփսիուսի հետ: Հայերի ոչնչացման և տեղահանության գործընթացներին խոչընդոտելու կապակցությամբ նա վկայում է Լեփսիուսի վճռականության մասին, որը նրան հայտնել է ժնև գնալու և համընդհանուր բողոքին միանալու առաջարկությամբ՝ միջազգային Կարմիր խաչին ու Հռոմի Պապին դիմելու իր հաստատակամության մասին (էջ 291, 293):

Մշակութային արժեքների ոչնչացման առիթով Մորգենթաուն հաղորդում է թուրքերի կողմից՝ Բեյրութում ֆրանսիացի ճիզվիտներին պատկանող հարուստ գրադարանը տակնուվրա անելու մասին, որտեղ 100.000 գրքից զատ պահվել են նաև 4.000 «խիստ հազվագյուտ ձեռագրեր» (էջ 177):

Եզրափակելուց առաջ նկատենք, որ Մորգենթաուի օրագրերի հետ հպանցիկ իսկ ծանոթությունն ընթերցողին համոզում է, որ Հայոց ցեղասպանության պատմագրությունը հիրավի հարստացել է արժեքավոր սկզբնաղբյուրով: Հարկ է մասնավորապես

նկատի ունենալ, որ հայ ժողովրդի բնաջնջման շուրջ գրառումները Մորգենթաուն թղթին է հանձնել Օսմանյան կայսրության բարձրաստիճան պաշտոնյաների հետ զրույցների անմիջական տպավորության տակ, որոնք, ըստ այդմ, ձեռք են բերում աղբյուրագիտական առավել մեծ կարևորություն, քանզի հեղինակի՝ հետագա սրբագրությունների հավանականությունն այս պարագայում իսպառ բացառվում է:

Մորգենթաուի արձանագրած՝ հայ ժողովրդի հանդեպ երիտթուրք պարագլուխների կիրառած քաղաքականությանն առնչվող անաչառ վկայությունները հուժկու հակահարված են տալիս Հայոց ցեղասպանության պատմականությունը ժխտող ժամանակակից կեղծարարներին: Նրա գրառումներից ակնբախ է, որ հետագա տասնամյակներին Հայոց ցեղասպանության կեղծարարներն ընդամենը որդեգրել են երիտթուրք պարագլուխների՝ հայ ժողովրդի բնաջնջման մեկնաբանության կապակցությամբ առաջադրած թեզերից շատերը և դրանցով հարստացրել իրենց զինանոցը: Ըստ այդմ՝ եթե հարցին մոտենանք Հայոց ցեղասպանության պատմականությունը ժխտող ուղղության և, մասնավորապես, ժամանակակից թուրքական պատմագիտության կողմից շահարկվող թեզերի կտրվածքով, ակնհայտ կդառնա, որ օսմանյան բարձրաստիճան պաշտոնյաների՝ հայերի հանդեպ գործադրված բռնությունների պատճառների հիմնավորմանը վերաբերող Մորգենթաուի հաղորդած տեղեկությունները խիստ այժմեական են:

Նշենք նաև, որ Հայոց ցեղասպանությանն առնչվող տեղեկատվության հարստության և բազմազանության տեսակետից որևէ համեմատություններ չեն կարող լինել Մորգենթաուի հուշերի և օրագրերի միջև: Ուստի անհրաժեշտ ենք համարում արժեվորել Արա Սարաֆյանի շնորհակալ աշխատանքը՝ այս մեծարժեք սկզբնաղբյուրի հրատարակության իրականացման գործում:

*Էջմիածին, 2007, թիվ Դ, էջ 97-105*

**Yves Ternon, Éclats de voix. Recueil de textes 1974-2005, Paris, Félin, 2006, 158 p.**

**Իվ Տերնոն, Ձայնի պոռթկումներ: Բնագրերի ժողովածու 1974-2005, Փարիզ, Ֆելին, 2006, 158 էջ**

Վերջին տասնամյակներին Հայոց ցեղասպանության պատմության համակողմանի ուսումնասիրությանը մեծապես նպաստել են ժամանակակից ֆրանսիացի պատմաբանները, որոնք ըստ արժանվույն շարունակում են ֆրանսիական պատմագրության հարուստ ավանդույթները՝ վաղուց ի վեր պատմագիտական ինքնուրույն մասնաճյուղի վերածված այս կարևոր թեմայի պատմության գիտական ուսումնասիրության ասպարեզում: Նրանց թվում առանձնանում է խոշոր ցեղասպանագետ Իվ Տերնոնը, որի գիտական պատկառելի ժառանգության (հեղինակ է տասնյոթ գրքի) գերակշռող մասն առնչվում է Հայոց ցեղասպանության և Հայ դատի պատմությանը: Ֆրանսիական և հայրենական գիտական հանդեսներում պատմաբանների բարձր գնահատականին արժանացած նրա գրքերը թարգմանվել են անգլերենի, գերմաներենի, իտալերենի, թուրքերենի:

Ի շարս Հայոց ցեղասպանության և Օսմանյան կայսրության պատմությանը նվիրված ընդհանուր բնույթի աշխատությունների[490], նրա գրչին են պատկանում նաև ավելի մասնավոր, այդուհանդերձ, մեծ և խիստ կարևոր թեմաների նվիրված գիտական ուսումնասիրություններ, որոնց հենքի վրա նա հանգում է Օսմանյան կայսրությունում այլազգի հպատակների դեմ պետական մակարդակով իրականացվող ցեղասպան քաղաքականության առանձնահատկությունների բացահայտմանը միտված ընդհանրացնող հետևությունների[491]:

Տերնոնի գործունեության առնչությամբ հարկ ենք համարում

---

[490] *Ternon Y.*, Les Arméniens. Histoire d'un génocide, Paris, 1977 ; voir aussi la réédition : Paris, 1996 ; *նույնի՝* Le génocide des Arméniens (en collaboration avec G. Chaliand), Bruxelles, 1980 ; voir aussi la réédition : Bruxelles, 2002 ; *նույնի՝* Empire ottoman. Le déclin, la chute, l'effacement, Paris, 2002 ; voir aussi la réédition : Paris, 2005.

[491] *Ternon Y.*, Mardin 1915. Anatomie pathologique d'une destruction, Paris, 2002 ; voir aussi la réédition : Paris, 2006.

արժևորել ևս մեկ հանգամանք. երեք տասնամյակ շարունակ ֆրանսիացի պատմաբանը ոչ միայն հարստացրել է Հայոց ցեղասպանության պատմագրության անդաստանը, այլև միաժամանակ, իր հնարավորությունների սահմաններում, մեծապես նպաստել աշխարհում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի առաջընթացին, սատարել Հայ դատը[492]: Դրա վառ ապացույցն են գրախոսվող ժողովածուում ամփոփված՝ 1974-2005 թթ. Փարիզում լույս տեսնող «Հառաջ» օրաթերթում նրա տպագրած 21՝ գիտականից զատ նաև քաղաքական մեծ նշանակություն ունեցող գիտահրապարակախոսական հոդվածները:

Պատմական գիտության ամենաբնորոշ առանձնահատկությունը՝ քաղաքականացվածությունը, բացահայտորեն դրսևորվում է Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության պարագայում, քանզի բուն գիտական հարցադրումների և հարցի պատմության քաղաքական նշանակության եզրերը միմյանցից անջրպետելը, որքան ցավալի է, նույնքան և հավաստի, գրեթե անհնար է: Այս պայմաններում, միանգամայն օրինաչափ է, որ այս թեմայի պատմության յուրաքանչյուր ուսումնասիրողի վիճակված է հաճախ ընդգրկվել ոչ այնքան պատմագիտական բանավեճերում, որքան, կամա թե ակամա, հատելով գիտական քննարկումների շրջանակները՝ մխրճվել արդի փուլում մեծ տերությունների քաղաքականության խրթին առէջքների մեջ:

Տերնոնի հոդվածների սույն ժողովածուի վրա նետած հպանցիկ իսկ հայացքն ակնթարթորեն համոզում է, որ գիտական բեղուն գործունեությանը զուգընթաց, նա մեծ լումա է ներդրել նաև Հայոց ցեղասպանությանն աշխարհում ճանաչում տալու հետ կապված՝ պատմագիտական, ըստ էության, անառարկելի փաստերի շահարկման առնչությամբ օրվա հրատապ հարցերի քննարկման գործում, համառորեն պայքարել հայ ժողովրդի պատմության հանդեպ այլազգի պետական գործիչների և գրչակների ոտնձգությունների դեմ: Նրա հոդվածների հենքի վրա նույնքան ակնհայտորեն ի դերև է գալիս ևս մեկ իրողություն՝ պատմաբանի ուշադրության կենտրոնում մշտապես գտնվել են Հայոց ցեղասպանության պատմագրության ժխտո-

---

[492] Տես օրինակ *Ternon Y.*, La Cause arménienne, Paris, 1983.

ղական ուղղության այլևայլ դրսևորումները, որոնց դեմ նա մղել է հետևողական և անզիջում պայքար[493]:

Ժողովածուում զետեղված հոդվածների թվում են 1974 և 1977 թվականների ապրիլին Մարսելում հայ նահատակների հիշատակին նվիրված միջոցառումների ժամանակ նրա հրապարակային ելույթները, ֆրանսիական հեղինակավոր լրագրերում և ամսագրերում («Մոնդ», «Կուրիե ունիվերսել», «Նուվել օբրեսվատոր») տպագրված՝ հայ ժողովրդի պատմությունն աղավաղող հոդվածների հեղինակներին տված մերկացուցիչ պատասխանները, ինչպես նաև թուրք պատմաբան Ս. Ռ. Սոնիելի հակագիտական թեզերի[494] և Իսրայելի պետական նշանավոր գործիչ, խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր Շիմոն Պերեսի՝ Հայոց ցեղասպանության փաստը բացահայտորեն ժխտող հայտարարության գիտականորեն հիմնավորված հերքումները:

Նպատակահարմար ենք գտնում, սակայն, նախ անդրադառնալ սույն ժողովածուում ընդգրկված հոդվածների պատմագիտական կարևորությանը, որոնք հնարավորություն են ընձեռում հստակ պատկերացումներ կազմել հեղինակի՝ ոչ միայն Հայոց ցեղասպանության պատմության, այլև ցեղասպանագիտության շուրջ առաջադրած որոշ հայեցակարգային դրույթների և տեսակետների մասին: Հայոց ցեղասպանության պատմության տարբեր հիմնահարցերին վերաբերող Տերնոնի գնահատականները բխում են ցեղասպանագիտության ասպարեզում նրա որդեգրած հայեցակարգից, ուստի, իմաստ ունի նախ կանգ առնել գիտության այս համեմատաբար նոր մասնաճյուղին առնչվող՝ սույն ժողովածուում մասամբ արտացոլված նրա տեսակետների վրա:

Ցեղասպանագիտության կայացման սկզբնական փուլում, 1974 թ., գրված հոդվածներից մեկում Տերնոնը ջանացել է պարզաբանել «կոտորած» և «ցեղասպանություն» հասկացողությունները միմյանցից զանազանող հիմնական բնորոշիչները, դրանց թվում առանձնացնելով, փաստորեն, միայն մեկ «նրբերանգ». «Երբ փոթորիկն անցնում է, կոտորածից հետո վերակառուցումը հնա-

---

[493] Տես *Ternon Y.*, Enquête sur la négation d'un génocide, Marseille, 1989 ; *նույնի*՝ Du négationnisme. Mémoire et tabou, Paris, 1999.

[494] *Sonyel S.R.*, Displacement of the Armenians. Documents, Ankara, 1978.

րավոր է»: Ինչ վերաբերում է, սակայն, «համատարած, հետևողականորեն իրականացվող և փուլային զարգացում ունեցող» ցեղասպանությանը, ապա նա գտնում է, որ այն ոչնչացնում է «կյանքի և մշակույթի յուրաքանչյուր հետք» (էջ 28):

Արդի ժամանակաշրջանում ցեղասպանագիտության նվաճումների լույսի ներքո սոսկ նման դիրքերից հարցի քննարկումը չի հավակնում, ի դեպ, սպառիչ մեկնաբանության: Պատահական չէ, որ տարիներ անց, նույն կապակցությամբ, Տերնոնը ցուցաբերել է շատ ավելի ընդգրկուն մոտեցում, ինչը վկայում է նրա հայացքների ակնհայտ բարեշրջության մասին. «Ցեղասպանության պատասխանատուն միշտ պետությունն է... Ցեղասպանությունը պետական հանցանք է, ինքնուրույն պետության կամքի կենսագործումը, որը և այն զանազանում է՝ իրենց պետության կողմից չլիազորված հրոսակախմբերի կամ զորքերի իրականացրած կոտորածից»,– գրում է նա[495]: Ակնհայտ է, որ ծանրության կենտրոնը նա արդեն տեղափոխում է բոլորովին այլ հարթություն, իրադարձությունը՝ իբրև ցեղասպանություն բնորոշելու հիմնահարցը քննարկում շատ ավելի լայն հենքի վրա և հստակորեն մատնանշում այս կամ այն զանգվածային բնաջնջման՝ պետական քաղաքականության մակարդակով իրականացման հանգամանքը, որը դասում է ցեղասպանության՝ իբրև երևույթի հիմնական բնորոշիչների շարքում: Խոսքն, ըստ էության, առնչվում է հիմնահարցի նոր, շատ ավելի ընդգրկուն մեկնաբանության, որը մեր կողմից միանգամայն ընդունելի է, առավել ևս, եթե նկատի ունենանք, որ թեպետ այս առնչությամբ ծայր առած բուռն բանավեճերին, ցեղասպանագետների գերակշռող մասն, այդուհանդերձ, պետական քաղաքականության հանգամանքը համարում է ցեղասպանության հիմնական բնորոշիչներից[496]:

---

[495] *Ternon Y.*, L'État criminel. Les génocides au XX^e siècle, Paris, 1995, p. 65.

[496] Տես օրինակ *Fein H.*, Accounting for Genocide. National Responses and Jewish victimization during the Holocaust, New York, London, 1979, p. 7; *Harff B.*, The Etiologie of Genocide.– Genocide and the Modern Age. Etiologie and Case Studies of Mass Death. Edited by I. Wallimann and M. N. Dobkowski, New York, 1987, p. 48; *Chalk F.* & *Jonassohn K.*, The History and Sociology of Genocide. Analyses and Case Studies, New Haven & London, 1990, p. 23, 26; *Melson R.*, Revolution and Genocide. On the Origins of the Armenian Genocide and the Holocaust, Chicago and London, 1992, p. 26; *Horowitz I.L.*,

«Մարդկության դեմ ուղղված հանցանքի ամենածանր ձևի» (էջ 140)՝ ցեղասպանության՝ իբրև երևույթի բնորոշման հարցում Տերնոնը մեծ նշանակություն է հատկացնում նաև դիտավորության հանգամանքին, որը ևս ցեղասպանագետների զգալի մասը համարում է ցեղասպանության հիմնական բնորոշիչներից[497]: Ըստ նրա՝ ցեղասպանության ընթացքում կանխամտածվածորեն ոչնչացվում է մարդկանց մի խումբ, որի անդամներին սպանում են այդ իսկ խմբին պատկանելու հիման վրա, անկախ ոճրի՝ ռասայական, ազգային, քաղաքական, կրոնական և այլ պատճառներից (էջ 110): Միանգամայն իրավամբ դիտավորության հանգամանքը ևս դասելով ցեղասպանության բնորոշիչների թվում, Տերնոնը դրանով իսկ ակնարկում է, փաստորեն, դրա մտահղացումը պետական քաղաքականության մակարդակով: Ինչ վերաբերում է, սակայն, ցեղասպանության՝ իբրև հանցանքի պատճառների մեկնաբանությանը, մեզ թույլ ենք տալիս առարկել նրան քաղաքական պայքարի հիման վրա մարդկանց այս կամ այն խմբի ոչնչացումը՝ իբրև ցեղասպանություն բնորոշելու առնչությամբ, որը հակված չենք որակելու իբրև այդպիսին: Մի շարք խոշոր ցեղասպանագետներ (Ի. Չառնի, Ռ. Ռումել, Բ. Հարֆ, Թ. Գուրր) քաղաքական ատաղձ ունեցող զանգվածային բնաջնջումների համար առաջադրել են փոլիթիսայդ (politicide) բնորոշումը՝ հստակորեն և, մեր կարծիքով, իրավամբ այն զանազանելով ցեղասպանությունից[498]: Ի վերջո, ցեղասպանությունը՝ իբրև իրադարձություն՝ ըստ Տերնոնի, վաղեմության ժամկետ չունեցող և երկմտանքի տեղիք չտվող հանցանք է (էջ 110):

Հարկ է չանտեսել ֆրանսիացի պատմաբանի հայեցակար-

---

Taking Lives. Genocide and State Power. Fifth Edition, Revised, New Brunswick & London, 2002, p. 14, 23. *Rummel R.J.*, Power Kills. Democracy as a Method of Nonviolence, New Brunswick and London, 2005.

[497] Տես օրինակ՝ *Kuper L.*, Genocide. Its Political Use in the Twentieth Century, New Haven and London, 1982, p. 86; Fein H., նշվ. աշխ., էջ 7; *Chalk F.* & *Jonassohn K.*, նշվ. աշխ., էջ 26; *Balint J.*, *Charny I.W.*, Définitions du génocide.– Le livre noir de l'humanité. Encyclopédie mondiale des génocides. Sous la direction de Israel Charny, Toulouse, 2001, p. 43-44.

[498] Այդ մասին տես Le livre noir de l'humanité. Encyclopédie mondiale des génocides, p. 37, 42, 48.

գային դրույթներից մեկը ևս, որն առնչվում է այն գաղափարախոսության հասունացմանը, որի հիման վրա իրականացվում է ցեղասպանությունը: Այս հարցում Տերնոնը մեծ նշանակություն է հատկացնում ցեղասպանությունն իրականացնող կողմի որդեգրած գաղափարախոսության մեջ այս կամ այն կարծեցյալ վտանգին առնչվող «առասպելի» թափանցմանը (էջ 63):

Ցեղասպանագետների շրջանում բուռն բանավեճերի տեղիք է տվել՝ Շոայի (հրեա ժողովրդի ցեղասպանության) եզակիության տեսությունը, որի մեծաթիվ կողմնակիցների համոզմամբ այն բացառիկ է և ըստ այդմ՝ մարդկային հասարակության պատմության ընթացքում արձանագրված բոլոր ցեղասպանությունների հետ համեմատության եզրեր ունենալ չի կարող: Իր տարբեր աշխատություններում Տերնոնն, ըստ էության, հանդես է գալիս իբրև այս տեսության կողմնակից. «Պարտականությունները բարեխղճորեն կատարող որևէ պատմաբանի մտքով իսկ չի անցնի նսեմացնել Շոայի բացառիկ բնույթը»,– գրում է նա (էջ 127)[499]: Այդուհանդերձ, թվարկելով այս տեսության հիմնավորմանը միտված՝ մի շարք ցեղասպանագետների առաջադրած, մեր կարծիքով, վիճահարույց որոշ թեզեր, ինչպիսիք են զոհերի քանակը, ցեղասպանության իրականացման ընթացքում կիրառված տեխնիկայի միջոցների կատարելագործվածության աստիճանը և այլն[500], Տերնոնն, ի վերջո, կտրականապես հակադրվում է ոճիրները դասակարգելու սկզբունքին առհասարակ, նշելով. «Դրանք չեն տարբերվում իրենց անմարդկային բնույթով» (էջ 64): Առավել ևս եթե նկատի ունենանք, որ ֆրանսիացի պատմաբանը փաստում է բուն հանցանքը, այն է՝ ցեղասպանությունն՝ իբրև հնարավոր միակ եզակի երևույթ, որը թեև բացառիկ է իր բնորոշիչներով, սակայն, ունի, այդուհանդերձ, դրսևորման բազմազան եղանակներ[501], օրինաչափ է, որ ցեղասպանությունների համեմատությունը նա համարում է գիտականորեն արդարացված և անհրաժեշտ, ինչը կարող է միայն նպաստել դրանցից յուրա-

---

[499] Այս առնչությամբ տե՛ս նաև *Ternon Y.*, L' État criminel, p. 203.

[500] Այս տեսության հիմնավոր քննադատությունը տե՛ս *Bruneteau B.*, Le siècle des génocides. Violences, massacres et processus génocidaires de l'Arménie au Rwanda, Paris, 2004, p. 143-146.

[501] *Ternon Y.*, Guerres et génocides au XX^e^ siècle. Architecture de la violence en masse, Paris, 2007, p. 12.

քանչյուրի առանձնահատկությունների ավելի խորն ըմբռնմանը (էջ 127): Ինչպես տեսնում ենք, նրա և Շոայի եզակիության տեսության այլ կողմնակիցների դիրքորոշումների միջև առկա էական զանազանությունն ակնբախ է:

Բաղդատելով, դիցուք, հայ և հրեա ժողովուրդների ցեղասպանությունները, Տերնոնը գտնում է, որ նրանք դարձել են միևնույն բնույթի ողբերգության զոհեր (էջ 111, 128)[502], որը «միջազգային իրավունքը պետք է գնահատի իբրև ցեղասպանություն» (էջ 128):

Այժմ ժողովածուում ամփոփված հոդվածների հենքի վրա մանրամասնենք Հայոց ցեղասպանության պատմության նկատմամբ Տերնոնի հիմնական մոտեցումները: Ցեղասպանության պատճառների գիտական խորը վերլուծությունը մենք համարում ենք նրա անժխտելի արժանիքներից: Հայ ժողովրդի բնաջնջման հիմնական պատճառ նա իրավամբ համարում է Հայկական հարցին՝ սուլթան Աբդուլ Համիդ II-ի կողմից լուծում տալու անհրաժեշտությունը: Այս խնդիրը, սակայն, կարիք ունի մեկնաբանությունների:

Նախ նշենք, որ ըստ Տերնոնի իրատեսական մոտեցման՝ Հայկական հարցը ծագել է XIX դարի 70-ական թվականներին տեղի ունեցած դիվանագիտական բանակցությունների արդյունքում: 1878 թ. մեծ տերությունների միջև կնքված տարբեր պայմանագրերում ամրագրված՝ արևմտահայության կացության բարելավմանն առնչվող պայմանավորվածությունները համարելով «ձևական», նա մատնանշում է դարավերջին արդեն սուլթանի առջև Հայկական հարցի հետևանքով ծառացած փակուղուց ելնելու երկու հնարավոր՝ օսմանահպատակ հայերի համար բարենորոգումների իրականացման կամ, ըստ հեղինակի իսկ արտահայտության՝ «վերջնական լուծման» տարբերակները (էջ 23): Այս հարցում մենք ամբողջությամբ բաժանում ենք նրա կարծիքը:

---

[502] Նշենք, ի դեպ, որ Շոայի եզակիության տեսության թե՛ նախկին և թե՛ մեր օրերի մի շարք կողմնակիցներ ևս (Ե. Բաուեր, Լ. Դավիդովիչ) այս առնչությամբ, ըստ էության, հայտնել են համահունչ կարծիքներ: Տես Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментария. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментарий Барсегов Ю.Г., т. 1, М., 2002, с. 781, 786.

Այդուհանդերձ, XIX դարի 90-ական թվականներին արևմտահայության կատարյալ բնաջնջման ծրագրի իրականացման տապալումը Տերնոնը մեկնաբանում է սոսկ սուլթանի համարձակության, ինչպես նաև տեխնիկայի՝ նրան մատչելի միջոցների բացակայությամբ (էջ 23-24): Թեև միաժամանակ նա չի անտեսում, մեր կարծիքով, շատ ավելի էական՝ եվրոպական մեծ տերություններին ծվատող տարաձայնությունների հանգամանքը ևս՝ իբրև Հայկական հարցին՝ արևմտահայության շահերին համապատասխանող լուծում տալու խոչընդոտ, որից, ինչպես իրավամբ նշում է, սուլթանն անվարան օգտվել է այլընտրանքային հնարավոր տարբերակների ընտրության հարցում (էջ 23), այդուհանդերձ, որքան տարօրինակ է, դրան անհրաժեշտ նշանակություն չի տալիս: Մեր համոզմամբ, սակայն, Հայկական հարցի լուծման տարբերակների վերջնական ընտրության խնդրում Աբդուլ Համիդի համար վճռորոշ նշանակություն ունեցել է մեծ տերությունների անվճռական քաղաքականությունը, ինչը պայմանավորված է եղել գլխավորապես դրանց ղեկավար շրջանակների որդեգրած՝ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանության վարդապետությանը հավատարիմ մնալու անսասան ցանկությամբ[503]:

1890-ական թվականներին սանձազերծված համիդյան կոտորածների գնահատման առնչությամբ ևս Տերնոնի մեկնաբանությունները, տողերիս հեղինակի կարծիքով, առարկությունների տեղիք են տալիս: Թեպետ նա ընդունում է, որ Աբդուլ Համիդի մտադրությունը հանգում էր «մինչև վերջին հայի ոչնչացմանը», այդուհանդերձ, հակված չէ նրա սանձազերծած հայ ժողովրդի լայնածավալ բնաջնջումն իբրև Հայոց ցեղասպանության երկարատև գործընթացի բաղկացուցիչ մաս դիտելու[504], որն, ըստ նրա, իրականացվել է երիտթուրքական կառավարության կողմից 1915-1916 թթ. (էջ 22)[505]: Ցեղասպանության՝ իբրև

---

[503] Այդ մասին մանրամասն տես *Պողոսյան Վ.*, Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական մտքի գնահատմամբ (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ), Երևան, 2005, էջ 250-253:

[504] Համիդյան կոտորածներն, ըստ նրա՝ կրել են սոսկ «ցեղասպանային բնույթ»: Տես *Ternon Y.*, L'État criminel, p. 182.

[505] Մանրամասն տես *Ternon Y.*, Guerres et génocides au XX^e siècle, p. 151-171.

երևույթի շուրջ առաջադրած իր իսկ հայեցակարգային որոշ դրույթներին, որոնց անդրադարձանք վերը, ըստ էության, անհարիր՝ Հայոց ցեղասպանության ժամանակագրական եզրերի սահմանման հարցում նման դիրքորոշումը, կարելի է, ամենայն հավանականությամբ, բացատրել ժամանակակից ֆրանսիացի պատմաբանների՝ այս հարցում որդեգրած հայեցակարգային մոտեցմամբ[506]: Ակնհայտ է, որ Հայոց ցեղասպանության գործընթացը նա մեկնաբանում է նրանց դիրքորոշմանը համահունչ դիրքերից:

Այդուհանդերձ, Հայկական հարցին լուծում տալու անհրաժեշտությունը դիտելով իբրև Հայոց ցեղասպանության հիմնական պատճառ, Տերնոնն, ըստ այդմ, միանգամայն իրավամբ հայ ժողովրդի ոչնչացումը հիմնավորում է գլխավորապես նրան պատկանող «տարածքի լկտի հափշտակմամբ», որը վերջնականապես իր լուծումն է գտել դրա բնիկ ժողովրդի ոչնչացնմամբ (էջ 38): Այս առնչությամբ արդեն մենք ամբողջությամբ համամիտ ենք նրա հետ:

Ելնելով միաժամանակ ցեղասպանության՝ իբրև իրադարձության պատճառների հիմնավորման իր հայեցակարգից, Տերնոնը հավուր պատշաճի արժևորում է Հայոց ցեղասպանության մեկ այլ գլխավոր պատճառ ևս՝ 1908-1914 թթ. երիտթուրքերի պարագլուխների գաղափարախոսության բարեշրջումը, որոնք օսմանյան ազատականներից աստիճանաբար վերածվել են ագրեսիվ պանթուրքիզմի կողմնակիցների և որևէ հիմքի վրա չխարսխվող՝ հայերից բխող կարծեցյալ սպառնալիքից ահա-

[506] Տես օրինակ *Kévorkian R.H.*, Le génocide des Arméniens, Paris, 2006. Վերջին տարիներին բուռն բանավեճեր հարուցած այս տեսակետին, մեր կարծիքով, իրավամբ հակադրվում են մեծ թվով անվանի ցեղասպանագետներ, ինչպիսիք են Ի. Լ. Հորուիցը, Ե. Բաուերը, Յ. Բարսեղովը և այլք, որոնց կարծիքով Հայոց ցեղասպանությունը հարկ է դիտել իբրև XIX դարի վերջին և XX դարի սկզբին տեղի ունեցած միասնական գործընթաց: Տես օրինակ *Prince M.*, Un génocide impuni. L'arménocide, Beyrouth, 1975, p. 97-114, 147-242, 345-376 ; *Барсегов Ю.Г.*, Геноцид армян – преступление по международному праву, М., 2000, с. 17-22; *Horowitz I.L.*, նշվ. աշխ., էջ 157-158: Ե. Բաուերն իր կարծիքն այս հարցի շուրջ հայտնեց 2005 թ. ապրիլի 20-21-ին Երևանում գումարված «Ծանրագույն հանցանք, ծայրագույն մարտահրավեր. ցեղասպանությունն ու մարդու իրավունքները» միջազգային համաժողովին ներկայացրած՝ «Անցյալ ցեղասպանությունների դասերը որպես ապագա ցեղասպանությունները կանխելու ուղեցույց» զեկույցում:

բեկված, համակվել «մինչ ռասիզմի հասնող բարդույթով» (էջ 67): Հարկ ենք համարում մանրամասնել, որ Հայոց ցեղասպանության վճռական փուլի իրականացմանը ձեռնամուխ եղած երիտթուրքերի գաղափարախոսության վերլուծության պարագայում, Տերնոնն, այդուհանդերձ, հետագայում փոքր-ինչ սրբագրել է իր նախնական տեսակետը և հայ ժողովրդի բնաջնջման կապակցությամբ նախապատվությունն իրավամբ հատկացրել երիտթուրքերի գաղափարախոսությանը բնորոշ ոչ այնքան ռասիստական, որքան ազգային ատելության երանգավորմանը և, ի տարբերություն էթնիկական ու կրոնական առանձնահատկությունների, այն համարել «վճռորոշ»: Այս կտրվածքով արդեն զուգահեռներ անցկացնելով Հայոց ցեղասպանության և Շոայի միջև, նա դրանք հստակորեն զանազանում է միմյանցից, ինչը մենք համարում ենք միանգամայն օրինաչափ՝ նշելով, որ հրեաների հանդեպ նացիստների տածած ատելությունը կրում էր ոչ միայն համատարած, այլև ռասիստական և կենսաբանական բնույթ[507]: Նշենք, որ նացիստներին, հիրավի, բնորոշ չի եղել մահվան դատապարտվածներին կյանքի փրկության հնարավորության ընձեռումն անկախ այն բանից՝ բռնի կրոնափոխության, թե գերմանացման եղանակով:

Տերնոնը բազմիցս ընդգծում է և փաստերով հիմնավորում Հայոց ցեղասպանության իրականացումը պետական քաղաքականության մակարդակով, այն համարելով «ցեղասպանության՝ իբրև հանցանքի օրինակ» (էջ 22): Հայոց ցեղասպանությունը, ինչպես նա մեկնաբանում է, իրականացվել է՝ ըստ օսմանյան պետության կողմից վաղօրոք, խնամքով մշակված ծրագրի, որը նախատեսում էր տեղահանություն, իսկ այնուհետև՝ բոլոր հայերի բնաջնջում (էջ 25, 68, 109): Իրադարձության ծավալման առնչությամբ, ի դեպ, նա առաջադրում է չորս հիմնական փուլեր. հայերի զինաթափում, մտավորականության ձերբակալում, ծերունիների, կանանց և երեխաների տեղահանություն, տեղահանվածների ոչնչացում ճանապարհին (էջ 30):

---

[507] *Ternon Y.*, L'État criminel, p. 200, 201. Նրա հետ համակարծիք է նաև ցեղասպանագիտության հիմնադիրներից ամերիկացի խոշոր սոցիոլոգ Ի. Լ. Հորոուիցը, որը, սակայն, Հայոց ցեղասպանությունը միաժամանակ բնորոշում է իբրև «սատանայական և լայնածավալ»: Տես *Horowitz I.L.*, նշվ. աշխ., էջ 36:

Հայ ժողովրդի բնաջնջման գործընթացի մտահղացման և իրականացման կապակցությամբ Տերնոնը բացահայտում է, մասնավորապես Միություն և առաջադիմություն կոմիտեի ղեկավարների, ինչպես նաև օսմանյան քաղաքացիական և զինվորական պաշտոնյաների դերն ու մասնակցությունը (էջ 63, 107): Վկայակոչելով օսմանյան Ներքին գործերի նախարարության կողմից Հայոց ցեղասպանության ծրագրման և կենսագործման անառարկելի փաստը և ելնելով ցեղասպանության՝ իբրև երևույթի իր հայեցակարգից, նա անվարան պնդում է, որ խոսքը տվյալ պարագայում կարող է առնչվել ոչ թե կոտորածի, այլ միայն ցեղասպանության (էջ 68): Արդյունքում, Հայոց ցեղասպանության պարագայում Տերնոնը կասկածի նշույլ իսկ չի տածում «ցեղասպանության՝ իբրև հանցանքի բոլոր բնորոշիչների» գոյության անառարկելիության շուրջ, առանձնացնելով, սակայն, դրանցից միայն մի քանիսը՝ մարդկանց խմբին պատկանող անդամների ոչնչացումն իբրև այդպիսիք, իրադարձության ծավալը, հանցագործ կանխամտածվածությունը (էջ 106):

Տարբեր առիթներով Տերնոնն անդրադառնում է նաև Հայոց ցեղասպանության արդյունքներին: Եթե «Հանցագործ պետությունը» գրքում նա Շոայի առիթով հայտնում է միակ հնարավոր կարծիքը՝ բնորոշելով այն իբրև «անհեթեթ հանցանք»[508], որն, անտարակույս, իրականացնող կողմի համար նվազագույն իսկ դրական արդյունքի չի հանգեցրել, ապա հայ ժողովրդի բնաջնջման առնչությամբ նրա մեկնաբանությունները բոլորովին այլ են, ինչը, ի դեպ, պայմանավորված է գլխավորապես երկու ցեղասպանության տարբեր պատճառներով և այն գաղափարախոսությունների զանազանությամբ, որոնց հիման վրա դրանք իրականացվել են: Ուստի, նա անկողմնակալորեն ընդգծում է այն խիստ դրական և ցցուն արդյունքները, որոնց հանգել է Թուրքիան՝ Հայոց ցեղասպանության իրականացման հետևանքով. թուրք ժողովրդի ինքնության հաստատում, էթնիկական զտման արդյունքում՝ թուրքական պետության սահմանների ուրվագծում 1919 թ., էթնիկական առումով գրեթե միատարր թուրք բնակչությամբ բնակեցված տարածքի ձեռքբերում (էջ 140, 147):

---

[508] *Ternon Y.*, L'État criminel, p. 200.

Այս հանգամանքի վրա են խարսխված Հայոց ցեղասպանության պատմագրության ժխտողական ուղղության ներկայացուցիչների հիմնական թեզերի՝ Տերնոնի վերլուծությունները և խիստ քննադատությունը: Ինչպես նշեցինք, ժողովածուում ընդգրկված նրա հոդվածների զգալի մասն ուղղված է Հայոց ցեղասպանության պատմականությունն այս կամ այն չափով վիճարկած գործիչների և գրչակների դեմ: Դրանցում հայ ժողովրդի պատմության նենգափոխման հիմնահարցերը քննարկվում են և գիտականորեն մեկնաբանվում երկու հիմնական՝ ցեղասպանության պատմագրության ժխտողական ուղղության նախակարապետների՝ ցեղասպանությունն իրականացրած օսմանյան տարբեր վարչակարգերի ղեկավարների, ինչպես նաև դրա գերակա ուղղությունները մշակած Թուրքական հանրապետության ղեկավար շրջանակների և դրանց ծախու պատմաբանների գործելակերպի պատճառների բացահայտման կտրվածքներով:

Հայոց ցեղասպանության պատմության կեղծարարներին անարգանքի սյունին գամելու առնչությամբ հարկ է ի սկզբանե ընդգծել Տերնոնի խիստ սկզբունքային և հետևողական դիրքորոշումը, որը պարբերաբար դիմազերծել է, ի շարս այլ հարցերի, հայերի ինքնապաշտպանության պատմությանը վերաբերող՝ համանման ստահոդ փաստարկներ վկայակոչած տարբեր հեղինակների: Այս հարցի նշանակությունը մեծ է, քանզի արևմտահայության ինքնապաշտպանության խնդիրն ավելի քան հարյուր տարի բազմիցս շահարկվել է ցեղասպանությունն իրականացնող օսմանյան պաշտոնյաների և նրանց քաղաքականությանը հիմնավորում տալու մոլուցքով տոգորված զանազան, այդ թվում, թե՛ դեռևս իրադարձության ժամանակակից և թե՛ մերօրյա պատմության կեղծարարների կողմից[509]: Ըստ այդմ՝ Տերնոնի մեկնաբանություններն ավելի քան այժմեական են:

Խստագույնս դատապարտելով հայ ժողովրդի պատմության հիմնախնդիրները կեղծող գրչակներին՝ Տերնոնը հիմնավորապես ապացուցել է, որ ցեղասպանության իրականացումից նույն-

[509] Տես օրինակ *Des Coursons R.*, La rébellion arménienne. Son origine-son but, Paris, 1895 ; *Abdon Boisson P.*, L'agitation anglo-arménienne // « Nouvelle Revue Moderne » du 15 avril 1896 ; *McCarthy J.*, *Arslan E.*, *Taskiran C.*, *Turan O.*, The Armenian Rebellion at Van, The University of Utah Press, 2006.

իսկ բազում տասնամյակներ անց նրանք շարունակում են առաջնորդվել գլխավորապես երիտթուրքերի պարագլուխների առաջադրած մեկնաբանություններով և, մասնավորապես 1915 թ. Վանում հայերի «ինքնապաշտպանական շարժումը» հանիրավի ներկայացնում իբրև ագրեսիա (էջ 116)։ Այս առնչությամբ նա մերկապարանոց է համարում պատմության կեղծարարների ևս մեկ կռվան, ըստ որի՝ 1915 թ. հայերի ապստամբության համար պատասխանատվությունը բարդվում է անգլիացիների և ռուսների վրա։ Տերնոնը գտնում է, որ պատմական իրականությանը հակասող նման բարբաջները գոյություն են ունեցել միայն դրանց տուրք տված տարբեր քարոզիչների երևակայության մեջ (էջ 67)։

Հեղինակը հերքում է նաև 1915 թ. ի վեր օսմանյան կառավարության կողմից շրջանառության մեջ դրված այն վարկածն, ըստ որի՝ հայերի տեղահանության պատճառ դարձել են իբր հայ ապստամբների գործողությունները (էջ 32-33)։ Համանման «փաստարկների» սնանկության բացահայտմանն է միտված նրա հավաստումներից մեկը, որի առնչությամբ առարկություններն արդեն անհնար են՝ Վանում բռնկված ինքնապաշտպանական շարժումն ընդամենը հաջորդել է արևմտահայության բնաջնջման գործընթացի սանձազերծմանը (էջ 68)։

Առավել հիշարժան են, սակայն, Հայոց ցեղասպանության պատմականության ժխտման հարցում Թուրքիայի գրաված կոշտ դիրքորոշմանն առնչվող Տերնոնի մեկնաբանությունները։ Թուրքական տարբեր կառավարությունների քարացած դիրքորոշումն այս հարցում նա ամբողջությամբ պատճառաբանում է այդ պետության տարածքային ամբողջականության պահպանության անհրաժեշտությամբ։ Բազմիցս անդրադառնալով այս խնդրին՝ նա այն հիմնավորում է տարբեր կտրվածքներով, որոնք ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին. Հայոց ցեղասպանության ճանաչումը սպառնալիք է Թուրքիայի տարածքային ամբողջականության համար, որը Եվրոխորհրդարանում անխուսափելիորեն կհանգեցնի փոխհատուցումների պահանջի և հայկական պատմական տարածքների զիջման գործընթացին (էջ 75, 116)։ Հայոց ցեղասպանության արժանահավատության ժխտման հետևողական քաղաքականությունը նա բացատրում է Թուրքիայի աշխարհաքա-

ղաքական շահերով, որը Հայաստանի բռնագրավված տարածքների նկատմամբ իր իրավունքներն ամրագրել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ ցեղասպանության արդյունքում (էջ 134): Ուստի, հանուն իր տարածքային ամբողջականության պահպանության՝ Թուրքիան դիմում է ոչ միայն պատմական ճշմարտության բացահայտ կեղծման, այլև միջպետական փոխհարաբերություններում չի խորշում տարատեսակ միջոցներից, այդ թվում տնտեսական շանտաժից, դիվանագիտական սպառնալիքներից և այլն (էջ 116), որոնք հետապնդում են միևնույն գերնպատակը:

Այլ կերպ ասած՝ Տերնոնն առաջադրում է Հայոց ցեղասպանության ճանաչման շուրջ Թուրքիայի ժխտողական դիրքորոշման հիմնավորման միակ հնարավոր տարբերակը՝ ուղղակիորեն առնչակցելով Հայոց ցեղասպանության հիմնական պատճառը՝ ցեղասպանության փաստի ժխտման հանգամանքին: Ցեղասպանությունն իրականացվել է դեռևս XVI դարում ռազմակալված հայ ժողովրդի պատմական հայրենիքի նկատմամբ Օսմանյան կայսրության իրավունքների ամրագրման նպատակով, հանգամանք, որը դեռևս գործընթացի իրականացման ժամանակաշրջանում և դրա ավարտից հետո դրդել է Թուրքիայի տարբեր վարչակարգերի և կառավարությունների ղեկավարներին որդեգրել հայ ժողովրդի ողբերգության ժխտման քաղաքականությունը և անշեղորեն դրան հավատարիմ մնալ:

Թուրքիայի պետական քաղաքականության վերլուծության ընդհանուր հենքի վրա Տերնոնը բազմիցս անդրադարձել է նաև միջազգային հանրության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրին և դրա հետ կապված շահարկումներին, ինչը ևս արտացոլվել է սույն ժողովածուում: Այս հարցում դրսևորած չկամության համար նա, ըստ անհրաժեշտության, խիստ քննադատության է ենթարկել տարբեր պետությունների ղեկավարների, բացառություն չանելով ֆրանսիական կառավարության համար: Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու և դատապարտելու խնդրում տարբեր երկրների ղեկավար շրջանակների բացասական վերաբերմունքը Տերնոնն իրավամբ մեկնաբանում է լոկ Թուրքիայի հետ միջպետական հարաբերություններն անհրաժեշտ մակարդակի վրա պահպանելու նրանց ցանկությամբ

(էջ 124)՝ բացառելով ըստ այդմ իրադարձության պատմական արժանահավատությանն առնչվող անսքող փաստերի սակավության հանգամանքը: «Հայոց ցեղասպանությունը հարցականի տակ դնելը քաղաքական քայլ է»,– այսպիսին է իրականությանն ամբողջությամբ համապատասխանող նրա հիմնական եզրակացությունը (էջ 107): Ուստի, նա վճռականորեն ընդվզում է «քաղաքական նպատակներով»՝ պատմագիտական ուսումնասիրությունների հիման վրա ապացուցված պատմական ճշմարտության՝ Հայոց ցեղասպանության եղելության փաստի շահարկումների դեմ, մասնավորապես Ֆրանսիայի համար անպատվաբեր համարելով տնտեսական կամ ցանկացած բնույթի պատճառներով այս հարցում որևէ զիջումների դիմելու հնարավորությունը. «Մենք այս մասին բազմիցս հայտարարել ենք, երբ պահանջում էինք մեր երկրից ճանաչել Հայոց ցեղասպանությունը»,– գրել է նա 2001 թ. մայիսին (էջ 127): Նրա շանթերը չեն շրջանցում նաև ԱՄՆ-ի նախագահին՝ հայ ժողովրդի ողբերգության պարագայում «ցեղասպանություն» բառի օգտագործումն արգելելու համար (նույն տեղում):

Այդուհանդերձ, տարբեր պետությունների քաղաքականության քննարկմանը նվիրված Տերնոնի գրավոր ելույթներում հաճախականության և անողոք մերկացումների առումներով անհամեմատ ավելի աչքի է զարնում Իսրայելի պաշտոնական դիրքորոշման քննադատությունը: Նա պարբերաբար խստագույնս նշավակել է թե՛ Իսրայելի պետական քաղաքականությունն իրականացնող բարձրաստիճան պաշտոնյաներին և թե՛ նրանց ծառայություններ մատուցող տարբեր լրագրողներին, մասնավորապես Ե. Պորատին, հիմնավորապես հերքելով Հայոց ցեղասպանության ժխտման ուղղությամբ նրանց ձեռնարկած ունայն ջանքերը (էջ 108-109): Տերնոնը մանրազնին քննության նյութ է դարձրել հատկապես 2001 թ. Իսրայելի արտաքին գործերի նախարար Շիմոն Պերեսի ելույթներից մեկը՝ կապված Հայոց ցեղասպանության հավաստիության շուրջ «հայերի պնդումներն» անհիմն համարելու նրա հայտարարության հետ (էջ 123-128): Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում Իսրայելի՝ միմյանց հաջորդող կառավարությունների համանման ժխտողական վերաբերմունքը ևս, ըստ նրա մեկնաբանության, ունի սոսկ

քաղաքական դրդապատճառներ և բխում է Թուրքիայի հետ Իսրայելի հարաբերությունները չվտանգելու անհրաժեշտությունից (էջ 124):

Փոխարենը, Տերնոնը տարբեր առիթներով միանգամայն իրավամբ դրվատել է Իսրայելի այն քաղաքական գործիչներին (Յ. Սարիդ) և ցեղասպանագետներին (Ի. Չառնի, Ե. Բաուեր, Յ. Աուրոն)[510], որոնք հակադրվելով Իսրայելի պետական քաղաքականությանը՝ ցուցաբերել են անկողմնակալ մոտեցում և բազում առիթներով հայտարարել, որ «Հայոց ցեղասպանությունն իրական իրադարձություն է» (էջ 126), ինչպես նաև ջանքեր գործադրել այս իրադարձության պատմության դասավանդումն իրենց երկրում կազմակերպելու ուղղությամբ (էջ 111, 125):

Տերնոնը մանրամասնել է, մասնավորապես Երուսաղեմի Բաց համալսարանի պրոֆեսոր Աուրոնի վարքագիծը, որին քաղաքական դրդապատճառներով 2003 թ. ֆրանսիական իշխանություններն արգելել են մասնակցել Փարիզում գումարված գիտաժողովներից մեկի աշխատանքներին: Այս առիթով նա Ֆրանսիայի Սենատում հրապարակել է վերջինիս բաց նամակը, որտեղ նշված է. «Ես կարող եմ ձեզ հավաստիացնել, որ շարունակելու եմ պայքարը հանուն Հայոց ցեղասպանության ճանաչման թե՛ Իսրայելում և թե՛ աշխարհում: Դա իմ՝ իբրև մարդկային էակի, հրեայի և իսրայելցու պարտականությունն է» (էջ 132): Իրադարձությունների հետագա ընթացքն, ի դեպ, ցույց տվեց, որ Աուրոնը, հիրավի, չի դրժել իր խոստումը: Այդ մասին պարզորոշ վկայում է, օրինակ, 2006 թ. մարտի 15-ից 17-ը Ստամբուլի համալսարանում գումարված «Նոր մոտեցումներ հայ-թուրքական հարաբերություններում» գիտաժողովում նրա հայտարարությունը. «Ես ցեղասպանություն եմ որակում հայերի հետ կատարվածը»[511]:

Նախքան եզրափակելը, ցանկանում ենք ողջունել Իվ Տերնոնի հոդվածների սույն ժողովածուի հրատարակությունը և արժևորել դրանում ամփոփված հոդվածների ոչ միայն

---

[510] Նրանց դիրքորոշման մասին մանրամասն տե՛ս Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, с. 788-790.

[511] Ազգ, 18-ը մարտի 2006:

գիտական ու ճանաչողական, այլև քաղաքական անուրանալի նշանակությունը: Դրանց ետնախորքի վրա՝ ընթերցողի առջև հառնում է Հայոց ցեղասպանության պատմության մեծ գիտակն ու խոշոր ցեղասպանագետը, ինչպես նաև հանուն հայ ժողովրդի իրավունքների ու շահերի պաշտպանության՝ քաղաքական պայքարի հորձանուտները նետված՝ քաղաքացիական բարձր դիմագիծ ունեցող աննկուն մարտիկը: Այս հանգամանքը նրան մեծապես զանազանում է սոսկ գիտական նկարագիր ունեցող ուսումնասիրողներից:

*Էջմիածին, 2008, թիվ Դ, էջ 94-104*

**Հրաչիկ Սիմոնյան, Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երևան, ԵՊՀ հրատ., 2009, 530 էջ**

Հայոց ցեղասպանության (1894-1922) պատմությանը նվիրված ահռելի գրականությունը հիմք է տալիս անվարան հավաստելու, որ խոսքը վերաբերում է վաղուց ի վեր պատմագիտության առանձին մասնաճյուղի վերածված գիտության:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ ուսումնասիրողներն ուշադրությունը կենտրոնացրել են գլխավորապես Մեծ եղեռնի պատմության քննության վրա: Անհամեմատ թույլ են լուսաբանված 1890-ական թվականներին և 1920-ական թվականներին՝ համապատասխանաբար համիդյան վարչակարգի և քեմալականների իրականացրած զանգվածային կոտորածները: Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ պատկերն առավել անմխիթար է ցեղասպանության գործընթացի անքակտելի մասը կազմող 1909 թ. կիլիկիահայության բնաջնջման պատմության գիտական ուսումնասիրության պարագայում, որը երկար ժամանակ վրիպել էր պատմաբանների ուշադրությունից: 1970-1990-ական թվականներին լույս ընծայված առաջին գիտական ուսումնասիրությունները նվիրված են գլխավորապես 1909 թ. կոտորածների մասնավոր հարցերի պատմության լուսաբանմանը[512]: Իրադարձության պատ-

[512] Տես օրինակ՝ *Մարտիրոսյան Հ. Հ.*, Կիլիկիայի 1909 թվականի ապրիլի

մությանն առնչվող հիմնահարցերն առավել հանգամանորեն արտացոլվել են հայրենական և արտասահմանյան մի շարք պատմաբանների՝ Հայոց ցեղասպանության և Հայկական հարցի պատմությանը նվիրված ընդհանուր բնույթի ուսումնասիրություններում[513]: 1909 թ. կոտորածների պատմությանը և պատմագրությանը նվիրված առաջին մենագրությունները լույս են ընծայվել վերջին տասնամյակում[514]: Վերջիններիս թվում իր արժանի տեղն ունի ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանի՝ գրախոսվող մենագրությունը: Աշխատությունը բաղկացած է չորս գլխից, ներածությունից, վերջաբանից, հավելվածներից, օգտագործված աղբյուրների և գրականության, անձնանունների և տեղանունների ցանկերից: Ի սկզբանե նշենք, որ հավելվածում հրապարակված են ամերիկյան «Նյու Յորք Թայմս» թերթում 1909 թ. տպագրված հոդվածներ և թղթակցություններ, իրադարձության պատկերն արտացոլող մեծ թվով լուսանկարներ, համացանցային կայքում տեղադրված փաստաթուղթ՝ «Ադանայի քրիստոնյաների հոգևոր պետերի՝ սուլթան Մուհամմեդ Ե-ին հղած 17 հունիսի 1909 թ. խնդրանք-բողոքը»:

Հ. Սիմոնյանը շրջանառության մեջ է դրել մեծաքանակ հայկական արժանահավատ սկզբնաղբյուրներ, առաջին անգամ օգտագործել հայրենական արխիվներից (ՀՀ Ազգային արխիվ,

---

հայկական կոտորածը և Երիտասարդ Թուրքիայի պատասխանատվության հարցը.– Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. V, Թուրքիա, Երևան, 1970; *Etmekjian L.K.*, The Reaction of the Boston Press to the 1909 Massacre of Adana // "Armenian Review", 1987, v. 40, n° 4, p. 61-74; *Dadrian V.*, The Circumstances Surrounding the 1909 Adana Holocaust // "Armenian Review", 1988, v. 41, n° 4, p. 1-16; *Arkun A.*, Les relations arméno-turques et les massacres de Cilicie de 1909.– L'actualité du génocide des Arméniens. Actes du colloque organisé par le Comité de Défense de la Cause arménienne à Paris les 16, 17 et 18 avril 1998, Paris, 1999, p. 57-74.

[513] Տես օրինակ՝ *Dadrian V.*, Histoire du génocide arménien. Conflits nationaux des Balkans au Caucase, Paris, 1996 ; *Тунян В.Г.* Младотурки и армянский вопрос, часть первая, 1908-1912 гг., Ереван, 2004; *Գասպարյան Ռ.*, Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ. – 1921 թ.), Երևան, 2005; *Ղազարյան Հ.*, Հայ ժողովրդի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, հ. առաջին, Երևան, 2007:

[514] *Kévorkian R.H.*, Les massacres de Cilicie d'avril 1909.– La Cilicie (1909-1921). Des massacres d'Adana au mandat français. Volume préparé par Raymond H. Kévorkian, Paris, 1999, p. 7-142 ; *Պողոսյան Վ.*, 1909 թ. հայկական կոտորածները Կիլիկիայում ֆրանսիական պատմագրության գնահատմամբ, Երևան, 2009:

Մատենադարան, Գրականության և արվեստի թանգարան) քաղված բազմապիսի անտիպ վավերագրեր, որոնք մեծապես նպաստել են տարբեր հիմնախնդիրների առավել խորն ուսումնասիրությանը: Աշխատությունը հիմնվում է նաև տարբեր կողմնորոշումներ ունեցող հայկական պարբերականների հարուստ նյութերի, ինչպես նաև հայ ականատեսների ու գործիչների վկայությունների վրա, որոնք հեղինակին հնարավորություն են ընձեռել մանրազնին վերլուծել բազում կնճռոտ և առ այսօր տարակարծությունների տեղիք տվող հիմնախնդիրներ:

Հ. Սիմոնյանը թեև բացահայտորեն չի հայտնում իր կարծիքը խիստ էական և բանավիճային խնդրի՝ Հայոց ցեղասպանության գործընթացում 1909 թ. կոտորածների տեղի հստակեցման կապակցությամբ[515], այդուհանդերձ, դժվար չէ կռահել նրա հայեցակարգային մոտեցումը, քանզի բազմիցս հիշատակում է 1915 թ. ցեղասպանության (էջ 215, 291, 357), 1894–1896 թթ. կոտորածների (էջ 31, 213, 225, 357) և 1909 թ. կիլիկիահայության կոտորածի մասին: Այս տեսակետը սատարում է Հայոց ցեղասպանության պատմության մասնագետների գերակշռող մասը (Վ. Տատրյան, Ի. Տերնոն, Ռ. Մելսոն, Թ. Աքչամ և այլք): Մենք, սակայն, ինչպես պատմաբանների և ցեղասպանության՝ իբրև երևույթի մասնագետների որոշ մասը (Ի. Լ. Հորոուից, Ե. Բաուեր, Մ. Պրանս, Յ. Բարսեղով և այլք), հակված ենք Հայոց ցեղասպանությունը դիտելու իբրև շարունակական, օսմանյան տարբեր վարչակարգերի կողմից, թեպետ տարբեր գաղափարախոսությունների հիման վրա, այդուհանդերձ, 1894–1922 թթ. իրականացված միասնական գործընթաց:

Հեղինակի ամենամեծ արժանիքներից է կիլիկիահայության ոչնչացման գործընթացի մանրազնին ուսումնասիրությունը: Նա հանգամանորեն ուրվագծում է կոտորածների ընթացքը, ըստ բնակավայրերի, ոչ միայն տարածաշրջանի մեծ քաղաքներում (Ադանա, Տարսոն, Մերսին և այլն), այլև Ադանայի ու Հալեպի վիլայեթների գյուղերում և գյուղաքաղաքներում, բացահայտում նաև դրանց ծավալման առանձնահատկությունները տարբեր վայրերում: Կատարելով բծախնդիր աշխատանք՝ հեղինակն ըստ սկզբնաղբյուրների ընձեռած հնարավորության՝ ճշգրտում է գրեթե

[515] Այդ մասին տես *Պողոսյան Վ.*, նշվ. աշխ., էջ 13-15:

յուրաքանչյուր բնակավայրում ապրող հայերի թվաքանակը կոտորածների նախօրյակին և զոհերի թիվը: Այս հարցը խիստ էական է, քանզի պատմաբաններն այս առնչությամբ առաջադրել են իրարամերժ տեսակետներ. զոհերի թիվն ըստ նրանց հաշվարկների, ընդհանուր առմամբ, տատանվում է հիմնականում 20.000-ից 30.000-ի միջև: Փոքր-ինչ այլ է Հ. Սիմոնյանի դիրքորոշումը. ընդգծելով, որ զոհերի թվաքանակի շուրջ սպառիչ կարծիք հայտնելը դյուրին չէ, քանզի վիճակագրական ստույգ տվյալների բացակայությունն ուսումնասիրողներին զրկում է նման հնարավորությունից, նա, այդուհանդերձ, ցուցաբերում է ընդգրկուն մոտեցում և հաշվի առնելով թե՛ կոտորածների ընթացքում սպանվածներին և թե՛ դրանց արդյունքում ի հայտ եկած անելալնելի պայմանների հետևանքով մահկանացուն կնքածներին՝ գտնում է, որ զոհերի ընդհանուր թիվը տատանվում է 40.000-ի սահմանում (էջ 206), չվարանելով, սակայն, իր իսկ տվյալները ևս ազնվորեն համարել մոտավոր հաշվարկի արդյունք:

Հայոց ցեղասպանության պատմության «աքիլլեսյան գարշապարներից» է հայերի կրած նյութական վնասների հարցը, որի շուրջ պատմաբանների գերակշռող մասը ձեռնպահ է մնացել սպառիչ կարծիքներ հայտնելուց, քանզի դա ևս եղել է, փաստորեն, անհնար՝ արժանահավատ և լիարժեք սկզբնաղբյուրների բացակայության պատճառով: Հ. Սիմոնյանը, ի տարբերություն իր որոշ նախորդների, ազնվորեն ձեռնպահ է մնում այս հարցի շուրջ վերջնական կարծիք հայտնելուց, իրավացիորեն նշում, որ հնարավոր չէ ճշգրտել նյութական կորուստների իրական չափերը (էջ 207):

1909 թ. կիլիկյան կոտորածների պատմությանն առնչվող տարբեր հիմնահարցերի մեկնաբանությունը Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ տեղիք է տվել բուռն բանավեճերի և տարակարծությունների: Դրանցից առանձնացնենք խիստ կարևոր՝ կոտորածների պատասխանատուների բացահայտման խնդիրը: Հ. Սիմոնյանը մանրազնին և համակողմանի քննության արդյունքում անվարան հայտնում է իր փաստարկված կարծիքն այս խրթին հարցի շուրջ, որը, մեր կարծիքով, առարկությունների տեղիք չի տալիս:

Կիլիկյան կոտորածները ժամանակագրական առումով համընկել են 1909 թ. մարտի 31-ի սուլթանական հեղաշրջմանը և դրա ճնշմանը երիտթուրքերի կողմից, ուստի ոչ միայն ժամանակակիցների, այլև հետագա տասնամյակներում պատմաբանների գերակշռող մասն ի վիճակի չի եղել հավուր պատշաճի բացահայտելու կոտորածների իրական կազմակերպիչներին՝ երիտթուրքերին, պատասխանատվությունը հաճախ հանիրավի բարդելով միայն սուլթանական վարչակարգի վրա: Հ. Սիմոնյանը, սակայն, թե՛ փաստելով ազգային-ազատագրական շարժումների հանդեպ երիտթուրքերի թշնամական վերաբերմունքը և թե՛ հիմնվելով փաստաթղթերի անկողմնակալ ուսումնասիրության վրա, շեշտում է կոտորածների վաղօրոք՝ մինչ սուլթանական հեղաշրջման իրականացումը ծրագրված լինելու փաստը (էջ 41) և միանգամայն իրավացիորեն դրանց պատասխանատու համարում երիտթուրքերին. «Կիլիկյան արհավիրքների պատասխանատուները երիտթուրքերն էին»,– այսպիսին է նրա հիմնական եզրահանգումը (էջ 217): Այդուհանդերձ, մենագրության շարադրանքը միաժամանակ վկայում է նաև այն մասին, որ հեղինակն ամենևին հակված չէ թերագնահատելու Կիլիկիայում գտնվող տեղական օսմանյան բարձրաստիճան ղեկավարների՝ սուլթանական վարչակարգի ներկայացուցիչների, գործուն աջակցությունը կիլիկիահայերի ոչնչացման հասունացած գործընթացին (էջ 44, 56, 111-112), ինչը վկայում է քննարկվող հիմնահարցի նկատմամբ դրսևորած նրա համակողմանի և ողջախոհ մոտեցման մասին: Այս հարցում ամբողջությամբ բաժանելով նրա կարծիքը՝ ցանկանում ենք նշել, որ նույն տեսակետն են սատարում նաև հայրենական և արտասահմանյան մի շարք մասնագետներ[516]:

Կոտորածներին հաջորդած ժամանակաշրջանում երիտթուրք ղեկավարների՝ հայ ժողովրդի հանդեպ բացահայտ կողմնակալ վերաբերմունքի մասին են վկայում Հ. Սիմոնյանի իրականացրած անաչառ ուսումնասիրությունների արդյունքները: Խոսքը վերաբերում է օսմանյան խորհրդարանում այս հարցի՝ դատարկաբանություններից ոչնչով չզանազանվող քննարկումների (կապված հետաքննություն անցկացնելու նպատակով Կիլիկիա

[516] Տարակարծությունների մասին տե՛ս նույն տեղում, էջ 16-19:

գործուղված օսմանյան երկու հանձնաժողովի աշխատանքների արդյունքների թեական ամփոփման հետ) և առավել ևս թատերական ներկայացումներ հիշեցնող՝ դրանց որոշ կազմակերպիչներին և իրականացնողներին պատասխանատվության ենթարկելու առնչությամբ կազմակերպված դատական նիստերի աշխատանքների շուրջ նրա անկողմնակալ մեկնաբանություններին: Առաջին հանգամանքը, ինչպես կտեսնենք, հեղինակը հմտորեն կապակցում է 1909 թ. կոտորածների պատմությունը հետագայում կեղծելու ունայն փորձերի հետ: Միաժամանակ հարկ է նշել, որ Հ. Սիմոնյանի անաչառ վերաբերմունքի մասին է պարզորոշ վկայում սակավաթիվ թուրք ղեկավար գործիչների, ինչպես նաև շարքային մահմեդականների՝ հայերի հանդեպ ցուցաբերած մարդասիրական վարքագծի հավուր պատշաճի արժեվորումը (էջ 314-318 և այլն):

Հայոց ցեղասպանության պատմագրության՝ ցեղասպանության տարբեր փուլերի պատմության հավաստիությունը ժխտող ուղղության ներկայացուցիչներին խիստ բնորոշ է, ի սկզբանե առ այսօր, իբր հայկական կուսակցությունների կողմից հրահրված հայկական կարծեցյալ ապստամբության վարկածին տուրք տալը, որը պատճառ է դարձել հակամարտող կողմերի համար անցանկալի զոհերի[517]: Նույն մոտեցումն են նրանք ցուցաբերում 1909 թ. կոտորածների պատմության մեկնաբանության առնչությամբ[518]: Հ. Սիմոնյանը մանրամասնորեն անդրադառնալով օսմանյան խորհրդարանում տեղի ունեցած՝ կոտորածներին վերաբերվող քննարկումներին և օսմանյան տեղական ղեկավար գործիչների կազմած փաստաթղթերին, ապացուցում է, որ նման մեկնաբանությունը համահունչ է նախ և առաջ իրադարձության կազմակերպիչների դիրքորոշմանը. «[Պատգամավորական] ժողովն ըստ էության սկիզբ դրեց հայերի մեղավորության պաշտոնական շինծու վարկածին»,– նշում է նա (էջ 247):

---

[517] Տե՛ս օրինակ *Des Coursons R.*, La rébellion arménienne. Son origine-son but, Paris, 1895 ; *Abdon Boisson P.*, L'agitation anglo-arménienne, Paris, 1896 ; *Özkaya İ.C.*, Le peuple arménien et les tentatives de réduire le peuple turc en servitude, Istanbul, 1971 ; *Moser P.A.*, Arméniens, où est la réalité ? Saint-Aquilin-de-Pacy, 1980 ; *McCarthy J.*, *Arslan E.*, *Taskiran C.*, *Turan O.*, The Armenian Rebellion at Van, The University of Utah Press, 2006.

[518] Այս մասին տե՛ս *Պողոսյան Վ.*, նշվ. աշխ., էջ 10-11:

Հ. Սիմոնյանը հիմնավորապես հերքում է կիլիկիահայերի վրա բարդվող՝ զինվելու և ապստամբության նախապատրաստվելու սին մեղադրանքները (էջ 266-272), իսկ վերջինն անվանում «անմիտ ու արտառոց»: Հեղինակը մանրամասնում է հնչակյանների և դաշնակցականների գործունեության հետ կապված շահարկումները, ընդգծում, որ այն երբևէ չի հատել օրինականության շրջանակները, իսկ հայկական կուսակցությունների գործելակերպում չի նկատում «անջատողական շարժում կամ գաղափար»: Փոխարենը նա շեշտում է սոսկ «տարրական բարեկարգության իրականացման» նրանց ձգտումը, ինչպես նաև նրանց կողմից Օսմանյան կայսրության անբաժանելիության սկզբունքի որդեգրումը (էջ 273, 275) և դրանով իսկ հուժկու հակահարված տալիս 1909 թ. կիլիկյան կոտորածների պատմության նենգափոխման նախակարապետներին և ինչն ավելի կարևոր է՝ նրանց մերօրյա հետևորդներին:

Հեղինակը չի վարանում, այդուհանդերձ, անկողմնակալ դիրքերից քննարկել 1908 թ.՝ 1876 թ. օսմանյան սահմանադրության վերահաստատումից հետո թե՛ հայկական կուսակցությունների և թե՛ օսմանյան հայազգի քաղաքացիների ու հատկապես կիկլիկիահայերի՝ մահմեդականների և քրիստոնյաների միջև հավասարության թեական հռչակմամբ պայմանավորված հիրավի անշրջահայաց և անզգույշ քայլերը: Այս հանգամանքն, ի դեպ, ընդգծել են դեռևս իրադարձության հայ և եվրոպացի անաչառ ժամանակակիցներից շատերը: Նման վարքագիծը Հ. Սիմոնյանը բնորոշում է իբրև «հայկական կոմիտեների մարտավարական սխալներ» (էջ 274, 275): Այս հարցում հայտնելով մեր կատարյալ համաձայնությունը հեղինակի հետ, այդուհանդերձ, մեզ թույլ ենք տալիս նրա ուշադրությունը հրավիրել այս առնչությամբ գրքում առաջադրված՝ մեր կարծիքով վիճահարույց, մեկ այլ մեկնաբանության վրա: Ներածության մեջ Հ. Սիմոնյանը հանգամանորեն բացահայտում է կիլիկյան կոտորածների զանազան պատճառները (էջ 28-37). դա նրա վերլուծական մոտեցման դրվատելի կողմերից է: Հավանական պատճառների թվում, սակայն, նա դասում է նաև հայերին անթաքույց համակած խանդավառության հուզումնալից զանազան դրսևորումները (էջ 32-33): Այս պարագայում արդեն հարկադրված ենք առարկել հարգարժան հեղինակին, քանզի մեր

համոզմամբ հայերի և նրանց քաղաքական ու հոգևոր առաջնորդների, մասնավորապես Մուշեղ եպիսկոպոս Սերոբյանի, հիրավի անխոհեմ վարքագիծը նպատակահարմար ենք համարում դասել կոտորածների շարժառիթների շարքը, որը սոսկ նպաստել է մահմեդականների մոլեռանդության բորբոքմանը, ինչում, ի դեպ, ընթերցողին համոզում է նաև Հ. Սիմոնյանը:

Հեղինակի մոտեցման ակնառու արժանիքներից է, անտարակույս, երիտթուրքերի հետ հայկական ազգային կուսակցությունների առնչությունների անկողմնակալ վերլուծությունը՝ կիլիկյան ողբերգության հենքի վրա: Հ. Սիմոնյանը խստիվ քննադատում է ՀՅԴ կուսակցությանը՝ անհեռատես քաղաքականության համար, որը կոտորածներից հետո ևս շարունակում էր ջանքեր գործադրել ամրապնդելու երիտթուրքերի հետ իր դաշինքը: Դաշնակցականների նման դիրքորոշումը նա իրավամբ համարում է «կոպիտ սխալ», իսկ երիտթուրքական կուսակցության հետ 1909 թ. օգոստոսի 11 (24)-ին նրանց կնքած նոր համաձայնագիրը՝ «ամոթալի գործարք» (էջ 288-289)[519]: Փոխարենը հեղինակը հայ ազգային հերոս Անդրանիկին հակադրում է ՀՅԴ ղեկավարներին, որը դրսևորելով շատ ավելի սթափ վերաբերմունք, դեռևս նախքան կոտորածները հորդորում էր վերջիններիս վերապահությամբ վերաբերվել երիտթուրքերի շռայլած կեղծ խոստումներին և կանխատեսում վերահաս կոտորածների հնարավորությունը (էջ 290-291):

Ուստի պատահական չէ, որ Հ. Սիմոնյանն անսքող փաստերով ոչ միայն հերքում է հայերի նախահարձակ լինելու մտածացին վարկածը, այլև հիմնավորում նրանց՝ սոսկ ինքնապաշտպանության դիմելու, իսկ ավելի ստույգ՝ իրենց «տարրական իրավունքը» (էջ 288) պաշտպանելու անհրաժեշտությունը և ըստ այդմ՝ մեծ տեղ հատկացնում տարբեր բնակավայրերում նրանց կազմակերպած ինքնապաշտպանական մարտերին, ապացուցում, որ դրանց արդյունքում նրանք հասել են շոշափելի հաջողությունների (ցայտուն օրինակը, որը հեղինակը մանրակրկիտ

[519] Նշենք, որ 1909 թ. կոտորածների առնչությամբ ՀՅԴ նման վարքագիծը խստագույնս դատապարտել է իրադարձության ժամանակակիցներից Ս. Սապահ-Գյուլյանը, այն բնորոշելով իբրև «մեծ և անդարմանելի սխալ»: Տես *Սապահ-Գիւլեան Ս.*, Պատասխանատուները, Փրավիտէնս, 1916, էջ 100-102:

քննարկում է, Դյորթ-Յոլի մարտերն են): Մատնանշելով 1909 թ. Զեյթունում ինքնապաշտպանությանն՝ հայերի նախապատրաստական աշխատանքները՝ նա ի դերև է բերում դրանց արդյունավետությունը ոչ միայն կոտորածից խուսափած զեյթունցիների համար, այլև փաստում, որ նրանց մարտական պահվածքի հետևանքով է Մարաշի սանջակը համեմատաբար զերծ մնացել զանգվածային բնաջնջումից:

Ի դեպ, Հ. Սիմոնյանի թե՛ նշված և թե՛ համանման այլ դիտարկումները խիստ ուսանելի են և նրա գրքին հաղորդում են մեծ այժմեականություն: Ելնելով կիլիկյան իրադարձությունների դառը փորձից՝ պատմաբանը եզրակացնում է. «Հայը կարող է գոյատևել իր զինված հարևանների հետ իրական ուժերի հավասարակշռություն ստեղծելու դեպքում միայն» (էջ 269): Ըստ այդմ, անվերապահորեն հավատ չընծայելով արդի փուլում Հայաստանի Հանրապետության երկու հարևանների «քաղաքակրթվելու» հնարավորության հետ, նա «տևական երաշխիքներ» չի տեսնում հայ-թուրքական հարաբերությունները զարգացման կայուն հիմքերի վրա դնելու համար, և հանգում է, մեր համոզմամբ, միակ հնարավոր և իրատեսական հետևության, այն է՝ հարկ է «հավատալ և ապավինել ազգի ոգուն և սեփական ուժերին» (էջ 356-357):

Հայոց ցեղասպանության ընթացքում եվրոպական մեծ տերությունների՝ հայ ժողովրդի հանդեպ ցուցաբերած քաղաքականությունը բազմիցս գրավել է պատմաբանների ուշադրությունը, որոնք սահմանափակվել են գլխավորապես նրանց ղեկավար շրջանակների անկարեկից դիրքորոշման անողոք և արդարացի դատապարտմամբ: Հ. Սիմոնյանը, սակայն, այս հարցում ևս դրսևորում է համապարփակ մոտեցում՝ հստակորեն զանազանելով տերությունների՝ հայ ժողովրդի շահերին միանգամայն անհարիր պետական քաղաքականությունը՝ կոտորածների գոտում գտնվող եվրոպացի և ամերիկացի մարդասեր քաղաքացիների (դիվանագետներ, միսիոներներ, զինվորականներ) վարքագծից, որոնք բազմիցս, իրենց սահմանափակ հնարավորությունների սահմաններում, օգնության ձեռք են մեկնել կործանման դատապարտված հայերին և արդյունքում փրկել հազարավոր մարդկային կյանքեր: Հեղինակը գտնում է, որ որոշ օտարերկրացիներ հայերին փրկելու

գործում «բացառիկ» դեր են ունեցել և նրանց անունների հիշատակումը համարում է իր «հոգու պարտքը» (էջ 310-313)՝ հարգանքի խորին տուրք մատուցելով նրանց:

Միանգամայն իրավամբ դրվատելով ազնվաբարո և վեհանձն այլազգի անձանց գործունեությունը, Հ. Սիմոնյանն անդրադառնում է նաև մեծ տերությունների պետական քաղաքականությանը: Այս հարցում, սակայն, նրա մեկնաբանությունները, ցավոք, սպառիչ չեն: Ըստ էության, հեղինակը բավարարվում է միայն նրանց անվշտակից դիրքորոշման փաստմամբ (էջ 226-228, 313) և երիտթուրքական կառավարության հետ հարաբերությունները չվատթարացնելուն միտված ցանկության բացակայությանն առնչվող դիտարկմամբ՝ չմեկնաբանելով, այդուհանդերձ, պատմական այս ժամանակահատվածում նրանց ընդգծված թրքամետ քաղաքականության իրական պատճառները (Եվրոպայում ձևավորված ռազմաքաղաքական դաշինքների մեջ Օսմանյան կայսրությանը ներգրավելու ակնկալությամբ՝ երիտթուրքական վարչակարգի ղեկավարներին սիրաշահելու ցանկություն, կայսրությունում տնտեսական և ֆինանսական մեծ շահախնդրություններ):

Հ. Սիմոնյանի շարադրանքում երբեմն նկատվում են վրիպումներ մասնակի հարցերում. օրինակ, նրա դրվատանքին արժանացած՝ Հալեպում Ֆրանսիայի հյուպատոս Ֆերնան Ռոքեֆերին ներկայացվում է իբրև Ֆերդինանդ Ֆերիե (էջ 178, 312): Հեղինակը նշում է Հակոբ Պապիկյանի կազմած զեկուցագրի՝ առաջին հրատարակության մասին 1913 թ. «Պրո Արմենիայի» էջերում (էջ 309): Իրականում ՀՅԴ կողմից ֆինանսավորվող հիշյալ երկշաբաթաթերթը (1901-1908, 1912-1914), որի լույս ընծայումն ընդհատվել էր 1908 թ. երիտթուրքական հեղափոխության հետևանքով, 1912 թ. դեկտեմբերից մինչև 1913 թ. դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում վերահարատարակվել է «Պուր լե պոպլը դ'Օրիան» վերտառությամբ[520]: Այս առնչությամբ Հ. Սիմոնյանի շարադրանքն առավել ամբողջական կլիներ, եթե

[520] Տե՛ս Le rapport de Babiguian Effendi // « Pour les peuples d'Orient », 1913, n° 11, 12, 16, 17. Նշենք, որ Պապիկյանի զեկուցագիրը 1913 թ. հրատարակվել է նաև Կոստանդնուպոլսում. Rapport en date du 7 juin 1325 (1909) de feu Babiguian effendi, député d'Adrinople, sur les massacres d'Arménie.– La situation des Arméniens en T urquie exposée par des documents. 1908-1902, III, [Constantinople, 1913], pp. 7-26.

նա հիշատակեր նույն լրագրում Պապիկյանի զեկուցագրի տպագրման մասին նաև անգլերեն թարգմանությամբ[521]:

Այս ամենը, սակայն, ընդամենը մանրուքներ են այն ահռելի աշխատանքի համեմատությամբ, որն իրականացրել է ակադեմիկոս Սիմոնյանը: Ինքնին հասկանալի է, որ համառոտ գրախոսականում անհնար է արժևորել հեղինակի քննարկած բոլոր կարևոր հիմնախնդիրները: Ուստի մենք սահմանափակվեցինք առավել էական հիմնահարցերի վերլուծությամբ, ինչն, այդուհանդերձ, բավական է ամենայն պատասխանատվությամբ հավաստելու, որ Հայոց ցեղասպանության պատմագրությունը հարստացել է արժեքավոր և շահեկան հետազոտությամբ:

Հաշվի առնելով Հայոց ցեղասպանության պատմության գերքաղաքականացվածությունը՝ նպատակահարմար ենք գտնում առաջարկել Հ. Սիմոնյանի գրքի թարգմանությունն անգլերեն, որով թուրք պատմաբանները վաղուց ի վեր հրատարակում են իրենց աշխատանքները:

*Պատմաբանասիրական հանդես, 2009, թիվ 1, էջ 223-228*

**1895, Massacres d'Arméniens. Alphonse Cillière, Consul de France à Trébizonde. Texte présenté par Gérard Dédéyan, Claire Mouradian et Yves Ternon, Toulouse, Privat, 2010, 281 p.**

**1895 թվական, հայկական կոտորածներ: Տրապիզոնում Ֆրանսիայի հյուպատոս Ալֆոնս Սիլիեր: Բնագիրը պատրաստել են Ժերայր Դեդեյանը, Կլեր Մուրադյանը և Իվ Տեռնոնը, Տուլուզ, Պրիվա, 2010, 281 էջ**

1894-1897 թթ. Տրապիզոնում Ֆրանսիայի հյուպատոս, 1895 թ. հայկական կոտորածների ականատես Ալֆոնս Սիլիերի (1861-1946) հուշերի տպագրությամբ Հայոց ցեղասպանության առաջին փուլի՝ համիդյան կոտորածների, պատմությունն արտացոլող պատմագիտական գրականությունը[522] հարստացավ ևս մեկ արժե-

[521] A Report on the Adana Massacre // « Pour les peuples d'Orient », 1913, n° 14, 15, 20.

[522] Տես *Shirinian G.N.*, The Armenian Massacres of 1894-1897: A Bibliography // "Armenian Review", 2001, v. 47, n° 1-2.

քավոր սկզբնաղբյուրով: Նրա հուշերի հրատարակությունն իրականացրել են Ժերայր Դեդեյանը, Կլեր Մուրադյանը և Իվ Տերնոնը: Թեպետ Սիլիերն իր հուշերը՝ «Հայկական կոտորածներ: 1895 թ. հոկտեմբերի 8-ի կոտորածները Տրապիզոնում. ականատեսի նոթեր և տպավորություններ» խորագրով, տպագրության է պատրաստել դեռևս 1929 թ., այդուհանդերձ, երկար տարիներ ձեռագրին վիճակված էր հանգրվանել ընտանեկան արխիվում: Նրա ժառանգները միայն մի քանի տարի առաջ են հուշերի բնագիրը հանձնել Մոնպելիեյի Պոլ Վալերի համալսարանի պրոֆեսոր Ժ. Դեդեյանին (էջ 13), որը և նախաձեռնել է դրանց լույս ընծայումը:

Սիլիերի հուշագրությունը համալրում է մինչ այժմ Հայոց ցեղասպանության պատմության մասնագետներին մատչելի՝ համիդյան կոտորածների պատմությունը լուսաբանող տպագիր ֆրանսիական սկզբնաղբյուրները, ի տարբերություն որոնց ունի որոշ առանձնահատկություններ: Նախ նա նյութը շարադրել է ոչ թե իրադարձությունների անմիջական տպավորությամբ, այլ տասնամյակների հեռվից, դրանց շուրջ երկարատև խորհրդածություններից հետո և առանց ավելորդ հույզերի: Սակայն, ինչն ավելի էական է, Սիլիերը Տրապիզոնի կոտորածներին հաջորդած ժամանակաշրջանում տեղում իրականացրել է մանրակրկիտ հետաքննություն (էջ 39-40, 120), որը նպաստել է կոտորածներին առնչվող այլևայլ հանգամանքներում նրա տեղեկությունների ընդլայմանն ու կողմնորոշումների հստակեցմանը: Այս առումով՝ նրա հուշերը ձեռք են բերում պատմագիտական մեծ կարևորություն: Արդյունքում, ըստ հեղինակի վկայության՝ նա ձեռնամուխ է եղել նյութի շարադրմանը՝ հետապնդելով «հստակություն, ճշմարտություն և արդարություն» սահմանելու նպատակ (էջ 40):

Թեև Սիլիերը բնակվել է Տրապիզոնում, այդուհանդերձ, այլ վայրերում գտնվող ականատեսներից (այդ թվում Էրզրումում Ֆրանսիայի փոխհյուպատոս Պ.-Ա. Բերժերոնից) ստացված արժանահավատ տեղեկությունների հիման վրա անդրադարձել է նաև 1894-1896 թթ. արևմտահայության բնաջնջման գործընթացին Օսմանյան կայսրության տարբեր տարածաշրջաններում: Ի սկզբանե նշենք, որ Տրապիզոնի տարածքից դուրս տեղի ունեցած կոտորածների շուրջ նրա տեղեկությունները եղել

են մակերեսային, ուստի և նա, իր սահմանափակ հնարավորությունների շրջանակում, սոսկ հպանցիկ է հիշատակում 1894 թ. Սասունի, 1895 թ. Կոստանդնուպոլսում Բաբը Ալիի ցույցին հաջորդած կոտորածների, ինչպես նաև Բաբերդում, Էրզրումում, Սվազում, Շապին Գարահիսարում, Թոքաթում, Մարզվանում, Ամասիայում «արյունալի ալիքի» պատճառած ավերածությունների մասին (էջ 122, 155-156): Այդուհանդերձ, 1895 թ. Տրապիզոնում հայերի կոտորածների քննարկումը փոքր-ինչ ընդարձակ հենքի վրա հեղինակի անժխտելի արժանիքներից է, որը կայսրության տարբեր տարածաշրջաններում միաժամանակ տեղի ունեցած արևմտահայության զանգվածային կոտորածների ետնախորքի վրա՝ անուղղակիորեն ի հայտ է բերում օսմանյան իշխանությունների կողմից հայ ժողովրդի դեմ ցեղասպան քաղաքականության մտահղացումն ու իրականացումը վաղօրոք մշակված ծրագրի, այն է՝ կանխամտածվածության հիման վրա:

Անտարակույս, Սիլիերի հուշերի առանցքում Տրապիզոնում ծավալված իրադարձություններն են: Հավաստի փաստերի վերլուծությամբ՝ նա կարծիք է հայտնում կոտորածների իրականացման վճռի շուրջ հոկտեմբերի 7-ին (էջ 89): Հոկտեմբերի 8-ին՝ կոտորածի օրը, Էրզրումում Ֆրանսիայի փոխհյուպատոս նշանակված Ֆ. Ռոքեֆերիի հետ միասին գտնվելով քաղաքի կենտրոնում, նա դարձել է սաստիկ հրաձգության, օտարերկրյա, գլխավորապես կրոնական հաստատություններում ապաստան որոնող ահաբեկված հայերի պատսպարման, փողոցներում ճողոպրող հայ վիրավորների, ինչպես նաև մեծաքանակ դիերի ականատեսը: Ըստ նրա վկայության՝ նույնիսկ քաղաքի կենտրոնում գտնվող որոշ հաստատությունների (այդ թվում պետական) և խանութների առջև հայերի կողոպտված, սրախողող արված դիակները կիտված են եղել տառացիորեն մեկը մյուսի վրա: «Այս տեսարանը և ատրճանակը կամ սուրը ձեռքին որոշ անհատների կեցվածքը, որոնց հանդիպում էինք, թողնում էին մոլեգնության և աննախադեպ վայրագության տպավորություն»,– նշում է նա (էջ 98, 138): Ֆրանսիացի դիվանագետները քայլել են հայերի դիակներով «սփռված» փողոցներով (էջ 99):

Ավելի ուշ, Սիլիերը տեղեկացել է, որ լազերի հրոսակա-

խմբերը ոչնչացրել են նաև Տրապիզոնի հարևանությամբ գտնվող հայկական գյուղերի բնակչությանը (էջ 110): Սակայն կոտորածի արդյունքում 800-ի հասնող հայերի զոհերի շուրջ նրա հաղորդած տվյալները (էջ 142) վիճարկելի են, ինչը չի վրիպել նաև գրքի ծանոթագրությունների հեղինակ Կ. Մուրադյանի ուշադրությունից, որը հղում է մասնագիտական գրականության մեջ հիշատակված՝ 2000-ի հասնող հայերի տված մարդկային կորուստների թիվը (էջ 254):

Սիլիերը փաստում է նաև, որ Տրապիզոնում և հարակից գյուղերում ևս, ինչպես ամենուր, հայերի կոտորածին հաջորդել է նրանց ունեցվածքի կողոպուտը (էջ 98, 110, 149, 153), անառարկելի է համարում կանոնավոր բանակի զինվորների և զափթիեների մասնակցությունը թե՛ կոտորածին և թե՛ կողոպուտին (էջ 137-138):

Այդուհանդերձ, նա հետապնդում է ոչ այնքան 1895 թ. հոկտեմբերին Տրապիզոնում և շրջակայքում ծավալված կոտորածների ընթացքը նկարագրելու, որքան դրանց կազմակերպիչներին և իրականացնողներին բացահայտելու նպատակ, ինչը նրա մոտեցման ակնհայտ առավելություններից է: Օսմանյան իշխանությունների վարած հայահալած քաղաքականությունը նա մերկացնում է տարբեր կտրվածքներով՝ մատնանշելով, մասնավորապես, հայերի նկատմամբ նրանց կիրառած անթաքույց կողմնակալ քաղաքականության տարբեր դրսևորումները, ինչպիսիք են ազգային խտրականությունը, տարատեսակ չարաշահումները, մահմեդականների արհամարհական վերաբերմունքը և այլն (էջ 75):

Բուն կոտորածների առնչությամբ, Սիլիերի մտորումներում էականը Տրապիզոնում հայերի ոչնչացման քննարկումն է օսմանյան կենտրոնական և տեղական իշխանությունների կողմից դիտավորության հիման վրա: Եթե հոկտեմբերի 8-ի առավոտյան Սիլիերը «կոտորածի կանխամտածվածության և նախապես կազմակերպված լինելու» առնչությամբ դեռևս կասկածներ է տածել, ապա ընդամենը մի քանի ժամ անց իրադարձության ընթացքն արդեն փարատել է նրա փոքր իսկ տարակույսները (էջ 94, 97): Սիլիերը կարծիք է հայտնում, որ «արյունալի նշանաբանը» տրվել է, հավանաբար, հոկտեմբերի 6-ին և այն

իրավացիորեն պայմանավորում է 1895 թ. սեպտեմբերի 30-ին Կոստանդնուպոլսում Բաբը Ալիի ցույցի ճնշմամբ (էջ 132): Կոտորածի ծրագրված լինելու մասին են վկայում նրա տարբեր դիտարկումները, ըստ որոնց՝ այն «քաղաքի տարբեր վայրերում սկսվել է միաժամանակ» և դադարել շեփորով տրված ազդանշանից հետո միայն (էջ 135, 137): Ինչ վերաբերում է 1895 թ. կոտորածին նախորդած օրվան, ապա Սիլիերը փաստում է, որ թե՛ թուրքերին և թե՛ քրիստոնյաներին պատկանող որոշ տների վրա արված են եղել նշաններ, որոնք մինչ այդ ոչ մեկը չէր նկատել (էջ 88, 134):

Իր իսկ անցկացրած հետաքննության հիման վրա՝ Սիլիերը հանգում է միակ հնարավոր հետևության. «Կոտորածների հրամանը տրվել էր Ելդըզից» (նկատի ունի Աբդուլ Համիդի ապարանքը – *Վ. Պ.*) (էջ 131): Այս փաստն այլևս քննարկման ենթակա չհամարելով, նա գտնում է, որ «այդ պահից քաղաքի հայերի ճակատագիրը վճռված էր» (էջ 133): Ըստ այդմ՝ նա մեծ տեղ է հատկացնում Աբդուլ Համիդ II-ի՝ հայերի կոտորածների կազմակերպման գործում ունեցած դերին: Տրապիզոնի հայերի՝ «դժբախտ անմեղների» (էջ 132), ոչնչացումը նա մեկնաբանում է բացառապես սուլթանի քաղաքականությամբ, որը «նրանց դատապարտել էր մահվան», «կարգադրել և սանձազերծել կոտորածները» (132, 223): Տարբեր առիթներով հեղինակն ընդգծում է օսմանյան գահակալի ղեկավար դերը կոտորածների կազմակերպման գործում, նրան բնորոշում իբրև հայերի բնաջնջման իսկական և մեծ մեղավորի (էջ 194, 208, 223, 225): Նշենք նաև, որ միանգամայն իրավամբ նա Աբդուլ Համիդին է վերագրում ոչ միայն Տրապիզոնում տեղի ունեցած «սարսափելի իրադարձության» (էջ 169), այլև կայսրության տարածքում արևմտահայության ոչնչացման պատասխանատվությունը. «Թուրքիային պատճառված տառապանքների մեծ պատասխանատուն անձամբ Աբդուլ Համիդն է»,– եզրակացնում է նա (էջ 224): Այս առնչությամբ հարկ է պարզաբանել, որ եթե 1890-ական թվականներին Օսմանյան կայսրությունում հավատարմագրված ֆրանսիացի այլ դիվանագետները (Պ. Կամբոն, Գ. Մեյրիե և այլք), կոտորածների ընթացքում անվարան խարազանում էին արևմտահայության հանդեպ մեծ տերությունների ցուցաբերած անտարբեր դիրքորոշումը,

ապա Սիլիերը հայերի բնաջնջման կազմակերպման հարցում սուլթանի վճռականությունը սոսկ հարևանցիորեն է շաղկապում եվրոպական պետությունների ղեկավար շրջանները ծվատող տարաձայնությունների հետ (էջ 224):

Հեղինակը, սակայն, լռությամբ չի շրջանցում Տրապիզոնի տեղական իշխանությունների դերը կոտորածների կազմակերպման գործում. ուշադրությունը կենտրոնացնում է հատկապես վիլայեթի կուսակալ Քադրի բեյի մեղսակցությանը: Չնայած Աբդուլ Համիդին՝ իբրև կոտորածների գլխավոր կազմակերպչի անարգանքի սյունին գամելուն՝ Սիլիերը միաժամանակ իր համոզմունքն է հայտնում, որ դրանով ինքն ամենևին չի սքողում «Քադրի բեյի անձնական պատասխանատվությունը»: Դեռ ավելին, նա գտնում է, որ վերջինս կարող էր և պետք է խոչընդոտեր հանցանքի իրականացմանը (էջ 223): Նման հետևության համար հիմք են ծառայել նրա իսկ վկայակոչած փաստերը: Օրինակ, Սիլիերը հակադրում է կոտորածների սանձազերծման օրը՝ հոկտեմբերի 8-ին, քաղաքի կենտրոնական մասում գտնվող և «արյունոտ անցքերի ծավալմանը» ոչնչով չհակադրված Քադրի բեյի վարքագիծը՝ հոկտեմբերի 3-ին տեղի ունեցած պայթունավտանգ իրավիճակում կուսակալի պահվածքին, երբ միայն նրա «ներկայությունը բավական է եղել կարգի վերականգնման համար» (էջ 80, 134): Հեղինակը հավաստի է համարում նաև այն տեղեկությունը՝ ըստ որի, հայերի սպանությունների ավարտն ազդարարող շեփորը հնչել է Քադրի բեյի կարգադրությամբ (էջ 135): Անկասկած, այս հանգամանքները հաշվի առնելով է նա հավաստել. «Շարժումն, անկասկած, կանխամտածված էր և նախապատրաստված... Այն կարող էր ձեռնարկվել միայն իշխանությունների մի մասի առնվազն կրավորական հանցակցությամբ» (էջ 126):

Այսպիսով, Սիլիերին հաջողվել է բազմապիսի փաստերի վկայակոչմամբ Տրապիզոնի հայերի կոտորածները մեկնաբանել պետական քաղաքականության մակարդակով, անհերքելիորեն ի հայտ բերել դրանց իրականացումն օսմանյան կենտրոնական և տեղական իշխանությունների կողմից նախօրոք մշակված ծրագրի և կանխամտածվածության հիման վրա, որը ցեղասպանության՝ իբրև երևույթի, հիմնական բնորոշիչներից է: Այս պայմաններում,

միանգամայն օրինաչափ է, որ 1895 թ. Տրապիզոնի կոտորածները նա բնորոշում է իբրև «նողկալի քաղաքական հանցանք» (էջ 89):

Հարկ է կանգ առնել ևս մեկ կարևոր հանգամանքի վրա, որն ունի արդիական մեծ հնչեղություն: Խոսքը վերաբերում է հիմնավոր փաստարկներով ֆրանսիացի դիվանագետի կողմից հայկական կարծեցյալ ապստամբության վարկածի հերքմանը: Սիլիերն այս խիստ կարևոր հարցը, որը 1890-ական թվականների կեսերից առ այսօր հետևողականորեն շահարկվում է Հայոց ցեղասպանության պատմագրության ժխտողական ուղղության ներկայացուցիչների կողմից իրադարձության տարբեր փուլերի մեկնաբանության կապակցությամբ, ենթարկում է քննական վերլուծության 1894 թ. Սասունի ըմբոստության և 1895 թ. Տրապիզոնի կոտորածների հենքի վրա: Սասունի «խիստ սահմանափակ» շարժման պատճառ համարելով հավելյալ հարկերի գանձման «հարկադրանքը»՝ նա փաստում է հայկական կարծեցյալ ապստամբության ճնշումը «վայրագաբար» (էջ 69): «Դա անպաշտպան ժողովրդի ոչնչացում էր»,– եզրակացնում է նա (էջ 70):

Հիշարժան է Սիլիերի վկայությունն առ այն, որ Տրապիզոնում հայերի կոտորածին հաջորդած օրերին թեև քաղաքում չեն խոսել «հայկական հեղափոխական շարժման մասին», այդուհանդերձ, փոքր անց շրջանառության մեջ է դրվել նախ «հայկական դավադրության», այնուհետև «փաստերի ճշմարտացիությանը» հակասող՝ նման կարծեցյալ շարժման վարկածները (էջ 105, 149-150), որոնց հավանականությունը նա կտրականապես և սկզբունքորեն մերժում է: Նշելով, որ նման բնույթի հերյուրանքներն այս ժամանակաշրջանում Թուրքիայում տարածված են եղել (էջ 150), նա, այդուհանդերձ, Տրապիզոնի կոտորածների և հայերի թեական սադրանքների միջև կապը համարում է կատարելապես հիմնազուրկ, միաժամանակ պարզաբանում, որ չի հավակնում ժխտել որոշ հայերի՝ զենքը ձեռքին իրենց կյանքը պաշտպանելու «օրինական և բնական» (էջ 139) կամեցողությունը: Հայերի ինքնապաշտպանության՝ գուցեև սակավաթիվ դրվագները, նրա հուշերում, այդուհանդերձ, չեն արտացոլվել:

Հիշատակենք Սիլիերի հուշերում տեղ գտած մեկ այլ էական հանգամանք ևս: Նա համիդյան կոտորածների սակավաթիվ եվրոպացի ժամանակակիցներից է, որը բազմիցս

հավաստել է դրանց հետևանքով Տրապիզոնից և հատկապես շրջական գյուղերից հայերի և հույների արտագաղթը Բաթում ու Նովերոսիյսկ, որը մեծ չափերի է հասել, մասնավորապես, հայերի շրջանում (էջ 154, 162-163): Ըստ նրա վկայության՝ արտագաղթը կրել է շարունակական բնույթ և 1896 թ. Բանկ օտտոմանի գրավմանը հաջորդած ժամանակաշրջանում ընդունել այնպիսի ծավալներ, որ անհանգստություններ է պատճառել նույնիսկ Տրապիզոնի կուսակալին և հարկադրել նրան այն կասեցնելու համար ձեռնարկել, իր համոզմամբ՝ «ուշացած և անօգուտ» միջոցներ (էջ 193-194):

Իբրև Տրապիզոնում տեղի ունեցած կոտորածի հետևանք, Սիլիերն անուշադրության չի մատնում այլոց կողմից անտեսված մեկ այլ կարևոր իրողություն ևս՝ մահմեդականներին պատճառված տնտեսական մեծ վնասը: Կոտորածի և դրա արդյունքում հայերի համար ստեղծված սպառնալից մթնոլորտի պայմաններում առևտրի և գյուղատնտեսության ոլորտներում ընդգրկված նրանցից շատերը սպանվել են, այլք զրկվել են նույնիսկ քաղաքում կրպակները վերաբացելու հնարավորությունից, քանի որ նրանց ունեցվածքը թալանվել է կամ հրկիզվել: Գյուղերում տիրել է միևնույն հուսակտուր իրավիճակը, քանզի բերքն արժանացել է համանման ճակատագրի: «Որոշ հայեր,– գրում է նա,– հարկադրված էին գյուղում սնվելու գրեթե բացառապես դաշտերի խոտով» (էջ 154): Երկրում ստեղծված իրավիճակը նա բնորոշում է իբրև «իսկական աղետ», որից խիստ անհանգստանում էին իրենք իսկ մահմեդականները (էջ 153-154):

Այսպիսին են Սիլիերի հուշերում արձանագրված՝ ուշադրության արժանի գլխավոր հիմնահարցերը և դրանց տրված հեղինակի մեկնաբանությունները, որոնք նա առաջադրել է՝ «ջանալով փաստերը գնահատել անկողմնակալորեն, առանց տուրք տալու անձնական զգացմունքների» (էջ 120): Ուստի, անհրաժեշտ է նշել, որ իր առջև դրված խնդիրը Սիլիերը հաղթահարել է հավուր պատշաճի: Նրա հուշերը հիմնավոր հակահարված են տալիս Հայոց ցեղասպանության պատմությունը խեղաթյուրող թե՛ վաղեմի և թե՛ ժամանակակից պատմության կեղծարարների թեզերին, անուղղակիորեն բացահայտում դրանց սնանկությունը, որով և պայմանավորում է դրանց այժմեականությունն ու կարևորությունը: Ըստ այս

ամենի՝ հարկ է ընդգծել, որ Սիլիերի հուշերի հրատարակությունն իրականացնող պատմաբանները կատարել են շնորհակալ աշխատանք:

Գրքի երկու առաջաբանում Ժ. Դեդեյանը և Ի. Տերնոնն անդրադարձել են համապատասխանաբար՝ Սիլիերի դիվանագիտական գործունեությանը և Աբդուլ Համիդ II-ի քաղաքականության վերլուծությանը XIX դ. 90-ական թվականներին (էջ 13-24, 25-35): Հուշերը տպագրության պատրաստելու ընթացքում Սիլիերը՝ ըստ իր հայեցողության կատարել է որոշ ծանոթագրություններ, որոնք մեծապես համալրել է Կ. Մուրադյանը (էջ 235-265): Դրանք ընթերցողին օգնում են ճիշտ կողմնորոշվելու Օսմանյան կայսրության և համիդյան կոտորածների պատմությանն առնչվող բազում խրթին առէջքներում: Եզրափակելուց առաջ, հարկ է փաստել, որ գիրքը կազմողներն այն նվիրել են ֆրանսիահայ պատմաբան, Հայկական հարցի մեծ գիտակ Արթուր Պեյլերյանի (1925-2005) հիշատակին՝ հարգանքի խորին տուրք մատուցելով նրան:

*Էջմիածին, 2010, թիվ Ժ, էջ 141-146*

**Ռուբէն Սաֆրաստեան, Օսմանեան կայսրութիւն. ցեղասպանութեան ծրագրի ծագումնաբանութիւնը (1876-1920 թթ.), Երեւան, Լուսակն հրատ., 2009, 248 էջ**

Պատմական գիտութեան տեսական մասնաճիւղերից մէկը՝ ցեղասպանութեան եւ զանգվածային բռնութիւնների երեւոյթն ուսումնասիրող ցեղասպանագիտութիւնը, որը շուրջ չորս տասնամեակի պատմութիւն ունի, մեր օրերում հասել է նշանակալից բարձունքների: Հայրենական պատմագիտական իրականութեան մէջ գիտութեան այս խրթին մասնաճիւղով հետաքրքրւում են, ցաւօք, սակաւաթիւ ուսումնասիրողներ: ՀՀ ԳԱԱ արեւելագիտութեան ինստիտուտի տնօրէն, պատմական գիտութիւնների դոկտոր Ռուբէն Սաֆրաստեանի մենագրութիւնը հայրենական պատմագիտութեան մէջ առաջին լուրջ ներդրումն է ցեղասպանագիտութեան որոշ հիմնահարցերի ուսումնասիրութեան բնագաւառում:

Վեց գլխից բաղկացած սոյն մենագրութեան մէջ՝ մեր հանրա-

պետութեան սահմաններից դուրս քաջ յայտնի թուրքագէտ Ռ. Սաֆրաստեանը հրատարակել է տեսական մի ուսումնասիրութիւն, որում, ի շարս տարբեր հիմնախնդիրների, հարուստ աղբիւրագիտական յենքի վրայ (այլալեզու տպագիր սկզբնաղբիւրներից բացի, հեղինակն օգտագործել է նաեւ հայրենական եւ ռուսական կենտրոնական արխիւներից քաղուած հարուստ նիւթեր) քննարկւում են գլխաւորապէս ցեղասպանութեան գաղափարի հասունացման, դրա նախադրեալների եւ ծրագրերի մշակման հետ կապուած որոշ առանձայատկութիւններ՝ Օսմանեան կայսրութեան պատմական փորձի վերլուծութեան հիման վրայ: Գրքի վերնագրից իսկ պարզ է դառնում, որ հեղինակի խնդիրն ամենեւին Հայոց ցեղասպանութեան քաղաքական պատմութեան ուսումնասիրութիւնը եւ կամ դրա փաստի հիմնաւորումը չէ, ինչն ի դէպ, նման անհրաժեշտութիւն ամենեւին չունի: Նա հետապնդում է բոլորովին այլ՝ Օսմանեան կայսրութեան տարածքում բռնութեամբ ընդգրկուած քրիստոնէայ հպատակների, մասնաւորապէս բուլղարացիների եւ հայերի նկատմամբ իրականացուած ցեղասպան քաղաքականութեան յենքի վրայ ցեղասպանութեանն՝ իբրեւ երեւոյթին առնչուող մեխանիզմների առաջացման, բացայայտման եւ վերլուծութեան նպատակ:

Ռ. Սաֆրաստեանի աշխատութեան արժանիքներից նշենք նախ՝ Օսմանեան կայսրութեան եւ բուլղարացիների ու հայերի նկատմամբ օսմանեան պետութեան վարած քաղաքականութեան պատմութեան հիմնախնդիրների քննարկումը միանգամայն նոր՝ համեմատական ցեղասպանագիտութեան նուաճումների տեսանկիւնից: Կանգ առնենք ցեղասպանագէտների շրջանում բուռն բանավէճերի տեղիք տուած հայեցակարգային դրոյթներից ամենաէականի՝ ցեղասպանութեան, իբրեւ երեւոյթի, սահմանման կնճռոտ խնդրում հեղինակի դիրքորոշման վրայ: Ռ. Սաֆրաստեանն իր նախորդներից համակարծիք է նրանց հետ (Ի.Լ. Հորոուից, Ֆ. Չոք եւ այլք), որոնք ցեղասպանութիւն են համարում էթնիկական ընդհանրութիւնների՝ միայն պետական քաղաքականութեան մակարդակով եւ կանխամտածուածութեան հիման վրայ իրականացուած բնաջնջումները: Մեր կողմից եւս ընդունելի այս իրատեսական հայեցակարգային յենքի վրայ են խարսխւում նրա՝

օսմանեան տարբեր վարչակարգերի մտայղացած՝ հպատակեցուած քրիստոնէայ ժողովուրդների, այդ թւում հայերի, բնաջնջման ծրագրերի քննարկումն ու համոզիչ եզրակացութիւնները:

Ի սկզբանէ մանրամասնենք ցեղասպանագիտութեան բնագաւառում հեղինակի ամենակարեւոր ներդրումը. քննարկելով կոտորածի, նախացեղասպանութեան եւ ցեղասպանութեան հիմնական տարբերութիւնները, որոնք պամանաւորում է պետական քաղաքականութեան բացակայութեամբ կամ առկայութեամբ, նա առաջադրում է «նախացեղասպանութիւն» եզրոյթի իր մեկնաբանութիւնը, որը ենթադրում է «ցեղասպանութիւն իրագործելու դիտաւորութեան (intent, intention) առկայութիւնը եւ այն իրագործելու նպատակով գործողութիւնների բացակայութիւնը» (էջ 40): Ցեղասպանութեան՝ իբրեւ երեւոյթի սահմանման խնդրում իրաւացիօրէն առաջնային նշանակութիւն յատկացնելով նաեւ դիտաւորութեան հանգամանքին՝ Ռ. Սաֆրաստեանը վերջինիս դրսեւորման միջոց է համարում ցեղասպանութեան ծրագրի գոյութեան իսկ փաստը այն պարագայում, երբ նոյնիսկ դա ամրագրուած չէ ծրագրային փաստաթղթերում: Ուստի՝ նա առաջադրում է «նախացեղասպանական իրավիճակ» հասկացութիւնը, որի պայմաններում թէեւ արդէն առկայ ցեղասպանութեան ծրագիրը դեռեւս վերջնականապէս չի ձեւակերպուել եւ չեն ընտրուել դրա իրականացման միջոցները, այնուամենայնիւ, այն ի վիճակի է վերաճելու «լայնածաւալ ցեղասպանական իրադրութեան»: Այս առնչութեամբ հեղինակը յանգում է հետաքրքիր հետեւութեան. «Նախացեղասպանական իրավիճակի պայմաններում ցեղասպանութիւնը հանդէս է գալիս որպէս քաղաքական խնդիրներ լուծելու հնարաւորութիւններից մէկը, բայց ոչ միակը» (էջ 43):

Ռ. Սաֆրաստեանն այս հիմնական տեսական դրոյթներից ելնելով է քննական վերլուծութեան ենթարկում օսմանեան վարչակարգերի՝ քրիստոնէաների նկատմամբ կիրառած քաղաքականութեան եւ նրանց զանգուածային բնաջնջումների համայնապատկերը շուրջ հարիւր տարուա կտրուածքով (1820-1920 թթ.): Անդրադառնալով տարբեր քրիստոնէայ ժողովուրդների հանդէպ իրականացուած ցեղասպան քաղաքականութեան նախադրեալներին, հեղինակն Օսմանեան կայսրութիւնում 1820-ական թուականներից ի վեր բարենորոգումների իրականացմանը միտուած

նկատելի տեղաշարժերը շաղկապում է այնպիսի էական հանգամանքների հետ, ինչպիսիք են Օսմանեան կայսրութեան տարածքային ամբողջականութեան պահպանման անհրաժեշտութիւնը եւ տարբեր ժողովուրդների մօտ նշմարուող ապստամբական եւ անջատողական միտումների կանխարգելումը: Նա մանրամասնօրէն ուսումնասիրում է «Թանզիմաթ» անուամբ յայտնի բարենորոգումների ժամանակաշրջանի երկու հիմնական փուլերի (համապատասխանաբար՝ ԺԹ. դ. 30-50-ական եւ 50-70-ական թուականներ) առանձնայատկութիւնները եւ բարենորոգումների իրականացմանը միտուած ծրագրերի մշակման ընթացքում օսմանեան տարբեր քաղաքական շրջանակներն ալեկոծած տարակարծութիւնների ուսումնասիրութեան յենքի վրայ ներկայացնում է օսմանիզմի գաղափարախոսութեան հասունացման գործընթացը:

Քրիստոնէայ հպատակների կացութեան կարծեցեալ բարելաւման նպատակ հետապնդող բարենորոգումների շրջանակում ընդունուած իրաւաբանական տարբեր փաստաթղթերի (1839 թ. Գիւլհանէի հրովարտակի, 1840 թ. քրէական օրէնքի) համադրման միջոցով, հեղինակը չնայած դրանցում ամրագրուած յօդուածները բնորոշում է իբրեւ դատարկ խոստումներ եւ փաստացի ապացուցում, որ Բարձր Դուռը «ռայաների» նկատմամբ շարունակում էր վարել «ճնշման եւ հալածանքի աւանդական» մեթոդները, այդուհանդերձ, փաստում է, որ «նոր գաղափարները աստիճանաբար ճանապարհ էին հարթում» (էջ 53):

Այդ մասին է վկայում Ռ. Սաֆրաստեանի ուշադրութեանն արժանացած Թանզիմաթի երկրորդ փուլի ընթացքում Ալի եւ Ֆուադ փաշաների՝ կայսրութեան բոլոր ժողովուրդների «միախառնման» եւ «միաձուլման» մշակած հայեցակարգը: Հեղինակը մատնանշում է դրա իրականացմանն ուղղուած նրանց նախանշած ուղիները (սկսած բոլոր ժողովուրդների միասնական դաստիարակութեան եւ կրթութեան անհրաժեշտութիւնից մինչեւ քրիստոնէաներին զօրակոչելու թոյլտուութեան ընձեռումը), բացայայտում նոր մօտեցումները (ոչ մահմեդականներին՝ սուլթանին եւ «օսմանեան հայրենիքին» հաւատարմութեան ոգով դաստիարակելու անհրաժեշտութիւնը), քննարկում է օրէնսդրական փաստաթղթերը՝ քրիստոնէաներին զինակոչելու վերաբերեալ սուլթանի 1855 թ. չկենսագործուած իրադէն, 1869 թ. օսմանահապատկութեան վերաբերեալ օրէնքը,

որի իմաստը, ըստ նրա մեկնաբանութեան, յանգում էր սոսկ ոչ թուրք ժողովուրդներին ազգային ինքնութիւնից զրկելուն: Ընդհանուր առմամբ, նա բարենորոգիչների նախաձեռնած քայլերը բնորոշում է իբրեւ քրիստոնէայ ժողովուրդների ուծացման փորձ (էջ 71): Հեղինակը մանրակրկիտ վերլուծում է նաեւ բարենորոգումների հակառակորդների՝ «նոր օսմանցիներ» անուամբ յայտնի ընդդիմադիր սահմանադրականների հայացքները, նրանց որդեգրած «օսմանեան ազգ» եւ «օսմանեան հայրենասիրութիւն» գաղափարական ու քաղաքական հայեցակարգերը եւ հաւաստում, որ դրանք, ըստ էութեան, հետապնդում էին կայսրութեան բնակչութեան թուրքացման նպատակ, ինչն իր արտացոլումն է գտել 1876 թ. օսմանեան սահմանադրութեան մէջ (էջ 91):

Ռ. Սաֆրաստեանի մենագրութեան առանցքային հիմնախնդիրներից է ԺԹ. դարի 70-ական թուականներին Օսմանեան կայսրութիւնում նախացեղասպանական իրավիճակի ձեւաւորումը, որը քննարկուած է համակողմանիօրէն: Համառօտակի անդրադառնալով կայսրութեան ծագումնաբանութեանը եւ զարգացման առանձնայատկութիւններին, նա մեծ տեղ է յատկացնում թուրքերին ի սկզբանէ բնորոշ եւ բացայայտորեն ընդգծուած հակաքրիստոնէական հաւաքական մտածողութեանը, որը ձեւաւորուել էր վաղ միջնադարից ի վեր, ռազմատենչ եւ կրօնական մոլեռանդութեան պայմաններում, իսկ շատ աւելի ցցուն դրսեւորուել բարենորոգումների ժամանկաշրջանում:

Վկայակոչելով դեռեւս ԺՋ. դ. սկզբում տարբեր այլազգիների հանդէպ օսմանեան գահակալներին միանգամայն բնորոշ այլատեացութեան փաստեր (նախորօք կազմակերպուած զանգուածային բնաջնջումներ, բռնի տեղահանութիւններ), մատնանշելով դրանց իրականացումը կանխամտածուածութեան հիման վրայ, Ռ. Սաֆրաստեանն, ըստ իր՝ վերը նշուած հայեցակարգի, դրանք իրաւամբ բնութագրում է որպէս ցեղասպան քաղաքականութեան դրսեւորումներ (էջ 114, 115). «Ցեղասպանութեան քաղաքականութիւնը Օսմանեան կայսրութիւնում ուներ խորը պատմական ակունքներ՝ ինչպէս բովանդակութեան, այնպէս էլ ձեւի տեսակէտից»,– նշում է նա (էջ 116): Գրքի առաջին գլխում հեղինակն ակնարկում է Ի. Լ. Հորոուցի առաջադրած «ցեղասպան

հասարակութիւն» հասկացողութիւնը (էջ 32)[523], որով, որքան տարօրինակ է, չի բնորոշում միջնադարեան օսմանեան հասարակութիւնը, թէեւ միաժամանակ աներկբայօրէն ապացուցում է նման հասարակութեան գոյութիւնն Օսմանեան կայսրութիւնում դարերից ի վեր:

Ինչ վերաբերում է 1876 թ. Օսմանեան կայսրութիւնում նախացեղասպանական իրավիճակի առաջացմանը, ապա դրան, հեղինակի համոզմամբ, մեծապէս նպաստել է թուրքերի մոտ արմատացած հակաքրիստոնէական տրամադրութիւնների աճը: Այս առումով յատկանշական է, որ առաջին անգամ օգտագործելով հայկական մամուլի հարուստ նիւթը, Ռ. Սաֆրաստեանը հիմնաւորում է 1859 թ. սուլթան Աբդուլ Մեջիդի դէմ կազմակերպուած «Քուլելիի» դաւադրութեան մասնակիցների հակաթանզիմաթական եւ հակաքրիստոնէական դիրքորոշումը (էջ 129):

Հեղինակի հիմնական նպատակներից է 1870-ական թուականներից մինչեւ 1920-ական թուականներն օսմանեան վարչակարգերի ընդունած ցեղասպանութեան ծրագրերի վերլուծութիւնը, որոնց թիրախն օսմանահպատակ բուլղարացիները եւ հայերն էին: Ռ. Սաֆրաստեանն այս ասպարէզում ունի մեծ ներդրում, քանզի առաջինն է ապացուցել, որ նման ծրագիր առաջին անգամ օսմանեան պետութիւնը՝ ի պատասխան 1876 թ. բուլղարացիների ապրիլեան ապստամբութեան, մշակել է դեռեւս 1876 թ. եւ որը թէեւ չի իրականացուել, այդուհանդերձ, նպատակաուղղուած է եղել բուլղար ժողովրդի ոչնչացմանը: Ռուսական արխիւներում յայտնաբերուած փաստաթղթերի, մասնաւորապէս Բուլղարիայում հաւատարմագրուած ռուս դիւանագէտների զեկուցագրերի մանրակրկիտ ուսումնասիրութեան յիման վրայ, նրան յաջողուել է յայտնաբերել ոչ միայն 1876 թ. մայիսին օսմանեան կառավարութեան կողմից ընդունուած՝ բուլղարացիներին ցեղասպանութեան ենթարկելու ծրագրին վերաբերող հաւաստի վկայութիւն-

[523] Ի. Լ. Հորուիցն իրաւամբ նշում է. «Ցեղասպան հասարակութիւնը տիրապետութեան միակ ձեւն է, որը մարդկանց պարբերաբար զրկում է կեանքից»: Տես *Horowitz I.L.*, Taking Lives. Genocide and State Power. Fifth Edition, Revised, New Brunswick & London, 2002, p. 154. Ի. Տերնոնն անդրադառնալով այս հարցին պարզաբանում է. «Ցեղասպան հասարակութիւններն այնպիսի հասարակութիւններ են, որտեղ պետութիւնն անխոչընդոտ տնօրինում է իր քաղաքացիների կեանքը»: Տես *Ternon* Y., L'État criminel. Les génocides au XX^e^ siècle, Paris, 1995, p. 72.

ներ, այլեւ բացայայտել դրա առանձնայատկութիւնները, ինչը նրան հիմք է տուել եզրակացնելու, որ ծրագրում նախանշուած «գործողութիւնների ընդհանրութիւնը բացայայտում է պետութեան դիտաւորութիւնը՝ բնաջնջել որոշակի էթնիկական խումբ եւ կարող է բնութագրուել որպէս ցեղասպանութիւն: Քանի որ, նրա նպատակն է բնաջնջել այդ խմբին իր հայրենիքի տարածքի վրայ, ապա այն կարելի է դիտարկել որպէս հայրենազրկման նպատակով իրականացուելիք ցեղասպանութիւն» (էջ 161-162): Միաժամանակ, քննարկելով 1870-ական թուականներին Օսմանեան կայսրութիւնում ստեղծուած ճգնաժամային իրավիճակը, հեղինակը յղելով բազմաբնոյթ սկզբնաղբիւրներ (ռուսական արխիւային վաւերագրերից բացի նաեւ հայկական մամուլի նիւթեր), յանգում է հետաքրքիր հետեւութեան. ըստ նրա՝ 1876 թ. վերջերին օսմանեան իշխանութիւնները «պատրաստւում էին կազմակերպել լայնածաւալ կոտորած նաեւ հայ ժողովրդի դէմ» (էջ 163):

Հիմնուելով ցեղասպանութեան՝ իբրեւ երեւոյթի իր հայեցակարգի վրայ՝ Ռ. Սաֆրաստեանը Հայոց ցեղասպանութիւնն իրաւամբ դիտում է իբրեւ օսմանեան երեք վարչակարգերի կողմից իրականացուած, շուրջ երեք տասնամեակ յարատեւած գործընթաց: Չնայած պաշտօնական փաստաթղթերի բացկայութեանը, նա, այդուհանդերձ, համոզմունք է յայտնում, որ «առաջին հակահայկական ցեղասպանական բնոյթի ծրագիրը» կեանքի է կոչուել դեռեւս 1890-ական թուականներին (էջ 167-168): Ցաւօք, հայեցակարգային իրատեսական այս մոտեցումը նա հիմնաւորում է սոսկ սակաւաթիվ վկայութիւններով (էջ 167)՝ անտեսելով արեւմտեան դիւանագէտների մեծաքանակ զեկուցագրերը, որոնք անառարկելիօրէն փաստում են հայկական կոտորածների իրականացումը պետական քաղաքականութեան մակարդակով եւ դիտաւորութեան հիման վրայ[524]:

Փոխարէնը, Ռ. Սաֆրաստեանը մանրամասնութեամբ քննարկում է 1915 թ. երիտթուրքերի ընդունած՝ հայ ժողովրդի

[524] Տես օրինակ Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, Paris, 1897 ; Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896, Paris, 1897 ; *Meyrier G.*, Les massacres de Diarbékir. Correspondance diplomatique du Vice-Consul de France 1894-1896. Présentée et annotée par C. Mouradian et M. Durand-Meyrier, Paris, 2000.

համատարած բնաջնջման նպատակ հետապնդող՝ մեզ հասած վաւերագրերը. յունուարին երիտթուրքերի պարագլուխների գաղտնի խորհրդակցութիւնում ընդունուած՝ «10 պատուիրաններ» փաստաթուղթը, որը նախանշում էր հայ ժողովրդի բնաջնջման եղանակները եւ միջոցները (զինուած ուժերի եւ թուրք ժողովրդի միջոցով հայերի ոչնչացում, տեղահանում եւ այլն), տեղահանութեանն առնչուող՝ «Նախարարների խորհրդի քննարկումների վերաբերեալ արձանագրութիւնը» եւ «Տեղահանութեան օրէնքը»: Հեղինակը փաստում է 1915 թ. առաջին կէսին Հայոց ցեղասպանութեան վերաբերյալ՝ օրէնքի տեսք ստացած միասնական եւ համակարգուած ծրագրային փաստաթղթի գոյութիւնը (էջ 172, 189): Ըստ այդմ՝ Ռ. Սաֆրաստեանն ապացուցում է նաեւ 1915 թ. հայ ժողովրդի բնաջնջման կազմակերպումը պետական քաղաքականութեան եւ կանխամտածուածութեան հիման վրայ:

Ելնելով Հայոց ցեղասպանութեան ժամանակագրական եզրերի իր հայեցակարգից, հեղինակն առաջին անգամ ուշադրութիւն է հրաւիրում, ըստ թուրքական սկզբնաղբյուրների, քեմալականների հայաջինջ քաղաքականութեանն առնչուող փաստաթղթերի վրայ, վերլուծում, մասնաւորապէս 1920 թ. նոյեմբերի 8-ին Արտաքին գործերի նախարարի պաշտօնակատար Մուհթար Բէյի ծածկագիրն Արեւելեան ռազմաճակատի հրամանատար Քեազըմ Քարաբեքիր փաշային, որը պարզորոշ բացայայտում է ոչ միայն հայ ժողովրդի ցեղասպանութիւնը շարունակելու, այլեւ Հայաստանը, որպէս պետութիւն, վերացնելու քեմալական Թուրքիայի մտադրութիւնը (էջ 191-194): Հայացք նետելով քեմալականների ծրագրերի հեռահար նպատակների ձախողման վրայ, հեղինակը յանգում է կարեւոր եւ այժմէական հետեւութեան. Հայաստանի ընգրկումը Խորհրդային կայսրութեան կազմում «հնարաւորութիւն տուեց հայ ժողովրդի մէկ հատուածին փրկուելու ֆիզիկական բնաջնջումից» (էջ 202):

Նշենք նաեւ, որ հեղինակի շարադրանքում երբեմն նկատւում են որոշ կրկնութիւններ, որոնցից նախընտրելի կը լինէր խուսափել:

Ռ. Սաֆրաստեանի մենագրութիւնը հետաքրիր, խորհրդածութիւնների տեղիք տուող, բովանդակալից ուսումնասիրութիւն է, որը հարստացնում է մեր գիտելիքները Հայոց ցեղասպանութեան

իրականացմանն առնչուող ծրագրային փաստաթղթերի, Օսմանեան կայսրութեան պատմութեան նուազ յայտնի կողմերի շուրջ, ինչպէս նաեւ ընդլայնում մեր պատկերացումները ցեղասպանագիտութեան ասպարէզում: Անտարակոյս, այն իր ուրոյն տեղը կը գտնի ոչ միայն հայրենական պատմագիտութեան մէջ, այլեւ ցեղասպանագիտական ուսումնասիրութիւնների շարքում:

*Հանդէս ամսօրեայ, 2010, թիվ 1-12, էջ 522-530*

**Հայկ Ղազարեան, *Մոսկուայի եւ Կարսի 1921 Թուականի Պայմանագրերն Ու Նրանց Ողբերգական Դերը Հայ Ժողովրդի Ճակատագրում*, Երեւան, Էդիթ Պրինտ, 2010, 985 էջ**

Պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Հայկ Ղազարեանն աւելի քան յիսուն տարի ուսումնասիրում է հայ ժողովրդի, մասնաւորապէս արեւմտահայութեան եւ Հայոց Ցեղասպանութեան պատմութեան հիմնախնդիրները[525]: Թէ՛ թեմատիկ եւ թէ՛ ժամանակագրական առումով գրախօսուող աշխատութիւնը հեղինակի՝ Հայոց Ցեղասպանութեան պատմութեանը նուիրուած երկհատոր մենագրութեան շարունակութիւնն է եւ ամբողջացնում է նրա հետազօտութիւնները հայ ժողովրդի մեծ ողբերգութեան ուսումնասիրութեան ասպարէզում:

Ի տարբերութիւն Հայոց Ցեղասպանութեան՝ վաղուց ի վեր ինքնուրոյն գիտական մասնաճիւղի վերածուած թեմայի, 1921ի Կարսի Պայմանագրի նախապատմութեան եւ պատմութեան ուսումնասիրութեան բնագաւառում Հայկ Ղազարեանն ունի հայրենական եւ արտասահմանեան սակաւաթիւ նախորդներ: Ըստ էութեան, նա ընթերցողի դատին է յանձնել հարցի պատմութեան առաջին մանրակրկիտ գիտական հետազօտութիւնը: Այս առումով,

[525] Տե՛ս օրինակ՝ *Հայկ Ղազարեան*, Արեւմտահայերի Սոցիալ-Տնտեսական Եւ Քաղաքական Կացութիւնը 1800-1870 թթ., Երեւան, ՀՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատ., 1967. *նաեւ*՝ Արեւմտահայութիւնը Ցեղասպանութեան Նախօրեակին, Երեւան, Տիգրան Մեծ, 2001. *նաեւ*՝ Հայ Ժողովրդի Ցեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում 1890-1922 թթ., Հտր. Ա., եւ Բ., Երեւան, Տիգրան Մեծ, 2004, (երկրորդ, վերամշակուած հրատարակութիւն՝ Երեւան, Տիգրան Մեծ, 2007):

յատկանշական է աշխատութեան գիտական կարեւորութիւնը, առաւել եւս, որ հեղինակը ցուցաբերում է համակողմանի մօտեցում՝ ուսումնասիրութեան նիւթ դարձնելով Կարսի պատմական ճակատագրին անմիջականօրէն կամ անուղղակիօրէն առնչուող բազմազան խնդիրներ: Նա դրանք քննարկում է մի կողմից, 1921ի Պայմանագրին նախորդած պատմական իրադարձութիւնների լայն յետնախորքի վրայ՝ սկսած հին եւ վաղ միջնադարից, իսկ միւս կողմից, Պայմանագրի կնքմանը յաջորդած տարբեր ժամանակաշրջաններում ծաւալուած միջազգային բարդ յարաբերութիւններում Կարսի տարածքի խնդրին առնչուող իրադարձութիւններով:

Մենագրութիւնը խարսխուած է աղբիւրագիտական հարուստ յենքի վրայ: Ղազարեանն օգտուելով ներկայ բարենպաստ պայմաններից, շրջանառութեան մէջ է դրել արխիւային նորայայտ փաստաթղթեր՝ քաղուած ռուսական կենտրոնական եւ հայկական տարբեր արխիւներից, ինչպէս նաեւ տպագիր մեծաքանակ վաւերագրեր, որոնց անաչառ գիտական վերլուծութիւնը նրան հնարաւորութիւն է ընձեռել պատմական ընդարձակ խճանկարի վրայ բացայայտել խիստ կարեւոր իրադարձութիւնների զարգացման՝ հայ ժողովրդի համար ոչ-այնքան բարենպաստ ընթացքի առանձնայատկութիւնները: Ի շարս նրա քննարկած բազմաթիւ հիմնահարցերի, սոյն գրախօսութեան մէջ խօսքը կը կենտրոնացնենք, մեր կարծիքով, դրանցից առաւել կարեւորների վրայ:

Հեղինակի հիմնական նպատակներից է անհերքելի փաստերի հիման վրայ ապացուցել, որ Կարսի տարածքն ի սկզբանէ եղել է Պատմական Հայաստանի անքակտելի մասը, իսկ դրա նկատմամբ Հայաստանի Հանրապետութեան տարբեր հարեւանների յաւակնութիւնները կատարելապէս հիմնազուրկ են: Նա համառօտակի ուրուագծում է Կարսի տարածքի պատմական անցեալը վաղ միջնադարից մինչեւ 1878ի Բեռլինի Վեհաժողովը, փաստում, որ «**պատմական, հայկական, հայրենական Վանանդ** գաւառի կենտրոնանիստն եղել է Կարս քաղաքը» (էջ 68)[526]: Կարսի հայկական, թուրքական եւ կամ նոյնիսկ վրացական լինելու հարցի վիճարկումը, իսկ աւելի ստոյգ՝ շահարկումը տարբեր ժամանակաշրջաններում, նա իրաւամբ համարում է Ի. դարի մեծ

[526] Այստեղ եւ այսուհետ՝ ընդգծումները հեղինակինն են:

տէրութիւնների միջեւ ծայր առած «քաղաքական-գաղափարական» մրցապայքարի արդիւնք, սկզբունքօրէն բացառելով այդ ցաւալի իրողութեան ակունքներում խարսխուած պատմական փոքր-իսկ հիմնաւորում: Ուստի օրինաչափ է, որ Ղազարեանը յետագայ շարադրանքում հզօր հակահարուած է տալիս 1940ականներին Իոսիֆ Ստալինի ցուցումով՝ վրաց պատմաբաններ Ս. Ջանաշիայի եւ Ն. Բերձենիշվիլու կողմից շրջանառութեան դրուած հակապատմական այն վարկածին, թէ Կարսի տարածքում ընդգրկուած Արդահանը, Արդուինը, Օլթին, Թորթումը, Իգդիրը, Բայբուրդը՝ 1921ին Թուրքիային հարկադրաբար զիջուած վրացական հողեր են, որոնք յետպատերազմեան ժամանակաշրջանում հարկ էր յանձնել ԽՍՀՄին, դրանք «օրինական» տիրոջը՝ Վրացական ԽՍՀին վերադարձնելու նպատակով: 1945ի Դեկտեմբերին խորհրդային կենտրոնական մամուլում նրանց տպագրած՝ «Թուրքիայից Ունեցած Մեր Օրինական Պահանջները» յօդուածի առնչութեամբ, հեղինակը կատարում է մի խիստ կարեւոր ճշգրտում՝ պարզաբանում, որ այդտեղ արտացոլուած փաստերը «ճշմարիտ էին, սակայն դրանք վերաբերում էին ոչ թէ Վրաստանին, այլ **Հայաստանին**» (էջ 439):

Պրոֆ. Ղազարեանի գրքի առանցքում հայ ժողովրդին պատկանող Կարսի տարածքի պատմական ճակատագրի խնդիրն է՝ դարերից ի վեր մինչեւ մեր օրերը: Նախ նա անկողմնակալօրէն բացայայտում է Կարս քաղաքի եւ Կարսի տարածքի հատած պատմական ուղին, ուշադրութիւնը կենտրոնացնելով, մասնաւորապէս, ԺԹ. դարում տեղի ունեցած անցքերի վրայ, ցաւով նշում, որ ռուսական զօրքերին երկար ժամանակ չէր յաջողւում Կարսի տարածքը վերամիաւորել Արեւելեան Հայաստանին: Ի դէպ, այս առիթով նկատենք, որ հեղինակը պարբերաբար մատնացոյց է անում Կարսի տարածքի իւրօրինակ դժնի ճակատագիրը, որը ռուս եւ խորհրդային տարբեր պետական գործիչներ Թուրքիայի հետ բանակցութիւնների ընթացքում դարձրել էին առուծախի առարկայ: Նա շեշտում է, որ եթէ Ղրիմի պատերազմից յետոյ Նիկոլայ Ա. կայսրը Կարսն իր գաւառով վերադարձրել է թուրքերին՝ Սեւաստոպոլի զիջման դիմաց (էջ 129), ապա ազգութեամբ վրացի խորհրդային գործիչները (Ստալին, Բ. Մդիւանի, Սերգօ Օրջոնիկիձէ) յետագայում այն յանձնել են Թուրքիային՝ ի

փոխհատուցում Վրաստանի կազմում ընդգրկուած Բաթումի տարածքի (էջ 288, 438):

Հայկ Ղազարեանը նշանակալից տեղ է յատկացնում Արեւելեան Հայաստանին Կարսի վերամիաւորումը սկզբնաւորած Բեռլինի Վեհաժողովի ընդունած պայմանագրին, ըստ որի՝ 1639ի Կասրէ-Շիրինի պայմանագրով Թուրքիային զիջուած Կարսն ընդգրկուեց Ռուսաստանի կազմում, որին յաջորդեց Կարսի Մարզի ձեւաւորումը, եւ մեկնաբանում է վարչական այս նոր միաւորի աշխարհագրական առանձնայատկութիւններին, ազգաբնակչութեան կազմին եւ յարակից հարցերին առնչուող զանազան մանրամասներ:

Հեղինակն յատուկ ուշադրութիւն է դարձնում Առաջին Աշխարհամարտին յաջորդած ժամանակահատուածում՝ 1918-1923ին, Կարսի շուրջ ծագած խրթին, հայ ժողովրդի համար ողբերգական հետեւանքների յանգեցրած տարբեր բանակցութիւնների ընթացքի յստակեցմանն ու անաչառ վերլուծութեանը: Նա հիմնաւորապէս բացայայտում է Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ Թուրքիայում դիրքերն ամրապնդած քեմալականների վարած զաւթողական քաղաքականութեան դիմագիծը 1918ից ի վեր: Նրանք խախտելով Բրեստում եւ Երզնկայում ձեռք բերուած պայմանաւորուածութիւնները, հետեւողականօրէն հետամուտ էին ամբողջ Անդրկովկասի նուաճմանը (էջ 137, 141, 179-181): Վերջիններիս լայնածաւալ ռազմական գործողութիւնների շրջանակում Հայկ Ղազարեանը մանրամասնօրէն ներկայացնում է 1918ի Ապրիլին առանց դիմադրութեան Կարսի բերդի յանձնման հանգամանքները: Արդիւնքում, «Կարսի Մարզի, յատկապէս ամրակուռ քաղաքի դաւաճանական յանձնումը» (էջ 152), 1918ի Յունիսի 4ի Բաթումի պարտութողական պայմանագիրը, ըստ որի՝ Կարսի ամբողջ մարզը տրւում էր թուրքերին, նա մեկնաբանում է Անդրկովկասեան կառավարութեան՝ պատերազմական գործողութիւններ վարելու անկարողութեամբ (էջ 151)[527]:

[527] Հայաստանի Հանրապետութիւնն իբրեւ պետութիւն վերացնելու քեմալականների մտադրութիւնը՝ ըստ թուրքական սկզբնաղբիւրների, վերջերս հաւաստել է նաեւ Ռուբէն Սաֆրաստեանը (*Ռուբէն Սաֆրաստեան*, Օսմանեան Կայսրութիւն. Ցեղասպանութեան Ծրագրի Ծագումնաբանութիւնը (1876-1920 թթ.), Երեւան, Լուսակն Հրատ., 2009, էջ 191-194):

1920ը, անկասկած, առաւել ճակատագրական է եղել ոչ միայն Կարսի Մարզի, այլեւ ամբողջ հայ ժողովրդի համար: Վերլուծելով 1920ի թուրք-հայկական պատերազմի սանձազերծման ու ընթացքի հանգամանքները թէ՛ դիւանագիտական եւ թէ՛ ռազմական տեսանկիւններից, Ղազարեանը եւս մէկ անգամ շեշտում է, այդ թւում՝ ըստ թուրքական սկզբնաղբիւրների, քեմալականների վճռակամութիւնն՝ ի չիք դարձնելու միջազգային պայմանագրերում (մասնաւորապէս Սեւրի) ամրագրուած հայանպաստ որոշումները, եւ հայկական պետութիւնը ոչնչացնելու նրանց անզիջում ցանկութիւնը (էջ 184-185, 237-238):

Այստեղ, սակայն, հարկ է մանրամասնել, որ խորհրդային իշխանութեան տարիներին այս հարցի շուրջ ուսումնասիրութիւնների իրականացումն անկողմնակալ դիրքերից բացառուած էր՝ խորհրդային գրաքննական կապանքների պատճառով, քանզի նման պարագայում, պատմաբանները հարկադրուած կը լինէին հատել տիրապետող գաղափարախօսութեան սահմանազրերը, ինչը բացառուած էր: Նախկին գաղափարական խոչընդոտներից զերծ հեղինակն անկողմնակալօրէն մեկնաբանում է 1920ի պատերազմում քեմալականների հիմնական յաղթաթղթերից մէկը՝ բոլշեւիկեան Ռուսաստանի բարոյական, նիւթական եւ ռազմական օգնութիւնը: Թէպէտ նա չի թաքցնում, որ առճակատող կողմերի ռազմական հնարաւորութիւններն անհաւասար էին, այդուհանդերձ, միանգամայն իրաւացիօրէն իբրեւ Հայաստանի Հանրապետութեան «**անփառունակ պարտութեան գլխաւոր պատճառ**» առանձնացնում է «**դասակարգային հակամարտութիւնները, բոլշեւիկներից խաբուելը, համաշխարհային յեղափոխութեան սին պատրանքներին տրուելը**» (էջ 188): Խօսքը վերաբերում է, մասնաւորապէս, հայ բոլշեւիկների վարքագծին, որոնք խաբուելով «յեղափոխական» քեմալականների դատարկ յայտարարութիւններով, ջանում էին, փաստօրէն, նպաստել նրանց յաղթանակին՝ հետապնդելով Անդրկովկասի արագ խորհրդայնացման նպատակ (էջ 188-189): Միաժամանակ, Հայկ Ղազարեանը ցուցաբերելով անաչառ վերաբերմունք խարազանում է նաեւ դաշնակցական կառավարութեան պատուիրակներին, որոնք Ալեքսանդր Խատիսեանի գլխաւորութեամբ 1920ի Դեկտեմբերի 2ին Ալեքսանդրապոլում «**ապօրինի կերպով Հա-**

**յաստանը ստրկացնող**» հաշտութիւն կնքեցին թուրքերի հետ (էջ 203), չունենալով դրա համար նուազագոյն իսկ իրաւաբանական հիմք, քանի որ նրանց կառավարութիւնն արդէն տապալուած էր: «**Դրանով իսկ**,– եզրակացնում է նա,– **հայկական պատուիրակները մի նոր յանցաւոր քայլ են կատարում հայ ժողովրդի հանդէպ**» (էջ 203):

Այս երկու կտրուածքով է Հայկ Ղազարեանը քննարկում 1920ի ռուս-թուրքական եւ ռուս-հայկական յարաբերութիւնների զարգացման ընթացքը, որը եւ կանխորոշել է 1921ի Մարտի 16ի Մոսկուայի չարաբաստիկ Պայմանագրի կնքումը: Աղբիւրագիտական լայն յենքի, այդ թւում արխիւային նորայայտ փաստաթղթերի ուսումնասիրութեան հիման վրայ, նա բարեխղճօրէն վերլուծում է քեմալականների եւ ռուս բոլշեւիկների միջեւ դիւանագիտական յարաբերութիւնների հաստատումն ու նշում, որ Խորհրդային Ռուսաստանն առաջինն է 1920ին ճանաչել Անկարայի կառավարութիւնը: Հեղինակը մեկնաբանում է Լենինի կողմից քեմալականներին հսկայ դրամական եւ ռազմական օգնութիւն ցուցաբերելու հիմնական պատճառը՝ համաշխարհային ծաւալի սոցիալիստական յեղափոխութեան յաղթանակի ցնորական գաղափարը, չվարանելով մատնանշել, որ դա «կատարուել է Հայաստանի ու հայ ժողովրդի հաշուին» (էջ 249): Միաժամանակ, ընդգծելով Լենինի հետ բանակցող Մուստաֆա Քեմալի պատուիրակների լկտիութիւնը, նա փաստում է 1920ի Օգոստոսին բոլշեւիկների առաջնորդի դրական դիրքորոշումը՝ Հայաստանի Հանրապետութեան վրայ քեմալականների կողմից նախապատրաստուող յարձակման իրականացման առնչութեամբ (էջ 254): Համաձայն ենք, պրոֆ. Ղազարեանի հետեւութեանը, թէ՝ չնայած բանակցութիւնների անյաջող աւարտին, բանակցող կողմերի միջեւ առկայ հակասութիւնները նուազ էին նրանց միաւորող գործօններից: Այս անհաւասարակշռութիւնից հմտօրէն օգտւում էր քեմալականների պարագլուխը:

Միեւնոյն ժամանակամիջոցում ընթացող հայ-ռուսական բանակցութիւնների կապակցութեամբ Հայկ Ղազարեանն ի դերեւ է հանում ոչ միայն բոլշեւիկեան Ռուսաստանի՝ Հայաստանի անկախութիւնը պաշտօնապէս ճանաչելու չկամութիւնը, այլեւ 1920ի Հոկտեմբերի 28ին ստորագրուած եզրափակիչ որոշման

անարդիւնաւէտութիւնը, ինչը մեկնաբանում է թուրք-հայկական պատերազմում Հայաստանի պարտութեամբ, ինչպես նաեւ Մոսկուայում Լեւոն Շանթի գլխաւորութեամբ գործող հայկական պատուիրակութեան դիւանագիտական ցածր ունակութիւններով: Այս առումով, հեղինակը միանգամայն տեղին յանդիմանական խօսքեր է ուղղում հայկական պատուիրակութեան անդամների հասցէին, որոնց անհեռատեսութիւնը բացայայտում է դեռեւս 1920ի Մայիս-Յունիս ամիսներին Մոսկուայում ընթացող բանակցութիւնների յետնախորքի վրայ, երբ վերջիններս մերժել են Խորհրդային Ռուսաստանի Արտաքին Ժողկոմի տեղակալ Լեւոն Կարախանի՝ Վանի, Մուշի եւ Բիթլիսի վիլայէթները Հայաստանի Հանրապետութեանը միացնելու պատրաստակամութիւնը (էջ 241):

Պրոֆ. Ղազարեանն առանց տուրք տալու անհարկի յոյզերի՝ գիտական վերլուծութեան է ենթարկում եւ 1921ի Մարտի 16ի Մոսկուայի, եւ 1921ի Հոկտեմբերի 13ի Կարսի Պայմանագրերի կնքումը պայմանաւորող նախապայմաններն ու հայ ժողովրդին պատկանող պատմական տարածքի զգալի մասի ճակատագիրն ապօրինաբար տնօրինած դրանց բնագրերը: Հաւաստի փաստերի հիման վրայ նա բացայայտում է Լենինի եւ նրա զինակիցների (մասնաւորապէս Ստալինի) ղեկավար դերակատարութիւնը Կարսի տարածքը քեմալականներին յանձնելու հարցում, մատնանշում, որ բոլշեւիկեան պետութեան ղեկավարը Կարսը համարելով թուրքական քաղաք, այն քեմալականներին զիջելու վճիռը կայացրել էր դեռեւս 1920ի Դեկտեմբերին (էջ 272-273): Նրա հիմնական հետեւութիւնն այս առնչութեամբ հատու է. «Հայաստանը համաշխարհային յեղափոխութեան զոհասեղանին ողջակիզելու քաղաքականութիւնը» սկզբնաւորել էր Լենինը (էջ 271):

Ինչ վերաբերում է Մոսկուայի Պայմանագրին, որով Խորհրդային Ռուսաստանի կառավարութիւնն առանց Հայաստանի ներկայացուցիչների համաձայնութեան, նոյնիսկ մասնակցութեան, ոչ միայն Թուրքիային էր զիջում Կարսի, Արդահանի եւ Արդուինի տարածքները, իսկ Նախիջեւանի Մարզը նուիրաբերում Խորհրդային Ադրբեջանին, այլեւ «**ապօրինաբար չեղեալ էր յայտարարում համաեւրոպական, նոյնիսկ համաշխարհային այնպիսի որոշումներ, որոնք ժամանակին ստորագրել էր նաեւ Թուրքիայի**

**օրինաւոր կառավարութիւնը**», ապա Հայկ Ղազարեանն այն բնորոշում է իբրեւ «աղէտ» Հայաստանի համար (էջ 286, 290): Նա իր համոզմունքն է յայտնում, որ այս պայմանագիրը դարձել է Կարսի Պայմանագիր ընդունուած որոշումների ատաղձը:

Յիրաւի, անդրկովկասեան երեք հանրապետութիւնների ներկայացուցիչների եւ քեմալականների միջեւ Խորհրդային Ռուսաստանի միջնորդութեամբ կայացած Կարսի Խորհրդաժողովը, փաստօրէն, ընդամէնը վաւերացրել է Մոսկուայի Պայմանագրի հիմնական դրոյթները: Հեղինակը փաստում է, որ այս պայմանագրով չեղեալ էր յայտարարւում Սեւրի Դաշնագիրը, Կարսի Մարզը յանձնւում էր քեմալականներին, իսկ Նախիջեւանը՝ Ադրբեջանին: Մենք սակայն, հարկ ենք համարում արժեւորել Հայկ Ղազարեանի խիստ այժմէական մեկնաբանութիւններից մէկը, որով նա անհերքելիօրէն բացայայտում է Մոսկուայի եւ Կարսի պայմանագրերի անօրինական բնոյթն իրաւաբանական տեսակէտից: Հետաքրքիր է նրա մեկնաբանութիւնն առ այն, որ 1921ին գոյութիւնը դեռեւս յարատեւող Օսմանեան Կայսրութեան օրինական կառավարութիւնը չէր մասնակցում Մոսկուայի Պայմանագրի ստորագրմանը, իսկ բոլշեւիկներն առանց նրա «պաշտօնական համաձայնութեան ու ստորագրութեան» նրան էին զիջում Հայաստանին պատկանող տարածքները (էջ 325), ինչը վերջնականապէս ամրագրուեց Կարսի Պայմանագրում: «Յիշեալ հանգամանքների ուժով,– նշում է նա,– Մոսկուայի Պայմանագիրն անօրինական էր եւ չէր կարող դառնալ 1921ի Հոկտեմբերի 13ին Կարսում կնքուելիք պայմանագրի հիմք: Սրան պէտք է աւելացնել նաեւ այն, որ Օսմանեան Կայսրութիւնը ներկայացնող կառավարութիւնը 1920ի Օգոստոսի 10ին կնքել էր Սեւրի Պայմանագիրը եւ այն Մոսկուայի Պայմանագրի կնքման պահին ոչ վերացրել էր, ոչ էլ դրանից հրաժարուել» (էջ 325): Ըստ Ղազարեանի իրատեսական հետեւութիւններին՝ ակնյայտ է դառնում, որ Կարսի Մարզը քեմալականներին նուիրաբերող պայմանագրերը միանգամայն անօրինական էին:

Հայկ Ղազարեանի մենագրութեան ամենահետաքրքրական կողմերից է Երկրորդ Աշխարհամարտից յետոյ Ստալինի նախաձեռնութեամբ Կարսի տարածքի առնչութեամբ ԽՍՀՄ պահանջատիրութեան հարցի մանրազնին վերլուծութիւնը (այս

խնդրին նուիրուած են մենագրութեան երկու ծաւալուն գլուխներ): Խիստ դժգոհ Թուրքիայի երկդիմի քաղաքականութիւնից պատերազմի տարիներին՝ խորհրդային ղեկավարը հարց է բարձրացրել՝ 1925ի Դեկտեմբերի 17ի խորհրդա-թուրքական բարեկամութեան եւ չէզոքութեան մասին պայմանագրի վերանայման եւ երկու պետութիւնների միջեւ 1914ի սահմանների վերականգնման անհրաժեշտութեան: Առաւել ողջունելի է հեղինակի իրականացրած աշխատանքն այս հարցի լուսաբանման կապակցութեամբ, քանի որ այն եւս խորհրդային պատմագրութեան կողմից խնամքով շրջանցուել է լռութեամբ, իսկ նրա սակաւաթիւ նախորդներ (Իւ Տերնոն, Եուրի Բարսեղով եւ այլք) սահմանափակուել են, ըստ էութեան, համառօտ դիտարկումներով: Փոխարէնը, պրոֆ. Ղազարեանը տարբեր կտրուածքներով հիմնաւորապէս քննարկում է Թուրքիայի, ըստ էութեան, հակախորհրդային քաղաքականութիւնը պատերազմի տարիներին, թէ՛ ԽՍՀՄում եւ թէ՛ Սփիւռքում բնակուող հայ ժողովրդի լայն զանգուածների, խորհրդահայ պետական բարձրաստիճան դէմքերի (մասնաւորապէս՝ ՀԿ(բ)Կ ԿԿ առաջին քարտուղար Գ. Յարութիւնեանի), Հայոց Եկեղեցու ղեկավար գործիչների գործադրած ջանքերը՝ Կարսը ՀԽՍՀին վերամիաւորելու համար: Այս առնչութեամբ, մանրամասնենք Հայկ Ղազարեանի, մեր կարծիքով, առաւել էական երկու դիտարկում.

1. Ըստ նրա՝ տուեալ հարցի արծարծումը միջազգային ասպարէզում ամէնեւին պայմանաւորուած չէր Ստալինի կարծեցեալ հայասիրութեամբ, հակառակ դէպքում, ինչպէս ապացուցում է հեղինակը, նա ջանք ու եռանդ չէր գործադրի Կարսի տարածքի մեծ մասի միաւորումը Վրացական ԽՍՀին հիմնաւորելու համար:

2. Խորհրդային Միութեան պահանջը, որն օրակարգից պաշտօնապէս հանուեց միայն 1953ին՝ Ստալինի մահից յետոյ, մնաց անիրականալի մեծ տէրութիւնների, մասնաւորապէս 1945ի Օգոստոսին միջուկային զէնքի փորձարկման արդիւնքում միջազգային ասպարէզում դիրքերը շեշտակիօրէն ամրապնդած ԱՄՆի հակազդեցութեան հետեւանքով:

Համառօտակի նշենք նաեւ, որ գրախօսուող աշխատութեան մէջ պրոֆ. Ղազարեանը բազմիցս անդրադառնում է Հայոց Ցեղասպանութեան պատմութեան ուսումնասիրութեան համար մեծ կարեւորութիւն ունեցող՝ վիճայարոյց խնդիրներից մէկին,

Ցեղասպանութեան ժամանակագրական պարագծերին: Ինչպէս Հայոց Ցեղասպանութեան պատմութեան եւ ցեղասպանութեան՝ իբրեւ երեւոյթի մի շարք նշանաւոր մասնագէտներ (Մուսա Պրանս, Իրուին Լ. Հորովից, Մկրտիչ Ներսիսեան, Եուրի Բարսեղով եւ այլք), նա եւս Հայոց Ցեղասպանութիւնը գերադասում է դիտել իբրեւ փուլային զարգացում ունեցած իրադարձութիւն, առանձնացնելով դրա իրականացման երեք հիմնական շրջափուլեր՝ համիդեան, երիտթուրքական եւ քեմալական: Անհերքելի բազմապիսի փաստերի վկայակոչմամբ հեղինակը պարբերաբար հիմնաւորում է 1918-1920ի թուրքական տարբեր արշաւանքների ընթացքում Պատմական Հայաստանի, այդ թւում Արեւելեան Հայաստանի տարածքում քեմալականների իրականացրած հայ ժողովրդի զանգուածային բնաջնջումները՝ կանխամտածուածութեան հիման վրայ, որը ցեղասպանութեան՝ իբրեւ երեւոյթի հիմնական բաղադրիչներից է: Օրինաչափ ենք համարում նրա հիմնական եզրակացութիւններից մէկը, ըստ որի՝ 1920ին ազգայնամոլ քեմալականների ծրագրած արշաւանքն «**օրգանական շարունակութիւնն էր երիտասարդ թուրքերի վարած ցեղասպանութեան քաղաքականութեան**» (էջ 185): Քեմալականների կողմից հայ ժողովրդի ոչնչացումը նա բնորոշում է իբրեւ Հայոց Ցեղասպանութեան երրորդ շրջափուլ (էջ 251): Հիմնահարցի նման մեկնաբանութիւնը մենք հակուած ենք դասելու հեղինակի արժանիքների շարքը:

Պէտք է առանձնացնել պրոֆ. Ղազարեանի մօտեցման եւս մէկ առաւելութիւն. նա պարբերաբար ընդգծում է ոչ միայն հայերի, այլեւ Օսմանեան Կայսրութեան տարածքում բնակուած ազգային այլ փոքրամասնութիւնների՝ քրդերի, եզդիների, մասնաւորապէս յոյների հանդէպ քեմալականների վարած քաղաքականութեան ցեղասպան բնոյթը (էջ 133-134, 227): Արդիւնքում, ընթերցողի առջեւ յառնում է Օսմանեան, յիրաւի, ցեղասպան Պետութեան յանցագործ դիմագիծը, որի ղեկավար գործիչները, անկախ քաղաքական պատկանելիութիւնից, 1910-1920ի սահմանագծին այլազգի հպատակների նկատմամբ ի յայտ բերած այլատեացութեամբ ոչնչով չէին զիջում իրենց նախորդներին:

Գրքի ընդարձակ երկրորդ բաժնում (էջ 499-976) ընթերցողը կարող է ծանօթանալ Կարսի տարածքի համար բախտորոշ

նշանակութիւն ունեցած բոլոր պայմանագրերի բնագրերին տարբեր լեզուներով՝ սկսած Բեռլինի Վեհաժողովի ընդունած պայմանագրից մինչեւ Կարսի Պայմանագիրը: Բացի դրանից, քանի որ մենագրութեան մէջ Հայկ Ղազարեանը ոչ միայն մեկնաբանել է Կարսին առնչուող բանակցային գործընթացները յետպատերազմական ժամանակաշրջանում, այլեւ իր քաղաքացիական պարտքն է համարել հայեացք նետել նմանապես արդի փուլում ընթացող քաղաքական գործընթացների, հայ-թուրքական վերջերս կայացած բանակցութիւնների վրայ եւ յայտնել է, ի դէպ, իր ժխտական դիրքորոշումը նման պայմանաւորուածութեան կայացման շուրջ (էջ 496), գրքի երկրորդ մասում հրապարակել է Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի միջեւ 2009-2010ին դիւանագիտական բանակցութիւնների ընթացքը լուսաբանող մեծաթիւ հետաքրքիր վաւերագրեր (էջ 805-976): Դրանց թւում նպատակայարմար ենք գտնում առանձնացնել 2009ի Ապրիլի 22ին Շուէյցարիայում ստորագրուած «Ճանապարհային Քարտէզ»ը, 2009ի Օգոստոսի 31ին Շուէյցարիայում ընդունուած «Հայ-Թուրքական Արձանագրութիւնները», «Հայաստանի Հանրապետութեան Եւ Թուրքիայի Միջեւ 2009ի Հոկտեմբերի 10ին Ցիւրիխում Ստորագրուած Արձանագրութիւնները»:

Կասկածից վեր է պրոֆեսոր Հայկ Ղազարեանի գրքի քաղաքական նշանակութիւնը, որը Հայաստանի պետական եւ քաղաքական գործիչներին կարող է օժանդակել ճիշտ կողմնորոշուելու Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութեան կերտման քառուղիներում: Միաժամանակ, խիստ այժմէական հնչեղութիւն ունեցող նրա մենագրութիւնն, անկասկած, իր ուրոյն եւ մնայուն տեղը կը գրաւի Հայկական Հարցի եւ Հայոց Ցեղասպանութեան պատմագրութեան մէջ: Անտարակոյս, այն շահեկան է նաեւ ընթերցող լայն հասարակութեան համար, քանզի ընդլայնում է մեր գիտելիքները հայ ժողովրդի պատմութեան խիստ կարեւոր, սակայն, ըստ էութեան, յաւուր պատշաճի չուսումնասիրուած այս թեմայի ասպարէզում:

*Հայկազեան հայագիտական հանդէս,*
*2011, հ. ԼԱ., էջ 700-707*

**Ցեղասպանագիտական հանդես, գլխավոր խմբագիր՝ Հայկ Դեմոյան, 2013, թիվ 1, 176 էջ**

**Revue des études du génocide, rédacteur en chef Hayk Démoyan, 2013, n° 1, 176 p.**

Le Musée-Institut du génocide des Arméniens de l'Académie des sciences de la République d'Arménie a fondé une nouvelle revue scientifique, consacrée aux études du génocide. Tout d'abord, je salue l'initiative de cette organisation, d'autant plus que la revue a un objet relativement étroit. Ses éditeurs ont réuni dans ce numéro la majorité des textes des communications que les historiens de différents pays avaient présentées au colloque international convoqué à Erevan au mois d'avril 2009, à l'occasion du centenaire des massacres ciliciens de 1909.

Certes, les vêpres ciliciennes demeurent toujours le parent pauvre de l'historiographie du génocide des Arméniens dans l'Empire ottoman ; c'est dommage, mais nous ne possédons à l'heure actuelle que trois monographies[528]. Donc, la publication de ce numéro de la revue recensée ici est sans doute une contribution importante qui comble des lacunes dans ce domaine. Elle comprend dix-huit articles rédigés en arménien, en français et en anglais, dont les auteurs sont les représentants de l'Arménie, de la France, des États-Unis, de l'Autriche, de la Hongrie et de la Syrie. Comme leurs articles sont consacrés à différents problèmes et sujets, je tâcherai de les classer, dans la mesure du possible, en ordre thématique.

On sait que les sources étrangères, surtout celles des archives, se distinguent par leur impartialité, ce qui a conditionné leur grande valeur dans l'étude du génocide des Arméniens. Dès lors, la majorité des chercheurs préfère rédiger les études plutôt sur la base des attestations des témoins oculaires étrangers que des sources d'origine arménienne. Il est donc bienvenu que cette édition comprenne deux publications dont les auteurs

[528] *Kévorkian R.H.*, avec la collaboration de Paboudjian P.B., Les massacres de Cilicie d'avril 1909 // La Cilicie (1909-1921). Des massacres d'Adana au mandat français. Volume préparé par Raymond H. Kévorkian, Paris, 1999 ; *Simonyan H.*, Les massacres en masse des Arméniens en Cilicie (en avril de 1909), Erevan, 2009 (en arménien) ; voir aussi sa traduction anglaise : London, 2012 ; *Poghosyan V.*, Les massacres de 1909 en Cilicie à travers le prisme de l'historiographie française, Erevan, 2009 (en arménien).

ont présenté le déroulement des massacres ciliciens à travers des sources italiennes et autrichiennes. Aramaïs Baloyan se réfère aux documents diplomatiques italiens, dont la grande majorité a été déjà publiée en Italie ; or, il a utilisé aussi quelques documents inédits tirés des Archives de la politique extérieure de l'Italie. La correspondance des diplomates italiens accrédités dans l'Empire ottoman jette certainement une lumière sur le cours de ces massacres, mais ce qui est beaucoup plus appréciable, c'est qu'elle a permis à l'auteur de relever le rôle décisif du gouvernement jeune-turc dans leur organisation (p. 24-25).

Artem Ohandjanian, notre collègue autrichien, a publié en traduction arménienne douze rapports de Daras, Consul d'Autriche-Hongrie à Mersine, qui a décrit principalement le processus des massacres dans différents lieux de la Cilicie. Rappelons qu'il les avait déjà publiés en allemand[529].

En dehors des documents des archives, il nous faut placer parmi les sources de valeur concernant les massacres ciliciens la presse européenne et arménienne, dont l'étude demeure toujours très insuffisante. Dans ces conditions, les éditeurs de la revue ont eu raison d'y insérer deux articles. Éva Merénics, chercheuse hongroise, a analysé en profondeur les articles de trois journaux austro-hongrois, à savoir *Neue Freie Presse* (Vienne), *Pester Lloyd* (Budapest) et *Prager Tagblatt* (Prague). Leur analyse lui a permis de tirer quelques intéressantes conclusions : *primo*, les nombreuses publications de la presse austro-hongroise témoignent de l'intérêt des journalistes et des lecteurs de ce pays à l'égard de « cet épisode tragique de l'histoire du peuple arménien », ce qui prouve leur solidarité avec les Arméniens ; *secundo*, la provocation des Arméniens est exclue ; *tertio*, le rôle des Jeunes-Turcs et d'Abdhülhamid II est évident ; *quarto*, l'intervention des grandes puissances n'a été dictée que par la nécessité de la protection de leurs citoyens. L'auteur a également le mérite d'avoir incéré dans l'appendice de son article une bibliographie contenant les titres de 117 articles publiés dans ces journaux, du mois d'avril au mois de juin 1909.

La contribution de Tatévik Ghaltakhchyan appréhende les échos des massacres dans les journaux arméniens publiés à Constantinople et à

---

[529] *Ohandjanian A.*, Das Massaker in Adana, 1909 Adana olaylari/makaleler. The Adana Incidents of 1909 Revisited, Ankara, 2011, s. 227-233.

Smyrne. Elle aborde bien des problèmes dont je vais présenter les plus importants. D'après les publications des journaux, l'auteur a relevé de profonds changements dans l'attitude des Arméniens envers les organisateurs des massacres. Comme elle le note, dès le début les éditeurs des journaux, ainsi que les auteurs des articles, avaient imputé la responsabilité des massacres au régime hamidien ; or, elle souligne les modifications positives évidentes que leur position a subies un peu plus tard. Donc, la plupart des publications prouvent, d'après son récit, que les contemporains arméniens avaient déjà compris le rôle décisif des Jeunes-Turcs (p. 67). Il y a lieu de citer parmi ses thèses celle de la réfutation par les auteurs des articles de la fausse version de la « culpabilité » des Arméniens. D'ailleurs, ces accusations infondées incriminent une soi-disant « rébellion » arménienne qui aurait contrait le gouvernement ottoman à rétablir l'ordre et qui aurait eu « certaines conséquences défavorables » ; elles avaient été avancées dès le début des massacres par les organisateurs locaux de ce carnage[530].

Le reflet des massacres ciliciens dans la littérature turque, y compris la presse, rédigées en caractères arméniens, a fait l'objet de l'article de Hasmik Stepanyan. Or, c'est plutôt un article informatif qu'analytique, car l'auteur s'abstient d'interpréter les approches des éditeurs de ces journaux à propos des événements clefs. En fin de compte, il est tout simplement impossible de se faire une idée de leur attitude sur tout ce qui s'est passé en Cilicie, ainsi que de celle des auteurs des livres dont elle ne cite que les titres (p. 140).

Il me semble qu'il est pertinent d'incérer dans ce même cadre l'article de l'auteur de ces lignes sur l'historiographie française des massacres ciliciens, car la plupart des éditions françaises qui y sont analysées, avaient été publiées dans les années 1910 et ont toujours une valeur incontestable de source authentique. Il s'agit en premier lieu du recueil de documents *Les Turcs ont passé là…*, publié en 1911 par G. Brézol, ainsi que des livrets et des articles des contemporains français, comme A. Adossidès, J. d'Annezay, G. Vayssié et d'autres. En dépit de quelques explications inacceptables de ces auteurs, surtout à propos des organisateurs des massacres (étant privé de la possibilité de se faire une idée complète sur les événements dont ils

[530] Voir *Poghosyan V.*, op. cit., p. 38.

ont été les témoins, quelques-uns d'entre eux ont préféré rejeter la responsabilité des massacres sur Abdhülhamid II), ils ont pu par contre, brosser le tableau véridique des massacres non seulement en Cilicie, mais aussi dans le *vilayet* d'Alep.

L'un des thèmes les moins étudiés dans l'historiographie des vêpres ciliciennes est celui des échos des massacres ciliciens dans la littérature arménienne. Rubina Peroomian, historienne américaine, nous a présenté sa vision de la poétique de la violence des massacres d'Adana dans la littérature arménienne occidentale de l'époque. Elle a étudié le reflet du processus génocidaire des Arméniens depuis les années 1890 à travers les vers et les poèmes d'éminents poètes comme Siamanto, Varoujean et d'autres. L'auteur en conclut que ce thème est demeuré bien longtemps à l'ombre des répercussions que le « génocide de 1915 » avait eues suscitées (p. 117).

Verjiné Svazlian, en se référant à l'un de ses livres contenant des preuves testimoniales des survivants des massacres ciliciens, a montré la place qu'ils occupaient dans la mémoire historique des Arméniens.

Les articles d'Yves Ternon et de Raymond Kévorkian, éminents spécialistes du génocide des Arméniens, se distinguent par une approche théorique et analytique. R. Kévorkian a discuté le thème de *La gestion des massacres de Cilicie* à travers une minutieuse étude des réactions des autorités centrales ottomanes et des milieux arméniens à l'égard des massacres de 1909. C'est là l'originalité de son approche en général, qui est propre à ses études sur le génocide des Arméniens. Il a interprété le sujet discuté dans un cadre assez vaste, en examinant d'abord les péripéties de l'attitude des autorités centrales ottomanes après les massacres. R. Kévorkian a le mérite de souligner la culpabilité du gouvernement jeune-turc : comme il le note, « au tournant du XIX$^{e}$ siècle, aucun acte de cette ampleur ne pouvait avoir lieu sans un ordre venu, ou supposé venu, des plus hautes autorités de l'État ou, pour le moins, d'un des centres du pouvoir » (p. 42). Dans son ensemble, il a raison de qualifier de « paradoxale » l'approche de ceux qui rejetaient la responsabilité des massacres sur Abdhülhamid II. Or, il me semble qu'il faut également prendre en considération le fait que la majorité écrasante des contemporains des massacres, arméniens ou étrangers, n'étaient pas encore capables de s'orienter correctement dans

les mutations politiques ayant bouleversé l'Empire ottoman en 1908-1909.

Dans l'article intitulé *Cilicie 1909. Était-il possible de percevoir une menace de génocide ?*, publié dans ma traduction arménienne, Y. Ternon, en relatant brièvement des événements bien connus, constate « qu'en 1909 un degré a été franchi dans la violence de masse » (p. 160). Quant à la question posée dans le titre de l'article, il a exprimé sa certitude sur l'impossibilité de prévoir, de la part des futures victimes, l'anéantissement du peuple arménien. Précisons d'ailleurs, qu'on peut en trouver également une allusion dans l'article déjà cité de T. Ghaltakhchyan (p. 59). À travers l'interprétation des événements ultérieurs, Y. Ternon a constaté l'absence chez les assassins, d'un programme de « banc d'essai d'une future extermination » (p. 160). Il n'a pas omis non plus le dévoilement des organisateurs des massacres. Cependant, à la différence de R. Kévorkian, son approche est plus modérée. « Même si le CUP n'a pas suscité ce déferlement de violence, écrit-il, il y a collaboré à l'échelon régional » (p. 161). Il est plus qu'évident que, en tout cas, l'auteur révèle la responsabilité du gouvernement jeune-turc.

Les causes des massacres ont été étudiées par Hayk Démoyan et Suren Manoukyan. En concentrant l'attention sur les causes psychologiques, H. Démoyan a raison d'avoir accentué l'atmosphère défavorable créée à la veille des massacres par les organisateurs de ceux-ci : il s'agit de l'organisation de provocations, de désinformations et de la stimulation de l'intolérance religieuse chez les musulmans (p. 35). Par contre, S. Manoukyan analyse les particularités du développement économique de la région grâce au support des financiers européens, dont les résultats se faisaient sentir surtout dans la modernisation de l'agriculture. Celle-ci est devenue, d'après lui, l'une des causes principales de l'approfondissement de la haine des Turcs envers les Arméniens, qui avaient utilisé de nouvelles technologies, comme les tracteurs, etc. Les succès des Arméniens dans cette sphère ont contribué, comme il le croit, à la modification de leur statut social, ce qui n'a pas échappé à l'attention des Turcs, devenant l'une des causes principales de leur extermination. Je partage complètement ses explications fondées et convaincantes.

Nombre d'auteurs ont abordé les conséquences néfastes de ces massacres pour les Arméniens. Si H. Démoyan a mis en évidence les aspects

psychologiques graves de ces massacres, qui avaient laissé leur empreinte sur les survivants, en attirant l'attention sur de nombreux faits de suicide et de folie (p. 39), Arpiné Babloumyan a étudié les changements démographiques dans les *vilayets* d'Adana et d'Alep. D'après l'analyse des sources d'origine arménienne et étrangère, elle a non seulement constaté que le nombre des victimes arméniens y a dépassé le chiffre de 30.000, mais elle a noté en même temps, qu'il était indispensable de prendre en considération une autre circonstance, qui n'était pas moins importante, c'est qu'il était nécessaire d'ajouter à ce chiffre le nombre de ceux qui étaient morts plus tard, soit des blessures reçues, soit des maladies contractées. Une autre conséquence déplorable des massacres se trouve aussi au centre de son attention, celle de l'émigration des survivants arméniens dont les vêpres ciliciennes sont devenues la cause. En fin de compte, comme elle le note à juste titre, toute la région a été dépeuplée de l'écrasante majorité de ses habitants arméniens.

Haroutioun Selimyan, de Syrie, en imputant toute la responsabilité des massacres de 1909 au gouvernement des Jeunes-Turcs, a étudié les pertes des évangélistes arméniens (p. 128). D'après ses calculs, les églises et les établissements évangéliques des Arméniens de Cilicie ont perdu cinquante pour cent de leurs leaders religieux et laïques (p. 132).

Quelques auteurs ont étudié des sujets plus particuliers, dont l'importance est néanmoins hors de doute. L'article de Séda Parsamyan est consacré à la destruction des églises, des couvents et des écoles appartenant aux Arméniens. Elle note que lors de ces massacres, on les a soit détruits, soit incendiés, et ce processus a atteint son apogée lors de la deuxième période des massacres. Après le premier raz-de-marée, des milliers Arméniens avaient trouvé asile dans leurs églises, et c'était cette circonstance qui était devenue l'une des causes principales de ces actions barbares. Certes, d'après les données officielles, citées par l'auteur, on avait incendié dans le *vilayet* d'Adana vingt-quatre églises et seize écoles ; or elle n'a pas hésité à noter que le nombre exact des pertes n'était pas encore précisé à ce jour (p. 103). Elle a sans doute raison de n'avoir pas livré à l'oubli la destruction par les Turcs des établissements religieux appartenant aux Assyriens et aux Jésuites français.

L'article d'Ani Voskanyan touche la participation de l'armée ottomane

aux massacres. D'après des sources fiables, elle révèle le rôle non seulement des *rédifs*, soldats de réserve, mais aussi des détachements de l'armée régulière dans la perpétration des massacres. L'auteur décrit en détail la participation des soldats turcs non seulement aux massacres, mais aussi au pillage des biens des victimes, surtout lors de leur deuxième étape. En rejetant toute la responsabilité de l'extermination des Arméniens sur le gouvernement des Jeunes-Turcs, elle a dévoilé également le rôle d'Abdhülhamid II et de ses créatures, chefs locaux du *vilayet* d'Adana (p. 142), et c'est indubitablement l'avantage de son approche historique. Il n'est pas inutile de préciser que la participation de l'armée ottomane aux massacres a été partiellement reflétée aussi dans les articles d'autres auteurs, comme Y. Ternon, A. Baloyan, T. Ghaltakhchyan et S. Parsamyan.

Anna Aleksanyan et Aram Mirzoyan ont choisi comme objet de leurs recherches l'activité des organisations arméniennes en Cilicie après les massacres, dans le but d'améliorer la situation intenable des survivants. À la suite de Zapel Essayan et d'Archarouni Téodik, A. Aleksanyan a décrit les efforts du Patriarcat arménien de Constantinople et d'autres organisations arméniennes, visant à soutenir leurs compatriotes, à savoir ouvrir pour eux des orphelinats et des écoles. Des femmes arméniennes ont pu même aider dans la mesure du possible quelques-uns des Arméniens mis injustement en état d'arrestation. D'après les données d'A. Mirzoyan, on a réuni 1.426 enfants dans les orphelinats qu'on avait ouverts depuis le mois d'août jusqu'en novembre dans différentes villes, comme Marache, Hadjin, Aïntab, Hassanbeyli, Deurt-Yol (p. 95). En discutant l'activité des orphelinats arméniens, l'auteur a mentionné en même temps l'existence et l'activité de ceux qui avaient été fondés par les Européens et les Américains. Or, il remarque qu'en dépit de conditions plus confortables pour les orphelins arméniens rassemblés dans ces derniers, ils étaient toutefois éloignés de leurs racines nationales (p. 96).

Il nous faut noter, avant de conclure, qu'en dépit de l'unanimité de la position objective de tous les auteurs à l'égard des massacres ciliciens de 1909, qui ont prouvé de manière irréfutable leur réalité et la culpabilité des Jeunes-Turcs, leurs points de vue divergent quant aux questions particulières, mais très importantes, voire conceptuelles. Nombre d'entre eux, comme A. Aleksanyan, A. Mirzoyan, T. Ghaltakhchyan, H. Stepanyan, A.

Voskanyan, qualifient de coup d'État les événements de 1908 ayant eu lieu dans l'Empire ottoman (pp. 7, 59, 92, 140, 142). Par contre, S. Manoukyan a raison, à mon avis, de les avoir traités de révolution (p. 74). Si l'on discute ce problème d'après l'approche des théoriciens soviétiques marxistes, la destitution d'Abdhülhamid II et la prise du pouvoir par le Comité Union et Progrès n'étaient en réalité qu'une révolution bourgeoise, réalisée dans le cadre de la même formation sociale et économique. Certes, à la différence de la révolution anglaise du XVII^e^ siècle et de la Révolution française du XVIII^e^ siècle, ayant contribué au passage à une nouvelle formation sociale et économique, la révolution turque de 1908 a été accomplie dans le cadre de la même formation, et c'est pourquoi il est préférable de la classer dans la catégorie des révolutions bourgeoises, qui n'ont pas laissé de traces dans les conditions sociales et économiques d'un pays ou d'un autre[531].

Les limites chronologiques du génocide des Arméniens avaient suscité depuis longtemps beaucoup de débats dans l'historiographie de ce thème, et les différentes approches conceptuelles avaient certainement laissé leur profonde empreinte sur les récits de ces auteurs. Ceux-ci ne sont pas enclins à considérer le processus génocidaire conçu, organisé et perpétré par des différents régimes ottomans contre le peuple arménien à la limite du XIX^e^ et du XX^e^ siècle, d'événement unique, ayant trois étapes principales (hamidienne, jeune-turque et kémaliste). Or, la plupart des historiens arméniens contemporains, ainsi que quelques éminents chercheurs étrangers, comme Irving Louis Horowitz, Yehuda Bauer et Yuri Barsegov s'en tient à ce point de vue.

Quelques-uns des auteurs n'ont même pas émis d'opinion à ce sujet ; par contre, beaucoup d'autres (A. Aleksanyan, H. Demoyan, A. Mirzoyan, S. Parsamyan, R. Peroomian, H. Selimyan) ne qualifient l'extermination en masse des Arméniens dans les années 1890 que de « massacres » (pp. 7, 34, 92, 98, 105, 128). Quelques autres limitent le génocide des Arméniens aux années 1915-1923 (pp. 15, 98, 148). À vrai dire, il m'est très difficile d'avancer des explications à propos de ce dernier point de vue, infondé et inacceptable pour moi. Si les historiens contemporains, principalement français et américains, parlent du génocide des Arméniens, c'est à dire de 1915-1916, ils

---

[531] Sur la typologie des révolutions bourgeoises voir *Barg M., Tcherniak E.*, Les grandes révolutions sociales du XVII^e^ et du XVIII^e^ siècle, Moscou, 1990, p. 224 (en russe).

motivent leur approche par des preuves fondées (le désir des Jeunes-Turcs de créer un État national, l'adoption par eux de l'idéologie de turcisation, etc.). Néanmoins, leurs arguments ne sont pas acceptables pour tous les historiens, y compris l'auteur de ces lignes ; toutefois, ils peuvent être sujets à réflexion.

Quant aux vêpres de 1909, j'ai noté dans mon article susmentionné que les historiens français contemporains n'avaient pas l'intention de les inclure dans le processus du génocide des Arméniens (p. 127). Une telle approche a été partiellement reflétée dans l'article d'Y. Ternon. Or, il croit qu'on est en droit de les traiter d'« entreprise génocidaire à un échelon local », et de les concevoir « comme un prélude du génocide de 1915 » (pp. 160, 161). On peut dire que le point de vue de R. Peroomian, d'après lequel « les massacres de 1909 présentent le microcosme du génocide de 1915 » (p. 117), s'approche en fait de celui de l'historien français. En somme, il en est de même de l'approche d'A. Voskanyan qui a qualifié les massacres ciliciens de 1909 de point de départ pour la réalisation des projets génocidaires ultérieurs des Jeunes-Turcs (p. 147).

Un autre problème discutable est la précision du nombre des victimes, qui n'est pas encore définitivement déterminé ; c'est pour cette raison que les chiffres avancés par quelques-uns des auteurs (A. Babloumyan, A. Baloyan, T. Ghaltakhchyan, H. Selimyan, A. Voskanyan) ne sont point compatibles ; ils oscillent entre 30.000 et 40.000 (pp. 17, 24, 59, 131, 142, 165) ; ce fait est également propre aux études de beaucoup de chercheurs connus (Vahagn Dadrian, Hratchik Simonyan, R. Kévorkian et d'autres).

Dans son ensemble, la réunion dans le même numéro de la revue des articles dont les auteurs avancent différents points de vue, est sans doute le résultat des changements positifs qui ont récemment ébranlé la réalité scientifique arménienne. Je me dois de saluer cette nouveauté, qui est la preuve la plus spectaculaire de l'émergence de la liberté de la pensée en Arménie.

À travers notre brève présentation, on peut s'apercevoir que la majorité des auteurs ont mis en évidence l'extermination des Arméniens de Cilicie sur le niveau étatique et ils ont à la fois dévoilé irréfutablement le rôle décisif des Jeunes-Turcs dans leur organisation, ce qui est hors de doute. Cependant, aussi étonnant que ce soit, c'est la réalité et l'actualité de cette circonstance se fait toujours sentir. Depuis les années 1910 à nos jours, les organisateurs des massacres ciliciens, ainsi que les falsificateurs

de leur histoire, ont fait tout le possible pour nier la responsabilité des autorités centrales ottomanes dans leur perpétration[532]. Dans ce sens, l'actualité de cette édition est indéniable et la réfutation de cette tendance négationniste lui assurera un succès parfaitement mérité dans les milieux scientifiques.

*Հայագիտության հարցեր, 2014, թիվ 2, էջ 218-224*

**Haïganouche Grkacharian, Hadjn, si on t'oublie… Mémoires, Chamigny, Le cercle d'écrits caucasiens, 2012, 259 p.**

**Հայկանուշ Կրկյաշարյան, Հաճն, եթե քեզ մոռանում են… Հուշեր, Շամինյի, Կովկասյան աշխատությունների կենտրոն, 2012, 259 էջ**

Կիլիկյան կոտորածների պատմությունը համալրվեց ևս մեկ գրքով՝ նվիրված Հայոց ցեղասպանության տարիներին Հաճն քաղաքի հայ բնակչության դառը ճակատագրին: Հայկանուշ Կրկյաշարյանը թղթին է հանձնել 1909-1920 թթ. հաճնաբնակ հայությանը բաժին հասած ողբերգական իրադարձությունների նկարագրությունները՝ օգտագործելով արժանահավատ սկզբնաղբյուրներ, այդ թվում կոտորածների՝ ֆրանսիացի ժամանակակիցների հուշեր և պատմագիտական հետաքրքիր ուսումնասիրություններ, ինչպես նաև դժնդակ փորձությունների միջով անցած կիլիկիահայ իր ծնողների՝ Ասատուր և Սարա Սաչյանների հաղորդած տեղեկությունները (էջ 17): Կասկածից վեր է, որ պատմական եղելություններին և երևույթներին հեղինակի տված գնահատականներով հագեցած այս հրատարակությունն ունի ոչ միայն պատմագիտական, այլև աղբյուրագիտական նշանակություն: Այդուհանդերձ, ի սկզբանե հարկ ենք համարում պար-

[532] Voir *Poghosyan V.*, op. cit., p. 10-11 ; voir aussi : *Tetsuya S.*, A Hidden Adana: Dispute Over the Armenian Landownership on the Eve of the Adana Incident 1909, 1909 Adana olaylari/ makaleler. The Adana Incidents of 1909 Revisited, p. 87-126; *Dennis B.*, The Evaluation of the Interpretation the Adana Massacres of 1909: Towards an Understanding of the Political Dynamics and Motivations for Violence, *ibid*, p. 127-153.

զաբանել, որ նպատակահարմար չենք գտնում գրախոսվող գիրքը համարել «հուշեր»՝ բառի դասական իմաստով, թեև այն վավերացված է տիտղոսաթերթին:

Հ. Կրկյաշարյանը ներկայացնում է բազմապիսի մանրամասներ, որոնք առնչվում են մասնավորապես կիլիկիահայերի՝ 1915 թ. տեղահանությանը, Սիրիայի համակենտրոնացման ճամբարներում ապաստանած հայերի դժնդակ կացությանը, բռնագաղթի հետևանքով ընտանիքի անդամներին ամբողջությամբ կամ մասամբ կորցրած և բնաջնջումից մազապուրծ եղած սակավաթիվ հայերի՝ Կիլիկիա՝ հայրենի երկիր վերադարձին 1919 թ., «այդտեղ իրենց սպիներն ամոքելու և, եթե հնարավոր է, նոր կյանք վերսկսելու համար» (էջ 15), ինչպես նաև 1920 թ. Հաճնի հերոսական ինքնապաշտպանությանը:

Համառոտակի անդրադառնալով X-XI դարերում հիմնադրված Հաճն քաղաքի անցյալին, որտեղ ի սկզբանե հայեր են բնակվել, հեղինակը անդրադառնում է հատկապես XIX դարի երկրորդ կեսին հայ մանկավարժների այնտեղ ծավալած բեղուն գործունեությունը՝ չանտեսելով նաև բողոքական ու կաթոլիկ հոգևոր գործիչների և օտարերկրյա միսիոներների դերը դպրոցներ և արհեստանոցներ հիմնելու հարցում: Նա բարձր գնահատականի է արժանացնում երկու երկսեռ որբանոցներ հիմնադրած ամերիկուհի միսիոներներ Մարի Ջերբերի և Ռոզ Լամբերթի (1878-1974) հայանպաստ գործունեությունը, շեշտում հետագայում աշխարհով մեկ սփռված հայ վերապրածների՝ նրանց հանդեպ տածած երախտագիտության խոր զգացումը (էջ 27)[533]: Հեղինակը միաժամանակ չի զլանում ըստ իր մոր պատումների հաղորդելու նաև հաճնաբնակ հայերի բարքերին և կենցաղին առնչվող որոշ հետաքրքիր մանրամասներ:

---

[533] Ռոզ Լամբերթի՝ թե՛ Հաճնի 1909 թ. պաշարման ժամանակ և թե՛ դրանից հետո այնտեղ ծավալած բեղուն գործունեությանը բարձր գնահատական է տվել կիլիկյան իրադարձությունների ականատես անգլիացի Ֆերիման Դաքեթը: Տե՛ս Turkish Atrocities. The Young Turks and the Truth about the Holocaust at Adana in Asia Minor, during April, 1909. Written and compiled by Ferriman Duckett, Yerevan, 2009, p. 47: Նշենք, որ Ռ. Լամբերթը 1909 թ. Հաճնի ինքնապաշտպանության մասին թողել է անկողմնակալ և հետաքրքիր հուշեր. տե՛ս *Lambert R.*, Hadjin, *and* the Armenian massacres, New York, 1911: Տե՛ս նաև ֆրանսերեն թարգմանությունը՝ *Lambert R.*, Hadjine et les massacres des Arméniens, Chamigny, 2009:

Հ. Կրկյաշարյանը համառոտակի անդրադարձներ է կատարում Հայոց ցեղասպանության տարբեր փուլերին՝ 1894-1896 թթ., 1909 թ. կոտորածներին, Հայոց մեծ եղեռնին, քեմալականների հայատյաց քաղաքականությանը, որոնք բացահայտում են իրադարձության առանձնահատկություններին առնչվող նրա մոտեցումները: Նա շեշտում է մասնավորապես Աբդուլ Համիդ II-ի գահակալության օրոք բացարձակ միապետության ամրապնդումն Օսմանյան կայսրությունում, պանիսլամականության գաղափարախոսության որդեգրումը, բոլոր օսմանահպատակ ժողովուրդների նկատմամբ օսմանյան իշխանությունների կիրառած «կառավարական բռնակալական քաղաքականությունը» (էջ 53), ինչպես նաև փաստում Հաճնում բնակվող հայերի հանդեպ բարձրաստիճան թուրք պաշտոնյաների հալածանքների վերսկսումը 1880-ական թվականներից (էջ 55):

XIX դարի 90-ական թվականներին սկիզբ առած Հայոց ցեղասպանության շարունակական գործընթացը բնութագրելով իբրև «հայերի ծավալուն կոտորածներ» (էջ 26)՝ նա դրանց սանձազերծումն իրավամբ պայմանավորում է Հայկական հարցին «լուծում տալու» Աբդուլ Համիդ II-ի մտադրությամբ և հանգում միակ հնարավոր հետևության. «Աբդուլ Համիդ II-ին անվանեցին «կարմիր սուլթան»՝ հայերին կոտորելու հրաման արձակելու համար» (էջ 59): Ցավոք, նա չի մատնանշում ֆրանսիացի ականավոր պատմաբան Ալբեր Վանդալի անունը, որն առաջինն է սուլթանին բնորոշել իբրև այդպիսին[534]:

Նշենք նաև, որ ինչ վերաբերում է համիդյան կոտորածների ժամանակաշրջանում արևմտահայությանը սատարած եվրոպացի մտավորականներին և քաղաքական գործիչներին, ապա հեղինակը հիշատակում է սոսկ Ժան Ժորեսի անունը՝ փաստելով, սակայն, որ նա իր բողոքը հայտնել է կոտորածներից հետո (էջ 59): Իրականում Ժորեսը ֆրանսիական խորհրդարանում ծավալել է հայանպաստ բեղուն գործունեություն 1890-ական թվականների կոտորածներին զուգընթաց և իր ելույթներում պարբերաբար ու

[534] Les Arméniens et la réforme de la Turquie. Conférence faite par M. Albert Vandal de l'Académie française dans la salle de la Société de Géographie. Le 2 février 1897, Paris, 1897, p. 13.

հետևողականորեն նշավակել սուլթանին, անվարան անարգանքի սյունին գամել օսմանյան կառավարությանը հայերի բնաջնջման առնչությամբ[535]:

Գրքում հպանցիկ արտացոլված են նաև 1909 թ. կիլիկիահայության կոտորածները, որը բնաջնջումից խուսափել էր 1890-ական թվականներին: Հ. Կրկյաշարյանը դրանց պատասխանատվությունն իրավամբ վերագրում է 1908 թ. հեղափոխության հետևանքով Օսմանյան կայսրությունում իշխանության եկած երիտթուրքական վարչակարգին՝ չշրջանցեով նաև համիդյան տապալված վարչակարգի կողմնակիցների մասնակցությունը: Ըստ նրա իրատեսական, հակիրճ և ընդգրկուն մեկնաբանության՝ երիտթուրքերը «ոչ միայն ոչինչ չարեցին 1909 թ. ապրիլին Կիլիկիայում տեղի ունեցած կոտորածները խոչընդոտելու համար, որոնք իրականացրին հին վարչակարգի կողմնակիցները, այլև դրանք ղեկավարեցին» (էջ 73): Շրջանցելով իրադարձության մանրամասները, հեղինակն ուշադրությունը կենտրոնացնում է հաճնաբնակ հայերի 1909 թ. ինքնապաշտպանության վրա, որի շնորհիվ քաղաքի հայ բնակչությունը խուսափել է զանգվածային ոչնչացումից: Հաճնի դիմադրությունն անվանելով «հերոսական» (էջ 69)՝ նա արժևորում է մասնավորապես Ռոզ Լամբերթի դերը (էջ 68):

Թեև Հ. Կրկյաշարյանը, ինչպես տեսանք, միանշանակորեն փաստում է արևմտահայության ոչնչացումը պետական քաղաքականության մակարդակով 1894-1909 թթ., որը ցեղասպանության՝ իբրև երևույթի, հիմնական բաղադրիչներից է, այդուհանդերձ Հայոց ցեղասպանությունը ժամանակագրական առումով եզերում է 1915-1918 թթ. շրջանակներում, որը, ինչպես նա նշում է, իրականացվել է «երիտթուրք ազգայնամոլների կողմից» (էջ 14): Հայեցակարգային այս մոտեցումը նա հիմնավորում է ֆրանսիական ժամանակակից պատմագրությանը բնորոշ դիրքերից՝ կարևորելով երիտթուրքերի որդեգրած պանթուրքականության գաղափարախոսությունը, որը դարձել էր նրանց «արտաքին և ներքին քաղաքականության առանցքը» ու դրդել նրանց հետամուտ լինելու «Թուրքիան՝ թուրքերին»

[535] Տես *Պողոսյան Վ.*, Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ), երկրորդ, բարեփոխված հրատարակություն, Երևան, 2011, էջ 220-228:

կարգախոսին (էջ 74)։ Փաստերով հիմնավորելով 1911 թ. ի վեր երիտթուրքերի՝ հայերին բնաջնջելու հետևողական դիրքորոշումը՝ հեղինակն Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումը համարում է հարմար առիթ Թալեաթի, Էնվերի ու Ջեմալի՝ հայ ժողովրդին ոչնչացնելու նպատակներն իրականացնելու համար (էջ 75)։ Բացահայտելով մասնավորապես Թալեաթի ղեկավար դերակատարությունը 1915 թ. արևմտահայության համատարած բնաջնջման գործում՝ հեղինակը եզրակացնում է. «Մարդկության դեմ մեծ ոճիրն իր գագաթնակետին հասավ բոլոր նահանգներից արևմտահայերի զանգվածային տեղահանությամբ և կոտորածով» (էջ 77)։

Այս պայմաններում Հ. Կրկյաշարյանը համընդհանուր հենքի վրա քննարկում է նաև ռազմական գործողությունների գոտուց հեռու գտնվող Կիլիկիայի հայության նկատմամբ բռնություններն ու տեղահանությունները, մատնանշում, որ Զեյթունի հայությանը տեղահանելուց հետո միայն թուրքական զինված ուժերը մտան Հաճն և օսմանյան տեղական պաշտոնյաների աջակցությամբ կազմակերպեցին քաղաքի հայ բնակչության տեղահանությունը, շեշտում երիտթուրք պաշտոնյա Ավնի բեյի ղեկավար դերը (էջ 80-84)։ Հենվելով հոր պատումների վրա՝ նա անդրադառնում է 1915 թ. հունիս-սեպտեմբերին քաղաքի բնակչության տեղահանությանն առնչվող զանազան մանրամասների, միաժամանակ փաստում էական մի հանգամանք. տեղահանված հայերի տներում օսմանյան կառավարության նախաձեռնությամբ մոհաջիրներ էին բնակեցվում (էջ 90)։ Այս փաստն անսքող մերկացնում է երիտթուրքերի ազգայնամոլ քաղաքականության բուն դիմագիծը։

Այդուհանդերձ, առավել հետաքրքրական են տեղահանված կիլիկիահայերին բաժին հասած տառապանքնեի նկարագրությունները, որոնց նրանք ենթարկվել են իրենց բնակավայրից մինչև սիրիական անապատներ հասնելու ընթացքում։ Հ. Կրկյաշարյանը հանգամանալից ներկայացնում է այն դժոխային պայմանները (պարբերաբար կրկնվող կողոպուտներ և աղջիկների առևանգում, համաճարակներ և այլն), որոնց միջով անցել են հայերը Հաճն-Հալեպ-Բաբ-Մեսքենե-Ռաքա ճանապարհին։ Ըստ նրա պատումի՝ Սիրիայի համակենտրոնացման ճամբարներում հանգրվանածների կացությունը ևս խիստ վատթար էր։ Ի շարս

այլ հանգամանքների՝ մասնավորապես Տեր Զորում տեղի ունեցած հայերի կոտորածների, հարկ ենք համարում առանձնացնել Հայոց ցեղասպանությանը բնորոշ առանձնահատկություններից մեկի՝ բռնի կրոնափոխության ընդգծումը հեղինակի կողմից 1917 թ. Ռաքայում (էջ 144, 147): Նա նաև ի ցույց է դնում որոշ արաբ երևելիների բարյացակամ վերաբերմունքը և նրանց ցուցաբերած մեծահոգությունը հայերի նկատմամբ (էջ 149-150, 154):

Հ. Կրկյաշարյանի պատումի առանցքում տեղ գտած հաջորդ կարևոր դրվագը 1920 թ. Հաճնի ինքնապաշտպանությունն է, ուր 1919 թ. Ռաքքայի համակենտրոնացման ճամբարից վերադարձել էին կոտորածներից հրաշքով փրկված հաճնցիները: Ի դեպ, նա 1920 թ. դեպքերն անվարան գնահատում է իբրև հայերի ողբերգության ամենագարշելի դրվագ (էջ 14-15): Նկատենք, որ համանման նողկալի դրվագներ բազմիցս արձանագրվել են նաև Օսմանյան կայսրության այլ բնակավայրերում[536]: Հեղինակը վերստին մանրամասնորեն նկարագրում է թե՛ հայերի հերոսական ինքնապաշտպանությունը պաշարված Հաճնում, թե՛ քաղաքի բնակչության կոտորածն ու պաշտպանների փոքր մասի փախուստը: Այդպիսով, ինչպես նա նշում է, Հաճնի տասը հազար բնակիչներից փրկվել են ընդամենը չորս հարյուրը, այդ թվում՝ իր ապագա ծնողները (էջ 226):

Հեղինակը համառոտակի անդրադառնում է նաև Մերսին տեղափոխված հաճնցիների հետագա ճակատագրին, որոնք 1921 թ. հոկտեմբերի 20-ին Անգորայում կնքված ֆրանս-թուրքական համաձայնագրից հետո, ըստ որի ֆրանսիական զորքերը 1922 թ. հունվարին դուրս էին բերվելու Թուրքիայից, ելնելով իրենց դառը փորձից, գերադասել են մեկնել այլ երկրներ:

Փաստորեն, եթե պատմագիտական նվաճումների՝ մեր օրերի տեսանկյունից Հ. Կրկյաշարյանի պատումը գիտականության շրջանակներից դուրս է, այդուհանդերձ նրա անկողմնակալ և մանրակրկիտ նկարագրությունները մեծապես նպաստում են Հայոց ցեղասպանության տարիներին կիլիկիահայության ողբերգությունը ճանաչելուն:

*Հայագիտության հարցեր, 2015, թիվ 1, էջ 206-210*

[536] Մանրամասն տե՛ս *Kévorkian R.H.*, Le génocide des Arméniens, Paris, 2006.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք..... 5

**Հոդվածներ**

La discussion de la Question arménienne dans la Chambre des Députés dans les années 1890 ..... 9
Հայոց ցեղասպանութեան ընկալումը Անրի Բարբիի կողմից ..... 22
Համիդեան կոտորածների պատմութեան նենգափոխումը ֆրանսիական պատմագրութեան կողմից (Ի. դ. երկրորդ կէս – ԻԱ. դ. սկիզբ)..... 44
Համիդեան կոտորածները ֆրանսիական պատմագրութեան գնահատմամբ (Ի. դարի 70-ական թուականներ – ԻԱ. դարի սկիզբ)..... 63
Анатоль Леруа-Болье об армянских погромах 1890-х годов.....94
1909 թ. կիլիկյան կոտորածները ֆրանսիական պատմագրության քննական լույսի ներքո (համառոտ դիտարկումներ).....107
Հայոց ցեղասպանության Ռենե Պինոնի հայեցակարգը.....124
Հայոց ցեղասպանության հիմնախնդիրների լուսաբանումը կապիտան Սենյոբոսի կողմից.....140

**Հրապարակումներ**

Մի անտիպ փաստաթուղթ .....157
«Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի և նյութերի ժողովածուի լույս ընծայման նախապատմության շուրջ .....162
Ֆրանսիացի հայասէր գործիչները՝ Մատթէոս Իզմիրլեանի գնահատմամբ.....177
Հայ ժողովրդի եւրոպացի նվիրեալները՝ Գեւորգ Ե կաթողիկոսի գնահատմամբ.....185
Les massacres de Diarbékir de 1895 : regard d’une sœur franciscaine .....194

The Armenian Massacres of Cilicia in 1909 in the Elucidation of the “Times”.....217
Le chemin de croix parcouru par un religieux arménien .....230
Յոհաննես Լեփսիուսի նամակը Արշակ Չոպանյանին .....249
Новонайденные документы о бесчинствах и погромах кемалистов в Ахалкалакском уезде в 1921 г.....252

**Գրախոսություններ**

Y. Ternon, Mardin 1915. Anatomie pathologique d’une destruction.....261
Գուստավ Մեյրիեն համիդյան կոտորածների մասին.....269
Մ. Ներսիսյան, Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր.....279
Ն. Հովհաննիսյան, Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո .....287
H. Morgenthau, United States Diplomacy on the Bosporus: The Diaries of Ambassador Morgenthau, 1913-1916.....297
Y. Ternon, Éclats de voix. Recueil de textes 1974-2005.....310
Հր. Սիմոնյան, Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ) .....326
1895, Massacres d’Arméniens. Alphonse Cillière, Consul de France à Trébizonde.....336
Ռ. Սաֆրաստյան, Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.).....344
Հ. Ղազարյան, Մոսկվայի և Կարսի 1921 թվականի պայմանագրերն ու նրանց ողբերգական դերը հայ ժողովրդի ճակատագրում.....352
Ցեղասպանագիտական հանդես, 2013, թիվ 1.....363
H. Grkacharian, Hadjn, si on t’oublie… Mémoires.....372